



ՀՐԱՏԱՐԱՆԶՈՒԹՅՈՒՆ
Երևան - 1992

-89

ԳՄԴ 84.7 ԱՐ.—4
Բ 891

Իսպարենից թարգմանեց
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲՈՂՈՒՅԱՆԸ
Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց
ԹԱԴԵՎՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

ԲՈՂՈՒՅԱՆ Խ. Լ.
Բ 891 երկու արձաններն ու երկու լաբիրինթոսները /Խորխե
Լուիս Բոլխես, [Իսպ. թարգմ. Հ. Բոգուսյանը]— եր.:
Ապոլոն, 1992.— 320 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 20-րդ դարի արգենտինացի մեծագույն
արձակագիր-էսսեիստ, համաշխարհային մի քանի գրական մրցանակների
դափնեկիր Խորխե Լուիս Բոլխեսի ստեղծագործության՝ առանձին
Ժողովածուներից թաղված ընտրանին:
Հայերեն առանձին գրքով հրատարակվում է առաջին անգամ:

175998

4703040100
Բ 749 (01)-92

ԳՄԴ 84.7 ԱՐ.—4

ISBN 5-8079-0455-0

© «Ապոլոն» հրատարակչություն, 1992
Կազմելու, թարգմանելու և ծանոթագրելու համար

ԽՈՐԽԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍ

**ԵՐԿՈՒ ԱՐՔԱՆԵՐՆ ՈՒ
ԵՐԿՈՒ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ**

ԲԱԺԱՆԿՈՂ ԱՐԱՀԵՏՆԵՐԻ ԱՅԳԻՆ

Այս գրքի ութ գործերից և ոչ մեկը մանրակրկիտ մեկնությունների կարիք չունի¹: Ութերորդը («Բաժանվող արահետների այգին») պատկանում է դեղեկտիվ ժանրին. ընթերցողները դառնալու են մի սպանության կատարման և ամբողջ ընթացքի մանրամասնությունների մասնակիցները, ծանոթանալու են այդ սպանության նպատակին, սակայն, կարծում եմ, մինչև վերջին պարբերությունը չեն հասկանալու այդ սպանությունը: Մնացածները պատկանում են ֆանտաստիկական ժանրին, նրանցից մեկը՝ «Բաբելոնյան վիճակախաղ» պատմվածքը, սիմվոլիզմի մեղքից ամբողջապես ձերբազատված չէ: «Բաբելոնի գրադարանը» պատմվածքի առաջին հեղինակը չեմ. նրա պատմությամբ և նախապատմությամբ հետաքրքրվողները կարող են ստուգել «Սուր» պարբերականի 59-րդ համարի էջերից մեկը, ուր արձանագրված են Լեուսիպոյի և Լասուիտցի, Լուիս Բերոլի և Արիստոտելի տարասեռ անունները: «Շրջանաձև ավերակները» պատմվածքում ամեն ինչ՝ անիրական է, իսկ «Պիեռ Մենարը» «Դոն Կիխոտի» հեղինակ» գործում անիրական է կերպարի ինքն իրեն պարտադրած ճակատագիրը: Նրան վերագրած ստեղծագործությունների ցանկը զվարճալի չէ, բայց ոչ էլ կամայական, դա նրա մտքի պատմության դիագրամն է...

Ծավալուն գրքեր գրել, հինգ հարյուր էջում ձգձգել մի գաղափար, որի բանավոր կատարյալ բացատրությունը տեղավորվում է մի քանի ռուպեից բաղկացած ժամանակահատվածում, աշխատարար և սպանիչ ցնորամտություն է: Ավելի խելամիտ կլինի պատկերացնել, թե այդ գրքերն արդեն գոյություն ունեն, ու նրանց ամփոփումը կամ մեկնաբանությունը տալ: Այդպես են վարվել Քառլայլը «Sartor Resartus» գործում և Բաթլերը իր «The Fair Haven»-ում, սակայն այս ստեղծագործությունները մյուսներից պակաս նույնաբանական չեն: Ես՝ ավելի խոհեմ, ավելի անճարակ, ավելի ծուլ, բավարարվել եմ երևակայական գրքի մասին ծանոթագրություններ գրելով: Այդպիսին են «*TIón, Uchar, Orbis Tertius*»-ը, «*Հերբերթ Քուեյնի ստեղծագործության ուսումնասիրությունը*» և «*Մոտեցում Ալմոտասամին*» գործերը: Վերջինը գրել եմ 1935 թվականին. վերջերս կարդացել եմ «*The Sacred Fount*» գործը (1901), որի ընդհանուր սյուժեն գուցե և համընկնում է իմ սյուժեի հետ: Ջեյմսի Նրբահյուս վեպում պատմողն ուսումնասիրում է A-ի կամ C-ի հնարավոր ազդեցությունը B-ի վրա: «*Մոտեցում Ալմոտասամին*» պատմվածքում պատմողը B-ի միջոցով զգում կամ գուշակում է Z-ի հեռավոր գոյությունը:

Խ. Լ. Բ.

Բուենոս Այրես, 10 նոյեմբերի, 1941

¹ Հեղինակի թվարկած ութ գործերից բարձրանված է վեցը (խմբ.):

Հայելուն և հանրագիտարանին եմ պարտական Ucbar-ի հայտնագործության համար: Հայելին շողշողում էր Ռամոս Մեխիայում, Գաոնա փողոցում ընկած մի ագարակի միջանցքում, հանրագիտարանը սխալմամբ կոչվում է The Anglo-American Cyclopaedia (Նյու Յորք, 1917), բայց Encyclopaedia Britannica-ի 1902 թվականի բառացի, ոչ կատարյալ վերահրատարակությունն է: Դեպքը տեղի ունեցավ մի հինգ տարի առաջ: Այդ գիշեր Բիոյ Կասարեսի հետ միասին էինք ընթերել, վիճում էինք առաջին դեմքով գրված մի վեպի շուրջ, ուր պատմողը, դեպքերը խեղաթյուրելով կամ փոփոխելով, ընկնում էր որոշ հակասությունների մեջ, որ միայն մի քանի ընթերցողների՝ հաշվված ընթերցողների թույլ կտային կռահել դաժան կամ մակերեսային իրողությունը: Հայելին միջանցքի հեռավոր անկյունում կարծես դարան էր մտել: Նկատեցինք (ուշ գիշերին անխուսափելի է), որ հայելիներն ինչ-որ դիվային բան ունեն: Այդ ժամանակ Բիոյ Կասարեսն հիշեց, որ Ucbar-ի աղանդապետերից մեկն ասել է, թե հայելիներն ու բեղմնավորումը նողկալի են, քանի որ մարդկանց թիվն են բազմապատկում: Հարցրի այդ հիշատակելի դատողության աղբյուրի մասին, նա պատասխանեց, որ այդ գրված է The Anglo-American Cyclopaedia-ի՝ Ucbar-ի մասին հոդվածում: Ագարակում (որ կահավորված էինք վարձել) կար դրա օրինակներից մեկը: XXVI հատորի վերջին էջերում մենք մի հոդված գտանք Ուպսալայի, XXVI հատորի առաջին էջերում՝ Ural-Altaic Languages-ի մասին, իսկ Ucbar-ի մասին՝ ոչ մի բառ: Բիոյը մի քիչ զարմացած հետազոտեց ցանկի բոլոր հատորները: Ջուր փորձեց բոլոր հնարավոր տարբերակները՝ Ukbar, Ucbar, Oogbar, Ookbar, Oukbahr... Մեկնելիս ասաց, որ Իրաքի կամ Փոքր Ասիայի շրջաններից մեկն է: Մտածեցի, որ չփաստված այդ երկիրն ու այդ անանունն աղանդապետը Բիոյի համեստ հորինվածքն էին՝ իր արտասանած նախադասությունն արդարացնելու

¹ Երրորդ աշխարհի (լատ.):



հորդների հուշագրությունները, ոչ ոք երբեք Սւբար-ում չէր եղել: Բիոյի Հանրագիտարանի ընդհանուր ցանկն այդ անունը չէր հիշատակում: Հաջորդ օրը Կարլոս Մաստրոնարդին (ում ես պատմել էի դեպքը) Կորիենտես և Տալկաուանո խաչմերուկի գրախանութում նկատեց Anglo-American Cyclopaedia-ի սև և դսկեգույն հատորները: Մտավ և թերթեց XXVI հատորը: Բնականաբար Սւբար-ի մասին ոչինչ չգտավ:

II

Ադրոգե հյուրանոցի խիտ այծտերևուկներում և պատրանքային հայելիներում գուցե և պահպանվում է Հարավային գնացքների ճարտարագետ Հերբերթ Աշեի թույլ և մարող հիշատակը: Իր կյանքի ընթացքում այլ անգլիացիների պես նա տառապել էր պատրանքներից և երբ վախճանվեց, այդ պատրանքների հետքերն էլ չմնացին: Բարձրահասակ էր ու մի քիչ կորացած, սակավադեպ բառակուսի, շիկավուն մորուքով: Որքան գիտեմ ամուրի էր և ազնվական: Մի քանի տարին մեկ Անգլիա էր գնում դիտելու (եզրակացնում եմ նրա ցույց տված մի քանի լուսանկարներից) արևային մի ժամացույց և մի քանի կաղնիներ: Հայրս նրա հետ հաստատել էր (բայը չափազանցված է) անգլիական այն բարեկամություններից մեկը, որ սկսվում է մտերմությունը բացառելով, և շուտով բացառվում է նաև երկխոսությունը: Իրար հետ գրքեր ու հանդեսներ էին փոխանակում և խորասուզվում շախմատային լռակյաց մենամարտերում... Նրան հիշում եմ հյուրանոցի միջանցքներում թվաբանության գիրքը ձեռքին՝ երկնքի անկրկնելի գույները դիտելիս: Մի երեկո զրուցեցինք տասներկուական թվային համակարգի մասին (որտեղ տասներկուսը գրվում է 10): Աշեն ասաց, որ ինքը տասներկուական թվակարգի աղյուսակները վերածում է վաթսուական համակարգի (ուր վաթսուը գրվում է 10): Ավելացրեց, որ այդ աշխատանքն իրեն առաջարկել է մի նորվեգացի՝ Ռիո Գրանդե դո Սուլում եղած ժամանակ: Արդեն ութ տարի էր, ինչ ճանաչում էինք նրան, և նա երբեք չէր պատմել, թե եղել է այդ վայրերում...

Զրուցեցինք հովվական կյանքի շուրջ, «կապանգաների»¹ մասին, բրազիլական «գաուչո» բառի ստուգաբանության մասին

¹ Ելուզակներ (պորտ.):

(որ որոշ ծերունի արևելցիներ դեռ արտասանում են «գառնչո») և, թող Աստված ներող լինի, տասներկուականի գործառույթների մասին այլևս ոչ մի խոսք չեղավ: 1937 թվականի սեպտեմբերին (մենք հյուրանոցում չէինք), Հերբերթ Աշեն մահացավ շնչերակի պայթյունից: Մի քանի օր առաջ Բրազիլից ստացել էր կնքված մի կապոց, որի պարունակությունը ընդամենը մի գիրք էր. Աշեն այն մոռացել էր բարում, ուր ես ամիսներ հետո հայտնաբերեցի: Թերթելով, զարմանալի ու թեթև մի գլխապտույտ ունեցա, որն, իհարկե, չեմ նկարագրելու, քանի որ սա ոչ թե իմ հուզմունքների, այլ՝ Սեբար-ի, Միօն-ի և Orbis Tertius-ի պատմությունն է: Իսլամի գիշերներից մեկի՝ Գիշերների Գիշեր կոչվող գիշերվա ընթացքում, բացվում են երկնքի դարպասները, ու ջրերը քաղցրանում են անգամ կծերում. եթե այդ դարպասները բացվեին այդ պահին, մեկ է՝ ես այդ գիշերվա զգացածս չէի զգա: Գիրքը շարադրված էր անգլերենով և բաղկացած էր 1001 էջից: Դեղին կողեզրի վրա կարդացի հետևյալ բառերը՝ «A First Encyclopaedia of Miön, vol. XI. Hlear to Jangr»¹: Ոչ թվականն էր նշված, ոչ էլ հրատարակության վայրը: Առաջին էջում և գունավոր թերթերը ծածկող մետաքսյա թերթի վրա նկարված էր կապույտ մի լումա հետևյալ արձանագրությամբ՝ Orbis Tertius: Երկու տարի առաջ անօրինական հրատարակված հանրագիտարանի հատորներից մեկի էջերում ես հայտնաբերել էի մի կեղծ երկրի մակերեսային նկարագրությունը. այժմ բախտը վիճակել էր ավելի ճշգրիտ ու դաժան մի բան: Հիմա իմ ձեռքում էր անհայտ մի մոլորակի ամբողջական պատմության ընդարձակ ու հիմնավոր մի պարբերություն, որն իր մեջ պարունակում էր այդ մոլորակի ճարտարապետությունը, խաղաթղթերը, առասպելների սարսափն ու լեզուների շշուկը, կայսրերին ու ծովերը, հանքաքարերը, թռչուններն ու ձկները, հանրահաշիվն ու կրակը, աստվածաբանական ու բնագանցական վեճերը: Եվ այդ ամենը՝ առանց նկատելի գաղափարական կամ ծաղրական միտումների, տրամաբանորեն հոգավորված:

Նշածս Տասնմեկերորդ հատորում տեղեկություններ կան սրան նախորդող և հաջորդող հատորների մասին: Նեստոր Իբարան «N.R.F.»²-ի արդեն դասական հոդվածում մերժում է բացակայող հատորների գոյությունը: Եզեկիել Մարտինես էստրադան ու

¹ «Թյունի առաջին Հանրագիտարան, հ. XI, Հլեար Ջանգր» (անգլ.):

² «Նուվել Ռեվյու Ֆրանսեզ»:

Դրիո Լա Ռոշելը գուցե անհերքելիորեն մերժել են այդ վարկածը: Սակայն բանն այն է, որ մինչև հիմա ամենահիմուտ հետազոտություններն անգամ ապարդյուն անցան: Զուր քրքրեցինք երկու Ամերիկաների և Եվրոպայի գրադարանները: Ալֆոնսո Ռեյեսը, դեդեկտիվ որոնումների ձանձրույթից զզված, առաջարկում է, որ բոլորս միասին մեզ վրա վերցնենք այդ հսկայական և բացակայող բազմաթիվ հատորների վերաշարադրման գործը՝ *ex ungue leonem*¹: Դրա համար, կեսլուրջ-կեսկատակ պնդում է նա, բավարար կլիներ *թունիստների* մի ամբողջ սերունդ: Այդ հանդուգն եզրահանգումը մեզ վերադարձնում է հիմնական խնդրին: Ովքեր հորինեցին ՏԼՕՆ-ը: Հոգնակին անխուսափելի է, քանի որ մեն մի հորինողի՝ անհայտության խավարի և համեստության մեջ գործող անվերջանալի մի Լայբնիցի վարկածը միահամուռ կերպով մերժվում է: Ենթադրվում է, որ այդ *brave new world*²-ը հանձարեղ և մութ մի մարդու կողմից ղեկավարվող աստղագետների, կենսաբանների, ճարտարապետների, մետաֆիզիկների, բանաստեղծների, քիմիկոսների, մաթեմատիկոսների, բարոյագետների, նկարիչների, երկրաչափների... գաղտնի մի համայնքի ստեղծագործությունն է: Շատ են տարբեր մասնագիտություններին տիրապետողները, սակայն նրանց մեջ քիչ են հնարելու կարողություն ունեցողները և ավելի նվազ՝ այդ հնարամտությունը մի համակարգված ու խստագույն ծրագրի ենթարկել կարողացողները: Այդ ծրագիրն այնքան ընդարձակ է, որ յուրաքանչյուրի մասնակցությունը անսահմանորեն փոքր է: Սկզբում ՏԼՕՆ-ը քառս էր թվում, երևակայության անպատասխանատու խաղերից մեկը, այժմ գիտենք, որ նա ոչ թե քառս, այլ կոսմոս է, և որ, գոնե ժամանակավորապես, սահմանված են նրան ղեկավարող ներքին օրենքները: Բավական կլինի հիշել, որ Տասնմեկերորդ հատորում նկատված կարգը այնքան հստակ ու ճշգրիտ է, որ նրա կարծեցյալ հակասությունները մյուս հատորների գոյության փաստի հիմնաքարերն են: Հանրահայտ հանդեսները ներելի չափազանցությամբ հրապարակել են ՏԼՕՆ-ի կենդանական աշխարհի տվյալներն ու աշխարհագրությունը. ես կարծում եմ, որ նրա թափանցիկ

¹ Առյուծի ձրաններից... (սովորաբար լատինական այդ առածը թարգմանվում է՝ «ձիրաններից ճանաչեցինք առյուծին»): Այստեղ նշանակում է՝ «ելնելով ձիրաններից՝ վերստեղծել առյուծին» (ծան. խմբ.):

² Աջանչելի նոր աշխարհ (անգլ.):

վագրերն ու բոսոր աշտարակները գուցե արժանի չեն բոլոր մարդկանց հետևողական ուշադրությանը: Ես համարձակվում եմ մի քանի րոպե խնդրել նրանց տիեզերքի ընկալումը պարզաբանելու համար:

Հյուսիսը նկատել է, որ Բերկլիի փաստարկումներն անժխտելի լինելով հանդերձ՝ միևնույն ժամանակ անհամոզիչ են: Այդ դատողությունը ճիշտ է, երբ խոսքը վերաբերում է երկրագնդին, բայց ամբողջովին կեղծ է հնչում TIÖN-ի հանդեպ: Այդ մոլորակում բնակվող ազգերը բնույթով իդեալիստ են: Նրանց լեզուն և լեզվի ածանցումները՝ կրոնը, տառերն ու մետաֆիզիկան, անպայմանական իդեալիզմ են ենթադրում: Աշխարհը նրանց համար ոչ թե տարածության մեջ գտնվող իրերի ամբողջություն է, այլ անկախ արարքների տարածն մի շարք: Հաջորդական-ժամանակային է և ոչ թե տարածական: TIÖN-ի Ursprache¹ լեզուն, որից սերում են ժամանակակից լեզուներն ու բարբառները, գոյականներ չունի, այն ունի անդեմ բայեր, որոնք լրացվում են մակբայական արժեք ունեցող միավանկ վերջածանցներով (կամ նախածանցներով): Օրինակ՝ գոյություն չունի լուսին բառին համապատասխանող բառ, բայց գոյություն ունի մի բառ, որ իսպաներեն կլիներ լուսինանալ: Լուսինը հայտնվեց գետի վրա արտահայտությունը կլինի՝ hlör u fang axaxaxas mlö, որ բառ առ բառ թարգմանելիս հաջորդաբար կստացվի՝ դեպի վեր (upward) հետևում տևական անցնել լուսինացավ: (Քսուլ Սուլարը թարգմանում է՝ Upward, behind the onstreaming, it mooned):

Մեր ասածը վերաբերում է հարավային կիսագնդի լեզուներին: Հյուսիսային կիսագնդի լեզուների (որոնց նախալեզվի մասին շատ քիչ տեղեկություններ կան Տասնմեկերորդ հատորում) հիմնական բջիջը ոչ թե բայն է, այլ միավանկ ածականը: Գոյականը կազմվում է ածականների կուտակումով: Լուսին չի ասվում, ասվում է՝ օդային-պայծառ մութ-կլորի վրա կամ՝ երկնքի թեթև նարնջագույն, կամ որևէ այլ կերպ: Ընտրված օրինակում ածականների խումբը վերաբերում է իրական մի օբյեկտի, բայց բնավ պարտադիր չէ: Այդ կիսագնդի գրականության մեջ (ինչպես Մայնոնգի աշխարհում) գերակշռում են իդեալական իրերը, որոնք ստեղծվում և ոչնչանում են մի վայրկյանում, ըստ բանաստեղծա-

¹ Նախալեզու (գերմ.):

կան մտահղացման: Հաճախ դրանց որոշում է լոկ միաժամանակայնությունը: Գոյություն ունեն երկու անդամից բաղկացած առարկաներ, որոնցից մեկը տեսողական բնույթ ունի, իսկ մյուսը՝ լսողական. սրբալույսի գույնն ու թռչնի հեռավոր կանչը: Գոյություն ունեն նաև բազմանդամ առարկաներ. արևն ու ջուրը ընդդեմ լողորձի նկարի, որ նշանակում է՝ փակ աչքերում երևացող բնույթ ու անհայտ վարդագույն, գետի հոսանքին տրված կամ երազի մեջ գտնվող զբաղողություն: Երկրորդական աստիճանի այդ օբյեկտները որոշ հապավումների միջոցով կարող են կապակցվել դեպի մեծագույններն: Գոյություն ունեն մեն-մի հսկայական բանից կազմված հայտնի պոեմներ: Այդ բանը հեղինակի ստեղծած բանաստեղծական օբյեկտի մասն է կազմում: Գոյականների իրամասնությանը չհավատալու հանգամանքն առեղծվածայնորեն անհասկանալի է դարձնում նրանց ըմբռնը: Դժո՞ղի հյուսիսային կնապետի լեզուները պարունակում են հեղեղ-եվրոպական լեզուների բոլոր անուններն ու դեռ ավելի շատ:

Չափազանցություն չի քնի պնդել, որ Դժո՞ղի դասական մշակույթն ընդգրկում է մեն-մի գիտություն՝ հոգեբանությունը: Մնացածները ենթարկվում են սրան: Արդեն ասել եմ, որ այս մուգորակի բնակիչները տիեզերքն ընկալում են որպես մտավոր գործընթացների այնպիսի մի շարք, որ ընթանում է ոչ թե տարածության, այլ ժամանակային հաջորդականության մեջ: Ապինոզան իր անհատնում աստվածությանը վերագրում է տարածության և մտածողության հատկանիշներ: Դժո՞ղում ոչ ոք չէր հասկանա առաջինի (որ միայն որոշ հանգամանքների է բնորոշ) և երկրորդի, որ կոսմոսի կատարյալ հոմանիշն է, հարադրությունը: Այլ կերպ ասած՝ Դժո՞ղում անընդունելի է տարածականի հարատևումը ժամանակի մեջ: Հորիզոնում տարածվող ծխի, հետո այրված դաշտի և ապա այրուցք պատճառող կիսամար ծխախոտի ընկալումը համարվում է գաղափարների զուգորդության օրինակ:

Այս բացարձակ մոտիվը կամ իդեալիզմը արժեզրկում է գիտությունը: Մի դեպքի բացատրությունը (կամ սահմանումը) նշանակում է այն կապել այլ դեպքերի հետ. Դժո՞ղում այդ կապը սուբյեկտի հաջորդ վիճակն է և չի կարող ազդել կամ լուսաբանել նախորդ դրությունը: Յուրաքանչյուր մտային վիճակ անտրոհելի է, այդ վիճակն անվանել, id est¹ դասակարգել, նշանակում է՝

¹ Այսինքն (լատ.):

կեղծել: Այստեղից պետք է եզրակացնել, որ TIÖN-ում գոյություն չունեն գիտություններ, ոչ էլ անգամ՝ դատողություններ: Սակայն պարադոքսալ ճշմարտությունն այն է, որ գոյություն ունեն և գրեթե անհամար քանակով: Գիտությունների հետ կատարվում է այն, ինչ հյուսիսային կիսագնդում կատարվում է գոյականների հետ: Այն հանգամանքը, որ ամեն մի փիլիսոփայություն ի սկզբանե դիալեկտիկական մի խաղ է, մի Philosophie des Als ob,¹ նպաստել է նրանց քանակի բազմապատկմանը: Գերակշռում են անհավատալի, բայց հաճելի կամ արտառոց ճարտարությամբ կառուցված համակարգեր: TIÖN-ի մետաֆիզիկները ճշմարտությունը չեն որոնում, ոչ էլ հավանականությունը, զարմանքն են որոնում: Նրանք կարծում են, որ մետաֆիզիկական ֆանտաստիկ գրականության ճյուղերից է: Գիտեն, որ ամեն մի համակարգ այլ բան չէ, քան տիեզերքի մասին բոլոր տեսակետների կախվածությունը դրանցից որևէ մեկից: Նույնիսկ «բոլոր տեսակետները» բառակապակցությունը անընդունելի է, քանի որ ենթադրում է ներկա և անցյալ վայրկյանների անհնարին միակցում: Նմանապես մերժելի է «անցյալ վայրկյանները» հոգնակին, քանի որ ենթադրելի է դառնում մի այլ անհնարին գործողություն... TIÖN-ի փիլիսոփայական դպրոցներից մեկը մերժում է ժամանակը՝ ելնելով այն բանից, որ ներկան անորոշ է, որ ապագան իրական է միայն որպես ներկայի հույս, որ անցյալն իրական է միայն որպես ներկայի հուշ²: Մի այլ դպրոց պնդում է, որ արդեն *ողջ ժամանակն* անցել է, և որ մեր կյանքը թերևս անդառնալի մի ընթացքի անկասկած կեղծ ու հաշմանդամ հիշողությունը կամ մայրամուտային արտացոլանքն է:

Մեկ ուրիշը կարծում է, թե տիեզերքի պատմությունը և նրանում մեր կյանքն ու մեր կյանքի ամենաչնչին մանրամասնությունը ինչ-որ սատանայի հետ դաշնակցած երկրորդական մի աստվածության գրառումն է: Մեկ ուրիշը՝ տիեզերքն համեմատելի է գաղտնագրերի հետ, ուր ոչ բոլոր խորհրդանիշներն են արժեքավոր, և որ ճշմարիտ է միայն այն, ինչ պատահում է երեք հարյուր գիշերը մեկ, մեկ ուրիշը՝ մինչ այստեղ քնած ենք՝ արթուն

¹ Իբր թե-ի փիլիսոփայություն (գերմ.):

² Russel-ը «The Analysis of mind»-ում («Բանականության վերլուծություն», 1921, էջ 159) ենթադրում է, որ մոլորակն ստեղծվել է ընդամենը մի քանի րոպե առաջ և ունի այնպիսի բնակիչներ, որոնք «հիշում են» պատրանքային մի անցյալ (ծան. հեղ.):

ենք մի այլ տեղ, և այդպես՝ յուրաքանչյուր մարդ երկու մարդ է: Դժոճ-ի տեսություններից և ոչ մեկն այնքան խառնաշփոթություն չառաջացրեց, որքան մատերիալիզմը: Որոշ մտածողների ձևակերպումները ավելի շուտ կրթոտ էին, քան հստակ, և կարծես կռահում էին պարադոքսը: Այդ անըմբռնելի տեսության հասկացությունը դյուրացնելու համար տասնմեկերորդ դարի¹ աղանդապետներից մեկն հնարեց պղնձե ինը դրամների սոփեստությունը, որի խայտառակ համբավը Դժոճ-ում համարժեք է էլիական ապորիաներին: Այդ «ճշմարտանման դատողությունը» ունի բազմաթիվ տարբերակներ, որոնք նշում են դրամների և դրանք գտնելու տեղերի քանակը, ահա ամենատարածվածը.

Երեքշաբթի օրը X-ը անցնում է ամայի մի ճանապարհով և կորցնում պղնձե ինը դրամներ: Հինգշաբթի օրը Y-ը ճանապարհին գտնում է չորեքշաբթի օրվա անձրևից մի քիչ ժանգոտած չորս դրամներ: Ուրբաթ օրը Z-ը ճանապարհին գտնում է երեք հատը: Ուրբաթ առավոտյան X-ը իր տան միջանցքում գտնում է երկու հատ: Աղանդապետը այս պատմությունից ուզում էր եզրակացնել եղելությունը՝ *id est* գտնված ինը դրամների շարունակությունը: Անհերքեթ է (պնդում էր) մտածել, որ չորս պղնձադրամները գոյություն չեն ունեցել երեքշաբթի և հինգշաբթի օրվա միջև և որ երեքշաբթի օրվա և ուրբաթ երեկոյի միջև գտնվող ժամանակահատվածում գոյություն չեն ունեցել երեքը և երեքշաբթի օրվա և ուրբաթ օրվա արշալույսի միջև՝ երկուսը: Տրամաբանական է մտածել, որ նրանք գոյություն են ունեցել, գուցե և գաղտնի, մարդկանց համար անհասկանալի ձևով, երեք ժամանակահատվածների բոլոր պահերին:

Դժոճ-ի լեզուն դժվարությամբ բանաձևեց այդ պարադոքսը, շատերը չհասկացան: Չափավորության կողմնակիցներն սկզբում բավարարվեցին պատմության ճշմարտությունը մերժելով: Նրանք պնդեցին, որ դա խոսքային ձեռնածություն է և երկու նորաբանությունների հանդուգն գործածության վրա հիմնված, ամեն մի տրամաբանության համար անընդունելի և օտար «գտնել» ու «կորցնել» բայերով կազմված բառային մի կեղծիք, որը հենց սկզբից ենթադրում է ինն առաջին և վերջին դրամների նույնությունը: Հիշեցին, որ յուրաքանչյուր գոյական (մարդ, դրամ, հինգշաբթի, չորեքշաբթի, անձրև) ունի միայն փոխաբերական արժեք:

¹ Տասներկուական համակարգի համաձայն, «դար» նշանակում է քառասունչորս տարվա ժամանակահատված:

Յույց տվեցին **չորեքշաբթի օրվա անձրևից մի քիչ ժանգոտած** արտահայտության նենգությունը, որ ենթադրում էր փորձարկման ենթարկված հանգամանքը՝ հինգշաբթի և երեքշաբթի օրերի միջև գտնված ժամանակահատվածում չորս պղնձադրամների գոյությունը: Բացատրեցին, որ մի բան է **նույնությունը**, մի այլ բան՝ **հավասարությունը** և բանաձևեցին՝ *reductio ad absurdum*¹, այսինքն՝ հիպոթետիկ այնպիսի մի հնարավորություն, երբ ինը մարդ ինը հաջորդական գիշերներում ուժեղ ցավ են զգում: Անհեթեթ չէր լինի, — հարցրին, — ենթադրել, որ այդ ցավը նույնն է²: Ասացին, որ աղանդապետին դրդում է միայն **գոյության** աստվածային հատկությունը հասարակ պղնձադրամներին վերագրելու պիղծ նպատակը, և որ նա երբեմն ժխտում է բազմազանությունը, իսկ մեկ-մեկ էլ՝ հաստատում այն: Ասացին, որ եթե հավասարությունը պարունակում է նույնությունը, ապա պետք է ընդունենք, որ ինը պղնձադրամները մեկ հատ են:

Անհավատալիորեն, այդ հերքումները վերջնական չդարձան: Խնդրի բանաձևումից հարյուր տարի հետո, աղանդապետից ոչ պակաս պայծառ, բայց ուղղափառ մի մտածող հանդուգն մի վարկած առաջարկեց: Այս ենթադրությունը հաստատում է, որ գոյություն ունի մեն մի սուբյեկտ, որ այդ անտրոհելի սուբյեկտը տիեզերքի յուրաքանչյուր անձն է, և որ սրանք աստվածության օրգաններն ու դիմակներն են: X-ը Y-ն է և Z-ը: Z-ը գտնում է երեք պղնձադրամները, քանի որ հիշում է, որ X-ը կորցրել է: X-ը միջանցքում գտնում է երկուսը, քանի որ հիշում է, որ մյուսները գտնվել են... Տասնմեկերորդ հատորը թույլ է տալիս նկատել, որ երեք գլխավոր պատճառներ որոշեցին այս իդեալիստական պանթեիզմի վերջնական հաղթանակը: Առաջինը սուլիպսիզմի պատճառած նողկանքն է, երկրորդը՝ գիտությունների հոգեբանական հիմքը պահպանելու հնարավորությունը, երրորդը՝ աստվածների պաշտամունքը պահպանելու հնարավորությունը: Շոպենհաուերը (կրքոտ և բյուրեղյա պարզություն ունեցող Շոպենհաուերը) սրան

¹ Հանգում է անհեթեթության (լատ.):

² Ներկայումս TIÖN-ի եկեղեցիներից մեկը պլատոնական ձևով պնդում է, որ տվյալ ցավը, դեղինի տվյալ փոքր-ինչ կանաչավունությունը, տվյալ ջերմությունը, տվյալ հնչյունը միակ իրականն են: Մերձեցման գլխապտույտ պատճառող պահին բոլոր մարդիկ նույնն են: Շեքսպիրի որեէ մի տող կրկնող յուրաքանչյուր մարդ Ռիվյամ Շեքսպիրն է (ծան. հեղ.):

շատ նման մի ուսմունք է բանաձևում իր «Parerga und Paralipomena»¹-ի առաջին հատորում:

Միօն-ի երկրաչափությունն ընդգրկում է երկու տարբեր գիտություններ՝ տեսողական ու շոշափողական: Վերջինս համապատասխանում է մերինին և ենթարկված է առաջինին: Տեսողական երկրաչափության հիմքը ոչ թե կետն է, այլ մակերեսը: Այս երկրաչափությունը, որին անծանոթ են զուգահեռները, հայտարարում է, թե տեղափոխվող մարդը փոխում է իրեն շրջապատող ձևերը: Նրանց թվաբանության հիմքը անվերջ թվերն են: Առանձնապես շեշտում են մեծ և փոքր հասկացությունների կարևորությունը, որ մեր մաթեմատիկոսները խորհրդանշում են $>$ և $<$ նշաններով: Միօն-ի մաթեմատիկոսները հաստատում են, որ հաշվելու գործողությունը փոխում է քանակը և այն անորոշ վիճակից փոխարկում որոշյալի: Այն հանգամանքը, որ նույն քանակը հաշվող տարբեր անձինք հասնեն նույն լուծմանը՝ հոգեբանների համար գաղափարների զուգորդության մի օրինակ է կամ հիշողության լավ վարժանք: Արդեն գիտենք, որ Միօն-ում ճանաչման սուբյեկտը միակն է ու հավերժ:

Գրական սովորություններում էլ է իշխում ամենակարող, միակ սուբյեկտի գաղափարը: Գրքերն ընդհանրապես ստորագրված չեն լինում: Բանագրություն հասկացությունը գոյություն չունի. Միօն-ում ընդունված է, որ բոլոր ստեղծագործությունները պատկանում են արտածամանակային և անանուն մի հեղինակի: Քննադատությունը հաճախ հեղինակներ է ստեղծում, ընտրում իրարից տարբեր ստեղծագործություններ, ասենք, օրինակ, «Դառ դե Ֆզինը» և «1001 գիշերը», դրանք վերագրում մի հեղինակի և ապա մեծ հավանականությամբ որոշում է այդ հետաքրքրական *Homme de lettres*²-ի հոգեբանությունը...

Տարբեր են նաև գրքերը: Մտացածիները բաղկացած են մեն մի սյուժեից, որ իր մեջ ընդգրկում է բոլոր հնարավոր փոփոխությունները: Փիլիսոփայական բնույթի գրքերն անպայման պարունակում են տեսությունն ու հակատեսությունը, ցանկացած գաղափարախոսության թեր ու դեմ կողմերը: Այն գիրքը, որ չի պարունակում իր հակագիրքը, համարվում է անավարտ:

¹ «Ասույթներ և աֆորիզմներ» (գերմ.):

² Գրողի (ֆրանս.):

Իդեալիզմի տիրապետության երկար դարերը չէին կարող չազդել իրականության վրա: TIÖN-ի ամենահեռավոր վայրերում հազվադեպ չէ կորած իրերի երկրորդումը: Երկու հոգի որոնում են միևնույն մատիտը, առաջինը գտնում և ոչինչ չի ասում, երկրորդը գտնում է առաջինից ոչ պակաս իրական մի մատիտ, բայց ավելի համապատասխան իր սպասածին: Երկրորդվող այս իրերը կոչվում են hrönir և, չնայած փոքր-ինչ նրբագեղ չեն, բայց ավելի հարմար են: Մինչև որ վերջերս hrönir-ները անուշադրության և մոռացման պատահական զավակները դարձան: Դժվար է հավատ ընծայել, բայց Տասնմեկերորդ հատորը հայտարարում է, որ սրանց հիմնական արտադրությունը ընդամենը հարյուր տարվա պատմությունն թվի: Առաջին փորձերն ապարդյուն անցան: Սակայն *modus operandi*¹-ն արժանի է հիշատակման: Բանտերից մեկի տնօրենը բանտարկյալներին հաղորդում է, որ մի գետի հինավուրց հովտում գոյություն ունեն գերեզմաններ, և որ կազատվի նա, ով կկարողանա կարևոր հայտնագործություն անել: Պեղումներին նախորդած ամիսներին նրանց ցույց տվեցին այն իրերի լուսանկարները, որոնք պետք է հայտնաբերվեին: Առաջին փորձը փաստեց, որ հույսն ու տենչանքը կաշկանդում են. մի շաբաթվա բահ ու բրիչի աշխատանքը միայն ժանգոտած մի անիվի hrön-ը հայտնաբերեց, իսկ նրա ստեղծման թվականը պարզվեց, որ փորձարկումից հետո է եղել: Փորձի արդյունքը գաղտնի պահվեց և կրկնվեց չորս դպրոցներում: Երեքում անհաջողությունը կատարյալ էր, չորրորդում (որի տնօրենը հանկարծակի վախճանվել էր առաջին պեղումների ժամանակ) աշակերտները գերեզմաններում հայտնաբերեցին կամ հորինեցին ոսկյա մի դիմակ, արխայիկ մի սուր, երկու թե երեք կավե կուժ և թագավորի մի մզլոտած ու ճզմված քանդակ, որի կրծքին հետաքրքրական փորագրություն կար, և որը մինչև հիմա էլ վերծանել չի հաջողվում: Այսպիսով, հայտնաբերվեց որոնման փորձառական բնույթն իմացող վկաների ոչ պիտանի լինելը... Ջանգվածային հետազոտությունները երևան հանեցին որոշ հակասություններ. այժմ նախընտրում են անհատական և գրեթե պատահական աշխատանքները: Hrönir-ների պարբերական արտադրությունը (ասում է Տասնմեկերորդ հատորը) հրաշալի ծառայություններ է մատուցել

¹ Գործողության միջոց (լատ.):

հնէաբաններին: Թույլ է տվել հետաքննել և նույնիսկ փոփոխել անցյալը, որը հիմա ապագայից պակաս ճկուն և դյուրափոփոխ չէ: Հետաքրքրական դրվագ՝ երկրորդ և՛ երրորդ աստիճանի հրօնիր-ները, մի այլ հրօնիր-ից սերված հրօնիր-ը, հրօնիր-ի հրօնիր-ից սերված հրօնիր-ը զգալիորեն աղավաղում են առաջինը, հինգերորդները գրեթե համաչափ են, իններորդները շփոթվում են երկրորդների հետ, տասնմեկերորդներում գծերի այնպիսի անբժույթուն կա, որ բացակայում է անգամ բնագրերում: Ընթացքը պարբերական է՝ տասներկուերորդ աստիճանի հրօնիր-ը արդեն սկսում է աղավաղվել: Ամեն մի հրօն-ից ավելի զարմանալի և մաքուր հաճախ սր-ն է լինում՝ ներշնչումից, հույսից ստեղծված իրը: Հսկայական ոսկե դիմակը իմ ասածը հաստատող օրինակ է:

Ամեն ինչ երկրորդվում է Դժոճ-ում, մոռացման դեպքում կորչում են անգամ մանրամասնություններն ու ջնջվում: Դասական է այն շեմքի օրինակը, որ պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ այն կոխկրճում է մի մուրացկան և անհետացնում, երբ նա մահանում է: Հաճախ թռչուններն ու ձիերն են փրկել ամֆիթատրոնների ավերակները:

1940, Սալաո Օրինապ

1947 թվականի հետգրություն: Նախորդ հոդվածն արտատպում եմ այնպես, ինչպես այն լույս է տեսել 1940 թվականին, «Ֆանտաստիկ գրականության անթոլոգիայում», այն գրեթե ամբողջական է, հանել եմ մի քանի փոխաբերություններ և ծաղրական մի ամփոփում, որ այժմ քաղթենի է թվում: Այնքան բան է պատահել այդ թվականից հետո... Կսահմանափակվեմ դրվագներ հիշատակելով:

1941 թվականի մարտին Հերբերտ Աշեին պատկանող Հանտոնի գրքում հայտնաբերվեց Գուննար Էրֆխորդի ձեռագիր մի նամակը: Ծրարի կնիքը պատկանում էր Օուրո Պրետոյի փոստատանը, նամակը պարզաբանում էր Դժոճ-ի խորհուրդը: Նամակի տեքստը հաստատում է Մարտինես Էստրադայի վարկածը: XVII դարի սկզբներին լյուցեմնյան կամ լոնդոնյան մի երեկո հորինվեց այս հոյակապ պատմությունը: Մի երկիր հնարելու համար կազմվեց գաղտնի և բարեգութ մի ընկերություն, որն իր մեջ հետո ընդգրկեց Դալգառնոյին և Ջորջ Բերկլին: Սկզբնական անորոշ ծրագրում նշված էին «հերմետիկ ուսումնասիրությունները, բարեգործությունն ու կաբալլան»: Այս առաջին շրջանին է պատկանում

Անդրեայի հետաքրքրական գիրքը: Մի քանի տարվա հավաքույթներից և նախնական համադրումներից հետո, ընկերության անդամները հասկացան, որ երկիր ստեղծելու համար մի սերունդ բավական չէ: Որոշվեց, որ յուրաքանչյուր վարպետ գործի շարունակության համար մի աշակերտ ընտրի: Այդպիսի «ժառանգական» որոշումը տվեց իր արդյունքը. երկու դար անց հետապնդվող եղբայրությունը վերածնվում է Ամերիկայում: Մեմֆիսում (Թեննեսի) 1824 թվականին եղբայրներից մեկը գրուցում է ճգնաժամի մի միլիոնատիրոջ՝ էզրա Բաբլիի հետ: Սա լսում է արհամարհանքով և ծիծաղում ծրագրի համեստության վրա: Ասում է, որ անհեթեթ է Ամերիկայում մի երկիր ստեղծելը և առաջարկում է հորինել մի մոլորակ: Իր նիհիլիզմից՝ դրդված այս հսկայական գաղափարին ավելացնում է մի այլ գաղափար՝ հսկայական գործարքը գաղտնի պահել: Այդ ժամանակ շրջանառության մեջ էին *Encyclopaedia Britannica*-ի քսան հատորները: Բաբլին առաջարկում է մտացածին մոլորակի մասին հիմնավոր հանրագիտարան ստեղծել: Ինքը նրանց ժառանգություն կթողնի ոսկեհանքերով լեցուն իր լեռները, նավարկելի գետերը, ցուլ ու գոմեշի հերկած դաշտերը, իր սևամորթներին, պոռնկանոցներն ու դուլարները, միայն մի պայմանով՝ «Ստեղծագործությունը կեղծարար Քրիստոսի հետ միության մեջ չի մտնելու»: Բաբլին անհավատ էր, բայց գոյություն չունեցող Աստծուն ուզում է ապացուցել, որ մահկանացու մարդը կարող է մի աշխարհ ստեղծել: 1828 թվականին Բաթոն Ռուժում թունավորում են Բաբլին: 1914 թվականին ընկերությունն իր երեք հարյուր աշխատակիցներին ուղարկում է Տիժոն-ի Հանրագիտարանի վերջին հատորը: Հրատարակությունը գաղտնի էր. նրա քառասուն հատորները (մարդկանց ստեղծած ամենաընդարձակ գործը) հիմք էին դառնալու մի ավելի մանրակրկիտ գործի, որ շարադրվելու էր ոչ թե անգլերեն, այլ Տիժոն-ի բազմաթիվ լեզուներից մեկով: Պատրանքային աշխարհի այդ հետազոտությունը նախապես կոչվում է *Orbis Tertius* և նրա համեստ ստեղծողներից մեկն էլ Հերբերտ Աշեն էր, չգիտեմ, որպես Գուննար էրֆխորդի գործակալ, թե որպես ուղղակի անդամ: Տասնմեկերորդ հատորի գոյությունը նրա մոտ կարծես փաստում էր երկրորդ տեսակետը: Իսկ մյուս հատորները: 1942 թվականին դեպքերը սաստկացան: Յուրահատուկ հստակությամբ հիշում եմ այդ հատոր-

¹ Բաբլին ազատախոհ էր, ֆառալիստ և ստրկության պաշտպան (ծան. հեղ.):

Այստեղ ավարտում եմ իմ պատմության անձնական մասը: Մնացածը իմ բոլոր ընթերցողների հիշողության (եթե ոչ հույսի կամ երկյուղի) մեջ է: Ես կբավարարվեմ հակիրճորեն հիշել կամ նշել հաջորդող դեպքերը, որ տարողունակ հիշողությունը կհարստացնի կամ կլրացնի: 1944 թվականին «The American» թերթի (Նաշվիլ, Թեննեսի) լրագրողներից մեկը Մեմֆիսի մի գրադարանում հայտնաբերեց ՄԼՕՆ-ի առաջին Հանրագիտարանի քառասուն հատորները: Մինչև այսօր էլ վեճի առարկա է՝ այդ հայտնաբերությունը պատահական է, թե այն թույլ էին տվել դեռևս մշուշոտ Orbis Tertius-ի տնօրենները: Երկրորդն ավելի հավանական է: Տասնմեկերորդ հատորի որոշ անհավատալի հավաստումներ (օրինակ՝ հրօն-ների բազմապատկումը) վերացվել կամ մեղմացվել են Մեմֆիսի օրինակում. տրամաբանական է կարծել, որ այդ ճշտումները իրական աշխարհի հետ անհամապատասխանությունները ընդգծելու ծրագրի նպատակին են ծառայում: Տարբեր երկրներում ՄԼՕՆ-ի առարկաների տարածումը կամբողջացնի այդ ծրագիրը՝¹... Բանն այն է, որ միջազգային մամուլն անհավատալիորեն արձագանքեց այդ «հայտնությանը»: Մարդկության Մեծագույն Ստեղծագործության բառացի տարբերակները, օրինական և անօրինական վերահրատարակությունները, ձեռնարկները, անթուղգիաներն ու ամփոփումները լցրեցին ու լցնում են երկրագունդը: Գրեթե անմիջապես իրականությունը տեղի տվեց: Ճիշտն ասած՝ ուզում էր տեղի տալ: Տասը տարի առաջ բավական էր համակարգված որևէ բան, ասենք դիալեկտիկական մատերիալիզմը, հակասեմականությունը, նացիզմը՝ մարդկանց գոհացնելու համար: Ինչպես չենթարկվել ՄԼՕՆ-ի պես կարգավորված մոլորակի մանրակրկիտ և ընդարձակ փաստին: Անօգուտ է պնդել, թե իրականությունն էլ է կարգավորված: Գուցե և այդպես է, բայց այն ենթարկվում է աստվածային օրենքներին, թարգմանում եմ՝ անմարդկային օրենքներին, որոնք մենք չենք կարողանում ընկալել: ՄԼՕՆ-ը լաբիրինթոս է, բայց մարդկանց կառուցած լաբիրինթոսը, այն լաբիրինթոսը, որ սահմանված է մարդկանց ըմբռնողությամբ համար:

ՄԼՕՆ-ի հետ հարաբերությունը, նրա սովորույթ դառնալը տակնուվրա են արել այս աշխարհը: Նրա դաշնությամբ հիացած՝

¹ Բնականաբար մնում է որոշ իրերի «նյութականության» խնդիրը (ծան. հեղ.):

մարդկությունը մոռանում ու մոռանում է նորից, որ այդ դաշնությունը շախմատիստի մտահղացած դաշնությունն է և ոչ թե հրեշտակինը: Արդեն դպրոց է ներխուժել TIÖN-ի (վարկածային) «նախնական լեզուն»։ Նրա ներդաշնակ պատմությունը (որ լի է սրտառուչ դրվագներով) արդեն եղծել է իմ մանկության օրերի թևածող պատմությունները. հիշողություններիս մեջ արդեն այդ տեղն զբաղեցնում է մի կեղծ պատմություն, որի մասին ճշմարիտ ոչինչ չգիտենք, նույնիսկ չգիտենք, որ կեղծ է: Արդեն փոխվել են դրամագիտությունը, դեղագործությունն ու հնէաբանությունը: Կարծում եմ, որ կենսաբանությանն ու մաթեմատիկային էլ է նույն ճակատագիրն սպասում... Մենակյացների ցրված մի դինաստիա փոխել է աշխարհի դեմքը: Նրանց գործը շարունակվում է: Եթե մեր կանխատեսումները սխալ լինեն, հարյուր տարի հետո մեկնումեկը հայտնաբերելու է TIÖN-ի Երկրորդ Հանրագիտարանի հարյուր հատորները:

Այդ ժամանակ մոլորակից անհետանալու են անգլիացին ու ֆրանսիացին, նաև իսպանացին: Աշխարհը TIÖN է դառնալու: Ինձ համար այդ ամենը միևնույն է, ես Ադրոգեի հյուրանոցում ապաստանած՝ Բրաունի Urn Burial-ի՝ Քեվեդոյի ոգով կատարած մի թարգմանությունն եմ թերթում (որն հրատարակելու միտք չունեմ):

Այս վիպագրի թողած տեսանելի ստեղծագործությունը կարելի է դյուրությամբ ու արագ թվարկել: Ուստի և աններելի են մադամ Անրի Բաշելյեի հապավումներն ու հավելումները իր անվստահելի քարտարանում, որը «բողոքական» հայտնի միտում ունեցող մի թերթ, թեթևամտորեն առաջարկում է իր խղճուկ ընթերցողներին, թեկուզև սրանք քիչ են և կալվինիստ, եթե ոչ մասոններ կամ թլփատվածներ: Մենարի իսկական ընկերները ահազանգով և նույնիսկ որոշ տխրությամբ են ընդունել այդ քարտարանը: Դեռ երեկ էինք հավաքվել չարագուշակ նոճիների ստվերի տակ, նրա մարմարյա շիրիմի մոտ, և այսօր արդեն սխալը փորձում է ապականել նրա հիշատակը... Վճռականապես, հակիրճ հերքումը պարտադիր է: Գիտեմ, որ կարելի է հեշտությամբ մերժել իմ խղճուկ հեղինակությունը: Սակայն հուսով եմ, որ ինձ չի արգելվի հիշատակել երկու արժանահավատ վկայություններ: Բարոնուսի դը Բակուրը (որի անմոռանալի «ուրբաթներին» եմ ողբացյալ բանաստեղծին ճանաչելու պատիվն ունեցել) մեծ սիրով է ընդունել իմ տողերը: Կոմսուսի դը Բանյորեջիոն, Մոնակոյի (այժմ Պիտսբուրգ, Փենսիլվանիայի նահանգ, իր անշահախնդիր գործարքների զոհերից ամբաստանված միջազգային մարդատյաց Սիմոն Կաուչոյի հետ վերջերս կայացած ամուսնությունից հետո) ամենանուրբ հոգիներից մեկը, «հանուն ճշմարտության և մահվան» (իր խոսքերն են), իրաժարվելով իրեն բնորոշ ազնվական զսպվածությունից՝ «Լյուքս» ամսագրում տպագրել է մի բաց նամակ, ուր ինձ է նախապատվություն տալիս: Այդ բարձր հանձնարարականները, կարծում եմ, բավարար են:

Ասել եմ, որ Մենարի «տեսանելի» ստեղծագործությունը կարելի է դյուրությամբ թվարկել: Բարեխղճորեն ուսումնասիրելով նրա անձնական արխիվները՝ ես համոզվեցի, որ այդտեղ առկա են հետևյալ նյութերը.

ա) «Լա Կոնկ» ամսագրում երկու անգամ (որոշ տարբերություններով) տպագրված խորհրդապաշտական մի սոնետ (1899 թվականի մարտի և հոկտեմբերի համարներում):

բ) Մենագրություն բանաստեղծական հասկացությունների բառարան ստեղծելու հնարավորության մասին, որոնք ոչ թե պետք է լինեն բառերի հոմանիշներ կամ շրջասություններ, ինչը կազմում է սովորական լեզուն, «այլ իդեալական օբյեկտներ, որոնք ստեղծ-

վում են փոխադարձ համաձայնությամբ և կոչված են զուտ բանաստեղծական կարիքների համար» (Նիմ, 1901):

գ) Մենագրություն Դեկարտի, Լայբնիցի և Ջոն Ուիլկինսի մտածողության «որոշ կապերի կամ ազգակցությունների» մասին (Նիմ, 1903):

դ) Մենագրություն Լայբնիցի «*Characteristica universalis*»¹-ի մասին (Նիմ, 1904):

ե) Տեխնիկական մի հոդված՝ նավակային գծի զինվորներից մեկի հանումով շախմատն հարստացնելու հնարավորության մասին: Մենարն առաջարկում, գովում, վիճում և վերջապես մերժում է այդ նորույթը:

զ) Մենագրություն Ռայմոն Լուլլի «*Ars magna generalis*»²-ի մասին (Նիմ, 1906):

է) Ռույ Լուպես դե Սեգուրայի «Գիրք ազատ հնարանքի և շախմատային խաղի արվեստը» գործի թարգմանությունը՝ առաջաբանով և ծանոթագրություններով (Փարիզ, 1907):

ը) Սևագիր վիճակում մի մենագրություն Ջորջ Բուլի խորհրդրանշական տրամաբանության մասին:

թ) Ֆրանսիական արձակի տաղաչափական հիմնական օրենքների քննություն՝ պարզաբանված Սեն Սիմոնի օրինակներով («Ռեվյու դե լանգաժ ռոման», Մոնպելյե, 1909, հոկտեմբեր):

ժ) Լուկ Դուրթենին դեմ ուղղված պատասխան մի հոդված (սա մերժել էր այդ օրենքների գոյությունը)՝ պարզաբանված Լուկ Դուրթենի օրինակներով («Ռեվյու դե լանգաժ ռոման», (Մոնպելյե, 1909, դեկտեմբեր):

ժա) Քեյլեդոյի «Պաշտամունքային նավարկության կողմնացույցները» գործի ձեռագիր թարգմանությունը՝ վերնագրված «*La boussole des préci eux*»³:

ժբ) Կարլուս Հուրբեյդի վիճագրությունների ցուցահանդեսի քարտաբանի նախաբան (Նիմ, 1914):

ժգ) «*Les problèmes d'un problème*»⁴ ստեղծագործությունը (Փարիզ, 1917), ուր ժամանակագրական կարգով հեղինակը մեկնաբանում է Աքիլլեսի և կրիայի ականհայտ խնդրի բոլոր հնարավոր լուծումները: Մինչև հիմա հասարակությանը ներկայացվել են այդ

¹ «Համընդհանուր սիմվոլիկա» (լատ.):

² «Մեծ արվեստ» (լատ.):

³ «Սեթևեթուհիների կողմնացույց» (ֆրանս.):

⁴ «Մի խնդրի պրոբլեմը» (ֆրանս.):

պատահական սոնետներից) Մենարի տեսանելի ստեղծագործության մասին էր, որ թվարկեցինք ժամանակագրական կարգով: Այժմ անցնում եմ մյուսին՝ գաղտնի, երբեք չիրապարակված, անվերջանալիորեն հերոսական, անզուգական ստեղծագործությանը: Նաև, ó մարդկային հնարավորություններ, անավարտին: Այդ ստեղծագործությունը, գուցե մեր ժամանակներում ամենանշանակալիցը, բաղկացած է «Կիխոտի» առաջին մասի իններորդ և երեսուներեքերորդ գլուխներից և քսաներկուերորդ գլխի մի հատվածից: Գիտեմ, որ այս պնդումը կարող է անհեթեթ թվալ: Այս տողերի հիմնական նպատակը այդ «անհեթեթությունն» արդարացնելն է¹:

Մենարը ներշնչվել է երկու անհամարժեք տեքստերից: Մեկը Նովալիսի բանասիրական ֆրագմենտն է, որ դրեզդենյան հրատարակությունում կրում է 2005 համարը, ուր շոշափվում է որևէ հեղինակի հետ «լրիվ նույնականության» թեման: Մյուսը՝ մականբույծ այն գրքերից է, որոնք Քրիստոսին տեղավորում են փարիզյան բուլվարում, Համլետին՝ Կանեբիերում, կամ դոն Կիխոտին՝ Ուոլ Սթրիթում: Յուրաքանչյուր ճաշակավոր մարդու նման Մենարը զգվում էր այդ անօգուտ կառնավալներից, որոնք, ասում էր, միայն կարող են ժամանակավրեպ, ռամկական հաճույք պատճառել, կամ էլ (որն ավելի վատ է) մեզ կարող են զզվեցնել պարզունակ այն գաղափարով, որ, իբր, բոլոր ժամանակաշրջանները կամ շատ նման են իրար, կամ՝ իրարից շատ տարբեր: Նրան ավելի հետաքրքրական էր թվում Դոդեի հայտնի մտահղացումը՝ մի կերպարում, այն է՝ Տարտարենի մեջ միաձուլել հնարամիտ Հիդալգոյի և իր զինակրի կերպարները, թեև ընդունում էր դրա հակասականությունն ու մակերեսայնությունը... Ովքեր պնդել են, որ Մենարն իր կյանքը նվիրել է ժամանակակից «Կիխոտ» գրելու գործին, պղծում են նրա պայծառ հիշատակը:

Նա չէր ուզում մի այլ «Կիխոտ» ստեղծել, որը հեշտ է, այլ հենց «Կիխոտ»: Անօգուտ է ասել, որ նա երբեք չդիմեց բնագրի մեխանիկական ընդօրինակությանը, նրա նպատակն ընդօրինակելը չէր: Նրա զարմանալի հանդգնությունն այն էր, որ պետք է կարողանար այնպիսի էջեր ստեղծել, որոնք բառ առ բառ, տող առ տող

¹ ձիշտ է, ես գաղտնի նպատակ ունեի ուրվագծել Նաև Դիեռ Մենարի կերպարը: Բայց կարող էի ես չափվել այն ոսկյա էջերի հետ, որոնք, լսել եմ, պատրաստում է բարոնուհի դե Բակուրը, կամ նրբագեղ ու ճշգրիտ Կարլոսա Հուրթեյդի գրչի հետ (ծան. հեղ.):

համընկնեին Միգել դե Սերվանտեսի գրած բառերի ու տողերի հետ:

1934 թվականի սեպտեմբերի 30-ին Բայոնեից գրած մի նամակում նա ասում է. «Նպատակս միանգամայն անսովոր է: Աստվածաբանական կամ մետաֆիզիկական ապացուցման վերջնակետը՝ դոսի աշխարհը, Աստված, պատահականությունը, տիեզերական ձևերը, նույնքան ծեծված ու բոլորին հայտնի է, ինչպես այդ նշանավոր վեպը: Միակ տարբերությունն այն է, որ փիլիսոփաները գրավիչ հատորներով հրատարակում են իրենց աշխատանքի միջանկյալ փուլերը, իսկ ես որոշել եմ դրանք բաց թողնել»: Եվ իսկապես, ոչ մի սևագիր չկա, որ վկայի տարիներ տևած այդ աշխատանքի մասին:

Նրա երևակայած սկզբնական մեթոդը հարաբերականորեն դյուրին էր: Լավ ուսումնասիրել իսպաներենը, վերագտնել կաթոլիկական հավատքը, կռվել մավրերի կամ թուրքերի դեմ, մոռանալ եվրոպայի պատմությունը 1602 թվականից մինչև 1918 թվականը, մի խոսքով՝ Միգել դե Սերվանտեսը լինել: Պիեռ Մենարը մանրակրկիտորեն կշռադատեց այդ միջոցը (գիտեմ, որ գրեթե կատարելապես տիրապետում էր տասնյոթերորդ դարի իսպաներենին), բայց հրաժարվեց դրանից՝ ասելով, որ այն բավականաչափ հեշտ է: Ավելի ճիշտ, այդ ձեռնարկի անհնարինությունից ելնելով՝ կասի ընթերցողը: Համաձայն եմ, սակայն պետք է ընդունենք, որ ի սկզբանե ամբողջ ձեռնարկումն էր անհնարին, և այն վերջնակետին հասցնելու անհնարին բոլոր ձևերից սա էր ամենանահետաքրքրականը: Քսաներորդ դարում տասնյոթերորդ դարի հանրահայտ վիպասան լինելը նրան նվաստացուցիչ թվաց: Ինչ-որ ձևով Սերվանտեսը լինելն ու այդ միջոցով Կիխոտին հասնելը շատ ավելի հեշտ էր, ուստի և ավելի անհետաքրքրական թվաց, քան մնալ որպես Պիեռ Մենար և Պիեռ Մենարի անձնական փորձով հասնել Կիխոտին: (Նշենք նաև, որ այս համոզմունքից ելնելով՝ նա մի կողմ նետեց «Պոն Կիխոտի» երկրորդ մասի ինքնակենսագրական նախաբանը: Ներառել այդ նախաբանը՝ կնըշանակեր ստեղծել ևս մի կերպար՝ Սերվանտեսինը, և դեռ ավելին՝ կնշանակեր Կիխոտին ներկայացնել ելնելով այդ կերպարից և ոչ թե Մենարից: Բնականաբար, Մենարը հրաժարվեց այդ հեշտությունից): «Իր էության մեջ ձեռնարկումս դժվար չէ», — կարդում եմ նամակի մի այլ հատվածում, — «եթե ես անմահ լինեի, ապա այն ավարտին կհասցնեի»:

Խոստովանեմ արդյոք, որ հաճախ երևակայում եմ, թե նա ավարտել է գործը, և ես «Կիխոտը»՝ ամբողջ «Կիխոտը», կարդում

եմ այնպես, ինչպես եթե այն մտածված լիներ Մենարի կողմից: Մի քանի գիշեր առաջ XXVI գլուխը թերթելիս, որին նա երբեք չէր անդրադարձել, ճանաչեցի մեր ընկերոջ ոճը, նրա ձայնը այս արտառոց դարձվածքում. «գետերի փերիները, թախծոտ և թաց Արձագանքը»: Բարոյական և ֆիզիկական ածականի արդյունավետ շաղկապումն ինձ հիշեցրեց Շեքսպիրի տողերից մեկը, որի մասին վիճել էինք մի երեկո.

Where a malingnant and a turbaned Turk...

Ինչո՞ւ հենց «Դոն Կիխոտը»՝ կհարցնի մեր ընթերցողը: Իսպանացու համար այդպիսի նախընտրությունն ինքնին անբացատրելի չէր լինի, սակայն անկասկած այդպիսին է նիմֆի խորհրդապաշտի համար, որ Պոի կրքոտ երկրպագուն էր, որը ծնել է Բողլերին, որը ծնել է Մալարմեին, որը ծնել է Վալերիին, որը ծնել է Էդմոնդ Թեսթին: Նշված նամակը լուսաբանում է այդ հարցը: «Կիխոտը», բացատրում է Մենարը. «խորապես հետաքրքրում է ինձ, սակայն, ինչպես ասեմ՝ նա ինձ անխուսափելի չի թվում: Չեմ կարող տիեզերքը պատկերացնել առանց Էդգար Ալան Պոի հետևյալ բացականչության.

«Ah! Bear in mind this garden was enchanted»², կամ առանց «Le bateau ivre»³-ի, կամ առանց «The Ancient Mariner»⁴-ի, սակայն կարող եմ այն պատկերացնել առանց «Դոն Կիխոտի»: (Խոսքն, իհարկե, վերաբերում է անձնական կարողությանս, և ոչ երբեք այդ ստեղծագործությունների պատմական հնչողությանը): «Կիխոտը» պատահական գիրք է, «Կիխոտն» անհրաժեշտ չէ: Կարող եմ պատկերացնել, թե ինչպես կարելի է այն գրել, կարող եմ այն գրել առաջ ; ինձ տափակության վտանգին ենթարկելու: Այն գուցե և ամբողջապես կարդացել եմ տասներկու թե տասներեք տարեկանում: Հետո ուշադրությամբ վերընթերցել եմ մի քանի գլուխներ, դրանց առայժմ ձեռք չեմ զարկի: Ուսումնասիրել եմ նաև ինտերմեդիաները, կատակերգությունները, «Գալաթեան», «Օրինակելի նովելները»: Անկասկած չարաբաստիկ «Պերսիլեսի և Սեգիզմունդայի թափառումները» և «Ճամփորդություն դեպի Պառնաս» ստեղծագործությունը...

¹ Ուր չար ու չալմայավոր թուրքը... (անգլ.):

² «Ախ, չմոռանալ, որ այգին դյութված էր» (անգլ.):

³ «Հարբած նավը» (ֆրանս.):

⁴ «Հին ծովայինը» (անգլ.):

«Կիխոտի» մասին իմ ընդհանուր տպավորությունը, իմ մոռացության ու անտարբերության պատճառով պարզունակացված, կարելի է համեմատել դեռևս չգրված գրքին նախորդող աղոտ պատկերի հետ: Որպես նախադրյալ ընդունելով այս կերպարը (որ ոչ ոք չի կարող ժխտել) մնում է խոստովանել, որ իմ խնդիրը Սերվանտեսի խնդրից շատ ավելի բարդ է: Իմ հարմարվող նախորդը չի հրաժարվել պատահականության շնորհներից. լեզվի և հնարամտության հեղգությամբ տարված՝ անմահական գործն ստեղծել է մի տեսակ à la diable¹: Մինչդեռ ինձ առաջնորդում է ինքնաբերաբար ստեղծված վեպի բառացի վերստեղծման խորհրդավոր պարտականությունը: Իմ միայնակ խաղը պետք է ղեկավարվի երկու հակադիր, բևեռացված օրենքներով: Առաջինն ինձ թույլ է տալիս փորձել ձևական կամ հոգեբանական կարգի տարբերակներ: Երկրորդը, պարտադրում է դրանք զոհել հանուն «ինքնատիպ» գործի և անառարկելիորեն հիմնավորել դրանց ոչնչացումը... Այդ արհեստական խոչընդոտներին պետք է գումարել ներքին մի այլ խոչընդոտ: Տասնյոթերորդ դարի սկզբին «Կիխոտն» ստեղծելը բանական, պիտանի և գուցե անխուսափելի գործ էր, քսաներորդի սկզբին՝ անհնար: Չէ որ զուր չեն անցել բարդ իրադարձություններով հարուստ երեքհարյուր տարիներ: Դրանցից միայն մեկը, թեկուզ նշելու համար՝ հենց «Դոն Կիխոտն է»:

Այդ երեք խոչընդոտներով հանդերձ, Մենարի հատվածային «Կիխոտը» Սերվանտեսինից շատ ավելի նրբամիտ է: Սերվանտեսը ասպետական երևակայությանը հակադրում է իր երկրի նահանգային խղճուկ իրականությունը. Մենարը որպես «իրականություն» ընդունում է Կարմենի երկիրը՝ Լեպանտոյի և Լոպեի դարաշրջանում: Իսպանական ինչպիսի խաղեր ասես չէր հուշի այդ ընտրությունը Մաուրիս Բարեսին կամ դոկտոր Ռոդրիգես Լառետային: Մենարը բնականաբար զանց առավ այդ «իսպանականությունները»: Նրա ստեղծագործության մեջ ոչ գնչուականություն կա, ոչ նվաճողներ, ոչ միստիկներ, ոչ Ֆիլիպ Երկրորդ, ոչ էլ հավատքի ներշնչանքներ: Տեղական կոլորիտ նա կամ զանցառում, կամ արգելում է իրեն: Այդ արհամարհանքը նոր ուղի է ցույց տալիս պատմավեպի համար: Այդ արհամարհանքը հիմնավորապես դատապարտում է «Սալամբոն»:

¹ Բախտին ապավինելով (Ֆրանս.):

Առանձին գլուխներ հետազոտելը պակաս հետաքրքրական չէ: Օրինակ, դիտենք առաջին մասի XXVIII գլուխը, «ուր բերվում է գինագործության և գիտնականության մասին դոն Կիխոտի հետաքրքրական ճառը»: Հայտնի է, որ Դոն Կիխոտը (ինչպես Քեվեդոն ավելի ուշ՝ «Հատուցման ժամին» համանման հատվածում) վեճը որոշում է հոգուտ գինագործության և ոչ թե հոգուտ գիտնականության: Սերվանտեսը հին գինվորական էր, և նրա վճիռը բացատրելի է: Բայց որ այդ մշուշոտ սոփեստությունները կկրկնի Մենարի Կիխոտը՝ «La trahison des clerks»-ի և Բերտրան Ռասելի ժամանակակիցը, արդեն զարմանալի է: Այնտեղ մադամ Բաշելլեն տեսնում է հեղինակի բնական և զարմանալի ենթարկվածությունը հերոսի հոգեբանությանը, ուրիշները (առանց խորաթափանցության)՝ պարզապես «Կիխոտի» ընդօրինակությունը. բարոնուհի դե Բակուրը այն բացատրում է Նիցշեի ազդեցությամբ: Այս երրորդ մեկնաբանությունից հետո (որն անվիճելի եմ համարում), չգիտեմ՝ համարձակվեմ թե ոչ՝ մի չորրորդ ավելացնելու, որն համընկնում է Պիեռ Մենարի գրեթե աստվածային համեստության հետ, որն իր տխուր կամ հեզնական գրելաձևով պաշտպանում էր իր նախընտրածին ճիշտ հակառակ գաղափարներ: (Մի անգամ էլ հիշատակենք ժակ Ռեբուլի սյուրռեալիստական մեղմաբարո էջերում Պոլ Վալերիի դեմ ուղղված պարսավաճառը): Սերվանտեսի և Մենարի տեքստերը բառացիորեն նույնն են, բայց երկրորդը գրեթե անսահմանորեն ավելի հարուստ է: (Ավելի երկիմաստ, կասեն նրան հայիոյողները, բայց չէ որ երկիմաստությունն էլ է հարստություն):

Իսկապես հայտնություն է Մենարի «Դոն Կիխոտը» Սերվանտեսինի հետ համեմատելը: Սերվանտեսը, օրինակ, գրում էր («Դոն Կիխոտ», առաջին մաս, իններորդ գլուխ) .

«... Ճշմարտությունը, որի մայրը պատմությունն է, ժամանակի մրցակիցը, բոլոր գործերի շտեմարանը, անցյալի վկան, ներկայի օրինակն ու քարոզը, ապագայի նախազգուշացումը»:

Տասնյոթերորդ դարում գրված, գրված «ինքնուս տաղանդի» կողմից, այդ թվարկումը մաքուր հռետորական գովք է՝ ուղղված պատմությանը: Իսկ Մենարը գրում է.

«... Ճշմարտությունը, որի մայրը պատմությունն է, ժամանակի մրցակիցը, բոլոր գործերի շտեմարանը, անցյալի վկան, ներկայի օրինակն ու քարոզը, ապագայի նախազգուշացումը»:

Պատմությունը որպես «ճշմարտության մայր»՝ ապշեցուցիչ գաղափար է, Մենարը, Ուիլյամ Ջեյմսի ժամանակակիցը, պատմությունն ընդունում է ոչ թե որպես իրականության քննություն, այլ որպես ակունք: Նրա համար պատմական ճշմարտությունը ոչ թե կատարվածն է, այլ այն, ինչը թվում է, թե կատարվել է: Վերջին տողերը՝ «ներկայի օրինակն ու քարոզը, ապագայի նախազգուշացումը», ակնհայտորեն պրագմատիկ են:

Շատ վառ են նաև ոճական տարբերությունները: Մենարի արխայիկ ոճը, նրա, ով ի վերջո օտարական է, արհեստական է հնչում: Այդպիսին չէ նախորդինը, սա խորապես տիրապետում էր իր ժամանակաշրջանի իսպաներենին:

Չկա մտավոր այնպիսի մի վարժություն, որ ի վերջո օգտակար չլինի: Սկզբնական շրջանում բոլոր ուսմունքները տիեզերքի ճշմարտանման նկարագրություններն են՝ անցնում են տարիներն, ու այդ ուսմունքները փիլիսոփայության պատմության էջերում դառնում են միայն մի գլուխ, եթե ոչ չնչին մի հատված կամ լոկ մի անուն: Գրականության մեջ այդ հնացումը դեռ ավելի ակնհայտ է: «Կիխոտը», — ասաց մի անգամ Մենարը, — «նախ և առաջ հաճելի գիրք էր. այժմ հայրենասիրական բաժակաճառերի, քերականական պարծենկոտության, լպիրշ ու շռայլ հրատարակությունների առիթ է դարձել: Փառքը անհասկացողություն է, և գուցե ավելի վատը»:

Ոչնչապաշտական այդ հաստատումները ոչ մի նորություն չեն բերում, և հետաքրքրականը դրանցից արված Պիեռ Մենարի հետևությունն է: Նա վճռեց բարձր լինել մարդկային բոլոր սնափառություններից, որոնք դարանամուտ են մարդու բոլոր գործերին, նա ձեռնարկեց մի շատ բարդ, բայց ի սկզբանե դատարկ մի գործ: Իր բարեխղճությունն ու սթափությունը նվիրեց ինչ-որ օտար լեզվով արդեն գոյություն ունեցող մի գիրք կրկնելու գործին: Բազմապատկեց սևագրությունները, համառորեն սրբագրեց ու ճշտեց հազարավոր ձեռագիր էջեր¹: Ոչ ոքի նա թույլ

¹ Հիշում եմ վանդակավոր էջերով թերթերը, նրա սև թանաքով արված ջնջումները, յուրահյատուկ համառոտագրություններն ու միջատաձև ձեռագիրը: Երեկոյան ժամերին սիրում էր զբոսնել Նիմի արվարձաններում, հաճախ իր հետ վերցնում էր մի տետրակ և զվարթ խարույկ էր վառում (ծան. հեղ.):

չտվեց քննել այդ սևագրությունները և զգուշացավ, որ սրանք իրենից հետո չհարատևեին: Ես փորձեցի դրանք վերականգնել, բայց՝ ապարդյուն:

Եվ այժմ մտածում եմ, որ հնարավոր է «վերջնական» «Կիիսոտի» էջերում, ինչպես ջնջված մագաղաթի տառերի տակից, աղոտ, բայց ոչ անընթեռնելի տեսնել մեր ընկերոջ «սկզբնական» գրության հետքերը: Դժբախտաբար, միայն մի երկրորդ Պիեռ Մենար, հակառակ կողմից սկսելով նախորդի աշխատանքը, կարող էր գերեզմաններից հանել և վերակենդանացնել այդ Տրոյաները...

«Մտածել, վերլուծել, հնարել (գրել էր նաև)՝ անբնական գործողություններ չեն, դրանք բանականության բնական շնչառությունն են: Այդ գործողության պատահական կատարումը փառաբանելը, հին և օտար մտքերի պահպանումը, անվստահ զարմանքով հիշելը այն, ինչ մտածել է doctor universalis-ը, նշանակում է խոստովանել կամ մեր թուլությունը, կամ մեր տգիտությունը: Կարծում եմ, որ յուրաքանչյուր ոք պետք է ունակ լինի իր մեջ տեղավորել բոլոր գաղափարները, և համոզված եմ, որ ապագայում հենց այդպես էլ կլինի»:

Մենարը (գուցե և հակառակ իր ցանկության) նոր տեխնիկայի միջոցով հարստացրել է ընթերցանության արդեն կանգ առած և տարրական արվեստը՝ դա մտածված անախրոնիզմի և կեղծ հատկությունների տեխնիկան է: Անսահման գործածության հնարավորությունն ունեցող այդ տեխնիկան մեզ մղում է այնպես կարդալու «Ողիսականը», որ կարծես թե սա «էնեականից» հետո գրված լինի, իսկ Մադամ Անրի Բաշելյեի «Le jardin du Centaure»¹-ն այնպես, կարծես թե հենց ինքը Մադամ Անրի Բաշելյեն գրած լինի: Այդ հնարանքը արկածներով է լցնում ամենախաղաղ գրքերը: «Քրիստոսի երկնօրինակումը» Լուիս Ֆերդինանդ Սելինին կամ Ջեյմս Ջոյսին վերագրելը միթե նորամուծություն չէր լինի այդ նուրբ հոգևոր դաստիարակության մեջ:

¹ «Կենտավոտսի այգին» (Ֆրանս.):

And if he left off dreaming
about you...

Through the Looking-Glass, VI¹

Համատարած գիշերվա մեջ ոչ ոք չտեսավ նրա տեղ հասնելը, ոչ ոք չտեսավ սրբազան կավահողի մեջ ընկղմված եղեգնյա նավակը, սակայն մի քանի օր անց բոլորն էլ գիտեին, որ այդ մտախոհ մարդը Հարավից էր գալիս, և որ նրա հայրենիքը ջրերն ի վեր, սարերի կոշտ լանջին գտնվող անհամար ավաններից մեկն էր, այն վայրերից, ուր դեռ զենդական լեզուն հունարենից չի վարակվել, ուր բորոտությունն հաճախական չէ: Զմարտությունն այն է, որ այդ մոխրագույն մարդը համբուրեց կավահողը և, առանց իրենից հեռացնելու (գուցե և առանց զգալու) մարմինը ծածկող սուր ճյուղերը, բարձրացավ բարձունքն ի վեր, թույլ ու արյունոտ սողաց մինչև շրջանաձև կամարը, ուր բարձրանում էր քարե մի վագր կամ ձի, որն ինչ-որ ժամանակ կրակի գույնն էր ունեցել, իսկ այժմ մոխրագույն էր: Այդ շրջանակը, հին հրդեհներից ավերված, ճահճոտ անտառից կործանված, մի տաճար էր, որտեղ բնակվող աստվածությունը մարդուց հարգանք չէր ընդունում: Օտարականը պառկեց խորանի առաջ: Բարձրագահ արևն արթնացրեց նրան: Առանց զարմանալու պարզվեց, որ վերքերը բուժվել են, փակեց դժգույն աչքերն ու նորից քնեց. դա մարմնի թուլություն չէր, այլ կամքի որոշում: Գիտեր, որ այդ տաճարն էր իր անհաղթ նպատակի պահանջած վայրը, գիտեր, որ անդադրում ծառերը չէին կարողացել խեղդել ներքևի, հոսանքն ի վար գտնվող մի այլ, սրա նման այրված և մեռած աստվածների պատկանող տաճարը, գիտեր, որ իր անմիջական պարտականությունը քնելն էր: Կեսգիշերին նրան արթնացրեց ինչ-որ թռչունի հուսակտուր կանչը: Բոբիկ ոտքերի հետքերը, շաղ տված արմավներն ու կուժը նրան հուշեցին, որ շրջանի բնակիչները հարգանքով հսկել էին իր քունը և կամ իր պաշտպանությունն էին խնդրում, կամ էլ վախենում էին իր դյուրթանքից: Զգաց երկյուղի սառնությունը և լայն պատի մեջ գերեզմանային մի նկուղ որոնեց ու ծածկվեց անծանոթ տերևներով:

¹ Իսկ եթե նա դադարի տեսնել ձեզ երագում... «Հայելիների թագավորության մեջ», VI (անգլ.):

Նրա նպատակը արտառոց չէր, բայց անբնական էր: Ուզում էր երազում տեսնել մի մարդու, ուզում էր նրան երազել մանրակրկիտ ամբողջականությամբ և այն պարտադրել իրականությանը: Դյուբալկան այդ ծրագիրը կլանել էր նրա ամբողջ հոգին. եթե ինչ-որ մեկը հարցներ իր իսկ անունը կամ իր անցած կյանքի որևէ հանգամանք, նա չէր կարողանա պատասխանել: Անբնական ու ավերակ տաճարը շատ հարմար էր, քանի որ այնտեղ տեսանելի աշխարհը նվազագույնն էր, մշակների մոտիկությունն էլ էր ձեռնադր, քանի որ սրանք էին հոգալու իր սակավապետ կարիքները: Նրանց նվիրաբերած բրինձն ու մրգերը իր մարմնի համար, որի հոգսը քնելն ու երազելն էր, բավարար սնունդ էին:

Սկզբում երազները խառնիճաղանջ էին, հետո իմաստ ձեռք բերեցին և տրամաբանություն: Օտարականը ինքն իրեն երազում էր շրջանաձև մի ամֆիթատրոնի կենտրոնում, որն ինչ-որ չափով այրված տաճարն էր ներկայացնում. մտախոհ աշակերտների բուլլը զբաղեցնում էին աստիճանները, վերջիններիս դեմքերն օրորվում էին հեռավոր դարերում, աստղային մի բարձրության վրա, սակայն կատարելապես հստակ էին: Մարդը նրանց դասավանդում էր կազմախոսություն, տիեզերագիտություն և կախարդանք. այդ դեմքերը լսում էին տենչագին և փորձում էին իմացությամբ պատասխանել իրենց տրված հարցերին, կարծես գուշակում էին այդ քննության կարևորությունը, որը նրանցից մեկն ու մեկին ազատելու էր ունայն կերպարանքից և զետեղելու իրական աշխարհում: Քուն թե արթուն՝ մարդը քննում էր իր տեսիլքների պատասխանները, կեղծիքից խուսափում էր և որոշ շվարումներից գուշակում մտավոր կարողության աճը: Որոնում էր այնպիսի մեկին, որն արժանի լիներ տիեզերքին մասնակից լինելու արարողությանը:

Ինը թե տասը գիշեր հետո հասկացավ, որ իր գաղափարախոսությունը ծուլորեն ընդունող աշակերտներից ոչինչ չէր կարող սպասել և որ որոշ ակնկալիք ուներ այն աշակերտներից, որոնք մեկ-մեկ տրամաբանորեն փորձում էին հակաճառել իրեն: Առաջիններն, իհարկե, արժանի էին սիրո և համակրանքի, բայց անձ էին կարող դառնալ, վերջինները հույս էին ներշնչում: Մի երեկո (այժմ երեկոներն էլ էին նրան երազելու հնարավորություն տալիս, հիմա արթուն էր ընդամենը մի քանի ժամ՝ արշալույսին) վերջնականապես արձակեց պատրանքային ընդարձակ դպրոցը և մեն մի քանակերտ պահեց. սա մտախոհ, մեղամաղձոտ, հաճախ

անսամտ, վարպետի սուր դիմագծերը կրկնող մի երիտասարդ էր: Ընկերների հանկարծակի անհայտացումը գրեթե չզարմացրեց նրան: Մի քանի անհատական դասերից հետո նրա առաջադիմությունը հիացրեց վարպետին: Սակայն պատահեց աղետալին: Մի օր մարդը քնից վեր կացավ, ինչպես լարծուն մի անապատից, նայեց իրիկնային ունայն լույսին, որն արշալույսի լույսի հետ շփոթեց և հասկացավ, որ երազի մեջ չէ: Այդ ամբողջ գիշերն ու ցերեկը ակներևաբար անքնությունը տանջեց նրան: Ուզեց հետազոտել անտառը, հոգնել ճահիճների մեջ ուժասպառուության աստիճան և հազիվ սովորական, վաղանցուկ, անօգտակար տեսիլներով լիցքավորված, մի.թեթև քնատություն ձեռք բերեց: Ուզեց վերադառնալ դպրոցին, սակայն հորդորական հակիրճ խոսքերը նոր էր արտաբերել, երբ դպրոցը ձևափոխվեց ու հալվելով անհետացավ: Գրեթե անդադար անքնության մեջ՝ զայրույթի արցունքներն այրեցին նրա ծերացած աչքերը:

Հասկացավ, որ բարձրագույն և ցածրակարգ բոլոր առեղծվածների մեջ խորանալով հանդերձ, երազների անտրամաբանական և գլխապտույտ առաջացնող նյութը ձևակերպելու ջանքը տղամարդու բռնած գործերից ամենադժվարինն է, շատ ավելի դժվար, քան ավազից պարան հյուսելը, կամ անդեմ քամուց մետաղադրամ պատրաստելը: Հասկացավ, որ առաջին անհաջողությունն անխուսափելի էր: Երդվեց մոռանալ հսկայական այն ցնորքը, որ սկզբնական շրջանում շեղել էր նրան և աշխատանքային այլ մեթոդ որոնեց: Գործի անցնելուց առաջ մի ամիս նվիրեց ցնորքում վատնած ուժերը վերագտնելու գործին: Վանեց երազելու բոլոր նախամիտումներն ու գրեթե անմիջապես կարողացավ քնել: Այդ ժամանակահատվածում քիչ երազեց և երազներին ուշադրություն չդարձրեց: Գործը վերսկսելու համար սպասեց, որ լուսնի կլորությունը կատարյալ լինի: Երեկոյան լվացվեց գետի ջրերում, երկըրպագեց երկնային աստվածներին, արտասանեց ամենակարող անվան ծիսական վանկերն ու քնեց: Գրեթե անմիջապես երազում բաբախող մի սիրտ տեսավ:

Տասնչորս պայծառ գիշերների ընթացքում մանրամասն սիրով երազեց այդ սիրտը: Սիրտը շարժուն էր, ջերմ, խորհրդավոր, փակ բռունցքի մեծությամբ և կարմրավուն՝ անդեմ ու անսեռ մարդկային մարմնի խավարում: Ամեն գիշեր ավելի ակնհայտորեն էր ընկալում այն: Ձեռք չէր տալիս, սահմանափակվում էր վկայակոչելով, դիտելով, գուցե և սրբագրում էր հայացքով: Տարբեր

տարածություններից ու անկյուններից էր ընկալում՝ ու ապրում այդ սիրտը: Տասնչորսերորդ գիշերը ցուցամատով դիպավ շընչերակին, ապա ամբողջ սրտին՝ դրսից ու ներսից՝ Քննությունը գոհացրեց նրան: Մի գիշեր հանգստացավ և ապա վերադարձավ սրտին, մի մոլորակի անուն հիշեց ու անցավ մի այլ օրգանի տեսիլքին: Մի տարի չանցած հասավ կմախքին, թերթերունքներին: Ամենադժվար գործը գուցե անհամար մազերը եղան: Կատարյալ մի մարդ երազեց, մի պատանի, բայց սա վեր չէր կենում, չէր խոսում, աչքերը չէր բացում: Գիշեր գիշերվա հետևից քնած՝ մարդը նրան երազեց:

Գնոստիկական տիեզերագիտություններում Արարիչները հունցել են կարմիր մի Ադամ, որ չէր կարողանում ոտքի կանգնել. այդ հողե Ադամի պես անձկուն, բիրտ ու պարզունակ չէր մոգի գիշերների ստեղծած երազե Ադամը: Մի երեկո մարդը քիչ էր մնում ոչնչացնել իր գործը, բայց զղջաց: (Երանի չզղջար): Հողի և գետի աստվածություններին ուղղվող աղոթքներն սպառած՝ վայր ընկավ, ով գիտե, վագրի թե նժույգի պատկերի առջև և աղերսեց նրա անծանոթ օգնությունը: Երազում արձանը տեսավ: Նա կենդանի էր, դողդոջուն, նա ոչ թե վագրի ու նժույգի սարսափելի մի խառնուրդ էր, այլ միևնույն ժամանակ այդ երկու զորավոր կենդանիներն էր, նաև ցուլ էր, և վարդ, և փոթորիկ: Բազմադեմ այդ աստվածությունը հայտնեց, որ իր երկրային անունը *Կրակ* է, որ շրջանաձև այդ տաճարում (և նման այլ տաճարներում) պաշտել էին իրեն և իր պատվին զոհաբերություններ կատարել, հայտնեց նաև, որ ինքը շնչավորելու է երազված տեսիլքը, և աշխարհի ոչ մի արարած, բացի կրակից ու երազողից, չի իմանալու նրա ուրվականային բնույթը: Հրամայեց, որ ծեսերում վարժեցնելուց հետո, նրան ուղարկեն ջրերն ի վար հարատևող բուրգերի ավերակ տաճարը, որպեսզի այդ ամառի շինության մեջ գեթ մի ձայն փառաբանի իրեն: Երազող մարդու երազում երազելին արթնացավ:

Մոգը կատարեց այդ հրամանները: Որոշ ժամանակ տրամադրեց (որն ի վերջո երկու տարի տևեց) տիեզերքի գաղտնիքներն ու կրակի պաշտամունքը սովորեցնելու գործին: Ներքնապես ցավում էր նրանից բաժանվելու համար: Մանկավարժական կարիքի պատրվակով ամեն օր ավելացնում էր երազին նվիրված ժամերը: Նաև վերստեղծեց աջ՝ գուցե պակասող ուսը: Հաճախ նրան անհանգստացնում էր այն տպավորությունը, որ այդ ամենն արդեն

տեղի է ունեցել... Ընդհանուր առմամբ նրա օրերը երջանիկ էին անցնում, աչքերը փակելիս մտածում էր՝ «Հիմա որդուս հետ կլինեմ»: Կամ, թեև ոչ շատ հաճախ՝ «Ծնածս զավակն սպասում է ինձ, եթե չգնամ, կմեռնի»:

Աստիճանաբար նրան վարժեցրեց իրականությանը: Մի անգամ նրան հրամայեց մի դրոշակ տնկել հեռավոր մի գագաթի: Հաջորդ օրը դրոշակը ծածանվում էր գագաթին: Օրեցօր ավելի հանդուգն, համանման այլ փորձարկումներ կատարեց: Որոշ դառնությամբ հասկացավ, որ որդին պատրաստ է ծնվելու, գուցե և՛ անհամբեր: Այդ գիշեր, առաջին անգամ լինելով, համբուրեց նրան և ուղարկեց անմատչելի անտառներով ու ճահիճներով բաժանված, գետի հոսանքն ի վար փայլատակող ավերակների տաճարը: Նախ (որպեսզի երբեք չգիտակցի իր տեսլային բնույթը և ինքն իրեն մյուսների նման մարդ համարի)՝ նրան ներշնչեց ուսուցման տարիների կատարյալ մոռացումը:

Չանձրույթը գոլորշացրեց նրա հաղթանակն ու ներքին խաղաղությունը: Մայրամուտին ու արևածագին, գուցե երևակայելով, թե ջրերն ի վար մի այլ շրջանաձև ավերակներում իր անիրական որդին նույն ծեսերն է կատարում, ծնկի էր գալիս քարե արձանի առաջ ու աղոթում: Գիշերները չէր քնում կամ քնում էր բոլոր մարդկանց նման: Տիեզերքի հնչյուններն ու ձևերը աղոտ դժգոհությամբ էր ընկալում, և բացակա որդին իր հոգու այդ փոքրացումներից էր սնվում: Իր կյանքի նպատակը բավարարված էր: Մարդն հարատևեց մի տեսակ ինքնամոռացման մեջ: Որոշ ժամանակ անց, որ այդ պատմության որոշ պատմիչներ հաշվում են տարիներով, իսկ ոմանք՝ հնգամյակներով, կեսգիշերին նրան արթնացրին երկու թիավարներ. չկարողացավ տեսնել նրանց դեմքերը, բայց խոսեցին Հարավային տաճարում բնակվող կախարդական մի մարդու մասին, որ կարողանում էր առանց այրվելու կրակը խառնել:

Կախարդը հանկարծ հիշեց Աստծո խոսքերը: Հիշեց, որ աշխարհի բոլոր արարածներից միայն կրակը գիտի իր որդու տեսլային բնույթի մասին: Սկզբում հանգստացնող այդ հուշն սկսեց տանջել նրան: Վախեցավ, որ որդին խորհեր այդ անբնական կարողության մասին և ինչ-որ ձևով հայտնաբերեր իր ուրվակա-նային բնույթը: Ոչ թե մարդ, այլ մի ուրիշ մարդու երագի արտացոլանքը լինել. ինչ անհամեմատելի նվաստացում, ինչ ճակատագիր: Յուրաքանչյուր ծնող հետաքրքրվում է շփոթմունքի կամ

երջանկության պահին իր բեղմնավորած (թուլլատրած) գավակով, բնական էր, որ մոզը հազար ու մի գաղտնի գիշերների միջոցով, ջիղ առ ջիղ, հատկություն առ հատկություն մտածեր և երկյուղեր իր որդու ապագայի համար:

Նրա մտորումների վախճանն հանկարծակի էր, սակայն այդ վախճանը խոստացել էին որոշ ակնհայտ նշաններ: Սկզբում (երկար երաշտից հետո) սարի վրա հայտնված թռչնի պես թեթև և հեռավոր ամպը, հետո՝ Հարավից ընձառյուծի լնդերի պես շառագունող երկինքը, տարածվող ծուխը, որ ժանգով պատեց գիշերների մետաղը, հետո՝ երկյուղած անասունների փախուստը: Որովհետև կրկնվեց դարեր առաջ կատարվածը: Կրակն ավերեց Կրակի աստվածությանը նվիրված սրբավայրի ավերակները: Առանց թռչունների մի արշալույսի մոզը տեսավ, թե շրջապատող հրդեհն ինչպես է փարվում պատերին: Մի պահ մտածեց ապաստան որոնել ջրերի մեջ, բայց հետո հասկացավ, որ մահը գալիս է իր ծերության և գործերի վախճանը թագադրելու: Քայլեց դեպի կրակի բոցերը: Սրանք չխայթեցին նրա մարմինը, շոյեցին ու, առանց կիզումի, ջերմությամբ լցրին նրա մարմինը: Սփռված, նվաստացած, սարսափած՝ հասկացավ, որ ինքն էլ է մի տեսիլք, որ երևում է մեկ ուրիշի երազում:

Ամեն մի բաբելացու նման ես էլ եմ փոխկոնսուլ եղել և յուրաքանչյուրի պես եղել եմ նաև ստրուկ, ինձ անծանոթ չեն մնացել ոչ ամենակարողությունը, ոչ խայտառակությունը, ոչ էլ բանտերը: Տեսե՛ք, աջ ձեռքիս ցուցամատը չկա: Տեսե՛ք, թիկնոցիս բացվածքից, փորիս վրա կարմրավուն մի դաջվածք է երևում. դա երկրորդ տառի՝ «Beth»-ի պատկերն է: Լիալուսին գիշերներին այս տառն ինձ իշխանություն է տալիս այն մարդկանց վրա, որոնց խորհրդանիշը «Ghime!» է, սակայն ինձ ենթարկում է «Aleph» տառն ունեցող մարդկանց հրամանին, որոնք անլուսին գիշերներին ենթարկվում են «Ghime!»-ի նշանն ունեցողներին: Արշալույսի առաջին շողի հետ, մի ներքնահարկում, սև քարի առաջ սրբազան ցուլեր եմ ողջակիզել: Մի ամբողջ լուսնատարի հայտարարել են, թե իբր ես անտեսանելի եմ. գոռացել եմ և չեն պատասխանել, հաց եմ գողացել և չեմ գլխատվել: Ճանաչել եմ այն, ինչն անծանոթ էր հույներին՝ անվստահությունը: Բանտախցում, դահճի լուռ ճիրանների մեջ, հույսը ինձ չի լքել, իսկ հաճույքների գետում՝ սարսափը: Հերակլիդես Պոնտացին հիացմունքով պատմում է, որ Պյութագորասն հիշում էր, թե Պյութագորաս լինելուց առաջ ինքը Պյուռոսն է եղել, դրանից առաջ՝ Էուֆորբը, իսկ դրանից առաջ՝ մի այլ մահկանացու. համանման հանգամանքներ հիշելու համար ես մահվան կամ կեղծիքի դիմելու կարիք չունեմ:

Ճակատագրի այս գրեթե դաժան փոփոխականության համար պարտական եմ այլ պետություններում չճանաչված կամ գաղտնի և ամբողջապես չգործող մի ձեռնարկության՝ վիճակախաղին: Նրա պատմությունը չեմ ուսումնասիրել, գիտեմ, որ մոգերը չեն կարողանում համաձայնության գալ. նրա հզոր նպատակներից միայն այնքանը գիտեմ, որքան աստղագիտության մեջ չմասնագիտացված մի մարդ կարող է լուսնի մասին իմանալ: Ծագումով խելահեղ մի երկրից եմ, ուր վիճակախաղը կյաքին իշխող հիմնական մարզերից է, մինչև օրս նրա մասին այնքան քիչ եմ մտածել, որքան քիչ են մտածում անքննելի աստվածների կամ սրտի վարքի մասին: Հիմա Բաբելոնից ու նրա սիրելի բարքերից հեռու, որոշ զարմանքով եմ մտածում վիճակախաղի և մայրամուտներին դիմակավոր մարդկանց հորինած պիղծ կռահումների մասին:

Հայրս պատմում էր, որ անցյալում (դարերի, թե տարիների պատմություն) Բաբելոնում վիճակախաղը ռամկական խաղ

է եղել: Պատմում էր (չգիտեմ՝ ճիշտ), որ վարսավիրները պղնձե դրամի դիմաց վաճառում էին խորհրդանիշներով զարդարված ոսկրե կամ մագաղաթե քառանկյունիներ: Հենց նույն օրը տեղի էր ունենում վիճակահանությունը. հաղթողները, առանց այլևայլության, արծաթե դրամներ էին ստանում: Ինչպես տեսնում եք, գործելաձևը պարզունակ էր:

Բնականաբար այդ «վիճակախաղերը» անհաջողության մատնվեցին: Նրանք ոչ մի բարոյական արժանիք չունեին: Նկատի էր առնված միայն մարդու հույսը և անտեսված՝ նրա մյուս հատկությունները: Ժողովրդի անտարբերությունը սնանկացրեց այդ պարզունակ վիճակախաղերը հիմնադրող վաճառականներին: Մեկը մի փոփոխություն փորձեց մտցնել՝ նպաստավոր թվերի ընդհանուր շարքի մեջ ներդրվեցին մի քանի աննպաստ համարներ: Այդ փոփոխության հետևանքով քառանկյունիներ գնողները միևնույն ժամանակ ենթարկվում էին գումար շահելու և (հաճախ մեծ) տուգանք վճարելու բախտին: Թեթևակի վտանգը (երեսուն նպաստավոր թվերի կողքին միայն մի դժբախտ համար կար) բնականաբար արթնացրեց ժողովրդի հետաքրքրությունը: Բաբելացիները տրվեցին խաղին: Քառանկյունիներ չգնողը համարվում էր փոքրոգի ու երկչոտ: Ժամանակի ընթացքում այդ արդարացի արհամարհանքը կրկնապատկվեց: Արհամարհվում էր չխաղացողը և միևնույն ժամանակ՝ տուգանք վճարող պարտվածը: Ընկերությունը (այդպես սկսեցին անվանել կազմակերպությանը) պետք է հսկեր հաղթողների շահերը, որոնք եթե պակասեին, տուգանքների գրեթե ամբողջական գումարը չէին կարող գանձել: Ընկերությունը դատ բացեց պարտվողների դեմ. դատավորը որոշեց, որ սրանք պետք է մուծեին հիմնական տուգանքն ու ծախսերը, կամ՝ մի քանի օրով կալանավորվեին: Ընկերությանը մոլորեցնելու միտումով, բոլորն էլ բանտն ընտրեցին: Մի քանիսի այդ հանդգնությունից էլ ծնվեց Ընկերության ամենակարողությունը՝ նրա եկեղեցական և բնագանգական իշխանությունը:

Որոշ ժամանակ անց, վիճակահանությունների տեղեկությունները մերժեցին տուգանքների գումարը և բավարարվեցին աննպաստ համարների սահմանած կալանման օրերի քանակը հրապարակելով: Իր ժամանակին գրեթե աննկատ այդ լակոնիզմը ապագայում մեծ նշանակություն ունեցավ: **Վիճակախաղի մեջ ոչ դրամական տարրերի մուտքի առաջին փաստն էր դա:** Հաջողությունը մեծ էր: Ենթարկվելով խաղացողների ցանկությանը՝ Ընկերությունը հարկադրված ավելացրեց աննպաստ համարների քանակը:

Բոլորին հայտնի էր, որ Բաբելոնի ժողովուրդը պաշտում է տրամաբանությունը և նույնիսկ՝ համաչափությունը: Անտրամաբանական էր, որ նպաստավոր համարները կլոր դրամներով հաշվվեին, իսկ աննպաստները՝ կալանավորության օրերով ու գիշերներով: Որոշ բարոյագետներ մտածեցին, որ միշտ չէ, որ դրամը կարող է երջանկություն բերել, և որ գուցե ուրախության ուրիշ ձևեր կարող էին ավելի արդյունավետ լինել:

Աղքատ թաղամասերում մտահոգությունը ուրիշ էր: Քրմապետական ժողովի անդամները բազմապատկում էին խաղազումարը և վայելում սարսափի ու հույսի բոլոր անակնկալները, աղքատները (բնական և անխուսափելի նախանձով) իրենց դուրս էին զգում այդ ակնհայտորեն հաճելի, վայրիվերո տատանումներից: Արդարացի այն տենչանքը, որ բոլորն էլ՝ աղքատ թե հարուստ, հավասարապես մասնակցեին վիճակախաղին, առաջ բերեց ցասկոտ մի ըմբոստություն, որի հուշը չի մարել տարիների ընթացքում: Որոշ համառներ չհասկացան (կամ ձևացրին թե չեն հասկանում), որ դա մի նոր կարգ էր, պատմականորեն անհրաժեշտ մի ժամանակաշրջան: Մի ստրուկ կարմիր մի տոմս գողացավ: Վիճակահանությունը պարզեց, որ պետք է այրեին նրա լեզուն: Տոմս գողացողի համար օրենքը նույն պատիժն էր սահմանում: Որոշ բաբելացիներ պնդում էին, որ նա արժանի է շիկացած երկաթի, քանի որ գող է, ուրիշները, ավելի բարեգութ, պնդում էին, որ պետք է նրա լեզուն այրեն, քանի որ բախտն էր այդպես սահմանել... Խառնակչություններ, ողբալի արյունահեղություններ տեղի ունեցան, սակայն վերջապես, հարուստների կամքին հակառակ, բաբելացիները պարտադրեցին իրենց կամքը: Ժողովուրդը հասավ իր ազնվաբարո նպատակներին: Առաջին հերթին Ընկերությունն ընդունեց ժողովրդի իշխանության իրավունքը: (Նկատի առնելով նոր գործողությունների ծավալն ու բարդությունը՝ այդ միասնությունը անհրաժեշտ էր): Երկրորդ հերթին՝ վիճակախաղը գաղտնի, ձրի և ընդհանուր դարձավ: Արգելվեց վիճակների անօրինական վաճառքը: Բելի ծիսախորհուրդներին մասնակից դառնալով՝ յուրաքանչյուր ազատ մարդ մեխանիկորեն մասնակցում էր սրբազան վիճակահանություններին, որ տեղի էին ունենում վաթսուն գիշերը մեկ՝ Աստծու լաբիրինթոսներում, և մինչև հաջորդ վիճակահանությունը որոշում էին մարդու ճակատագիրը: Հետևանքները անկանխագուշակելի եղան: Երջանիկ մի խաղաբություն նրան կարող էր մոգերի խորհրդի անդամ դարձնել, կամ

Նրան կարող էր տալ իր (հանրային կամ մտերիմ) թշնամուն բանտարկելու հնարավորություն, կամ սենյակի խաղաղ մենության մեջ նա կարող էր հայտնաբերել այն կնոջը, որն սկսել էր մտահոգել իրեն, կամ այն կնոջը, որին այլևս չէր սպասում տեսնել վերստին, աննպաստ խաղարկությունը կարող էր անդամալուծություն, բազմատեսակ խայտառակություն կամ մահ նշանակել: Հաճախ միևնույն դեպքը՝ Ա-ի գինետանաբարո սպանությունը, Ե-ի խորհրդավոր աստվածացումը, երեսուն թե քառասուն վիճակահանությունների հանճարեղ լուծումն էր: Խաղարկությունները կարգավորելը ղեկավար էր, բայց պետք է հիշենք, որ Ընկերության անդամները ամենակարող ու խորամանկ էին (և են): Շատ դեպքերում իմանալը, որ որոշ երջանկություններ պարզապես բախտի արդյունքն են, կնվազեցնե՞ր նրանց արժեքը, և այդ խոչընդոտից խուսափելու համար Ընկերությունը գործածում էր սադրանքն ու մոգությունը: Նրա բոլոր քայլերն ու գործողությունները գաղտնի էին: Յուրաքանչյուրի ներքին հույսերի ու ներքին սարսափների մասին տեղեկանալու համար նրանք օգտագործում էին աստղագետներ ու լրտեսներ: Գրություն ունեին քարե առյուծներ, «Qaphga» կոչվող սրբազան մի արտաքնոց, խցանված ջրանցքում գտնվող որոշ անձավներ, որոնք ընդհանուրի կարծիքով *կապվում էին Ընկերության հետ*. չար թե բարի մարդիկ այդ վայրերում էին անում իրենց մատնությունները: Կասկածելի ճըշմարտություն ունեցող այդ տեղեկությունները արձանագրվում էին մի արխիվում՝ այբբենական հերթականությամբ:

Անհավատալիորեն փսփսուկները չպակասեցին: Ընկերությունը, իր սովորական չափվածությամբ, ուղղակիորեն չպատասխանեց: Նախընտրեց դիմակների գործարանի ավերակների վրա հակիրճ մի պատճառաբանություն խզբզել, որն այժմ տեղ է գտել սրբազան գրերի մեջ: Դավանանքի մասին խոսող այդ հաստվածը վկայում է, որ վիճակախաղը աշխարհի կարգի մեջ բախտի ներթափանցումն է, և որ սխալներ ընդունելը չի նշանակում հակաճառել բախտին, ընդհակառակը՝ նշանակում է հաստատել այն: Վկայում է նաև, որ այդ առյուծներն ու այդ սրբազան արտաքնոցը, որ Ընկերության կողմից չէին արժեզրկվել (չէր հրաժարվում նրանց դիմելու իրավունքից), գործում էին առանց պաշտոնական երաշխավորության:

Այդ հայտարարությունը խաղաղեցրեց ժողովրդի խռովքը: Այլ, հեղինակի կողմից գուցե և չնախատեսված, ազդեցություններ էլ

ունեցաւ: Խորապէս փոխեց Ընկերության հոգին ու գործելակերպը: Քիչ ժամանակ է մնացել, հիշեցնում են, որ նաւը մեկնելու է, բայց կփորձեմ բացատրել:

Որքան էլ անհավատալի թվա, մինչ այդ ոչ ոք չէր մտածել խաղերի մի ընդհանուր տեսության մասին: Բաբելացու միտքը հայեցողական չէ: Նա ընդունում է բախտի վճիռները, նրանց նվիրաբերում իր ողջ կյանքը, իր հույսը, իր սահմակեցուցիչ սարսափը, բայց նրա մտքով չի անցնի հետազոտել բախտի լաբիրինթոսային օրենքները, նրա մտքով չի անցնի հետազոտել բախտ գուշակող, պտտվող շրջագնդերը: Սակայն նշածս պետական հայտարարությունը առաջ բերեց իրավաբանական-մաթեմատիկական բազում վեճեր: Նրանցից մեկն արեց հետևյալ ենթադրությունը. եթե վիճակախաղը պատահականության սաստկացումն է, կոսմոսի մեջ քաոսի պարբերական ներդրումը, ապա ավելի լավ չէր լինի, եթե պատահականությունը վիճակահանության ոչ թե մի, այլ բոլոր փուլերում մասնակցեր: Ծիծաղելի չէ արդյոք, որ բախտն ինչ-որ մեկի մահը թելադրի, իսկ ոչինչ չասի այդ մահվան հանգամանքների՝ գաղտնապահության, հրապարակայնության, մի ժամվա կամ մի դար ժամանակահատվածի մասին: Արդարացի այդ սկզբունքները վերջապէս առաջ բերեցին նկատելի մի փոփոխություն, որի բարդությունները (դարերի գործադրությամբ սաստկացած) բացի որոշ մասնագետներից՝ ոչ ոք չի հասկանում, բայց ես գոնե հպանցիկորեն կփորձեմ ամփոփել դրա էությունը:

Պատկերացնենք առաջին իսկ վիճակահանությունը, որը կթելադրի մի մարդու մահ: Դրա կատարման համար անցնում են մի այլ վիճակահանության, որ առաջարկում է (ասենք) ինը հնարավոր հրամաններ կատարողներ: Դրանցից չորսը կարող են սկսել երրորդ մի վիճակահանություն, որ որոշելու է դահճի անունը, երկուսը կարող են աննպաստ հրամանը երջանիկ մի հրամանով փոխարինել (ասենք՝ թաքնված մի գանձ գտնել), մի ուրիշը կարող է մահը սաստկացնել (այսինքն՝ խայտառակ դարձնել մահը, կամ այն տանջանքներով հարստացնել), ուրիշները կարող են հրաժարվել հրամանը կատարելուց... Այդպէս է խորհրդանշական պատկերը: Իրականում, **վիճակահանությունների քանակն անսահման է:** Ոչ մի որոշում վերջնական չէ, բոլորն էլ ճյուղավորվում են: Տգետները կարծում են, թե անսահման վիճակահանությունները պահանջում են ժամանակի անսահմանություն. իրականում բավական է, որ ժամանակն անսահմանորեն բաժա-

նելի լինի, ինչպես ուսուցանում է Կրիայի մրցույթի հայտնի առակը: Այդ անսահմանությունը զարմանալիորեն համընկնում է բախտի գալարապտույտ թվերի Պատահականությանը և պլատոնականների պաշտա Վիճակախաղի երկնային Արքետիպի հետ... Թեբեում կարծես հայտնվել է մեր ծեսերի այլասերման մի արձագանք՝ էլիոս Լամբրիդացին իր «Անտոնինո Հելիոգաբալոյի կյանքը» գրքում պատմում է, որ այս կայսրը իր հյուրերի համար նախատեսած բախտը գրում էր խեցիների վրա, այնպես որ մեկը ստանում էր տասը գրվանքա ոսկի, մեկ ուրիշը՝ տասը ճանճ, տասը առնետ, տասը արջ: Հարկ է հիշել, որ Հելիոգաբալոն իր ուսումնստացել է Փոքր Ասիայում, անվանադիր Աստծո քրմերի մոտ:

Գոյություն ունեն նաև անանձնական, անորոշ նպատակներ ունեցող վիճակահանություններ. մեկն հրամայում է, որ եփրատի ջրերը նետվի տապրոբանյան մի շափուղա, երկրորդը՝ աշտարակի տանիքից մի թռչուն արձակվի, երրորդը պահանջում է, որ ամեն դար ծովափի անհամար ավազից մի հատիկ պակասի (կամ ավելանա): Հետևանքները հաճախ սարսափելի են լինում:

Ընկերության բարեգործ ազդեցությամբ մեր սովորությունների մեջ սողոսկել են բազմաթիվ պատահականություններ: Տասներկու դամասկյան գինու կուժ գնողը չի զարմանա, եթե նրանց մեջ մի թալիսման կամ մի օձ գտնի, պայմանագիր շարադրող նոտարը միշտ էլ ինչ-որ սխալ տեղեկություն է գրանցում, ես ինքս, այս հապշտապ հայտարարության մեջ կեղծել եմ ինչ-որ բաներ ու դաժանություններ: Գուցե նաև՝ ինչ-որ խորհրդավոր երանգներ... Մեր պատմաբանները, որ աշխարհի ամենահմուտներն են, բախտը սրբագրելու մի միջոց են հնարել. հայտնի է, որ այդ մեթոդի գործողությունները (ընդհանարպես) ճշգրիտ են, թեև, բնականաբար, առանց ստի որոշակի քանակի առկայության չեն տարածվում: Բացի այդ՝ ոչինչ այնքան վարակված չէ մտացածնությամբ, որքան հենց Ընկերության պատմությունը... Մի տաճարում հայտնաբերված հնագիտական մի փաստաթուղթ կարող է երեկվա կամ բազմադարյան մի վիճակահանության արդյունքը լինել: Իր բազում օրինակների մեջ որոշ տարբերություններ չունեցող գիրքը չի հրատարակվում: Ընդօրինակողները գաղտնի երդում են տալիս և բացթողումներ, և մեջբերումներ անելու, և փոփոխելու համար: Գործադրվում է նաև անուղղակի սուտը:

Ընկերությունը աստվածային համեստությամբ խուսափում է հրապարակայնությունից: Նրա աշխատակիցները, բնականա-

բար, գաղտնի են: Ընկերության շարունակ արձակած հրամանները չեն տարբերվում կեղծարարների արձակած հրամաններից: Բացի այդ՝ ղվ կարող է հպարտանալ միայն կեղծարար լինելով: Միթե անհեթեթ մի հրաման արձակող հարբեցողը, երազողը, որ արթնանում է հանկարծ ու խեղդում կողքին պառկած կնոջը, Ընկերության գաղտնի որոշումները չի կատարում: Միայն Աստծո գործունեության հետ համեմատելի այդ լռակյաց գործունեությունը տեղիք է տալիս ամեն տեսակի ենթադրությունների: Դրանցից մեկը, դիվային մի ենթադրություն, ասում է, թե իբր Ընկերությունը դարեր առաջ է դադարել գոյություն ունենալուց, և որ մեր կյանքի սրբազան անկարգությունը միայն ժառանգական է, ավանդական, մի այլ ենթադրություն գտնում է, որ Ընկերությունը հավերժական է և ուսուցանում է, թե այն գոյատևելու է մինչև վերջին գիշերը, երբ վերջին Աստվածը կոչնչացնի մարդկանց: Մեկ ուրիշն ասում է, թե Ընկերությունը ամենակարող է, բայց ազդում է փոքր բաների՝ թռչնականչի, ժանգոտության ու փոշու երանգների, արշալույսի երազների վրա: Մեկ ուրիշը դիմակավոր աղանադապետերի շուրթերով պնդում է, թե Ընկերությունը գոյություն չի ունեցել և չի էլ ունենալու: Ոչ պակաս նենգավոր մի այլ ենթադրություն կա, որ պնդում է, թե զարհուրելի կազմակերպության իրողությունը հաստատելը կամ ժխտելը միևնույնն է, քանի որ Բաբելոնը ոչ այլ ինչ է, եթե ոչ բախտի անսահման մի խաղ:

ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

By this art you may
contemplate the variation
of the 23 letters...

The Anatomy of Melancholy,
part 2, sect. II, mem IV ¹

Տիեզերքը, այլոք անվանում են Գրադարան, բաղկացած է ընդարձակ, գուցե և անհամար վեցանկյունաձև սրահներից, դրանց կենտրոնում՝ ռոպես օդափոխիչ ծառայող հորերից՝ շրջապատված ոչ այնքան բարձր բազրիքներով: Սրահների դասավորությունն անփոփոխ է. բացի երկուսից, քսան դարակներ՝ յուրաքանչյուր պատի վրա հինգը, զբաղեցնում են սրահը, որի բարձրությունը մեկ հարկաչափ է, իսկ գրադարանի բարձրությունը սովորական գրադարանների չափ է: Ազատ կողմերից մեկը տանում է դեպի նեղ միջանցք, ապա դուրս է գալիս մի այլ սրահ, որ մյուսի և բոլորի կրկնօրինակն է: Միջանցքի աջ և ձախ կողմերում երկու փոքրիկ սենյակներ կան: Մեկում հնարավոր է միայն ոտքի վրա քնել, մյուսում՝ բավարարել մարմնական կարիքները: Կից՝ պարույրաձև սանդուղքն է, որ մեկ տանում է դեպի վեր, մեկ՝ ներքև, և կորչում հեռվում: Միջանցքում ճշգրտորեն կրկնապատկող մի հայելի կա: Այդ հայելու գոյությունը մարդկանց եզրակացնել է տալիս, որ Գրադարանը անսահման չէ. (եթե իսկապես անսահման լիներ, համ էր պետք պատրանքային այդ կրկնությունը), ես նախընտրում եմ կարծել, որ ողորկ մակերեսները ձևավորում և խոստանում են անսահմանություն... Լույսը բխում է ապակյա վարսանդ հիշեցնող կլոր, լամպ կոչվող ջահերից: Ամեն մի վեցանկյունում երկու հատ կա՝ յուրաքանչյուրը հակադիր պատից կախված: Նրանց արձակած անբավարար լույսը երբեք չի մարում: Գրադարանի յուրաքանչյուր մարդու պես ես էլ եմ ճամփորդել երիտասարդությանս օրերին: Ուխտագնացության ընթացքում որոնել եմ մի գիրք, գուցե քարտարանների քարտարանը, այժմ, երբ աչքերս չեն կարողանում գրածս կարդալ, իմ ծննդավայր վեցանկյունուց մի քանի մղոն հեռավորության վրա պատրաստվում եմ մեռնել: Երբ կմահանամ,

¹ «Այս արվեստը թույլ կտա ձեզ մտահայել քսաներեք տառերի տարբեր համակցությունները...», «Մելամադձության կազմախոսությունը», մաս 2, բաժին II, գլ. IV (անգլ.):

ինչ-որ բարեգութ ձեռքեր ինձ կնետեն փոսը, և գերեզմանս անթափանցելի օղը կլինի, մարմինս դանդաղորեն կիջնի և քայքայվելով ցրիվ կգա իմ անվերջանալի անկումից առաջացած քամուց: Ես հավաստում եմ, որ Գրադարանը անսահման է: Իդեալիստներն ասում են, թե վեցանկյունաձև սրահները բացարձակ տարածության անհրաժեշտ ձևն են, կամ գոնե՝ տարածության մեր զգացումը: Նրանք ենթադրում են, որ եռանկյունաձև կամ հնգանկյունաձև սրահն անըմբռնելի է: (Միստիկները հավատացնում են, որ էքստազի մեջ նրանց հայտնվում է մի գնդաձև սրահ, ուր պատերին հասնող, կլորավուն, անվերջանալի կողեզրով մի գիրք կա, սակայն նրանց վկայությունը կասկածելի է, և մութ են նրանց խոսքերը: Այդ ուրոտների գիրքը Աստված է): Առայժմ կարելի է բավարարվել դասական բանաձևով. Գրադարանը գունդ է, որի ճշգրիտ կենտրոնը որևէ վեցանկյունի է, իսկ մակերեսը՝ անմատչելի է:

Յուրաքանչյուր վեցանկյունու յուրաքանչյուր պատին համապատասխանում են հինգ դարակներ, յուրաքանչյուր դարակ իր՝ մեջ պարունակում է երեսուներկու նույն չափսի գիրք, յուրաքանչյուր գիրք բաղկացած է չորս հարյուր տասը էջից, յուրաքանչյուր էջ՝ քառասուն տողից, յուրաքանչյուր տող՝ մոտավորապես ութսուն սև գույնի տառերից: Տառեր կան նաև գրքերի եզարկողերին, այդ տառերը, սակայն, չեն նշում կամ հուշում էջերի բովանդակությունը: Գիտեմ, որ այդ անհամապատասխանությունը մի ժամանակ խորհրդավոր էր թվում: Եզրակացություն անելուց առաջ (որը, չնայած նույնիսկ իր ողբերգական հեռանկարին, գուցե և այս պատմության մեջ հիմնականն է) ուզում եմ մի քանի աքսիոմաներ հիշեցնել:

Առաջին՝ Գրադարանը գոյություն ունի ab aeterno¹: Այս ճշմարտությանը, որի անմիջական հետևությունն աշխարհի ապագա հավերժությունն է, ոչ մի առողջ դատողություն չի կարող կասկածել: Մարդը՝ անկատար գրադարանավարը, կարող է բախտի կամ չարանենգ հանճարների ստեղծագործությունը լինել, իսկ նրբագեղ դարակներով, խորհրդավոր հատորներով, ճամփորդների համար անվերջանալի աստիճաններով, նստակյաց գրադարանավարների համար նախատեսված արտաքնոցներով տիեզերքը՝ մի-

¹ Հավերժություն (լատ.):

այն աստվածային արարչություն է: Աստվածայինի և մարդկայինի միջև եղած տարբերություններն ընկալելու համար բավական է գրքի եզրակողին իմ դողդոջուն ձեռքի խզբզած կոշտ ու կոպիտ այս խորհրդանիշները համեմատել ներսի ներդաշնակ, ճշգրիտ, նուրբ, սև, անընդօրինակելիորեն համաչափ տառերի հետ:

Երկրորդ՝ *գրության նշանների քանակը քանհինգ է*¹: Այդ փաստարկումը թույլ տվեց երեք հարյուր տարի առաջ բանաձևել Գրադարանի մասին ընդհանուր մի տեսություն և բավարար կերպով լուծել մինչ այդ անլուծելի համարվող խնդիրը՝ գրքերի, առանձին-առանձին յուրաքանչյուր գրքի մուրօ և անկազմակերպ բնույթը: Տասնհինգի ինսուսնչորսերորդ վեցանկյունում հայրս մի գիրք հայտնաբերեց, որը բաղկացած էր միմիայն MCV տառերից, որոնք կարծես դիտավորյալ կրկնվում էին գրքի առաջին տողից մինչև վերջինը: Մեկ ուրիշը (այդ վայրերում հաճախակիորեն ուսումնասիրված մի գիրք) ինքնին տառերի մի լաբիրինթոս է, սակայն նախավերջին էջում ասվում է. «*Օ ժամանակ, քո բուրգերը*»: Հայտնի բան է, որ իմաստավորված մի տողի կամ ճշգրիտ մի տեղեկության կողքին լինում են հազարավոր անմտություններ, խոսքային անպետքությունների խառնակույտեր և անտրամաբանական անհեթեթություններ: (Ինձ հայտնի է մի վայրի տեղը, ուր գրադարանավարներն հրաժարվել են գրքերի մեջ իմաստ որոնելու նախապաշարումից ու ունայն սովորությունից, կարծելով, թե դա նույնն է, ինչ երազների կամ ձեռնափերի գծերի մեջ իմաստ որոնելը: Նրանք ընդունում են, որ գրեր հորինողները դրանք ընդօրինակել են բնական քանհինգ նշաններից, սակայն պնդում են, որ դրանց կիրառությունը պատահական է, և գրքերն ինքնին ոչինչ չեն նշանակում: Այս դատողությունը, ինչպես հետո կտեսնենք, ամենևին անհիմն չէ):

Երկար ժամանակ կարծում էին, որ այդ անհասկանալի գրքերը կարող էին գրված լինել անցյալի մի հնագույն կամ էկզոտիկ լեզվով: Ճիշտ է, հնագույն մարդիկ՝ առաջին գրադարանավարները, այլ լեզու են գործածել, բայց ճիշտ է նաև, որ մի քանի մղոն

¹ Ձեռագրում բացակայում են թվերն ու գլխատառերը: Կետադրությունը սահմանափակված է միայն ստորակետով և վերջակետով: Այդ երկու նշանները, տառերի միջև ընկած տարածությունն ու այբուբենի քաներկու տառերը կազմում են անծանոթի թվարկած քանհինգ նշանները (ծան. Բորխեսի հրատարակչի. — ծան. խմբ.):

դեպի աջ՝ լեզուն բարբառային է, իսկ իննսուն հարկ վերև՝ անհասկանալի: Այդ ամբողջը, կրկնում եմ, ճիշտ է, սակայն անփոփոխական MCV-ի չորս հարյուր տասը էջերը չեն կարող պատկանել ոչ մի լեզվի, որքան էլ սա բարբառային կամ պարզունակ լինի: Ոմանք անուղղակիորեն ակնարկեցին, որ յուրաքանչյուր տառ կարող է ազդել հաջորդի վրա, և որ MCV-ի նշանակությունը 71-րդ էջի երրորդ տողում մի այլ էջի այլ դիրքում գտնվողի արժեքը չի կարող ունենալ, բայց այդ անորոշ տեսությունը հաջողություն չունեցավ: Ոմանք էլ կարծեցին, թե գաղտնագրություն է. այդ կռահումը համաշխարհային ընդունելություն գտավ, բայց ընդունվեց հնարողների կողմից չկանխատեսված իմաստով:

Հինգ հարյուր տարի առաջ վերին վեցանկյուններից մեկի գրադարանավարը՝ մյուսների պես խառնափնթոր, բայց գրեթե երկու թերթ համաչափ տողեր ունեցող մի գիրք հայտնաբերեց: Իր հայտնությունը ցույց տվեց թափառական մի վերծանողի, սա ասաց, որ այդ տողերը գրված են պորտուգալերեն, սակայն ոմանք պնդեցին, որ լեզուն եբրայերեն է: Մի դար չանցած կարողացան ճշտել, որ այն գուարանիի սամոյեդո-լիտվական մի բարբառ է, որ կրել է դասական արաբերենի ազդեցությունը: Բովանդակությունն էլ պարզվեց՝ համակցական վերլուծության գաղափարներ, անսահման կրկնությամբ տարբերակների օրինակներով պարզաբանված: Այդ օրինակները թույլ տվեցին, որ հաճարեղ մի գրադարանավար հայտնաբերեր գրադարանի գլխավոր օրենքը: Այս մտածողը նկատեց, որ բոլոր գրքերը, որքան էլ իրարից տարբեր, բաղկացած են միևնույն տարրերից՝ տառերի միջև ընկած տարածություն, վերջակետ, ստորակետ, այբուբենի քսաներկու տառ: Գրադարանավարն ակնարկեց ևս մի հանգամանք, որ հաստատել են բոլոր ճամփորդները՝ հսկայական Գրադարանում երկու նույնանման գրքեր չկան: Այդ անվիճելի նախադրյալներից ելնելով եզրակացրեց, որ Գրադարանը համընդգրկուն է, և որ դարակները պարունակում են քսանից ավելի գրության նշանների բոլոր հնարավոր կապակցությունները (շատ մեծ, բայց ոչ անսահման մի թիվ),

¹ Առաջ ամեն մի մարդու բաժին էր հասնում երեք վեցանկյունի: Ինքնասպանություններն ու թոքերի հիվանդությունները խախտել են այդ կարգը: Անասելիորեն տխուր է խոստովանել, որ հաճախ, երկար գիշերներ ճամփորդել եմ ողորկ միջանցքներով ու սրահներով և ոչ մի գրադարանավարի չեմ հանդիպել (ծան. հեղ..):

այսինքն՝ այն ամենը, ինչ հնարավոր է ասել գոյություն ունեցող բոլոր լեզուներով: Ամբողջը՝ ապագայի մանրակրկիտ պատմությունը, հրեշտակապետների ինքնակենսագրությունը, Գրադարանի իսկական քարտարանը, հազարավոր կեղծ քարտարաններ, այդ քարտարանների կեղծությունն հաստատող գործեր, իսկական քարտարանի կեղծիքն ապացուցող մի ստեղծագործություն, Բասիլիդեսի գնոստիկական ավետարանը, այդ ավետարանի մեկնությունը, այդ ավետարանի մեկնության մեկնությունը, քո սեփական մահվան ճշգրիտ պատմությունը, յուրաքանչյուր գրքի բոլոր տարբերակները՝ բոլոր լեզուներով, յուրաքանչյուր գրքից մեջբերումներ՝ բոլոր գրքերում:

Երբ ազդարարվեց, որ Գրադարանը պարունակում է բոլոր գրքերը, առաջին զգացողությունը անզուսպ ուրախությունն էր: Յուրաքանչյուր մարդ ինքն իրեն անձեռնմխելի ու գաղտնի մի գանձի տեր զգաց: Գոյություն չունեւ անհատական կամ համաշխարհային որևէ խնդիր, որ իր լուծումը չունենար Գրադարանի որևէ վեցանկյուններից մեկում: Տիեզերքն իմաստ ձեռք բերեց, վիթխարիացավ, ինչպես հույսը: Այդ ժամանակահատվածում շատ խոսվեց Արդարացումների մասին. ջատագովական ու մարգարեական այդ գրքերը հավերժության համար արդարացնում են յուրաքանչյուր մարդու արարքներն ու նրանց ապագայի համար պահում հրաշալի գաղտնիքներ: Հազարավոր ազահներ, իրենց արդարացումը որոնելու ունայն մտադրությամբ, լքեցին իրենց քաղցր ծննդավայրերն ու նետվեցին աստիճաններն ի վեր: Այդ ուխտավորներն սկսեցին վիճել նեղ միջանցքներում, իրար նզովեցին, իրար խեղդեցին աստվածային աստիճաններին, նրանք թունելների խորքերը նետեցին խաբուսիկ գրքերը, նրանք ցած գլորվեցին հեռավոր վայրերում բնակվող մարդկանց կողմից: Նրանցից շատերը գծվեցին... Արդարացումներ գոյություն ունեն (ես անձամբ տեսել եմ երկուսը, որոնք վերաբերում էին ապագայի՝ գուցե և ոչ երևակայական մարդկանց), սակայն որոնողները մոռացել են, որ սեփական Արդարացումը կամ նրա չարանենգ տարբերակը գտնելու հնարավորությունը հավասար է զրոյի:

Նաև ակնկալվեց մարդկային հիմնական խորհուրդների՝ Գրադարանի և ժամանակի ծագման պարզաբանությունը: Անհավանական չէ մտածել, որ հնարավոր է բառերով բացատրել այդ լուրջ խորհուրդները, և եթե փիլիսոփաների լեզուն չբավարարեր, բազմաձև Գրադարանը հնարած կլիներ պահանջված արտառոց լե-

գուն, նույնիսկ այդ լեզվի բառապաշարն ու քերականությունը: Արդեն չորս դար է, ինչ մարդիկ քջջում են վեցանկյունիները: Կան նաև պաշտոնական որոնողներ՝ **հավատաքննիչներ**: Ես տեսել եմ նրանց աշխատանքը. գալիս են հոգնած, պատմում անավարտ աստիճանների մասին, որոնց վրա քիչ էր մնացել ջարդուփշուր լինելին, գրադարանավարների հետ զրուցում են սրահների ու աստիճանների մասին, մեկ-մեկ վերցնում են ամենամոտիկ գիրքն ու թերթում՝ նրա էջերում ինչ-որ պիղծ բաներ որոնելով: Ակնհայտ է, որ ոչ ոք որևէ բան հայտնաբերելու հույս չունի:

Բնականաբար անսահման հույսին հաջորդեց չափազանցված հուսահատությունը: Անտանելի էր գիտակցել, որ ինչ-որ վեցանկյունում ինչ-որ դարակ պարունակում է թանկարժեք գրքեր, և որ այդ գրքերն անմատչելի են: Մի պիղծ աղանդ առաջարկեց դադարեցնել բոլոր որոնումները և զբաղվել այդ կանոնիկ գրքերի դասակարգմամբ՝ այնպես, որ անհավանական, բախտի քմահաճույքով միախառնված տառերն ու նշանները նոր վերադասավորում ստանան: Իշխանությունը ստիպված խիստ կարգադրությունների դիմեց: Աղանդն անհետացավ, սակայն մանկությանս օրերին արտաքնոցներում թաքնված ծերունիների եմ տեսել, որոնք արգելված սկահակներում մետաղյա խորանարդիկներով փորձում էին օրինակել աստվածային քմահաճույքը:

Ուրիշները կարծում էին, որ գլխավորը անօգուտ գործերի ոչնչացումն է: Ներխուժում էին վեցանկյունիները, ցույց տալիս ոչ միշտ կեղծ փաստաթղթեր, տաղտուկով թերթում էին մի ժողովածու ու բանադրում մի ամբողջ դարակ. միլիոնավոր գրքերի անիմաստ կորուստը նրանց մաքրասիրության, ճգնավորական մոլեգնության հետևանքն էր: Նրանց անունն անիծված է, սակայն ովքեր ողբում են նրանց ոչնչացրած «գանձերը», անտեսում են երկու կարևոր հանգամանք: Առաջին՝ Գրադարանն այնքան մեծ է, որ մարդու պատճառած յուրաքանչյուր վնաս անսահմանորեն փոքր է: Մյուսը՝ յուրաքանչյուր օրինակ եզակի է, անփոխարինելի, սակայն (քանի որ Գրադարանն համընդգրկուն է) գոյություն ունեն ստեղծագործությունների հարյուր-հազարավոր անկատար նմանօրինակները, որոնք միայն մի տառով կամ մի ստորակետով են իրարից տարբերվում: Ընդհանուր կարծիքի դեմ համարձակվում եմ պնդել, որ մաքրագործողների կատարած ավարառությունները չափազանցված են նրանց մոլեգնության պատճառած սարսափից: Բոսորագույն վեցանկյունու գրքերը նվաճելու տենչանքն էր մղում նրանց. այդ

գրքերը սովորականից փոքր, սակայն ամենակարող էին, պատկերազարդ և մոզական:

Հայտնի է նաև այդ ժամանակներում տարածված մի այլ սնոտիապաշտություն՝ Գրքի Մարդը: Ինչ-որ վեցանկյունու ինչ-որ դարակում (կարծեցին մարդիկ) պետք է գոյություն ունենա մի գիրք, որ բոլոր մնացածների բուն էություն ու համառոտագրությունը կլինի, ինչ-որ գրադարանավար կարդացել է այդ գիրքը, և նա հավասարվել է Աստծուն: Այս շրջանի լեզվում պահպանվում են այդ հնագույն աշխատողի պաշտամունքի հետքերը: Շատերը ճամփա ելան Նրան որոնելու: Մի դարի չափ զուր չափչփեցին ամենատարբեր տեղեր: Ինչպես գտնել Նրա բնակավայրը հանդիսացող սրբազան և գաղտնի վեցանկյունին: Մեկը հետադիմական մի մեթոդ առաջարկեց. A գիրքը գտնելու համար պետք է այն որոնել B գրքում, որը ցույց կտա A-ի տեղը, B գիրքը գտնելու համար դիմել մի C գրքի, և այդպես մինչև անվերջություն... Այդպիսի պարապխաղերում եմ շռայլել ու վատնել կյանքս: Ինձ հավանական է թվում, որ տիեզերքի դարակներից որևէ մեկում գոյություն կունենա համընդգրկուն մի գիրք¹. աղերսում եմ անծանոթ աստվածներին, որ մի մարդ, գոնե մեկը, հազարավոր տարիներ անց, կարդա և ուսումնասիրի այդ գիրքը: Եթե մեծարումները, իմաստությունն ու երջանկությունն ինձ համար չեն, թող ուրիշինը լինեն: Թող երկինքը գոյություն ունենա, ոչինչ որ իմ տեղը դժոխքը լինի: Թող ես անարգվեմ ու ոչնչացվեմ, սակայն գոնե մի պահ, ինչ-որ մեկի մեջ, թող արդարանա Քո հսկայական Գրադարանը:

Անհավատները պնդում են, որ Գրադարանում բնականը խելացնորությունն է, իսկ խելամտությունը (և նույնիսկ համեստ կապակցված) գրեթե հրաշալի բացառություն է: Խոսում են (լսել եմ) «տենդագին Գրադարանի մասին, ուր բախտի քմահաճույքին թողնված հատորները անընդմեջ վերադասավորմամբ փոխում են իրենց ձևերը, ամեն ինչ հաստատում, մերժում ու խառնում, որպես ցնորված մի աստվածություն»:

¹ Կրկնում եմ, բավական է, որ որևէ գիրք հնարավոր լինի, և այն գոյություն կունենա: Միայն անհնարինն է բացառված: Օրինակ, ոչ մի գիրք չի կարող միևնույն ժամանակ աստիճան լինել, սակայն անկասկած գոյություն ունեն գրքեր, որոնք վիճարկում, ժխտում և ապացուցում են այդ հնարավորությունը, և կան գրքեր, որոնց կառուցվածքը համապատասխանում է աստիճանի կառուցվածքին (ծան. հեղ.):

Այդ բառերը, որ ոչ միայն մատնանշում են անկարգությունը, այլ օրինակում, ակնհայտորեն փաստում են նրանց անճաշակությունն ու անհուսալի տգիտությունը: Գրադարանն իսկապես ընդգրկում է լեզվական բոլոր կառույցներն ու գրության քսանհինգ նշանների բոլոր հնարավոր տարբերակները, բայց ոչ երբեք կատարյալ անմտությունը: Հավանաբար իմաստ չունի ասել, որ իմ վարած բազմաթիվ վեցանկյունիների ամենալավ ժողովածուն վերնագրված է «Սանրված որոտ», և մեկ ուրիշը՝ «Գաջային ջղաձգումը», և մեկ այլը՝ «Աքսաքսաքսա մլոյ»: Առաջին հայացքից անհերթ թվացող այս վերնագրերը անկասկած կարող են թաքուն կամ այլաբանական իմաստ ունենալ. այդ իմաստը գրառված է և ex hypotesy արդեն գոյություն ունի Գրադարանում: Չեմ կարող այնպիսի նշաններ կապակցել, ինչպես օրինակ՝ դիցմուլչոյ, որոնք կանխատեսված չլինեն աստվածային Գրադարանում, որոնք նրա գաղտնի լեզուներից մեկնումեկում ինչ-որ սարսափելի իմաստ չպարունակեն: Ոչ ոք չի կարող ոչ մի վանկ հոգավորել, որը միևնույն ժամանակ և փաղաքշանք, և երկյուղ չպարունակի, ու այդ լեզուներից մեկնումեկում ինչ-որ աստվածության անունը չլինի: Խոսել՝ նշանակում է ընկղմվել նույնաբանության մեջ: Այս անօգուտ ու բառաշատ նամակն արդեն գոյություն ունի անհամար վեցանկյունիներից մեկի հինգ դարակների երեսուն գրքերից մեկնումեկում, ինչպես նաև սրա հերքումը: (Հնարավոր լեզուների մի ռ թիվ գործածում է նույն բառապաշարը, մի քանիսում Գրադարան բառը թույլ է տալիս ճշմարիտ բնորոշում. «վեցանկյուն սրահների ընդգրկուն և կայուն համակարգ», բայց այդ դեպքում Գրադարանը նշանակում է «հաց» կամ «բուրգ», կամ որևէ այլ բան, և նրան սահմանող յոթ բառերն այլ իմաստ ունեն: Դու, որ ընթերցում ես այս տողերը, համոզված ես, որ հասկանում ես լեզուս):

Գրելու սովորությունը ինձ շեղում է մարդկային ներկայիս վիճակից: Այն համոզմունքը, թե ամեն ինչ գրված է, ոչնչացնում է մեզ կամ տեսիլք դարձնում: Շրջաններ գիտեմ, ուր երիտասարդները երկրպագում են գիրքը և բարբարոսաբար համբուրում նրանց էջերը, սակայն այդ գրքերում ոչ մի տառ անգամ չեն կարող կարդալ: Վարակիչ հիվանդությունները, աղանդավորական վեճերը, ավազակության վերածված ուխտագնացությունները տասնապատիկ նվազեցրել են բնակչության թիվը: Կարծեմ տարեցտարի ավելացող ինքնասպանություններն արդեն նշել եմ: Գուցե ծերությունն ու վախը խաբում են ինձ, սակայն ինձ թվում է, որ

մարդկային ցեղը -միակը-ոչնչանալու է, իսկ Գրադարանը հարա-տևելու է՝ լուսավորված, անբնական, անվերջանալի, կատարելա-պես անշարժ, թանկագին հատորներով հարուստ, անօգուտ, անապական, խորհրդավոր:

Գրեցի անվերջանալի: Այդ ածականը առ հռետորություն սիրա-տածում չէ, պնդում եմ, որ անտրամաբանական չէ մտածել, թե աշխարհն անվերջանալի է: Այն վերջավոր համարողներն ասում են, որ հեռավոր վայրերում միջանցքները, աստիճաններն ու վե-ցանկյունիները անհայտ պատճառներով կարող են չլինել. դա անհեթեթ է: Այն թնսահման պատկերացնողները մոռանում են, որ սահմանափակ է հնարավոր գրքերի քանակը: Ես համարձակվում եմ առաջարկել հին խնդրի հետևյալ լուծումը՝ Գրադարանն ան-սահման է և պարբերական: Եթե հավերժական թափառականը անցնի գրադարանով և գնա որևէ ուղղությամբ, դարերի ընթաց-քում կփաստի, որ միևնույն հատորները կրկնվում են նույն ան-կարգությամբ (որն իհարկե կրկնություն լինելով, ի վերջո կարգ կդառնա՝ Կարգ): Այդ նուրբ հույսը զարդարում է իմ մենությունը¹:

¹ Լեոխիա Ավարես դե Տոլեդոն նկատել է, որ այդ մեծ Գրադարանն ավելորդ է, թե բավարար կլիներ սովորական չափսի անսահմանորեն բարակ էջերից բաղ-կացած մեն մի հատոր (Կավալլերին XVII դարի սկզբին ասել է, որ կարծր մարմինը բաղկացած է անվերջ թվով հարթություններից): Այս մետաքսյա wademecum-ի գործածությունը հարմար չէր լինի, և ամեն մի էջ կերկատվեր համանման էջերի, ու անհասանելի միջնաէջը հակառակ կողմ չէր ունենա:

Լիդլ Հարդի «Եվրոպական պատերազմի պատմություն» գրքի 22-րդ էջում նշված է, որ 1916 թվականի հուլիսի քսանչորսի Սեռ-Մոնթբանի ճակատում ծրագրված բրիտանական տասներեք ջոկատների (հազար չորս հարյուրի չափ հրետանային զորավիգով) գրոհը հետաձգվեց մինչև ամսի քսանինը: Այդ աննշան հետաձգման պատճառը (նշում է կապիտան Լիդլ Հարդը) հորդառատ անձրևներն էին: Ֆինգթառյի Hoch Schule-ում¹ անգլերենի հին դասախոս դոկտոր Յու Յունի կողմից թելադրված, վերընթերցված և ստորագրված հաջորդ վկայությունը միանգամայն նոր լույս է սփռում դեպքի վրա: Առաջին երկու էջերը բացակայում են:

«... և լսափողը կախեցի: Իսկույն ճանաչեցի գերմաներեն պատասխանող ձայնը: Կապիտան Ռիչարդ Մադենի ձայնն էր: Մադենը Վիկտոր Ռունբերգի բնակարանում, դա նշանակում էր, որ մեր գործերի և (թեև դա երկրորդական է կամ պետք է ինձ երկրորդական թվա) նաև մեր կյանքի վախճանը եկել է: Դա նշանակում էր, որ Ռունբերգը կամ ձերբակալվել է, կամ սպանվել²: Մայրամուտից առաջ ես էլ էի նույն բախտին արժանանալու: Մադենն անգիջում էր: Ավելի ճիշտ, հարկադրված էր անգիջում լինել: Անգլիայի հրամանատարության տակ գտնվող մի իռլանդացի, որ համարվում էր գործի մարդ, գուցե և որպես դավաճան չէր կարող չգրկել և շնորհակալություն չհայտնել այդ հրաշքի՝ Գերմանական կայսրության երկու լրտեսների հայտնության, ձերբակալման և գուցե սպանության համար: Սենյակ բարձրացա. անմտորեն դուռը բանալիով կողպեցի և մեջքի վրա պառկեցի երկաթե նեղ մահճակալին: Լուսամուտից՝ նույն կտուրներն էին և երեկոյան ժամը վեցի ամպոտ արևը: Ինձ անհավատալի թվաց, որ այդ ոչնչով աչքի չընկնող, առանց հատուկ խորհրդանիշների օրը իմ մահվան օրը լինի: Ես՝ հանգուցյալ հորս որդին, Հաի Ֆենգի համաչափ այգիներում խաղացած մանուկս, հիմա պիտի մեռնեի:

¹ Բարձրագույն դպրոց (գերմ.):

² Ատելի և անհեթեթ վարկած: Պրուսացի լրտես Հանս Ռաբենտը, որի կեղծանունն էր Վիկտոր Ռունբերգ, ատրճանակով հարձակվեց կապիտան Ռիչարդ Մադենի վրա, որի մոտ էր նրա ձերբակալման հրամանը: Մադենն, ինքն իրեն պաշտպանելով, մահացու վերքեր հասցրեց նրան (ծան. հրատարակչի):

Հետո խորհեցի, որ աշխարհում ամեն ինչ ինչ-որ բանի է հանգում, հենց հիմա: Դար ու դարեր են անցնում, մինչդեռ միայն հիմա են իսկապես ինչ-որ բաներ կատարվում. դեպքերը, օդում, հողում և ծովում անհամար մարդիկ, բայց այն միակ բանը, որ իրականում կատարվում է, հիմա ինձ հետ կատարվողն է: Մադենի ձիանման դեմքի զրեթե անտանելի պատկերը ոչընչացրեց այդ ցնորքները: Ատելության և սարսափի միջից (հիմա չեմ ուզում խոսել սարսափիս մասին, հիմա, որ խաբել եմ Ռիչարդ Մադենին, հիմա, երբ գիտեմ, որ ինձ սպասում է կախաղանը) խորհեցի, որ այդ ժրաջան և անկասկած երջանիկ փարտիկը չէր էլ երևակայում, որ ես գիտեի Գաղտնիքը՝ Անկրեի վրա գտնվող բրիտանական զորանոցի ճշգրիտ վայրը: Մի թռչուն ճեղքեց մոխրագույն երկինքը, ես այն կուրորեն նմանեցրի օդանավի, օդանավերի պարսի, որոնք ֆրանսիական երկնքում ռումբերով դղրդացնում են օդն ու ոչնչացնում զորանոցը: Եթե բերանս ջախջախվելուց առաջ կարողանար գոռալ այդ լուրը և ձայնս լսվեր Գերմանիայում... Մարդկային ձայնս շատ խղճուկ էր: Ինչպես հասցնեի Մեծի ականջին: Այդ հիվանդ և ատելի մարդու ականջին, որ Ռուսերբերգի ու իմ մասին միայն այն գիտի, որ մենք Սթաֆորդշիրում ենք, այն մարդը, որ Բեռլինի իր մռայլ գրասենյակում նստած, անվերջանալիորեն լրագրեր թերթելով է զբաղված, զուր է մեզնից լուրեր սպասում... Բարձրաձայն ասացի. «Պետք է փախչել»: Անձայն, կատարյալ լռություն պահպանելու անօգուտ փորձով, կարծես Մադենն արդեն այստեղ լինեի, վեր կացա: Ինչ-որ բան, գուցե համոզվելու համար, որ ոչինչ չկա մոտս, ստուգել տվեց գրպաններս: Գտա այն, ինչ պետք է գտնեի: Հյուսիսամերիկյան ժամացույցը, նիկելե շղթան, մի քառանկյունի մետաղադրամ, Ռուսերբերգի բնակարանի արդեն անպետք և անօգուտ բանալիները, ծոցատետրը, մի նամակ, որ որոշեցի անմիջապես ոչնչացնել (և չոչնչացրի), մի կրոն, երկու շիլինգ, մի քանի պֆենինգ, կարմիր-կապույտ մատիտը, թաշկինակը, ատրճանակը՝ մեջը մի փամփուշտ: Անհեթեթորեն ձեռքիս մեջ պահեցի ատրճանակը, կարծես քաջություն ներշնչեր ինձ: Աղոտ մտածեցի, որ ատրճանակի կրակոցը կարող էր շատ հեռվից լսվել: Տասը րոպեում ծրագիրս հասունացել էր: Հեռախոսագիրքն ինձ օգնեց գտնել այն միակ անունը,

որ կարող էր լուրն հաղորդել. նա ապրում էր Ֆենտոնի արվարձաններից մեկում՝ գնացքով մոտ կես ժամ ճանապարհի վրա:

Վախկոտ մարդ եմ: Հիմա եմ ասում, հիմա, երբ ավարտին եմ հասցրել այնպիսի մի ծրագիր, որ ոչ ոք չի համարձակվի հանդուգն չհամարել: Ես գիտեի, որ այդ ծրագրի իրագործումը սարսափելի է: Գերմանիայի համար չեմ արել, ո՛չ, ո՛չ, երբեք: Լրտեսի աստիճանի նվաստացնող բարբարոս երկրի բախտը ինձ չի կարող հետաքրքրել: Բացի այդ, Անգլիայում ես մի մարդու գիտեմ, շատ համեստ մի մարդ, որ ինձ համար Գյոթեից պակաս չէ: Մի ժամից ավելի հետը չեմ խոսել, բայց մի ժամվա ընթացքում նա Գյոթեն էր... Ես իմ ծրագիրն իրագործեցի, քանի որ զգացի, թե մեծավորը մի քիչ վախենում էր իմ ցեղակիցներից, մեջս կուտակված բոլոր իմ նախնիներից: Ես ուզում էի փաստել, որ մի դեղնամորթ կարող էր փրկել նրա զորքերը: Բացի այդ, ես պետք է փախչեի կապիտանից: Ամեն վայրկյան նրա ձեռքերն ու ձայնը կարող էին դուռս թակել: Անադմուկ հագնվեցի, հայելու մեջ ինքս ինձ ցտեսություն ասացի, իջա, ստուգեցի խաղաղ փողոցն ու դուրս եկա: Կայարանը տնից հեռու չէր, բայց նախընտրեցի կառք նստել: Մտածեցի, որ այդպես նվազում էր ճանաչվելու վտանգը: Բանն այն է, որ անմարդ փողոցում ինձ անսահմանորեն տեսանելի և խոցելի էի համարում: Հիշում եմ, որ կառապանին ասացի, թե գլխավոր մուտքին չհասած կանգնի: Կամավոր և գրեթե խղճալի դանդաղությամբ իջա. մեկնելու էի դեպի Ազգրովե գյուղավանը, բայց տոմս գնեցի ավելի հեռավոր կայարանի համար: Գնացքը, մի քանի րոպե հետո՝ ութն անց հիսունին էր շարժվելու: Շտապեցի, հաջորդը մեկնելու էր ինն անց կեսին: Կայարանում գրեթե ոչ ոք չկար: Շրջեցի վագոններում, հիշում եմ մի քանի մշակների, սգավոր մի կնոջ, Տացիտի «Անալները» կլանված կարդացող մի երիտասարդի, վիրավոր ու երջանիկ մի զինվորի: Վերջապես գնացքը շարժվեց: Մի մարդ, որին իսկույն ճանաչեցի, զուր վագեց մինչև կայարանի վերջը: Կապիտան Ռիչարդ Մադենն էր: Զարդված ու դողդողալով հարմարվեցի նստարանի մյուս ծայրին, երկյուղալի պատուհանից հեռու:

Զարդվածությունս տեղի տվեց գրեթե նվաստացնող երջանկությանը: Ինքս ինձ ասացի, որ արդեն սկսվել է մենամարտը, և որ ես, թեկուզ և բախտի բերմամբ, գոնե քառասուն րոպե կանխելով

հակառակորդիս հարձակումը՝ առաջին հանդիպման հաղթողն էի: Մտածեցի, որ այդ աննշան հաղթանակը ինչ-որ ձևով կանխում էր ամբողջականը: Համոզեցի ինձ, որ պահը հարմար չէր, որ առանց գնացքների չվերթի պարզևած թանկարժեք տարբերության, ես կլինեի բանտում՝ կամ սպանված: Մտածեցի (ոչ պակաս սովեստորեն), որ վախկոտիս հաջողությունը փաստում էր, թե ես կարող էի արկածը լավ վախճանի հասցնել: Այդ թուլությունից ինձ այլևս չլքող ուժեր հավաքեցի: Կանխատեսում եմ, որ մարդը օրեցօր հանդուրժելու է ավելի դաժան գործարքներ, շուտով միայն մարտիկներ ու ավազակներ են լինելու: Այս խորհուրդն եմ տալիս՝ դաժան գործարք ձեռնարկողը պետք է այն կատարված երևակայի, պետք է ինքն իրեն պարտադրի. անցյալի պես անդառնալի մի ապագա: Ես այդպես վարվեցի, մինչդեռ մեռած մարդու իմ աչքերը ընկալում էին գուցե և վերջին օրվա վախճանն ու գիշերվա տարածումը: Գնացքը մեղմորեն անցնում էր ցորենի արտերով: Գրեթե դաշտի մեջտեղում կանգ առավ: Ոչ ոք չասաց կայարանի անունը: Կայարանում կանգնած երեխաներին հարցրի՝ Ազգրովն: Ազգրովն, պատասխանեցին: Իջա:

Մի լամպ լուսավորում էր կայարանը, սակայն երեխաների դեմքերը մնում էին ստվերի մեջ: Նրանցից մեկն հարցրեց. **Դուք Ստիվեն Ալբերտի տոհմն եք որոնում:** Առանց պատասխանի սպասելու մի ուրիշն ասաց. **Տունն այստեղից հեռու է, բայց հանգիստ կարող եք հասնել, եթե բռնեք ձախակողմը և ամեն մի խաչմերուկում ձախ թեքվեք:** Մի մետաղադրամ նետեցի նրանց (վերջինը), իջա քարե աստիճաններով և մտա ամայի ճանապարհը: Այն դանդաղորեն իջնում էր: Ճանապարհը հողաշեն էր, վերևում՝ խառնվում էին ծառի ճյուղերը, լուսինը՝ ցածր ու շոջանաձև, կարծես ընկերակցում էր ինձ:

Մի պահ մտածեցի, որ Ռիչարդ Մադենը կռահել էր հուսահատ մտադրությունս: Շուտով հասկացա, որ դա անհնար էր: Միշտ դեպի ձախ թեքվելու խորհուրդն ինձ հիշեցրեց, որ դա որոշ լաբիրինթոսների կենտրոնական բակը գտնելու ընդհանուր վարվելակերպն է: Լաբիրինթոսներից ինչ-որ բան հասկանում եմ, իզուր չէ, որ, «Hung lu Meng»¹-ից ավելի խրթին մի վեպ գրելու

¹ «Երազ կարմիր տաղավարում» (չին.):

և այնպիսի մի լաբիրինթոս կառուցելու համար, ուր կորչելու էին աշխարհիկ իշխանությունից հրաժարվող բոլոր մարդիկ, Յունանի նահանգապետ Յուլի Պենի թոռնորդին եմ: Բազմատեսակ այդ չարչարանքներին նա տասներեք տարի տրամադրեց, բայց մի անծանոթ սպանեց նրան, վեպն անհետք էր և ոչ ոք չգտավ լաբիրինթոսը: Անգլիական գմբեթավոր ծառերի տակ մտածեցի այդ կորած, ինչ-որ լեռան գագաթին գտնվող լաբիրինթոսի մասին, այն անարատ ու կատարյալ պատկերացրի, պատկերացրի ջնջված բրնձատունկերի կամ ջրերի տակ, անսահման՝ որն ընդգրկում է ոչ թե սրահներ ու ետ դարձող արահետներ, այլ գետեր, նահանգներ ու թագավորություններ... Մտածեցի լաբիրինթոսների լաբիրինթոսի մասին, օձապտույտ, աճող մի բավիղ, որ իր մեջ կարողանար պարունակել անցյալն ու ապագան և որ ինչ-որ ձևով աստղերն էլ ընդգրկեր: Այդ ցնորական պատկերներով տարված՝ մոռացա հետապնդվողի վիճակս: Անորոշ մի ժամանակահատվածի ընթացքում ինքս ինձ աշխարհի վերացական ընկալուչն զգացի: Անորոշ ու վառ դաշտը, լուսինը, երեկոյի վերջին նշույլները, նաև ճանապարհի վայրէջքը, որ ջնջում էր հոգնության մասին բոլոր մտքերը, ներգործեցին վրաս: Երեկոն մտերմիկ էր, անսահման: Ճանապարհն իջնում էր և արդեն անորոշ մարգագետիններում բաժանվում: Հեռավորությամբ ու տերևներով ծածկված ամայության մեջ, սուր և կարծես ընդմիջումներով մի մեղեդի մոտենում ու հեռանում էր քամու հետ: Մտածեցի, որ մարդը կարող է այլ մարդկանց թշնամին լինել, մարդկանց այլ պահերի թշնամին, բայց ոչ երբեք մի երկրի, ոչ երբեք կայծոռիկների, բառերի, ջրի հոսանքների, մայրամուտների թըշնամի: Այդպես մտածելով հայտնվեցի բարձր ու ժանգոտած մի դարպասի առաջ: Ճաղերի միջից նկատեցի մի պուրակ և տաղավարանման մի կառույց: Հանկարծ երկու բան հասկացա, առաջինը՝ սովորական, երկրորդը՝ գրեթե անհավատալի. մեղեդին գալիս էր տաղավարից և այդ մեղեդին չինական էր: Դրանից էր, որ ես այն իսկույն ընկալել էի առանց ինձ հաշիվ տալու: Չեմ հիշում դարպասը զանգակ կամ զանգ ուներ, թե ձեռքերս իրար խփելով եմ կանչել: Երաժշտությունը շարունակվեց:

Բայց ինքնամփոփ տան խորքից մի ջահ էր մոտենում, մի ջահ, որ հանկարծ թաքնվում էր կոճղերի հետևը, մի ջահ, որ թմբուկի

ձև ուներ և լուսնի գույն: Բարձրահասակ մի մարդու ձեռքին էր: Նրա դեմքը չտեսա. լույսը կուրացնում էր ինձ: Դուռը բացեց և իմ մայրենի լեզվով դանդաղորեն ասաց.

— Ինչպես երևում է գթառատ Սի Պենը ուզում է մենությունս զարդարել: Դուք երևի այգին եք ուզում տեսնել:

Ի դեմս նրա մեջ ես ճանաչեցի մեր հյուպատոսներից մեկին ու շփոթված կրկնեցի.

— Այգին:

— Բաժանվող արահետների այգին:

Ինչ-որ բան շարժվեց հիշողությանս մեջ, և անսպասելի վստահությամբ արտասանեցի.

— Իմ նախնու՝ Յուի Պենի այգին:

— Ձեր նախնու, ձեր ականավոր նախնու: Համեցե՛ք:

Խոնավ արահետը իմ մանկության արահետների պես զիգ-զազաձև էր: Հասանք արևելյան և արևմտյան լեզուներով գրված գրքերով ծանրաբեռնված մի գրադարանի: Դեղին մետաքսյա կազմի մեջ ճանաչեցի տպագրության չհանձնված Լուսավոր Դի-նաստիայի Երրորդ Կեսարի հոգաժությամբ պատրաստվող Կորած Հանրագիտարանի մի քանի ձեռագիր հատորները: Ձայնապնակը պտտվում էր բրոնզե փյունիկի կոճքին: Նաև հիշում եմ վարգագույն մի կուժ և մի ուրիշը՝ հինավուրց այն կապույտով, որ մեր վարպետներն ընդօրինակել են Պարսկաստանի բրուտներից...

Ստիվեն Ալբերտն ինձ էր նայում ժպտերես: (Արդեն ասել եմ) բարձրահասակ էր, երկարավուն դիմագծերով, մոխրագույն աչքերով և մոխրագույն մորուքով մի մարդ: Քահանա և նավաստի հիշեցնող ինչ-որ բան կար նրա մեջ, հետո պատմեց, որ «չինագիտությամբ զբաղվելուց առաջ» Տիենցինում միսիոներ էր եղել:

Նստեցինք, ես՝ երկար ու ցածր մի բազմոցի, ինքը՝ մեջքը դեպի պատուհանը, բարձր ու կլոր ժամացույցին դարձրած: Ինձ հետապնդող Ռիչարդ Մադենը մի ժամից շուտ չէր հասնի: Անդառնալի որոշումս կարելի էր հետաձգել:

— Ջարմանալի ճակատագիր էր Յուի Պենի ճակատագիրը,— ասաց Ստիվեն Ալբերտը,— իր ծննդավայրի նահանգապետ, աստղագիտության, աստղաբանության և կանոնիկ գրքերի անխոնջ մեկնության մեջ հայտնի գիտուն, շախմատիստ, համբավավոր

բանաստեղծ ու գեղագիր, ամեն ինչից հրաժարվեց մի գիրք գրելու ու մի լաբիրինթոս կառուցելու համար: Հրաժարվեց բռնակալի ուրախություններից, անհամար հարձերից ու խնջույքներից, նույնիսկ իմաստության հաճույքներից և տասներեք տարի փակվեց մենության Տրտում Տաղավարում: Նրա մահից հետո ժառանգորդները խառնիփնթոր ձեռագրերից բացի ուրիշ ոչինչ չգտան: Ընտանիքի անդամները, ինչպես հավանաբար գիտեք, ուզում էին այդ ձեռագրերը կրակի ճարակ դարձնել, բայց նրա կտակակատարը՝ դառական կամ բուդդիստ մի վանական, պնդեց, որ դրանք պետք է հրատարակել:

— Մենք՝ Յուի Պենի ժառանգներս, դեռ անիծում ենք այդ վանականին: Այդ հրատարակությունը խելահեղություն էր: Այդ գիրքը իրար հակասող անմիտ սևագրությունների խառնիփնթոր մի կույտ էր: Մի ժամանակ ուսումնասիրել եմ՝ երրորդ գլխում հերոսը մեռնում է, մինչդեռ չորրորդում կենդանի է: Իսկ ինչ վերաբերում է Յուի Պենի մյուս գործին՝ նրա Լաբիրինթոսին...

— Այստեղ է Լաբիրինթոսը, — ասաց՝ ցույց տալով լաքածածկ ու բարձր մի գրասեղան:

— Փղոսկրյա լաբիրինթոս, — բացականչեցի, — փոքրիկ լաբիրինթոս...

— Խորհրդանիշների լաբիրինթոս, — ճշտեց: — Ժամանակի անտեսանելի մի լաբիրինթոս: Ինձ՝ բարբարոս անգլիացուս էր տըրված այդ թափանցիկ խորհրդավորության բացահայտումը: Հարյուր տարի հետո մանրամասնությունները անվերականգնելի են, բայց դժվար չէ կատարվածը կռահել: Յուի Պենը մի անգամ ասած կլինի՝ Առանձնանում եմ մի գիրք գրելու համար: Մի ուրիշ անգամ՝ Առանձնանում եմ մի լաբիրինթոս կառուցելու համար: Բոլորը երկու գործ են երևակայել և, ոչ ոք չի մտածել, որ գիրքն ու լաբիրինթոսը նույն բանն են: Մենության Տրտում Տաղավարը կառուցված էր, գուցե և լքված այգու կենտրոնում. այդ հանգամանքը կարող էր մարդկանց մտածել տալ իրական մի լաբիրինթոսի մասին: Յուի Պենը մահացավ, և ոչ ոք նրա ընդարձակ հողերում այդ լաբիրինթոսը չգտավ, վեպի խառնիփնթորությունը ինձ ենթադրել տվեց, որ հենց այդ է լաբիրինթոսը: Երկու հանգամանք ինձ հանգեցրին խնդրի ճշմարիտ լուծմանը: Մեկը՝ հե-

տաքըքրական այն լեգենդը, որն ասում է, թե Յուդի Պենը մտադրովել էր անպայման անսահման մի լաբիրինթոս կառուցել: Մյուսը՝ հայտնաբերած սամակի մի հատվածը:

Ալբերտը վեր կացավ: Մի քանի վայրկյան մեջքը դեպի ինձ դարձրեց, բացեց ոսկեզօծ և սևագույն գրասեղանի դարակներից մեկը: Վերադարձավ մաշված, քառանկյունաձև տողերով, նախապես կարմրավուն, իսկ հիմա վարդագույն դարձած մի թուղթ ձեռքին: Յուդի Պենի համբավավոր ձեռագիրն էր: Կրքոտ, բայց առանց հասկանալու կարդացի իմ արյունակցի նրբագույն վրձինով շարադրված բառերը. *Բազում ապագաներին (ոչ բոլորին) թողնում եմ բաժանվող արահետների իմ այգին*: Առանց ծպտուն հանելու վերադարձրի էջը: Ալբերտը շարունակեց.

— Այս սամակի գոյության մասին իմանալուց առաջ ինքս ինձ հարցրել էի, թե ինչպես մի գիրք կարող է անսահման լինել: Բոլորաձև, շրջանաձև ժողովածուից բացի այլ ձև չկռահեցի: Անսահմանորեն շարունակվելու հնարավորությամբ այնպիսի մի ժողովածու, որի վերջին էջը պետք է առաջինի կրկնօրինակը լիներ: Հիշեցի նաև «1001 գիշերների» կենտրոնական այն գիշերը, երբ (ընդօրինակողի հրաշալի անփութության հետևանքով) Շահրազադե թագուհին այդ գիշերվա դեպքերին վերադառնալու սպառնալիքով, և այդպես մինչև անավարտելին, պատմում է «1001 գիշերների» պատմությունը: Երևակայեցի նաև հայրերից որդիներին ժառանգաբար փոխանցվող Պլատոնի «գաղափարների» ոգով այնպիսի մի ստեղծագործություն, ուր յուրաքանչյուր նոր ժառանգորդ պետք է ավելացներ մի նոր գլուխ, կամ խոնարհ հոգածությամբ ճշգրտեր նախորդի գրած էջը: Այս հորինումներն զբաղեցրին ինձ, բայց ոչ մեկը չէր համապատասխանում Յուդի Պենի հակասական գլուխներին: Այդ անորոշության մեջ էի, երբ Օքսֆորդից ուղարկեցին ձեր տեսած ձեռագիրը: Բնականաբար, ուշադրությունս գրավեց այդ նախադասությունը՝ *Բազում ապագաներին (ոչ բոլորին) թողնում եմ բաժանվող արահետների իմ այգին*: Գրեթե անմիջապես հասկացա՝ *բաժանվող արահետների այգին*՝ խառնիփնթոր վեպն է. *բազում ապագաներին (ոչ բոլորին)* արտահայտությունը ինձ հուշեց, որ խոսքը ժա-

մանակային և ոչ թե տարածքային բաժանման մասին է: Յուրաքանչյուր մտացածին հնարանքի պարագայում, երբ հերոսն հանդիպում է բազում հնարավորությունների, ընտրում է դրանցից մեկնումեկը և ոչնչացնում է մյուսները, գրեթե անմատչելի Յուի Պենի հնարանքում հերոսը միևնույն ժամանակ ընտրում է բոլոր հնարավորությունները: Այդպես, ստեղծում է տարբեր ապագաներ ու ժամանակներ, որոնք նույնպես բազմանում ու երկփեղկվում են: Այստեղից է բխում վեպի հակասականությունը: Ասենք, Ֆանգը մի գաղտնիք ունի, ինչ-որ անծանոթ բախում է նրա դուռը, Ֆանգը որոշում է սպանել նրան: Բնականաբար, տարբեր հնարավոր հանգույցներ կարող են լինել. Ֆանգը կարող է անծանոթին սպանել, անծանոթը կարող է Ֆանգին սպանել, կարող են երկուսն էլ փրկվել, երկուսն էլ մեռնել և այլն: Յուի Պենի ստեղծագործության մեջ պատահում են բոլոր հանգույցները, և յուրաքանչյուր դրվագ դառնում է այլ երկփեղկվածությունների լաբիրինթոս: Այդ լաբիրինթոսի արահետները ինչ-որ ժամանակ միանում են՝ օրինակ, դուք ժամանում եք այս տունը, սակայն հնարավոր անցյալներից մեկում դուք իմ թշնամին եք, մեկ ուրիշում՝ իմ բարեկամը: Եթե դուք հանդուրժեք իմ անուղղելի առողջանությունը, մի քանի էջ կկարդանք:

Լուսամփոփի պայծառ լույսի տակ նրա դեմքն անկասկած ծերունական էր, սակայն այդ դեմքին անընկճելի և նույնիսկ անմահ ինչ-որ բան կար: Դանդաղ ու պարզորոշ նա կարդաց էպիկական միևնույն գլխի երկու տարբեր շարադրանքներ: Առաջինում՝ զորքը ճակատամարտի է մեկնում անապատային սարահարթով. ժայռերի փլուզման վտանգի տակ, գիշերների մռայլ սարսափների միջով անցնելիս կյանքը մի բան չարժե, և նրանք հեշտությամբ հասնում են հաղթանակի, երկրորդում՝ նույն զորքն անցնում է մի պալատով, ուր խրախճանք է տեղի ունենում. փայլուն ճակատամարտը նրանց թվում է խրախճանքի շարունակությունը, և նրանք հեշտությամբ հասնում են հաղթանակի: Ես պատշաճ մեծարանքով լսում էի այդ հին պատմությունները, երևի ոչ պակաս զարմանալի, քան այն հանգամանքը, որ իմ արյան ստեղծած այդ պատմությունը արևմտյան մի կղզում տեղի ունեցած հուսահատ

մի արկածի ընթացքում ինձ հանձնվեց հեռավոր կայսրության մի հպատակի կողմից: Հիշում եմ յուրաքանչյուր տարբերակի վերջում գաղտնի պատվիրանի պես հնչող բառերը. Այսպես մարտնչեցին հերոսները՝ հանգիստ սրտով և ձեռներին սուրը՝ սպանելու և մեռնելու պատրաստ:

Այդ պահին շուրջս և հենց իմ ներսում անտեսանելի ու անշոշափելի մի խլրտում զգացի: Դա հակադիր, զուգահեռ և վերջապես զինակից զորքերի շարժումը չէր, այլ նրանց ինչ-որ ձևով նախապատկերող ավելի անորսալի և մտերիմ եռուզեռը: Ստիվեն Ալբերտը շարունակեց.

— Չեմ կարծում, որ ձեր ականավոր նախնին այս տարբերակները հնարեր իր ձանձրույթը փարատելու համար: Ճըմարտանման չեմ համարում նաև այն, որ նա տասներեք տարի զոհաբերեր անիմաստ փորձի անվերջ գործադրման համար: Ձեր երկրում վեպը բարձր ճաշակի ժանր չէր համարվում, իսկ այն ժամանակներում՝ միանգամայն արհամարհելի էր: Յուլի Պենը հանճարեղ վիպագիր էր: Բայց նա փայլուն մտավորական էր, և ինքն իրեն սոսկ վիպագիր չհամարեց: Նրա ժամանակակիցների վկայությունները խոսում են, և նրա կյանքը հաստատում է իր միստիկական ու բնագանցական ձգտումները: Փիլիսոփայական վիճաբանությունը զբաղեցնում է նրա վեպի զգալի մասը: Գիտեմ, որ բոլոր խնդիրներից և ոչ մեկն այնքան չանհանգստացրեց և այդքան աշխատանք չպահանջեց նրանից, որքան ժամանակի անհուն խնդիրը: Եվ հենց դա է միակ այն խնդիրը, որ չի նշվում. «Այգու» էջերում: Անգամ ժամանակ նշանակող բառն օգտագործված չէ: Ինչպես եք դուք բացատրում այդ համառ լռությունը:

Մի քանի լուծումներ առաջարկեցի, ոչ մեկը չբավարարեց: Վիճաբանեցինք, վերջապես Ստիվեն Ալբերտն ասաց.

— Մի բառահանելուկի մեջ, որի թեման «շախմատն» է, ձրն է միակ արգելված բառը: — Մի պահ մտածելուց հետո ասացի.

— «Շախմատ» բառը:

— Հենց այդպես էլ, — ասաց Ալբերտը, — «Բաժանվող արահետների ալգին» հսկայական մի հանելուկ կամ առակ է, որի թեման ժամանակն է. այդ թաքուն պատճառն էլ հենց արգելում է այդ անվան արտասանությունը: Միշտ մի բառ զեղչելը, ան-

հաջող փոխաբերությունների և ակնհայտ շրջասությունների դիմելը գուցե և այդ բառը շեշտելու ամենաակնհայտ ձևն է: Յուրի Պենը իր անխոնջ վեպի յուրաքանչյուր շրջադարձում նախընտրում է այդ խրթին ձևը: Համեմատել եմ հարյուրավոր ձեռագրեր, սրբագրել եմ ընդօրինակողների անհոգության հետևանքով սպրդած սխալները, կռահել եմ այդ քառսի ծրագիրը, վերակառուցել եմ, կարծում եմ, թե վերակառուցել եմ անհրաժեշտ կարգը, թարգմանել եմ ամբողջ ստեղծագործությունը՝ կարող եմ հաստատել, որ «ժամանակ» բառը ոչ մի անգամ չի օգտագործել: Բացատրությունը ակնհայտ է: «Բաժանվող արահետների այգին» Յուրի Պենի տիեզերընկալման անկատար, բայց ոչ երբեք կեղծ պատկերն է: Ի տարբերություն Նյուտոնի և Շոպենհաուերի՝ ձեր նախնին չէր հավատում համատարած և բացարձակ ժամանակին, նա հավատում էր ժամանակի անսահման շարքերի գոյությանը, հակադիր, համադիր և զուգահեռ ժամանակների գլխապտույտ պատճառող ցանցին: Մոտեցող, բաժանվող, ընդհատվող կամ իրար երբեք չչփվող ժամանակային այդ հանգույցները ընդգրկում են բոլոր հնարավորությունները: Այդ ժամանակների մեծամասնության մեջ մենք գոյություն չունենք, մի քանիսում դուք գոյություն ունեք, իսկ ես՝ ոչ, մյուսներում ես գոյություն ունեմ, իսկ դուք՝ ոչ: Այլոց մեջ գոյություն ունենք երկուսս: Այս մեկում, որն ինձ պարզվել է ողորմած մի բախտ, դուք ժամանել եք իմ տունը, մի ուրիշում, այգին անցնելու ժամանակ, դուք ինձ մեռած եք գտել, մի ուրիշում ես կրկնում եմ այս նույն բառերը, բայց ես մի մտատեսիլ եմ, ուրվական:

— Բոլորում,— ասացի ես ոչ առանց դողի,— ես Յուրի Պենի այգում կատարված պտույտի համար մեծարում եմ ձեզ և շնորհակալություն հայտնում:

— Ոչ բոլորում,— շշնջաց ժպտալով: — Ժամանակը հավերժորեն բաժանվում է դեպի անհամար ապագաներ: Նրանցից մեկում ես ձեր թշնամին եմ:

Մի անգամ էլ զգացի արդեն նշածս խլիրտը: Ինձ թվաց, որ տունը շրջապատող խոնավ այգին անվերջորեն հագեցված է անտեսանելի մարդկանցով: Այդ մարդիկ ես ու Ալբերտն էինք՝ ժամանակի այլ տարածքներում գաղտնի, զբաղված ու բազմակերպ: Հայացքս բարձրացրի, և թեթև մղձավանջն անհետացավ: Դեղին

և սև այգում մեն մի մարդ կար, բայց այդ մարդն արձանի պես ուժեղ էր, բայց այդ մարդն առաջանում էր արահետով և կապիտան Ռիչարդ Մադենն էր:

— Ապագան արդեն շեմին է,— պատասխանեցի,— բայց ես ձեր բարեկամն եմ: Կարո՞ղ եմ ևս մի անգամ ստուգել նամակը:

Ալբերտը վեր կացավ ու ամբողջ հասակով կանգնեց: Բացեց բարձր գրասեղանի դարակը, մի պահ մեջքով դեպի ինձ դարձավ: Ես պատրաստել էի ատրճանակը: Մեծ զգուշությամբ կրակեցի: Ալբերտն ընկավ առանց ձայն հանելու, անմիջապես: Ես երդվում եմ, որ նրա մահը վայրկենական էր, գրեթե կայծակնահար:

Մնացածը անիրական է, անկարևոր: Մադենը ներս մտավ, ձերբակալեց ինձ: Դատապարտված եմ կախաղանի: Ինչքան էլ սարսափելի է, բայց հաղթել եմ՝ Բեռլին եմ հաղորդել ռմբակոծվելիք քաղաքի գաղտնի անունը: Երեկ ռմբակոծեցին. կարդացել եմ այն նույն թերթում, որ Անգլիային տեղեկացնում է այն առեղծվածային սպանության մասին, թե ինչպես մի անծանոթ, ոմն Յու Յուն սպանել է չինագետ Ստիվեն Ալբերտին: Մեծավորը հասկացել է այդ առեղծվածը: Նա գիտի, որ իմ խնդիրն էր (պատերազմի ժխորի մեջ) Ալբերտ կոչվող քաղաքը նշելը, և որ Ալբերտ անունով մեկին սպանելուց բացի այլ ձև չեմ գտել: Չգիտի (ոչ ոք չի կարող իմանալ) իմ անհուն ցավն ու հոգնությունը»:

ՀԼԱՐՔՆԵՐ

՝

Թեև ոչ այնքան անճարակորեն գրված՝ այս գրքի գործերը չեն տարբերվում նախորդ գրքի գործերից: Գուցե դրանցից երկուսն արժանի լինեն առանձին հիշատակման՝ «Կողմնացույցն ու մահը» և «Ֆուենս»՝ հիշողության հրաշքը»: Երկրորդը տևական անքնության փոխաբերությունն է: Առաջինը, թեպետ անունները գերմանական կամ սկանդինավյան են, տեղի է ունենում երազային մի Բուենոս Այրեսում. Rue de Toulon-ը՝ Պասեո դե Խուլիոն է, Տրիստե լե Ռոյը՝ այն հյուրանոցը, ուր Հերբերթ Աշեն ստացավ գուցե բնավ չկարդացած երևակայական հանրագիտարանի տասնմեկերորդ հատորը: Շարադրանքն ավարտելուց հետո մտածել եմ երևակայության զբաղեցրած ժամանակն ու տեղն ընդարձակելու հնարավորության մասին՝ վրեժը կարող էր ժառանգական լինել, ժամանակահատվածները կարող էին հաշվվել տարիներով, գուցե և դարերով: Անվան առաջին տառը կարող էր հողավորվել Իսլանդիայում, երկրորդը՝ Մեքսիկայում, երրորդը՝ Հնդկաստանում: Ավելացնեմ, որ Հասիդիմները սրբերին էլ էին ընդգրկում, և որ Անվան չորս տառերը կազմելու համար չորս կյանքի զոհաբերությունը իմ պատմվածքի ձևի թելադրած երևակայությունն է:

1956 թվականի հետգրություն: — Ավելացրել եմ ևս երեք պատմվածքներ՝ «Հարավը», «Փյունիկի աղանդը» և «Վախճանը»: Վերջինի հակիրճ շարադրանքում, բացի Ռեկաբառենի կերպարից, որի անշարժությունն ու հուլությունը կոնտրաստի դեր է կատարում, ոչինչ, կամ գրեթե ոչինչ իմ հնարածը չէ. պատմվածքի ողջ բովանդակությունը արդեն ընդգրկված է հայտնի մի գրքի մեջ¹, ես առաջին պարզաբանողն եմ, կամ գոնե առաջին հայտարարողը: «Փյունիկի» այլաբանության մեջ նպատակադրվել եմ առաջարկել հասարակ մի դեպք՝ Գաղտնիքը, փորձել եմ երկյուղով և աստիճանաբար ներկայացնել, որպեսզի վերջում դիպուկ լինի: Եվ հիմա չգիտեմ, թե ինչքանով է բախտն ինձ ժպտացել: «Հարավը» պատմվածքի մասին, որ գուցե և իմ ամենալավ պատմվածքն է, կբավարարվեմ միայն ասելով, թե այն կարելի է կարդալ որպես վիպական ուղղակի գործողությունների շարան, և միանգամայն այլ կերպ:

Շոպենհաուերը, Դե Բուինսսին, Ստիվենսոնը, Mauthner-ը, Shaw-ն, Չեստերտոնը, Լեոն Բլոյը կազմում են գրասեր այն հեղինակների ցանկը, որոնց ստեղծագործությունները հաճախ եմ վերընթերցում: «Հուդայի երեք վարկածները» վերնագրված քրիստոնեական ֆանտազիայում կարծես ընկալում եմ վերջինի հեռավոր ազդեցությունը:

Խ. Լ. Բ.

Բուենոս Այրես, 29 օգոստոսի, 1944

¹ «Փյունիկի աղանդը» և «Վախճանը» պատմվածքները տեղ չեն գտել մեր ժողովածուի մեջ (ծան. խմբ.):

ՖՈՒՆԵՍ՝ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԲԸ

Նրան հիշում եմ (ես իրավունք չունեմ այդ սրբազան բառն արտասանելու, այդ իրավունքը վերապահված էր միայն մի մարդու, և այդ մարդն արդեն մեռած է) մութ անվանածաղիկը ձեռքին, տեսնելով նրան այնպես, ինչպես չի կարող տեսնել ոչ մի մարդ, նույնիսկ եթե նրան նայի արշալույսի առաջին հրացուլքից մինչև մայրամուտի վերջին հրացուլքը, իր ողջ կյանքի ընթացքում: Հիշում եմ ծխախոտի ծխի միջից նրա մտախոհ, հնդկացու դիմագծերով և յուրօրինակորեն **հեռավոր** դեմքը: Հիշում եմ (կարծես) նրա բարակ ձեռքերը: Հիշում եմ այդ ձեռքերի հետ միաժամանակ Արևելյան ափի զինանշանով մի մատե, հիշում եմ պատուհանին կախված մի դեղին, բնականորով խսիր: Հստակորեն հիշում եմ նրա ձայնը, նրա՝ հին արվարձանաբնակի իտալական սուլոցների ազդեցությունը չկրած հանդարտ, զգայական և ռնգային ձայնը: Նրան ընդամենը երեք անգամ եմ տեսել, վերջինը՝ 1887 թվականին... Դուք ծրագրել եք, որ Ֆունեսի մասին գրեն նրանք, ովքեր ճանաչել են նրան, ինձ շատ է ուրախացնում այդ հանգամանքը. իմ վկայությունը գուցե լինի ամենահամառոտը և անկասկած ամենաղքատը, սակայն նա կլինի ձեր հրատարակած ժողովածուի ամենաանաչառը: Արգենտինացու իմ խղճուկ վիճակն ինձ թույլ չի տա գրել ներբողական ժանրով, որն Ուրուգվայում պարտադիր ժանր է, երբ խոսքը վերաբերում է ուրուգվայցուն: **Գրագետ, հավակնոտ, պորտենիո.** իհարկե, Ֆունեսը չարտասանեց այս վիրավորական բառերը, բայց վստահ եմ, որ ես նրա համար մարդկանց այդ խղճուկ տեսակի ներկայացուցիչն էի: Պեդրո Լեանդրո Իպուլչեն գրել է, որ Ֆունեսը գերմարդու նախատիպ է, «վայրի և տնաբույս մի Ջրադաշտ», չեմ վիճում, բայց չպետք է մոռանանք նաև, որ նա միևնույն ժամանակ Ֆրայ Բենտոսից է, Իպուլչեի հայրենակիցներից մեկը, նրանց հատուկ անբուժելի սահմանափակություններով հանդերձ:

Ֆունեսից ունեցած իմ առաջին հիշողությունը շատ հստակ է: Ութսունչորս թվականի մարտ կամ փետրվար ամսի մայրամուտներից մեկն էր: Հայրս այդ տարի ամառային արձակուրդներին ինձ Ֆրայ Բենտոս էր տարել: Զարմիկիս՝ Բեռնարդո Աեդոյի հետ էստանսիայից վերադառնում էինք Սան Ֆրանցիսկո: Ձիերին նըստած երգում էինք, և դ՛ա չէր ինձ երջանկացնող միակ հանգամանքը: Անտանելիորեն շոգ օրից հետո թերթաքարագույն մի փոթորիկ

ծածկել էր երկինքը: Նա սնվում էր հարավային քամուց, ծառերն արդեն գծվել էին, ես վախ ունեի (հուլյս), որ հորդառատ անձրևը մեզ բացատում կբռներ: Փոթորկի հետ մրցության մեջ մտանք: Կավաքարե բարձր մայրերի մեջ խորացող մի փողոց հասանք: Հանկարծակիորեն մթնել էր, վերևում շտապող և գրեթե գողունի քայլեր լսեցի, աչքերս բարձրացրի. նեղլիկ ու քանդված մայրով, կարծես նեղլիկ ու քանդված պատի վրայով վազելիս քնե՜ր՝ մի տղա անցավ: Հիշում եմ նրա վարտիքը, տրեխները, խիստ դեմքին պլպլացող ծխախոտը, և այդ ամենը՝ արդեն անսահմանորեն վիթխարի ամպի ֆոնին: Բեռնարդոն հանկարծ կանչեց. **Իրենեո, ժամը քանիսն է:** Մյուսը, առանց երկինք նայելու, առանց կանգ առնելու, պատասխանեց. **Ութին չորս է պակաս, պարոն Բեռնարդո Խուան Ֆրանսիսկո:** Չայնը սուր էր, հեզնոտ:

Ես այնքան մտացրիվ եմ, որ պատմածս երկխոսությունը ուշադրությունս չէր գրավի, եթե զարմիկս այն հետո չկրկներ՝ մղված (կարծում եմ յուրատեսակ տեղական հայրենասիրությամբ և ցանկանալով ցույց տալ իր կատարյալ անտարբերությունը՝ իրեն լրիվ անվամբ ծաղրաբար մեծարելու համար):

Ասաց, որ տղան Իրենեո Ֆունեսն էր՝ հանրությանն հայտնի իր մի քանի տարօրինակություններով, դրանցից՝ ոչ մեկի հետ չմտերմանալը և ժամացույցի պես ժամն իմանալը: Ավելացրեց, որ ավանի լվացարարուհիներից մեկի՝ Մարիա Կլեմենտինա Ֆունեսի որդին է, և որ ոմանք ասում են, թե հայրը աղահանքում աշխատող անգլիացի մի բժիշկ է, ոմն Օ'Կոննը, իսկ ոմանք էլ պնդում են, թե Սալտո նահանգում բնակվող ձի վարժեցնողի որդի է: Ապրում է մոր հետ՝ Լաուպեյների ագարակի կողքին:

Ութսունհինգ և ութսունվեց թվականների ամառային արձակուրդներն անցկացրինք Մոնտեվիդեոյում: Ութսունյոթին վերադարձա Ֆրայ Բենտոս: Բնականաբար հարցուփորձ արի բոլոր ծանոթներիս և վերջում՝ «ժամացույց Ֆունեսի» մասին: Պատմեցին, որ Սան Ֆրանցիսկո էստանսիայում նրան ձին վայր էր նետել, և հիմա անհուսալիորեն անդամալուծվել է: Հիշում եմ, մոգականորեն խռովող այն ազդեցությունը, որ ինձ պատճառեց այդ լուրը՝ ես նրան ընդամենը մի անգամ էի տեսել, ես ձիու վրա նստած գալիս է Սան Ֆրանցիսկոյից, իսկ ինքը քայլում էր բարձր մայրի վրայով: Բեռնարդոյի շուրթերին դեպքը նմանվում էր անցյալի պատառիկներով կազմված երազի: Ասացին, թե աչքերը ետնաբակի թզենուն կամ ինչ-որ սարդոստայնի հառած՝ անկողնուց

չի շարժվում: Մայրամուտին թույլ է տալիս, որ իրեն բերեն պատուհանի մոտ: Այն աստիճանի է հասցրել ամբարտավանությունը, որ կարծում է, թե իրեն կործանող հարվածը բարեգութ է... Նրան երկու անգամ տեսա իր հավերժական բանտարկյալի դրությունը կոպտաբար ընդգծող ճաղերի ետևում. առաջին անգամ անշարժ էր, աչքերը փակ, երկրորդ անգամ էլ անշարժ էր, կլանված և սանդունիակի բուրումնավետ մի տերև էր դիտում:

Ոչ առանց որոշ սնապարծության՝ ես այդ ժամանակ սկսել էի լատիներենի հիմնավոր ուսումնասիրությունը: Ճամպուրկս ընդգրկում էր Լոմոնի «De viris illustribus»¹-ը, Քիշերի «Thesaurus»²-ը, Հուլիոս Կեսարի «Մեկնաբանությունները» և Պլինիոսի «Naturalis Historia»³-ի անգլագական ժողովածուն, որն ընկալելու համար անբավարար էին (և են) լատինագետի իմ համեստ գիտելիքները: Փոքրիկ ավանում ամեն ինչ արագ է տարածվում. շուտով ավանի ծայրամասում ընկած իր տանը Իրենեոն տեղեկացավ այդ անսովոր գրքերի գոյության մասին: Ճոռոմ ու ծիսական մի նամակ ուղարկեց, ուր հիշատակում էր «ութսունչորս թվականի փետրվարի յոթի» մեր՝ դժբախտաբար, շատ կարճ հանդիպումը, գովաբանում էր հենց այդ տարի վախճանված քեռուս՝ դոն Գրեգորիո Աեդոյի «Խոսուսահնգոյի քաջարի օրերին երկու հայրենիքներին մատուցած փառահեղ ծառայությունները» և խնդրում, որ բառարանի հետ միասին, «բնագիրը ճիշտ հասկանալու համար, քանի որ դեռ ինձ առձանոթ է լատիներենը», ժողովածուներից որևէ մեկը փոխ տամ իրեն: Խոստանում էր գրեթե անմիջապես և լավ վիճակում վերադարձնել: Չեռագիրը կատարյալ էր, շեղագիր, ուղղագրությունը պատկանում էր այն տեսակին, որի ջատագովն էր Անդրես Բելլոն. i՝ y-ի փոխարեն և j՝ g-ի փոխարեն: Սկզբում, բնականաբար, մտածեցի, որ կատակ է: Ջարմիկներս հավատացրին, որ Իրենեոյի տարօրինակություններից մեկն է: Չգիտեի, աներեսության, տգիտության թե հիմարության վերագրել այն միտքը, որ խրթին լատիներենը բառարանից բացի այլ միջոց չի պահանջում. նրան ամբողջապես հիասթափեցնելու միտումով Քիշերի «Gradus ad Parnassum»⁴-ը և Պլինիոսի գործն ուղարկեցի:

¹ «Նշանավոր այրերի մասին» (լատ.):

² «Գանձարան» (լատ.):

³ «Բնական պատմություն» (լատ.):

⁴ «Պառնաս տանող սանդղամատ» (լատ.):

Փետրվարի տասնչորսին Բուենոս Այրեսից հեռագիր ստացա. ասում էին, որ անմիջապես վերադառնամ, քանի որ հայրս «բնավ լավ չէ»: Թող Աստված ների ինձ՝ շտապ հեռագրի հասցեատերը լինելու սնափառ գիտակցության համար. ողջ Ֆրայ Բենտոսին ժխտական և ստիպողական մակբայի հակասությունը բացատրելու տենչանքը, տղամարդավայել ստոիցիզմ ձևացնելով՝ ցավս դրամատիկացնելու միտումը, գուցե և շեղեցին իսկական ցավ զգալու հնարավորություններից: Համալրուկներս պատրաստելիս նկատեցի, որ մոտս չէին «Gradus»-ը և «Naturalis historia»-ի առաջին հատորը: «Սատուրնը» խարիսխը բարձրացնելու էր հաջորդ օրն առավոտյան. այդ գիշեր ընթրիքից հետո ուղևորվեցի Ֆունեսի մոտ: Զարմացա, որ գիշերն էլ ցերեկվա պես ծանր տոթ էր:

Համեստ, կոկիկ տնակում ինձ ընդունեց Ֆունեսի մայրը:

Ասաց, որ Իրենեոն ետնաբակի սենյակում է, և որ, հավանաբար, սենյակը մութ կլինի, քանի որ Իրենեոն մեռյալ ժամերն անցկացնում է առանց մոմ վառելու: Անցա սալահատակ բակը, միջանցքը, երկրորդ բակին հասա: Խաղողի տունկ կար. մթությունը ինձ կատարյալ թվաց: Հանկարծ Իրենեոյի բարձր ու հեզնոտ ձայնը լսեցի: Այդ ձայնը խոսում էր լատիներեն. այդ ձայնը (որ խավարի միջից էր գալիս) դանդաղ հաճույքով հողավորում էր ինչ-որ ճառ, աղոթք կամ ոգեկոչում: Լատիներեն ասույթներն արձագանքում էին հողե բակում. իմ երկյուղին դրանք անըմբռնելի, անվերջանալի թվացին, հետո այդ գիշերվա հսկայական երկխոսության ընթացքում իմացա, որ այդ տողերը «Naturalis historia»-ի յոթերորդ գրքի քսանչորսերորդ գլխի առաջին հատվածն են: Այդ գլխի նյութը հիշողությունն է. վերջին խոսքերն էին՝ *ut nihil non iisdem verbis redderetur auditum*¹.

Առանց ձայնը փոխելու՝ Իրենեոն ասաց, որ ներս մտնեմ: Անկողնում պառկած ծխում էր: Ինձ թվում է, որ մինչև արշալույս նրա դեմքը չտեսա. կարծես հիշում եմ միայն ծխախոտի թույլ կրակը: Սենյակը խոնավ էր: Նստեցի, կրկնեցի հեռագրի և հորս հիվանդության պատմությունը:

Հասնում եմ հիմա պատմվածքիս ամենադժվար կետին: Այն (լավ է, որ ընթերցողն արդեն իմանա) կես դար առաջ տեղի ունեցած այդ երկխոսությունից բացի այլ սյուժե չունի: Չեմ փորձի

¹ Այնպես որ, ոչինչ չի հաղորդվի լսողությանը միևնույն բառերով (լատ.):

կրկնել նրա՝ այժմ արդեն անդառնալի բառերը: Կնախընտրեմ ճշմարտությամբ ամփոփել նրա հաղորդած մտքերը: Անուղղակի ձևը հեռավոր է ու թույլ, գիտեմ, որ զոհաբերում եմ պատմվածքիս դիպուկությունը, թող ընթերցողներս երևակայեն այդ գիշեր ինձ ընկճող ընդհատումները:

Իրենեոն լատիներեն և իսպաներեն սկսեց թվարկել «Naturalis historia»-ում տեղ գտած հրաշալի հիշողություն ունեցող մարդկանց մասին բոլոր դեպքերը. պարսիկների թագավոր Կյուրոսը, որ իր զորաբանակի զինվորներին մեկ առ մեկ անվանապես ճանաչում էր, Միհրդատ եվպատորը, որ դատավորի պաշտոնն էր վարում իր կայսրության 22 լեզուներով, հիշագիտության գյուտարար Սիմոնիդեսը, Մեթրոդորոն, որ տիրապետում էր մի անգամ լսածը ճշգրտորեն կրկնելու արվեստին: Անկեղծորեն հիացավ այն բանից, որ նման դեպքերը հիացմունք էին պատճառում: Ասաց, որ ձիուց ընկնելուց առաջ ինքը, բոլոր քրիստոնյաների նման, կույր էր, խուլ, ապուշ և հիշողություն չունեցող մի մարդ: (Փորձեցի հիշեցնել նրան, թե ինչ ճշգրտությամբ է ընկալում ժամանակը և որքան հեշտությամբ է հիշում հատուկ անունները, չլսեց ինձ): Տասնինը տարի ապրել էր երազի մեջ՝ նայել էր առանց տեսնելու, լսել էր առանց լսելու, մոռացել էր ամեն ինչ, գրեթե ամեն ինչ: Ընկնելու պահին կորցրել էր գիտակցությունը, ուշքի գալով նկատել, որ առկա ամեն ինչ անտանելիորեն հարուստ ու հստակ է, այդ պահից իր մեջ արթնացել են ամենահին ու մանկության ամենաանշան հիշողությունները: Հետո իմացել էր իր անդամալուծության մասին: Դեպքը նրան ամենևին չէր հուզել: Մտածել (զգացել) էր, որ անշարժությունը շատ փոքր գին է: Այժմ իր ընկալումն ու հիշողությունը անսխալական էին:

Մենք մի ակնարկով ընկալում ենք սեղանի վրայի երեք գավաթները, Ֆունեսը՝ խաղողաորթի յուրաքանչյուր ողկույզն ու հատիկները: Գիտեր հազար ութ հարյուր ութսուներկուսի ապրիլի երեսունի արշալույսի հարավային ամպերի ձևը և իր հիշողության մեջ դրանք կարող էր համեմատել ընդամենը մի անգամ տեսած իսպանական գրքի թերթերի և Կեբրաչոյի ճակատամարտի նախօրյակին Ռիո Նեգրո գետում թիակի բարձրացրած փրփուրի գծերի հետ: Այդ հիշողությունները սովորական չեն, ամեն մի տեսողական պատկեր կապված է մկանային, ջերմային և այլ զգացողությունների հետ: Կարող էր վերստեղծել բոլոր երազներն ու կիսաերազները: Երկու թե երեք անգամ նա հիշողությամբ

վերստեղծել էր ամբողջական մի օր, մի պահ անգամ չէր կասկածել, բայց ամեն մի վերստեղծում պահանջել էր նույնպես ամբողջական մի օր: Ասաց. **Ես մենակս ավելի շատ հիշողություններ ունեմ, քան աշխարհը աշխարհ դառնալուց հետո բոլոր մարդկանց հիշողությունների գումարը:** Ասաց նաև. **Իմ քունը նույնն է, ինչ ձեր արթնությունը:** Իսկ արշալույսի դեմ ավելացրեց. **Իմ հիշողությունը պարոն, նման է աղբանոցի:** Գրատախտակի վրա գծված շրջանակը, եռանկյունին, քառանկյունին կամ շեղանկյունին այնպիսի ձևեր են, որ կարող ենք ամբողջապես ընկալել. այդ նույն ձևով էր Իրենետն ընկալում ձիու փոթորկոտ բաշը, սարալանջին արածող նախիրը, հարափոխ կրակը, անհամար մոխիրը և երկար հուղարկավորության ընթացքում հանգուցյալի դեմքի փոփոխությունները: Զգիտեմ, թե քանի աստղ էր տեսնում երկնքում:

Սրանք էին նրա ասածները, ոչ այն ժամանակ եմ կասկածել նրա ասածներին, ոչ էլ հիմա եմ կասկածում: Այն ժամանակ ոչ կինո կար, ոչ ձայնասփյուռ, բայց անհավանական է և նույնիսկ անհավատալի, որ ոչ ոք Ֆունեսի հետ փորձ չկատարեց: Այո, մենք միշտ հետաձգում ենք հետաձգելին, գուցե հոգու խորքում բոլորս էլ գիտենք, որ մենք անմահ ենք, և որ վաղ թե ուշ յուրաքանչյուր մարդ անելու և իմանալու է ամեն ինչ:

Մթության մեջ դեռ հնչում էր Ֆունեսի ձայնը:

Ասաց, որ 1886 թվականին հնարել էր թվային համարակալման յուրօրինակ մի համակարգ և մի քանի օրվա ընթացքում հասել մինչև քսանչորս հազարը: Գրի չէր առել, քանի որ մի անգամ մտածածը չէր կարող մտքից ջնջել: Իր առաջին խթանը, կարծեմ, «երեսուներեք պետ» անվանելու համար մի բառի և մի նշանի փոխարեն երկու նշան և երեք բառ օգտագործելու տհաճությունն էր: Հետո խելահեղ այդ սկզբունքը կիրառեց մյուս թվերի համար: Յոթ հազար տասներեքի փոխարեն ասում էր (օրինակի համար) *Մաքսիմ Պերես*, յոթ հազար տասնչորսի փոխարեն՝ գնացք, այլ թվեր էին *Լուիս Մելիան Լաֆինուրը, Օլիմարը, Ծծումբը, Թամբերը, Կետը, գազը, թեյնիկը, Նապոլեոնը, Ագուստին դե Վեդիան:* Հինգհարյուրի փոխարեն ասում էր՝ *ինը:* Յուրաքանչյուր բառ ուներ դրոշմանման յուրահատուկ մի նշան. վերջիններս շատ բարդ էին... Ես փորձեցի բացատրել, որ այդ անկապ ձայների ռապսոդիան թվային համակարգի պահանջարկի ճիշտ հակառակն է: Ասացի, որ ասել՝ 365, նշանակում է նկատի ունենալ երեք հարյուրյակ, վեց տասնյակ, հինգ միավոր, այսինքն՝ վերլուծություն

անել, և որ նման վերլուծությունը հնարավոր չէ *Սևամորթ Թիմոթեո* կամ սաստիկ ծեծ «թվերում»: Ֆունեսը չհասկացավ, կամ չուզեց հասկանալ ինձ:

Լոկը XVII դարում առաջարկել (և մերժել) է անհնարին մի լեզու, ուր ամեն մի առանձին իր, յուրաքանչյուր քար, յուրաքանչյուր թռչուն և յուրաքանչյուր ճյուղ ունենալու էր իր հատուկ անունը. Ֆունեսն էլ էր ծրագրել համանման մի լեզու, բայց հրաժարվել էր, գտնելով, որ դա շատ ընդհանուր և երկդիմի համակարգ է: Եվ իսկապես, Ֆունեսը ոչ միայն հիշում էր ամեն մի սարի յուրաքանչյուր ծառի ամեն մի տերևը, այլ նաև՝ երբ և քանի անգամ է այն ընկալել կամ երևակայել: Նա որոշեց անցյալի հուշերը սահմանափակել մինչև յոթանասուն հազարը և ապա դրանք սահմանել թվերով: Նկատի առնելով երկու հանգամանք՝ հրաժարվեց. առաջին, որ գործն անվերջանալի է, երկրորդ՝ որ անօգուտ է: Մտածեց, որ մահվան ժամին հազիվ թե կարողանա դասակարգել մանկության հիշողությունները:

Նշածս երկու ծրագրերն էլ (բնական թվերի համար անսահման մի բառապաշար և հիշողության պատկերների համար մտային անպետք մի քարտարան) անխոհեմ են, սակայն ակնարկում են աղոտ մի մեծություն: Եվ թույլ են տալիս ընդնշմարել կամ կռահել Ֆունեսի գլխապտույտ պատճառող աշխարհը: Նա, չմոռանանք, չէր կարող ընդհանուր պլատոնական գաղափարների հետ առընչություններ ունենալ: Նա ոչ միայն չէր կարող հասկանալ, որ «շուն» տեսակի անունը իրարից այնքան տարբեր, զանազան չափսերի ու ձևերի արարածներ է ներառում, նրան նույնիսկ խանգարում էր այն, որ ժամը երեքն անց տասնչորսին (կողքից) տեսած շունը, ժամը երեքն անց քառորդին (դիմացից) տեսած շան նույն անունն էր կրում: Հայելու մեջ իր սեփական դեմքը, ձեռքերը ամեն անգամ զարմացնում էին իրեն: Սվիֆտը պատմում է, որ Լիլիպուտիայի կայսրը նկատում էր ժամացույցի սլաքների շարժումը: Ֆունեսն ընկալում էր ապականման տաղտկալի առաջխաղացումը: Նույն ձևով ընկալում էր մահվան և խոնավության առաջխաղացումը: Բազմաձև, անմիջական և անտանելիորեն ճշգրիտ մի աշխարհի միայնակ ու պայծառամիտ հանդիսատեսն էր: Բաբելոնը, Լոնդոնն ու Նյու Յորքը վայրենի փայլով ապշեցնում են մարդկային երևակայությունը, ոչ ոք նրանց բազմամարդ աշտարակներում կամ եռուն պողոտաներում չի զգացել անխոնջ իրականության ճնշումն ու տոթը այնպես, ինչպես այն օր ու

գիշեր ընկալել է հարավամերիկյան իր խղճուկ արվարձանում դժբախտ Իրենեոն: Նրա համար շատ դժվար էր քնել: Քնել՝ նշանակում է ուշադրությունը շեղել աշխարհից. Ֆունեսը, անկողնում մեջքի վրա պառկած, խավարի մեջ պատկերացնում էր իրեն շրջապատող տներից յուրաքանչյուրի ճեղքն ու զարդաքանդակը: (Կրկնում եմ, որ նրա հիշողություններում ամենաչնչին կարևորություն ունեցող բանն ավելի մանրակրկիտ ու վառ է, քան մեր ընկալած ֆիզիկական հաճույքը կամ ֆիզիկական տանջանքը): Դեպի արևելք, բացառ մի վայրում նոր, անծանոթ կիսավարտ տնակներ էին կառուցվել: Ֆունեսը դրանք պատկերացնում էր սև, կոռ, միասեռ խավարից կառուցված: Նա դեմքը դարձնում էր դեպի այդ կողմը ու քնում: Նաև ինքն իրեն պատկերացնում էր գետի մեջ, և հոսանքը օրորում էր ու լուծում նրան իր ջրերին:

Առանց որևէ դժվարության սովորել էր անգլերենը, ֆրանսերենը, պորտուգալերենն ու լատիներենը: Կարծում եմ, սակայն, որ մտածելու ունակություն չուներ: Մտածել՝ նշանակում է տարբերությունները մոռանալ, ընդհանրացնել, վերացարկել: Ամենատարբեր իրերով լեփ-լեցուն Ֆունեսի աշխարհում գոյություն ունեին միայն անմիջական մանրամասնությունները:

Արշալույսի գգուշավոր լույսը ներս մտավ հողե բակից:

Այդ ժամանակ տեսա ամբողջ գիշեր խոսող ձայնի դեմքը: Իրենեոն տասնինը տարեկան էր, ծնվել էր 1868 թվականին: Նա ինձ թվաց բրոնզի պես կոթողային, ինձ թվաց, որ նա եգիպտոսից էլ հին է, որ նա գոյություն է ունեցել բուրգերից ու մարգարեություններից էլ առաջ: Մտածեցի, որ իմ արտասանած յուրաքանչյուր բառը (յուրաքանչյուր շարժումներ) հարատևելու էր նրա անգիջում հիշողության մեջ, ինձ բթացնում էր անօգուտ շարժումներ անելու երկյուղը:

Իրենեո Ֆունեսը վախճանվեց 1889 թվականին, թոքերի բորբոքումից:

ՊԱՎԱՃԱՆԻ ԵՎ ՀԵՐՈՍԻ ԹԵՄԱՆ

So the platonic Year
Whirls out new right and wrong,
Whirls in the old instead;
All men are dancers and their tread
Goes to the barbarous clangour of a gong.

W. B. Yeats: *The Tower*¹

Հայտնապես ազդված Չեստերտոնից (նրբին գաղտնիքների այդ հմուտ կազմողն ու պաճուճողը) և պալատական խորհրդական Լայբնիցից (որը հորինել է նախասահմանված ներդաշնակությունը)՝ ես երևակայել եմ հետևյալ սյուժեն, որը հավանաբար կգրեմ, և որը որոշ չափով կարդարացնի իմ անգործ երեկոները: Առայժմ բացակայում են անհրաժեշտ մանրամասնություններ, ճշտումներ, ուղղումներ. պատմության որոշ շրջաններ ինձ դեռ չեն հայտնվել՝ այսօր, 1944 թվականի հունվարի 3-ին, այն ինձ երևում է այսպես:

Գործողությունը կատարվում է ճնշված, բայց դիմադրող մի որևէ երկրում՝ Լեհաստանում, Իռլանդիայում, Վենետիկի հանրապետությունում, մի որևէ հարավամերիկյան կամ բալկանյան հանրապետությունում... Ավելի ճիշտ, այն կատարվել է, որովհետև թեև պատմողը ժամանակակից է, բայց պատմությունը տեղի է ունեցել 19-րդ դարի սկզբին կամ վերջին: Վերցնենք (պատմության հարմարության համար) Իռլանդիան և, ասենք, 1824 թվականը: Պատմողի անունը Ռայան է: Նա թոռնորդին է այն երիտասարդ, պանծալի, գեղեցիկ ու... գնդակահարված հերոս Ֆերգյուս Քիլպատրիկի, որի շիրիմը պղծվեց հանելուկային կողոպուտով, որի անունը զարդարում են Բրաունինգի և Հյուգոյի բանաստեղծությունները, որի արձանը իշխում է կարմրավուն ճահճուտներով շրջապատված գորշ բլուրին:

Քիլպատրիկը եղել է դավադիր՝ գաղտնի և փառապանծ առաջնորդը ապստամբների: Նման Մովսեսին, որը Մոաբի երկրից նըշ-

¹ Ահա այսպես պատմության տարին

Բոլորելով շրջանը՝ բարին և չարը քշում է հեռու,

Ապա հենի նորից վերադառնում.

Բոլոր մարդիկ տիկնիկներ են. շուրջպարը տանում է,

Եվ նրանց թելը ցնցվում է կոշնազանգի դողանքների տակ:

Ռ. Բ. Յեյթս «Աշտարակ» (անգլ.) (տողացի թարգմ. խմբ.):

մարեց, բայց այդպես էլ չկարողացավ հասնել ավետյաց երկիրը, Քիլպատրիկը զոհվեց իր իսկ տենչացած ու նախապատրաստած հաղթական ապստամբության նախօրյակին: Մոտենում է նրա մահվան առաջին հարյուրամյակի տարելիցը. սպանության հանգամանքները առեղծվածային են՝ իրեն հերոսի կենսագրությունը կազմելուն նվիրած Ռայանը կարծում է, որ սպանության առեղծվածը՝ անցնում է զուտ քրեականի սահմանները: Քիլպատրիկին գնդակահարեցին թատրոնում՝ բրիտանական ոստիկանությունը այդպես էլ երբեք չգտավ սպանողին. պատմագիրները, սակայն, գտնում են, որ այդ անհաջողությունը չի խուճացնում նրա փառքը, քանի որ սպանությունը թերևս կազմակերպել էր հենց ոստիկանությունն ինքը: Սակայն Ռայանին մտահոգում են առեղծվածի և այլ կողմեր. դրանք կրկնվածության բնույթ ունեն, այսինքն՝ դրանցում նույնօրինակ կրկնվում կամ համադրվում են դեպքեր՝ կատարված իրարից հեռու տարբեր վայրերում, տարբեր դարաշրջաններում: Այսպես՝ գաղտնիք չէ, որ հերոսի դիակը հերձելիս գտնվել է մի փակ նամակ, որը նրան զգուշացնում էր այդ գիշեր թատրոն չգնալ. նույն կերպ էլ Հուլիոս Կեսարն էր դեպի իրեն սպասող բարեկամների դաշույնները գնալիս ստացել մի գրություն, որը չէր հասցրել կարդալ: Այն դավադրության մատնություն էր՝ դավաճանների անուններով: Կեսարի կինը՝ Կալպուռնիան, վիատված, երազներում տեսնում է փլուզումը մի աշտարակի, որով Կեսարին պատվել էր սենատը. Քիլպատրիկի մահվան նախօրյակին անանուն կեղծ լուրերը ամբողջ երկրով մեկ տարածեցին Քիլգարվանի կլոր աշտարակի հրդեհը, դեպք, որը կարող էր թվալ կանխանշան, քանի որ նա ծնվել է Քիլգարվանում: Այս զուգահեռները (նաև ուրիշներ) Կեսարի և մի իռլանդացի դավադրի պատմության միջև, Ռայանին մղում են ենթադրելու ժամանակի մի գաղտնի ձև, մի զարդանախշ, որի գծերը կրկնվում են: Նա խորհում է Կոնդերսեի հղացած տասնորդական սխեմայի պատմության, Հեգելի, Շպենգլերի, Վիկոյի ձևաբանությունների և Հեսիոդոսի՝ ոսկին երկաթի փոխարկող մարդկության մասին: Խորհում է հոգիների փոխանցման ուսմունքի մասին, որը սարսափներով էր պարուրել կելտական գրությունները, և որը Կեսարն ինքը վերագրում էր կելտական դրուիդներին. մտածում էր, որ նա՝ նախքան Ֆերգյուս Քիլպատրիկ լինելը, եղել է Հուլիոս Կեսար: Այս շրջանաձև լաբիրինթոսներից Ռայանին դուրս է բերում մի հետաքրքիր համընկնում, որը, սակայն, նրան խորասուզում է առավել անելանելի ու այլասեռ լաբիրինթոսների մեջ. մահվան օրը Ֆերգյուս Քիլպատրիկի հետ զրուցած մի մուրացկանի խոսքերը նախապես ասված էին եղել

Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության մեջ: Տարօրինակ ու սարսափելի է, երբ պատմությունը ընդօրինակում է պատմությանը, բայց երբ պատմությունը ընդօրինակում է գրականությանը, դա արդեն անըմբռնելի է... Ռայանը նկատում է, որ հերոսի ամենահին ընկեր Ջեյմս Ալեգզանդեր Նոլանը 1814 թվականին կելտերեն է թարգմանել Շեքսպիրի գլխավոր դրամաները, ներառյալ նաև «Հուլիոս Կեսար»-ը: Արխիվներում հայտնաբերում է նաև Նոլանի հոդվածների մի ձեռագիր շվեյցարական «Festspiele»¹-ների մասին. սրանք թափառական ընդարձակ ներկայացումներ էին, որոնք պահանջում էին հազարավոր դերասաններ և ներկայացնում էին պատմական դեպքեր այն նույն քաղաքներում ու լեռներում, որտեղ դրանք իսկապես տեղի էին ունեցել: Հայտնաբերված ևս մի անտիպ փաստաթուղթ բացահայտում է, որ մահից մի քանի օր առաջ Քիլպատրիկը՝ վերջին անգամ նախագահելով դավադիրների նիստը, ստորագրել է մի դավաճանի մահվան դատավճիռ, որի անունը, սակայն, ջնջված է եղել: Այս դատավճիռը միանգամայն հակասում էր Քիլպատրիկի գթասիրտ բնավորությանը: Ռայանն ուսումնասիրում է գործը (նրա հետազոտությունը սյուժեի բացարկներից մեկն է), և նրան հաջողվում է լուծել գաղտնիքը: Քիլպատրիկին սպանեցին թատրոնում: Բայց թատրոն եղավ նաև ողջ քաղաքը, ուր կային լեգեոններով դերասաններ, և դրաման, պսակված նրա մահով, ներառավ բազում ցերեկներ ու բազում գիշերներ:

Ահա թե ինչպես՝ զարգացան պատմության դեպքերը.

• 1824 թվականի օգոստոսի 2-ին եղավ դավադիրների հանդիպումը: Երկրում ապստամբությունը հասունացել էր, սակայն ինչ-որ բան շարունակ խանգարում էր՝ դավադիրների մեջ դավաճան կար: Ֆերգյուս Քիլպատրիկը Նոլանին հանձնարարել էր գլտնել նենգավորին: Նոլանը հանձնարարությունը կատարեց՝ նա բոլոր հավաքվածների առաջ հայտարարեց, որ դավաճանը ինքը՝ Քիլպատրիկն է: Անհերքելի փաստերով նա ապացուցեց մեղադրանքի ճշմարտացիությունը. դավադիրներն իրենց առաջնորդին դատապարտեցին մահվան: Նա ինքը ստորագրեց սեփական դատավճիռը, բայց խնդրեց, որ իր մահապատիժը չվնասի հայրենիքին:

Եվ Նոլանը մտահոգացավ մի արտասովոր ծրագիր: Իռլանդիան խոնարհվում էր Քիլպատրիկի առաջ՝ նրա ստորության մասին կասկածի նշույլն անգամ վտանգի տակ կոյներ ապստամբությունը: Նոլանի ծրագրով դավաճանի մահապատիժը պետք է վերածվեր

¹ Տոնախմբություն (գերմ.):

հայրենիքի ազատագրության գործի հզոր խթանի: Նա առաջարկեց, որ դատապարտյալը զոհվի մի անծանոթ մարդասպանի ձեռքով: Դեպքը պիտի կատարվեր միտումնավոր ողբերգական պայմաններում, որպեսզի խոր տպավորվելով ժողովրդի հիշողության մեջ՝ միաժամանակ արագացներ ապստամբության պոռթկումը: Քիլպատրիկը երդվեց համագործակցել մտահղացմանը, որը հնարավորություն էր տալիս քավել մեղքերը և ցնցող դարձնել վախճանը:

Ժամանակի սղության պատճառով Նոլանը չհասցրեց կարգադրել բարդագույն գործողության բոլոր հանգամանքները և ստիպված եղավ բանագործություն կատարել թշնամի դրամատուրգից՝ անգլիացի Վիլյամ Շեքսպիրից: Նա կրկնեց «Մակբեթ»-ի և «Հուլիոս Կեսար»-ի տեսարանները: Հասարակական և գաղտնի այս ներկայացումը տևեց մի քանի օր: Դատապարտյալը մտավ Դուբլին, խոսեց մարդկանց հետ, գործեց, աղոթեց, փնտվեց, ասաց պաթետիկ խոսքեր... և նրա յուրաքանչյուր արարք, որոնք հետո նրա փառքի նշանները եղան, Նոլանի կողմից նախօրոք պատրաստված էին: Գլխավոր հերոսի հետ հարյուրավոր դերասաններ խաղացին՝ ոմանց դերը բարդ էր, ոմանցը՝ հպանցիկ: Նրանց խոսքերն ու արարքները արձանագրվեցին պատմական գրքերում, Իռլանդիայի կրթոտ հիշողության մեջ: Մանրամասն պատրաստված հզոր ճակատագրով տարված՝ Քիլպատրիկը չնախատեսված խոսքերով ու արարքներով քանիցս ճոխացրեց իր դատավարի տեքստը: Ժամանակի մեջ այսպես ետ պտտելով սփռվեց այս բազմամարդ դրաման՝ ընդհուպ մինչև 1824 թվականի օգոստոսի 6-ը, երբ հուղարկավորության վարագույրներով զարդարված օթյակում, որ ընդօրինակում էր Լինքոլնինը, երկար սպասված մի գնդակ մխրձվեց դավաճանի և հերոսի կուրծքը, որը կոկորդը լցվող արյան ուժեղ հորձանքների միջով հազիվ հասցրեց արտասանել ևս մի քանի նախատեսված խոսքեր:

Նոլանի աշխատանքում Շեքսպիրից վերցված մասերը պակաս ողբերգականներն են՝ Ռայանը կասկածում է, որ հեղինակը դրանք միտումով է մտցրել, որպեսզի հետագայում որևէ մեկը գուշակեր ճշմարտությունը: Նա հասկանում է, որ ինքն էլ է Նոլանի մտահղացման մասը կազմում: Երկար ու համառ մտատանջումներից հետո նա որոշում է իր հայտնաբերածի մասին լռել և հերոսին փառաբանող գիրք է հրատարակում. հնարավոր է, որ դա էլ էր նախատեսված:

Lönnrot-ի հանդուգն խորաթափանցությունը փորձող բազմաթիվ խնդիրներից և ոչ մեկն այնքան տարօրինակ, ասենք զարմանալիորեն տարօրինակ չէր, որքան արյունալի, պարբերաբար կրկնվող այն դեպքերը, որ էվկալիպտների անվերջանալի բույրերի մեջ ավարտվեցին «Trist-le-Roy» ագարակում: Ճիշտ է Erik Lönnrot-ը չկարողացավ արգելել վերջին սպանությունը, սակայն անվիճելի է, որ կարողացավ կանխել այն: Չգուշակեց Յարմոլինսկու չարանենգ սպանողի անունը, բայց գուշակեց չարադավ գործարքի գաղտնի ձևաբանությունն ու Ռեդ Սկարլակի, որի երկրորդ կեղծանունն էր Դենդի Սկարլակ, մասնակցությունը: Այդ հանցագործը (շատերի պես) պատվով էր երդվել սպանել Lönnrot-ին, բայց սա երբեք չէր ահաբեկվել: Lönnrot-ն ինքն իրեն անբասիր տրամաբանող էր համարում՝ մի նոր Ավգուստ Դուպեն, բայց նրա մեջ ինչ-որ ձևով առկա էր և արկածախնդիրը, և նույնիսկ խաղամուլը:

Առաջին սպանությունը տեղի ունեցավ «Hôtel du Nord»-ում, այդ բարձր աշտարակում, որտեղից երևում է անապատագույն ջրերով գետաբերանը: Դեկտեմբերի երեքին, առողջարանի նողկալի սպիտակություն, բանտախցերի միապաղաղություն ու վանող տեսք ունեցող այդ աշտարակ հասավ Մարսելո Յարմոլինսկին՝ մոխրագույն մորուքով և մոխրագույն աչքերով մի մարդ, թալմուդիստների երրորդ հավաքույթի Պողոսկի պատգամավորը: Մենք երբեք այլևս չենք իմանա, թե նրան դուր եկնավ արդյոք «Hôtel du Nord»-ը. հյուրանոցը նա ընդունեց այն անտրտունջ հանդուրժողականությամբ, որ նրան թույլ էր տվել հանդուրժել երեք տարի տևող Կարպատների պատերազմը և երեք հազար տարվա ճնշումներն ու ջարդերը: Նրան մի ննջասենյակ տվեցին R հարկում՝ Գալիլեայի Չորրորդապետի զբաղեցրած շքեղ suite-ի՝ դիմաց: Յարմոլինսկին ընթրեց, հետաձգեց քաղաք գնալը, պահարանում տեղավորեց իր բազմաթիվ գրքերն ու մի քանի հագուստները և կեսգիշերից առաջ հանգցրեց լույսը: (Այդպես վկայեց հորակից սենյակում քնած Չորրորդապետի վարորդը): Ամսի չորսի առավոտյան ժամը 11 անց 3 րոպեին նրան զանգահարեց «Yidische Zeitung»-ի խմբագիրը, դոկտոր Յար-

¹ Համար՝ բաղկացած մի քանի սենյակներից (Ֆրանս.):

մոլինսկին չպատասխանեց, նրան հայտնաբերեցին սենյակում՝ արդեն սևացած դեմքով, հնամաշ ծածկոցի մեջ փաթաթված, գրեթե մերկ վիճակում: Ընկած էր հատակին, միջանցք բացվող դռնից ոչ հեռու. խորունկ մի դաշունահարված ճեղքել էր նրա կուրծքը: Մի քանի ժամ հետո, այդ նույն սենյակում, լրագրողներով, նկարիչներով և ոստիկաններով շրջապատված, ոստիկանապետ Տրեվիրանուսն ու Lönrot-ը հանդարտորեն պարզաբանում էին հանելուկային սպանությունը:

— Երեքոտանի կատու փնտրելու հարկ չկա, — ասում էր Տրևիրանուսը՝ թափահարելով անբաժան սիգարը: — Բոլորս էլ գիտենք, որ Գալիլեայի Չորրորդապետը աշխարհի ամենալավ շափուղաներն ունի: Գողն այստեղ է մտել սխալմամբ: Յարմոլինսկին արթնացել է, գողն ստիպված է եղել սպանել նրան: Ինչ եք կարծում:

— Հնարավոր է, բայց անհետաքրքրական, — պատասխանեց Lönrot-ը:

— Դուք, իհարկե, կառարկեք, թե պարտադիր չէ, որ իրականությունը հետաքրքրական լինի: Իսկ ես կառարկեմ, որ իրականությունը կարող է ազատվել այդ պարտականությունից, բայց վարկածը՝ երբեք: Ձեր վարկածում մեծ դեր ունի պատահականությունը: Մեռածը մի ռաբբի է, ես կնախընտրեի զուտ ռաբբիական մի բացատրություն, և ոչ թե երևակայական գողի երևակայական արկածախնդրություն:

Տրևիրանուսը նեղսրտած պատասխանեց.

— Ինձ ռաբբիական բացատրությունները չեն հետաքրքրում, ինձ հետաքրքրում է այս անծանոթին սպանողին բռնելը:

— Ոչ այդքան անծանոթ, — ուղղեց Lönrot-ը: — Այստեղ է նրա երկերի լիակատար ժողովածուն: Եվ ցույց տվեց պահարանում շարված հաստափոր գրքերի մի շարք. «Կաբալայի արդարացումը», «Robert Fludd-ի փիլիսոփայության քննությունը», «Sepher Yezirah»-ի¹ բառացի թարգմանությունը, «Baal Shem»-ի վարքը, «Hasidim-ների աղանդի պատմությունը», Tetragrammaton-ի² մասին (գերմաներեն) մի մենագրություն, մի այլ մենագրություն Հնգամատյանի աստվածային անվանացանկի մասին: Ոստիկանապետը երկյուղով և գրեթե զզվանքով նայեց այդ գրքերին: Հետո ծիծաղեց:

¹ «Գիրք արարչության» (հին եբր.):

² «Ջառատառություն» (հուն.):

— Ես մի խեղճ քրիստոնյա եմ,— ասաց: — Բոլորն էլ կարող եք վերցնել, ես հրեական սնահավատություններով զբաղվելու ժամանակ չունեմ:

— Գուցե և այս հանցագործությունը հրեական սնահավատությունների կարգին դասենք,— մրմնջաց Lönrot-ը:

— Ինչպես և քրիստոնեության,— համարձակվեց լրացնել Yidische-ի խմբագիրը՝ կարճատես, աթեիստ և երկչոտ մի մարդ:

Ոչ ոք չպատասխանեց նրան: Ոստիկաններից մեկը փոքրիկ գրամեքենայի վրա գտել էր մի թուղթ՝ հետևյալ անավարտ նախադասությամբ.

«Անվան առաջին տառն արդեն արտասանվել է»:

Lönrot-ը դադարեց ժպտալ: Հանկարծակիորեն գրքասեր կամ հրեագետ դարձած՝ նա հրամայեց, որ հանգուցյալի գրքերից մի կապոց պատրաստեն, որ տուն տանի: Ոստիկանական հետաքննությանն անտարբեր՝ նա սկսեց ուսումնասիրել այդ գրքերը: Գրքերից մեկը կրան ծանոթացրեց Բարեպաշտների աղանդի հիմնադիր Israel Baal Shem Tobh-ի ուսմունքին, մեկ ուրիշը՝ հզոր և ահարկու Tetragrammaton-ին, որ Աստծու անարտահայտելի անունն է, մեկ ուրիշը պնդում էր այն դրույթը, թե Աստված գաղտնի մի անուն ունի, որն իր մեջ պարունակում է (ինչպես Ալեքսանդր Մակեդոնացուն պարսիկների վերագրած ապակե զնդրիկի մեջ) նրա իններորդ հատկանիշը՝ հավերժությունը, այսինքն՝ տիեզերքում կատարվելիք, կատարվող և կատարված դեպքերի անմիջական գիտակցումը: Ավանդությունը հիշատակում է Աստծու իննսունինը անուններ, հրեագետներն այդ անկատար թիվը վերագրում են զույգ թվերի պատճառած կախարդական երկյուղին, հասիդները կարծում են, որ այդ բացթողումը նշում է հենց հարյուրերորդ անունը՝ Բացարձակ Անունը:

Մի քանի օր հետո այդ վերծանությունից նրան շեղեց «Yidische Zeitung»-ի խմբագրի ներկայությունը: Ուզում էր խոսել սպանության մասին. Lönrot-ը նախընտրեց խոսել Աստծու բազմաթիվ անունների մասին, լրագրողը երեք սյունակի մեջ հայտարարեց, որ Erik Lönrot-ը հանցագործի անունը հայտնաբերելու համար Աստծու անուններն է ուսումնասիրում: Lönrot-ը, վարժված լրագրային խոսքի պարզեցումներին, չբարկացավ: Այն գրավաճառներից մեկը, որ հայտնաբերել էր, թե ցանկացած մարդու կարելի է գնել տալ ցանկացած գիրք, էժանագին հրատարակությամբ երևան հանեց «Հասիդների աղանդի պատմությունը»:

Հունվարի երեքի գիշերը մայրաքաղաքի արևմտյան արվարձանների ամենախուլ և մոռացված խորշերից մեկում տեղի ունեցավ երկրորդ սպանությունը: Արշալույսին այդ ամայի վայրերը հսկող ձիավոր ոստիկաններից մեկը հին ներկատան շեմին ընկած մի մարդ տեսավ: Քարացած դեմքի վրա արյունը կարծես դիմակ էր կազմել, խորունկ մի դաշունահարված ձեռքեր էր նրա կուրծքը: Պատին՝ դեղին և կարմիր շեղանկյունիների վրա կավճով գրված մի քանի բառեր կային: Ոստիկանը կմկմաց այդ բառերը: Այդ երեկո Տրևիրանուսն ու Lönrot-ը մեկնեցին սպանության հեռավոր վայրը: Ավտոմեքենայի աջ և ձախ կողմերում կորչում էր քաղաքը, աճում էր հորիզոնը, տները կորցնում էին իրենց կարևորությունը և կարևորվում էին կավաքարե փոշին ու կաղամախիները: Հասան իրենց խղճուկ հասցեավայրը՝ վարդագույն հողապատերով մի փակ փողոց, ուր ինչ-որ ձևով կարծես արտացոլվում էր անհամաչափ մայրամուտը: Արդեն իմացել էին սպանվածի ով լինելը: Նա Դանիել Աիմոն Ասեվեդոն էր, Հյուսիսի արվարձաններում որոշակի համբավ վայելող մի մարդ, որ սայլապանից դարձել էր ընտրարշավներում ճնշումներ բանեցնող թիկնապահ և ապա սկստացել մինչև գողի ու նույնիսկ մատնիչի աստիճան: (Նրա սպանության յուրահատուկ ձևը համապատասխան համարեցին՝ Ասեվեդոն դաշույնի և ոչ թե ատրճանակի գործածությանը տիրապետող ավագակների սերնդի վերջին ներկայացուցիչն էր): Կավիճով գրված էին հետևյալ բառերը.

«Անվան երկրորդ տառն արդեն արտասանվել է»:

Երրորդ սպանությունը տեղի ունեցավ փետրվարի երեքի գիշերը: Ժամը մեկից քիչ առաջ ոստիկանապետ Տրևիրանուսի գրասենյակում հնչեց հեռագանգը: Խոսողը մեծ զգուշավորությամբ և կոկորդային ձայնով ասաց, որ անունը Գինգբերգ (կամ Գինգբուրգ) է և որ բավարար վարձատրության դեպքում պատրաստ է պարզաբանելու Ասեվեդոյի և Յարմոլինսկու սպանությունների գաղտնիքը: Սուլոցների և լսափողի աղմուկը խլացրեց մատնիչի ձայնը: Հետո ձայնն ընդհատվեց: Առանց կատակի հնարավորությունն անտեսելու (վերջ ի վերջո դիմակահանդեսի օրեր էին) Տրևիրանուսը տեղեկացավ, որ հեռաձայնել էին Ռյու-դե-Տուլոնից, տիեզերացույցի և կաթի խանութի, բոգանոցի և Աստվածաշունչ վաճառողների խառնուրդ այդ փողոցում գտնվող «Լիվերպուլ-հաուզ» գինետնից: Տրևիրանուսը զանգահարեց գինետան տիրոջը: Սա (Բլաք Ֆիննեզանը, պարկեշտությունից ապշած և նույնիսկ բթացած իռլանդացի մի հին քրեական) ասաց, որ վերջին անգամ

հեռախոսով խոսողը գինետան վերնահարկում ապրող ոմն Գրայֆի-
ուսն էր, որ քիչ առաջ մեկնեց ընկերների հետ: Տրևիրանուսն
անմիջապես մեկնեց դեպի «Լիվերպուլ-հաուզ»: Տերն հաղորդեց
հետևյալը. Գրայֆիուսը՝ խամրած մորուքով, սևազգեստ մի մարդ, ութ
օր առաջ մի սենյակ էր վարձել գինետան վերնահարկում: Ֆիննեգանը
(որ սենյակն օգտագործում էր, և Տրևիրանուսն անմիջապես կռահեց,
թե ինչ նպատակների համար) նրանից, անկասկած, չափազանց
բարձր վարձ էր պահանջել. Գրայֆիուսն անմիջապես վճարել էր
պահանջված դրամը: Սենյակից երբեք դուրս չէր գալիս, այնտեղ էր
ընթրում և ճաշում, գինետան մեջ հազիվ թե ճանաչեին նրան: Մի
մեքենա կանգ էր առել գինետան առաջ: Վարորդը դեկի մոտից չէր
շարժվել, հարևաններն հիշեցին, որ արջի դիմակ էր հագել: Մեքենա-
յից երկու ծաղրածուներ իջան, ցածրահասակ էին, և ոչ ոք չէր կարող
չնկատել նրանց հարբածությունը: Շեփորներով, գոռոմ-գոչյուննե-
րով խուժեցին Ֆիննեգանի գրասենյակն ու գրկեցին Գրայֆիուսին,
որը կարծես ճանաչեց նրանց, բայց սառնությամբ ընդունեց, եբրայե-
րեն մի քանի բառ փոխանակեցին, ինքը՝ ցածր, կոկորդային ձայնով,
նրանք՝ կեղծ, սուր ձայներով, և վերի սենյակը բարձրացան: Մի
քառորդ ժամ հետո երեքը միասին իջան, կարծես բոլորն էլ երջանիկ
լինեին: Գրայֆիուսը օրորվում էր, մյուսների չափ հարբած էր երևում:
Բարձրահասակ, գրեթե օդի մեջ կախված, քայլում էր դիմակավորված
ծաղրածուների արանքում: (Գինետան կանանցից մեկը հիշեց նրանց
հագուստների դեղին, կարմիր և կանաչ շեղանկյունիները): Գրայֆի-
ուսնը երկու անգամ սայթաքեց, երկու անգամն էլ նրան բռնեցին
ծաղրածուները: Երեքն էլ մեքենա նստեցին և անհետացան դեպի ծովի
կողմը: Ավտոմեքենայի վրայից ծաղրածուներից մեկը ցուցափեղկի
վրա խզբզեց անպատեհ մի բան և ապա մի նախադասություն:

Տրևիրանուսը տեսավ նախադասությունը: Ինչպես կարելի էր
ենթադրել՝ գրությունը ազդարարում էր.

«Անվան վերջին տառն արդեն արտասանվել է»:

Հետո Գրայֆիուս-Գինգբերգի սենյակը քննեց: Հատակին
աստղ հիշեցնող արյան կաթիլներ կային, անկյուններում հունգա-
րական ծխախոտի մնացորդներ, պահարանում՝ լուսանցքում ձե-
ռագիր նշումներով, լատիներեն մի գիրք՝ «Philologus
hebraeograecus»¹ (1739): Տրևիրանուսը զայրացավ ու կանչել

¹ «Եբրայա-հունական բանասեր» (լատ.):

տվեց Lönrot-ին: Մինչ ոստիկանապետը հարցաքննում էր ենթադրվող առևանգման իրար հակասող վկաներին, Lönrot-ը, առանց գլխարկն հանելու, սկսեց թերթել գիրքը: Ժամը չորսին դուրս եկան: Ծուռումուռ Ռյու-դե Տուլոնում, դեռ առավոտից չավված գունավոր թղթերը կոխելով անցնելիս, Տրևիրանուսն ասաց.

— Իսկ եթե այս գիշերվա պատմությունը կեղծիք լինի:

Lönrot-ը ժպտաց, հետո լրջացավ և բարձրաձայն կարդաց «Philologus»-ի երեսուներեքերորդ դատողությունից (ընդգծված) հատվածը:

— Dies Judaeorum incipit ad solis occasu usque ad solis occasum diei sequentis. Սա նշանակում է,— ավելացրեց,— հրեական օրն սկսվում է երեկոյան և տևում մինչև հաջորդ երեկո:

Մյուսը փորձեց հեզնել:

— Դհ է ձեր այս գիշերվա ստացած ամենակարևոր տեղեկությունը:

— Ոչ, ավելի արժեքավոր է Գինզբերգի ասած մի խոսքը:

Երեկոյան թերթերը լռության չմատնեցին պարբերաբար անհայտացածների: «Լա կրուզ դե լա Էսպադան» դրանց հակադրեց ճգնավորների վերջին հավաքույթի նախանձելի կարգապահությունն ու կարգը: «Էլ մարտիրոմ»¹ էռնստ Փալասը դատապարտեց «անթույլատրելի դանդաղկոտությունը գաղտնի և ընդհատակյա ամրափակ ջարդի, որին հարկավոր եղավ երեք ամիս երեք հրեա սպանելու համար»: «Yidische Zeitung»-ը հերքեց հակասեմական դավադրության զագրելի վարկածը՝ «թեև բազմաթիվ խորաթափանց անձինք այլ լուծում չեն գտնում այդ խորհրդավոր երեք սպանությունները բացատրելու համար»: Հարավի ամենահամբավավոր ավագաններից մեկը՝ Դանդի Ռեդ Սկարլակը երդվեց, որ իր տեղամասում այդպիսի սպանություններ տեղի չէին ունենա, և անհոգության հանցանքի մեջ մեղադրեց ոստիկանապետ Ֆրանց Տրևիրանուսին:

Սա մարտի մեկի գիշերը կնքված, պատկառազդու մի ծրար ստացավ: Բացեց, ծրարում նամակ կար՝ ստորագրված «Բարուխ Սպինոզա», և հավանաբար որևէ ուղեցույցից պոկված քաղաքի մանրակրկիտ քարտեզը: Նամակը մարգարեաբար հայտնում էր, որ մարտի երեքին մի չորրորդ սպանություն տեղի չի ունենալու, քանի

¹ «Նահառակ» (լատ.):

որ Արևմուտքի ներկատունը, «Ռյու-դե-Տուլոնի» գինետունը և «Hôtel du Nord»-ը կազմում են «հավասարակողմ և միստիկ եռանկյունու ծայրերը»: Քարտեզը կարմիր թանաքով ապացուցում էր այդ եռանկյունու կանոնավորությունը: Տրևիրանուսը անտըր-տունչ կարդաց այդ *de more geometrico*¹ սյուժեն և նամակն ու քարտեզն ուղարկեց այդ գծությունների անվիճելի տիրոջը՝ Lönnerot-ին: Erik Lönnerot-ն ուսումնասիրեց նամակն ու քարտեզը: Երեք վայրերն իսկապես հավասար հեռավորության վրա էին գտնվում: Կար ժամանակի համաչափություն (դեկտեմբերի 3, հունվարի 3, փետրվարի 3): Նույնպիսի համաչափություն կար նաև տարածության մեջ... Հանկարծ զգաց, որ հայտնաբերելու է գաղտնիքը: Կարկինն ու կողմնացույցը լրացրին այդ ներքին զգացողությունը: Ժպտաց, արտասանեց Tetragrammaton (Նոր սովորած) բառը և հեռաձայնեց ոստիկանապետին: Ասաց.

— Ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեր երեկ գիշեր ուղարկած հավասարակողմ եռանկյունու համար: Այն ինձ թույլ տվեց լուծել խնդիրը: Վաղը՝ ուրբաթ, հանցագործները բանտում կլինեն, կարող եք հանգիստ լինել:

— Ուրեմն մի չորրորդ սպանություն չեն ծրագրում:

— Ծրագրում են, և դրա համար էլ կարող ենք հանգիստ լինել: Lönnerot-ը կախեց լսափողը: Մի ժամ հետո Հարավային երկաթգծի գնացքներից մեկով ճամփորդում էր դեպի «Տրիստ-լե-Ռուա» անմարդաբնակ ագարակը: Խմ նկարագրած քաղաքի հարավում կաշենկույտերով և աղբով լեցուն, պղտոր ջրերով մի գետակ է հոսում: Գետակի մյուս ափին գործարանային արվարձան կա, ուր բարսելոնցի դեկավարի հովանավորության ներքո վիճտում են վարձու մարդասպանները: Lönnerot-ը ժպտաց՝ մտածելով, որ ամենահամբավվոր ավազակը՝ Ռեդ Սկարլակը, ամեն ինչ կտար այդ գաղտնի այցելության մասին իմանալու համար: Ասեվեդոն եղել էր Սկարլակի ընկերը: Lönnerot-ը սկզբում մտածեց, որ չորրորդ զոհը հնարավոր է՝ Սկարլակը լինի: Հետո հրաժարվեց... Ըստ ամենայնի խնդիրն արդեն լուծված էր. պարզ հանգամանքները, իրականությունը (անուններ, բանտարկումներ, դեմքեր, ոստիկանական և բանտային բյուրոկրատիզմ) հազիվ թե հետաքրքրեին նրան: Ուզում էր զբոսնել, հանգստանալ երեք ամսվա նստակյաց հետազոտություններից հետո: Մտածեց, որ սպանություն-

¹ Երկրաչափական կերպով (լատ.):

ների բացատրությունը մի անանուն եռանկյունու վաղնջական փոշիների մեջ ծածկված հունական մի բառի մեջ է: Գաղտնիքը գրեթե պարզ թվաց, ամաչեց դրան հարյուր օր տրամադրելու համար:

Գնացքը կանգ առավ մի խուլ կայարանում: LÖNNROT-ը իջավ: Արշալույսի նմանվող անձայն երեկո էր: Մութ դաշտի օդը սառն էր ու խոնավ: LÖNNROT-ն սկսեց քայլել: Շներ տեսավ, մեռած երկաթուղում մի սայլ տեսավ, տեսավ հորիզոնը, լճակից գարշահոտ ջուր խմող արծաթագույն մի ձի տեսավ: Մթնում էր արդեն, երբ նկատեց իրեն շրջապատող էվկալիպտների պես բարձր «Տրիստ-լե-Ռուսա» ագարակի քառանկյունի աշտարակը: Մտածեց, որ ընդամենը մի արևածագ և մի արևմուտ (մի հին փայլատակում արևելքում, մեկ ուրիշն էլ արևմուտքում), և Անվան որոնողները կհասնեին իրենց տենչացած ժամին:

Ժանգոտած մի ցանկապատ գծում էր ագարակի անհամաչափ տարածքը: Գլխավոր դուռը փակ էր: LÖNNROT-ը, մտնելու ոչ մեծ հույսով, շրջեց ամբողջ տարածքը: Նորից անբեկանելի դռան առաջ կանգնած՝ ձեռքը մտցրեց ձողերի արանքը և գտավ բռնակը: Երկաթի ճռռոցը հանկարծակիի բերեց նրան: Դարպասը առանց դիմադրության դանդաղորեն, ամբողջովին բացվեց:

Չորացած և փշրված տերևների բազմաթիվ սերունդներ տորելով՝ LÖNNROT-ն առաջ շարժվեց էվկալիպտների միջով: Մոտիկից դիտելիս «Տրիստ-լե-Ռուսա» ագարակը լի էր անօգուտ համաչափություններով և խելահեղ կրկնություններով. տխուր մի որմնախորշում տեղադրված անարտահայտիչ Դիանային երկրորդ որմնախորշում մի այլ Դիանա էր համապատասխանում, մի պատշգամբը արտացոլվում էր մյուս պատշգամբում, զույգ աստիճանները բացվում էին զույգ աստիճանաձողերով: Երկդմբ Հերմեսը նետում էր դիվային մի ստվեր: LÖNNROT-ը պտտվեց տան շուրջբոլորը, ինչպես շրջագայել էր ողջ ագարակը: Ամեն ինչ զննեց, մի նեղ փեղկ տեսավ:

Հրեց, մի քանի մարմարե աստիճաններ տանում էին նկուղ: LÖNNROT-ը, որ արդեն կռահել էր ճարտարապետի ճաշակը, գլխի ընկավ, որ նկուղի դիմացի պատի մեջ նման աստիճաններ պետք է լինեն: Գտավ, բարձրացավ, բարձրացրեց ձեռքերը և հրեց ելքի դուռը:

Թույլ մի լույս նրան հասցրեց մինչև մի պատուհան: Բացեց, տխուր պարտեզում կլոր ու դեղին լուսինը լուսավորում էր երկու չգործող ցայտաղբյուրներ: LÖNNROT-ը հետախուզեց տունը: Նա-

խասենյակների և միջանցքների միջով հասավ նույնանման բակեր և հաճախ էլ՝ միևնույն բակը: Փոշոտ աստիճաններով բարձրացավ շրջանաձև նախագավիթներ, անսահմանորեն բազմապատկվեց հակադիր հայելիներում, հոգնեց պատուհանները անընդհատ բացելուց և փակելուց, որոնք դրսում, տարբեր բարձրություններից ու անկյուններից, նույն անխնամ պարտեզն էին ցույց տալիս, ներսը՝ դեղին լաթերով ծածկված կահույքն էր և բամբակե շորի մեջ փաթաթված ձեղնաճրագները: Մի ննջասենյակում կանգ առավ, այդ ննջասենյակում, հախճապակե գավաթի մեջ մեն մի ծաղիկ կար. առաջին հպումից հին թերթիկները փշրվեցին: Երկրորդ հարկում՝ վերջինում, տունը նրան անսահման ու ընդարձակվող թվաց: **Տունը մեծ չէ, մտածեց, խավարը, համաչափությունը, հայելիները, տարիները, անծանոթությունը, մենությունն են մեծացնում այն:**

Պարույրաձև աստիճաններով աշտարակին հասավ: Իրիկնային լուսինը թափանցում էր պատուհանների դեղին, կարմիր ու կանաչ շեղանկյունիների մեջ: Գլխապտույտ և զարմանք պատճառող մի հիշողություն անշարժացրեց նրան:

Երկու ցածրահասակ, ուժեղ և ահռելի տղամարդիկ նետվեցին Lönrot-ի վրա և զինաթափեցին նրան, մեկ ուրիշը՝ բարձրահասակը, լրջությամբ բարևեց և ասաց.

— Դուք շատ բարի եք, խնայել եք մեր մեկ օրն ու գիշերը:

Ուեդ Սկարլակն էր: Lönrot-ին կապեցին: Սա վերջապես վերագտավ իր ձայնը:

— Սկարլակ, դուք Գաղտնի Անճունն եք որոնում:

Սկարլակը ոտքի վրա էր, անտարբեր: Չմասնակցեց կարճատև կռվին, հազիվ ձեռքը երկարեց Lönrot-ի ատրճանակը վերցնելու համար: Խոսեց. նրա ձայնում Lönrot-ը լսեց հոգնած հաղթողի բավարարվածությունը, տիեզերքի չափ մեծ ատելությունը և ատելությունից ոչ պակաս տխրությունը:

— Ոչ,— ասաց Սկարլակը,— ավելի անցողիկ ու փխրուն մի բան եմ որոնում, որոնում եմ Erik Lönrot-ին: Երեք տարի առաջ «Ռյու-դե-Տուլոնի» խաղակենտրոններից մեկում դուք բռնեցիք և բանտարկեցիք եղբորս: Ընկերներս փախցրին ինձ, բայց իմ ստամոքսում ոստիկանական մի փամփուշտ կար: Ինն օր ու գիշեր հոգեվարքի մեջ էի այս անմարդաբնակ ու համաչափ ագարակում, ինձ տանջում էր տենդը, քուն թե արթուն ինձ սարսափեցնում էր մայրամուտներն ու արշալույսները հավերժապես դիտող երկդեմք

Յանուար: Հասա այն դրության, որ ատեցի մարմինս, հասա այն բանին, որ զգացի, թե երկու աչք, երկու ձեռք, երկու թոք ունենալն այնքան դիվային է, որքան երկու դեմք ունենալը: Մի իռլանդացի փորձեց ինձ քրիստոնեական կրոնին դարձնել, նա հաճախ կըրկընում էր goim-ների¹ այն դատողությունը, ըստ որի՝ բոլոր ճամփաները տանում են Հռոմ: Գիշերներն այդ փոխաբերությամբ էր սնվում իմ ցնորքը, ես զգում էի, որ աշխարհը մի լաբիրինթոս է, որից անհնար է փախչել, քանի որ բոլոր ճամփաները, որքան էլ թվում է, թե հարավ կամ հյուսիս են գնում, իրականում տանում են Հռոմ, և այդ Հռոմը միևնույն ժամանակ «Տրիստ-լե-Ռուա» ագարակն է, և քառակուսի այն բանտը, ուր հոգեվարքի մեջ էր եղբայրս: Այդ գիշերներից մեկին ես, երկու դեմքով նայող աստծու և տենդի ու հայելիների բոլոր անտվածների անուևով երդվեցի եղբորս բանտարկող մարդու շուրջը մի լաբիրինթոս հյուսել: Եվ ամուր եմ կառուցել. նրա համար նյութ են ծառայել մեռած մի աղանդագետ, մի կողմնացույց, XVIII դարի մի աղանդ, հունական մի բառ, մի դաշույն և մի ներկատան շեղանկյունիները:

Առաջին քայլը պատահական էր: Մի քանի հոգու հետ, նրանց մեջ նաև՝ Դանիել Ասեվեդոն, նյութել էինք Չորրորդապետի շափյուղաների գողությունը: Ասեվեդոն դավաճանեց մեզ, հարբեց և գործն սկսեց որոշված ժամկետից մի օր առաջ: Կորավ հսկայական մի հյուրանոցում. ժամը երկուսին խուժեց Յարմոլինսկու սենյակը: Սա, երևի անքնությունից, սկսել էր գրել: Հավանաբար, առանձին նոթեր կամ հոդված էր շարադրում Աստծու անվան մասին. նա գրել էր. «Անվան առաջին տառն արդեն արտասանված է»: Ասեվեդոն պահանջեց լռել: Յարմոլինսկին ձեռքը երկարեց դեպի այն զանգակը, որ արթնացնելու էր հյուրանոցում ապրողներին: Ասեվեդոն նրա կրծքին հասցրեց ևս մի դաշունահարված: Գրեթե բնազդային մի շարժում էր՝ կեսդարյա բռնությունը նրան սովորեցրել էր, որ ամենահեշտն ու ապահովը սպանելն է... Տասն օր հետո «Yidische Zeitung»-ից տեղեկացա, որ դուք Յարմոլինսկու գրվածքներում եք որոնում Յարմոլինսկու մահվան բացատրությունը: Ընթերցեցի հասիդների աղանդի պատմությունը, իմացա, որ Աստծու Անունն արտասանելու խոնարհ երկյուղը ծնունդ է տվել այն գաղափարախոսությանը, ըստ որի այդ Անունը

¹ Այդպես անվանում էին ոչ երեւաններին:

ամենակարող ու ծածուկ է: Իմացա, որ այդ գաղտնի Անունը որոնելու համար որոշ հասիդներ հասնում էին մինչև մարդկային զոհաբերության... Հասկացա, որ դուք ենթադրում եք, թե հասիդներն են զոհաբերել ռաբբիին. ես որոշեցի արդարացնել ձեր այդ ենթադրությունը:

Մարսելո Յարմոլինսկին սպանվեց դեկտեմբերի երեքի գիշերը. երկրորդ «զոհաբերության» համար ընտրեցի հունվարի երեքը: Նա սպանվեց Հյուսիսում: Երկրորդ «զոհաբերության» համար ձեռնտու էր Արևմուտքում գտնվող մի վայր: Դանիել Ասեվեդոն դարձավ այդ անհրաժեշտ զոհը: Արժանի էր մահվան, սանձարձակ էր, դավաճան. նրա ձեռքակալությունը կարող էր խափանել ամբողջ ծրագիրը: Նրա դիակը մյուսի հետ առնչելու մտադրությամբ մերոնցից մեկը դաշունահարեց նրան, և ես ներկատան շեղանկյունիների վրա գրեցի. «Անվան երկրորդ տառն արդեն արտասանվել է»:

Երրորդ «սպանությունը» տեղի ունեցավ փետրվարի երեքին: Կեղծ էր, ինչպես ճիշտ կռահել էր Տրևիրանուսը: Գրայֆի-ուս-Գինզբերգ-Գինզբուրգը ես եմ. անվերջանալի մի շաբաթ (կեղծ մորուք ստանձած) մի կերպ դիմացա «Ռյու-դե-Տուլոնի» չարաբաստիկ ննջասենյակում, մինչև որ ընկերներս առևանգեցին ինձ: Մեքենայի կողահարթակին կանգնած նրանցից մեկը ցուցափեղկին գրեց. «Անվան վերջին տառն արդեն արտասանվել է»: Այդ գրությունը մատնանշում էր, թե մտահղացված սպանությունները երեքն էին լինելու: Բոլորն այդպես էլ հասկացան, սակայն ես մի քանի անգամ ակնարկեցի, հատկապես ձեզ համար, որ դուք՝ մեծն տրամաբանող LÖnnrot-ը հասկանաք, որ չորրորդն էլ է լինելու: Մեկ հրաշք Հյուսիսում, հրաշքներ՝ Արևելքում և Արևմուտքում, անկասկած հարկավոր էր չորրորդը գործել Հարավում. Tetragrammaton-ում Աստծու Անունը՝ JHWH, բաղկացած է չորս տառից, ծաղրածուների հանդերձների և ներկարարի ցուցադրած նմուշները ներշնչում են չորս տարրերի մասին միտքը: Ես Լեյդենի ձեռնարկում ընդգծեցի որոշակի մի պարբերություն. այդ հատվածն ասում է, որ հրեաներն օրը հաշվում են մայրամուտից մայրամուտ, այդ հատվածից երևում է, որ սպանությունները կատարվում են յուրաքանչյուր ամսվա չորսին: Ես Տրևիրանուսին ուղարկեցի հավասարակողմ եռանկյունին: Նախագգացի, որ դուք լրացնելու էիք պակասող կետը: Այն կետը, որ սահմանում է կատարյալ շեղանկյունին, այն կետը, որ նախասահմանում է այն

վայրը, ուր ձեզ վստահաբար սպասում էր մահը: Ամեն ինչ մտածել եմ, որպեսզի ձեզ, Erik Lönrot-ին գայթակղելով բերեմ անմարդաբնակ «Տրիստ-լե-Ռուա»:

Lönrot-ը չուզեց նայել Սկարլակի աչքերին: Նայեց ծառերին և երկնքին, որ բաժանվել էր դեղին, կանաչ և կարմիր շեղանկյունիների: Մրսեց և անանձնական, գրեթե մի անանուն տխրություն զգաց: Գիշեր էր, փոշոտ պարտեզից թռչունի անօգուտ կանչը հնչեց: Lönrot-ը վերջին անգամ մտածեց համաչափ և պարբերական սպանությունների խնդրի մասին:

— Ձեր լաբիրինթոսում երեք ավելորդ գծեր կան,— ասաց վերջապես:— Ես ճանաչում եմ հունական մի լաբիրինթոս, որ բաղկացած է մեն մի ուղիղ գծից: Այնքան փիլիսոփաներ են կորել այդ գծի վրա, որ շատ մեծ հեշտությամբ մի հետաքննիչ էլ կկորչեր: Սկարլակ, երբ մի այլ անգամ ինձ որսալու լինեք, մի սպանություն կատարեք (կամ գործեք) A-ում, ապա մի երկրորդ սպանություն B-ում, A-ից 8 կիլոմետր հեռավորության վրա, ապա երրորդ սպանությունը C-ում, երկուսի միջև՝ կես ճանապարհին, A-ից և B-ից 4 կիլոմետր հեռավորության վրա: Ապա սպասեցեք ինձ D-ում, նորից երկուսի միջև՝ կես ճանապարհին, A-ից և B-ից 2 կիլոմետր հեռավորության վրա: Սպանեցեք ինձ D-ում, ինչպես հիմա եք սպանելու «Տրիստ-լե-Ռուա»-ում:

— Հաջորդ անգամ, երբ սպանեմ ձեզ,— ասաց Սկարլակը,— խոստանում եմ այդ անտեսանելի և անհատնում միագիծ լաբիրինթոսը:

Ապա մի քանի քայլ ետ գնաց: Հետո, մեծ զգուշությամբ, կրակեց:

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՀՐԱՇԲԸ

Եվ Աստված մեզրեց՝ նրան հարյուր տարով և ապա կենդանացրեց ու ասաց.

— Որքան ժամանակ է այստեղ ես:

— Մի օր կամ օրվա մի մասը,— պատասխանեց:

Նուրան, 2,261

1939 թվականի մարտի տասնչորսի գիշերը Պրահայի Zeltnergass-ում գտնվող մի բնակարանում «Թշնամիները» անավարտ ողբերգության, «Հավերժության արդարացումը» գրքի և Յակոբ Բյոմեի վրա անուղղակի ազդեցություն թողած աղբյուրների քննության հեղինակը՝ Յարոմիր Հլադիկը, երազում երկարատև շախմատային խաղ տեսավ: Խաղացողները ոչ թե երկու անհատներ, այլ երկու հայտնի ընտանիքներ էին, և խաղն սկսվել էր դարեր առաջ. ոչ ոք այլևս չէր հիշում պարզևի չափը, սակայն լուրեր էին շրջում, թե այն հսկայական է, գուցե և անհատնում. խաղաքարերն ու խաղատախտակը գաղտնի մի աշտարակում էին: Յարոմիրը (երազի մեջ) այդ թշնամացած ընտանիքներից մեկի միակ ժառանգն էր: Ժամացույցն ազդարարում էր անհետաձգելի խաղաքայլի յուրաքանչյուր ժամը, երազողը վազում էր անձրևոտ անապատի ավազներում և չէր կարողանում հիշել ոչ խաղաքարերի՝ ձևը, ոչ էլ շախմատի օրենքները: Այդ պահին արթնացավ: Դադարեց անձրևի և սարսափելի ժամացույցների աղմուկը: Zeltnergass-ից բարձրանում էր միապաղաղ ու համառ մի ժխոր որ երբեմն ընդհատվում էր հրաման արձակող ձայներով: Լուսանում էր. երրորդ ռայխի առաջատար զորքերը Պրահա էին մտնում:

Տասնիննին իշխանությունները մի մատնագիր ստացան, նույն օրը երեկոյան Յարոմիր Հլադիկը ձերբակալվեց: Նրան Վլտավայի հակառակ ափին գտնվող վարակազերծ և սպիտակեցված մի զորանոց ուղեկցեցին: Նա գեստապոյի ներկայացրած մեղադրանքի ոչ մի կետը չկարողացավ հերքել. նրա մայրական ազգանունը Յարոսլավսկի էր, նրա արյունը հրեական էր, Բյոմեի մասին աշխատանքը հրեական քարոզչություն էր, ստորագրությունը ամփոփում էր Anschluss-ի դեմ ուղղված բողոքագրի ցանկը: 1928 թվականին «Herman Barnsdorf» հրատարակչության համար թարգմանել էր «Sapher Yazirah»-ը: Հրատարակչությունը քարտարանի մեջ չափազանցրել էր թարգմանչի համբավը, այդ

քարտարանը թերթել էր այն աստիճանավորներից մեկը, որի ~~ձեռքում~~ էր Հլադիկի բախտը՝ Յուլիուս Ռոթը: Չկա մարդ, որ իր մասնագիտությունից դուրս դյուրահավատ չլինի, գոթական տառերով գրված մեկ թե երկու ածականներ բավարար եղան, որպեսզի Յուլիուս Ռոթը ընդուներ Հլադիկի հեղինակությունը և թելադրեր նրա մահվան դահավճիռը pour encourager les autres¹: Գնդակահարությունը տեղի էր ունենալու ամսի քսանիննի առավոտյան ժամը իննին: Այդ ուշացման պատճառը (որի կարևորությունը հետո կնկատի ընթերցողը) բույսերի և մոլորակների պես անկիրճ ու անշտապ գործելու վարչական ցանկությունն էր:

Հլադիկի առաջին զգացածը մերկ սարսափն էր: Մտածեց, որ կախաղանը, գլխատումը կամ մորթվելը չէին ահաբեկի իրեն, բայց գնդակահարությամբ մեռնելն անտանելի էր: Զուր կրկնեց, թե երկյուղալին ոչ թե կոնկրետ հանգամանքներն են, այլ մեռնելու ընդհանուր և անբիծ գործողությունը: Առանց հոգնելու երևակայում էր այդ հանգամանքները, անհեթեթորեն փորձում էր սպառել բոլոր տարբերակները: Անընդհատ գուշակում էր դատի ելքը՝ անքուն արշալուսից սկսած մինչև խորհրդավոր գնդակահարությունը: Մինչև Յուլիուս Ռոթի կողմից սահմանված օրը նույնիսկ երկրաչափությունն հոգնեցնող անկյուններ և ձևեր ունեցող բալկերում, տարբեր զինախմբերի՝ մերթ շատ հեռվից, մերթ շատ մոտիկից արձակված կրակոցներից հարյուրավոր մահերով մահացավ: Այդ երևակայական գնդակահարումներն ընդունում էր իրական սարսափով (գուցե իրական քաջությամբ), յուրաքանչյուր փորձ տևում էր մի քանի վայրկյան: Երբ շրջանն ավարտվում էր, Յարոմիրն անվերջանալիորեն վերադառնում էր իր մահվան դողդոջ նախօրյակը: Հետո մտածելով, որ իրականությունն ընդհանրապես չի համապատասխանում գուշակումներին, չարամիտ տրամաբանությամբ եզրակացրեց, որ պատահական մանրամասները նախագուշակելը նշանակում է արգելել դրանց իրականացումը: Հավատարիմ այդ թույլ դյուրանքին, հնարում էր (որպեսզի չկատարվեին) դաժան դրվագներ, բնականաբար, վերջում վախեցավ, որ այդ դրվագները կարող է մարգարեական լինեն: Գիշերները, ընկճված, փորձում էր ինչ-որ ձևով հաստատվել փախչող ժամանակի մեջ: Գիտեր, որ ժամանակը սլանում է դեպի քսանիննի

¹ Որպեսզի քաջալերի այլոց (ֆրանս.):

արշալույսը և բարձրաձայն տրամաբանում էր. **Հիմա քսաներկուսի գիշերն է, այս գիշեր (ու ևս վեց գիշեր) ես անխոցելի եմ, անմահ:** Մտածում էր, որ երազի գիշերները խորունկ ու մութ արվարձաններ են, ուր հնարավոր էր սուզվել: Մեկ-մեկ անհամբերությամբ տեսչում էր վերջնական գնդակահարություն, որ վատ թե լավ՝ իրեն ազատելու էր երևակայելու ունայն զբաղմունքից: Քսանութին, երբ վերջին մայրամուտը փայլատակում էր բարձր ճաղերի վրա, այդ նեղմիտ նկատառումներից նրան շեղեց իր «Թշնամիները» դրամայի պատկերը:

Հլադիկն արդեն բառասունն անց էր: Մի քանի բարեկամներից և բազում սովորություններից բացի՝ նրա կյանքն ամբողջացնում էր գրականության պրոբլեմատիկ զբաղմունքը, բոլոր գրողների պես մյուսների արժանիքները չափում էր իրենց իսկ կատարածով, բայց ուզում էր, որ իրենը չափեին իր մտածածով ու ծրագրածով: Նրա հրատարակած բոլոր գրքերն այժմ նրա մեջ անբավարարվածություն էին ծնում: Բյոմեի, Իբն էզրայի և Ֆլադդիի ստեղծագործությունների քննության մեջ այժմ հիմնականում տեսնում էր ջանասիրություն, «Sepher Yezirah»-ի թարգմանության մեջ՝ անփութություն, ծուլություն ու անճշտություններ: Գուցե պակաս թերի էր համարում «Հավերժության արդարացումը», որի առաջին հատորը պատմում է մարդկանց հնարած բոլոր հավերժությունների մասին՝ սկսած Պարմենիդեսի անշարժ գոյից մինչև Հինտոնի փոխվելու հնարավորություն ունեցող անցյալը, երկրորդը (Ֆրենսիս Բրեդլիի հետ) հերքում է, թե տիեզերքի բոլոր դեպքերը ժամանակային կարգ են կազմում: Պնդում էր, որ մարդու հնարավոր փորձերի քանակն անսահման չէ, և որ մի «կրկնությունը» բավական է ժամանակի կեղծ լինելը փաստելու համար... Դժբախտաբար նույն կեղծիքով են վարակված այդ կեղծիքն ապացուցող փաստերը, որոնց հաճախ շինծու զարմանքով անդրադառնում էր Հլադիկը: Մի շարք էքսպրեսիոնիստական բանաստեղծություններ էլ էր գրել, որոնք, ավաղ, ի զարմանս բանաստեղծի, հրատարակվեցին 1924 թվականին մի անթուղգիայում ու հետագա անթուղգիաներից և ոչ մեկից դուրս չմնացին: Այս ամբողջ կեղծ ու տկար անցյալը Հլադիկն ուզում էր քավել «Թշնամիները» չափածո դրամայով: (Հլադիկը շեփորում էր չափածոն, քանի որ սա թույլ չէր տալիս, որ հանդիսատեսը մոռանա իր մտացածին լինելը՝ արվեստի պայմանը):

Այս դրաման պահպանում էր ժամանակի, տեղի և գործողության միասնությունը, դեպքերը կատարվում էին տասնիններորդ

դարի վերջին երեկոներից մեկի ժամանակ Hradcany-ում, բարոն Rocmerstadt-ի գրադարանում: Առաջին գործողության առաջին տեսարանում մի անծանոթ այցելում է Rocmerstadt-ին: (Ժամացույցի զանգակները հնչեցնում են ժամը յոթը, վերջալույսը փայլեցնում է ապակիները, օդում հնչում է հունգարական կրքոտ ու ծանոթ մի մեղեդի): Այս տեսարանին հետևում են ուրիշները, Rocmerstadt-ը չի ճանաչում իրեն ձանձրացնող մարդկանց, բայց նրան թվում է, թե ինչ-որ տեղ տեսել է նրանց, գուցե երագում: Բոլորը բացահայտ շողոքորթում են նրան, բայց պարզվում է՝ սկզբում՝ միայն դրամայի հանդիսատեսների համար, հետո՝ հենց բարոնի, որ սրանք գաղտնի թշնամիներ են, որոնք հավաքվել են իրեն կործանելու համար: Rocmerstadt-ը կարողանում է կասեցնել կամ հեզնել նրանց բարդ մեքենայությունները: Երկխոսության ժամանակ հիշատակում են բարոնի նշանածին՝ Julia de Weidenau-ին և ոմն Յարոսլավ Քուբինի, որը ինչ-որ ժամանակ աղջկան զգվեցրել էր իր սիրով: Այդ Քուբինը այժմ գծվել և ինքն իրեն Rocmerstadt է համարում... Վտանգի հնարավորությունը մեծանում է. Rocmerstadt-ը երկրորդ գործողության ընթացքում պարտադրված սպանում է դավադիրներից մեկին: Սկսվում է երրորդ գործողությունը՝ վերջինը: Աստիճանաբար շատանում են անհետքությունները՝ բեմ են վերադառնում այնպիսի դերակատարներ, որոնք կարծես մինչ այդ դուրս էին մնացել հանգույցից. մի պահ Rocmerstadt-ի սպանած մարդն էլ է վերադառնում: Մեկն ակնարկում է, որ դեռ չի իրիկնացել. ժամացույցի զանգակները խփում են ժամը յոթը, վերևի ապակիներում փայլվում է մայրամուտի արևը. օդի մեջ հնչում է հունգարական հայտնի և կրքոտ մի մեղեդի: Երևում է առաջին հյուրը ու կրկնում առաջին գործողության առաջին տեսարանի խոսքերը: Rocmerstadt-ը խոսում է առանց զարմանքի, հանդիսատեսն հասկանում է, որ Rocmerstadt-ը հենց թշվառ Յարոսլավ Քուբինն է: Դրամա տեղի չի ունեցել, այն ընդամենը Քուբինի հավերժորեն ապրած և վերապրած շրջանաձև ցնորքն է:

Հլադիկը երբեք ինքն իրեն չէր հարցրել, թե այդ կրկնվող սխալների կատակերգական ողբերգությունը արդյոք գլուխգործո՞նց է, թե դատավարություն, պատահականությունների շարան, թե խորագնին ու հետևողական գործ: «Իմ նկարագրած սյուժեի սահմաններում նախազգում էի թերությունները քողարկելու և արժանիքները հաստատելու ամենահաջող հնարքը, որ հաստա-

տում էր նաև (գոնե սիմվոլիկ) կյանքի հիմնական դրվագները պահպանելու հնարավորությունը»։ Արդեն ավարտել էր առաջին գործողությունն ու երրորդի մի քանի տեսարանները. ստեղծագործության չափածո լինելը նրան թույլ էր տալիս, առանց ձեռագիրն աչքի առաջ ունենալու, հաճախակի քննել և ստուգել հեքզամետրերը։ Մտածում էր, որ դեռ պակասում են երկու գործողություն, և որ շուտով մեռնելու է։ Մթության մեջ խոսեց Աստծո հետ. եթե իսկապես գոյություն ունեմ, եթե քո կրկնություններից և վրիպումներից մեկը չեմ, ապա գոյություն ունեմ որպես «Թշնամիների» հեղինակ, այդ դրաման ավարտելու համար, որ կարող է արդարացնել և ինձ, և քեզ, ինձ հարկավոր է ևս մի տարի։ Դու, որ դարերի և ժամանակի տերն ես, տուր ինձ այդ օրերը։ Վերջին գիշերն էր, ամենադաժանը, բայց տասը ըոպե անց պղտոր ջրի պես նրան համակեց քունը։

Լուսադեմին երազում տեսավ, որ ինքը թաքնվել է Կլեմենտինումի գրադարանի գավիթներից մեկում։ Սև ակնոց դրած գրադարանի մի աշխատող հարցրեց. **Ինչ եք որոնում։** Հլադիկը պատասխանեց. **Աստծուն եմ որոնում։** Գրադարանի աշխատողն ասաց. **Աստված Կլեմենտինումի չորս հարյուր հազար հատորներից մեկի էջերի տառերից մեկում է։** Իմ ծնողներն ու ծնողներիս ծնողներն արդեն որոնել են այդ տառը, ես որոնելով եմ կուրացել։ Հանեց ակնոցը, ու Հլադիկը տեսավ նրա մեռած աչքերը։ Ինչ-որ քարտեզագիրք վերադարձնելու համար ներս մտավ մի ընթերցող։ **Այս քարտեզագիրքն անպետք է,** ասաց և հանձնեց Հլադիկին։ Սա բացեց քարտեզագիրքը ու Հնդկաստանը պատկերող մի հիասքանչ քարտեզ տեսավ։ Հանկարծկորեն վստահ՝ ձեռքը հպեց փոքրիկ տառերից մեկին։ Համատարած մի ձայն լսվեց։ **Գործիդ համար անհրաժեշտ ժամանակը պարգևաված է։** Այստեղ Հլադիկն արթնացավ։

Հիշեց, որ մարդկանց երազները պատկանում են Աստծուն, և որ Մայմոնիդեսը գրել է, թե աստվածային են երազի այն բառերը, որ տարբերակված ու հստակ, են և հնարավոր չէ տեսնել, թե ով է արտասանել այդ բառերը։ Հագնվեց, խուց մտան երկու զինվորներ և հրամայեցին հետևել իրենց։

Դռան մյուս կողմում Հլադիկը ենթադրել էր անցումների, աստիճանների և տաղավարների լաբիրինթոս։ Իրականությունը ավելի համեստ էր, երկաթյա միակ աստիճանով իջավ ետևաբակ։ Զինվորները՝ մի քանիսը չկոճկված համազգեստներով, տնտղում

և վիճում էին մի մոտոցիկլետի համար: Տասնապետը նայեց ժամացույցին՝ ուրն անց քառասունչորս էր: Պետք է սպասեին մինչև ժամը ինը: Հլադիկը, իրեն առավելապես աննշան, քան դժբախտ զգալով, փայտերի մի կույտի վրա նստեց: Նկատեց, որ զինվորների հայացքները խուսափում էին իրենից: Սպասումը թեթևացնելու համար տասնապետը ծխախոտ հյուրասիրեց: Հլադիկը չէր ծխում, քաղաքավարությունից կամ համեստությունից դրդված՝ ընդունեց: Վառելու ժամանակ զգաց, որ ձեռքերը դողում են: Երկինքն ամպոտեց, զինվորները խոսում էին ցածրաձայն, կարծես իրեն արդեն մեռած էին համարում: Ապարդյուն փորձեց հիշել այն կնոջը, որի խորհրդանիշն էր Julia Weidenau:

Կազմվեց կրակողների ջոկատը, պատրաստվեց: Հլադիկը, կանգնած զորանոցի պատի տակ՝ սպասեց կրակոցին: Մեկը վախ հայտնեց, թե պատը կարող է արյունոտվել, ուստի գերուն հրամայվեց, որ մի քանի քայլ առաջ շարժվի: Հլադիկն անհեթեթորեն հիշեց լուսանկարիչների նախապատրաստական շարժումները: Անձրևի ծանր մի կաթիլ ընկավ նրա բունքին և դանդաղորեն գլորվեց այտով. տասնապետն արձակեց վերջին հրամանը:

Ֆրգիկական տիեզերքը կանգ առավ:

Ձենքերն ուղղված էին Հլադիկի վրա, բայց այն մարդիկ, որոնք պետք է սպանեին նրան, անշարժացել էին: Տասնապետի ձեռքը հավերժացնում էր անավարտ մի շարժում: Բակի սալահատակներից մեկի վրա արտացոլվում էր մեղվի անշարժ ստվերը: Ասես նկարի մեջ՝ քամին կանգ էր առել: Հլադիկը փորձեց գոռալ, շշնջալ, ձեռքերը շարժել: Անմիջապես հասկացավ, որ կաթվածահար է: Ընդարմացած աշխարհից ոչ մի շշուկ չէր հասնում: Մտածեց՝ դժոխքում եմ, մեռած եմ: Մտածեց՝ գժվել եմ: Մտածեց՝ ժամանակը կանգ է առել: Հետո մտածեց, որ այդ դեպքում կանգ կառներ նաև իր միտքը: Փորձեց (առանց շրթունքները շարժելու) կրկնել Վիրգիլիոսի խորհրդավոր չորրորդ եկլոգը: Մտածեց, որ արդեն ետ քաշված զինվորների հետ էլ է նույնը կատարված, ուզեցավ հարցնել նրանց: Նրան զարմանք պատճառեց այն, որ այդքան երկար անշարժությունը գլխապտույտ չառաջացրեց, և որ հոգևորություն էլ չզգաց: Անորոշ ժամանակից հետո քնեց: Երբ արթնացավ, աշխարհը դեռ անշարժ էր ու խուլ: Նրա այտին դեռ կանգ էր առել ջրի կաթիլը, բակում՝ մեղվի ստվերը, կանգ էր առել նաև իր նետած ծխախոտի ծուխը: Դեռ մի օր էլ պիտի անցներ, մինչև Հլադիկն հասկանար. Հլադիկն Աստծուց մի տարի էր

խնդրել իր գործն ավարտելու համար, Աստծու ամենակարողությունը պարզեցում էր այդ տարին: Աստված նրա համար գործադրում էր խորհրդավոր մի հրաշք՝ ինքն սպանվելու էր նախատեսված ժամին և գերմանական փամփուշտով, սակայն իր մտքում հրամանի և կատարման միջև անցնելու էր մի ամբողջ տարի: Զարմանքից անցավ ապշանքին, ապշանքից՝ համակերպվածության, համակերպվածությունից՝ հանկարծակի երախտապարտության:

Հիշողությունից բացի այլ փաստ չուներ. յուրաքանչյուր հեքզամետրի վերհիշումը նրան պատճառում էր մի այնպիսի հաճելի խստություն, որի բարիք լինելու մասին կասկածել անգամ չեն կարող նրանք, ովքեր մոռանում կամ հանդգնում են մանրուք թվացող հատվածներ ավելացնել: Չաշխատեց ոչ ապագայի, ոչ էլ Աստծո համար, որի գրական ճաշակի մասին գաղափար չուներ: Մանրակրկիտ, անշարժ, գաղտնի, ժամանակի ընթացքում հնարեց իր անտեսանելի ու կատարյալ լաբիրինթոսը: Երրորդ գործողությունը վերստեղծեց երկու անգամ: Զնջեց մի քանի շատ ակնառու խորհրդանիշներ՝ կրկնվող զանգակներն ու մեղեդին: Ոչ մի հանգամանք նրան չէր խանգարում: Դուրս թողեց, հապավեց, ընդարձակեց, որոշ տեղերում էլ նախընտրեց սկզբնական տարբերակը: Սկսեց սիրել բակը, գորանոցը, իր դիմաց գտնվող զինվորներից մեկի դեմքը փոխեց Rocmerstadt-ի կերպարի իր պատկերացումը: Հայտնաբերեց, որ Ֆլոբերին մտահոգող տխրահռչակ տարաձայնությունները զուտ տեսողական սնահավատություններ են՝ գրավոր և ոչ թե բանավոր խոսքի թուլություններ ու խանգարումներ... Դրաման ավարտել էր, նրան մնում էր ճշտել մի միակ մակդիր: Գտավ, ջրի կաթիլը սահեց այտն ի վար: Գոռաց, շուտ տվեց երեսը, կրակոցը տապալեց նրան:

Յարոմիր Հլադիկը մահացավ մարտի քսանինին, առավոտյան ժամը ինն անց երկու րոպեին:

ՀՈՒՂԱՅԻ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

There seemed a certainty
in degradation. T. E. Lawrence
Seven Pillars of Wisdom¹

Փոքր Ասիայում կամ Ալեքսանդրիայում, երբ Բասիլիդեսը մեր քրիստոնեական շրջանի երկրորդ դարում հայտարարում էր, թե տիեզերքը անկատար հրեշտակների հանդուգն կամ չարանենգ նյութանք է, գուցե Նիլս Ռունեբերգը յուրօրինակ մտավոր կրքով դեկավարեր գնոստիկների համայնքներից մեկը: Երևի Դանտեն նրա համար էլ սահմաներ կրակե մի պարունակ, գուցե նրա անունը Սատորնիլոյի և Կարպոկրատեսի միջև լրացներ կրտսեր աղանդապետերի ցանկը, երևի իր ամբարտավանություններով պճնյալ քարոզներից մեկը՝ «Liber adversus omnes haereses»²-ը պարականոն գրքում պահպանվեր կամ ոչնչանար, երբ վանական գրադարանի հրդեհը խժռեր «Sintagma»³-ի վերջին օրինակը: Սակայն Աստված նրա համար սահմանեց 20-րդ դարը և Լուսդ քաղաքը: Այնտեղ, 1904 թվականին լույս տեսավ նրա «Kristus och Judas»⁴-ի առաջին հրատարակությունը, այնտեղ, 1909 թվականին լույս տեսավ նրա գլուխգործոցը՝ «Den hemlige Frälsaren»⁵-ը: (Այս վերջինի 1912 թվականի հրատարակությունից գերմանական մի տարբերակ կա՝ էմիլ Շերինգի փոխադրությամբ, և կոչվում է «Der heimliche Heiland»⁶):

Նշված անմիտ աշխատությունների քննության փորձին անցնելուց առաջ հարկավոր է հիշեցնել, որ Նիլս Ռունեբերգը Ազգային ավետարանական միության անդամ էր, խորապես կրոնասեր մարդ: Փարիզի և Նույնիսկ Բուենոս Այրեսի վերնատներից որևէ մեկում որևէ գրասեր կարող էր առանց երկյուղի լույս աշխարհի հանել Ռունեբերգի դրույթները. այդ դրույթները, վերնատնում

¹ «Անկման մեջ կարծես թե ինչ-որ հուսալիություն կա»: Ք. Է. Լոուրենս, «Իմաստության յոթ գագաթ» (անգլ.):

² «Գիրք ընդդեմ բոլոր աղանդների» (լատ.):

³ «Շարույթ» (լատ.):

⁴ «Քրիստոս և Հուդա» (շվեդ.):

⁵ «Գաղտնի փրկիչներ» (շվեդ.):

⁶ «Գաղտնի փրկիչ» (գերմ.):

շարադրելով անշուշտ կդառնային անփութության կամ հայիոյանքի թեթևամիտ և անօգուտ վարժություններ: Մինչդեռ Ռուսներեզի համար դարձան աստվածաբանության կենտրոնական գաղտնիքը պարզաբանող բանալի, մտորումների ու վերլուծությունների, բանասիրական և պատմական վիճաբանությունների, խրոխտության, ուրախության սարսափի նյութ: Արդարացրին նրա գոյությունը ու ոչնչացրին նրա կյանքը: Այս հոգվածի ընթերցողները պետք է նաև իմանան, որ այն սոսկ բովանդակում է Ռուսներեզի եզրակացությունները և խոսք չկա նրա դիալեկտիկայի ու փաստարկումների մասին: Անշուշտ մեկն ու մեկը կնկատի, որ եզրակացությունն անկասկած նախորդել է «փաստերին»: Ով կհանդուրժի փաստեր որոնել այն գաղափարի համար, որին չի հավատում, կամ որի տարածումն իրեն չի հետաքրքրում:

«Kristus och Judas»-ի առաջին հրատարակության օրինակները կրում էին հետևյալ կատեգորիկ խորագիրը, որի իմաստը տարիներ հետո դիվայնորեն ընդարձակեց հենց ինքը՝ Նիլս Ռուսներեզը. «Ավանդության կողմից Հուդա Իսկարիոփտացուն վերագրված ոչ թե մեկ, այլ բոլոր դրվագները կեղծ են» (De Quincey, 1857): De Quincey-ն՝ հետևելով ոմն գերմանացու, ասում է, որ Հուդան մատնում է Հիսուսին, որպեսզի նրան պարտադրի հայտարարել իր աստվածային բնույթը ու ընդարձակ խռովություն բարձրացնի հռոմեական լծի դեմ: Ռուսներեզն առաջարկում է Հուդայի մետաֆիզիկական բնույթի արդարացում: Մեծ հմտությամբ, աշխատության սկզբում նա նշում է Հուդայի մատնության ավելորդությունը: Նկատում է (Ռոբերտսոնի նման), որ սինագոգում ամեն օր քարոզող և հազարավոր մարդկանց առաջ հրաշքներ գործող վարդապետին հայտնաբերելու համար հարկավոր չէր առաքյալներից մեկի դավաճանությունը: Բայց մատնությունը տեղի էր ունեցել: Սուրբ Գրքի մեջ սխալներ փաստելը անհանդուրժելի է, նմանապես անհանդուրժելի է աշխարհի պատմության ամենաարժեքավոր դեպքը որպես պատահականություն ընդունելը: Ergo՝ Հուդայի մատնությունը պատահական չէ. այն քավության գործում իր խորհրդավոր տեղը գրավող նախաահմանված մի դեպք է: Ռուսներեզը շարունակում է՝ երբ Բանը մարսվի՝

¹ Հետևաբար (լատ.):

յանը, հավերժությունից՝ պատմությանը, անսահման երջանկությունից՝ փոփոխականությանն ու մահին, այդ զոհաբերությունը հատուցելու համար անհրաժեշտ էր, որ մի մարդ, բոլոր մարդկանց անունից, համանման զոհաբերություն կատարեր: Այդ մարդը Հուդա Իսկարիովտացին էր: Հուդան միակն էր առաքյալների մեջ, որ կռահեց Հիսուսի գաղտնի աստվածությունն ու նրա սարսափելի նպատակը: Բանը նվաստացել էր մինչև մահկանացուի աստիճան. Հուդան՝ Բանի աշակերտը, կարող էր նվաստանալ մինչև մատնիչի (ստորության մեջ ամենավատթարագույն մեղքը) և անշեջ կրակի հավերժական բնակիչ լինելու աստիճանի: Ցածրագույն կարգը բարձրագույնի հայելին է, երկրի ձևերն համապատասխանում են երկնքի ձևերին, մաշկի խալերը անբիծ աստղախմբերի քարտեզն են: Հուդան ինչ-որ ձևով արտացոլում է Հիսուսին: Այստեղից էլ ուրեմն՝ երեսուն արծաթի և համբույրի, Անեծքը հաստատող կամավոր մահվան բացատրությունը: Նիլս Ռունեբերգն այսպես է պարզաբանում Հուդայի առեղծվածը:

Քրիստոնեական դավանանքի բոլոր աստվածաբանները միահամուռ հակաճառեցին նրան: Լարս Պետեր Էնգստրյոմը նրան ամբաստանեց սուրբ երրորդության միասնության անգիտության մեջ կամ որպես զանցառու, Axel Borelius-ը՝ Հիսուսի մարդկայնությունը մերժող դոսետաների աղանդը վերականգնելու, Լուևդի երկաթյա եպիսկոպոսը նրան մեղադրեց Սուրբ Դուկասի ավետարանի քսաներկուերորդ գլխի երրորդ պարբերությանը հակասելու համար:

Այս բազմազան բանադրանքներն ազդեցին Ռունեբերգի վրա, և նա աստիճանաբար վերակազմեց իր պարսաված գիրքն ու փոխեց հայեցակետը: Հօգուտ իր հակառակորդների հրաժարվեց աստվածաբանական ասպարեզից և նույնանման, անուղղակի ապացույցներ բերեց՝ այս անգամ արդեն բարոյական բնույթի: Ընդունեց, որ «Ամենակարողության անհուն հնարաններով օժտված» Հիսուսը մարդկության մեղքերը քաղելու համար ոչ մի մարդու օգնության կարիքը չունի: Հետո ժխտեց բոլոր նրանց, ովքեր հաստատում էին, որ անբացատրելի մատնիչի մասին ոչինչ չգիտենք. գիտենք, ասաց նա, որ Հուդան եղել է առաքյալներից մեկը, ուստի նա էլ էր այն ընտրյալներից, որ ազդադրվել է երկնային արքայությունը, բուժել հիվանդներին, մաքրել բորոտներին ու սատանաներ հալածել (Մատթեոս, 10, 7-8, Դուկաս 9, 1): Մարդ, որին Փրկիչը այդպիսով ճշգրիտ հատկություններով է օժտել, մեզնից

պահանջում է, որ իր արարքներին ամենալավ բացատրությունները տանք: Նրա ոճիրը (ինչպես ոմանք են արել՝ նշելով Հովհաննեսին, 12, 6) ազահությամբ բացատրել՝ կնշանակի ապավինել ամենաթույլ կռվանին: Նիլս Ռուսեբերգն առաջարկում է հակառակ շարժառիթը՝ չափազանցված և նույնիսկ անսահման ճգնաժողովությունը: Ճգնաժողովը պղծում ու տանջում է իր մարմինը Աստծու փառքի համար, Հուդան նույնն արեց, բայց իր հոգու հետ: Ինչպես ուրիշները ավելի նվազ արիությամբ հաճույքից հրաժարվեցին, նա հրաժարվեց պատվից, բարուց, խաղաղությունից, երկնային արքայությունից¹: Սահմակեցուցիչ պարզությամբ նա կանխամտածեց իր մեղքերը: Շնության մեջ քնջանք ու նվիրում կա, սպանության մեջ՝ քաջություն, ամբարշտության ու պղծության մեջ՝ սատանայական ինչ-որ փայլ: Հուդան առաքինությունների կողմից չարդարացվող մեղքերն ընտրեց՝ վստահության չարաշահումը (Հովհաննես, 12, 6) և մատնությունը: Մեծագույն համեստությամբ ինքն իրեն բարի լինելու անարժան համարեց: Պողոսը գրել է՝ «Նա, ով պարծենում է, թող պարծենա Տիրոջով» (Ա Կորնթ., 1, 31): Հուդան Դժոխքը որոնեց, քանզի Տիրոջ երջանկությունը բավարարում էր նրան: Խորհեց, որ երջանկությունը բարության պես աստվածային հատկանիշ է, և որ մարդ չի կարող դրան տիրանալ²:

Շատերը *post factum*՝ հայտնաբերել են, որ Ռուսեբերգի միանգամայն ափոքարացի առաջին քայլերը իր արտառոց վախճանի հիմքը դրեցին, և որ «Den hemlige Frälsaren»-ը «Kristus och Judas»-ի եղծումն է կամ չափազանցումը: 1907 թվականի վերջե-

¹ Բորելիուսը արհամարհանքով հարցնում է. «Ինչո՞ւ նա չհրաժարվեց ուրանալուց, ինչո՞ւ չհրաժարվեց ուրացման ուրացումից» (հեղ.):

² Eeclides da Cunha-ն, Ռուսեբերգին անծանոթ մի գրքում, գրում է, որ Կանուդուսի աղանդապետ Antonio Conselheiro-ի համար առաքինությունը «գրեթե անխղճություն էր»: Արգենտինացի ընթերցողը համանման հատվածներ կիիշի Ալմաֆուերտեի ստեղծագործություններից: Ռուսեբերգը «Sju insegel» խորհրդապաշտական հանդեսում հրատարակեց մի խիստ նկարագրողական պոեմ՝ «Գաղտնի ջուրը». առաջին քառյակները պատմում են խառնաշփոթ մի օրվա դեպքերի, վերջինները՝ սառած ջրամբարի հայտնության մասին. բանաստեղծն ասում է, որ այդ խաղաղ ջրերի պահպանումը սրբագրում է մեր անօգուտ բռնությունը և ինչ-որ ձևով թուլատրում ու քաղում է այն: Պոեմն այսպես է ավարտվում՝ «Երանելի են անտառի ջրերը, իսկ մենք կարող ենք չար լինել ու տառապել» (ծան. հեղ.):

րին Ռունբերգն ավարտեց և ստուգեց ձեռագրերը, երկու տարի հետո միայն տպագրության հանձնեց: 1909 թվականի հոկտեմբերին գիրքը լույս տեսավ դանիացի եբրայագետ Էրիկ Էրֆյորդի մշուշոտ ու հանելուկային նախաբանով և հետևյալ նենգ բնաբանով. «Նա աշխարհի մեջ էր, և աշխարհը նրանով եղավ, սակայն աշխարհը նրան չճանաչեց» (Հովհաննես, 1,10): Ընդհանուր բովանդակությունը բարդ չէ, բայց եզրակացությունը դիվային է: Աստված, ասում է Նիլս Ռունբերգը, մարդկային ցեղին փրկելու համար նվաստացավ մարդու աստիճանի, պետք է ենթադրել, որ նրա կատարած զոհաբերությունը կատարյալ էր, անարատ և անխոցելի: Նրա տանջանքը սահմանափակել մի երեկո խաչի վրա ապրած հոգեվարքով՝ նշանակում է հայիոյել նրան¹: Հաստատել, որ նա մարդ է եղել և ոչ մի մեղք չի գործել, խիստ հակասական է, *impeccabilitas*²-ի և *humanitas*³-ի հատկանիշներն իրար չեն համապատասխանում: Կեմսիցը ընդունում է, որ Փրկիչը կարող էր հոգնել, մրսել, մտատանջություն, սովածություն, ծարավ զգալ, պետք է ընդունենք նաև, որ կարող էր մեղսակցել և կորստի մատնվել: Այն հայտնի տեղը՝ «Որովհետև նա մատաղատունկի պես դուրս եկավ նրա առաջ, և արմատի պես՝ ծարավուտ երկրից, ոչ կերպարանք ուներ, ոչ էլ վայելչություն. նա անարգված ու մարդկանց երեսից ընկած, հարվածների տեր և ցավի տեղյակ եղավ» (Եսայի 53.2.3). շատերի համար խաչվածի վերջին ժամի գուշակությունն էր. այլոց համար (օրինակ, Hans Lassen Martensen-ի) Հիսուսին ժողովրդի վերագրած գեղեցկության մերժումը. Ռունբերգի համար՝ ոչ թե մի վայրկյանի, այլ ժամանակի և հավերժության մեջ

¹ Maurice Abramowicz-ը նկատում է. «Հիսուսը միշտ հաղթողի դերում է. նրան պատահած դժբախտությունը տպագրական գյուտի շնորհիվ բազմալեզու փառքի տիրացավ, մահկանացուներին մեջ նրա երեսուներեք տարի լինելը, ըստ էության, նման է ամառանոցային հանգիստը անցկացնելուն»: Էրֆյորդը «Զրիստոնեական դոգմաներ» գրքի երրորդ հատվածում ժխտում է այս պարբերությունը և նշում, որ Աստծու խաչելությունը չի դադարել, քանզի ժամանակի ընթացքում մեկ անգամ կատարվածը հավերժության մեջ կրկնվում է անդադար: Այժմ էլ Հուդան ստանում է արծաթադրամները, դեռ համբուրում է Հիսուսին, դեռ տաճարի մեջ է նետում արծաթադրամները, դեռ պարանը օղակ է անում արյան ագարակում (Էրֆյորդը այս պնդումը հաստատելու համար դիմում է Յարոմիր Հլադիկի «Հավերժության արդարացումը» գրքի առաջին հատորի վերջին գլխին (ծան. հեղ.):

² Անսխալականություն (լատ.):

³ Մարդկայնություն (լատ.):

մարմին դարձած Բանի ողջ սարսափելի ապագայի ճշգրիտ մարգարեությունը: Աստված մարդ դարձավ ամբողջապես, ընդհուպ մինչև մարդու խայտառակությունը, նողկալիությունն ու անկումը: Մեզ փրկելու համար նա պատմության խորին ցանցը հյուսող ճակատագրերից որևէ մեկը կարող էր ընտրել: Կարող էր լինել Ալեքսանդրը, Պյութագորասը, Ռյուրիկը կամ Հիսուսը, նա ընտրեց ետին մի ճակատագիր՝ Հուդայինը:

Լուսնի և Ստոքհոլմի գրախանութներն իզուր ազդարարեցին այդ հայտնությունը: Անհավատներն այն *a priori* անհամ ու մտացածին աստվածաբանական խաղ համարեցին, աստվածաբաններն արհամարհեցին: Ռուներբերգն այդ էկումենիկ անտարբերության մեջ իր գաղափարի գրեթե հրեշավոր հաստատումը տեսավ: Աստված էր տնօրինում այդպիսի անտարբերությունը: Աստված չէր ուզում, որ երկրում տարածվեր իր սարսափելի գաղտնիքը: Ռուներբերգը հասկացավ, որ ժամը դեռ չի հասել: Ջգաց, որ իր գլխին են կուտակվում Տիրոջ բոլոր վաղնջական անեծքները. եղիային ու Մովսեսին հիշեց, և այն, որ նրանք լեռան վրա իրենց դեմքն էին ծածկել Աստծուն չտեսնելու համար: Եսայուն հիշեց, և այն, որ նա սարսափել էր, երբ իր աչքերը տեսել էին Նրան, ում փառքն անսահման է երկրում. Սավուղին հիշեց, և այն, որ նրա աչքերը կուրացել էին Դամասկոսի ճանապարհին. հիշեց ռաբբի Սիմոն բեն Ազաուն, և այն, որ նա տեսել էր Դրախտն ու մահացել, հայտնի կախարդ Խուան Վիտերբոին հիշեց, և այն, որ նա գծվել էր սուրբ Երրորդությունը տեսնելուց հետո, հիշեց միդրաշիմներին և նրանց զարշանքն այն պիղծերից, որոնք արտասանում էին *Shem Hamephorash*՝ Աստծու Գաղտնի Անունը: Միթե ինքը մեղավոր չէր այդ խորհրդավոր հանցագործության համար: Միթե սա չէր Հուդային ուղղված այն հայիոյանքը, որ չի ներվելու (Մատթեոս, 12,31): Վալերի Սորանը մեռավ Հռոմի գաղտնի անունը տարածելու համար. քնչ կլիներ նրա անվերջանալի պատիժը, չէ որ ինքն էր հայտնաբերել ու տարածել Աստծու սարսափելի անունը:

Անքնությունից ու գլխապտույտ պատճառող դիալեկտիկայից հարբած՝ Նիլս Ռուներբերգը թափառեց Malmö-ի փողոցներում, բարձրաձայն խնդրելով, որ իրեն էլ Փրկչի հետ շնորհվեր Դոփսքը:

1912 թվականի մարտի մեկին մահացավ երակի պայթյունից: Աղանդաբանները գուցե հիշեն նրան. Որդու կերպարին, որ կարծես սպառված էր, Ռուներբերգը ավելացրեց չարիքի ու դժբախտության հատկանիշները:

– 1871 թվականին Բուենոս Այրեսի նավահանգիստ հասած մարդու անունը Յոհաննես Դալման էր, նա ավետարանական եկեղեցու հովիվ էր: 1939 թվականին նրա թոռներից մեկը՝ Խուան Դալմանը, Կորդովա փողոցի վրա ընկած մի գրադարանի քարտուղարն էր և ինքն իրեն խորապես արգենտինացի էր համարում: Նրա մյուս պապը՝ հետևակազորային երկրորդ գնդի ծառայող, Բուենոս Այրեսի մերձակայքում Կատրիելի հնդկացիների նիզակի հարվածից մահացած Ֆրանցիսկո Ֆլորեսն էր: Տոհմական ազգանվան տևական երկվությունից հետո Խուան Դալմանը (գուցե գերմանական արյան ազդեցության շնորհիվ) ընտրեց ռոմանտիկ կամ ռոմանտիկ մահով մահացած պապինը: Անարտահայտիչ և մոռուքավոր մարդու լուսանկարով մի փոքրիկ տուփ, մի հին սուր, տեղական մեղեդիների կիրքն ու առնականությունը, «Մարտին Ֆիեռոյի» սովորական դարձած տողերը, տարիները, անտարբերությունն ու մենությունը քաջալերեցին այդ գուցե և կամավոր, բայց ոչ երբեք ցուցամուլական կրեոլիզմը: Ինքնագրկանքների շնորհիվ Դալմանը կարողացել էր Հարավում գտնվող և Ֆլորեսներին պատկանող էստանսիայի մի մասը փրկել. նրա հիշողության մի սովորությունը՝ բալզամային էվկալիպտների և երկարաձիգ, վարդագույն տան, որն ինչ-որ ժամանակ մուգ կարմիր էր եղել, պատկերներն հիշելն էր: Գործերը, գուցե և անհոգությունը նրան պահում էին քաղաքում: Ամառվանից ամառ բավարարվում էր սեփականության վերացական գաղափարով և այն հավատքով, թե դաշտի որոշակի տեղում իր տունն սպասում է իրեն: 1939 թվականի փետրվարի վերջերին ինչ-որ բան պատահեց նրան, որ անշուշտ, անկանխատեսելի էր:

Մեղքերն անտեսող ճակատագիրը կարող է և շատ դաժան լինել ամենաչնչին անզգուշության դեպքում: Դալմանն այդ երեկո ձեռք էր բերել Ուելլի «Հազար ու մեկ գիշերներ» գրքի անավարտ օրինակը. հայտնությունն ստուգելու տենչանքով տարված՝ վերելակի չսպասեց և աստիճաններով բարձրացավ: Մթության մեջ ինչ-որ բան, չղջիկ կամ թռչուն, քերծեց նրա ճակատը: Դուռը բացող կնոջ դեմքին սարսափ նկատեց, իսկ ճակատին տարած ձեռքը ամբողջովին արյունոտվեց: Վերքի պատճառը մոռացված, բաց թողնված ու նոր ներկված փեղկի ծայրն էր: Դալմանը դժվարությամբ կարողացավ քնել, բայց լուսադեմին արդեն զարթնել էր,

և այդ պահից սկսած ամեն ինչ նրա մեջ մղձավանջի վերածվեց: Տենդը մաշեց նրան և «Հազար ու մեկ գիշերների» պատկերազարդումները զարդարեցին նրա մղձավանջները: Ընկերներն ու ազգականներն այցելում էին և շինծու ժպիտով կրկնում, որ այնքան էլ վնաս չէ նրա տեսքը: Դալմանը նրանց լսում էր մի տեսակ անօգ զարմանքով և հիանում այն բանի համար, որ նրանք չէին հասկանում, որ ինքը արդեն Դոխսընդ է: Ուր օրն անցավ ուր դարի պես: Մի երեկո բժշկի հետ մի նոր բժիշկ հայտնվեց, և նրա գլխի ռենտգենանկարը հանելու համար նրան տեղափոխեցին Էկվադոր փողոցի վրա ընկած հիվանդանոցը: Դալմանը մեքենայի մեջ մտածեց, որ իրեն չպատկանող օտար սենյակում վերջապես կկարողանա քնել: Ինքն իրեն երջանիկ ու աշխույժ զգաց. հասնելուն պես մերկացրին, խուզեցին գլուխը, կապեցին մահձակալին, կուրացնելու ու գլխապտույտ պատճառելու աստիճան լուսավորեցին դեմքը, զննեցին, և դիմակավոր մի մարդ սրսկեց նրա թևը: Սրտխառնոցով արթնացավ, վիրակապված, մի խցում, որ ինչ-որ ձևով փոս էր հիշեցնում, և գործողությանն հաջորդող մի քանի օր ու գիշերների ընթացքում կարողացավ հասկանալ, թե դրանից առաջ ընդամենը դոխսի շեմին է եղել: Այդ ժամանակահատվածում Դալմանը ոտից գլուխ ատեց ինքն իրեն. ատեց իր ինքնությունը, իր մարմնական կարիքները, իր նվաստացումը, ատեց դեմքին փուշ-փուշ ցցված մորուքը: Բուժումներին, որ շատ ցավալի էին, արժանապատվորեն դիմացավ, սակայն երբ վիրաբույժն ասաց, որ արյան վարակով մեռնելուց հազիվ է պրծել, Դալմանն արցունքներով ողբաց իր ճակատագիրը: Մարմնական տառապանքներն ու սարսափելի գիշերների մշտական սպասումը նրան թույլ չէին տվել մտածել մահվան պես վերացական մի բանի մասին: Մի ուրիշ օր վիրաբույժն ասաց, որ շուտով կկարողանա էստանսիա գնալ և այնտեղ կազդուրվել: Անհավատալիորեն եկավ սպասված օրը:

Հարկ է նշել, որ նրան միշտ էլ դուր էին գալիս իրականության համաչափություններն ու թեթևակի անաքրոնիզմները. Դալմանին բերել էին հիվանդանոցի մեքենայով, այժմ էլ հիվանդանոցի մեքենայով տարան մինչև Սահմանադրության հրապարակ: Ամռան հոգեմաշ շոգերից հետո աշնան առաջին զովությունը կարծես մահից և ջերմությունից փրկված ճակատագրի բնական խորհրդանիշը լիներ: Առավոտյան ժամը յոթին քաղաքը դեռ չէր ցրել հինավուրց տան գիշերվա հաղորդած պատկերը, փողոցները

կարծես երկար միջանցքներ լինեին, իսկ հրապարակները՝ բակեր: Դալմանը հուզմունքով և հիացմունքով ճանաչեց քաղաքը. տեսնելուց մի քանի վայրկյան առաջ նա հիշում էր խաչմերուկները, ցուցափեղկերը, Բուենոս Այրեսի համեստ ինքնատիպությունը: Նոր օրվա դեղին լույսի տակ Դալմանը վերագտնում էր ամեն ինչ:

Բուրորին հայտնի է, որ Հարավն սկսվում է Ռիվադավիայից այն կողմ: Դալմանը կրկնում էր, որ այդ սահմանը պայմանական է, և որ այդ փողոցն անցնողը մտնում է մի ավելի հաստատուն ու հին աշխարհ: Մեքենայից դուրս՝ նորակառույց շինությունների մեջ առանձնանում էր ցողապատ պատուհանը, զանգակը, դռան կամարը, միջանցքը, հարազատ բակը:

Կայարանի սպասասրահում նա իմացավ, որ գնացքի շարժվելուն երեսուն րոպե է մնում: Հանկարծ հիշեց, որ Բրազիլ փողոցի վրա գտնվող մի սրճարանում (Իրիգոյենի տնից մի քանի մետր հեռավորության վրա) քմահաճ աստվածության պես մարդկանց կողմից իրեն շոյել թույլ տվող մի մեծ կատու կար: Մտավ: Կատուն այնտեղ էր և քնած էր: Սուրճ պատվիրեց, քաղցրացրեց, փորձեց (այդ հաճույքն արգելված էր հիվանդանոցում) և կատվի սև մորթը շոյելով մտածեց, որ այդ հպումը խաբեական է, որ կարծես նրանց ապակի է բաժանում, քանի որ մարդն ապրում է ժամանակի հաջորդականության, իսկ կախարդական կենդանին՝ ներկայի և պահի հավերժության մեջ:

Նախավերջին երկաթգծի վրա գնացքն սպասում էր: Դալմանը շրջեց վագոններով ու գտավ գրեթե դատարկ մի վագոն: Ճամպրուկը տեղավորեց ցանցի վրա, երբ գնացքը շարժվեց՝ բացեց ճամպրուկն ու որոշ տատանումներից հետո միջից հանեց «Հազար ու մեկ գիշերներ» գրքի առաջին հատորը: Իր հետ վերցնել այն գիրքը, որ այնքան սերտորեն էր կապված իր դժբախտության պատմության հետ, նշանակում էր չեզոքացնել այդ դժբախտությունը և միևնույն ժամանակ ուրախալի ու գաղտնի մի մարտահերթավեր նետել չարի հուսախաբ ուժերին:

Գնացքի պատուհաններում քաղաքը բզկտվում էր արվարձաններով, սկզբում այդ, ապա այգիների ու պարտեզների տեսարանները հետաձգեցին ընթերցումը: Ճիշտն ասած Դալմանը չէր կարողանում կենտրոնանալ գրքի վրա. կախարդված լեռան և ոգու, որ երգվել էր սպանել իր բարերարին, պատմությունները անկասկած հիանալի էին, ինչ խոսք, սակայն ոչ ավելի, քան այս առավոտն ու սեփական գոյության հանգամանքը: Երջանկությունը շեղում էր նրա ուշադրությունը Շահրազադեից և նրա անօգուտ

հրաշքներից: Դալմանը փակեց գիրքն ու պարզապես ինքն իրեն թույլ տվեց ապրել:

Ճաշը (ինչպես արդեն մոռացված մանկության ամառներում մետաղե փայլփլուն ափսեներով մատուցված սուպը) նոր հաճույք ու երախտապարտ վայելք պատճառեց նրան:

Վաղը էստանսիայում կարթնանամ, մտածում էր, և ինքը կարծես միաժամանակ երկու հոգի լիներ, մեկը՝ աշնանային օրվա և հայրենի երկրի միջով առաջացողը, մյուսը՝ հիվանդանոցում բանտված, բուժական ընթացակարգին ենթարկվող ու հաբեր կուլ տվողը: Գնացքի ընթացքը հավերժորեն դիտող երկար և եռանկյունաձև, կավաքարե անսվաղ տներ տեսավ, տեսավ ձիավորներ փոշոտ ճանապարհներին, հերկված հողեր, լճեր և կենդանիներ տեսավ, տեսավ երկար ու փայլուն ամպեր, որ կարծես մարմարյա լինեին, և այդ ամբողջը դաշտի երազների պես պատահական էին: Նա կարծես ճանաչում էր ծառերն ու ցանքսերը, սակայն չէր կարող տալ նրանց անունը, քանի որ դաշտային աշխատանքներին վերաբերող իր գիտելիքները չափազանց համեստ էին՝ իր կարոտախտական և գրական գիտելիքների հետ բաղդատած:

Երբեմն քնում էր, և նրա քունը գնացքի ընթացքի պես ընդմիջվում էր: Կեսօրվա անտանելի սպիտակ արևն իրիկսամուտին նախորդող դեղին արևն էր դարձել և շուտով կարմիր կդառնար: Վազոնն էլ էր տարբեր, Սահմանադրության կայարանում կանգնածը չէր այլևս, հարթավայրն ու ժամերը կարծես փոխել ու փոքրացրել էին այն: Դրսում, վազոնի շարժուն ստվերը երկարաձգվում էր մինչև հորիզոն: Անապական հողը չէր անջրպետվում ոչ բնակավայրերով, ոչ էլ մարդկային այլ նշաններով: Ամեն ինչ լայնարձակ էր, բայց և միևնույն ժամանակ՝ մտերիմ և ինչ-որ ձևով խորհրդավոր: Հաճախ անսահման դաշտում մի ցուլից բացի ուրիշ ոչինչ չէր երևում: Մենությունը կատարյալ էր, գուցե և թշնամական, ու Դալմանի մտքով անցավ, որ ինքը ոչ միայն Հարավ, այլև դեպի անցյալ է ճամփորդում: Հսկիչը նրան շեղեց այդ ֆանտաստիկ մտորումներից և տեսնելով նրա տոմսը՝ զգուշացրեց, որ գնացքն այդ կայարանում չէր կանգնելու, այլ Դալմանի համար գրեթե անծանոթ մի այլ կայարանում: (Հսկիչը ինչ-որ լրացուցիչ բացատրություններ տվեց, բայց Դալմանը չուզեց հասկանալ, ոչ էլ անգամ լսել, քանի որ հանգամանքների դասավորությունը նրան չէր հետաքրքրում):

Գնացքը դժվարությամբ կանգ առավ ամայի վայրում: Երկաթուղուց այն կողմ կայարանն էր, որ հասարակ հենահարթակից

որ գրեթե բնագդական այդ շարժումն իրեն պարտադրում էր կռվել: Երկրորդը՝ որ զենքն իր անվարժ ձեռքում ոչ թե պաշտպանելու էր իրեն, այլ արդարացնելու էր իր սպանությունը: Բոլոր տղամարդկանց պես ինքն էլ էր մի ժամանակ դանակով խաղացել, սակայն իր գիտելիքները սահմանափակվում էին այն իմացությամբ, թե հարվածը պետք է ուղղել ներքևից վերև և սուր կողմը մխրձել կողոսկրերի միջև: **Հիվանդանոցում չէին թույլ տա, որ այսպիսի բան պատահեր, մտածեց:**

— Դուրս գանք,— ասաց տղան:

Դուրս եկան, և եթե Դալմանը հույս չուներ, ապա երկյուղ էլ չուներ: Շեմից դուրս գալու ժամանակ զգաց, որ հիվանդանոցի այն առաջին գիշերը, երբ ասեղը խրեցին թևը, բաց երկնքի տակ դաշունամարտում մեռնելն իր համար կլիներ ազատություն, երջանկություն, տոն: Զգաց, որ եթե իրեն տրվեր իր մահն ընտրելու կամ երազելու հնարավորությունը, այդ կլիներ իր ընտրած կամ երազած մահը:

Դալմանը հաստատուն ձեռքերով բռնեց դանակը, որ գուցե և գործածել չգիտեր, և ելավ դաշտ:-

ULTSOL

Սողոմոնն ասել է՝ ոչինչ նոր չէ երկրի վրա: Իսկ Պլատոնը ավելացնում է՝ ամեն գիտելիք այլ բան չէ, քան հիշողություն, այնպես որ Սողոմոնին է պատկանում այն իմաստուն միտքը, թե՛ ամեն մի նոր բան մոռացված հիմն է:

Ֆրենսիս Բեկոն, «Փորձեր», LVIII

Լոնդոնում, 1929 թվականի հունիսին, զմյուռնիացի հնավաճառ ժողգեֆ Կարտաֆիլուսը Լուսինգի իշխանուհուն առաջարկեց Պոպի «Իլիականի» վեց հատորյակը (1715-1720): Գնելիս իշխանուհին մի քանի խոսք փոխանակեց նրա հետ: Հյուժված, հողագույն դեմքով, մոխրագույն աչքերով ու մորուքով, բացառիկ չհիշվող դիմագծերով մարդ էր,— ասում էր նա: Սահուն և անգիտակցաբար օգտագործեց տարբեր լեզուներ, մի քանի րոպեի ընթացքում ֆրանսերենից անգլերենի և անգլերենից սալոնիկյան իսպաներենի ու Մակաոյի պորտուգալերենի մի առեղծվածային համադրանքի անցավ: Հոկտեմբերին իշխանուհին Ջևսի ճանապարհորդներից տեղեկացավ, որ Կարտաֆիլուսը վախճանվել է ծովում՝ Ջմյուռնիայի ճանապարհին, և թաղվել Իոս կղզում: Նա «Իլիականի» վերջին հատորում գտավ այս ձեռագիրը:

Բնագիրը անգլերենով է շարադրված և լի է լատինաբանություններով: Մեր մատուցած տարբերակը բառացի է:

1

Որքան հիշում եմ, ամեն ինչ սկսվեց Դեոկլետիանոսի կայսրության ժամանակ, Թեբեի Հեկատոմպիլուսի այգիներից մեկում: Ես մարտնչել էի (առանց փառքի) վերջերս տեղի ունեցած եգիպտական պատերազմներում, ես Կարմիր ծովի ափին՝ Բերենիչեում, բանակած զորագնդի տրիբունն էի, ուր պողպատի վեհանձնությունը տենչացող մարդիկ տենդի ու կախարդանքի զոհերը դարձան: Մավրիտանացիները պարտվեցին. ապստամբ քաղաքացիներից առգրավված հողը հավերժորեն նվիրվեց պլուտոնական աստվածներին: Ջենքի ուժով պարտված Աղեքսանդրիան զուր աղերսեց կեսարի գութը. տարին չբոլորած, զորագընդերն ավետեցին հաղթանակ, սակայն ես Մարսի դեմքն հագիվ նշմարեցի: Պատերազմի աստվածը շրջանցեց ինձ, և զրկանքը ցավալի էր, ու երևի հենց այդ էլ պատճառ դարձավ, որ ես նետվեցի որոնելու Անմահների գաղտնի քաղաքը՝ սոսկալի ու անհուն անապատների միջով:

. Ամեն ինչ սկսվեց, արդեն նշել եմ, Թեբեի այգիներից մեկում: Այդ գիշեր չքնեցի, սրտիս խորքում ինչ-որ բան պայթարի մեջ էր: Արշալույսից քիչ առաջ զարթնեցի. ստրուկներս քնած էին, լուսինն անհատնում ավազի գույնն ուներ: Արևելքից հոգնատանջ ու ար-
 յունվա մի ձիավոր էր գալիս: Ինձնից մի քանի քայլ այն կողմ՝
 ձիուց գլորվեց: Մեղմ, անհազ ձայնով, լատիներեն հարցրեց քա-
 ղաքի պարիսպների կողքով անցնող գետի անունը: Պատասխա-
 նեցի, որ անձրևներից սնվող Եգիպտոսն է: Այլ է իմ որոնած գետը,
 պատասխանեց տխուր, **գաղտնի գետը, որ մարդկանց ազատում
 է մահվան պղծանքից:** Նրա կրծքից մուգ արյուն էր հոսում: Ասաց,
 որ իր հայրենիքը Գանգեսից այն կողմ գտնվող մի սար է, և որ
 այնտեղ հավատում են, թե մարդ քայլելով դեպի արևմուտք, ուր
 աշխարհն է վերջանում, հասնելու է այն գետին, որի ջրերն
 անմահացնում են: Ավելացրեց, որ գետի ափերին կառուցված
 է պարսպապատ, ամֆիթատրոններով ու տաճարներով հարուստ
 Անմահների քաղաքը: Նա վաղորդայնից առաջ մահացավ, բայց ես
 որոշեցի հայտնաբերել քաղաքն ու գետը: Դաժձից հարցաքննված
 մավրիտանացի գերիները հաստատեցին ճամփորդի պատմածը:
 Մեկը աշխարհի վերջում գտնվող Ելիսեյան դաշտերն հիշեց, ուր
 մարդկանց կյանքը հարատև է, մեկ ուրիշը՝ այն գագաթները,
 որտեղից սկիզբ է առնում Պակտոլ գետը, և որտեղ մարդիկ
 ապրում են մի դարի չափ: Հոսում գրուցեցի փիլիսոփաների հետ,
 որոնք կարծում էին, թե մարդկանց կյանքը երկարացնելը համար-
 ժեք է նրանց հոգեվարքը երկարաձգելուն ու նրանց մահերի
 քանակը բազմապատկելուն: Չեմ կարծում, թե երբևէ հավատացել
 եմ Անմահների քաղաքի գոյությանը, գիտեմ, որ այդ ժամանակ
 ինձ որոնման աշխատանքներն էին գոհացնում: Այդ նպատակի
 համար Գետուլիայի փոխկոնսուլ Ֆլավիոսը երկու հարյուր գինվոր
 տվեց: Զորագունդը համալրեցի վարձկաններով, որոնք, իբր, լավ
 էին ճանաչում ճանապարհները, սակայն նրանք առաջինը դա-
 սալքեցին, երբ դժվարություններ ծագեցին: Հետագա դեպքերը
 կատարելապես խառնեցին առաջին օրերի հուշերս: Դուրս եկանք.
 Արսինոեից և մտանք կիզիչ անապատ: Անցանք օձակեր ու անլե-
 զու քարանձավային մարդկանց երկիրը, երկիրը գարմանտների,
 ուր կանայք համայնական են, և մարդիկ միայն առյուծներով են
 սնվում, անցանք Տարտարոսը պաշտող աուխիլաների երկիրը:
 Հաղթահարեցինք և այլ անապատներ, ուր ավազը սև էր, ու
 ճամփորդն անհրաժեշտաբար գողանում էր գիշերվա ժամերը,

քանի որ անտանելի էր ցերեկվա տոթը: Հեռվում օվկիանոսին անուև տվող լեռը նշմարեցի, որի լանջերին թույլնը չեզոքացնող էուֆորբիոնն է աճում, և որի գագաթին բնակվում է վավաշոտ, կոշտ ու կոպիտ մարդկանց մի ցեղ՝ սատիրները: Կասկած չկար՝ նման բարբարոս վայրերում, ուր մայր հողն այդպիսի դևեր էր ծնել, չէր կարող գտնվել համբավվոր մի քաղաք: Շարունակեցինք ճանապարհը. վերադառնալը անպատեհ կլիներ: Մի քանի զինվորներ դեմքները լուսնին դարձրած, հանդգնեցին քնել. տենդը այրեց նրանց, ոմանք ջրամանների ապականված ջրերի հետ ըմպեցին մահն ու խենթությունը: Այդ ժամանակ սկսեցին դասալքությունները, քիչ անց՝ խռովությունները: Դաժանորեն ճնշեցի ըմբոստներին: Ճիշտ վարվեցի, սակայն մի ցենտուրիոն զգուշացրեց, որ նրանք (նրանցից մեկի խաչելության վրեժն առնելու տենչանքով) մահս են նյութում: Մի քանի հավատարիմ զինվորներով փախա ճամբարից: Նրանց կորցրի անապատում, ավազե հողմապտույտների և անհուն գիշերների մեջ: Կրետական մի նետ վիրավորեց ինձ: Մի քանի օր թափառեցի ջուր փնտրելով, կամ գուցե լոկ մի հսկայական օր՝ արևից, ծարավից և ծարավի վախից բազմապատկված: Ճանապարհը թողեցի ձիուս քմահաճույքին: Վաղորդայնին հորիզոնում հառնեցին բուրգերն ու աշտարակները: Անտանելի էր. երազում հստակ ու անավարտ մի բավիղ տեսա. կենտրոնում մի կուժ կար, ձեռքերս գրեթե բռնել էին, աչքերս տեսնում էին, բայց այնքան խառնաշփոթ ու զարմանալի էին նրա կորությունները, որ ես համոզված էի, թե մեռնելու եմ նրան հասնելուց առաջ:

2.

Երբ վերջապես ազատվեցի մղձավանջից, ինձ կապկպված գտա սարի թեք լանջին փորված, սովորական գերեզմանից փոքր-ինչ մեծ, քարե մի ոչ երկար, բայց լայն դամբարանում: Պատերը խոնավ ու հղկված էին՝ ավելի շուտ ժամանակից, քան թե մարդկանց ձեռքով: Կրծքիս տակ սիրտս ցավագին թպրտաց, զգացի, որ ծարավը խեղդում է ինձ: Ելա ու գոռացի, ձայնս շատ թույլ էր: Սարի գոգին անաղմուկ տարածվում էր ավազով ու աղբակույտով պատնեշված պղտոր մի առվակ. դիմացի ափին ակնհայտորեն հուրհրում էր Անմահների քաղաքը՝ արշալույսի կամ վերջալույսի շողերի մեջ: Ժայռաբլրի վրա տեսա պարիսպներ, կամարներ, շենքեր և հրապարակներ: Սարալանջերին և հովիտներում երևում էին

իմիսի նման հարյուրավոր անհամաչափ դամբարաններ: Ավագը լիքն էր փոքրիկ խոռոչներով, այդ ժլատ վիրապներից (և դամբարաններից) դուրս էին գալիս մոխրագույն մաշկով, անփույթ մորուքով մերկ մարդիկ: Ինձ թվաց, թե ճանաչեցի նրանց, նրանք պատկանում էին Արաբական ծոցի ափերին ու եթովպական այրերն ապականող քարանձավային մարդկանց բիրտ ցեղին, և ինձ չէր զարմացնի, եթե իմանայի, որ նրանք սնվում են օձերով և ասուն չեն:

Ծարավի ահավորությունն ինձ հանդուգն դարձրեց: Մտածեցի, որ երեսուն քայլ է ինձ բաժանում ավագից, աչքերս փակ, ձեռքերս մեջքիս կապած, նետվեցի լեռն ի վար: Արյունլվա դեմքս խրեցի մուգ ջրերի մեջ: Խմեցի, ինչպես խմում են կենդանիները: Երազների ու մղձավանջի մեջ սուզվելուց առաջ, չգիտես ինչու, կրկնեցի մի քանի հունական բառեր՝ **Ասոպոսի սև ջրերը խմող Ջելեայի հարուստ տրոյացիները...**

Չգիտեմ, թե քանի օր ու գիշերներ անցան: Ցավատանջ, քարանձավների ապաստան վերադառնալու անկարող, մերկ, անծանոթ ավազուտներում թույլ տվեցի, որ արևն ու լուսինը խաղային իմ դժբախտ ճակատագրի հետ: Ջուր խնդրեցի մահս: Քարանձավային մարդիկ՝ բարբարոսության մեջ դեռ մանուկ, չօգնեցին ինձ ոչ ապրել, ոչ էլ մեռնել: Մի օր կայծքարի սուր ծայրով կտրեցի կապանքներս. մի ուրիշ օր՝ վեր կացա, և ես՝ Մարկոս Ֆլամինիո Ռուֆոս հռոմեական գորագնդերի գինավորական տրիբունս, կարողացա՝ մուրալ կամ գողանալ իմ առաջին, զգվելի օձի մսի բաժինը:

Անմահներին տեսնելու, գերմարդկային քաղաքը շոշափելու իդձը ինձ գրեթե քնից գրկել էր: Կարծես մտադրությունս հասկանալով, քարանձավային մարդիկ էլ չէին քնում. սկզբում եզրակացրի, որ հսկում են, հետո մտածեցի, որ վարակվել են իմ անհանգստությունից, ինչպես կարող են վարակվել շները: Բարբարոսական վայրից հեռանալու համար ընտրեցի ամենաեռուն ժամը՝ երեկոյան վերջին պահերը, երբ գրեթե բոլորը դուրս են գալիս անձավներից ու խոռոչներից և, առանց տեսնելու, դիտում են մայրամուտը: Սկսեցի բարձրաձայն աղոթել, ոչ այնքան աստվածային շնորհ աղերսելու, որքան մարդկային այդ հոտին հողաբաշխ բառերով վախեցնելու համար: Անցա ողողատներով պատնեշված առվակը և՛ ուղղվեցի դեպի Քաղաք: Երկու թե երեք մարդ ծածուկ հետևեցին ինձ: Ցածրահասակ էին (իրենց մյուս ցեղա-

կիցների պես), ոչ թե վախ, այլ զգվանք էին առաջացնում: Շրջանցեցի մի քանի անհավասար փոսորակներ, որոնք ինձ քարհանքեր թվացին, շլացած Քաղաքի մեծությամբ, կարծեցի, թե այն ավելի մոտ է: Կեսգիշերին ոտք դրի դեղին ավազի վրա, կռապաշտական ձևերով կտրտված պարիսպների սև ստվերին: Ինչ-որ սրբազան երկյուղ կանգնեցրեց ինձ: Այնքան գարշելի են մարդու համար նորությունն ու անապատը, որ ինձ ուրախացրեց քարանձավային մարդկանցից մեկի ընկերությունը, որն ինձ հետևել էր մինչև վերջ: Փակեցի աչքերս և սպասեցի (առանց քնելու), որ փայլատակեր առավոտը:

Արդեն ասացի, որ Քաղաքն հիմնված էր մի հսկայական քարե բլրի վրա: Քարածայռ հիշեցնող այդ բլուրը պարիսպներից պակաս անմատչելի չէր: Հոգնածությունից ուժասպառ ցած՝ գլորվեցի՝ քարածայռը ոչ մի ելուստ չունեւ, պարիսպները կարծես ոչ մի դուռ չէին հանդուրժում: Ցերեկվա տաքությունն ինձ հարկադրեց ապաստան որոնել քարանձավում, քարանձավի խորքում մի վիրապ կար, վիրապում մի սանդուղք, որ ցած էր խորանում դեպի անդնդային խավարը: Իջա զազիր նրբանցքների քառսի միջով, հասա հազիվ նշմարելի ընդարձակ ու շրջանաձև մի դահլիճ: Այդ ներքնահարկում ինը դուռ կար, ութը՝ տանում էին դեպի մի բավիղ, որ խաբող ճանապարհներով հասցնում էր նույն դահլիճը. իններորդը (մի այլ բավիղի միջոցով) դուրս էր գալիս առաջինի նման մի երկրորդ շրջանաձև դահլիճ: Չկարողացա իմանալ, թե դահլիճները քանիսն են, իմ դժբախտությունն ու տագնապը բազմապատկեցին նրանց քանակը: Լռությունը թշնամական էր և գրեթե կատարյալ. այդ քարե խոր խռռչներում, բացի ստորերկրյա քամու ձայնից (թե ինչից՝ չիմացա), այլ շշուկ չկար, ժանգագույն ջրի շիթերը անաղմուկ անէանում էին ձեղքվածքներում: Ի սարսափ ինձ, սկսեցի վարժվել այդ տարօրինակ աշխարհին և արդեն չէի հավատում, թե աշխարհում ինը դուռ ունեցող դամբարաններից, երկար, երկփեղկվող ներքնահարկերից բացի մի այլ բան էլ գոյություն ունի: Չգիտեմ, թե որքան ժամանակ թափառեցի հողի տակ, գիտեմ միայն, որ մի պահ հայրենիքի կարոտն իրար խառնեց բարբարոսների վայրագ գյուղի և ողկույզներով լի իմ ծննդավայրի պատկերները: Ինչ-որ միջանցքի վերջում ճանապարհս փակեց չնախատեսված մի պատ, հեռավոր մի լույս ընկավ վրաս: Բարձրացրի մթազնած աչքերս՝ գլխապտույտ պատճառող բարձունքում այնքան կապույտ երկնակամար տեսա, որ կարող էր ինձ ծիրանի

թվալ: Երկաթե աստիճանները մագլցում էին պարիսպը: Հոգևածությունը թուլացրել էր ինձ, բայց բարձրացա գրեթե առանց կանգ առնելու, միայն մեկ-մեկ անճարակորեն հեկեկում էի ուրախությունից: Կամաց-կամաց նշմարեցի խոյակներ և աստրագուլներ, եռանկյունի ճակատադրվագներ և կամարներ, գրանիտյա և մարմարե մի անհասկանալի հոյակապություն: Այդպես վիճակվեց ինձ բարձրանալ սև ու խավարչտին բավիղների թագավորությունից դեպի պայծառ Քաղաքը:

Հայտնվեցի հրապարականման մի վայրում, ավելի ճիշտ բալում՝ շրջապատված անկանոն ձևերով և տարբեր բարձրություններով կառուցված շենքով: Այդ այլասեռ շենքին էին պատկանում տարբեր գմբեթներն ու սյուները: Ամեն ինչից առաջ ինձ զարմացրեց այդ անհավատալի շենքի հնությունը: Զգացի, որ այն կառուցվել է մարդուց էլ, երկրագնդից էլ առաջ, անհիշելի ժամանակներում: Այդ հնությունը (թեև ինչ-որ չափով սարսափելի մարդկային աչքերի համար) ինձ համապատասխան թվաց անմահ բանվորների գործին: Սկզբում զգուշությամբ, հետո անտարբեր, իսկ վերջում հիասթափված թափառեցի անկորզելի պալատի սանդուղքներով ու սալաքարերով: Հետո իմացա, որ աստիճանների լայնությունն ու բարձրությունը անհամաչափ են, և հասկացա նրանց պատճառած եզակի հոգնությունը: *Այս պալատը աստվածային կառույց է, մտածեցի սկզբում: Չբնակված սրահներն հետազոտելուց հետո ուղղեցի՝ կառուցող աստվածները վախճանվել են: Իսկ երբ նկատեցի նրա առանձնահատկությունները, ասացի՝ կառուցող աստվածները խելագար են եղել:* Ասացի, բայց հաստատ գիտենալով, որ միևնույն ժամանակ անհասկանալիորեն չեմ ընդունում ասածս, գրեթե խղճմտանք զգացի, սակայն այդ զգացմունքն ավելի նման էր մտավոր սարսափի, քան զգայական վախի: Ահռելի հնության տպավորությանը ուրիշներն էլ ավելացան՝ անավարտի, դաժանության, անիմաստ բարդացման տպավորությունները: Ես եղել էի բավիղում, սակայն Անմահների ջինջ քաղաքը վախ ու զգվանք պատճառեց ինձ: Բավիղը կառուցված է մարդկանց շփոթեցնելու համար, նրա համաչափ ճարտարապետությունն ստորադասված է այդ նպատակին: Իսկ իմ (թեև թերի) հետազոտած պալատում ճարտարապետությունը աննպատակ էր: Այնտեղ սովորական էին անելք միջանցքները, անհասանելի, բարձր պատուհանները, դեպի բանտ կամ ինչ-որ խոռոչ բացվող շքեղագարդ դռները, անհավատալիորեն շրջոնք սանդուղքները,

որոնց աստիճաններն ու վանդակապատերը դեպի վեր էին նայում: Կոթողային պարսպի կողքին ամրացած սանդուղքները, որոնք երկու կամ երեք շրջապտույտից հետո, առանց որևէ տեղ հասնելու, անհետանում էին զմբեթների պարզորոշ խավարում: Չգիտեմ՝ նշված օրինակները բոլորն էլ իրական են թե ոչ, գիտեմ միայն, որ տարիներ շարունակ դրանք ապականել են մղձավանջներս, արդեն չեմ կարող իմանալ, թե այս կամ այն նկարագրությունը իրականություն, թե գիշերներս ցնորող ձևերի ընդօրինակությունն է: Այս Քաղաքը (մտածեցի) այնքան սարսափելի է, որ միայն նրա գոյությունն ու պահպանումը, նույնիսկ գաղտնի անապատի կենտրոնում, ապականում է անցյալն ու ապագան, և ինչ-որ ձևով ստվեր է գցում աստղերի վրա: Քանի դեռ այն կա, աշխարհում ոչ ոք չի կարող երջանիկ լինել, ոչ էլ՝ գոյության իմաստը հասկանալ: Չեմ ուզում նկարագրել այդ քաղաքը. տարալեզու բառերի մի քառս, վագրի կամ ցուլի մի մարմին, ուր միմյանց ատելով, դիվայնորեն խոնարհված վխտում են ատամներ, մարմնի մասեր ու գլուխներ՝ հնարավոր է (գուցե) մոտավոր պատկերներ լինեն:

Փոշոտ ու խոնավ գետնադամբարանների միջից վերադարձիս փուլերը չեմ հիշում: Միայն գիտեմ, որ վերջին բավիղից ելնելիս ինձ չէր լքել նորից Անմահների ամբարիշտ Քաղաքով շրջապատված լինելու վախը: Ուրիշ ոչինչ չեմ կարող հիշել: Այդ մոռացումը, այժմ արդեն անհաղթահարելի, գուցե կամավոր եղավ, գուցե փախուստիս պայմաններն այնքան տհաճ են եղել, որ մոռացված մի օր երդվել եմ մոռանալ:

3.

Ովքեր ուշադրությամբ հետևել են արկածներիս պատմությանը, կհիշեն, որ քարանձավային մարդկանցից մեկը, գրեթե շան հավատարմությամբ, ինձ հետևել էր մինչև ատամնավոր պարիսպների ստվերը: Երբ դուրս եկա վերջին ներքնահարկից, նա քարանձավի առաջ պառկած էր ավազի վրա և անճարակորեն գծագրում ու ջնջում էր նշանների մի շարք, նման երազներում հայտնվող տառերի, որոնք խառնվում են իրար այն պահին, երբ թվում է, թե ուր որ է կդառնան հասկանալի: Սկզբում ինձ թվաց, որ դա բարբարոսական գրություն է, հետո զգացի երևակայածիս անհեթեթությունը՝ բառին չհասած մարդը չէր կարող գիր ունենալ: Բացի այդ, նշաններից և ոչ մեկը չէր նմանվում մյուսին, դա էլ բացառում կամ նվազեցնում էր խորհրդանիշ լինելու հավանակա-

նությունը: Մարդը գծում էր, նայում և ուղղում: Հանկարծ, ասես խաղն արդեն ձանձրացրեց նրան, ձեռքի ափով ու արմունկով բոլորն էլ ջնջեց: Ինձ նայեց այնպես, կարծես թե ճանաչեց: Սակայն այնքան մեծ էր սփոփանքս (կամ այնքան մեծ ու սարսափելի՝ մենությունս), որ մտածեցի, թե այդ բիրտ քարանձավային մարդն ինձ էր սպասում:

Արևն այրում էր դաշտը, երբ առաջին աստղերի տակ ճանապարհ ընկանք, ավազն արդեն այրում էր մեր ոտքերը: Քարանձավային մարդն առաջնորդեց ինձ. այդ գիշեր որոշեցի նրան մի քանի բառ սովորեցնել, երևի կհասկանար, գուցե և կկրկներ: Շունն ու ձին (մտածեցի) ունեն առաջինի ունակությունը, բազմաթիվ թռչուններ, ինչպես կեսարների սոխակները՝ վերջինի: Որքան էլ աղքատ լինի մարդու ըմբռնողությունը, անբանականից ավելի բարձր կլինի: Քարանձավային մարդու համեստությունն ու թշվառությունն ինձ հիշեցրին Արգոսին՝ «Ողիսականի» ծերացած ու մահամերձ շանը, ու նրան այդպես էլ անվանեցի և փորձեցի սովորեցնել այդ անունը: Ոչ մի կերպ չհաջողվեց: Հնարամտություններս, խստությունս ու համառությունս բացարձակապես զուր անցան: Անշարժ, անկենդան աչքերով նայում էր ինձ և, կարծես, չէր ընկալում իմ սովորեցրած հնչյունները: Ինձնից ընդամենը մի քանի քայլ այն կողմ էր, սակայն, կարծես, հեռավոր վայրերում գտնվելիս լիներ: Ինչպես լավայե փոքրիկ ու ավերված մի սֆինքս՝ օր ու գիշեր պառկած ավազում, թույլ էր տալիս, որ երկինքները իր գլխավերևում պտույտ գործեին արշալույսի մթնշաղից մինչև վերջալույս: Վստահ էի, որ նա մտադրությունս կհասկանար: Եվ հիշեցի. եթովպացիք կարծում են, որ կապիկները չեն խոսում, որպեսզի նրանց չստիպեն աշխատել, ուստի Արգոսի լռությունը վերագրեցի անվստահությանը կամ վախին: Դրանից անցա դեռ ավելի անհեթեթ ենթադրությունների: Մտածեցի, որ Արգոսն ու ես տարբեր աշխարհներից ենք, մտածեցի, որ թեև մեր ընկալումները նույնն են, սակայն Արգոսը դրանք տարբեր ձևով է կապակցում և տարբեր առարկաներ ստանում, մտածեցի, որ գուցե նրա համար գոյություն չունեն առարկաներ, և ողջը պատկերների անընդմեջ ու խեղափոխ մի խաղ է: Մտածեցի հիշողություն չունեցող մի լեզվի հնարավորության մասին՝ անդեմ բայերի կամ չթեքվող անունների մի լեզու: Այսպես մահացան օրերը և նրանց հետ տարիները, սակայն մի առավոտ երջանկության նմանվող ինչ-որ բան պատահեց: Սաստիկ դանդաղ և առատ անձրև տեղաց:

Անապատի գիշերները կարող են շատ ցուրտ լինել, բայց այդ մեկը կրակ էր: Երազում տեսա, որ Թեսալիայի գետերից մեկը (որի

ջրերին ես վերադարձրել էի մի ոսկե ձկնիկ), գալիս էր ինձ փրկելու. նստած սև քարի ու կարմիր ավազի վրա, ես լսում էի նրա մոտենալը, օդի զովությունն ու անձրևի ձայնն արթնացրին ինձ: Դուրս վազեցի ամբողջովին մերկ: Գիշերը ավարտվում էր, դեղին ամպերի տակ ինձնից ոչ պակաս երջանիկ հուզավառության մեջ, ցեղախումբը հանձնվում էր կենսատու անձրևի շիթերին: Կարծես աստվածներին մերձեցած Կիբելիայի քրմեր լինեին: Արգոսը, աչքերը հառած երկնակամարին, հեկեկում էր, դեմքից առատորեն հոսում էին ոչ միայն անձրևի կաթիլները, այլ (հետո իմացա) նաև արցունքները: **Արգոս, գոռացի, Արգոս:**

Այդ պահին, հեզ հիացմունքով, կարծես հայտնաբերելով կորցրած ու վաղուց մոռացված մի բան, Արգոսը թրթուվեց հետևյալ բառերը՝ **Արգոս, Ողիսևսի շունը:** Իսկ քիչ անց, առանց ինձ նայելու, ավելացրեց՝ **թրիքի մեջ վեր ընկած այս շունը:**

Հեշտությամբ ենք ընդունում իրականությունը, գուցե նախագալով, որ ոչինչ իրական չէ: Հարցրի, թե ինչ գիտի «Ողիսևսանից»: Հունարենի գործածությունը տանջալի էր նրա համար, հարցս կրկնեցի:

Շատ քիչ, ասաց: Ամենախղճուկ ռապսոդից էլ քիչ: Արդեն հազար հարյուր տարի կլինի՝ ինչ ստեղծել եմ:

4.

Այդ օրը ամեն ինչ հասկացա: Քարանձավային մարդիկ Անմահներն էին, ավագոտ ջրերով առվակը՝ զինվորի որոնած Գետը: Իսկ այն քաղաքը, որի համբավն հասել էր մինչև Գանգեսի ափերը, ավերվել էր Անմահների ձեռքով ինը դար առաջ: Նրա ավերակների վրա հիմնադրել էին իմ շրջագայած անմիտ քաղաքը՝ ինչ-որ ձևով խեղկատակություն, կամ շրջոնք մի բան, նաև անբնական աստվածների տաճար, աշխարհը ղեկավարող աստվածների, որոնց մասին ոչինչ չգիտենք, բացի այն, որ նման չեն մարդուն: Այդ շինությունը Անմահների հանդուրժած վերջին խորհրդանիշն էր, որին հաջորդում է մի այլ ժամանակաշրջան. հանգելով այն եզրակացության, թե ցանկացած գործողություն անիմաստ է, Անմահները վճռեցին ապրել մտածողության, բացարձակ հայեցողության ոլորտում: Կառուցեցին շինությունը, հետո մոռացան և բնակվեցին քարանձավներում: Իսկ այդտեղ, մտքերի մեջ ընկած, գրեթե չէին ընկալում ֆիզիկական աշխարհը:

Այդ ամենն ինձ Հոմերոսը պատմեց այնպես, ինչպես երեխայի հետ են խոսում: Պատմեց նաև իր ծերության ու վերջին ճանապարհորդության մասին. ինքն էլ Ոդիսևսի պես դուրս էր եկել որոնելու այն մարդկանց, որոնք չգիտեին ծովի ինչ լինելը, մսին աղ չէին զցում և անգամ գաղափար չունեին ճողփաթիակի մասին: Մի դար Անմահների քաղաքում ապրեց: Ավերումից հետո, ինքն առաջարկեց մյուսի հիմնադրումը: Սա չպետք է զարմացնի մեզ, հայտնի է, որ Իլիոնի պատերազմից հետո նա երգեց գորտերի ու մկների պատերազմը: Աստծո նման նա նախ արարեց տիեզերքը, ապա քաոսը:

Անմահ լինելը դատարկ բան է, մարդուց բացի, բոլոր արարածներն անմահ են, քանզի չեն ճանաչում մահը, իսկ իրեն Անմահ զգալը աստվածային է, սարսափելի, մտքին անհասկանալի: Որքան նկատել եմ, չնայած կրոնների բազմազանությանը, այդ համոզմունքը հազվագյուտ է: Հրեաները, քրիստոնյաները և մուսուլմանները դավանում են անմահությունը, սակայն առաջին՝ երկրային կյանքին մատուցած նրանց մեծարանքը փաստում է, որ միայն դրան են հավատում, քանզի մնացածները անհամար անգամներ այդ առաջինին պարզևատրելուն կամ պատժելուն են տրամադրում: Ես ավելի բանական եմ համարում Հնդկաստանի որոշ կրոնների անիվը, այդ անիվում, որը ոչ սկիզբ ունի, ոչ վերջ, ամեն մի կյանք նախորդի հետևանքն է և հաջորդն է սերում, սակայն ոչ մեկն ինքնին ամբողջը չի պայմանավորում...

Սնվելով դարերի փորձառությունից, Անմահների հանրապետությունը կարողացել էր ձեռք բերել հանդուրժողականության և գրեթե անտարբերության կատարելագործված մի ձև: Գիտեին, որ անհուն ժամանակի մեջ ամեն մի մարդու հետ պատահում է ամեն ինչ: Իր անցյալի կամ ապագայի առաքինությունների համար յուրաքանչյուր մարդ արժանի է ամեն տեսակ բարության, սակայն նաև ամեն տեսակ դավաճանության՝ իր անցյալի կամ ապագայի ստորությունների համար: Այնպես, ինչպես զառի մեջ զույգ և կենտ թվերը ձգտում են հավասարակշռության, այնպես էլ իրար ջնջում ու սրբագրում են տաղանդն ու գթությունը, և գուցե Սիդի բիրտ պոեմը էկլոգների մի միակ մակդիրի կամ Հերակլիտի ինչ-որ դատողության համար պահանջված հակակշիռն է: Ամենավաղանցուկ միտքն անգամ հնազանդվում է անտեսանելի մի գծագրության և կարող է թագադրել կամ սկզբնավորել գաղտնի մի ձև: Գիտեմ մարդկանց, ովքեր չարիք էին գործում, որպեսզի

բարիք դառնար առաջիկա դարերում կամ արդեն դարձած լիներ անցյալում... Այսպես, մեր բոլոր արարքներն արդար են, բայց մինևույն ժամանակ՝ ոչ մի բան: Ուստի՝ բարոյական կամ մտավոր չափանիշներ չկան: Հոմերոսը հորինեց «Ոդիսականը», սակայն անհատների ժամանակներում, անհամար պարագաներում անհրճարին է, որ գոնե մեկ անգամ «Ոդիսականը» կրկին չհորինվի: Ամեն մարդ այստեղ ոչ ոք է, իսկ ամեն Անմահ՝ աշխարհում եղած բոլոր մարդիկ: Կոռնելի Ագրիպայի պես, ես աստված եմ, հերոս եմ, փիլիսոփա եմ, սատանա եմ և աշխարհ եմ, որը հոգնեցուցիչ մի ձև է ասելու, թե որպես այդպիսին «ես չկամ»:

Աշխարհն հասկանալով որպես փոխհատուցումների որոշակի համակարգ, Անմահներն առաջին հերթին զրկվեցին մխիթարանքի զգացումից: Նշել եմ դիմացի ափի դաշտերը կտրող քարահանքերը. մեկը ընկել էր ամենախորունկի մեջ, չէր կարող ոչ ջախջախվել, ոչ էլ մեռնել, սակայն ծարավն անտանելի էր, ու յոթանասուոն տարի հետո միայն պարան նետեցին: Նրանց սեփական ճակատագիրն էլ չէր հետաքրքրում: Նրանց մարմինը տնային հնազանդ կենդանի էր դարձել, ամեն ամիս բավարարվում էր մի քանի ժամվա քնով, մի ումպ ջրի և մի պատառ չորացած մսի ողորմությամբ: Ոչ ոք թող մեզ ճգնավորի աստիճանի չիջեցնի: Մտածելուց լիիշխան հաճույք չկա, և մենք ամբողջապես նրան ենք տրվում: Մեկ-մեկ արտառոց մի ազդակ մեզ վերադարձնում է ֆիզիկական աշխարհին: Ինչպես այն առավոտյան անձրևի պատճառած պարզունակ ու հին վայելքը: Սակայն դրանք հազվադեպ օրինակներ են. բոլոր Անմահները ունակ էին կատարելապես հանգիստ ու անշարժ լինել. հիշում եմ մեկին, որին երբեք ոտքի վրա չեմ տեսել՝ մի թռչուն բույն էր դրել նրա կրծքի վրա: Մեր գաղափարախոսության դրույթների մեջ, ըստ որոնց գոյություն չունի այնպիսի մի բան, որ փոխհատուցված չլինի մի ուրիշով, կա տեսական չնչին կարևորություն ունեցող մի դրույթ, որը, սակայն, 10-րդ դարի վերջերին կամ սկզբներին մեզ մղեց աշխարհով մեկ ցրվելու: Դրանից կարելի է պարզ հետևություն անել. **Գոյություն ունի մի գետ, որի ջրերը անմահացնում են, հետևաբար, ինչ-որ տեղ պետք է գոյություն ունենա այդ բանը չեզոքացնող մի այլ գետ:** Գետերի թիվն անհամար չէ. աշխարհը ոտքի տակ տվող մի անմահ ճամփորդ պետք է որ խմի բոլորից: Մենք մտադրվեցինք գտնել այդ գետը: Մահը (կամ նրա հիշողությունը) մարդկանց դարձնում է գեղեցիկ ու ողբերգական: Հուզում է առաջացնում նրանց կյանքի անցողիկությունը, չէ որ

ամեն մի արարք կարող է վերջինը լինել, չկա դեմք, որի դիմագրծերը չջնջվեն՝ երազում հայտնված դիմագծերի պես: Մահկանացուների համար ամեն ինչ անդառնալիի և պատահականության արժեքն ունի: Անմահների մոտ՝ ընդհակառակը, ամեն մի գործողություն (և ամեն մի միտք) անտեսանելի անցյալում կատարվածների արձագանքն է կամ՝ ուշ ապագայում խելահեղության աստիճան կրկնվելիքների հարազատ գուշակումը: Չկա մի այնպիսի բան, որ արտացոլում չլինի՝ մոլորյալ անխոնջ հայելիների մեջ: Ոչինչ մեկ անգամ չի կատարվում, ոչինչ սքանչելիորեն անդարձ չէ: Անմահների համար գոյություն չունեն ոչ էլեգիակա-նը, ոչ խորունկը, ոչ էլ ծիսականը: Հոմերոսն ու ես բաժանվեցինք թանգերի դռների մոտ, կարծեմ միմյանց ցտեսություն չասացինք:

5.

Շրջեցի նոր թագավորություններով, նոր կայսրություններով: 1066 թվականի աշնանը պատերազմեցի Ստամֆորդի կամրջի մոտ, արդեն չեմ հիշում, Harold-ի (որը շուտով իր վախճանը գտավ), թե այն չարագուշակ Harold Hardrada-ի շարքերում, որը նվաճել էր վեց թիզ կամ փոքր-ինչ ավելի անգլիական հող: Hejiria-ի յոթերորդ դարում, Bulag արվարձանում, հստակ ձեռագրով մի լեզվով, որն արդեն մոռացել եմ, մի այբուբենով, որը չգիտեմ, ընդօրինակել եմ Սինդբադի յոթ ճանապարհորդությունները և Պղնձե քաղաքի պատմությունը: Սամարղանդի բանտի բակերից մեկում շախմատ եմ խաղացել: Բիկանիրում և Բոհեմիայում զբաղվել եմ աստղագիտությամբ: 1638 թվականին եղել եմ Կոլոզվարում և ապա՝ Լայպցիգում: Աբերդինում 1714 թվականին բաժանորդագրվել եմ Պոպի «Իլիականի» վեց հատորյակը, գիտեմ, որ հաճախ և մեծ հաճույքով եմ ընթերցել նրա էջերը: Դեռևս 1729 թվականին, ճարտասանության պրոֆեսորի հետ, որի անունը կարծես Ջիան Բատիստա¹ էր, վիճել եմ այդ պոեմի ծագման հարցի շուրջ. նրա ապացույցները ինձ անհերքելի թվացին: 1921 թվականի հոկտեմբերի չորսին ինձ Բոմբեյ տեղափոխող «Պանտա» նավը, Էրիդյան ափերում ստիպված խարխսխ նետեց: Իջա,

¹ Էռնեստո Սաբատոն ասում է, որ Կարտաֆիլուսի հետ «Իլիականի» առաջացման մասին վիճող «ջիանբատիստան» Ջիանբատիստա Վիկոն է. այդ խաղացին պնդում է, թե Հոմերոսը Պլատոնի կամ Աթլլեսի պես խորհրդանշական կերպար է (ծան. հեղ.):

այլ՝ շատ հեռավոր ժամանակների առավոտներ հիշեցի, նույնպես Կարմիր ծովի ափերին, երբ ես հռոմեական տրիբուն էի, և զինվորները հյուծվում էին տենդից, կախարդանքից ու անգործությունից: Արվարձաններում հանդիպեցի զուլալ ջրի ակունքի, սովորությանս համաձայն փորձեցի: Ափով բարձրանալիս փշոտ մի ծառ ձեռքս վիրավորեց: Անսպասելի ցավը շատ ուժգին թվաց ինձ: Զարմացած, անձայն ու երջանիկ դիտեցի դանդաղորեն կազմվող արյան գեղեցիկ կաթիլը: Նորից մահկանացու եմ, կրկնեցի, նորից նման եմ մյուսներին: Այդ գիշեր քնեցի մինչև արշալույս ...Մի տարի անց ստուգեցի այս էջերը: Կարող եմ հաստատել, որ համապատասխանում են ճշմարտությանը, սակայն առաջին գլուխներում, նույնիսկ հաջորդ գլուխների որոշ հատվածներում, կարծես թե ինչ-որ կեղծ բան եմ նշմարում: Դա գուցե պարագայական հատկանիշների չափազանց գործածությունից է գալիս, ձև, որ սովորել եմ բանաստեղծներից, և որը ամեն ինչ կեղծիքով վարակելու հատկություն ունի, քանի որ այդ հատկանիշներն առատ են դիպվածներում, սակայն չեն կարող պահվել նրանց հիշատակման ժամանակ... Սակայն, կարծեմ, գտել եմ ավելի էական մի պատճառ: Կգրեմ, թող ինձ ցնդած համարեն:

Պատմածս անիրական է թվում, քանի որ նրա մեջ խառնվել են ներկու տարբեր մարդկանց հետ կատարված դեպքերը: Առաջին գլխում ձիավորը ուզում է իմանալ Թեբեի պարիսպների կողքով անցնող գետի անունը, Ֆլամինիո Ռուֆոն, որ առաջ քաղաքին տվել էր Հեկատոմպիլուս մականունը, ասում է, որ գետը Եգիպտոսն է, այդ խոսքերից և ոչ մեկը իրենը չի, այլ պատկանում է Հոմերոսին, որ «Իլիականում» հիշում է Թեբեի Հեկատոմպիլուսը, իսկ «Ոդիսականում», Պրոթևսի և Ոդիսևսի բերանով, առանց տարբերություն դնելու, Նեղոսի փոխարեն ասում է Եգիպտոս: Երկրորդ գլխում հռոմեացին, խմելով անմահական ջուրը, հունարեն բառեր է արտասանում, այդ բառերը նույնպես հոմերական են և կարելի է գտնել նավահանդեսի համբավավոր երգի վերջին տողերում: Հետո, խճողված բավիղների պալատում ասում է. «անհասկանալիորեն չընդունեցի ասածս, գրեթե խղճտանք զգացի». այդ բառերն Հոմերոսինն են, որը երբևէ պատկերել է այդ սարսափը: Այդ տարընթերցումներն ինձ անհանգստացրին, այլ շեղումներ, որոնք գեղագիտական էին, թույլ տվեցին ինձ բացահայտել ճշմարտությունը: Այդ շեղումները զետեղված են վերջին գլխում, այնտեղ գրված է, որ պատերազմել եմ Ստամֆորդի կա-

մըրջի մոտ, որ Bülag-ում ընդօրինակել են Սինդբադի ճանապարհորդությունները, որ Աբերդինում բաժանորդագրվել են Պոպի անգլիական «Իլիականը»: Inter-alia¹ կարդացվում է՝ «Բիկանի-րում և Բոհեմիայում զբաղվել են աստղագիտությամբ»: Նշվածներից և ոչ մեկը կեղծ չէ. հատկանշականը այդ դեպքերի առանձնացումն է: Առաջինը, կարծես, հատուկ լինի ռազմիկին, սակայն անմիջապես նկատվում է, որ պատմողին ոչ թե ռազմականն է հետաքրքրում, այլ մարդկային ճակատագիրը: Հաջորդները էլ ավելի հետաքրքրական են: Սովորական ու մութ մի պատճառ ինձ ստիպեց դրանք գրի առնել, գրի առա, որովհետև զգացի նրանց դրամատիկականությունը: Դրանք հռոմեացի Ֆլամինիո Ռուֆոյի շուրթերին դրամատիկ չեն: Դրամատիկ են Հոմերոսի շուրթերին. հետաքրքրական է, որ նա տասներեքերորդ դարում, բյուրավոր դարեր հետո, ընդօրինակել է մի այլ Ոդիսևսի՝ Սինդբադի արկածները, և դա՝ հյուսիսային մի թագավորությունում, որտեղ խոսում են բարբարոս լեզվով, և հայտնաբերել են այն, ինչ շարադրված է «Իլիականում»: Ինչ վերաբերում է Բիկանիո անունը ներառող նախադասությանը, պապ երևում է, որ այն ստեղծվել է ճոռոմ բառեր գործածելու ցանկությամբ տոգորված գրող մարդու կողմից (ինչպես նավերի քարտարանի հեղինակը):

Երբ ավարտը մոտենում է, արդեն չեն մնում հուշերի պատկերները, միայն բառերն են մնում: Տարօրինակ չէ, որ ժամանակը իրար խառնեց ինձ ներկայացնող պատկերները՝ այդքան դարեր ինձ ընկերակցողի կյանքը խորհրդանշող պատկերների հետ: Ես եղել եմ Հոմերոսը, շուտով Ոդիսևսի նման կլինեմ՝ Ոչ ոք. շուտով կլինեմ ինչպես բոլորը՝ կմեռնեմ:

Հետգրություն 1937 թվականի: Նախորդ հրատարակության մեջ կյանքի կոչված մեկնաբանություններից ամենահետաքրքրականը, և ոչ երբեք ամենաքաղաքակիրթը, դոկտոր Նահում Կորդովերոյի թունոտ գրչին պատկանող, աստվածաշնչային «A coat of many colours»² վերնագրով աշխատանքն է (Մանչեստր, 1948): Հարյուր էջանոց աշխատություն է: Այնտեղ նա խոսում է հունական ցենտոնների, լատինական շրջանի ցենտոնների, Բեն Ջոնսոնի, որն իր հայրենակիցներին բնորոշում էր Սենեկայի ասույթներով, Ալեքսանդր Ռոսիի «Virgilius evangelizans»-ի, Ջորջ

¹ Ի միջիայլոց (լատ.):

² Այստեղ՝ լաթակտոր — վերմակ (անգլ.):

Մուրի հնարանքների, էլիոթի և, վերջապես, «հնէաբան ժոզեֆ Կարտաֆիլուսին վերագրված պատմվածքի» մասին: Առաջին գրված խում հայտնաբերում է կարճ մեջբերումներ Պլինիոսից (Historia naturalis, V, 8,) երկրորդում՝ Թոմաս Կունսից (Writings, III, 439), երրորդում՝ Դեկարտի Պիեռ Շանոյին ուղղած նամակից, չորրորդում՝ Բեռնարդ Շոուից («Back to Methuselah», V), այդ գրագողություններից ելնելով՝ եզրակացնում է, որ ողջ փաստաթուղթը պարականոն է:

Իմ կարծիքով եզրակացությունն անընդունելի է: *Եթե ավարտը մոտենում է,* — գրել է Կարտաֆիլուսը, — *արդեն չեն մնում հուշերի պատկերները, միայն բառեր են մնում:* Բառեր, մի կողմ նետված բառեր, խեղանդամ բառեր, ուրիշներին պատկանող բառեր, ահա այն խղճուկ ողորմությունը, որ նրան նետեցին հեռացող ակընթարթներն ու դարերը:

Ի սկզբանե անհնար է թվում, թե Բուենոս Այրեսի արվարձանների մի տխուր կոմպադրիտո, որ քաջության կույր պաշտամունքից բացի այլ արժանիք չունի, Բրազիլի սահմանամերձ՝ ձիերի արոտատեղիներում խորանար և դառնար մաքսանենգների կապիտան։ Այդպես մտածողներին ուզում եմ պատմել Բալվաներա թաղամասում գուցե ոչ մի հիշատակ չթողած, Ռիո Գրանդե դու Սուլում՝ սրա իսկ օրենքով մի կրակոցից մահացած Բենխամին Օտալորայի ճակատագրի մասին։ Տեղյակ չեմ նրա պատմության արկածախնդրական մանրամասնություններին, երբ դրանք հայտնի դառնան, կսրբագրեմ և կլրացնեմ այս էջերը։ Առայժմ այս ամփոփ շարադրանքը կարող է օգտակար լինել։

1891 թվականին Բենխամին Օտալորան տասնինը տարեկան է։ Նեղ ճակատով, մաքուր, անկեղծ աչքերով, ջլապինդ մի երիտասարդ է, դաշույնի դիպուկ մի հարված հայտնի է դարձնում նրա քաջությունը։ Հակառակորդի մահը ամենևին չի անհանգստացնում նրան, ոչ էլ Հանրապետությունից փախչելու անհրաժեշտություն ծնում։ Այդ օրերին ծխական առաջնորդը նրան հանձնում է Ուրուգվայից ոմն Ասեվեդո Բանդեիրային ուղղված մի նամակ։ Օտալորան մակույկ է նստում, թիավարում գիշերային փոթորկի միջով, հաջորդ օրը, չխոստովանված և գուցե չգիտակցված տխրությամբ թափառում է Մոնտեվիդեոյի փողոցներում։ Չի գտնում Ասեվեդո Բանդեիրային. կեսգիշերին մասնակցում է Պասո Մոլինոյի խանութներից մեկում կովարածների միջև ծագած մի վեճի։ Փայլատակում է մի դանակ. Օտալորան չգիտի, թե ով է իրավացի, ինչպես ուրիշներին թղթախաղը կամ երաժշտությունը, այնպես էլ նրան վտանգն է հմայում։ Խառնաշփոթության մեջ կասեցնում է մուգ ցիլինդրով և պոնչոյով մի մարդու դեմ ուղղված կովարածներից մեկի հարվածը։ Հետո իմանում է, որ այդ ցիլինդրով մարդը Ասեվեդո Բանդեիրան է։ (Իմանալուց հետո, միմիայն ինքն իրեն պարտական լինելու համար, Օտալորան պատռում է նամակը)։ Ասեվեդո Բանդեիրան ուժեղ է երևում, բայց այնուամենայնիվ կուզիկի անբացատրելի տպավորություն է թողնում, նրա դեմքում արտացոլվում են հրեան, սևամորթն ու հնդկացին, նրա լրջության մեջ երևում են կապիկն ու վագրը, դեմքի սպին նույնպես մի զարդ է, ինչպես նրա սև ու թավամազ բեղը։ Խմիչքի հետևանքով սկսած սխալ վեճը կտրուկ ավարտ է ունենում։ Օտա-

լորան, միանալով կովարածների քեֆին, խմում է նրանց հետ, և երբ արևն արդեն շատ բարձր էր, նրանց ընկերակցում է մինչև Սիուդադ Վիեխայում գտնվող մի տուն: Տան հողե վերջնաբակում տղամարդիկ դասավորում են ասպազենն ու քնում: Խավարի մեջ Օտալորան այդ գիշերը համեմատում է Նախորդի հետ. այժմ արդեն ամուր հողի վրա է, ընկերական շրջապատում: Բայց կարծես խղճի խայթ է զգում, որ Բուենոս Այրեսին չի կարոտում: Քնում է մինչև աղոթքի ժամը, նրան արթնացնում է հարբած ժամանակ Բանդեիրայի վրա հարձակված կովարածը: (Օտալորան հիշում է, որ այդ մարդը մյուսների հետ մասնակցել էր գիշերային խրախճանքին ու ժխորին, և որ Բանդեիրան նրան նստեցրել էր իր աջ կողքին և խմեցրել): Մարդն հաղորդում է, որ խմբապետը կանչում է իրեն: Միջանցքի վրա դուռ ունեցող գրասենյակի նմանվող մի սենյակում (կողանց դռներով միջանցք Օտալորան երբեք չի տեսել) նրան սպասում է Ասեվեդո Բանդեիրան, կողքին վարդագույն մաշկով և շեկ վարսերով, արհամարհանքը դեմքին պարզ մի կին: Բանդեիրան պատվում է նրան, կրկնում, որ քաջ մարդու տպավորություն է թողել, հյուրասիրում մի գավաթ կոնյակով և առաջարկում, որ մյուսների հետ Հյուսիսից Նախիրը այս կողմ քշի: Օտալորան համաձայնում է, արշալույսին արդեն Տակուարեմբոյի ճանապարհին են:

Օտալորայի համար սկսվում է տարբեր՝ լայնարձակ արշալույսներով, ձիահոտով պարուրված օրերով լեցուն մի կյանք: Այդ կյանքը նոր է, հաճախ դաժան, բայց իր արյանը հարազատ, որովհետև ինչպես այլ ազգեր պաշտում ու նախազգում են ծովը, այնպես էլ մենք (նաև այս խորհրդանիշները հյուսողը) տեսնում ենք ասպանդակների տակ խլացող անհատնում հարթավայրերը: Օտալորան մեծացել էր սայլապանների և սպանդանոցներում աշխատող բանվորների թաղամասում, այդ պատճառով տարին չբոլորած՝ գաուչո է դառնում: Դառնում է վարժ ձիավար, կատարում բոլոր աշխատանքները՝ մորթում է, ճարակորեն բանեցնում պարանն ու բուլեադորան, վարժվում է անքնությանը, ցրտին, փոթորիկներին, արևին, հոտը հավաքում է ճիչով ու սուլոցով: Վարժեցման ընթացքում միայն մի անգամ է տեսնում Ասեվեդո Բանդեիրային, բայց զգում է նրա ներկայությունը, քանի որ լինել «Բանդեիրայի մարդը» նշանակում էր լինել ազդեցիկ և ահարկու, իսկ Բանդեիրայի քաջության համբավն անհասանելի էր: Ինչ-որ մեկը նշում է, որ Բանդեիրան ծնվել է Կուարեյմից այն կողմ՝ Ռիո

Գրանդե դու Սուլում. այդ հանգամանքը, որը պետք է նվաստացնեն նրան գաուչոների աչքում, ընդհակառակը, պանծացնում է, քանզի նրան կապում էր խիտ անտառների, ճահճուտների, անանցանելի և գրեթե անհատնում հեռավորությունների հետ: Օտալորան աստիճանաբար հասկանում է, որ Բանդեիրայի գործերը բազմազան են, և որ գլխավորը մաքսանենգությունն է: Կովարած լինել՝ նշանակում է ծառա լինել: Օտալորան մտքին դնում է բարձրանալ մաքսանենգի աստիճանի: Մի գիշեր երկու հոգի պետք է անցնեին սահմանն ու այնտեղից կանյա բերեին. Օտալորան վեճի է բռնվում նրանցից մեկի հետ, վիրավորում ու փոխարինում նրան: Նրան առաջնորդում է փառասիրությունը, բայց նաև մթին մի հավատարմություն: **Թող տերը ի վերջո հասկանա (մտածում է) որ ես ավելին արժեմ, քան իր արևելցիների ողջ խումբը:**

Մի տարի անց Օտալորան Մոնտեվիդեո է վերադառնում: Շըրջում են արվարձանները, քաղաքը (որ Օտալորային շատ մեծ է թվում), հասնում են խմբապետի տուն, վերջնաբակում տղամարդիկ դասավորում են ասպազենը: Անցնում են օրերը, իսկ Օտալորան չի տեսնում Բանդեիրային: Ահաբեկված ասում են, որ նա հիվանդ է, հաճախ մի սևամորթ թեյնիկն ու մատեն ձեռքին բարձրանում է նրա սենյակը: Մի երեկո Օտալորային են հանձնարարում այդ պարտականությունը: Նա փոքր-ինչ նվաստացած է զգում ինքն իրեն, բայց և միևնույն ժամանակ՝ մի տեսակ գոհունակ է:

Ննջասենյակը մութ է ու թափթփված: Պատշգամբը նայում է դեպի արևմուտք, երկար սեղանին՝ ճիպոտների, գոտիների, զենքերի շեղջեր, նաև մի փայլատ հայելի: Բանդեիրան պառկած է երեսն ի վեր, քնի մեջ տնջում է. նրա մեջ Օտալորան տեսավ արևի վերջին զորությունը: Անկողնու սպիտակ ընդարձակությունը կարծես փոքրացնում, նսեմացնում է նրան: Օտալորան նկատում է ճերմակած մազերը, հոգնությունը, թուլությունը, տարիների թողած ակոսները: Նրան ըմբոստացնում է այն գաղափարը, որ այդ ծերուկն է իրեն հրամայողը: Մտածում է, որ մի հարվածը բավական կլիներ նրան ոչնչացնելու համար: Այդ ժամանակ հայելու մեջ նկատում է ինչ-որ մեկի ներս մտնելը: Շեկ վարսերով կինն է՝ կիսամերկ և բոբիկ ու իրեն նայում է սառը հետաքրքրասիրությամբ: Բանդեիրան նստում է՝ անկողնում, իրար հետևից մատն է խմում և խոսում դաշտային գործերի մասին: Նրա մատները խաղում են կնոջ հյուսքերի հետ: Վերջապես արձակում է Օտալորային:

Մի քանի օր հետո Հյուսիս գնալու հրաման են ստանում: Անվերջանալի դաշտավայրի ինչ-որ տեղում գտնվող կորած մի դոյակ են հասնում: Ոչ մի առվակ, ոչ մի ծառ, կենդանության ոչ մի նշույլ չկա շրջակայքում. արևը խաշում է և առավոտյան, և երեկոյան: Անխնամ կենդանիների համար քարից գոմեր են կառուցված: Այդ խղճուկ հաստատության անունն էլ **Հառաչանք** է:

Կովարածների խմբում Օտալորան լսում է, որ Բանդեիրան շուտով գալու է Մոնտեվիդեոյից: Հարցնում է՝ թե ինչո՞ւ, մեկը բացատրում է, որ իբր գաուչո դարձած ինչ-որ օտարական հրամայելու մեծ ցանկություն ունի: Օտալորան հասկանում է կատակը, բայց և գոհ է, որ այդ կատակն արդեն հնարավոր է: Ավելի ուշ իմանում է, որ Բանդեիրան թշնամացել է իշխանության ներկայացուցիչներից մեկի հետ, և որ սա մերժում է իր հովանավորությունը: Լուրը ուրախացնում է Օտալորային:

Ջենքերով լի արկղեր են հասնում, զարդասենյակի համար՝ արծաթազօծ մի կուժ ու մի տաշտ, ծիրանագույն վարագույրներ. մի առավոտ պոնչոն հագին, թավ մորուքով, տրտում մի ձիավոր է իջնում սարերից: Անունը Ուլպիանո Սուարես է և Ասեվեդո Բանդեիրայի կապանգան է, այսինքն՝ թիկնապահը: Շատ քիչ է խոսում, և նրա առոգանությունը բրազիլական է: Օտալորան չգիտի ինչին վերագրի նրա լռակյացությունը՝ թշնամանքին, արհամարհանքին, թե պարզապես բարբարոսությանը: Գիտի սակայն, որ իր ծրագրերի համար անհրաժեշտ է շահել նրա մտերմությունը:

Հետո Բենխամին Օտալորայի համար ճակատագրական դեր է խաղում վագրի մորթուց կարված արծաթազօծ թամբով սնաբաշ մի կարմրուկ, որ Հարավից բերել է տալիս Ասեվեդո Բանդեիրան: Այդ ձին խմբապետի իշխանության խորհրդանիշն է, այդ պատճառով այն դառնում է նախանձի առարկա տղայի համար, տղան տենչում է նաև շողշողուն վարսերով կնոջը: Կինը, սանձն ու կարմրուկը այն մարդու անկապտելի հատկանիշներն են, որին ինքն ուզում է ոչնչացնել:

Այստեղ պատմությունը բարդանում ու խորանում է: Ասեվեդո Բանդեիրան ահարկու, սատանեկան վարվելակերպով, կեսլուրջ-կեսկատակ հեգնանքով, խոսակցին աստիճանաբար նվաստացնելու կատարյալ վարպետ է: Օտալորան իր բռնած դժվար գործում որոշում է հենց այդ հնարքն օգտագործել: Որոշում է աստիճանաբար փոխարինել Ասեվեդո Բանդեիրային: Ընդհանուր գործերում, վտանգավոր պահերին ձեռք է բերում Սուարեսի ըն-

կերությունը: Նրան է վստահում իր ծրագիրը: Եվ Սուլարեսը խոստանում է իր աջակցությունը: Հետո շատ բաներ են պատահել, բայց ինձ քիչ բաներ է հաջողվել իմանալ: Օտալորան չի հնազանդվում Բանդեիրային, մոռանում, շրջանցում, փոփոխում է նրա հրամանները: Ճակատագիրը կարծես իր դավի մասնակիցն է դառնում և արագացնում դեպքերի ընթացքը: Ինչ-որ միջոցով Տակուարեմբոյի դաշտերում ռիոգրանդեցիների հետ կրակոցներ են փոխանակում: Օտալորան գրավում է Բանդեիրայի տեղն ու հրամայում արևելցիներին: Մի փամփուշտ վիրավորում է նրա հուրը, բայց այդ երեկո Օտալորան **Հառաչանք** է վերադառնում խմբապետի կարմրուկով, և այդ երեկո նրա արյան կաթիլներն ընկնում են վագրի մորթու վրա, և այդ գիշեր նա քնում է վարդագույն մաշկով, շեկ վարսերով կնոջ հետ: Ուրիշ տարբերակներ փոխում են դեպքերի հերթականությունն ու հերքում, թե իբր այդ ամենը նույն օրն է կատարվել:

Սակայն միշտ էլ Բանդեիրան մնում է անվանական խմբապետը: Նա արձակում է հրամաններ, որոնք չեն կատարվում, սակայն Բենխամին Օտալորան, ծուլության, թե կարեկցանքի ինչ-որ զգացմունքից ելնելով, ձեռք չի տալիս նրան:

Վերջին տեսարանը վերաբերում է 1894 թվականի վերջին գիշերվա դեպքերին: Այդ գիշեր **Հառաչանքի** մարդիկ խորոված ոչխարի միս են ուտում և խմում արբեցնող մի ըմպելիք. ինչ-որ մեկը անվերջանալիորեն փորձում է նվագել դժվարահունչ մի միլոնգա: Սեղանագլխին նստած, ամբողջովին հարբած Օտալորան գոռում-գոչում է անընդմեջ, իրեն զգում է յոթերորդ երկնքում, գլխապտույտների այդ բարձունքը նրա նախասահմանված ճակատագրի խորհրդանիշն է: Բանդեիրան, տրտում գոռացողների խմբում, թույլ է տալիս, որ անցնի խրախճանքի ցնծուն գիշերը: Երբ հնչում են տասներկուսի զանգերը, ինչ-որ պարտականություն հիշողի պես վեր է ցատկում տեղից: Թակում է կնոջ սենյակի դուռը: Այ, կարծես սպասելիս լիներ կանչին, անմիջապես բացում է: Կիսամերկ է և բոբիկ: Նվաղող ձայնով խմբապետն հրամայում է.

— Քանի որ դու և պորտենյոն այդքան շատ եք սիրում իրար, հենց հիմա, բոլորի առջև կհամբուրես նրան:

Հակառակվելու դեպքում սպառնում է հաշվեհարդարով: Կինն ուզում է ընդդիմանալ, սակայն երկու տղամարդ բռնում են նրա թևերից և նետում Օտալորայի վրա: Արցունքների մեջ խեղդված՝ կինն համբուրում է նրա դեմքն ու կուրծքը: Ուլալիանո Սուլարեսն

հանում է ատրճանակը: Օտալորան մեռնելուց առաջ հասկանում է, որ սկզբից ևեթ դավաճանել են իրեն, որ ի սկզբանե դատապարտել են մահվան, որ թույլ են տվել սերը, իշխանությունն ու հաղթանակը, որովհետև արդեն մեռած են համարել, որովհետև Բանդեիրայի համար ինքն արդեն մեռած է եղել:

Սուարեսը, գրեթե արհամարհանքով, կրակում է:

Պարտեզներն ավերելուց, սկիհներն ու խորաններն անարգելուց հետո, հոները ձիեր հեծած մտան վանական գրադարան և պատառտեցին, անպատվեցին ու այրեցին բոլոր անհասկանալի գրքերը, երևի վախենալով, թե այդ տառերն իրենց Աստծո՝ երկաթյա կեռ սրի դեմ հայիոյանքներ են պարունակում: Մագաղաթներ ու հիշատակարաններ այրվեցին, բայց խարույկի ընդերքում, մոխիրների մեջ, գրեթե ամբողջապես, պահպանվեց «Civitas Dei»¹—ի տասներկուերորդ գիրքը, որ պատմում է, թե Պլատոնը Աթենքում ուսուցանել է, որ դարերի ընթացքում ամեն ինչ վերագտնելու է իր նախկին դրությունը, և ինքն Աթենքում, նույն հանդիսատեսների առաջ ուսուցանելու է այդ նույն ուսմունքը: Խարույկից փրկված տեքստն արժանացավ հատուկ պաշտամունքի, և ովքեր այդ հեռավոր նահանգում ընթերցեցին և վերընթերցեցին այդ գիրքը, մոռացան, որ հեղինակն այդ ուսմունքը հիշատակել է, որպեսզի հետո այն ավելի հիմնավորապես հերքի:

Մի դար անց Աբվիլիայում առաջնորդի օգնականի պաշտոն վարող Աուրելիանոն տեղեկացավ, որ Դանուբի ափերում «մոնոտոնների» (նաև անուլյարներ անվանվող)՝ նորագույն աղանդը գտնում է, որ պատմությունը մի շրջան է, և որ ոչինչ չկա, որ երբևէ չի եղել և չի լինելու:

Անիվն ու Օձը այդ լեռնային մարգերում դուրս մղեցին Խաչին: Բոլորն ահաբեկված էին, սակայն բոլորն էլ հանգստանում էին այն լուրերով, թե Խուան դե Պանոնիան, որ աչքի էր ընկել Աստծո յոթերորդ հատկանիշի մասին տրակտատ գրելով, պիտի պայքարեր այդ գարշելի հերետիկոսության դեմ:

Աուրելիանոն ատեց այդ նորությունները, մանավանդ վերջինը: Գիտեր, որ աստվածաբանական հարցերում անվտանգ նորություն չկա. հետո մտածեց, որ ժամանակի շրջանաձև տեսությունը շատ անհեթեթ ու զարմանալի է և չի կարող մեծ վտանգ ներկայացնել: (Վտանգավորները ուղղափառության հետ շփոթվող հերետիկոսություններն են): Ճավալին Խուան դե Պանոնիայի մասնակցություն-միջամտությունն էր: Երկու տարի առաջ իր ճոռոմ ու մեծածավալ «De septima affectione Dei sive de aeternitat»²— ով խլել էր Աուրելիանոյի մասնագիտական ոլոր-

¹ «Աստծո քաղաքի մասին» (լատ.):

² «Աստծո յոթերորդ սիրո կամ հավերժության մասին» (լատ.):

տին պատկանող մի թեմա, իսկ հիմա, կարծես թե իրեն պատկաներ ժամանակի խնդիրը, և, հնարավոր է, Պրոկրուստի փաստերով, օձի թույնից էլ վտանգավոր հակաթույներով ուզում էր հերքել անուլարներին... Այդ գիշեր Աուրելիանոն թերթեց գուշակությունների անկման մասին Պլուտարքոսի հին երկխոսությունը, քսանիններորդ դրվագում անհամար արևներով, լուսիններով, ապոլոններով, դիանաներով, պոսեյդոններով անհամար աշխարհների գոյությունը պաշտպանող ստոիկների դեմ ուղղված մի ծաղրական պարբերություն հայտնաբերեց: Գյուտը նա հաջողության նախանշան համարեց և որոշեց կանխել Խուան դե Պանոնիային ու հերքել Անիվի պաշտամունքի հերետիկոսներին:

Ինչպես նրանք, ովքեր կնոջ սերն են որոնում նրան մոռանալու համար, այդպես էլ Աուրելիանոն ուզում էր գերազանցել Խուան դե Պանոնիային ոչ թե նրան վատություն անելու, այլ նրա ներշնչված ատելությունից ձերբազատվելու համար: Աշխատանքի մեջ սիլլոգիզմներ և ամբաստանություններ հնարելով, «negō»¹—ներով, «autem»²—ներով և «nequamquam»³—ներով զբաղված՝ կարողացավ մոռանալ այդ ատելությունը: Միջանկյալ նախադասություններով խճողված, ընդարձակ և գրեթե անհասկանալի պարբերություններ կառուցեց, ուր կարծես անփութությունն ու քերականական սխալն արհամարհանքի բաղկացուցիչ մասը լինեին: Աններդաշնակությունը գործիք դարձրեց: Մտածելով, որ Խուանը անուլարներին մարգարեական հանդիսավորությամբ պիտի ջախջախեր, նրան չնմանվելու համար նախընտրեց ծաղրական ձևը: Օգոստինոսը գրել էր, թե անհավատների շրջանաձև լաբիրինթոսներից ազատվելու միակ ուղիղ ճանապարհը Հիսուսն է: Աուրելիանոն որպես ջանասեր աշակերտ, նրանց համեմատեց Իբսիոնի, Պրոմեթևսի լյարդի, Սիզիփոսի, Թեբեի երկու արև տեսնող արքայի, կակազության, թութակների, հայելիների, արձագանքների, ջորիների և երկանդամ սիլլոգիզմների հետ: (Որպես ոճական զարդանախշ՝ հեթանոսական առասպելները դեռևս պահպանվում էին): Բոլոր գրադարան ունեցողների պես Աուրելիանոն ինքն իրեն մեղավոր էր զգում այն միևնույն վերջ չիմանալու համար, այս հակաճառությունը թույլ տվեց նրան անդրադառնալ մի քանի

¹ Հերքում եմ (լատ.):

² Մյուս կողմից (լատ.):

³ Ոչ մի դեպքում (լատ.)

գրքերի, որոնք կարծես երեսով էին տալիս իր անհոգությունը: Այդպիսով նա կարողացավ ներդնել Օրիգենեսի «De principiis»¹ գործից մի հատված, ուր մերժվում է այն հանգամանքը, որ իբր Հուդա Իսկարիովտացին նորից է ծախելու Տիրոջը, և Պողոսը երուսաղեմում նորից է տեսնելու Ստեփանոսի տառապանքը, ինչպես նաև մի հատված Կիկերոնի «Academica priora»²—ից, ուր սա ծաղրում է բոլոր նրանց, ովքեր քարոզում են, թե մինչ ինքը գրուցում է Լուկուլլոսի հետ, համանման անհամար աշխարհներում անհամար թվով այլ Լուկուլլոսներ և Կիկերոններ անում են միևնույն բանը: Բացի այդ Աուրելիանոն մոնոտոնների դեմ բերեց Պլուտարքոսի հիշատակված տեքստը և իր դժգոհությունն արտահայտեց առ այն, թե իբր հեթանոսի վրա «Lumen naturae»³—ն ավելի մեծ ներազդեցություն է ունեցել, քան Աստծո խոսքը՝ նրանց վրա:

Ինն օր տևեց այդ աշխատանքը, տասներորդ օրը նրան հասավ Խուան դե Պանոնիայի հերքման թարգմանությունը:

Գրեթե ծիծաղելիորեն համառոտ էր. Աուրելիանոն սկզբում արհամարհանքով նայեց, ապա՝ երկյուղած: Առաջին մասը «Թուղթ եբրայեցիներին»—ի վերջին իններորդ գլխի վերջին պարբերությունների կրկնությունն էր, այնտեղ ասվում է, որ Հիսուսը աշխարհի սկզբից ոչ թե բազում անգամներ է նահատակվել, այլ մեկ անգամ և հավիտյան: Երկրորդ մասում հիշատակվում էր հեթանոսների ունայն շատախոսությունների դեմ ուղղված աստվածաշնչյան պատվիրանը (Մատթեոս, 6, 7) և Պլինիոսի յոթերորդ գրքի այն հատվածը, որ հաստատում է, թե ընդարձակ տիեզերքում երկու նույնանման դեմքեր չկան: Խուան դե Պանոնիան ավելացնում էր, որ երկու նույնանման հոգիներ էլ չկան և որ ամենաստոր մեղանչողն անգամ այնքան թանկ է, որքան նրա համար թափված Հիսուս Քրիստոսի արյունը: Մի մարդու արարքը (պնդում էր) ավելի մեծ կշիռ ունի, քան բոլոր ինը համակենտրոն երկինքները, և երազել, թե հնարավոր է կորչել ու վերադառնալ՝ աղաղակող թեթևամտություն է: Ժամանակը չի վերականգնում կորսվածը, հավերժությունն այն պահպանում է դրախտի երանության և դժոխքի կրակի համար: Տրակտատի շարադրանքը հստակ էր,

¹ «Ակիդեների մասին» (լատ.):

² «Առաջին ակադեմիկոսները» (լատ.):

³ «Բնության լույսը» (լատ.):

ընդգրկուն, կարծես շարադրողը որոշակի անձ չլիներ, այլ «ամենայն մարդ» կամ ամբողջ մարդկությունը:

Աուրելիանոն գրեթե ֆիզիկական նվաստացում զգաց: Մտածեց ոչնչացնել կամ փոխել իր սեփական աշխատանքը, հետո քինոտ արժանապատվությամբ, առանց որևէ տառ փոխելու, ուղարկեց Հռոմ: Ամիսներ անց, երբ Պերգամոնի ժողովը հավաքվեց, մոնոտոնների սխալները դատապարտող աստվածաբանը (ինչպես կարելի էր ենթադրել) Խուան դե Պանոնիան էր. նրա կիրթ ու չափավոր հերքումը բավարար եղավ աղանդապետ Էվթուրբիոսին կրակի դատապարտելու: «Այս բոլորն արդեն պատահել է և նորից կպատահի, ասաց Էվթուրբիոսը: Դուք կրակ չեք վառում, վառում եք կրակե մի լաբիրինթոս: Եթե միանային իմ տեսած բոլոր խարույկները, չէին տեղավորվի երկրում, և հրեշտակները կկուրանային: Բազում անգամներ եմ կրկնել այս ամենը»: Հետո գոռաց, քանի որ բոցերն արդեն հասել էին մարմնին:

Անիվը խոնարհվեց Խաչի առաջ¹, բայց Աուրելիանոն և Խուանը շարունակեցին իրենց գաղտնի պատերազմը: Երկուսն էլ մարտնչում էին նույն բանակում, նույն պարզևն էին տեսչում, նույն թշնամու դեմ պատերազմում, սակայն Աուրելիանոն ոչ մի բառ չգրեց, որով բնագոյաբար չձգտեր Խուանին գերազանցելու: Նրա տառապանքներն անտեսանելի էին, եթե բազմաթիվ աղբյուրներն ինձ չեն խաբում, Մինյայի «Patrologia»-ում հավաքված Աուրելիանոյի բազմաթիվ ժողովածուներից և ոչ մեկում չի հիշատակվում «մյուսի» անունը: (Խուանի գործերից պահպանվել է միայն քսան բառ): Երկուսն էլ մերժեցին Կոնստանդնուպոլսի երկրորդ ժողովի բանադրանքները: Երկուսն էլ դատապարտեցին Որդու հավիտենական էությունը մերժող արիաներին: Երկուսն էլ ընդունեցին երկիրը հրեական խորանի պես քառանկյունի համարող Կոսմասի «Topographia christiana»-ի ուղղափառությունը: Դժբախտաբար երկրի չորս ծագերում մի նոր կատաղի աղանդ տարածվեց: Եգիպտոսում կամ Ասիայում (վկայությունները տարբերվում են, և Բոսսեթը չի ուզում ընդունել Հառնաքի պատճառաբանությունները) ծագած այս աղանդը վարակեց արևելյան նահանգները և տաճարներ կանգնեցրեց Մակեդոնիայում, Կարթագենում և Տրիրում: Այն մուլեգին ավերածություններ էր անում

¹ Ռուսային խաչերին երկու թշնամական խորհրդանիշները միահյուսված են և միաձուլված (ծան. հեղ.):

ամենուր. պատմում էին, որ Բրիտանիայի առաջնորդարանում գլխիվայր շուռ էին տվել խաչելության պատկերը, և որ Կեսարիայում Տիրոջ պատկերը փոխարինվել էր հայելիով: Հայելին և լուսան նոր հերձվածողների խորհրդանշաններն էին դարձել:

Պատմությանը նրանք ծանոթ են բազմաթիվ անուններով (հայելականներ, անդնդականներ, կայենականներ), սակայն ամենատարածվածը հիստորիոսներ անվանումն է, որ նրանց տվել է Աուրելիանոս, և որը նրանք ընդունել են խիզախորեն: Փռուզիայում, նաև Դարդանելում նրանց անվանեցին ուրվականներ: Հովհան Դամասկեցին նրանց կոչեց ձևականներ, սակայն արդարացի կլինի հիշել, որ այդ հատվածը էրֆյորդը մերժել է: Աղանդաբան չկա, որ սարսափով չնշի նրանց այլանդակ ավանդները: Բազմաթիվ հիստորիոսներ ճգնավորներ են եղել, ոմանք, Օրիգենեսի նման իրենց խեղանդամել են, ուրիշները բնակվել են գետնի տակ, կոյուղիներում, ոմանք հանել են իրենց սեփական աչքերը, այլոք (Նիտրիայի «նաբուզոդոնոսորները») «արածում էին եզների պես, և նրանց մազերն աճում էին արծիվներիինի պես»: Ինքնաձաղկումներից և խստամբերությունից հաճախ անցնում էին ոճրի, որոշ համայնքներ հանդուրժում էին գողությունը, ուրիշները՝ սպանությունը: Կար նաև սողոմականություն՝ արնապղծություն և անասնապղծություն ընդունողներ: Բուլորն էլ պիղծ էին, ոչ միայն քրիստոնեական Աստծուն էին պղծում, այլ նաև իրենց սեփական դիցարանի գաղտնի աստվածությունները: Սուրբ գրքեր ստեղծեցին, որոնց անհայտացումը ողբացել են գիտնականները: 1658 թվականին սըր Թոմաս Բրաունը գրել է. «Ժամանակը ոչնչացրել է հիստորիոնական հպարտ Ավետարանները, բայց ոչ այն լուսանքները, որոնցով մտրակվեց նրանց Ամբարշտությունը»: Էրֆյորդն ասում է, որ այդ «լուսանքները» (հունական մի հիշատակարանում պահպանված) կորած ավետարաններն են: Այդ անհասկանալի կթվա, եթե հիստորիոսների տիեզերաբանությունը չիմանանք:

Փակ, գաղտնի գրքերում գրված է, որ այն, ինչ կա ներքևում, նույնն է, ինչ կա վերևում, իսկ վերևում եղածը նման է ներքևում եղածին, «Ջոհարում»՝ ստորին աշխարհը բարձրագույնի արտացոլանքն է: Հիստորիոսներն իրենց ուսմունքը հիմնում էին այդ գաղափարի աղավաղման վրա: Երկնքում երկրի ազդեցությունն ապացուցելու համար հիշատակում են Մատթեոս, 6, 12 տողերը

(«Եվ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց») և 11, 12 («Արքայութիւնն երկնից բռնադատի»), ապացուցելու համար, որ մեր ամբողջ տեսածը կեղծ է, նաև հիշատակում են Ա Կորնթ., 13,12 («Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի»):

Գուցե մոնոտոններից վարակված երևակայեցին, որ յուրաքանչյուր մարդ երկու մարդ է, և որ իսկականը մյուսն է՝ երկնքինը: Երևակայեցին նաև, որ մեր գործողություններն ունեն հակադարձ արտացոլանք, այնպես որ եթե մենք արթուն ենք, մյուսը քնած է, եթե շնանում ենք, մյուսն անբիծ է, եթե գողանում ենք, մյուսն առատաձեռն է: Երբ մահանանք, կմիանանք նրան և կլինենք նա: (Այս գաղափարախոսության ինչ—որ արձագանք պահպանվել է Բլուայի մոտ): Ուրիշ հիստորիոններ կարծում էին, որ աշխարհը կհասնի իր վախճանին, երբ լրանա նրա հնարավորությունների թիվը. և նկատի ունենալով, որ կրկնություններ չեն կարող լինել, արդարը պետք է բացառի (կատարի) ամենաստոր գործողությունները, որպեսզի դրանք չպղծեն ապագան և որպեսզի արագանա Հիսուսի թագավորության գալուստը: Ուրիշ աղանդներ մերժեցին այդ դրույթը կարծելով թե, որ աշխարհի պատմությունը պետք է կատարվի յուրաքանչյուր մարդու մեջ: Շատերը Պյութագորասի նման ազատությունն ստանալու համար պետք է բազմաթիվ մարմիններով թափառեն. մի քանիսը՝ պրոտեիկները «միակ կյանքի ընթացքում լինում են առյուծներ, վիշապներ, վարազներ, քուր և ծառ»: Դեմոսթենեսի համար անարատությունն այն ցեխն է, որին ենթարկվում են օրփեական խորհուրդների սկսնակները, նույն համաբանությամբ պրոտեիկներն անարատությունն որոնեցին չարի մեջ: Հասկացան, Կարպոկրատեսի պես, որ ոչ ոք դուրս չի գա զնդակից, մինչև չվճարի վերջին լուման (Ղուկաս, 12,59), այս համարով էլ էին հաճախ խաբում մեղապարտներին՝ «ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել եւս ունիցին» (Հովհաննես, 10,10): Նաև ասում էին, որ չար չլինելը սատանայական հոխորտանք է... Հիստորիոնները բազմաթիվ ու բազմապիսի դիցաբանություններ հնարեցին. մի քանիսը ճգնավորություն քարոզեցին, ուրիշները՝ ցոփություն, բոլորն էլ շփոթեցրին շատերին: Բերենիչի հիստորիոն Թեոպոմբոն մերժեց բոլոր առասպելներն ու ասաց, որ մարդը աշխարհն զգալու աստվածապարզ օրգան է:

Աուրելիանոյի առաջնորդարանի շրջանում գործող աղանդավորները պատկանում էին այն խմբին, որը գտնում էր, թե ժամա-

նակը կրկնություններ չի հանդուրժում, և ոչ մյուս խմբին, որ հաստատում էր, թե ամեն մի գործողություն արտացոլվում է երկնքում: Հռոմեական իշխանություններին հղված տեղեկագրերից մեկում Աուրելիանոն հիշատակել է այդ հանգամանքի տարօրինակությունը: Տեղեկագիրն ընդունող առաջնորդը կայսրուհու խոստովանահայրն էր, բոլորն էլ գիտեին, որ այդ հոգսաշատ պաշտոնը նրան զրկում էր հայեցողական աստվածաբանության ներքին հաճույքներից: Նրա քարտուղարը՝ Խուան դե Պանոնիայի հին օգնականը՝ այժմ նրա հետ թշնամացած, հերետիկոսների քննախույզ բանադրողի համբավ էր վայելում, Աուրելիանոն մի տեղեկագիր էլ ավելացրեց հիստորիկոսների աղանդի մասին, այն աղանդի մասին, որ հանդիպում էր Գենուայի և Աքվիլեասի վանքերում: Շարադրեց մի քանի հատված, և երբ ուզում էր գրի առնել այն դաժան տեսությունը, թե իբր երկու նույնանման պահեր չկան, նրա փետուրը կանգ առավ: Չգտավ պետք եղած բանաձևը: Նոր գաղափարախոսության ազդարարությունները («Ուզում ես տեսնել այն, ինչ չեն տեսել մարդկային աչքերը: Լուսնին նայիր: Ուզում ես լսել, ինչ չեն լսել ականջները: Թռչնի կանչը լսիր: Ուզում ես շոշափել այն, ինչ չեն շոշափել ձեռքերը: Հոդը շոշափիր: Ճշմարիտ եմ ասում, Աստված աշխարհը դեռ չի ստեղծել») ընդօրինակման համար անհարմար էին, չափազանցված և փոխաբերական: Հանկարծ քսան բառից բաղկացած մի նախադասություն հայտնվեց հոգում: Գոհունակությամբ գրի առավ. քիչ անց նրան անհանգստացրեց այն կասկածը, թե ուրիշին է պատկանում այդ նախադասությունը: Հաջորդ օրը հիշեց, որ տարիներ առաջ այդ տողը կարդացել էր Խուան դե Պանոնիայի գրած «Adversus annulares»-ում: Ստուգեց մեջբերումը, այնտեղ էր: Անորոշությունը տանջեց նրան: Փոխել կամ վերացնել այդ բառերը՝ կնշանակեր թուլացնել արտահայտությունը, թողնել՝ կնշանակեր բանագողել իր ատած մարդուն, իսկ նշել աղբյուրը՝ հավասար էր նրան մեղադրելուն: Աղերսեց Աստծո օգնությունը: Երկրորդ մայրամուտից առաջ նրա պահապան հրեշտակը միջին մի լուծում թելադրեց: Աուրելիանոն պահպանեց բառերը, սակայն նրանցից առաջ տեղադրեց հետևյալ ծանուցումները. «Այն, ինչի մասին խոսում են այժմ աղանդապետերը հավատը խարխուլու համար, արդեն ասել է մեր դարում գիտուն մի այր՝ ավելի շուտ թերամտությունից, քան թե մեղավորությունից»: Հետո պատահեց սարսափելին, սպասվածը, անխուսափելին: Աուրելիանոն հար-

կադրված խոստովանեց, թե ով էր այդ այրը, Խուան դե Պանոնիան մեղադրվեց աղանդավորական գաղափարներ ունենալու համար:

Չորս ամիս անց Ավետիսնոյի մի դարբին՝ խաբված հիստորիոների բանդագուշանքներից, որպեսզի իր որդու նմանակը երկընքում թռչի, նրա ուսերից կախեց երկաթե ահագին մի գունդ: Երեխան մահացավ. դեպքի առաջացրած սարսափը Խուանի դատավորներին պարտադրեց անողոք խստություն: Սա չուզեց իր բառերից հրաժարվել և կրկնեց, որ մերժել իր առաջարկը՝ կնշանակեր ընդունել մոնոտոնների նողկալի աղանդը: Նա չէր հասկանում (կամ չէր ուզում հասկանալ), որ մոնոտոնների մասին խոսելը նույնն է, ինչ մոռացված մի բանի մասին խոսելը: Ծերունական համառությամբ գովաբանեց իր հին վեճերի փառահեղ ժամանակները. դատավորները չէին էլ լսում այն, ինչը երբևէ կլանել էր նրանց: Հիստորիոնականության ամենաչնչին մասնիկից անգամ ազատվելու փոխարեն նա փորձեց ապացուցել իր մտքի ուղղափառությունը: Վիճեց այն մարդկանց հետ, որոնց դատավճռից էր կախված իր բախտը և ցուցադրեց ամենամեծ անմտությունը՝ նրանց հետ հմտությամբ և հեգնանքով վիճեց: Հոկտեմբերի քսանվեցին, երեք օր ու գիշերվա վեճերից հետո, նրան խարույկի մեջ նետելու մահով դատապարտեցին:

Աուրելիանոն ներկա էր մահապատժին, քանզի ներկա չլինելը կնշանակեր խոստովանել մեղավորությունը: Տանջանքի վայրը մի բարձրավանդակ էր, որի կանաչ գազաթին խոր խրված մի գերան կար, գերանի շուրջը՝ փայտի բազմաթիվ կույտեր: Մի պաշտոնյա կարդաց դատարանի վճիռը: Ժամը տասներկուսի արևի տակ, վայրենի բղավոցներ արձակելով, դեմքը փռու մեջ թաղած, պառկած էր Խուան դե Պանոնիան: Նա ճանկռտտոմ էր հողը, բայց դահիճները նրան պոկեցին գետնից, մերկացրին և վերջապես կապեցին մեղապարտի սյունին: Ծծմբապատ ծղոտե պսակը հագցրին գլխին, կողքին՝ չարաղետ «Adversus annulares»—ի օրինակներից մեկն էր: Նախորդ գիշերն անձրև էր եկել և փայտը վատ էր վառվում: Խուան դե Պանոնիան սկզբում հունարեն, ապա՝ անծանոթ մի լեզվով աղոթեց: Խարույկն արդեն լափում էր նրան, երբ Աուրելիանոն համարձակվեց բարձրացնել աչքերը: Այրող կայծկլտոցները կանգ առան. Աուրելիանոն առաջին ու վերջին անգամ տեսավ ատելի մարդու դեմքը: Ինչ—որ մեկի դեմքն հիշեցրեց, սակայն չկարողացավ ճշտել, թե ում: Հետո բոցերը ծածկեցին նրան, հետո այրվողը ճչաց, և թվում էր, թե խարույկն է ճչում:

Պլուտարքոսը պատմում է, թե Հուլիոս Կեսարը ողբացել է Պոմպեոսի մահը. Աուրելիանոն չողբաց Խուանինը, սակայն զգաց այն, ինչ կարող էր իր կյանքի մասը կազմող անբուժելի հիվանդությունից բուժվածը զգալ: Աքվիլեասում, Եփեսոսում և Մակեդոնիայում նա ապրեց բազում տարիներ: Կայսրության մռայլ սահմանները, խուլ ու հեռավոր ճահճուտներն ու ճգնավորական անապատները որոնեց, որպեսզի մենակությունն օգներ իրեն իր ճակատագիրն հասկանալու: Մավրիտանական մի խցում վերստին մտածեց Խուան դե Պանոնիայի բարդ դատավճռի մասին և ևս մի անգամ արդարացրեց դատավճիռը: Դժվարը իր մեղադրանքն արդարացնելն էր: Ռուսադոփրոմ կարդաց «ուրացողի մարմնում վառած ջահերի ջահը» արդեն անտեղի քարոզը: Հիբեռնիայում, անտառապատ վանքի խրճիթներից մեկում, մի գիշեր, արշալույսի մոտ, նրան հանկարծակիի բերեց անձրևի շրշյունը: Հռոմեական մի գիշեր վերհիշեց այդպիսի մի շրշյուն: Կեսօրին կայծակն այրեց ծառերը, և Աուրելիանոն կարողացավ մեռնել Խուանի մահով:

Այս պատմության վերջաբանը հնարավոր է միայն փոխաբերությունների միջոցով արտահայտել, քանի որ տեղի է ունեցել երկնային արքայությունում, ուր ժամանակ գոյություն չունի: Գուցե հարկ է ասել, որ Աուրելիանոն զրուցեց Աստծո հետ, և Աստված՝ արհամարհելով կրոնական վեճերը, նրան շփոթեց Խուան դե Պանոնիայի հետ: Սակայն այս միտքն ակնարկում է աստվածային բանականության խառնաշփոթությունը: Ավելի ճիշտ կլինի ասել, որ դրախտում Աուրելիանոն հասկացավ, թե անըմբռնելի աստվածության համար ինքն ու Խուան դե Պանոնիան (ուղղափառն ու հերետիկոսը, ատողն ու ատվածը, մեղադրողն ու մեղապարտը) միևնույն անձնավորություն են:

1922 թվականի հունվարի տասներեքին, «Քարբչ և Լոուենթալ» գործվածքների գործարանից տուն վերադառնալով՝ էմմա Յունցը միջանցքում գտավ Բրազիլից ուղարկված մի նամակ, որը գուժում էր հոր մահը: Սկզբում նրան շփոթեցրին կնիքն ու ծրարը, հետո նրան անհանգստացրեց անծանոթ ձեռագիրը: Ինը թե տասը անփույթ տողեր սպառել էին թուղթը. էմման կարդաց, որ պարոն Մայերը սխալմամբ ընդունել էր վերոնալի ուժեղ դոզա և վախճանվել Բագեի հիվանդանոցում՝ սույն ամսվա երեքին: Լուրն ստորագրել էր հոր հարևաններից մեկը՝ ոմն Ֆեին կամ Ֆաին Ռիո Գրանդեից, չգուշակելով անգամ, որ երկտողն ուղղված է հանգուցյալի դստերը:

Թուղթն ընկավ էմմայի ձեռքից: Սկզբում որովայնում ու ծնկներում թուլություն զգաց, հետո կույր մի մեղք, հետո անիրականի զգացումը պատեց նրան, հետո սարսռաց, հետո երկյուղեց, հետո ցանկացավ, որ հաջորդ օրը շուտ գա: Անմիջապես հասկացավ, որ այդ ցանկությունն անհեթեթ է, քանզի իր հոր մահը աշխարհի վրա միակ կատարվածն ու կատարվելիքն էր: Վերցրեց թուղթն ու սենյակ մտավ: Այնպես գաղտագողի նամակը պահեց դարակում, որ կարծես ինչ—որ ձևով գիտակցելիս լիներ գալիք դեպքերը: Նա արդեն սկսել էր նշմարել, գուցե նա արդեն դարձել էր այն, ինչ հետո պիտի լիներ:

Աճող մթության մեջ, մինչև այդ օրվա վախճանը էմման ողբաց Մանուել Մայերի՝ անցյալի երջանիկ օրերի էմանուել Յունցի ինքնասպանությունը: Գուալեգուայի շրջակայքում գտնվող դոյակի ամառներն հիշեց, հիշեց (փորձեց հիշել) մորը, աճուրդի հանված Լանուսի տնակն հիշեց, հիշեց պատուհանի դեղին վարագույրները, ձերբակալման հրամանն հիշեց, նախատինքը, աշխատավարձի հետ ստացած «գողության համար» գանձապահին մեղադրող անստորագիր նամակներն հիշեց, հիշեց (սակայն դա երբեք էլ չէր մոռանում), որ վերջին գիշերը հայրը երդվել էր, թե գողը Լոուենթալն է: Լոուենթալ, Ահարոն Լոուենթալ, գործարանի նախկին կառավարիչ, այժմ՝ տերերից մեկը: Էմման գաղտնիքը պահում էր 1916 թվականից: Ոչ ոքի չէր հայտնել, անգամ իր ամենամտերիմ ընկերուհուն՝ Էլզա Ուրշտայնին: Գուցե խուսափում էր սովորական թերահավատությունից, գուցե հավատացած էր, որ այդ գաղտնիքը կապ էր իր և հոր միջև: Լոուենթալը չգիտեր, որ էմման գիտեր այդ

պատմությունը: Եվ այդ աննշան դեպքը էմմա Յունցին տալիս էր իշխանության զգացողություն:

Այդ գիշեր էմման չքնեց, և երբ արշալույսը ուրվագծեց պատուհանի ուղղանկյունին, նրա ծրագիրն արդեն պատրաստ էր: Էմման ցանկացավ, որ այդ օրը, որն անվերջանալի թվաց, մյուսների պես լիներ: Գործարանում գործադուլ էր պատրաստվում: Էմման, ինչպես միշտ, դեմ էր ամեն տեսակ բռնությունների: Աշխատանքից հետո, ժամը վեցին էլզայի հետ գնաց մարգարան և լողավազան ունեցող կանանց ակումբ: Արձանագրվեցին, պարտադրված կրկնեց և տառ առ տառ արտասանեց անունն ու ազգանունը, ժպտաց ստուգումը մեկնաբանող անմակարդակ կատակներին: Էլզայի և Քրանֆուսների փոքրի հետ կիրականորա ծրագրի համար ընտրվելիք կինոսրահի մասին վիճեց: Հետո տղամարդկանց մասին խոսեցին, և էմմայի լռությունը բնական էր: Ապրիլին լրանում էր նրա տասնինը տարին, սակայն տղամարդիկ նրան դեռ գրեթե հիվանդագին երկյուղ էին պատճառում... Վերադարձին սուպ ու բանջարեղեն պատրաստեց, շուտ ընթրեց, անկողին մտավ և ինքն իրեն պարտադրեց քնել: Այդպես տաժանելի և սովորական անցավ ուրբաթ տասնչորսը՝ նախօրյակը:

Շաբաթ օրն անհամբերությունն արթնացրեց նրան: Անհամբերությունը և ոչ թե անհանգստությունը, և վերջապես այդ օրն ապրելու յուրահատուկ հանգստությունը: Այլևս հարկավոր չէր ոչ նյութել, ոչ էլ երևակայել՝ մի քանի ժամ հետո վրա կհասներ դեպքերի բնական ընթացքը: «Լա Պրենսայում» կարդաց, որ Մալմյոյի «Նորդստյառնոն»—ը խաբիսխ էր բարձրացնելու հենց այդ գիշեր. զանգահարեց Լոուենթալին, ասաց, որ ուզում է գործադուլի մասին ինչ—որ բան հաղորդել և խոսք տվեց մթնելուն պես հանդիպել: Չայնը դողում էր. դողը համապատասխանում էր նյութած դավին: Այդ առավոտ հիշատակի արժանի ոչ մի այլ դեպք չպատահեց: Էմման աշխատեց մինչև ժամը տասներկուսը և Էլզայի ու Պեռլա Քրանֆուսի հետ ճշտեց կիրականորա զբոսանքի մանրամասները: Ճաշելուց հետո պառկեց և աչքերը փակ վերհիշեց նյութած ծրագիրը: Մտածեց, որ վերջին փուլը առաջինից պակաս սարսափելի էր լինելու, և ինքը հաղթանակի ու արդարության համը էր զգալու: Հանկարծ տագնապած վեր կացավ և վազեց դեպի պահարանի դարակը: Բացեց, Միլտոն Սիլսի նկարի տակ, այնտեղ, ուր թողել էր նախանցյալ գիշեր՝ Ֆաինի ուղարկած նամակն էր: Ոչ ոք չէր կարող տեսած լինել, կարդաց և պատռեց:

Ճշմարտանման պատմել այդ երեկոյի դեպքերը դժվար և գուցե անհիմն լինի: Դժոխային ապրումների հատկանիշներից մեկը անիրականն է, հատկանիշ, որ կարծես թեթևացնում է նրա սարսափները, գուցե և՛ սաստկացնում: Ինչպէս հավանականութիւն հաղորդել մի գործողության, որին գրեթե չհավատաց կատարողն անգամ, ինչպէս վերականգնել այդ հակիրճ քառուրդ, որ այսօր էմմա Յունցի հիշողությունը նզովում և խառնում է: Էմման ապրում էր Ալմագրո թաղամասի Լինիերս փողոցում. ստույգ է, որ այդ երեկո նավահանգիստ գնաց: Գուցե վատահամբավ Պասեո դե Խուլիոյում ինքն իրեն լույսերի մեջ ողողված հայելիներում բազմապատկված տեսավ, սովյալ աչքերում մերկացավ, թեև ավելի տրամաբանական է մտածել, որ սկզբում անտարբեր ունակի աչքերի առաջ թափառեց աննկատ... Երկու թե երեք բարեր մտավ, տեսավ այնտեղի կանանց սովորական առօրյան կամ ամեննկին էլ ոչ սովորական հնարամտությունները: Վերջապես գտավ «Նորդստյառնոնի» մարդկանց: Խուսափեց մի երիտասարդից՝ նա կարող էր քնքշություն ներշնչել, նախընտրեց ուրիշին, որ իրենից ավելի կարճահասակ էր, բռի, որպեսզի չթուլանար աղջկական սարսափը: Տղամարդու հետ կանգ առան մի դռան առաջ, անցան կիսամութ միջանցքով, հետո բարձրացան ծուռումուռ աստիճաններով, անցան մի դահլիճ (ուր Լանուսի իրենց տան պէս վարագույրներ ու ցուցափեղկ կային), հետո անցավ մի նոր միջանցքով, իսկ հետո մի դուռ փակվեց: Օրհասական դեպքերը ժամանակից դուրս են, քանի որ նրանց մեջ կամ անմիջական անցյալը կտրված է ապագայից, կամ էլ նրա բաղկացուցիչ մասերը կարծես զուրկ են հաջորդականությունից:

Ժամանակից դուրս այդ ժամանակում, սարսափելի և անկապ զգացմունքների այդ ապշահար անկարգության մեջ արդյոք էմմա Յունցը գեթ մեկ անգամ մտածեց հանգուցյալի մասին, որն իր այդ զոհաբերության պատճառն էր: Ինձ թվում է, որ այնուամենայնիվ մեկ անգամ մտածեց, և այդ պահին վտանգվեց նրա հուսահատ նպատակի իրագործումը: Մտածեց (չկարողացավ չմտածել), որ իր հայրն իր մորն արել էր այդ սոսկալի բանը, ինչ հիմա իրեն էին անում: Մտածեց թույլ զարմանքով և անմիջապէս պաշտպանվեց գլխապտույտով: Տղամարդը շվեդ կամ ֆինն էր, իսպաներեն չէր խոսում և ընդամենը էմմայի համար գործիք էր, ինչպէս ինքը նրա համար, սակայն էմման ծառայեց հաճույքին, իսկ տղամարդը՝ արդարությանը:

Երբ էմման մենակ մնաց, անմիջապես չբացեց աչքերը: Լուսամփոփի սեղանի վրա տղամարդու թողած փողերն էին, էմման վեր կացավ և անմիջապես պատռեց, ինչպես դրանից առաջ նամակն էր պատռել: Դրամ պատռելը նույնքան ամբարշտություն է, ինչպես հաց նետելը: Էմման անմիջապես զղջաց: Ամբարտավանություն, և այդպիսի օր... Սարսափն անցավ մարմնի տանջանքի և զզվանքի մեջ: Զզվանքն ու տանջանքը կաշկանդում էին, բայց էմման դանդաղորեն վեր կացավ և հագնվեց: Սենյակում վառ գույներն անհետացել էին, մայրամուտի վերջին շողը ծանրանում էր: Էմման կարողացավ աննկատ դուրս գալ, խաչմերուկում արևմուտք գնացող մի ավտոբուս բարձրացավ: Իր ծրագրի համաձայն առջևի նստարաններից մեկն ընտրեց, որպեսզի դեմքը չտեսնեին: Փողոցների միապաղաղ անցուդարձում գուցե հաճույքով ստուգեց, որ կատարվածն իր մեջ ոչինչ չէր փչացրել: Անցավ խուլ թաղամասերով, տեսավ և մոռացավ անմիջապես, իջավ Ուառնեսի փողոցներից մեկում: Գուցե տարօրինակ թվա, բայց հոգնությունը նրան ուժ էր տալիս, քանի որ պարտադրում էր արկածի մանրամասնությունների վրա կենտրոնանալ և ոչ թե թափանցել գործի բնույթի ու հետևանքների մեջ:

Ահարոն Լոուենթալը ընդհանուրի կարծիքով լուրջ մարդու համբավ ուներ, իսկ իր մի քանի մտերիմները նրան ժլատ էին համարում: Ապրում էր մենակ, գործարանի վերնահարկում: Հաստատված խուլ արվարձանում՝ նա վախենում էր գողերից. գործարանի բակում մի մեծ շուն կար, իսկ գրասեղանի դարակում, որ ոչ ոքի համար նորություն չէր, ատրճանակ: Անցյալ տարի պատշաճ սուգով լացել էր կնոջ հանկարծակի մահը, կինը՝ Գաուս աղջկական ազգանվամբ, հետը լավ օժիտ էր բերել, իսկ նրա իսկական կիրքը դրամն էր: Ներքին ափսոսանքով նա գիտակցում էր, որ ավելի ունակ է այն պահպանելու, քան թե շահելու համար: Շատ կրոնասեր էր, նրան թվում էր, թե Տիրոջ հետ գաղտնի մի պայմանագիր ունի, Տերն իր ջերմեռանդության և աղոթքների փոխարեն իրեն ազատում է բարիք գործելուց: Ճաղատ, մեծամարմին, սգազգեստ, մուգ քթակնոցով և շեկ մորուքով՝ պատուհանի մոտ կանգնած սպասում էր բանվորուհի Ֆունցի գաղտնի տեղեկությանը:

Պատուհանից տեսավ, երբ նա հրում էր ցանկապատի դռնակը (որն ինքը հատկապես կիսաբաց էր թողել), տեսավ նրա անցնելը մութ բակով, շան հաչոցից վախենալը: Էմմայի շուրթերը ցածրա-

ձայն աղոթողի շուրթերի էին նման, հոգնած կրկնում էին այն դատավճիռը, որ պարոն Լոուենթալը պետք է լսեր մեռնելուց առաջ:

Դեպքերը չկատարվեցին էմմա Յունցի կանխատեսածի պես: Նախորդ արշալույսից սկսած՝ արդեն մի քանի անգամ երազել էր ինքն իրեն տեսնել ատրճանակը չդողացող ձեռքին, թշվառին իր ստոր մեղքը խոստովանել ստիպելիս և երևան հանելով իր անվեհեր հնարքը՝ թույլ տալ, որ Աստծու Արդարությունը հաղթեր մարդկային արդարությանը: (Չէր ուզում պատժվել՝ ոչ թե պատժից վախենալով, այլ ինքն իրեն Արդարության գործիք համարելով): Հետո կրծքի կենտրոնում մի միակ կրակոց վերջ կտար Լոուենթալի կյանքին: Սակայն դեպքերն այդպես չընթացան:

Էմման, Ահարոն Լոուենթալի դիմաց կանգնած, զգաց ոչ թե հոր վրեժն առնելու, այլ՝ դրա համար իր կրած անարգանքը հատուցելու ստիպողականությունը: Ջանադրաբար նախապատրաստած այդ մանրակրկիտ անպատվությունից հետո չէր կարող չսպանել նրան: Ոչ էլ ձևեր թափելու ժամանակ ուներ: Երկչոտ նստած աթոռին, էմման ներողություն խնդրեց Լոուենթալից և (ինչպես վայել է մատնիչին) հիշեց հավատարմության պարտականությունները, արտասանեց մի քանի անուն, մի քանիսինն ակնարկեց և կարծես երկյուղից հաղթված՝ ձայնը կտրեց: Լոուենթալը դուրս եկավ մի գավաթ ջուր բերելու: Երբ նա՝ հուզմունքի այդպիսի չափազանցությունների հանդեպ ընդհանրապես թերահավատ, բայց այս անգամ՝ ներողամիտ, վերադարձավ ճաշասենյակից, էմման արդեն գրասեղանի դարակից հանել էր ծանր ատրճանակը: Երկու անգամ սեղմեց բլթակը: Ահագին մարմինը, կարծես կրակոցներն ու ծուխը կոտրել էին այն, վայր ընկավ, գավաթը փշրվեց, դեմքը էմմային նայեց զարմացած ու զայրացած, դեմքի բերանը հայիոյեց իսպաներեն ու եբրայերեն. էմման նորից կրակեց: Բակում կապած շունը հաչեց, և հանկարծակի արյունը դուրս ժայթքեց լաիրշ շուրթերից ու կեղտոտեց մորուքն ու զգեստը: Էմման սկսեց իր նախատեսած մեղադրականը. («Հորս վրեժն եմ առնում և ինձ չեն կարող պատժել...»), բայց չավարտեց, պարոն Լոուենթալն արդեն մեռած էր: Էմման այդպես էլ երբեք չիմացավ, թե արդյոք նա հասցրեց հասկանալ:

Հաչոցները հիշեցրին, որ դեռ հանգստանալու ժամանակը չէ: Խառնեց բազմոցը, արձակեց դիակի բաճկոնի կոճակները, փանեց արյունոտած քթակնոցը և դրեց պահարանի վրա: Հետո վերցրեց

հեռախոսն ու կրկնեց այն, ինչ այս և այլ բառերով կրկնելու էր բազում անգամներ: Անհավատալի մի բան է կատարվել... Պարոն Լոուենթալն ինձ իր մոտ կանչեց գործադուլի պատրվակով... Անարգեց, սպանեցի...

Պատմությունն իսկապես անհավատալի էր, սակայն բոլորն էլ ընդունեցին, քանի որ առարկայորեն ճշմարտացի էր: Ճշմարտացի էր էմմա Յունցի տոնը, ճշմարտացի էր ամոթխածությունը, ճշմարտացի էր ատելությունը: Ճշմարտացի էր նաև կատարված անարգանքը, միայն կեղծ էին հանգամանքները, ժամը և մեկ կամ երկու հատուկ անուն:

ԱՍՏԵՐԻՈՆԻ ՏՈՒՆԸ

Եվ թագուհին ծնեց մի որդի,
որին Աստերիոն անվանեցին:
Ապոլոդորո, Գրադարան, III, I

Գիտեմ, որ ինձ համարում են ամբարտավան, գուցե և մարդատյաց, նույնիսկ խենթ: Այդ մեղադրանքները (դրանց հետ, հենց ժամանակը գա, հաշիվներս կմաքրեմ) ծիծաղելի են: Ճիշտ է, որ ես տնից դուրս չեմ գալիս, բայց ճիշտ է նաև, որ տանս դռները (որոնց քանակն անսահման է) ¹ օր ու գիշեր բաց են մարդկանց և նույնիսկ կենդանիների առջև: Թող ցանկացողը ներս գա: Նա այստեղ ոչ քնքշացնող պերճություն կգտնի, ոչ էլ պալատական ճոխ շքեղություն, այլ կգտնի անդորր ու մենություն: Նա կմտնի մի տուն, որի նմանը չկա երկրագնդի ոչ մի անկյունում: (Ստում են նրանք, որոնք հայտարարում են, թե նման բա կա Եգիպտոսում): Թշնամիներս անգամ ընդունում են, որ տան մեջ ոչ մի կահույք չկա: Անհեթեթորեն տարածված է նաև, որ ես՝ Աստերիոնս, կալանավոր եմ: Կրկնեմ արդյոք, որ տանս ոչ մի փակ դուռ չկա, ավելացնեմ արդյոք, որ ոչ մի կողպեք չկա: Բացի այդ, մի երեկո հայտնվելով փողոցում, եթե վերադարձել եմ մթնելուց առաջ, դա նրանից է, որ մարդկանց դեմքերը, նրանց անգույն և բաց ձեռքի պես տափակ դեմքերը վախեցրել են ինձ: Արևն արդեն մայր էր մտել, բայց ինչ-որ երեխայի հուսահատ լացն ու ամբոխի բարձրագույն աղոթքները պարզ դարձրին, որ ճանաչել են ինձ: Մարդիկ աղոթում էին, փախչում, ծնրադրում, ոմանք բարձրանում էին դեպի Երկսայր տաճարը, ուրիշները քար էին հավաքում: Ինչ-որ մեկը կարծեմ ծովը նետվեց: Ջուր չէ, որ մայրս թագուհի է եղել, որքան էլ համեստ լինեմ, չեմ կարող խառնվել ռամիկներին:

Բանն այն է, որ ես անկրկնելի եմ: Ինձ չի հետաքրքրում, թե մի մարդ ինչ կարող է հաղորդել ուրիշ մարդկանց. փիլիսոփայի պես մտածում եմ, որ գրի միջոցով ոչինչ հաղորդելի չէ: Ձանձրալի և տափակ ճղճիմությունները հոգուս մեջ տեղ չեն գրավում. հոգիս մեծ գործեր կատարելու կարողություն ունի, չնայած տառերի տարբերությունները երբեք չեմ կարողացել մտքումս պահել:

¹ Բնագիրն ասում է «տասնչորս», սակայն շատ պատճառներ կան ենթադրելու, որ այդ թիվը Աստերիոնի շուրթերին համարժեք է «անսահմանին»:

Ազնվական մի անհամբերությունն ինձ թույլ չտվեց կարդալ սովորել: Մեկ-մեկ ավստսում եմ, քանի որ գիշերներն ու ցերեկները երկար են:

Իհարկե, զբաղմունքներ՝ որքան ասես: Հարձակվող ցուլի նման վազվզում եմ սալապատ միջանցքներով, մինչև որ գլուխս պտըտվում է, ու վայր եմ ընկնում: Թաքնվում եմ ջրավազանի ստվերում կամ պատի ետևը և պահմտոցի եմ խաղում: Որոշ տանիքներից ցած եմ նետվել և արյունոտել ինձ: Երբեմն քնած եմ ձևանում՝ փակում եմ աչքերս և խոր շնչում: (Մեկ-մեկ իսկապես քնում եմ, մեկ-մեկ աչքերս բացելիս տեսնում եմ, որ փոխվել է օրվա գույնը): Սակայն այդ բոլոր խաղերի մեջ նախընտրում եմ մեկ ուրիշ Աստերիոն խաղալը: Պատկերացնում եմ, որ նա այցելում է ինձ, և ես նրան ցույց եմ տալիս իմ տունը: Չափազանց հարգալից ես ասում եմ նրան. «Այժմ վերադառնալու ենք նախորդ քառուղուն», կամ՝ «Այժմ հասնելու ենք մի ուրիշ բակ», կամ՝ «Ես այդպես էլ գիտեի, որ հավանելու ես այս քիվը», կամ՝ «Այժմ ավազով լցված մի ավազան ես տեսնելու», կամ՝ «Այժմ տեսնելու ես, թե ներքնահարկն ինչպես է երկփեղկվում»: Մեկ-մեկ սխալվում եմ, և երկուսով կուշտ-կուշտ ծիծաղում ենք:

Միայն խաղեր չեմ հնարում, տան մասին էլ եմ մտածում: Տան բոլոր մասերը կրկնապատկվում են՝ մի մասը միանգամայն նման է մյուսին: Գոյություն չունի մի ավազան, մի բակ, մի գուռ, մի օրորոց. գոյություն ունեն տասնչորս (անսահման) օրորոցներ, գուռեր, բակեր, ավազաններ: Տունն աշխարհի չափսերն ունի, ավելի ճիշտ՝ հենց աշխարհն է: Սակայն ավազաններ, բակեր և փոշոտ ու մոխրագույն քարերով կառուցված միջանցքները ձանձրացնում են ինձ, ես փողոց եմ փախչում և դիտում Երկսայրի տաճարն ու ծովը: Ոչինչ չեմ կարողացել հասկանալ, մինչև որ գիշերային մի տեսիլ ինձ հայտնել է, որ ծովերի ու տաճարների քանակն էլ է տասնչորս (անսահման): Ամեն ինչ կրկնվում է, կրկնվում է տասնչորս անգամ, սակայն աշխարհում գոյություն ունեն երկու բան, որոնք կարծես թե չեն կրկնվում. վերևում՝ բազմերանգ արևը, իսկ ներքևում՝ Աստերիոնը: Գուցե ես եմ ստեղծել աստղերն ու արևը և հսկայական տունը, բայց այլևս չեմ հիշում:

Ինը տարին մեկ տուն են մտնում ինը մարդ, որպեսզի ես նրանց ազատեմ ամենայն չարիքից: Քարե միջանցքների խորքից ես լսում եմ նրանց ոտնաձայները կամ նրանց ձայնը և ուրախ-ուրախ

շտապում եմ նրանց ընդառաջ: Արարողությունը մի քանի րոպե է տևում: Չեմ հասցնում ձեռքերս լարյունոտել, երբ նրանք մեկը մյուսի հետևից ընկնում են: Ուր ընկնում՝ այնտեղ էլ մնում են, և նրանց դիակներն ինձ օգնում են, որ ես կարողանամ անհամար միջանցքները իրարից զանազանել: Չգիտեմ, թե ովքեր են նրանք, բայց նրանցից մեկը հոգեվարքի պահին գուշակեց, որ օրերից՝ մի օր կգա նաև իմ փրկիչը: Երանի ինձ փոխադրի մի վայր, որ ալյուրի միջանցքներ ու դռներ չլինեն: Ինքս ինձ հարցնում եմ, թե արդյոք ինչպիսին կլինի փրկարարս: Ցուր կլինի, թե մարդ: Գուցե մարդու դեմք ունեցող ցուր կլինի: Կամ՝ ինձ նման մեկը:

Արշալույսի արևը փայլատակեց պողպատե սրի վրա: Արդեն արյան ոչ մի հետք չէր մնացել:

— Կհավատ՞ա, Արիադնե,— ասաց Թեսևսը: — Մինոտավրոսը գրեթե չպաշտպանվեց:

Մոտավորապես երկու տարի առաջ (նամակը կորցրել եմ) Գանոնը Գուալեգուալյից գրել էր, տեղեկացնելով, թե պատրաստում է Ռալֆ Ուալդո Էմերսոնի «The Past»¹ պոեմի առաջին իսպաներեն թարգմանությունը, իսկ հետգրության մեջ ավելացնում էր, թե մի քանի գիշեր առաջ թոքերի բորբոքումից մահացել է դոն Պեդրո Դամիանը, ում ես գոնե թեթևակի պետք է հիշեի: Ջերմության, տենդի մեջ մարդը վերապրել էր Մասուլերի արյունոտ ճակատամարտը: Լուրը բնական էր, նույնիսկ սովորական, քանի որ դոն Պեդրոն տասնինը թե քսան տարեկանում մարտնչել էր Ապարիսիո Սարավիայի դրոշ տակ: 1904 թվականի հեղափոխության ժամանակ նա կռվարած էր Ռիո Նեգրոյի թե Պայսանդուի էստանսիաներից մեկում: Պեդրո Դամիանը էնտրեռիոսցի էր՝ Գուալեգուալյից, սակայն ընկերների պես թևավորված ու անգիտակ հետևեց նրանց: Կռվեց մի քանի փոքր ընդհարումներում և վերջին ճակատամարտում: 1905 թվականին վերադարձավ հայրենիք և անտրտուն զորավարությամբ վերսկսեց դաշտային գործերը: Որքան գիտեմ՝ այլևս իր նահանգից չհեռացավ: Վերջին երեսուն տարիներն անցկացրեց խորին մենության մեջ, Նիանկայից մեկ թե երկու վերստ հեռավորության վրա մի պահակակետում: Կարծեմ 1942 թվականին՝ այդ միայնության մեջ, ես մի երեկո զրուցեցի նրա հետ (փորձեցի զրուցել նրա հետ): Մռայլ, սակավախոս մարդ էր: Մասուլերի ճակատամարտի որոտներն ու դաժանությունը սպառում էին նրա ողջ պատմությունը: Եվ ինձ համար զարմանալի չէր, որ նա մահվան ժամին վերապրել էր այդ ամենը... Իմանալով, որ այլևս չէի տեսնելու Դամիանին, ուզեցի վերհիշել նրան: Այնքան թույլ է իմ տեսողական հիշողությունը, որ միայն Գանոնի արած մի լուսանկարը հիշեցի: Դեպքը չպետք է տարօրինակ թվա, ես մարդուն տեսել էի մեկ անգամ, 1942 թվականի սկզբին, իսկ պատկերը՝ մի քանի անգամ: Ջանոնն էր ուղարկել այդ նկարը. կորցրել եմ և այլևս չեմ փնտրում: Նույնիսկ վախենում եմ գտնել:

Երկրորդ դրվագը մի քանի ամիս հետո տեղի ունեցավ Մոնտե-վիդեոյում: Էնտրեռիոսցու ջերմությունն ու տենդն իմ մեջ ծնել էին Մասուլերի պարտությունը բացատրող ֆանտաստիկ մի պատմը-

¹ «Անցյալը» (անգլ.):

վածք: Էմիր Ռոդրիգես Մոնեգալը, ում պատմել էի սյուժեն, մի երկտող տվեց այդ ճակատամարտում կռված գնդապետ Դիոնիսիո Տաբարեսին տանելու համար: Գնդապետն ինձ ընդունեց ընթրիքից հետո: Բակում կախված ճոճաթռռիկ պառկած՝ նա քնքշորեն և խառնիփնթոր վերհիշեց հին ժամանակները: Խոսեց տեղ չհասած զինամթերքի, հոգնած ձիերի, անհոգ, տնաբույս զինվորների, լաբիրինթոսների մուտքերին կուտակված մարդկանց, Սարավիայի մասին, որ կարող էր Մոնտեվիդեո մտնել, բայց շրջանցեց՝ «քանի որ գաուչոն վախենում է քաղաքից», մինչև ուները գլխատված մարդկանց, մի պատերազմի մասին, որն ավելի շուտ չարագործի երազանք էր, քան թե երկու կանոնավոր զորքերի ընդհարում: Խոսեց Իլլեսկայից, Տուպամբաեից, Մասուլլերից: Այնքան տրամաբանված ու խոսուն էր նրա պատմելաձևը, որ անմիջապես հասկացա, թե շատ էր կրկնել այդ խոսքերը և վախեցա, որ գրեթե հուշեր չմնային այդ խոսքերից հետո: Ընդհատումներից մեկի ժամանակ կարողացա մեջ գցել Դամիանի անունը:

— Դամիան: Պեդրո Դամիան,— ասաց գնդապետը— մոտս է ծառայել: Այդ լակոտին տղերքը Դայման էին անվանում:— Հետո բարձրաձայն ծիծաղեց և հանկարծ, չգիտեմ, կեղծ թե անկեղծ անհամարություն զգալով՝ կանգ առավ:

Փոխելով ձայնի հնչերանգը՝ ասաց, որ պատերազմը, կանանց պես, փորձում է մարդու տղամարդկությունը և որ ոչ ոք չգիտե ճակատամարտ մտնելուց առաջ իր ով լինելը: Մարդ կարող է ինքն իրեն վախկոտ համարել և լինել քաջ և, ընդհակառակը, խեղճ Դամիանի պես, որ ամեն տեղ պարծենում էր և աջուձախ շռայլում իր «սպիտակ» փողերը, բայց Մասուլլերում վիատվեց: Zumac-ների հետ ինչ-որ կրակոցների փոխանակման ժամանակ ինքն իրեն տղամարդու պես պահեց, սակայն երբ բանակներն հանդիպեցին իրար, և սկսվեց թնդանոթաձգությունը, և ամեն մարդ հասկացավ, որ իրեն սպանելու համար հինգ հազար մարդ են միավորվել, այլ բան կատարվեց: Իր կյանքը ոչխարներ լողացնելով անցկացրած խեղճ տղան, որ այդ հայրենասիրական շարժմանը մասնակցել էր անգիտակցորեն... գուցե անհեթեթ թվա, բայց Տաբարեսի պատմածը շփոթեցրեց ինձ: Կնախընտրեի, որ դեպքերն այդպես չկատարվեին: Մի երեկո, տարիներ առաջ, ծերունի Դամիանից ես ակամա մի տեսակ կուռք էի ստեղծել: Տաբարեսի տարբերակը ոչնչացնում էր նրան: Հանկարծ հասկացա Դամիանի սակավախոսության ու համառ միայնության պատճառը, այն ոչ թե

համեստությունը, այլ ամոթն էր թելադրել: Ջուր կրկնեցի, թե վախից հետապնդված մարդն ավելի բարդ ու հետաքրքրական է, քան պարզապես քաջը: Մտածեցի, որ Լորդ Ջիմն ու Ռազումովն ավելի են արժանի հիշատակի, քան Մարտին Ֆիեռոն: Այո, սակայն Դամիանը, որպես գաուչո և մանավանդ արևելքի՝ գաուչոների առաջ պարտավոր էր Մարտին Ֆիեռո լինել: Տաբարեսի ասածի ու չասածի մեջ առա արտիգիսմո կոչվածի վայրի համը, նշմարեցի, հասա (գուցե անվիճելի) այն գիտակցությանը, թե Ուրուգվայը ավելի պարզունակ է, քան մեր երկիրը, ուստի և՛ ավելի քաջ... Հիշում եմ, որ այդ գիշեր չափազանցված սիրալիրությամբ բաժանվեցինք:

Ձմռանը, իմ ֆանտաստիկ պատմվածքի համար (որ անձարակ համառությամբ չէր ուզում գտնել իր վերջնական ձևը) մեկ կամ երկու հանգամանքի պակասն ինձ գնդապետ Տաբարեսի տուն տարավ: Նրա մոտ էր տարիքոտ մի մարդ՝ դոկտոր Խուան Ֆրանսիսկո Ամարոն, Պայսանդոնից, ինքն էլ Սարավիայի հեղափոխության մասնակիցներից մեկը: Բնականաբար, խոսքը դարձավ Մասոլլերի շուրջ: Ամարոն մի քանի անեկդոտներ պատմեց և հետո, բարձրաձայն մտածելու պես, դանդաղ ավելացրեց.

— Հիշում եմ, գիշերեցինք Սանտա Իրենեյում, մի խումբ միացավ մեզ: Նրանց մեջ էին Ֆրանսիացի մի անասնաբույժ, որ մահացավ գործողության նախօրյակին և էնտրե Ռիոսից եկած ոչխար խուզող մի երիտասարդ, ոմն Պեդրո Դամիան:

Քամահրանքով ընդհատեցի.

— Գիտեմ,— ասացի,— փամփուշտներից վախեցած արգենտինացին:

Լռեցի, երկուսն էլ զարմացած ինձ էին նայում:

— Դուք սխալվում եք, պարոն,— ասաց վերջապես Ամարոն,— Պեդրո Դամիանը մահացավ տղամարդուն վայել մահով: Երեկոյան ժամը չորսն էր: Կարմիրների հետևագործն ամրացել էր բլրի գագաթին, մերոնք՝ նիզակներով զինված, գրոհեցին: Դամիանը բացականչելով առաջ նետվեց, փամփուշտը խրվեց կրծքավանդակի կենտրոնը: Կանգնեց ասպանդակներին, ավարտեց կիսատ բացականչությունը և գետին տապալվեց ու ձիերի ոտքերի տակ մնաց: Մեռած էր, և Մասոլլերի վերջին գրոհը նրա վրայով անցավ: Այդքան քաջ և դեռ քսանն էլ չէր լրացել:

Անկասկած Ամարոն խոսում էր մի այլ Դամիանի մասին, բայց ինչ-որ բան ինձ դրդեց հարցնելու, թե ինչ էր տղայի գոռացածը:

— Հայիոյանքներ,— ասաց գնդապետը, — ուրիշ ինչ կարող էր գոռալ գրոհի ժամանակ:

— Հնարավոր է,— ասաց Ամարոն,— բայց ես լսեցի որ գոչում էր. «Կեցցե Ուրկիսան»:

Լռեցինք: Վերջապես գնդապետը շշնջաց:

— Կարծես ոչ թե Մասուլլերում, այլ մի դար առաջ Կազանչայում կամ Ինդիա Մուերտայում էի կռվում:

Անկեղծ զարմանքով ավելացրեց.

— Այդ զորքերին ես եմ առաջնորդել: Բայց պատրաստ եմ երդ-վելու, որ առաջին անգամ եմ լսում Դամիանի անունը:

Չկարողացանք հիշեցնել:

Բուենոս Այրեսում նրա մոռացկոտությունից ավելի մեծ անակնկալ էր ինձ սպասում: Մի երեկո Միտչելի անգլիական գրախանու-թի ներքնահարկում, էմերսոնի ստեղծագործությունների տասն-մեկ հատորների առջև կանգնած, Պատրիսի Գանոնին հանդիպե-ցի: «The past»-ի թարգմանության մասին հարցրի: Ասաց, որ թարգմանելու մտադրություն չունեն և որ իսպանական գրակա-նությունն այնքան ձանձրալի է, որ էմերսոնի կարիքն ընդհան-րապես չի զգացվում: Հիշեցի, որ այդ թարգմանության մասին նա ինձ գրել էր այն նամակում, ուր հայտնում էր Դամիանի մահը: Դամիանի ով լինելը հարցրեց: Իզուր բացատրեցի: Վախով նկա-տեցի, որ տարօրինակ ձևով է ինձ լսում և սկսեցի խոսել դժբախտ Պոից ավելի բարդ, ավելի տաղանդավոր և անկասկած ավելի ինքնատիպ բանաստեղծ էմերսոնին պարսավողների մասին ծա-վալվող գրական մի վեճի շուրջ:

Մի քանի դեպք ևս պետք է նշեմ: Ապրիլին գնդապետ Դիոնիսիո Տաբարեսից նամակ ստացա. նա արդեն հիշում էր Մասուլլերի ճակատամարտում գրոհողներին մարտի տանող պատանուն, որին իր զինվորները թաղել էին այդ գիշեր բլրի լանջին: Հուլիսին անցա Գուալեգուայու, սակայն Դամիանի տունը չգտա՝ նրան ոչ ոք չէր հիշում: Մահվան ժամին նրա մոտ գտնվող Դիեգո Աբարոային ուզեցի հարցաքննել՝ ձմեռնամուտից առաջ մահացել էր: Ուզեցի Դամիանի դիմագծերն հիշել. ամիսներ հետո հաստատեցի, որ մտաբերածս մոայլ դեմքը հայտնի տենոր Թամբերլիկի դեմքն էր՝ Օթելլոյի դերում:

Այժմ կանցնեմ ամենադյուրին կռահումներին, բայց միևնույն ժամանակ և ամենահամոզիչին. ընդունել երկու Դամիանների գոյությունը, մեկը՝ վախկոտը, 1946 թվականին էնտրե Ռիոսուլ

վախճանված, մյուսը՝ քաջը, որ 1904 թվականին մահացավ Մասուլլերում: Սրա թերությունն այն է, որ չի բացատրում բուն թյուրիմացությունը՝ գնդապետ Տաբարեսի հիշողության անբացատրելի կորուստը, մոռացում, երբ կարճ ժամանակի ընթացքում հիշողությունից դուրս է ընկնում մարդու ինչպես դեմքը, այնպես էլ անունը: (Չեմ ընդունում, չեմ ուզում ընդունել ավելի պարզ մի կռահում, որ ես նիրհած եմ եղել առաջին հանդիպման ժամանակ): Ավելի հետաքրքրական է Ուլրիկ Ֆոն Կյուլմանի հնարած գերբնական կռահումը: Պեդրո Դամիանը, ասում է Ուլրիկը, վախճանվեց ճակատամարտում և մահվան ժամին Աստծուց խնդրեց, որ իրեն վերադարձնի էնտրե Ռիոս: Աստված մի վայրկյան տատանվեց, խնդրողը մեռավ, և մի քանիսը տեսան նրա վայր ընկնելը: Աստված, որ չի կարող փոխել անցյալը, բայց կարող է փոխել անցյալի պատկերները, մահվան պատկերը փոխարինեց ուշաթափության պատկերով և էնտրեռիոսցին տուն վերադարձավ: Վերադարձավ, բայց չպետք է մոռանանք նրա ստվեր լինելը: Առանց կնոջ, առանց ընկերների ապրեց մենության մեջ, ամեն ինչ սիրեց, ունեցավ ամեն ինչ, բայց հեռվից՝ ապակու միջից, «մահացավ», և ինչպես ջուրը ջրի մեջ՝ կորավ նրա անոսր ստվերը: Այս կռահումը արհեստական է, բայց պետք է որ ինձ հուշի իրականում պատահածը (այն, որ ես այսօր ճիշտ եմ համարում), որ միևնույն ժամանակ և ավելի պարզ է, և ավելի անհավատալի: Գրեթե պատահամբ գլխի ընկա: Պիեռ Դամիանիի «De Omnipotentia» տրակտատն էի թերթում՝ «Դրախտի» XXI երգի երկու տողն ուսումնասիրելու համար, երկու տող, ուր հենց նույնացման մի խնդիր է առաջարկվում: Սույն տրակտատի հինգերորդ գլխում Պիեռ Դամիանին, հակաճառելով Արիստոտելին և Ֆրեդեգար Տուրսկուն, գտնում է, որ Աստված կարող է եղածը չեղած դարձնել: Այդ հին աստվածաբանական վեճերը կարդալով՝ սկսեցի հասկանալ դոն Պեդրո Դամիանի ողբերգական պատմությունը:

Ես այսպես եմ մեկնաբանում: Դամիանը Մասուլլերում իրեն վախկոտի պես պահեց, և ամբողջ կյանքը նվիրեց այդ ամոթալի թուլությունը սրբագրելու գործին: Էնտրե Ռիոս վերադարձավ, ոչ մեկի վրա ձեռք չբարձրացրեց, ոչ մեկի դեմքին դանակի հետք չթողեց, քաջի համբավ չորրոնեց, բայց նյանկայի դաշտերում սարերի ամայության դեմ՝ կռվելով՝ պնդացավ: Անգիտակցաբար պատրաստեց հրաշքը: Սրտի խորքում մտածեց. «Եթե ճակատագիրն ինձ մի այլ ճակատամարտ նվիրի, ես նրան արժանի կլի-

նեմ»։ Աննկուն հույսով քառասուն տարի սպասեց, և մահվան ժամին վերջապես հասավ ճակատամարտը։ Թեև պատրանքի ձեվով, բայց հույներն արդեն գիտեին, որ լոկ երազի ստվերներն ենք։ Հոգեվարքի մեջ վերապրեց իր ճակատամարտը և ինքն իրեն տղամարդու պես պահեց, և գրոհի ժամանակ առաջամարտիկի դիրք գրավեց, ու փամփուշտը խրվեց նրա կրծքավանդակը։ Այդպես բուռն կրքի հետևանքով Պեդրո Դամիանը կարողացավ 1946 թվականին մեռնել Մասուլերի ճակատամարտում, որ տեղի էր ունեցել 1904 թվականի ձմռան ու գարնան միջև։

Աստվածաբանական աշխատություններում հերքվում է այն միտքը, թե Աստված կարող է անցյալը ջնջել, սակայն ոչինչ չի ասվում պատճառահետևանքային այն բարդ հարաբերության մասին, այնքան ընդարձակ ու սերտ, որ հնարավոր չի լինի թեկուզ մի աննշան դեպք, որքան էլ անկարևոր, ոչնչացնել առանց ներկան արժեզրկելու։ Փոփոխել անցյալը չի նշանակում փոփոխել մի դեպք, այլ ոչնչացնել բոլոր հետևանքները, որոնք դեպի անսահմանություն են ձգտում։ Այլ կերպ ասած՝ նշանակում է ստեղծել երկու համաշխարհային պատմություն։ Առաջինում (ասենք) Պեդրո Դամիանը մահանում է էնտրե Ռիոսում, 1946 թվականին, երկրորդում՝ Մասուլերում, 1904 թվականին։ Մեր այժմյան ապրած պատմությունն այս է, սակայն մյուսի խափանումն անմիջական չեղավ, և դրա հետևանքը նշածս անհետթություններն են։ Գնդապետ Դիոնիսիո Տաբարեսը վերապրեց բոլոր դրվագները՝ սկզբում հիշեց, որ Դամիանն իրեն վախկոտի պես էր պահել, հետո մոռացավ նրան, հետո հիշեց նրա հերոսական վախճանը։ Աբարկոյի դեպքը պակաս հետաքրքրական չէ. գտնում եմ, որ նա մահացավ Պեդրո Դամիանի մասին շատ բան իմանալու պատճառով։

Իսկ ինձ այդպիսի վտանգ չի սպառնում։ Գուշակել ու գրանցել եմ տրամաբանական մտածողության մի խառնակություն, մարդկանց համար անըմբռնելի մի ընթացք, սակայն այդ երկյուղալի նախապատվությունը թուլանում է մի քանի հանգամանքների պատճառով։ Նախ վստահ չեմ, թե միշտ ճշմարտությունն եմ գրել։ Ինձ թվում է, որ պատմածիս մեջ կեղծ հուշեր կան։ Ինձ թվում է, որ Պեդրո Դամիանը (եթե գոյություն է ունեցել) այլ անուն է կրել, որ ես այդ անվամբ եմ հիշում նրան, որպեսզի մի օր հավատամ, թե այս պատմությունն ինձ Պիեռ Դամիանիի գաղափարներն են ներշնչել։ Նման բան է կատարվում առաջին պարբերությունում հիշատակված պոեմում, ուր անցյալի անդարձության մասին

է խոսվում: 1951 թվականին ինձ կթվա, որ ֆանտաստիկ մի պատմվածք եմ գրել և պատմած կլինեմ իրական մի դեպք. մոտ երկու հազար տարի առաջ միամիտ Վիրգիլիուսին թվում էր, որ մարդու ծնունդն է ազդարարում, մինչդեռ պարզվեց, որ նա գուշակում էր Աստծունը:

Խեղճ Դամիան: Մահը նրան տարձավ քսան տարեկանում, մի տխուր, անիմաստ ու չնչին պատերազմում, սակայն հասավ նրան, ինչին սիրտն էր տենչում, և երկար տևեց տենչանքին հասնելը, և գուցե դրանից մեծ երջանկություն չկա:

DEUTSCHES REQUIEM

«Թեպետ եւ սպանցե զիս, յուսացայց ի նա»

Հոր, գլ. 13, 15

Անունս է Օտտո Դիտրիխ ցուր Լինդե: Նախնիներիցս մեկը՝ Քրիստոֆ ցուր Լինդեն, մահացել է Lorndorf-ի հաղթանակը կանխորոշող հեծելազորային գրոհի ժամանակ: Ուլրիխ Ֆորկեյին՝ մայրական ճյուղի մեծ պապիս, 1870 թվականի վերջերին, Marchen oir-ի անտառներում դարանամուտ ֆրանսիացիներն են սպանել, կապիտան Դիտրիխ ցուր Լինդեն՝ հայրս, աչքի է ընկել 1914 թվականին Նեմուրի շրջափակման ժամանակ և, երկու տարի անց՝ Դանուբի արշավի ընթացքում՝: Իսկ ինչ վերաբերում է ինձ՝ գնդակահարվելու եմ որպես դահիճ և մարդասպան: Դատարանն անաչառ էր, ես ինձ սկզբից ևեթ մեղավոր եմ հայտարարել: Վաղը, երբ՝ բանտի ժամացույցը ժամը ինը հնչեցնի, ես մահ եմ ընդունելու. իմ նախնիների մասին մտածելը բնական է, քանի որ արդեն այնքան մոտ եմ նրանց ստվերին, քանի որ ինչ-որ չափով նրանք եմ:

Դատավճռի ընթացքում (որ բարեբախտաբար կարճ տևեց) չխոսեցի, այդ ժամանակ արդարանալը կազդեր վճռի վրա և կարող էր վախկոտություն համարվել: Այժմ փոխվել է ամեն ինչ. գնդակահարմանը նախորդող գիշերն է, կարող եմ աներկյուղ խոսել: Ներում չեմ հայցում, քանի որ մեղավոր չեմ, բայց հասկացվել եմ ուզում: Ինձ լսել կարողացողները կհասկանան Գերմանիայի պատմությունը և աշխարհի ապագա պատմությունը: Ես գիտեմ՝ իմ օրինակը, որ այսօր հազվադեպ ու զարմանալի է թվում, շուտով սովորական է դառնալու: Վստի մեռնելու եմ, սակայն գալիք սերունդների խորհրդանիշն եմ:

Ծնվել եմ Մարիենբուրգում, 1908 թվականին: Երկու, այժմ գրեթե մոռացված կրքեր՝ երաժշտությունն ու մետաֆիզիկան, ինձ թույլ տվեցին արիաբար և նույնիսկ ուրախությամբ դիմագրավել երկար տարիների դժբախտությունը: Չեմ կարող հիշել բոլոր բա-

Նշանակալից է հեղինակի ամենահամբավված նախնիներից աստվածաբան և հրեագետ, Հեգելի դիալեկտիկական քրիստոնեական ուսմունքը կիրառող Յոհանես Ֆորկեյի (1799-1846) անտեսումը, որի «Պարականոն գրքերի» տողացի տարբերակն արժանացավ Hengstenbeig-ի քննադատությանն ու Thilo-ի և Geseminus-ի գնահատմանը (ծան. խմբ.):

երարներիս, սակայն նաև չեմ կարող մոռանալ երկու անուններ՝ Բրահմա և Շոպենհաուեր:

Բանաստեղծությունն էլ ինձ խորթ չէ, և այս անուններին ուզում եմ ավելացնել ևս մի գերմանական տարածված անուն՝ Ուիլյամ Շեքսպիրինը: Մի ժամանակ հետաքրքրվում էի աստվածաբանությամբ, սակայն այդ ֆանտաստիկ զբաղմունքից (և քրիստոնեական հավատքից) ինձ վերջնականապես շեղեցին Շոպենհաուերը՝ իր ուղղակի պատճառաբանություններով, Շեքսպիրն ու Բրահմսը՝ իրենց աշխարհների բազմազանությամբ: Թող այդ երջանիկ ստեղծագործությունների որևէ հատվածում ընդշանքով ու հիացմունքով պարուրված կանգ առնողն իմանա, որ ես էլ եմ այդտեղ կանգ առել, ես՝ գարշելիս:

1927 թվականին իմ կյանք ներխուժեցին Նիցշեն և Շպենգլերը: XVIII դարի գրողներից մեկը նշում է, որ ոչ ոք չի ուզում պարտական լինել իր ժամանակակիցներին, ես, ինձ ճնշիչ թվացող մի ազդեցությունից ձերբազատվելու համար, «Abrechnung mit Spengler» վերնագրով մի հոդված գրեցի, ցույց տալու համար, որ հեղինակի ֆաուստյան բնագծեր կոչածի անժխտելի հուշարձանը ոչ թե Գյոթեի՝ դրաման է, այլ քսան դար առաջ շարադրված մի պոեմ՝ «De rarum natura»-ն: Այնուամենայնիվ, գնահատեցի պատմության փիլիսոփայի անկեղծությունը, նրա բուն գերմանական հոգին (kerndeutsch) զինվորականը: 1929 թվականին մտա Կուսակցության շարքերը:

Ուսումնառությանս տարիների մասին քիչ բան կասեմ: Դրանք ավելի դժվար էին ինձ, քան ուրիշների համար, որովհետև թեև ինձ չի պակասում քաջությունը, միևնույն ժամանակ հակված չեմ բռնության: Սակայն հասկացա, որ նոր ժամանակների եզրին ենք կանգնած, գուցե համեմատելի Իսլամի կամ Քրիստոնեության սկզբնական շրջանների հետ, և որ այդ ժամանակները նոր մարդիկ են պահանջում: Անհատապես ատում էի ընկերներինս. զուր փորձեցի մտածել, որ մեզ համախմբող բարձր նպատակի առաջ մենք անհատներ չենք:

¹ Ուրիշ ազգեր ապրում են միամտաբար, օդերևութների կամ հանքային քարերի պես՝ իրենց իրենց համար, Գերմանիան բոլորին պարունակող տիեզերքի հայելին է, աշխարհի գիտակցությունը (das Weltbewusstsein): Գյոթեն այդ եկումենիկ հասկացողության տիպարն է: Չեմ քննադատում, սակայն նրա մեջ չեմ տեսնում Շպենգլերի դրույթի ֆաուստյան մարդուն (ծան. խմբ.):

Աստվածաբաններն հաստատում են, որ եթե Տիրոջ ուշադրությունը վայրկյան իսկ շեղվեր իմ աջ ձեռքից, որը գրում է սա, ասես անլույս կրակից կայծակնահար, ոչինչ կդառնար: Ոչ ոք չի կարող լինել, ասում եմ ես, ոչ ոք չի կարող առանց արդարանալու մի գավաթ ջուր փորձել կամ մի պատառ հաց բրդել: Այդ արդարացումը յուրաքանչյուր մարդու համար տարբեր է լինում. ես սպասում էի մեր հավատը փորձող անողոք պատերազմին: Ինձ հերիք էր իմանալ, որ ես դառնալու էի նրա ճակատամարտերի զինվորը: Ինչ-որ ժամանակ երկնչեցի, որ Անգլիայի և Ռուսաստանի վախկոտությունը փչացներ գործը: Բախտը թե ճակատագիրն այլ կերպ հյուսեցին ապագան: 1939 թվականի մարտի մեկի գիշերը Տիլզիտում տեղի ունեցան թերթերում չնշված ընդհարումներ, փողոցում, սինագոգի ետևի մասում երկու փամփուշտ վիրավորեցին ոտքս. հարկավոր էր կտրել այն¹: Մի քանի օր հետո մեր զորքերը Բոհեմիա մտան, երբ զանգերն ավետեցին այդ լուրը, ես, հիվանդանոցում նստած, փորձում էի ինքս ինձ մոռանալ ու թաղվել Շոպենհաուերի գրքերում: Խոշոր ու ճարպիկ մի կատու՝ ունայն ճակատագրիս խորհրդանիշ, տեղավորվել էր պատուհանի եզրին:

«Parerga und Paralipomena»—ի առաջին հատորում վերընթերցեցի, որ մարդը նախասահմանում է ծննդյան օրից մինչև մահվան օրը իրեն պատահելիք բոլոր դեպքերը: Այդպես, բոլոր անհոգությունները մտածված են, պատահական բոլոր հանդիպումները պայմանավորվածություններ են, բոլոր նվաստացումները՝ պատիժ, բոլոր անհաջողությունները՝ խորհրդավոր հաղթանակ, յուրաքանչյուր մահ՝ ինքնասպանություն: Չկա ավելի հմուտ մխիթարանք, քան մտածել, թե մենք ենք ընտրել մեր թշվառությունները. այդ անհատական աստվածաբանությունը մեզ հայտնում է գաղտնի մի համակարգի մասին և մեզ հրաշալիորեն շփոթում աստվածության հետ: Ո՛ր չգիտակցված նպատակն էր (մտածեցի) ինձ այդ երեկո փամփուշտների ու հաշմանդամության գիրկը մղողը: Իհարկե, ոչ թե պատերազմի վախը՝ ես այդ լավ գիտեի, այլ ավելի խոր մի բան: Կարծես, վերջապես հասկացա: Կրոնի համար մեռնելն ավելի հեշտ է, քան այն կատարելապես ապրելը. եփեսոսում գազանների դեմ կռվելն ավելի հեշտ է (հա-

¹ Ասում են. ո՞ր այդ վերքի հետևանքները շատ լուրջ են եղել (ծան. խմբ.):

գնրանվոր անդեմ մարտիկներ են մարտնչել), քան Պողոս լինելը՝ Հիսուսի ծառան, մարդու մի արարքն ավելի փոքր է, քան նրա ամբողջ կյանքը: Ճակատամարտն ու փառքը հեշտություններ են: Նապոլեոնի արածից ավելի դժվարը Ռասկոլնիկովինն է: 1941 թվականի փետրվարի յոթին ինձ կարգեցին Tarnoitz—ի գերինների ճամբարի փոխտնօրեն:

Պաշտոնն ինձ հաճելի չէր, սակայն երբեք անբարեխիղճ չեղա: Վախկոտը սրերի մեջ է փորձվում, բարեգութն ու գթասիրտը բանտերի և այլոց ցավերի քննությունն է որոնում: Ներքուստ նացիզմը բարոյական ակտ էր նշանակում՝ ձերբազատվել հին, ապականված մարդուց՝ նորը ձեռք բերելու համար:

Ճակատամարտում, կապիտանների գոռում-գոչյունների և ընդհանուր եռուզեռի մեջ, այդ փոփոխությունը սովորական բան է, այդպես չէր անանուն բանտում, ուր հին քնքշանքներով մեզ փորձության է ենթարկում դարանակալ կարեկցանքը: Ջուր չեմ գրում այս բառը. բարձրագույն մարդու հանդեպ զգացած կարեկցանքը: Ջրադաշտի վերջին մեղքն էր: Երբ Բրեզլոյից մեզ մոտ տեղափոխեցին հայտնի բանաստեղծ Դավիդ Երուսաղեմին, (խոստովանում եմ) քիչ մնաց ես էլ մեղանչեի:

Հիսուն տարեկան մարդ էր: Աղքատ, հալածված, մերժված, անարգված, իր հանճարը նվիրել էր երջանկությունը երգելուն: Որքան հիշում եմ Ալբերտ Ջոյերգելը «Dichtung der Zeit»—ում նրան համեմատում է Ուիտմենի հետ: Համեմատությունը հաջող չէ. Ուիտմենը տիեզերքն ընկալում է ընդհանուր առմամբ, գրեթե անտարբերությամբ, կարծես այն նախապես իր մեջ լինի: Երուսաղեմը մանրամասն սիրով հրճվում է ամեն ինչի համար: Նա երբեք չի թվարկում, մանրամասն ցանկեր չի կազմում: Դեռևս կարող եմ The lang «Վագրերի նկարիչ» վերնագրված խորունկ պոեմից բազմաթիվ հեքզամետրեր հիշել, պոեմ, որ կարծես լցված լինի վագրերով, որ կարծես ծանրաբեռնված ու կիսված լինի շեղակի ու լռակյաց վագրերով: Նմանապես չեմ կարող մոռանալ Rosenkrantz—ը խոսում է «Հրեշտակի հետ» մենախոսությունը, ուր XVI դարի լոնդոնցի մի վաշխառու մահվան ժամին ապարդյուն փորձում է քավել իր մեղքերը, առանց կասկածելու, որ իր կյանքի գաղտնի արդարացումը իր հաճախորդներից մեկին (որին տեսել է մի անգամ և չի էլ հիշում) Շեյլոկի կերպարը ներշնչելն է: Անմոռանալի աչքերով, մուգ մազերով, գրեթե սև մորուքով մի մարդ՝ Դավիդ Երուսաղեմը սաֆարադի հրեայի տիպարն է, թեև

պատկանում էր չարամիտ ու նողկալի ակենազիմների ցեղին: Նրա հետ խիստ վարվեցի. թույլ չտվեցի, որ կարեկցանքն ու փառքը մեղմացնեին ինձ: Տարիներ առաջ հասկացել էի, որ աշխարհում չկա ոչինչ, որն իր մեջ չպարունակի Դժոխքի սերմը. մի դեմք, մի բառ, մի կողմնացույց, ծխախոտների մի գովազդ՝ եթե չմոռացվեն, կարող են գծվեցնել մարդուն: Միթե չէր գծվել այն մարդը, որ միշտ Հունգարիայի քարտեզն էր երևակայում: Որոշեցի այս սկզբունքը կիրառել մեր տան վարքի ռեժիմում և...¹

1942 թվականի վերջերին Երուսաղեմը խելքը թոցրեց, 1943 թվականի մարտի մեկին կարողացավ ինքնասպան լինել²:

Զգիտեմ, Երուսաղեմն արդյոք հասկացավ, որ ես նրան ոչընչացրել էի իմ կարեկցանքը ոչնչացնելու համար: Իմ աչքերի առաջ նա մարդ չէր, ոչ էլ հրեա, դարձել էր իմ հոգու նողկալի մի մասի խորհրդանիշը: Ես ապրեցի նրա հոգեվարքը, ես նրա հետ մահացա, ես ինչ-որ ձևով կործանվեցի նրա հետ, այդ պատճառով անողորք եղա:

Մինչ այդ մեր գլխավերևում պտտվում էին երջանիկ պատերազմի հսկայական օրերն ու գիշերները: Մեր շնչած օդի մեջ սիրո նման մի բան կար: Արյան մեջ զարմանք ու խանդավառություն կար, կարծես ծովը հանկարծ մոտիկացել էր: Այդ տարիներին ամեն ինչ ուրիշ էր, նույնիսկ երազի համը: (Ես գուցե երբեք կատարելապես երջանիկ չեմ եղել, սակայն, և դա հայտնի բան է, դժբախտությունը կորուսյալ դրախտներ է պահանջում): Չկա մարդ, որ չուզենա հասնել կատարյալին, այսինքն՝ մարդու բոլոր հնարավոր փորձերի գումարին, չկա մարդ, որ այդ անսահման ժառանգության մի մասի կորստից չվախենա: Բայց իմ սերունդն ունեցել է ամեն ինչ, քանզի սկզբում նրան տրվել է հաղթանակը, հետո միայն պարտությունը:

¹ Այստեղ անհրաժեշտ է եղել մի քանի տող բաց թողնել (*ծան.յմբ.*):

² Երուսաղեմի անունը չի հանդիպում ոչ Ջոյերգելի ստեղծագործություններում, ոչ էլ՝ արխիվում: Գերմանական զրականության պատմություններում էլ չի հիշատակված: Չեմ կարծում, սակայն, որ կերպարը մտացածին լինի, «Tornowitz»-ում, Օտտո Դիտրիխ ցուր Լինդեի հրամանով, բազմաթիվ հրեա մտավորականներ են տանջվել, նրանց մեջ՝ դաշնակահարուհի էմմա Ռոզենցվայգը: «Դավիդ Երուսաղեմը» գուցե միացյալ խորհրդանիշ է: Պատմում են, որ նա մահացել 1943 թվականի մարտի մեկին, 1939 թվականի մարտի մեկին Տիլզիտում վիրավորվեց հեղինակը (*ծան.յմբ.*):

1942 թվականի հոկտեմբերին, թե նոյեմբերին, եգիպտական ավազներում, Ալամեինի երկրորդ ճակատամարտում մահացավ եղբայրս՝ Ֆրիդրիխը, մի քանի ամիս հետո օդային ռմբակոծության մեջ ավերեց մեր պապենական տունը, 1943 թվականի վերջերին մեկ ուրիշն ավերեց իմ լաբորատորիան: Ընդարձակ մայրցամաքներից հալածված Երրորդ ռայխը մեռնում էր, իր բռնկեցը՝ բոլորի դեմ էր, և բոլորի բռնկեցը՝ իր դեմ: Այդ ժամանակ տարօրինակ մի բան կատարվեց, որ ինձ այժմ է միայն հասկանալի թվում: Ես ինձ ունակ էի համարում գայրույթի գավաթը միանգամից ըմպելու, բայց ինձ կասեցրեց անսպասելի մի համ՝ երջանկության խորհրդրդավոր և գրեթե սարսափելի համը: Տարբեր բացատրություններ փորձեցի, ոչ մեկը չբավարարեց: Մտածեցի. պարտությունն ինձ գոհացնում է, որովհետև ավարտ է, և ես հոգնել եմ: Մտածեցի. պարտությունն ինձ գոհացնում է, որովհետև կատարվել է, որովհետև անհամար կապերով միացած է բոլոր ներկա, անցյալ և գալիք դեպքերի հետ, որովհետև իրական մի դեպք չընդունելը կամ մերժելը նշանակում է մեղանշել տիեզերքի առաջ: Այս մտքերից հետո վերջապես հանգեցի ճշմարտության:

Ասում են, որ յուրաքանչյուր մարդ ծնվում է կամ արիստոտելյան կամ պլատոնական: Դա նույնն է, ինչ ասել, թե չկա ոչ մի վերացական վեճ, որը չլինի Արիստոտելի և Պլատոնի ընդդիմախոսության մի պահը. դարբերի ընթացքում փոփոխվում են անունները, բարբառները, դեմքերը, բայց չեն փոխվում հավերժական հակոտնյաները: Ժողովուրդների պատմությունն էլ ունի գաղտնի մի շարունակականություն. Երբ Արմինիոնի ճահճուտներում զբլխատվում էին Վարոյի գորախմբերը, չգիտեր, որ գերմանական կայսրության նախահայրն էր դառնալու Լութերը՝ Աստվածաշնչի թարգմանիչը, չէր պատկերացնում, որ իր գաղտնի նպատակն էր Աստվածաշունչն ընդմիջտ ոչնչացնող մի ժողովուրդ կոփելը. 1758 թվականին մոսկովյան մի փամփուշտից սպանված Քրիստոֆ ցուր Լինդեն ինչ-որ կերպ նախապատրաստեց 1914 թվականի հաղթանակները: Հիտլերին թվաց, որ մի երկրի համար է պայքարում, բայց բոլորի համար՝ պայքարեց, նույնիսկ նրանց համար, ում ատեց և ուզեց ոչնչացնել: Ոչինչ, որ իր ես-ն այդ չգիտակցեց, իր արյունն ու կամքը գիտակցում էին: Աշխարհը մեռնում էր հրեականությունից և հրեականության այն հիվանդությունից, որ Հիսուսի հավատ է կոչվում. մենք սովորեցրինք բռնության ու սրի հավատը: Այդ սուրն ապանում է մեզ. և մենք կարող ենք համե-

մատվել այն կախարդի հետ, որ մինչև իր կյանքի վերջին օրերը թափառում էր իր իսկ հյուսած բավիղում, կամ Դավիդի հետ, որ դատեց ու մահվան դատապարտեց մի անծանոթի և հետո լսեց Հայտնությունը: Դու ես այդ մարդը: Նորը կառուցելու համար շատ բան պետք է ոչնչացվի, հիմա գիտենք, որ Գերմանիան դրանցից մեկն էր: Մեր կյանքից ավելի թանկ բան ենք զոհաբերել, զոհաբերել ենք մեր երկրի բախտը: Թող ուրիշներն հայիոյեն ու ողբան, ես հրճվում եմ՝ գիտակցելով, որ մեր դերը շրջանակաձև ու կատարյալ էր:

Աշխարհին տիրել է անգութ մի ժամանակաշրջան: Մենք ենք պատրաստել, մենք, որ արդեն նրա զոհն ենք: Ինչ կարևոր է. թող Անգլիան լինի մուրճը, իսկ մենք՝ սալը: Կարևորն այն է, որ բռնությունը տիրի և ոչ թե քրիստոնեական երկչոտ ծառայամտությունը: Եթե հաղթանակը, անարդարությունն ու երջանկությունը Գերմանիայի համար չեն, թող ուրիշ ազգերի համար լինեն: Նույնիսկ, եթե մեր տեղը դժոխքը լինի, թող երկինքը գոյություն ունենա:

Դեմքս եմ դիտում հայելու մեջ, իմանալու համար, թե ով եմ ես, թե ինչպես կպահեմ ինձ մի քանի ժամ հետո, երբ դեմառդեմ կանգնեմ վախճանի առջև: Մարմինս կարող է վախենալ, ես՝ երբեք:

ԶԱՀԵՐԸ

Բուենոս Այրեսում Զահերը քսան սենթանոց մի հասարակ մետաղադրամ է. դանակի կամ սրիչի սայրերով խզբզած են N և T տառերն ու երկու թիվը, հակառակ կողմում փորագրված է 1929 թվական: (Գուգերեթում, XVIII դարի վերջերին Զահերը վագր էր, Խավայում՝ Սուրաքարթայի մզկիթի բնակիչ մի կույր, ում քարկոծել էին հավատացյալները, Պարսկաստանում՝ աստղադիտակ, որ Նադիր Շահը նետել տվեց ծովի խորքերը, Մահդիի բանտերում 1892 թվականին՝ գլխաշորի կտորով փաթաթված կողմնացույց, որին ձեռք էր տվել Ռուդոլֆ Կարլ Ֆոն Ալադինը, Կորդովայի մզկիթում Զոթենբերգի վկայությամբ՝ հազար երկու հարյուր սյուներից մեկի մեջ գտնվող մարմարե մի շերտ, Թեթուանի սինագոգում՝ վիրապի հատակը): Այսօր նոյեմբերի տասներեքն է. Զահերն իմ ձեռքն ընկավ հունիսի յոթի արշալույսին, առաջվանը չեմ, բայց դեռ կարողանում եմ հիշել, գուցե և պատմել պատահածը: Դեռ գուցե և մասամբ Բորխեսն եմ:

Հունիսի յոթին մահացավ Տեոդելինա Վիլլարը: 1930 թվականին նրա լուսանկարները հեղեղեցին բոլոր թերթերը, գուցե այդ առատությունից էր, որ նրան գեղեցիկ համարեցին, սակայն, իհարկե, ոչ բոլոր պատկերներն են հաստատում այդ կարծիքը: Բացի այդ, Տեոդելինա Վիլլարը ոչ թե գեղեցիկն, այլ կատարյալն էր ձգտում: Հրեաներն ու չինացիները կյանքի յուրաքանչյուր հանգամանքի համար մշակել են խստագույն վարքի կանոններ. Միշնահում կարելի է կարդալ, որ երբ սկսվում է շաբաթ օրվա արշալույսը, դերձակը չի կարող փողոց դուրս գալ ասեղը ձեռքին, Ծեսերի գրքում ասված է, որ հյուրն առաջին գավաթն ընդունելիս պետք է լուրջ տեսք ընդունի, իսկ երկրորդի ժամանակ՝ ունենա հարգալիր ու երջանիկ հայացք: Տեոդելինա Վիլլարն ինքն իրեն ենթարկում էր համանման, բայց ավելի բծախնդիր խստամբերության: Կոնֆուցիոսի աշակերտի կամ թալմուդիստի պես նա որոնում էր յուրաքանչյուր գործողության կատարելությունը, սակայն նրա ջանքերն ավելի դժվարին և հիացման արժանի էին, քանի որ իր հավատամքի չափանիշներն հավերժ չէին, այլ կախված էին Փարիզի կամ Հոլիվուդի քմայքներից: Տեոդելինա Վիլլարը հայտնվում էր պատշաճ վայրերում, պատշաճ ժամերին, պատշաճ հանդերձանքով, պատշաճ անփութությամբ, սակայն անփութությունը, հանդերձանքը, ժամերն ու վայրերը գրեթե ան-

միջապես սպառվում էին և կարող էին ծառայել (Տեղեկինա Վիլլարի ասելով) որպես քաղքենության խորհրդանիշ: Նա Ֆլոբերի պես բացարձակն էր որոնում, բայց բացարձակը վաղանցուկի մեջ: Նրա կյանքն օրինակելի էր, սակայն ներքին մի հուսահատություն մաշում էր նրան: Ինքն իրենից խուսափելու համար հաճախակի դիմում էր կերպարանափոխությունների, նրա վարսերի գույնն ու սանրվածքի ձևերը համբավավոր անկայունություն էին վայելում: Փոխում էր նաև ժպիտը, մաշկը, աչքերի ձևը: 1932 թվականից ամեն ինչ մի կողմ դնելով՝ սկսեց նիհարել... Պատերազմը ստիպեց շատ բաների մասին մտածել: Փարիզն ընկել էր գերմանացիների ձեռքը, ինչպես պիտի հետևեր մոդային: Մի օտարական, որ երբեք հավատ չէր ներշնչել, ի չարը գործադրելով նրա միամտությունը, նրան ծախեց լայնեզր գլխարկներ. մի տարի հետո տարածվեց, որ այդ այլանդակությունները երբեք չէին գործածվել Փարիզում, ուստի և գլխարկներ չէին, այլ ոչ ոքի կողմից չհաստատված անթույլատրելի քմահաճություն: Դժբախտությունները միայնակ չեն գալիս. դոկտոր Վիլլարը հարկադրված տեղափոխվեց Արաոս փողոցում գտնվող մի բնակարան, իսկ իր աղջկա դիմանկարները մաշկային հեղուկների և ավտոմեքենաների հայտարարությունները զարդարեցին: (Այն հեղուկների, որ շատ էր գործածում և այն ավտոմեքենաների, որ արդեն չուներ): Նա գիտակցում էր, որ իր արվեստի կատարելությունը մեծ հարստություն է պահանջում, բայց նախընտրեց ամփոփվել իր մեջ: Բացի այդ, ցավալի էր մրցել չնչին ու դատարկ աղջնակների հետ: Արաոսի զազրելի բնակարանը շատ ծանր նստեց նրա վրա: Տեղեկինա Վիլլարը հունիսի վեցին սխալ գործեց՝ մեռնելով Հարավային թաղամասում: Խոստովանեմ արդյոք, որ արգենտինյան ամենաանկեղծ կրքից՝ սնոթիզմից մղված, ես սիրահարվել էի նրան, և նրա մահն ինձնից արցունքներ կորզեց: Ինչպես արդեն ընթերցողը կարողացավ հավանաբար գուշակել:

Հուղարկավորությունների ժամանակ, ապականման աստիճանական զարգացման շնորհիվ, հանգուցյալը վերստանում է իր նախորդ դեմքերը: Հունիսի վեցի խառնաշփոթ գիշերվա ընթացքում մի պահ Տեղեկինա Վիլլարը հրաշալիորեն դարձավ այն, ինչ եղել էր քսան տարի առաջ՝ նրա դիմագծերը ձեռք բերին խրոխտություն. հարստության, երիտասարդության, ինքն իրենից մակարդակ ներկայացնելու գիտակցության, երևակայության պակասի, սահմանափակության, հիմարության տված իշխանությունը:

Մոտավորապես այսպես մտածեցի. ինձ անհանգստացնող այդ դեմքի տարբերակներից և ոչ մեկը դրա պես արժանի չի հիշատակվելու, ուստի նախընտրելի է, որ վերջինը լինի, քանի որ նաև առաջինն էր: Երբ դուրս եկա՝ նրա մարմինը ծաղիկների մեջ անկենդան թողած, նա կարծես մահվան հանդեպ ունեցած արհամարհանքն էր կատարելագործում: Առավոտվա ժամը երկուսն էր:

Դրսում ցածր և միհարկանի տների շարքերը գիշերվա հատուկ լռության ու սովերի մեջ ստացել էին վերացական տեսք: Գրեթե կարեկցանքով, անանձնականորեն հարբած, թափառեցի փողոցներում: Չիլի և Տակուարի խաչմերուկում բաց սրճարանի հանդիպեցի: Ի դժբախտություն ինձ՝ սրճարանում երեք հոգի տրուկո էին խաղում:

Օքսիմորոն կոչված պատկերի մեջ բառը լրացվում է մակդիրով, որը կարծես հակասում է բառի բուն իմաստին. այսպես, գնոստիկները խոսում էին խավար լույսի, ալքիմիկոսները՝ սև արևի մասին: Դուրս գալը Տեոդելինա Վիլլարին տրված վերջին այցելությունից և այդ սրճարանում մի կանյա խմելը, *օքսիմորոն*ի պես մի բան էր. գոեհկությունն ու հեշտությունը գայթակղեցին ինձ (թղթախաղի հանգամանքը շեշտում էր հակադրությունը): Նարնջի կանյա պահանջեցի, մանրի հետ Ջահերը տվին, թեթև հայացք նետեցի, երբ դուրս եկա, գուցե արդեն ջերմություն ունեի: Մտածեցի, որ չկա մետաղադրամ, որ պատմության՝ ու գրականության մեջ մերթընդմերթ փայլատակող մետաղադրամների խորհրդանիշը չլինի: Մտածեցի Քարոնի՝ Բելիսարիոյի խնդրած դրամի մասին, Հուդայի երեսուն արծաթների, Լաիս կուրտիզանուհու դրահմանների, Եփեսոսի ննջեցյալներից մեկի առաջարկած մետաղադրամի, թղթե շրջանակներ դարձող «1001 գիշերվա» կախարդական ու փայլուն մետաղադրամների, Իսահակ Լաքեդեմի անհատնում դինարի, վաթսուն հազար արծաթների՝ Էպոսի յուրաքանչյուր տողի համար մի հատ, որ Ֆիրդուսին թագավորին էր վերադարձրել, որովհետև ոսկուց չէին, այն ոսկեդրամի մասին, որ Աքաբը կայմի վրա էր խփել տվել, Լեոպոլդ Բլումի միակողմանի ֆլորինի, այն լուիդորի մասին, որ Վարնեգեի շրջակայքում փախուստի դիմած Լյուդովիկոս XVI-ին մատնեց, քանզի իր պատկերն էր նրա վրա: Ինչպես երազում, ինձ թվաց, որ այն միտքը, թե յուրաքանչյուր մետաղադրամ թույլ է տալիս այդպիսի համբավավոր հիշատակումներ, խիստ կարևոր է, թեև չհասկացա, թե ինչու: Ավելի ու ավելի արագորեն

շրջեցի անմարդ փողոցներն ու հրապարակները: Ուժասպառ հասա մի խաչմերուկի: Տեսա երկաթե մի ցանկապատ, ետևում՝ Անարատ Հղիացման տաճարի սև ու սպիտակ սալաքարերը: Քայլել էի շրջանաձև, հարյուր մետր հեռավորության վրա գտնվում էր այն սրճարանը, ուր ինձ տվել էին Ջահերը: Թեքվեցի, սրճարանն արդեն փակվել էր: Բելգրանո փողոցում տաքսի նստեցի: Անքուն, դյուրված, գրեթե երջանիկ՝ մտածեցի, որ դրամից աննյութական ոչինչ չկա, քանի որ յուրաքանչյուր մետաղադրամ (ասենք՝ մի քսան սենթանոց) իրականում ապագայի բոլոր հնարավոր տարբերակների փունջ է: **Դրամը վերացական է, կրկնեցի, դրամն ապառնի ժամանակ:** Կարող է դառնալ քաղաքից դուրս անցկացրած երեկո, Բրահմսի երաժշտություն, կարող է քարտեզներ դառնալ, դառնալ ճատրակ, սուրճ, կարող է դառնալ էպիտեկտի՝ ոսկին արհամարհող խոսքերը. Փարոսի կղզում գտնվող Պրոթեսուից այս Պրոթեսուը ավելի փոփոխական է: Անկռահելի ժամանակ է, բայց Բերգսոնի և ոչ թե Իսլամի կամ ստոիկների դաժան ժամանակը: Դետերմինիստները հերքում են, թե աշխարհում հնարավոր է իրարից անկախ իրադարձությունների գոյություն. այսինքն՝ իրադարձությունները կարող են լինել ինքնաբերաբար, սակայն մետաղադրամը խորհրդանշում է մեր ազատ կամքը: (Մտքովս էլ չանցավ, որ այդ «մտքերը» Ջահերի դեմ ուղղված հնարքներ էին և սատանայական ազդեցության առաջին ձևը): Համառ մտորումներից հետո վերջապես քնեցի, սակայն երազում տեսա, որ ես արծվառյուծի հսկողությամբ պահպանված մետաղադրամն էի:

Հաջորդ օրը հասկացա, որ հարբած եմ եղել: Նաև հավատացի, որ ինձ չարչարող մետաղադրամից պետք է ազատվել: Յուրահատուկ ոչինչ չունեի, միայն մի քանի խզբզոցներ: Այգում թաղելը կամ գրադարանի որևէ անկյունում թաքցնելը երևի ամենաճիշտը կլիներ, սակայն ես ուզում էի ինչքան հնարավոր է նրա ոլորտից հեռու գտնվել: Որոշեցի կորցնել: Այդ առավոտ Սուրբ Պիլար չգնացի, ոչ էլ գերեզմանոց. մետրոյով Սահմանադրության Հրապարակ գնացի, այնտեղից՝ Սան Խուան և Բոյեդո: Առանց երկար-բարակ մտածելու Ուրկիզայում իջա, քայլերս ուղղեցի դեպի արևմուտք և հարավ, առանց տարբերություն դնելու մի քանի խաչմերուկներ հետազոտեցի և մյուսներին շատ նման թվացող մի փողոցում մի հասարակ բար մտա. կանյա պատվիրեցի և վճարեցի Ջահերով: Աչքերս կկոցեցի մթամած ապակիների տակ,

կարողացա չտեսնելու տալ տների համարներն ու փողոցի անունը: Այդ գիշեր վերոնալի մի հաբ կլլեցի և կարողացա հանգիստ քնել:

Մինչև հունիսի վերջերն ինձ զբաղեցրեց ֆանտաստիկ մի պատմվածքի հորինումը: Պատմվածքում կան երկու թե երեք առեղծվածային շրջասություններ՝ արյան փոխարեն գրված է **սրի ջուր, ոսկու փոխարեն՝ օձի անկողին** և բոլորը՝ առաջին դեմքով: Պատմողը՝ մարդկային հարաբերություններից հրաժարված, անապատանման վայրում ապրող (այդ տեղի անունը Գնիտհայդեր է) մի ճգնավոր է: Նկատի առնելով նրա կյանքի անմեղությունն ու պարզությունը, ոմանք նրան հրեշտակ են համարում. դա խղճուկ չափազանցություն է, քանի որ մեղքից ազատ մարդ գոյություն չունի: Շատ հեռու գնալու կարիք չկա, նա հենց ինքն է մորթել իր հարազատ հորը, իհարկե ճիշտ է, որ հայրը հայտնի կախարդ էր և իր կախարդական արվեստով տիրացել էր անհատնում **Գանձերի**: Ճգնավորը իր կյանքի սրբազան պարտքըն էր համարում օր ու գիշեր այդ գանձը պահպանել մարդկային անառողջ ազահությունից: Շուտով, գուցե շատ շուտով, այդ հսկումը կունենա իր վախճանը՝ աստղերն իրեն հայտնել են, որ այդ հսկումը ջախջախող սուրն արդեն կոփվել է: (Այդ սրի անունը **Գրամ** է): Հետո ավելի խրթին ձևի մեջ գովաբանում է սրի շեղքի փայլն ու ճկունությունը. ինչ-որ պարբերությունում անզգուշաբար նշում է թեփուկների մասին, մի ուրիշում ասում է, որ գանձը բաղկացած է շողշողացող ոսկուց և կարմիր մատանիներից: Վերջում հասկանում ենք, որ ճգնավորը ֆաֆնիր օձն է, իսկ գանձը՝ Նիբելունգներինը: Սիգուրդի հայտնվելը կոպտորեն կտրում է պատմությունը:

Ասել եմ, որ այս սնոտիապաշտության իրագործումը (որի ընթացքում կեղծ գրագիտությամբ «Fáfnismal»-ի տողերից մեջբերումներ եմ կատարել) ինձ թույլ տվեց մոռանալ մետաղադրամը: Եղան գիշերներ, երբ այնքան համոզված էի, թե կմոռանամ, որ կամավոր էի հիշում: Ճիշտն այն է, որ չարաշահեցի այդ պահերը. սկսելն ավելի հեշտ էր, քան վերջացնելը: Զուր կրկնեցի, որ այդ նողկալի մետաղյա բոլորակը չի տարբերվում մյուսներից, որոնք անցնում են ձեռքից-ձեռք, նույնանման են, անվերջանալի ու անվնաս: Այդ մտքով տարված՝ փորձեցի ուրիշ մետաղադրամների մասին մտածել, բայց չկարողացա: Հիշում եմ նաև մի քանի անհաջող փորձեր՝ կապված չիլիական հինգ և տասը սենթանոցների ու արևելյան մի վինտենի հետ: Հուլիսի տասնվեցին մի

Ֆունտ ստերլինգ գնեցի, օրվա ընթացքում ոչ մի անգամ ակնարկ իսկ չնետեցի, բայց այդ (և այլ) գիշերներն խոշորացույցի և էլեկտրական ուժեղ լույսի տակ մանրամասնորեն ուսումնասիրեցի այն: Ապա թղթի վրա մատիտով նկարեցի այդ մետաղադրամը: Վիշապի փայլն ու սուրբ Գևորգը չօգնեցին, չկարողացա փոխել անջնջելի գաղափարը:

Օգոստոս ամսին որոշեցի հոգեբույժի դիմել: Իհարկե անհեթեթ պատմությունն ամբողջությամբ չխոստովանեցի, ասացի, որ անքնությունն է ինձ տանջում և ինչ-որ իրի պատկեր հետապնդում է ինձ, ասենք՝ մետաղյա մի շրջանակ, կամ՝ մի մետաղադրամ... Քիչ անց Սարմիենտո փողոցի գրախանութներից մեկում հանդիպեցի Յուլիոս Բարլաքի «Urkunden zur geschichte der Zahirsage»՝ ժողովածուին (Բրեսլաու, 1899):

Այդ գրքում խոսվում էր իմ ցավի մասին: Հեղինակը նախաբանում հայտնում է, որ մտադրվել է «մի ժողովածուում հավաքել Ջահերի սնահավատությանը վերաբերող բոլոր փաստերը, նույնիսկ Հաբրիխտի արխիվին պատկանող չորս վկայություն և Ֆիլիպ Մեդոուս Թեյլորի տեղեկատվության ձեռագիր բնագիրը»: Հավատամքը առ Ջահերի հզորությունը իսլամական ծագում ունի, և ըստ երևույթին պատկանում է XVIII դարին: (Բարլաքը հերքում է Ջոթենբերգի՝ Աբուլֆեդային վերագրած հատվածները): Ջահեր արաբերեն նշանակում է «երևելի», «տեսանելի», այդ իմաստով Աստծու ինսուսինը անուններից մեկն է: Ժողովուրդը մուսուլմանական երկրներում այդ անունն է տալիս «այն անձերին կամ իրերին, որոնք անմոռանալի փնելու սարսափելի շնորհ ունեն, և որոնց պատկերը գծվեցնում է մարդկանց»: Առաջին անժխտելի փաստը պարսիկ Լուտֆ Ալի Ազուրինն է: «Կրակի տաճար» վերնագրված կենսագրական մի ծավալուն հանրագիտարանի էջերում այդ գաղտնագետ դերվիշը պատմում է, որ Շիրազի դպրոցներից մեկում եղել է «այնպես կառուցված մի աստղադիտակ, որ մի անգամ նայողը այլևս չէր կարող ուրիշ բանի մասին մտածել, և այդ պատճառով թագավորը հրամայում է ծովի խորքերը նետել այդ աստղադիտակը, որպեսզի մարդիկ չմոռանան աշխարհը»: Մեդոուս Թեյլորի տեղեկագիրն ավելի ընդարձակ է. նա ծառայում էր Նիզամի Հայդարաբադցուն, որ գրել է «Confessions of a Thug»² համբավավոր վեպը: 1832 թվականին Թեյլորը

¹ «Վկայություններ Ջահերի ավանդապատումների մասին» (գերմ.):

² «Խեղդողի խոստովանությունը» (անգլ.):

Բիուզի արվարձաններում լսեց «Վագրին տեսնել» արտառոց արտահայտությունը (Verily he has looked on the Tiger), որը նշանակում է մարդու խելագարություն կամ սրբություն: Ասացին, որ ակնարկը վերաբերում է մոզական մի վագրի, այդ վագրը դարձել էր բոլոր տեսնողների, նույնիսկ հեռվից տեսնողների կորստյան պատճառ, քանի որ սրանք չէին կարողացել այլ բանի մասին մտածել, քան վագրի: Պատմեցին, որ այդ թշվառներից մեկը փախել էր Միսոր և այնտեղ մի պալատում նկարել վագրի պատկերը: Տարիներ անց Թեյլորն այցելեց այդ թագավորության բանտերը, Նիտտուրում քաղաքապետը նրան տարավ մի խուց, որտեղ մուսուլման մի ֆաքիր (սարսափելի գույներով, որ ժամանակն ավելի շուտ սրում էր, քան ջնջում) խցի հատակին, պատերին ու կամարին նկարել էր մի անսահման վագր:

Վագրը բաղկացած էր բազմաթիվ վագրերից. պատկերը կիսված էր, խզբզված վագրերով, ընդգրկում էր ծովեր, Հիմալայներ և գործեր, որ կարծես ուրիշ վագրեր լինեին: Նկարիչը տարիներ առաջ մահացել էր այդ խցում. Սինդիից էր եկել, գուցե Գուգերաթից, իսկ նրա սկզբնական նպատակն ընդամենը եղել էր աշխարհի քարտեզները: Հրեշավոր այդ պատկերում նախնական նպատակից ինչ-որ նշույլներ մնում էին: Թեյլորը Ֆորտ Ուիլիամում այս պատմությունը պատմեց Մուհամադ Ալ-Յեմենին. նա ասաց, որ աշխարհում չկա ոչ ոք, որ հակված չլինի դեպի Zaher'-ը, սակայն Ամենաողորմածը թույլ չի տալիս, որ դրանցից երկուսը միասին գոյատևեն, քանզի մեկն էլ բավարար է ամբոխներին հիացնելու համար: Ասաց, որ միշտ էլ գոյություն ունի մեկ Ջահեր և որ Տգիտության ժամանակաշրջանում Ջահերը Մաճգ կոչված կուռքն է եղել, իսկ հետո Խորասանի մի մարգարե, որ գործածում էր նախշագարդ մի քող կամ ոսկե մի դիմակ²: Նաև ասաց, որ Աստված անքննելի է:

Շատ անգամներ եմ վերընթերցել Բարլաքի աշխատությունը: Չեմ կարող պատմել, թե որոնք եղան իմ առաջին զգացմունքները, հիշում եմ միայն հուսահատությունս, երբ հասկացա, որ այլևս ոչ ոք ինձ չի փրկի, հիշում եմ այն ներքին սփոփանքը, երբ հասկա-

¹ Այդ բառը այդպես է գրում Թեյլորը (ծան. հեղ.):

² Բարլաքը նկատում է. Մաճգ—ի անունը հիշատակված է Ղուրանում (71, 23), և մարգարեն Ալ—Մոքաննան է (Քողարկվածը), և Ֆիլիպ Մեդոուս Թեյլորի տարօրինակ թղթակցից բացի ոչ ոք նրանց չի կապել Ջահերի հետ (ծան. հեղ.):

ցա, որ ես մեղավոր չեմ իմ թշվառության համար, հիշում եմ նախանձը այն մարդկանց հանդեպ, որոնց համար Զահերը ոչ թե մի մետաղադրամ, այլ մարմարե մի շերտ կամ մի վագր էր եղել: Հեշտ բան է վագրի մասին չմտածելը, խորհեցի: Հիշում եմ նաև այն յուրօրինակ անհանգստությունը, երբ այս պարբերությունը կարդացի. «Գուլշան-ի-րազ»-ի մեկնաբանողներից մեկն ասում է, որ ով տեսել է Զահերը, շուտով Վարդն է տեսնելու, և նշում է «Ատտարի Ասրար Նամեում» («Չիմացված բաների գիրք») հիշատակված մի տող՝ «Զահերը Վարդի ստվերն է, «Օղաքողի» քերծվածքը»:

Տեղդեփնայի հուղարկավորության գիշերը ես զարմացա այնտեղ չտեսնելով Աբասկալի կնոջը՝ հանգուցյալի փոքր քրոջը: Հոկտեմբերին նրա ընկերուհիներից մեկն ինձ ասաց.

— Խեղճ Խուլիտա, խելքը թռցրած՝ Բոշի բուժարան տարան: Իրեն ճաշ տվող բուժքույրերին շատ կտանջի: Շարունակ խոսում է Մորենա Սաքմանի վարորդին նմանվող մետաղադրամի մասին:

Ժամանակը, որ մեղմացնում է հիշատակները, սաստկացնում է Զահերինը: Առաջ ես նախ պատկերացնում էի մի երեսը, ապա մյուսը, հիմա միաժամանակ երկուսն եմ տեսնում: Դա այնպես չի, որ ասես Զահերը ապակուց լինի, քանի որ մի երեսը մյուսի հետ չի մակադրվում, ավելի ճիշտ կլինի ասել, որ կարծես տեսողությունս շրջանաձև լինի, իսկ Զահերը ծածանվի մեջտեղում: Այն, ինչ Զահերը չէ, կարծես քողարկված ու հեռվից է ինձ հասնում, և Տեղդեփնայի քամահրոտ պատկերը, և ֆիզիկական ցավը: Թեննիսոնն ասում է, որ եթե կարողանայինք մեն մի ծաղկի հասկանալ, կհասկանայինք թե՛ մեր, թե՛ աշխարհի ինչ լինելը: Գուցե ուզեցել է ասել, որ չկա դեպք, որքան էլ այն չնչին լինի, որ իր մեջ չպարունակի տիեզերքի պատմությունն ու նրա անհատնում պատճառահետևանքային կապակցությունները: Գուցե ուզեցել է ասել, որ ողջ տեսանելի աշխարհը տրվում է մեզ իր բոլոր արտահայտություններով, այնպես, ինչպես Շոպենհաուերի կամքն է տրվում յուրաքանչյուր անձի: Կաբալիստները հասկանում էին, որ մարդը միկրոկոսմոս է, տիեզերքի խորհրդավոր հայելի, ըստ Թեննիսոնի յուրաքանչյուր բան կարող է այդ հայելին լինել: Յուրաքանչյուր բան, նույնիսկ անտանելի Զահերը:

1948 թվականից առաջ ես էլ կարծանանամ Խուլիայի ճակատագրին: Ինձ էլ կկերակրեն ու կհագցնեն, չեմ իմանա՝ գիշեր է, թե ցերեկ, չեմ իմանա, թե ով է Բորիսենը: Սխալ կլինի այդ

ապագան սարսափելի համարել, քանի որ աշխարհում ինձ էլ ոչինչ չի անհանգստացնի: Դա նույնը կլինի, ինչ ասել, թե՝ թմրեցուցիչի ազդեցության տակ գտնվող հիվանդի համար սարսափելին այն պահն է, երբ բացում են նրա գանգը: Տիեզերքն այլևս չեմ ընկալի, կընկալեմ Ջահերը: Իդեալիստական տեսության համար «ապրել» և «երազել» բայերը հոմանիշներ են. հազարավոր կերպարանքներս մեկը կդառնան, շատ բարդ երազս շատ պարզ կդառնա: Ուրիշներին կթվա, որ ես գժվել եմ, իսկ ես էլ Ջահերի հետ կերազեմ: Երբ օր ու գիշեր աշխարհի բոլոր մարդիկ Ջահերի մասին մտածեն, արդյոք ճիշդ երազ կլինի և ճիշդ իրականություն, երկիրը, թե Ջահերը:

Գիշերվա անձուկ ժամերին դեռ կարող եմ փողոցներում քայլել: Արշալույսը հաճախ ինձ կհանդիպի Գարայ հրապարակի նստարաններից մեկի վրա, որտեղ նստած կմտածեմ (կփորձեմ մտածել) «Ասրարնամե»-ի այն հատվածի մասին, ուր ասվում է, թե **Ջահերը Վարդի ստվերն է և Օդաքողի քերծվածքը**: Այդ դատողությունը ես կապում եմ հետևյալ տեղեկության հետ՝ Աստծու հետ միաձուլվելու համար սուֆիզմի հետևորդները կրկնում են իրենց կամ աստվածային իննսունինը անունները, մինչև որ սրանք դադարում են ինչ-որ բան նշանակել: Ես ուզում եմ այդ ուղին անցնել: Գուցե ես այսքան խորհելուց ու մտատանջվելուց հետո կարողանամ ջնջել Ջահերը և գուցե Աստված մետաղադրամի մյուս երեսին հայտնվի:

ԻՐ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՈՒՄ ՎԱՆՃԱՆՎԱԾ ԱԲԵՆՆԱԿԱՆ ԷԼ ԲՈՒԱՐԻՆ

... համեմատվում են սարդի հետ,
որ իր տունն է կառուցում:
Պարան, XXIX, 40

—Սա,— ասաց Դանրավենը, ձեռքի այնպիսի մի շարժումով, որ նշանակում էր, թե չի մերժում ամպերով ծածկված աստղերը, և ընդգրկում է սև անապատը, ծովն ու ավերակ ախոռատուն հիշեցնող հսկայական հինավուրց շինությունը,— իմ նախնիների հողն է:

Անվիներ, նրա ընկերակիցը, բերանից հանեց ծխամորձը և համեստ ու զուսպ, գոհունակ հնչյուններ արձակեց: 1914 թվականի ամռան առաջին երեկոն էր. անվտանգ հազուրդ տալով իրենց, այս աշխարհից հոգնած ընկերները վայելում էին Կորնուելի այդ մենակյաց անկյունը: Դանրավենը սև մորուք էր պահում և ինքն իրեն հայտնի մի էպիկական պոեմի հեղինակն էր համարում, մի պոեմ, որի չափը իր ժամանակակիցներից և ոչ մեկը չէր կարող որոշել, և որի նյութը առայժմ իրեն անգամ հայտնի չէր: Անվիներ, Դիոֆանտի ստեղծագործության լուսանկարում արմատի մասին Ֆերմայի չշարադրած թեորեմի շուրջ մի ուսումնասիրություն էր հրատարակել: Երկուսն էլ,— պետք է ասել,— մտացրիվ ու կրքոտ երիտասարդներ էին:

— Մի քառորդ դար առաջ, — ասաց Դանրավենը,— Աբենխական էլ Բոխարին՝ նիլոտական չգիտեմ ինչ ցեղի առաջնորդ թե թագավոր, այն տան կենտրոնական սրահում սպանվեց իր զարմիկի՝ Սահիդի ձեռքով: Տարիներ են անցել, սակայն նրա մահվան հանգամանքները դեռևս մութ են:

Անվիներ համակերպված հարցրեց, թե ինչո՞ւ:

—Տարբեր պատճառներով,— եղավ պատասխանը: — Առաջին, այդ տունը լաբիրինթոս է: Երկրորդ, տունը մի ստրուկ ու մի առյուծ էին հսկում: Երրորդ, գաղտնի մի գանձ էր անհայտացել: Չորրորդ, երբ սպանությունը կատարվեց, մարդասպանն արդեն մեռած էր: Հինգերորդ...

Անվիներ հոգնած ընդհատեց նրան:

—Խորհրդավորությունները մի բազմապատկիր,— ասաց:— Դրանք պետք է պարզ լինեն: Պոի գողացած նամակն հիշիր, հիշիր Զանգվիլի փակ սենյակը:

— Կամ թե բարդ,— առարկեց Դանրավենը: — Տիեզերքն հիշիր:

Շրջանցելով ավազուտ բլրակները՝ հասան լաբիրինթոս: Մոտիկից սա նրանց թվաց մարդու բարձրությունն հազիվ գերազանցող աղյուսե գրեթե անվերջանալի մի պատ: Դանրավենն ասաց, որ այդ շինությունը շրջանաձև է, որ կլորությունը չի նկատվում, քանի որ նրա մակերեսը շատ ընդարձակ է: Անվինը Նիկոլայ Կուզանցուն հիշեց, որ կարծում էր, թե յուրաքանչյուր ուղիղ գիծ անսահման մի շրջանակի աղեղն է... Կեսգիշերին, դեպի մութ ու վտանգավոր միջանցք բացվող մի դուռ հայտնաբերեցին: Դանրավենն ասաց, որ տան ներսը լի է քառուղիներով, բայց որ միշտ դեպի ձախ թեքվելով՝ մոտավորապես մի ժամում կհասնեն ցանցի կենտրոնական մասը: Անվինը համաձայնեց: Հուշիկ քայլերն արձագանքում էին քարե հատակին, միջանցքը կիսվեց ավելի նեղ միջանցքների: Կարծես տունն ուզում էր խեղդել նրանց՝ առաստաղը շատ ցածր էր: Թանձր խավարի մեջ նրանք գնում էին իրար հետևից: Անվինը առջևից էր գնում: Նրա ձեռքի տակ, անհարթություններով ու անկյուններով ընդմիջված, անվերջանալիորեն սահում էր անտեսանելի պատը: Անվինը, որ խավարի մեջ դանդաղ էր շարժվում, ընկերոջ բերանից լսեց Աբենխականի մահվան պատմությունը:

— Առաջին անգամ,— պատմեց Դանրավենը,— Աբենխական էլ Բոխարուն Պենտրիտի նավահանգստում տեսա: Նրա հետևից մի սևամորթ ու մի առյուծ էին ընթանում. եթե սուրբ Գրոց փորագրությունները նկատի չունենանք, անկասկած դրանք առաջին սևամորթն ու առաջին առյուծն էին, որ նայում էին իմ աչքերի մեջ: Այն ժամանակ ես երեխա էի, բայց արևագույն գազանն ու գիշերաթույր մարդն այնքան չզարմացրին ինձ, որքան Աբենխականը: Ինձ շատ բարձրահասակ թվաց. դեղնավուն մաշկով, կիսափակ սև աչքերով, բարետես քթով, մոտ շրթունքներով, սև մորուքով, ուժեղ կրծքավանդակով, վստահ ու լռակյաց շարժումներով մի մարդ էր: Տանն ասացի. «Նավով մի թագավոր է եկել»: Հետո, երբ շինարարներն սկսեցին տան կառուցումը, տիտղոսը բարձրացրեցի ու նրան Բաբելոնի թագավոր անվանեցի:

Այն լուրը, որ օտարականը Պենտրիտում էր բնակվելու, ուրախությամբ ընդունվեց, իսկ նրա տան ծավալն ու ձևը ապշանքով նույնիսկ խայտառակություն համարվեց: Անթույլատրելի համարվեց, որ տունը բաղկացած լինի մի սենյակից և մղոնների երկարություն ունեցող միջանցքներից: «Մավրիտանացիների մոտ երևի

ընդունված են այդ տները, բայց քրիստոնյաների երկրում՝ երբեք», ասում էր ժողովուրդը: Մեր ռեկտորը, պարոն Օլբին, հետաքրքիր գրքեր պաշտող մի մարդ, գերեզմաններից հանեց մի պատմություն, որ պատմում է, թե Աստված ինչպես է պատժել լաբիրինթոս կառուցող թագավորին և այդ պատմությունն ամբիոնից ի լուր ազդարարեց: Երկուշաբթի օրը Աբենխականն այցելեց ռեկտորին. այդ ժամանակ կարճատև տեսակցության հանգամանքները չտարածվեցին, սակայն բանն այն է, որ ապագա քարոզներում ամբարտավանության մասին ոչ մի խոսք չեղավ, և մավրիտանացին կարողացավ շինարարներ վարձել: Տարիներ հետո, երբ Աբենխականը մահացավ, Օլբին իշխանություններին պատմեց երկխոսության բովանդակությունը:

Աբենխականն առանց նստելու այս (կամ նման) բառերն է ասել է. «Ոչ ոք այլևս չի կարող քննադատել արարքներս: Ինձ խայտառակող մեղքերն այնպիսին են, որ նույնիսկ, եթե ես դարեր շարունակ կրկնեմ Աստծու Գերագույն Անունը, իմ տանջանքներից մեկն անգամ չի թեթևանա, ինձ խայտառակող մեղքերն այնպիսին են, որ եթե ես ձեզ այս ձեռքերով սպանեմ, այն տանջանքները, որ ինձ համար վիճակել է անսահման Արդարությունը, ոչ մի բանով չեն ավելանա: Անունս անծանոթ չէ, ես Աբենխական էլ Բոխարին եմ, ես երկաթե գայիսոնով եմ ղեկավարել անապատի ցեղերին: Տարիներ շարունակ իմ զարմիկի՝ Սահիդի աջակցությամբ կողոպտեցի նրանց, բայց Աստված լսեց նրանց աղերսանքները և թույլ տվեց նրանց ըմբոստությունը, հավատարիմներս ջարդվեցին և սրի քաշվեցին, իսկ ես կողոպտած, տարիների ընթացքում հավաքածս գանձով կարողացա փախչել: Սահիդն ինձ առաջնորդեց քարածայռի ստորոտին գտնվող, ինչ-որ սրբի պատկանող մի գերեզման: Ստրուկիս հրամայեցի հսկել անապատի անցուդարձը. հոգնած, Սահիդն ու ես քնեցինք: Այդ գիշեր ինձ թվաց, որ օձերի մի կծիկ շրջապատում է ինձ: Սարսափահար արթնացա. կողքիս՝ Սահիդը քնած էր. սարդոստայնն էր դիպել մարմնիս և պատճառ դարձել այդ երազին: Ցավալի էր տեսնել, թե ինչպես Սահիդը, որ վախկոտ էր, հանգիստ քնել էր: Մոռածեցի, որ գանձս անսահման չէ, և որ Սահիդը կարող է մի մասը պահանջել: Գոտուս կապված էր արծաթե դաստապանով դաշույնը, մերկացրի և խրեցի նրա կոկորդը: Հոգեվարքի մեջ նա ինչ-որ բառեր արտասանեց, բայց ես չկարողացա հասկանալ: Զննեցի նրան, մեռած էր, սակայն ես վախենում էի, որ նա վեր կկենա, ուստի և ստրուկին

հրամայեցի, որ քարով ջախջախի նրա դեմքը: Հետո թափառեցինք երկնքի տակ և մի օր ծովը տեսանք: Շատ բարձր նավեր էին անցնում ծովով. մտածեցի, որ մեռյալը չի կարող լողալով կըտրել—անցնել ջուրը և որոշեցի այլ հողեր որոնել: Նավարկության առաջին գիշերը երազիս մեջ Սահիդի սպանությունը տեսա: Ամեն ինչ կրկնվեց, բայց այս անգամ ես հասկացա նրա ասած խոսքերը: Նա ասում էր. «Ինչպես այժմ ինձ սպանեցիր, այնպես էլ ես քեզ եմ սպանելու, ուր էլ որ լինես»: «Երդվել եմ չհանդուրժել, որ այդ սպառնալիքը կատարվի, լաբիրինթոսի կենտրոնում կթաքնվեմ, և նրա ուրվականը ճանապարհը չի գտնի»:

Այսքանն ասելուց հետո գնաց: Օլբին ուզեց մտածել, որ մավրիտանացին ցնորված է, և որ անհեթեթ լաբիրինթոսը այդ ցնորվածության խորհրդանիշն է ու ակամա վկայությունը: Հետո մտածեց, որ դա կարող է բացատրել տարօրինակ շենքում կատարված տարօրինակ պատմությունը, բայց չի կարող բացատրել Աբենխական մարդու թողած ուժեղ տպավորությունը: Գուցե այդ պատմությունները հասարակ բան լինեն եգիպտական ավագուտներում, գուցե այդ տարօրինակությունները (Պլինիոսի վիշապների պես) ոչ թե մի մարդու, այլ մի մշակույթի հատկությունները լինեն... Լոնդոնում Օլբին ստուգեց «Թայմս»-ի հին համարները և հաստատեց, որ ճշմարտացի էր խռովության և Բոխարու ու նրա վախկոտ վեզիրի հետագա պարտության լուրը:

Երբ շինարարներն ավարտեցին կառույցը, Աբենխականը փակվեց լաբիրինթոսի կենտրոնում: Քաղաքում այլևս չտեսան նրան: Օլբին հաճախ երկյուղում էր, թե Սահիդն արդեն գտած ու սպանած կլինի նրան: Գիշերները քամին տարածում էր առյուծի մռնչոցը, և գոմում ոչխարները հին սարսափի հիշատակով իրար էին սեղմվում:

Հաճախ նավահանգիստ էին հասնում արևելյան նավահանգիստներից եկած և դեպի Կարդիֆ կամ Բրիստոլ գնացող նավեր: Ստրուկը դուրս էր գալիս լաբիրինթոսից (որ այդ ժամանակ, հիշում եմ, ոչ թե վարդագույն, այլ կարմրավուն էր) և աֆրիկյան բառեր էր փոխանակում նավաստիների հետ, դրանով կարծես մարդկանց մեջ թագավորի ուրվականն էր որոնում: Հայտնի էր, որ այդ նավերը մաքսանենգությամբ էին զբաղվում և, եթե արգելված խմիչքներ ու փղոսկր էին բերում, ղվ կարող էր հաստատել, թե ննջեցյալներ չէին բերի:

Տան կառուցման ավարտից երեք տարի հետո, սարալանջի մոտիկ ծոցում խարիսխ նետեց «Ռոզա Սարոնը»: Ես այդ առա-

գաատանալը չտեսա, և գուցե դրանից է, որ նրա մասին ունեցածս պատկերացումը Աբուկիրի կամ Տրաֆաշգարի վիմագրությունների ազդեցությունն ունենա, բայց կարող եմ ասել, որ այդ նավի վրա այնքան աշխատանք էր թափվել, որ ոչ թե նավաշինարարի կամ հյուսնի, ավելի շուտ ատաղձագործի գործ էր երևում: Այդ նավը (եթե ոչ իրականության, ապա իմ երազների մեջ) փայլուն էր, սև, անաղմուկ և արագընթաց, իսկ նրա նավաստիներն արաբներ ու մալայցիներ էին:

Խարիսխ նետեց հոկտեմբերյան մի առավոտ: Երեկոյան Աբեն-խականը ներխուժեց Օլբիի տունը: Նրան տիրել էր սարսափը, հազիվ կարողացավ շնչալ, որ Սահիդն արդեն մտել է լաբիրինթոս և որ արդեն սպանել է ստրուկին ու առյուծին: Շատ լուրջ հարցրեց, թե իշխանությունները կարո՞ղ են պաշտպանել իրեն: Առանց Օլբիի պատասխանին սպասելու դուրս ելավ, կարծես երկրորդ ու վերջին անգամ բռնվել էր այն նույն սարսափով, որն իրեն հասցրել էր այդ տունը: Գրադարանի մենության մեջ Օլբին ապշահար մտածեց, որ սարսափահար այդ մարդը Սուդանում ջլափինդ ցեղեր է ճնշել և լավ գիտի, թե ինչ բան է ճակատամարտը, և թե ինչ է նշանակում սպանությունը: Հաջորդ օրը նկատեց, որ առագաստանավն արդեն մեկնել է (հետո իմացվեց՝ դեպի Կարմիր Ծով, Սուակին քաղաքը): Մտածեց, որ ստրուկի մահն հաստատելն իր պարտքն էր և մեկնեց դեպի լաբիրինթոս: Բոխարու շնչասպառ պատմությունը նրան մտացածին էր թվացել, բայց միջանցքներից մեկում առյուծին հանդիպեց, և առյուծը սատկած էր, մի այլ միջանցքում ստրուկին հանդիպեց, նա էլ էր մեռած, իսկ կենտրոնական սրահում հայտնաբերեց Բոխարու ջախջախված դեմքը: Մարդու ոտքերի տակ սադափե մի արկղ կար. ինչ-որ մեկը ջարդել էր կողպեքը, և ոչ մի մետաղադրամ չկար:

Հռետորական երկար ընդմիջումներով զարդարված վերջին պահերը չափազանց խոսուս էին: Անվիճը հասկացավ, որ Դանրավենը այս նույն հանդարտությամբ և այս նույն անձարակությամբ շատ էր կրկնել այդ բառերը: Կեղծ հետաքրքրություն ցուցաբերելու համար հարցրեց.

— Իսկ առյուծն ու ստրուկն ինչպե՞ս էին սպանվել:

— Նրանց դեմքերն էլ էին ջախջախված:

Քայլերի աղմուկին անձրևի ձայնն էլ ավելացավ: Անվիճը մտածեց, որ լաբիրինթոսում էին գիշերելու, Դանրավենի պատմության «կենտրոնական սրահում», և հիշողության մեջ այդ եր-

կարավուն անհարմարությունը արկածի էր վերածվելու: Լռեց, Դանրավենը չկարողացավ համբերել, մյուսից պարտք պահանջողի պես հարցրեց.

— Բացատրելի չէ այս պատմությունը:

Անվինը, կարծես բարձրաձայն մտածելիս լիներ, պատասխանեց.

— Չգիտեմ, բացատրելի է, թե անբացատրելի: Գիտեմ, որ սուտ է:

Դանրավենն սկսեց հայիոյել և հիշեց ռեկտորի որդու (Օլբին կարծես թե վախճանվել է) և Պանտրիտի բոլոր հարևանների վկայությունը: Դանրավենից ոչ պակաս ապշահար, Անվինը ներողություն խնդրեց: Մթության մեջ ժամանակը կարծես ավելի երկար էր. երկուսն էլ վախեցած մտածում էին, թե կորցրել են ճանապարհը, արդեն շատ հոգնած էին, երբ վերևից եկող թեթև մի լուսավորություն նրանց աչքերի առաջ պարզեց սանդուղքի առաջին աստիճանները: Բարձրացան և ավերակ ու կլոր մի սենյակ հասան: Պահպանվել էին տխրահռչակ թագավորի երկյուղի երկու ակնհայտ նշանները՝ անապատն ու ծովը հսկող նեղլիկ մի պատուհան և հատակին՝ սանդուղքների շրջադարձին երևացող մի թակարդ:

Սենյակը թեև ընդարձակ՝ շատ էր նմանվում բանտախցի:

Ավելի շուտ հիշելու և հետազայում ընկերներին պատմելու բան ունենալու, քան թե անձրևի պատճառով, ընկերները լաբիրինթոսում գիշերեցին: Մաթեմատիկոսը հանգիստ քնեց, իսկ բանաստեղծին անհանգստացնում էին իր իսկ կարծիքով նողկալի ոտանավորներ.

Faceless the sultry and overpowering lion,

Faceless the stricken slave, facelless the King¹

Անվինին թվում էր, թե էլ Բոխարու մահվան պատմությունը չէր հետաքրքրել իրեն, բայց արթնացավ այն համոզունքով, որ հասկացել է այդ պատմության գաղտնիքը: Այդ ամբողջ օրը նա մտահոգված էր և անտրամադիր, մտքի մեջ կարգավորում էր «պատմության առանձին մասերը, իսկ երեք թե չորս օր հետո Դանրավենի հետ ժամադրվեց Լոնդոնի գարեջրատներից մեկում և նրան պատմեց մոտավորապես հետևյալը.

— Կոռնուելում ասացի, որ սուտ էր պատմածդ: Հանգամանքները ճիշտ էին, կամ կարող էին ճիշտ լինել, սակայն քո պատմա-

¹ Ձախջախված գլխով ընկած է հզոր առյուծը,

Ձախջախված գլխով ընկած են ստրուկն ու արքան (անգլ.):

ծով ակսոռայտորես կեղծ ըրս ուշուա: Կսկսես ասեսասեօ ստրց անհավատալի լաբիրինթոսից: Փախստականը լաբիրինթոսում չի թաքնվի: Նա ծովեզրի բարձր կետում նավաստիների տեսնելը դյուրացնող կարմրավուն մի լաբիրինթոս չի կառուցի: Երբ ողջ տիեզերքն ինքնին լաբիրինթոս է, լաբիրինթոս կառուցելու կարիք չկա: Թաքնվելու համար Լոնդոնը շատ ավելի հարմար լաբիրինթոս է կամ սրահ, դեպի ուր ուղղված են շենքի բոլոր միջանցքները: Խնաստուն այս մտքերն ինձ այցելեցին նախանցյալ գիշեր, երբ քնին սպասելով լսում էինք լաբիրինթոսի կտուրին տեղացող անձրևի ձայնը. անձրևից խանգարված և սթափված, որոշեցի մոռանալ անհեթեթություններդ և խելոք մի բան մտածել:

—Ասենք՝ խմբերի տեսության կամ տարածության մի չորրորդ չափ մտցնելու հնարավորության մասին,— նկատեց Դանրավենը:

—Ոչ,— լրջորեն ասաց Անվինը: — Կրետեի լաբիրինթոսի մասին էի մտածում: Այն լաբիրինթոսի, որի կենտրոնում ցուլի գլուխ ունեցող մի մարդ է:

Դանրավենը՝ ուստիկանական վեպերի մասնագետ, մտածեց, որ խորհրդավորությունը միշտ էլ գերազանցում է լուծմանը: Խորհրդավորությունը մասնակցում է գերբնականին, նույնիսկ աստվածայինին, լուծումը ձեռքի խաղ է: Անխուսափելին հետաձգելու համար ասաց.

—Մեղալիոններում և արձաններում ցուլի գլուխ ունեցողը Մինոտավրոսն է: Դանտեն նրան ցուլի մարմնով և մարդու գլխով է պատկերել:

—Այդ տարբերակն էլ է ինձ ձեռնտու,— համաձայնեց Անվինը:

—Կարևորը հրեշավոր տան և հրեշավոր բնակչի համապատասխանությունն է: Մինոտավրոսը լաբիրինթոսի գոյությունն արդարացնող շռայլ ապացույցն է: Ոչ ոք չի կարող նույնն ասել երազում հայտնված սպառնալիքի մասին: Մինոտավրոսի պատկերը հիշելուց հետո (անխուսափելի հուշ, երբ գոյություն ունի մի լաբիրինթոս) խնդիրը տեսականորեն լուծված է: Սակայն, խոստովանում եմ, ես չհասկացա, որ այդ հին պատկերի մեջ է գաղտնիքը, և այդպես անհրաժեշտ եղավ, որ պատմությունն ավելի հստակ մի խորհրդանիշ առաջարկի՝ սարդոստայնը:

—Սարդոստայնը,— կրկնեց զարմացած Դանրավենը:

—Այո, զարմանալի չէ, որ սարդոստայնը (սարդոստայնի տիեզերական ձևը, ճիշտ հասկանանք՝ Պլատոնի սարդոստայնը) մարդասպանին (քանզի կա մի մարդասպան) սպանության ձև

առաջարկեց: Հիշ՞ում ես՝ էլ Բոխարին երազի մեջ ինչ-որ գերեզմանում օձերի մի կծիկ տեսավ և արթնանալով նկատեց, որ սարդոստայնն էր ներշնչել այդ երազը: Դառնանք դեպի այդ գիշերը, երբ էլ Բոխարին երազում մի կծիկ տեսավ: Պարտված թագավորը, վեզիրը և ստրուկը գանձը բարձած փախչում են անապատով: Թաքնվում են գերեզմանում: Քնում է վեզիրը, որից ենթադրում ենք, թե նա վախկոտ է, չի քնում թագավորը, որից հասկանում ենք, թե նա քաջ է: Թագավորը, գանձը վեզիրի հետ չբաժանելու համար, դաշունահարում է սրան, սրա ստվերը, գիշերներ հետո, երազում սպառնում է թագավորին: Այս ամենն անհավատալի է. ես գտնում եմ, որ դեպքերն այլ կերպ են զարգացել: Այդ գիշեր քնել է թագավորը՝ քաջը, և արթուն է մնացել Սահիդը՝ վախկոտը: Քնել, նշանակում է անուշադրության մատնել տիեզերքը, իսկ մերկ սրով հետապնդվածի համար անուշադրությունը հեշտ բան չէ: Սահիդը, ագահորեն, կռանում է քնած թագավորի վրա: Նրան սպանելու մասին մտածում է (գուցե և խաղում է դաշույնի հետ), բայց չի համարձակվում: Կանչում է ստրուկին, գանձի մի մասը պահ տալիս գերեզմանում և դեպի Սուաքին, ապա Անգլիա փախչում: Ծովի եզերքին բարձր և կարմիր պարիսպներով աշտարակ կառուցելը ոչ թե Բոխարուց թաքնվելու, այլ նրան գայթակղելու և սպանելու համար էր: Սահիդը գիտեր, որ նավերը Նուբիայի նավահանգիստներում տարածելու էին կարմիր մարդու, ստրուկի և առյուծի համբավը, նա գիտեր, որ վաղ թե ուշ էլ Բոխարին գալու է իրեն որոնելու լաբիրինթոսի մեջ: Սրահի վերջին միջանցքում թակարդ է դրվում: Էլ Բոխարին անսահմանորեն արհամարհում էր վեզիրին. նա չէր զգուշանա: Տենչալի օրն հասավ: Աբենխականն Անգլիա հասավ, շարժվեց դեպի լաբիրինթոսի դուռը, որոնեց մուօ միջանցքներում, և երբ գուցե արդեն ոտքը դրել էր առաջին աստիճաններին, վեզիրը, դարանակալ, գուցե կրակոցով, սպանում է նրան: Ստրուկը երևի առյուծին է սատկացրել, իսկ մի այլ կրակոց էլ ստրուկին է սպանել: Ապա Սահիդը ահագին մի քարով ջախջախում է երեքի դեմքերը: Այդպես պետք է վարվեր, ջախջախված միայն մի դեմքը կասկած կառաջացներ, բայց գազանը, սևամորթն ու թագավորը մի շարք էին կազմում, ուստի, երբ տրվեին առաջին երկու անդամները, ամեն ոք կգտնե երրորդը. Տարօրինակ չէ, որ Օլբիի հետ խոսելիս նրան համակեց սարսափը, նոր էր ավարտել զարհուրելի արարքը և պատրաստվում էր Անգլիայից փախչել և գանձի հետևից գնալ:

Կառքը նրան հասցրեց Հյուսիս—արևմտյան փողոցի 4004—րդ համարը: Դեռ առավոտյան ժամը ինը չկար. նա հաճույքով դիտեց պիսակավոր բանանենիներն ու հողի քառակուսիները՝ յուրաքանչյուրի տակ փոքր պատշգամբներով համեստ տնակները, հարակից դեղատունը, երկաթյա կրպակների ու գեղարվեստական արհեստանոցների վառ վարագույրները: Հիվանդանոցի երկար ու խուլ պատը ծածկում էր ճանապարհը, հեռվում, ջերմոցի ապակիների վրա արեգակն էր փայլում: Նա մտածեց, որ այս շրջապատները (առայժմ պատահական ու անմիտ, ինչպես երազում), Աստված տա, ժամանակի հետ կդառնա սովորական, անփոփոխ ու անհրաժեշտ: Դեղատան ցուցափեղկում երևում էին բյուրեղապակյա տառեր՝ Բրեսլաուեր. հրեաները գրավում են իտալացիների տեղը, որոնք ժամանակին դուրս էին քշել կրեոլներին: Դա ձեռնտու էր. նախընտրում էր գործ չունենալ իր արյունակիցների հետ:

Կառապանը նրան օգնեց ճամպրուկը իջեցնելու. ոչ այն է հոգնած, ոչ այն է անտրամադիր՝ կինը վերջապես բացեց դուռը: Այծի պես համառելով՝ կառապանը վերադարձրեց դրամը՝ ուրուզվալական մի պղնձադրամ, որը նրա գրպանում էր մնացել Մելոյի հյուրանոցում անցկացրած այդ գիշերվանից: Մարդը նրան տվեց քառասուն սենտավո և արագ մտածեց. «Դեռք է այնպես պահել, որ բոլորն ինձ մոռանան: Հիմա ես սխալվեցի երկու անգամ՝ վճարեցի ուրիշ երկրի դրամով և նկատել տվեցի, որ այդ սխալն ինձ համար նշանակություն ունի»:

Հետևելով կնոջը՝ նա անցավ դարպասն ու առաջին բակը: Նրա համար նախապատրաստված սենյակը բարեբախտաբար երկրորդ բակում էր: Մահճակալը երկաթյա էր՝ վարպետն այն քմահաճորեն կորացրել էր ճյուղերի ու խաղողի տերևների ձևով, այնուհետև՝ սոճյա մի բարձր պահարան, ողորկված սեղան, գրքերով գրապահարան, երկու տարբեր աթոռներ և լվացարանը՝ կոնքով, սափորով, սրբիչով ու անթափանց ապակյա շշով: Բուենոս Այրեսի ծայրամասի քարտեզն ու խաչը զարդարում էին պատերը, կարմիր պաստառներին կրկնվում էին պոչերը բարձրացրած հնդկահավերի պատկերներ: Միակ դուռը բակ էր տանում: Ճամպրուկը տեղավորելու համար հարկ եղավ աթոռները տեղափոխել: Ամեն ինչ նոր կենվորի ճաշակով էր. երբ կինը հարցրեց անունը, նա ասաց՝

Վիլյարի, ոչ թաքուն հրավերով և ոչ էլ նրա համար, որ հաղթահարի նվաստացումը, որը չզգաց, այլ որովհետև նրան հանգիստ չէր տալիս այդ անունը, և ուրիշը մտածելու ուժ չունեիր: Հավանաբար նրան չէր տիրում գրականության մեջ ապրող մոլորությունը, թե թշնամու անունը սեփականելը մեծ քաջություն է:

Սկզբում սինյոր Վիլյարին դուրս չէր գալիս, մի քանի շաբաթ անց սկսեց իրիկնադեմերին կարճ ժամանակով փողոց ելնել: Մի օր երեկոյան գնաց կինո, որը երեք թաղամաս էր հեռու: Նա միշտ նստում էր վերջին շարքում և միշտ դուրս գալիս սեանսի ավարտից փոքր-ինչ շուտ: Դիտում էր դրամատիկ պատմություններ հանցագործ աշխարհի կյանքից, որոնցում, անկասկած, կային սխալներ և, անկասկած, պատկերներ նրա անցյալից: Վիլյարին դրանք չէր նկատում, արվեստի և իրականության համապատասխանության մասին միտքը նրան օտար էր: Նա հնազանդորեն ենթադրում էր, որ ներկայացվածը իրեն դուր է գալիս, և միայն ուզում էր խորամուխ լինել այն նկատառումներին, որոնց համաձայն դրանք ցուցադրում էին: Ի տարբերություն նրանց, ովքեր վեպեր են կարդում, նա իրեն երբեք չէր նայել որպես արվեստի օբյեկտի:

Նա ոչ նամակներ էր ստանում, ոչ էլ նույնիսկ գնացուցակներ, բայց անորոշ հույսով թերթերում կարդում էր միշտ և նույն բաժինը: Երեկոյան աթոռը մոտեցնելով դռանը, նա կում-կում մատե էր խմում, աչքը հառած հարևան բարձր տան պատի պատատուկին: Մենակության տարիները նրան սովորեցրել էին, որ հիշելիս օրերը թվում են նման, բայց նույնիսկ բանտում կամ հիվանդանոցում չկա մի օր, որը անակնկալներ չմատուցի: Մի ուրիշ առանձնության մեջ նա կկարողանար տրվել օրեր ու ժամեր հաշվելու թուլությանը, բայց դա կլինեիր անժամկետ,— եթե միայն թերթերը երբևէ չհայտնեն Ալեխանդրո Վիլյարիի մահվան լուրը: Իսկ հնարավոր է, որ Վիլյարին արդեն մեռել է, և, ուրեմն, այժմյան կյանքը երազ է: Այդ հնարավորությունը անհանգստացնում էր նրան, քանի որ չէր կարողանում վերջնականապես որոշել՝ դա թեթևացում կլինեիր, թե տրտմություն: Վերջապես համարեց աքսուրդ և մերժեց: Հին օրերում, հեռացված ոչ այնքան ժամանակի ընթացքով, որքան երկու կամ երեք անուղղելի արարքներով, նա անզուսպ կրքով ծարավի էր իրերի բազմության. այդ հզոր կամքը, երբևէ լցված ատելությամբ առ մարդիկ ու մի կնոջ հանդեպ սիրով, հիմա ոչինչ չէր ցանկանում՝ միայն թե երկարեր, չվերջանար: Բավական էին համը մատեի, հոտը սև ծխախոտի, որի ծուխը ստվերների պարույկներով էր ծածկում բակը:

Տանը մի ծեր գելխեղդ շուն կար: Վիլյարին բարեկամացավ ու հետը խոսում էր իսպաներեն, իտալերեն, խոսքին խառնելով բարբառի կոշտ բառեր, որոնք հիշողության մեջ էին մնացել մանկությունից: Վիլյարին ջանում էր ապրել միայն ներկայով, առանց հիշողությունների ու նախազգացումների. նրա համար առաջինն ավելի քիչ նշանակություն ուներ, քան երկրորդը: Նա աղոտ զգում էր, որ անցյալը այն նյութն է, որից բաղկացած է ժամանակը, դրա համար էլ այն անմիջապես դառնում է անցյալ: Երբեմն սեփական հոգնությունը նրան թվում էր երջանկություն. այդ պահերին նա շնից այնքան էլ բարդ չէր:

Մի գիշեր նրան ահաբեկեց ու սարսուռի մեջ գցեց բերանի խորքում բռնված ցավը: Այդ սարսափելի զգացումը կրկնվեց մի քանի րոպե անց և մի անգամ էլ լուսաբացին: Հաջորդ օրը Վիլյարին կառք կանչել տվեց, որը նրան տարավ ատամնաբույժի մոտ, Տասնմեկերորդ թաղամաս: Այնտեղ հեռացրին նրա սեղանատամը: Այդ գործողության ընթացքում նա իրեն պահեց ոչ շատ վախկոտ, ոչ էլ ուրիշներից հանգիստ:

Մի այլ անգամ, կինոյից վերադառնալիս, նա զգաց, որ իրեն հրեցին: Բարկությամբ, զայրությամբ, թաքուն հրճվանքով նա շուռ եկավ աներեսի կողմը: Լուտանքով նախատեց, իսկ նա, զարմացած, ներողություն թոնթորաց: Դա մի բարձրահասակ, սև մազերով երիտասարդ էր, գերմանուհու նմանվող ընկերուհու հետ: Ողջ գիշեր Վիլյարին կրկնում էր, որ այդ մարդիկ անծանոթ են իրեն: Չնայած երբ նա նորից փողոց դուրս եկավ, անցավ չորս-հինգ օր:

Գրապահարանի գրքերի մեջ կար «Աստվածային կատակերգությունը»՝ Անդրեուլիի հին մեկնություններով: Ավելի շուտ պարտքի զգացումից, քան ցանկությունից՝ Վիլյարին սկսեց այդ մեծագույն գործի ընթերցումը. մինչև ճաշ նա կարդում էր երգերը, իսկ հետո, խիստ պահպանելով կարգը՝ ծանոթագրությունները: Նա դժոխքի չարչարանքները անհավատալի կամ ծայրահեղ չէր համարում, և մտքովը չանցավ, որ Դանտեն իրեն կտեղավորեր վերջին պարունակում, որտեղ Ուգոլինոյի ատամները անվերջ կրծում են Ռուջերի ծոծրակը:

Կարմիր պաստառների հնդկահավերը կարող էին առաջացնել խառնիխուռն մղձավանջներ, բայց սինյոր Վիլյարիին երբեք չայցելեց թռչող կենդանի թռչուններով հրեշավոր տաղավարի երազը: Լուսաբացին նա միշտ տեսնում էր ըստ էության նույն, բայց

փոփոխվող մանրամասնություններով երազը: Երկու տղամարդիկ ու Վիլյարին ատրճանակներով մտնում էին իր սենյակը, կամ հարձակվում էին իր վրա, երբ դուրս էր գալիս կինոյից, կամ էլ հաճախ նրանք լինում էին չորսով՝ այն անծանոթի հետ, որը հրել էր իրեն, նրանք բախում տխուր սպասում էին իրեն և, թվում էր, իրեն չեն ճանաչում: Երազի վերջում նա իր կողքին գտնվող հղկված սեղանի դարակից հանում էր ատրճանակը (և իրականում էլ նա աստիճանակը այնտեղ էր պահում) և կրակում այդ մարդկանց վրա: Կրակոցի դղրոյունը արթնացնում էր նրան, բայց միշտ հայտնվում էր երազում, և այդ երազում կրկնվում էր հարձակումը, և այդ երազում կրկին պիտի սպաներ նրանց:

Հուլիսյան մի մշուշոտ առավոտ նրան արթնացրեց օտար մարդկանց ներկայությունը (դուռը հրելիս բացվում էր անադմուկ): Կիսամթան մեջ, բարձր սենյակում, զարմանալի թանձր աղջամուղջում (մղձավանջներում նրանք երևացել էին հստակ) հսկող, անշարժ ու անշտապ, կարծես զենքերի ծանրությունից կռացած Ալեխանդրո Վիլյարին ու անծանոթը վերջապես հասել էին նրան: Նա շարժումով նրանց խնդրեց սպասել և շուռ եկավ պատի կողմը, կարծես փորձելով նորից քնել: Թերևս արթնացնելով նրանց գթասրտությունը, ովքեր պատրաստվում էին սպանել իրեն: Կամ էլ,— և գուցե սա ամենահավանականն է,— որպեսզի նրանք հայտնվեն երազում, ինչպես արդեն եղել էր անթիվ անգամներ, հենց նույն տեղում, այդ նույն ժամին:

Նրա այդ մտքերը ընդհատեցին կրակոցները:

Բիոյ Կասարեսը Լոնդոնից եռանկյունաձև շեղբով և Ի ձև ունեցող դաստապանով տարօրինակ մի դաշույն էր բերել. մեր ընկերը՝ Բրիտանական Խորհրդի անդամ Քրիստոֆեր Դիուին ասաց, որ այդ զենքերի գործածությունը տարածված է Հնդկաստանում: Այդ հայտարարությունը նրան առիթ տվեց հիշելու, որ երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում նա այնտեղ էր ծառայել: (Հիշում եմ, որ, Յուվենալի լատիներեն տողը այլափոխելով, ասաց՝ *Ultra Auroram et Gangem*¹): Նրա՝ այդ գիշեր պատմած բազմաթիվ պատմություններից համարձակվում եմ գրի առնել հետևյալը: Հավատարիմ կմնամ նրա պատմածին. Ալլահին ինձ փրկի պարագայական որոշ տվյալներ ավելացնելու կամ Քիպլինգի մեջբերումներով պատմության արտառոց երանգը շեշտելու փորձությունից: Բացի այդ, գուցե այն պահպանում է միայն «Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթներին հատուկ մի հին ու պարզ երանգ, որը կորցնելն իսկապես ցավալի կլիներ:

«Պատմածս դեպքերի ճշգրիտ աշխարհագրությունը կարևոր չէ: Բացի այդ, Բուենոս Այրեսում ինչ ճշգրտություն կարող են պահպանել Արմիտսար կամ Ուրի անունները: Ուրեմն թող բավական լինի ասել, որ տարիներ առաջ մուսուլմանական մի քաղաքում խառնակչություններ տեղի ունեցան, և որ կենտրոնական կառավարությունը կարգ ու կանոն հաստատելու համար զորավոր մի մարդ ուղարկեց այնտեղ: Այդ մարդը շոտլանդացի էր, պատկանում էր զորավարների հայտնի մի ցեղի և իր արյան մեջ կրում էր բռնության ամենախսկական ավանդությունը: Ընդամենը մի անգամ տեսա նրան, բայց երբեք չեմ մոռանա նրա կուպրի պես սև մազերը, ցցված այտոսկրերը, սուր քիթն ու բերանը, լայն ուսերն ու վիկինգի ջլափինդ կազմվածքը: Այս գիշեր իմ պատմության մեջ նրան կանվանենք Դավիթ, Ալեքսանդր Գլենքեռն. երկու անուններն էլ ձեռնտու են, քանի որ երկուսն էլ պատկանում են երկաթե գայիստնով ղեկավարող թագավորների: Դավիթ Ալեքսանդր Գլենքեռնը (պետք է վարժվեմ նրան այդպես անվանելուն), կարծում

¹ Յուվենալի տողը այսպես է՝ «*usque Auroram et Gangem*», այսինքն՝ «Ընդհուպ մինչև Արևելք, մինչև Գանգես»: Հերոսը «*usque*»—ի փոխարեն գործածում է «*ultra*» «դուրս, անդին» (ծան. խմբ.):

եմ, սարսափազդու մի մարդ էր՝ նրա գալստյան լուրն արդեն բավարար եղավ քաղաքը հանդարտեցնելու համար: Սակայն դա նրան խանգարեց, և նա անմիջապես սաստիկ կարգադրությունների դիմեց: Անցան տարիներ: Խաղաղվեց քաղաքն ու շրջանը՝ սիկդերն ու մուսուլմանները մոռացել էին իրենց հին գոտությունները, և հանկարծ Գլենքեռնը անհայտացավ: Բնականաբար տարածվեց այն լուրը, թե նրան կամ սպանել, կամ էլ առևանգել են:

Այս ամբողջ պատմությունը մեծավորիցս իմացա՝ գրաքննությունն այդ ժամանակ այնքան ուժեղ էր, որ թերթերը չմեկնաբանեցին (որքան հիշում եմ՝ ոչ էլ նշեցին) Գլենքեռնի անհետանալը: Մի հին առակ ասում է, որ Հնդկաստանը աշխարհից մեծ է, Գլենքեռնը, որ գուցե ամենակարող էր այն քաղաքում, ուր ուղարկվել էր հրամանագրի տակ դրված կնիքով, Կայսրության վարչական կազմի ամբողջության մեջ գուցե հասարակ մի պտուտակ էր ընդամենը: Տեղական ոստիկանության հետազոտությունները ապարդյուն անցան. մեծավորս մտածեց, որ քաղաքացիական հագուստով հետազոտողը պակաս կասկած կարթնացներ և կարող էր ավելի մեծ հաջողությունների հասնել: Երեք թե չորս օր հետո (Հնդկաստանում տարածություններն հսկայական են), ես առանց հույսի նշույլի թափառում էի քաղաքի մոայլ փողոցներում, ուր անհետ կորել էր Գլենքեռնը:

Գրեթե անմիջապես զգացի Գլենքեռնին թաքցնելու նյութված դավադրության առկայությունը: Այս քաղաքում (կարողացա ենթադրել) մեկը չկա, որ չիմանա գաղտնիքը և երդված չլինի պահպանել այն: Հարցաքննությունների ժամանակ շատերը ցուցաբերում էին բացարձակ անտեղյակություն. չգիտեին Գլենքեռնի ով լինելը, նրան երբեք չէին տեսել, երբեք չէին լսել նրա մասին: Իսկ ուրիշները նրան մի քառորդ ժամ առաջ էին տեսել այսինչ-այնինչի հետ խոսելիս, նրանց լկտիությունն այն աստիճանի էր հասնում, որ ինձ ուղեկցում էին մինչև այն տունը, ուր իրենք մտել էին. բնականաբար այնտեղ ոչ ոք ոչինչ չգիտեր նրանց մասին, կամ էլ նրանք հենց նոր էին այնտեղից հեռացել: Այդ ստախոսներից մի քանիսին բռնուցքի հարվածներ հասցրի: Վկաներն արդարացրին ինձ, սակայն տեղնուտեղը նոր ստեր հնարեցին: Չհավատացի, բայց չէի կարող չլսել: Մի երեկո ինձ մի ծրար հանձնեցին՝ մեջը մի փոքրիկ թուղթ կար, որի վրա խզբզված էր ինչ-որ հասցե...

Երբ հասա, արևն արդեն թեքվել էր: Թաղամասն աղքատ ու համեստ էր, տունը՝ շատ ցածր, մայթից նկատեցի իրար հաջորդող

հողածածկ բակերը և հետևամասից եկող լուսավորություն: Վերջին բակում մուսուլմանական ինչ-որ տուն էր նշվում. կարմրավուն փայտից շինված ուղղ ձեռքին մի կույր մտավ ներս:

Ուղքերիս առաջ, իրի պես անշարժ, շեմին կծկվել էր մի շատ ծեր մարդ: Կնկարագրեմ նրա արտաքինը, քանի որ դա պատմը-վածքիս էական մասերից է: Տարիները, ինչպես ջրերը՝ քարերին, կամ մարդկանց սերունդները՝ դատողություններին, փոքրացրել ու հղկել էին նրան: Չգիտեմ՝ ինձ թվաց, թե նա իսկապես ցնցոտիներ էր հագել, բայց գլխի փաթեցը կարծես այդ ցնցոտիների մի մասը լիներ: Մայրամուտ էր արդեն, երբ նա ինձ դարձրեց իր շատ թուխ, շատ երկար ու սպիտակ մորուքով դեմքը: Ես հույսս արդեն կորցրել էի, ուստի առանց այլևայլի խոսք բացեցի Դավիթ Ալեքսանդր Գլենքեռնի մասին: Չհասկացավ ինձ (գուցե չլսեց), և ես հարկադրված բացատրեցի, որ փնտրածս դատավոր էր, և որ ես որոնում եմ նրան: Այս խոսքերն արտասանելուց հետո զգացի, թե որքան անհեթեթ էր այս զառամյալ մարդուն հարցաքննելը. նրա համար ներկան հագիվ լսելի անորոշ մի շշուկ էր: Այս մարդը (մտածեցի) կարող է խռովության կամ Ակբարի մասին նորություններ հաղորդել, բայց ոչ երբեք Գլենքեռնից: Նրա ասածներն հաստատեցին իմ կարծիքը:

— Դատավոր, — արտաբերեց թեթև զարմանքով, — կորած մի դատավոր, որին որոնում եմ: Դեպքը տեղի ունեցավ, երբ ես դեռ երեխա էի: Թվականները չեմ հիշում, բայց դեռ Նիկոլ Սեյնին (Նիկոլոսոնին) Դելիի բերդի առաջ չէին սպանել: Անցած ժամանակը մնում է հիշողության մեջ, անկասկած կմտաբերեմ այն, ինչ տեղի ունեցավ: Աստված զայրացած թույլ էր տվել մարդկանց այլասերվածությունը, բերանները բացվում էին անեծքներով, խաբեություններով և կեղծիքով: Բայց ոչ բոլորն էին ամբողջապես ապականված, և երբ լուր տարածվեց, թե թագուհին մի մարդ է ուղարկելու, որ այս երկրում Անգլիայի օրենքը հաստատի, պակաս չարերն ուրախացան, քանի որ զգացին, թե օրենքն անօրենսությունից լավ է: Քրիստոնյայի հասնելուց հետո չուշացան օրինազանցություններն ու ճնշումները, սարսափելի ոճիրների քողարկումն ու որոշումների առուծախը: Սկզբում չմեղադրեցին նրան, նրա վարած անգլիական արդարադատությունը ոչ մեկին ծանոթ չէր, գուցե նոր դատավորի կարծեցյալ օրինազանցությունները հիմնավորապես իրավացի և գաղտնի պատճառներ ունեին: Ուզում էին մտածել՝ ամեն ինչ իր արդարացումը կունենա

Նրա գրքում, բայց աշխարհի չար դատավորների հետ ունեցած նրա ակնհայտ նմանությունը վերջապես ժողովուրդին համոզեց, որ նա սովորական չարագործ է: Նա դարձավ մի բռնապետ, իսկ խեղճ ժողովուրդը, մի ժամանակ նրա վրա դրած չարդարացված հույսից վրեժ լուծելու միտումով, սկսեց նրան առևանգելու և դատի ենթարկելու գաղափարով տարվել: Խոսելը բավական չէ, խոսքից հարկադիր գործի անցան: Ոչ ոք, բացի շատ պարզունակներից և երիտասարդներից, չհավատաց այդ հանդուգն ծրագրի իրագործման գաղափարին, բայց հազարավոր սիկդեր ու մուսուլմաններ առանց հավատալու կատարեցին իրենց խոսքը՝ իր վախճանին հասցրին այն, ինչ նրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին անհնարին էր համարում: Առևանգեցին դատավորին և նրան՝ բանտարկեցին հեռավոր մի արվարձանի ագարակներից մեկում: Ապա հայտնի դարձան նրա զոհերի կամ (որոշ դեպքերում) նրանց այրիների կամ որբերի մասին. դահձի սուրը տարիների ընթացքում չէր հանգըստացել: Եվ վերջապես, գուցե դա եղավ ամենադժվարը, որոնեցին և ընտրեցին մի դատավոր, որը պետք է դատավորին դատեր:

Այստեղ նրան ընդհատեցին տուն մտնող կանայք:

Հենոն նա դանդաղորեն շարունակեց.

—Հայտնի է, որ յուրաքանչյուր սերնդի հետ աշխարհ են գալիս չորս ճշմարիտ ու արդար մարդիկ, որոնց վրա է անտեսանելիորեն հենվում տիեզերքը, և նրանք են, որ ներկայացնում ու արդարացնում են տիեզերքը Տիրոջ առաջ, անկասկած այդ մարդկանցից մեկը ամենահարմար դատավորը կլիներ: Բայց որտեղ գտնել նրանց, եթե նրանք անանուն կորած են այս աշխարհում, եթե հնարավոր չէ նրանց տեսնելով զանազանել, եթե իրենք իսկ չեն գիտակցում իրենց առաքելության մեծ նշանակությունը: Այդ ժամանակ մեկը մտածեց, որ եթե ճակատագիրը մեր նպատակի համար բացառում է իր իմաստուններին, ապա մենք պետք է անխելքներին դիմենք: Այս կարծիքը հաղթող դուրս եկավ: Դատարանը կազմվեց ղուրանագետներով, օրենքի գիտուններով, առյուծներ կոչվող և լուկ մի Աստված պաշտող սիկդերով, բազմաստված հինդուներով, Մահավիրայի վանահայրերով, որոնք սովորեցնում են, թե Տիեզերքը նման է ոտքերը չռած մարդու, կրակապաշտներով և սևամորթ հրեաներով, բայց վերջին դատավճիռը վստահվեց մի խելագարի:

Այստեղ նրան ընդհատեցին տոնակատարությունից վերադարձող մարդիկ:

— Մի խելագարի, — կրկնեց, — որպեսզի նրա բերանով խոսեր Աստծու իմաստությունը և ամաչեցնեի ամբարտավաններին: Նրա անունը մոռացվել է կամ երբեք էլ չի իմացվել, բայց նա այս փողոցներով մերկ կամ ցնցոտիներ հագած էր ման գալիս, անընդհատ մատներն էր հաշվում և ծաղրում ծառերին:

Ողջախոհությունս ըմբոստացավ: Ասացի, որ որոշումը խելագարին վստահեցրել նշանակում էր անվավեր ճանաչել դատավարությունը:

— Մեղադրյալն ընդունեց նրան որպես դատավոր, — եղավ պատասխանը: — Գուցե հասկացավ, որ նկատի ունենալով հավաքվածներին սպառնացող վտանգը, եթե իրեն ազատ արձակեին, միայն խելագարից կարող էր մահվան դատավճիռ չսպասել: Լսել եմ, որ ծիծաղել է, երբ նրան հայտնել են, թե ով է լինելու դատավորը: Վկաների բազմաքանակության պատճառով դատավարությունը օր ու գիշերներ տևեց:

Լռեց: Ակնհայտորեն մի բան մտահոգում էր նրան, և մի բան ասելու համար հարցրի՝ քանի օր:

— Առնվազն տասնինը, — ասաց: Տոնակատարությունից վերադարձող մարդիկ նորից ընդհատեցին նրան: Գինին արգելված է մուսուլմաններին, բայց դեմքերն ու ձայները կարծես գինով լինեին: Ինչ-որ մեկն անցնելիս ինչ-որ բան գոռաց ծերունուն:

— Ճիշտ տասնինը օր, — ճշտեց ծերունին: — Անհավատ շունը լսեց դատավճիռն, ու դանակը խրվեց նրա կոկորդը:

Նա խոսում էր վայրի հրճվանքով: Եվ միևնույն ձայնով շարունակեց պատմությունը:

— Առանց վախի մահացավ. ամենաստորներն անգամ ինչ-որ արժանիք ունեն:

— Որտեղ է կատարվել պատմածդ, — հարցրի: — Մի հեռավոր ագարակում:

Առաջին անգամ լինելով՝ նայեց աչքերիս մեջ: Հետո, դանդաղորեն, բառերը չափելով, բացատրեց:

— Ասացի, որ մի ագարակում են բանտարկել նրան, չասացի, որ նրան այնտեղ են դատել: Այս քաղաքում են դատել նրան, որևէ տան մեջ, սրա նման մի տան: Մի տուն մի ուրիշ տնից չի կարող տարբերվել, կարևորն այն է, որ իմանանք, թե որտեղ է կառուցված, երկնքում, թե դժոխքում:

Դավադիրների ճակատագրի մասին հարցրի:

—Չգիտեմ, — ասաց համբերությամբ: —Այս դեպքերը տարիներ առաջ են կատարվել ու մոռացվել: Գուցեև մարդիկ նրանց մեղավոր են համարել, բայց Աստված՝ երբեք:

Այս ասելով՝ ոտքի ելավ: Զգացի, որ նրա խոսքերը հրաժեշտի նշան էին, և որ այդ պահից ես նրա համար դադարել եմ գոյություն ունենալուց: Փենջաբում ապրող բոլոր ցեղերի մարդկանցից ու կանանցից բաղկացած մի ամբոխ, աղոթելով ու երգելով, ներխուժեց ներս և գրեթե ավելց մեզ, ինձ զարմացրեց այն, որ գրեթե երկար միջանցքների նմանվող այդքան նեղ բակերից ինչպես կարողացան այդքան մարդիկ դուրս գալ: Շատերը շրջակայքի տներից էին դուրս գալիս. անկասկած ցանկապատերի վրայով էին թռել... հրելով ու հայհոյելով ճանապարհ բացեցի: Վերջին բակում հանդիպեցի դեղին ծաղիկներով թագադրված մի մերկ մարդու, որին համբուրում ու մեծարում էին բոլոր ներսում գտնվողները. նրա ձեռքին մի սուր կար: Սուրն արյունոտ էր՝ այդ սուրը Գլենքեռնին էր սպանել. նրա անդամատված դիակը ետին բակի ախոռներում գտա:

O God, I could be bounded in a nutshell
and count myself a Kind of infinite space¹.

«Համլետ», II, 2

But they will teach us that Eternity is
the standing still of the present time,
A Nunc-stans (as the Schools call it);
which neither they, nor any else understand,
no more than they would a Hic-stans
for an Infinite greatness of Place...²

«Լիթան», IV, 46

Փետրվարյան այն տաք առավոտը, երբ Բեատրիս Վիտերբոն սենտիմենտալիզմից կամ վախից չնվաստացած, խրոխտ հոգեվարքից հետո մահացավ, նկատեցի, որ Սահմանադրության հրապարակի երկաթե ազդավահանակների վրա գովազդը նորոգված է. դա ցավալի դեպք էր, քանզի հասկացա, որ անհատնում ու ընդարձակ տիեզերքն արդեն հեռանում էր նրանից, և որ այդ փոփոխությունն անվերջանալի ընթացքի սկիզբն էր միայն: Թախծոտ ունայնամտությամբ մտածեցի, որ փոխվելու է տիեզերքը, բայց ես,— երբեմն, գիտեմ, անմիտ նվիրվածությունս նյարդայնացրել էր նրան,— այժմ կարող էի, թեև անհույս, բայց և առանց ստորանալու նվիրվել նրա հիշատակին: Խորհեցի, որ ապրիլի երեսունին, նրա ծննդյան տոնի առթիվ, Գարայ փողոցի տունն այցելելը և նրա հորն ու Կառլոս Արխենտինո Դաներիին՝ նրա զարմիկին ողջունելը, քաղաքավարի, անբասիր, գուցե և անխուսափելի քայլ էր: Ձողապատ սրահի նախամուտքում կսպասեի ևս մի անգամ, ևս մի անգամ կուսումնասիրեի նրա բազմաթիվ նկարների մանրամասները: Բեատրիս Վիտերբոն՝ կիսադեմով, Բեատրիսը՝ դիմակով, 1921 թվականի տոնախմբություններին, Բեատրիսի մկրտությունը, Բեատրիսի հարսանիքը Ռոբերտո

¹ «Աստված իմ, ես կարող էի մի ընկույզի կեղևի մեջ անգամ տեղավորվել, և ինքս ինձ անհուն տիեզերքի թագավորը համարել (անգլ.):»

² «Բայց նրանք ուզում են մեզ սովորեցնել, որ հավերժությունը ջարացած ներկան է, Nunc-stans (հիմա ջարացած), ինչպես կոչում են այդ դպրոցները, և այդ եզրաբառը, ինչպես հենց նրանց, այնպես էլ ուրիշների համար ավելի հասկանալի չէ, քան, եթե նրանք տարածության անվերջությունը կոչեն Hic-stans (այստեղ ջարացած) բառով (անգլ.):»

Ալեսանդրիի հետ, Բեատրիսը՝ բաժանվելուց հետո, ձիավարների ակումբի տված ճաշկերույթում, Բեատրիսը՝ Իլմեսում, Դելիա Սան Մարկո Պորսելի և Կառլոս Արխենտինոյի հետ, Բեատրիսը՝ Վիլլեգա Անդոյի նվիրած շնիկի հետ, Բեատրիսը՝ ժպտեթես, ձեռքը կզակին... Ուրիշ անգամների պես գնալս չպետք է արդարացների գրքերի համեստ նվերներով, գրքեր, որոնց կպած թերթերը սովորեցի կտրել, որպեսզի ամիսներ հետո նրանց չբացված լինելը չհաստատվեր:

Բեատրիս Վիտերբոն վախճանվեց 1929-ին, դրանից հետո ամեն տարի ապրիլի երեսունին լինում էի նրանց տանը: Հասնում էի մոտավորապես ժամը յոթն անց քառորդին և մնում քսանհինգ րոպեի չափ. տարեցտարի հասնում էի մի քիչ ավելի ուշ և մնում քիչ ավելի շատ. 1933 թվականին հորդ մի անձրև օգնեց ինձ՝ ստիպված ընթրիքի հրավիրեցին: Չէի կարող չօգտագործել այդ հաջող առիթը. 1934-ին կարկանդակների տուփը թևիս տակ՝ ժամը ութին հայտնվեցի, և, բնականաբար, միասին ընթրեցինք: Այդպես, այդ թախծոտ և ունայն, էրոտիկ տարելիցներին լսեցի Կառլոս Արխենտինո Դաներիի մտերմիկ խոստովանությունները:

Բեատրիսը բարձրահասակ էր, նուրբ, թեթևակիորեն առաջ հակված, քայլվածքում (եթե օքսիմորոնը թույլատրելի է) դյուրթական անձարակություն կար, էքստազի սկզբնավորություն. Կառլոս Արխենտինոն կարմրադեմ է, նուրբ դիմագծերով, ձերմակ և պատկառազու մազերով: Հարավի արվարձանների մոռացված մի գրադարանում ինչ-որ երկրորդական պաշտոն է վարում. իշխանություն ունի, սակայն ոչ ազդեցիկ, գիշերներն ու տոնական օրերն օգտագործում է (մինչև վերջերս) տնից դուրս չգալու համար: Երկու սերունդ է անցել, սակայն նա դեռ արտասանում է իտալերենի ս-ն և չի կորցրել իտալական շարժումները: Նրա մտավոր գործունեությունն անսպառ է, կրքոտ, դյուրափոփոխ և ամբողջությամբ անխելահաս: Ձանձրացնում է անտեղի համեմատություններով և անմիտ կասկածներով: Մի քանի ամիս կլանվել էր Պոլ Ֆորով, ոչ այնքան նրա բալլադների, որքան նրա անհասանելի փառքի գաղափարով: «Ֆրանսիացի պոետների իշխանն է»՝ կրկնում էր ամբարտավան: «Զուր ես մարտնչում նրա դեմ, նրան չի հասնի երբեք քո ամենաթունալից նետն անգամ»:

1941 թվականի ապրիլի երեսունին կարկանդակին ավելացրի մի շիշ տեղական կոնյակ: Կառլոս Արխենտինոն փորձեց, հաճելի համարեց և մի քանի գավաթից հետո սկսեց պաշտպանել ժամանակակից մարդուն:

— Ես Նրան տեսնում եմ,— ասաց անբացատրելի ոգևորությամբ,— իր առանձնասենյակում, ինչպես քաղաքը պաշտպանող պարիսպների աշտարակում, շրջապատված հեռախոսներով, հեռագրամեքենաներով, ձայնագրիչներով, ռադիոսարքավորումներով, կինոապարատներով, կախարդական լուսասփռիչներով, բառացանկերով, չվացուցակներով, ամփոփագրերով, հաղորդագրություններով...

Նկատեց, որ այդ սարքերով զինված մարդու համար անիմաստ է ճամփորդելը, մեր 20-րդ դարը հեղափոխել է Մուհամեդի և լեռան առակը, այժմ լեռները գալիս էին դեպի ժամանակակից Մուհամեդը:

Այնքան անմիտ, փառահեղ ու վերամբարձ թվացին նրա գաղափարներն ու խոսելաձևը, որ անմիջապես մտածեցի գրականության մասին. ասացի, թե ինչու՞ այդ ամենը գրի չի առնում: Պատասխանը կռահելի էր՝ արդեն գրի էր առել, այս և ոչ պակաս նորագյուտ գաղափարներ տեղ էին գտել մի պոեմի առաջաբանում, նախաբանում կամ նախերգանքում, որի վրա առանց *réclame*, առանց խլացնող աղմուկի, որպես հիմք ընդունելով այն երկու գայիսոնները, որոնք կոչվում էին աշխատանք և մենություն, աշխատում էր արդեն մի քանի տարի: Սկզբում բացում էր երևակայության դռները, հետո օգտագործում էր խարտոցը: Պոեմը կոչվում էր *Երկրագունդ*. մոլորակի նկարագրությունն էր, ուր, իհարկե, չէին պակասում ոչ գունազարդ շեղումը, ոչ էլ՝ հախուռն հրապարակախոսությունը:

Խնդրեցի, որ կարդա, թեկուզ մի շատ համառոտ հատված: Բացեց գրադարանի դարակն ու Խուան Կրիստոսոմո Լաֆինուրի անվան գրադարանի դրոշմանիշը կրող թղթերի մի հաստ կապոց հանեց և կարդաց ձայնեղ գոհունակությամբ՝

Հուլնի պես տեսել եմ քաղաքները, մարդկանց

Գործերը, օրերը՝ տարբեր լույսի տակ, սովը:

Ոչ դեպքերն եմ սրբագրում, ոչ էլ անունները,

**Սակայն պատմածս ճամփորդություն է, բայց ...autour
de ma chambre¹.**

— Ամեն տեսակետից հետաքրքրական քառյակ է,— դատեց:
— Առաջին տողը կորզում է մասնագետի, ակադեմիկոսի, հելլե-

¹ սեփական բնակարանի շուրջը (ֆր.):

նիստի ծափահարությունները, երկրորդն անցնում է Հոմերոսից Հեսիոդոսին (փառահեղ կերտվածքի ճակատին առնելով մեկ-երկու տեղ՝ ի նշան դաստիարակչական բանաստեղծության հոր հանդեպ հարգանքի) ու մինևույն ժամանակ թարմացնելով և բարելավելով այնպիսի մի ձև, որի ծագումնաբանությունը պետք է որոնել ս. Գրոց էջերում՝ թվարկումը, կուտակումը կամ բարդումը, երրորդը՝ բարոկկո, անկապաշտություն, նրբացած մշակույթի և ձևի ֆանատիկոսություն, բաղկացած երկու երկանդամ ոտքերից, չորրորդը՝ ուղղակի երկլեզու՝ ինձ համար ապահովում է զգայուն հոգիների գնահատությունը, որը չեն կարող խախտել բազմաթիվ սատիրիստների գրոհներն անգամ: Դեռ չեմ խոսում տարօրինակ հանգի և պատկերավորման մասին, որ առանց պարծենկոտության ինձ թույլ է տալիս չորս տողի մեջ գետեղել երեք գիտական ակնարկ, որոնք պարունակում են երեսուն դարերի սեղմ գրականությունը. առաջինը՝ **Ողիսականը**, երկրորդը՝ **Աշխատանքներն ու օրերը**, երրորդը՝ այն էժանագին անմահությունը, որ մեզ է պարգևում սաբոնացու գրչի ձանձրույթը... Եվս մի անգամ հասկանում եմ, որ ժամանակակից արվեստը պահանջում է ծիծաղի բալասանը՝ *սկերցոն*: Անկասկած խոսքը վերաբերում է Գոլդոնիին:

Ուրիշ քառյակներ էլ կարդաց, որոնք նույնպես արժանացան նրա գնահատանքին և խիստ մեկնաբանությանը: Նրանց մեջ հիշարժան ոչինչ չկար, նախորդներից էլ վատը չէին: Նրա գըրվածքներում միահյուսվել էին նվիրումը, հանդուրժողականությունն ու բախտը. Դաներիի նշած արժանիքները արտատեքստային էին: Հասկացա, որ բանաստեղծի աշխատանքը ոչ թե բանաստեղծությունն է, այլ բանաստեղծությունը հիանալի դարձնելու համար պատճառներ հնարելը. բնականաբար, հետագա աշխատանքը գործը փոխում է իր, բայց ոչ ուրիշների համար: Դաներիի արտասանական արվեստն արտառոց էր. նրա ռիթմական անճարակությունը, չնչին բացառությամբ, թույլ չտվեց այդ արտառոցությունը բանաստեղծությանը փոխանցել: Կյանքում ընդամենը մի անգամ եմ առիթ ունեցել ուսումնասիրելու Polyolbion-ը՝ տասնհինգ հազար տասներկուվանկանիներ պարունակող տեղագրական դյուցազներգությունը, որտեղ Մայքլ Դրեյտոնը արձանագրել է Անգլիայի բուսական և կենդանական աշխարհը՝ գետերը, լեռները և վանական ու ռազմական պատմությունը, վստահ եմ, որ այդ թեև նշանակալի, բայց և սահմանափակ արտադրանքը պակաս ձանձրալի է, քան Կառլոս Արխենտինոյի գրվածքը: Սա չափածո-

յով ուզում էր գրավել ամբողջ երկրագունդը.. 1941-ին նա արդեն հաղթահարել էր Քուինսլանդ նահանգի մի քանի հեկտարը Օբ գետի հովտի մի քանի կիլոմետրեր, Վերակրուսի հյուսիսում գտնվող գազակայանը, Կոնսեպսիոն եկեղեցու շուրջն ընկած ամետրական բոլոր գլխավոր տները, Բելգրանո թաղամասում՝ Օնսե դե Սետիեմբրե փողոցի Մարիանա Կամբասերես դե Ալվեարի այգիները և Բրայտոն հանրահայտ ակվարիումից ոչ շատ հեռու թրքական բաղնիքների մի հաստատություն: Պոեմի՝ Ավստրալիային վերաբերող հատվածից մի քանի բարդ գլուխներ կարդաց. այդ երկար ու ալեքսանդրյան չափի հաղորդագրությունները նախաբանի հարաբերական աշխուժությունը չունեին: Բերեմ մի քառյակ՝

Իմացեք. միապաղաղ սյունից աջեաջ

Գալով, իհարկե, Հյուսիս, հյուսիս-արևմուտքից

Ձանձրանում է մի կմախք — Գոլյնը: Ճերմակաերկնագույն,

Որ ոչխարների գոմին տալիս է ոսկրագերեզմանի համ:

— Լսում եմ քրթնջոցդ հաջող գտնված երկու հանդգնությունների համար,— բացականչեց ուրախացած,— ընդունում եմ, ընդունում: Մեկը, միապաղաղ մակդիրն է, որ՝ ճշգրտորեն մերկացնում է *en passant*¹՝ գյուղական աշխատանքներին բնորոշ, անժխտելի ձանձրույթը, որն այս ձևով, այսքան վառ չեն համարձակվել մերկացնել ոչ Գեորգիկները, ոչ էլ մեզ արդեն հայտնի Դոն Սեգունդոն: Մյուսը՝ *ձանձրանում է մի կմախք* պրոզաիզմն է, որ բծախնդիր մեկը կուզենա սարսափով բանադրել, բայց տղամարդկային ճաշակ ունեցող քննադատը իր կյանքից էլ բարձր կգնահատի: Բացի այդ, ամբողջ քառյակն էլ բարձրորակ է: Երկրորդ ոտքը հետաքրքրական զրույց է բացում ընթերցողի հետ՝ նրա հետաքրքրասիրությունը կանխելով առաջ է ընկնում, նրա շուրթերին դնում է մի հարց և անմիջապես... բավարարում: Իսկ ինչ կասես այս գյուտի մասին՝ ճերմակաերկնագույն. այս հոյակապ նորարարությունը առաջացնում է երկնքի պատկերը, որը ավելստրալիական բնության կարևոր տարրերից է: Առանց այդ հիշատակման ուրվանկարի գույնը շատ մռայլ կլիներ, ընթերցողը՝ հոգու խորքում վիրավորված անբուժելի սևմաղձով՝ հարկադրված կփակեր ժողովածուն:

Կեսգիշերին հրաժեշտ տվեցի:

¹ անցնելիս (ֆրանս.), այստեղ՝ ի միջի այլոց, հարևանցի (ծան.խմբ.):

Երկու կիրակի անց Դաներին, իր կյանքում առաջին անգամ, զանգահարեց ինձ: Առաջարկեց ժամը չորսին հանդիպել. «Միասին կաթ կխմենք մեր տան մոտի նոր բացված բար-սրահում, որը իմ տան տերերի, Երևի հիշես՝ Սունինոյի և Սունգրիի առաջադիմության հետևանքն է, հետաքրքրական կլինի քեզ համար»: Ավելի շուտ ճարահատյալ, քան ոգևորված ընդունեցի հրավերը: Սեղան ճարելը դժվար եղավ. «սրահ-բարը»՝ անժխտելիորեն ժամանակակից, իմ պատկերացրածի պես զազրելի էր. հարևան սեղանների շուրջը բորբոքված ժողովուրդը հիշատակում էր Սունինոյի և Սունգրիի շռայլորեն ծախսած գումարները: Կառչուս Արխենտինոն, իբր թե զարմանքով, ցույց տվեց ինչ-որ էլեկտրական սարքեր (որ անկասկած արդեն ծանոթ էին իրեն) և բավականին խստությամբ ասաց.

— Ուզած-չուզած պետք է ընդունես, որ այս սրահը կարող է մրցակցել Ֆլորենսի ամենաորակյալ սրահների հետ:

Հետո վերընթերցեց պոեմի չորս թե հինգ էջ: Սրբագրել էր, հենվելով բառապաշարային ցուցամոլության անխիղճ սկզբունքի վրա. ուր առաջ գրել էր *կապտագույն*, հիմա ճոխացրել էր *կապտորակով*, *կապտավունով* և նույնիսկ *կապուտակով*: Կաթնագույն բառը բրդի լվացքատուն նկարագրելու համար գեղեցիկ չէր համարում, նախընտրում էր կաթնաթույրը, կաթնորակը, կաթնավունը, կաթնաճերմակը... Մաղձ թափեց քննադատների հասցեին, հետո, ավելի բարեհաճ, նրանց համեմատեց մարդկանց հետ, «որոնք ոչ անգին քարեր ունեն, ոչ շոգեմամլիչներ, ոչ հղկող հաստոցներ, ոչ էլ ծծմբաթթու՝ դրամահատման համար, բայց, այնուհանդերձ, մյուսներին կարող են ցույց տալ գանձի տեղը»: Անմիջապես անցավ նախաբանամոլության քննադատությանը, «հիվանդություն, որով, «Կիխոտը» նախաբանելիս, արդեն վարակված էր հանճարների Իշխանը»: Այնուամենայնիվ ընդունեց, որ նոր գործի համար նախընտրելի է զորավոր գրիչ ունեցողի կողմից ստորագրված ցուցադրական մի նախաբան, որ պատի պես կանգներ նոր գործի մեջքին: Այդ ժամանակ հասկացա նրա տարօրինակ հրավերը՝ խնդրելու էր, որ իր այդ հավակնոտ ցնդաբանության համար նախաբան գրեի: Մտավախությունս անտեղի էր, Կառչուս Արխենտինոն նախանձելի հիացմունքով նկատեց, որ ամենուր հեղինակավոր դիրք գրաված Ալվարո Մելիան Լաֆինուրի համբավը կայուն համարելը սխալ չէր լինի, և որ եթե ես ցանկանայի՝ այդ փայլուն մտավորականը կարող էր նախաբանել

իր պոեմը՝ կատարյալ վարպետությամբ: Ամենաաններելի ձախողումը կանխելու համար, ես պետք է լինեի երկու անժխտելի արժանիքների պատվարը՝ ձևական կատարելության և գիտական մանրակրկիտության, «քանի որ դարձվածների, պատկերների նըրբամտությունների պարտեզը խստագույն ճշմարտությունը չհաստատող ոչ մի մանրամասնություն չի ընդունում»: Ավելացրեց, որ Բեատրիսն ու Ալվարոն հաճախ միասին էին գրոսնել:

Մի կերպ տվեցի համաձայնությունս: Ավելի հավաստի դարձնելու համար ասածս, բացատրեցի, որ ոչ թե երկուշաբթի, այլ հինգշաբթի օրը կխոսեմ Ալվարոյի հետ, օգտվելով այն համեստ ընթրիքից, որով սովորաբար ավարտվում են գրողների բոլոր հավաքույթները (նման ընթրիքներ գոյություն չունեն, սակայն անհերքելի է այն փաստը, որ հավաքույթները տեղի են ունենում հինգշաբթի օրերին, և Կառլոս Արխենտինո Դաներին կարող էր այդ փաստն ստուգել թերթերով, իսկ այդ հանգամանքը որոշ իրական շեշտ էր հաղորդում ասածիս): Խոսքիս սրամիտ երանգ տալով՝ ասացի, որ Նախաբանին անցնելուց առաջ նկարագրելու եմ գործի ինքնատիպ ծրագիրը: Բաժանվեցինք: Բեռնարդո դե Իրիգոժենից թեքվելուց հետո ամենայն լրջությամբ քննեցի իմ ունեցած երկու միջոցները՝ ա) խոսել Ալվարոյի հետ և ասել, որ Բեատրիսի հորեղբոր որդին (այդ բացատրական մեղմասածությունը ինձ թույլ կտար արտասանել նրա անունը) ստեղծել է մի պոեմ, որ անսահմանության է հասցնում տարահնչության ու քառսի հնարավորությունները, բ) չխոսել Ալվարոյի հետ: Պայծառամտությամբ կանխագուշակեցի, որ ծուլությունս Նախընտրելու էր երկրորդը:

Ուրբաթ օրն առավոտյան հեռախոսն արդեն սկսեց անհանգրստացնել ինձ: Անհանդուրժելի էր. ինչպես կարող էր այն սարքը, որ մի ժամանակ արտաբերել էր Բեատրիսի այսօր այլևս անկրկնելի ձայնը, նվաստանալ և դառնալ այդ խաբված Կառլոս Արխենտինո Դաներիի անօգուտ և գուցե զայրացկոտ բողոքների ընկալուչը: Բարեբախտաբար ոչինչ չպատահեց, բացի այն անկանխագուշակելի զայրույթը, որ ինձ պատճառեց մի մարդ, ով հանձնարարելով նրբագույն մի գործարք՝ մոռացել էր ինձ:

Հեռախոսը դադարեց ինձ ահաբեկել, սակայն հոկտեմբերի վերջերին Կառլոս Արխենտինոն վերստին զանգահարեց: Հուզված էր, ձայնը սկզբում չճանաչեցի: Տխուր ու զայրացած կմկմաց, որ Սունինոն և Սունգրին, իրենց անմիտ սրճարանի ապագա ծավալումը պատճառաբանելով՝ ուզում էին քանդել իր տունը:

— Ծնողներին տունը, իմ տունը, Գարայ փողոցի հինավուրց տունը,— կրկնեց կարծես թե բառերի մեղեդու մեջ խեղդելով իր վիշտը:

Դժվար չէր հասկանալ նրա վիշտը: Երբ լրանում է քառասունը, ամեն մի փոփոխություն դառնում է ժամանակի անցողիկության ատելի մի խորհրդանիշ, բացի այդ, հիշյալ տունն ինձ համար անբաժանելի էր Բեատրիսի հիշատակից: Ուզում էի բացատրել այս նրբությունը, խոսակիցս չլսեց ինձ: Ասաց, որ եթե Սունինոն և Սունգրին համառ են իրենց անհեթեթ մտադրության մեջ, դոկտոր Սունինն՝ իր փաստաբանը, դիմելու է դատարան և ipso facto՝ տեղական դրամով հարյուր հազարի հատուցում է պահանջելու:

Սունինի անունն ազդեց վրաս. նրա գրասենյակը՝ Կասերոս և Տակուարի խաչմերուկում, լուրջ համբավ էր վայելում: Հարցրի՝ նա արդեն սկսել էր աշխատանքները, թե ոչ, Դաներին ասաց, որ հենց այդ երեկո պիտի խոսի հետը: Տատանվեց և այն միապաղաղ անդամ ձայնով, որով խոստովանում ենք մի շատ մեծ ու ներքին գաղտնիք, ասաց, որ տունն անհրաժեշտ էր պոեմն ավարտելու համար, քանի որ ներքնահարկի անկյուններից մեկում մի Ալեֆ կա: Բացատրեց, որ Ալեֆը տարածության մեջ ընկած այն կետերից մեկն է, որ իր մեջ պարունակում է բոլոր կետերը:

— Ճաշասենյակի տակի ներքնահարկում է,— բացատրեց մորմոքից դողացող ձայնով: — Իմն է, իմը, ես եմ հայտնաբերել, երբ դեռ երեխա էի, նախադպրոցական տարիքում: Ներքնահարկի սանդուղքը բարձր է, ինձ արգելված էր իջնելը, բայց լսել էի, որ ներքնահարկում մի աշխարհ կա: Խոսքը արկղի մասին էր, հետո իմացա, բայց ես բառացի էի հասկացել աշխարհը: Իջա, գլորվեցի արգելված սանդուղքով, ընկա: Երբ բացեցի աչքերս՝ տեսա Ալեֆը:

— Ալեֆը,— կրկնեցի:

— Այո, այն տեղը, ուր աշխարհի բոլոր վայրերն են՝ դիտված բոլոր հնարավոր անկյուններից: Ոչ ոքի չպատմեցի հայտնությանս մասին, սակայն էլի ու էլի նկուղ վերադարձա: Երեխան չէր կարող հասկանալ, որ այդ արտոնությունը նրան տրված էր, որպեսզի հասուն մարդ դառնալուց հետո պոեմ ստեղծեր: Սունինոն և Սունգրին չեն կարող ինձ զրկել իմ Ալեֆից, հազար անգամ ոչ:

¹ փաստի զորությանը (լատ.):

Օրենսգիրքը ձեռքին դոկտոր Սուննին կփաստի, որ իմ Ալեֆն անփոխանցելի է:

Փորձեցի տրամաբանել:

— Բայց ներքնահարկը շատ մութ չէ:

— Այո, ճշմարտությունը դժվարությամբ է ուղի հարթում դեպի կարծր միտքը: Եթե աշխարհի բոլոր վայրերը Ալեֆում են, այստեղ կլինեն նաև բոլոր լուսատուները, բոլոր լամպերը, լույսի բոլոր վտակները:

— Անմիջապես գալիս եմ:

Ընկալուչն իսկույն կախեցի, որ գնալս հանկարծ չխափանվեր: Մի դեպքի ճանաչումը հաճախ բավարարում է մանրամասնությունների այսպիսի մի ամբողջություն ընկալելու, որ նախքան այդ կասկած էլ չի հարուցել. զարմանալին այն էր, որ մինչև այդ՝ ես չէի հասկացել, թե Կառլոս Արխեստինոն պարզապես խենթ է: Բացի այդ, բոլոր Վիտերբուրները... Բեատրիսը (նույնիսկ ես եմ հաճախ կրկնում) անողոք ողջախոհություն ունեցող կին էր, սակայն նա երբեմն ունենում էր անհոգությունների, անուշադրությունների, արհամարհանքների, իսկական դաժանությունների նույաներ, որ գուցե պաթոլոգիական բացատրություն պահանջեին: Կառլոս Արխեստինոյի խենթության գաղափարը չարախինդ երջանկություն պատճառեց ինձ. սրտի խորքում իրար տանել չէինք կարողանում:

Գարայ փողոցում սպասուհին խնդրեց սպասել: Նա, ինչպես միշտ, ներքնահարկում նկարներ էր երևակում: Անպետքացած դաշնամուրի վրա, անծաղիկ ծաղկամանի կողքին (ավելի անծամանակային, քան ժամանակավրեպ), խամրած գույների միջից ժպտում էր Բեատրիսի մեծադիր պատկերը: Մեզ ոչ ոք չէր կարող տեսնել. քնքշանքն հաղթեց ինձ, և ես մոտեցա պատկերին.

— Բեատրիս, Բեատրիս էլենա, Բեատրիս էլենա Վիտերբո, սիրելի Բեատրիս, արդեն ընդմիշտ հեռացած Բեատրիս, ես եմ, Բորխեսը:

Կառլոսը քիչ անց ներս եկավ: Նրա խոսքերի մեջ որոշ չորություն կար, հասկացա, որ ուրիշ բանի մասին չէր կարող մտածել, նրա մտքում միայն Ալեֆի կորուստի գաղափարն էր:

— Մի գավաթ կեղծ կոնյակ,— հրամայեց,— և անմիջապես կսուզվես ներքնահարկ: Պետք է մեջքի վրա պառկել: Նաև անհրաժեշտ է մթություն, անշարժություն և որոշ հարմարվածություն: Կպռուկես սալահատակին և աչքերդ կհառես տասնիններորդ

աստիճանին: Ես դուրս կգամ, կփակեմ անցքն, ու դու մենակ կմնաս: Եթե ինչ-որ մուկ քեզ վախեցնի, դատարկ բան է: Մի քանի բոպեից կտեսնես մեր տխրահռչակ բարեկամին՝ *multum in parvo*¹-ն կտեսնես:

Արդեն ճաշասենյակում ավելացրեց.

— Բնական է, որ քո չտեսնելը, քո անկարողությունը չի արժեզրկի իմ ասածը... Իջիր, շուտով կարող ես գրույցի բռնվել Բեատրիսի բոլոր պատկերների հետ:

Նրա անհեթեթ խոսքերից զգված՝ արագ-արագ ցած իջա: Ներքնահարկը, որ սանդուղքից քիչ ավելի լայն էր, խռռչի էր նմանվում: Նայվածքս զուր որոնեց Կառլոս Արխենտինոյի նշած արկղը: Շշերի մի սնդուկ և տոպրակների մի կույտ զբաղեցնում էին անկյունը: Կառլոսը վերցրեց տոպրակներից մեկը, ծալեց և տեղադրեց նախատեսված մի կետում:

— Բարձր փոքր է,— բացատրեց,— բայց եթե փոքր-ինչ բարձրացնես՝ բացարձակապես ոչինչ չես տեսնի և ամոթով կմնաս: Այդ վիթխարի մարմինդ փոփր գետնին և տասնինն աստիճան հաշվիր:

Կատարեցի՝ նրա անհեթեթ պահանջները, վերջապես նա դուրս եկավ: Անցքը զգուշությամբ փակեց. մթությունը, նույնիսկ մի ճեղքի առկայությամբ, որ հետո հայտնաբերեցի, կարող էր բացարձակ թվալ: Հանկարծ հասկացա վտանգը՝ թույլ էի տվել, որ մի խենթ թաղեր ինձ՝ թույն խմեցնելուց հետո: Կառլոսի բարբառանքներն արտացոլում էին այն ներքին սարսափը, թե ես կարող էի և չտեսնել հրաշքը: Կառլոսը, իր ցնորքը պաշտպանելու, իր խենթության համբավը չտարածելու համար պետք է սպաներ ինձ: Տարօրինակ մի անհանգստություն զգացի, որը ցանկացա վերագրել պահի և ոչ թե թմրադեղի ազդեցությանը: Փակեցի աչքերս. բացեցի: Այդ ժամանակ տեսա Ալեֆը:

Այժմ հասնում եմ պատմածիս հիմնական մասին, և այստեղ է սկսվում գրողիս հուսահատությունը: Յուրաքանչյուր լեզու խորհրդանիշների այբբենարան է, որի գործածությունը խոսակիցներին հայտնի մի անցյալ է ենթադրում: Բայց ինչպես փոխանցել Ալեֆը, որ իմ երկյուղած հիշողությունն հազիվ է ընդգրկում: Միստիկները համանման տրանսի մեջ աստվածայինը նշանակելու համար գործածում են խորհրդանիշներ. պարսիկը Աստ-

¹ Շատը փոքրի մեջ (լատ.):

ված ասելու փոխարեն խոսում է մի թռչունի մասին, որն ինչ-որ ձևով բոլոր թռչուններն է միաժամանակ: Ալանուս դե Ինսուլիսը խոսում է մի շրջանակի մասին, որի կենտրոնն ամեն տեղ է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ, եզերկիելը՝ չորս երես ունեցող մի հրեշտակի մասին, որը միևնույն ժամանակ նայում է և Արևելք, և Արևմուտք, և Հարավ: (Ջուր չէ, որ հիշում եմ այդ անընթացների համանմանությունները, դրանք ինչ-որ կապ ունեն Ալեֆի հետ): Գուցե աստվածներն ինձ էլ չմերժեին համանման պատկերի հայտնությունը, բայց այդ պարագայում սույն տեղեկագիրը կվարակվեր գրականությամբ, կեղծիքով: Բացի այդ, կենտրոնական խնդիրը՝ անսահման խմբի թեկուզ և մասնակի թվարկումը, անլուծելի է: Այդ հսկայական պահին միլիոնավոր հաճելի և դաժան գործողություններ եմ տեսել, ոչ մեկն ինձ այնքան չգարմացրեց, որքան այն հանգամանքը, որ բոլորն էլ, առանց մակադրվելու ու ներթափանցվելու իրար մեջ, նույն կետն էին զբաղեցնում: Աչքերիս տեսածը միաժամանակյա էր, փոխանցածս հաջորդական կլինի, քանի որ լեզուն է այդպիսին: Սակայն ինչ-որ բան կփորձեմ հաղորդել:

Աստիճանի ներքևի մասում, աջ կողմի վրա, գրեթե անդիմադրելի փայլով փողփողում էր մի փոքրիկ շրջանակ: Սկզբում ինձ թվաց, թե պտտվում է, հետո հասկացա, որ նրա մեջ արտացոլվող, գլխապտույտ պատճառող դեպքերի հետևանքն էր այդ շարժումը: Ալեֆի տրամագիծը երկու կամ երեք սանտիմետր կլիներ, սակայն այնտեղ էր գտնվում, առանց հարաբերական փոքրության, տիեզերական ողջ տարածությունը: Ամեն բան (ասենք հայելու մեջ լուսինը) միևնույն ժամանակ անթիվ բաներ էին, քանզի ես այն տեսնում էի տիեզերքի բոլոր կետերից: Բազմաբնակ ծովը տեսա, տեսա արշալույսն ու մայրամուտը, Ամերիկայի բազմությունները տեսա, տեսա արծաթագույն մի սարդոստայն մի սև բուրգի կենտրոնում, քանդված մի բավիղ տեսա (Լոնդոնն էր), տեսա անհատնում, անմիջական աչքեր, որ իրենք իրենց էին որոնում իմ մեջ, ինչպես հայելում, մոլորակի բոլոր հայելիները տեսա, և ոչ մեկն ինձ չարտացոլեց, Սուլեր փողոցի մի միջնաբակում տեսա այն նույն սալաքարերը, որ երեսուն տարի առաջ Ֆրայ Բենտոնում գտնվող մի տան միջանցքում էի տեսել, ողկույզներ տեսա, ձյուն, ծխախոտ, մետաղի ջարդոն, ջրի գոլորշի, էկվատորյան անապատները տեսա և նրանց ամեն մի հատիկ ավազը, Ինվերնեսսում մի կին տեսա, որին երբեք չեմ մոռանա, տեսա վարսերը փարթամ, մար-

մինը խրոխտ, կրծքին մի խոց տեսա, մայթի վրա հողե մի փոս տեսա, ուր առաջ մի ծառ էր եղել, Ադրոգեի այգին տեսա, Պլինիուսի անգլիական տարբերակից մի օրինակ տեսա՝ Ֆիլեմոն Հուլանդինն էր, յուրաքանչյուր էջի յուրաքանչյուր տառը տեսա (փոքր ժամանակ գիշերվա ընթացքում փակված տառերի չխառնվելն ու չկորչելը ինձ հիացմունք էր պատճառում), ժամանակակից գիշերն ու ցերեկը տեսա, Կերետարոյում մի արևմուտք տեսա, որ կարծես Բենգալիայում աճող մի վարդի գույնն էր արտացոլում, անբնական ննջասենյակս տեսա, Ալքմաարի առանձնասենյակներից մեկում երկու հայելիների մեջտեղում անվերջորեն բազմապատկված մի երկրագունդ տեսա, խառնված բաշերով ձիեր տեսա Կասպից ծովի վաղորդայնում, մի ձեռքի նուրբ կմախք տեսա, տեսա թե ինչպես մարտից փրկվածները բացիկներ էին ուղարկում, Միրզապուրում գտնվող մի աշտարակում իսպանական մի խաղաթուղթ տեսա, ձմեռային մի այգում ձարխտների շեղակի ստվերները տեսա, տեսա վագրեր, բիզոններ, կոհակներ ու բանակներ, երկրագնդի բոլոր մրջյունները տեսա, տեսա պարսկական մի աստղադիտակ, գրասեղանի դարակում նամակներ տեսա (և ձեռագիրը դող պատճառեց), լպիրշ, անհավատալի, դիպուկ նամակներ, որ Բեատրիսն ուղղել էր Կառլոս Արխեստինոյին, Ջակարտայում տեսա պաշտամունքի մի կոթող, տեսա այն զագրելի աճյունը, որին վերածվել էր մի ժամանակվա Բեատրիս Վիտերբոյի հմայքը, իմ մուգ արյան շրջանառությունը տեսա, տեսա սիրո մեխանիզմն ու մահվան փոփոխությունը, բոլոր կետերից դիտված Ալեֆը տեսա, տեսա երկիրն Ալեֆում և երկրում՝ նորից Ալեֆը և Ալեֆում՝ երկիրը, դեմքս ու ջղերս տեսա, տեսա քո դեմքն ու գլխապտույտ զգացի և լաց եղա, քանի որ աչքերս տեսել էին այն, ինչ մարդկային աչքը չի տեսել, այն գաղտնի ու ենթադրական առարկան, որի անունը մարդիկ գողանում են՝ անըմբռնելի տիեզերքը:

Անհուն պաշտամունք, անհուն խղճմտանք զգացի:

— Ապշել ես, հը,— ասաց ուրախ, զգվելի մի ձայն: — Որքան էլ խելքիդ զոռ տաս՝ ողջ կյանքում չես հատուցի իմ այս հայտնությունը: Հը, Բորխես, ապշեցուցիչ դիտարան է, այնպես չէ:

Կառլոս Արխեստինոյի ոտքերն զբաղեցնում էին ամենավերին աստիճանը: Հանկարծակի լուսավորվեց, և ես հազիվ կարողացա ոտքի ելնել ու կմկմալ:

— Ապշեցուցիչ: Այո, ապշեցուցիչ:

Ձայնիս համակ անտարբերությունը զարմացրեց ինձ: Կառլոս Արխեստինոն հուզված համառում էր:

—/Լավ տեսնո՞ւմ եմք ինչ, գունավոր:

Այդ պահին մեջս ծնվեց վրեժս առնելու միտք: Բարեհամբույր, անթաքույց խղճմտանքով, ջղագրգիռ, խուսափողական շնորհակալություն հայտնեցի Կառլոս Արխեստինո Դաներիին հյուրընկալության համար և խորհուրդ տվեցի, որ առիթից օգտվելով հեռանա վնասակար օդով քաղաքից, որ ոչ ոքի,— հավատացե՛ք,— ոչ ոքի չի խնայում: Մեղմորեն հրաժարվեցի վիճել Ալեֆի շուրջ, բաժանվելիս գրկեցի նրան և կրկնեցի, որ դաշտն ու խաղաղությունը երկու մեծ բժիշկներ են:

Փողոցում, Սահմանադրության սանդուղքներին, մետրոյում բոլոր դեմքերն հարազատ թվացին: Սարսափով մտածեցի, թե աշխարհում ինձ զարմացնող ոչինչ չմնաց, որ ինձ այլևս երբեք չի լքի այն զգացումը, որ ես այդ ամենը մի անգամ արդեն տեսել եմ: Բարեբախտաբար մի քանի գիշերվա անքնությունից հետո մոռացումս կրկին աշխատանքի անցավ:

1943 թվականի մարտի մեկի հետգրություն: Գարայ փողոցի շենքը քանդելուց վեց ամիս հետո, «Պրոկուրատ» հրատարակչատունը վախեցավ պոեմի զգալի երկարաբանությունից և շուկա հանեց «Արգենտինյան պատառիկներ»-ի մի ընտրանի: Թե ինչ եղավ հետո, ավելորդ է ասել՝ Կառլոս Արխեստինո Դաներին դարձավ Ազգային գրականության մրցույթի երկրորդ դափնեկիրը¹: Առաջին մրցանակը տրվեց դոկտոր Աիտային, երրորդը՝ դոկտոր Մարիո Բոնֆանտին, իմ գործը՝ «Թղթամուլի թղթերը», անհավատալիորեն ոչ մի քվե չստացավ: Եվս մի անգամ հաղթանակ տարան տգիտությունն ու նախանձը: Վաղուց արդեն չեմ կարողանում տեսնել Դաներիին, թերթերը գրում են, թե շուտով մեզ կընծայի մի նոր ժողովածու: Իր (Ալեֆով արդեն չխանգարված) բեղմնավոր գրիչը նվիրել է դոկտոր Ասեվեդո Դիասի ստեղծագործությունները չափածոյի վերածելու գործին:

Ուզում եմ ավելացնել երկու նկատողություն. մեկը՝ Ալեֆի բնույթի, մյուսը՝ նրա անվան մասին: Սա, ինչպես հայտնի է, սուրբ Գրոց այբբենարանի առաջին տառն է: Նրա գործունեությունն իմ պատմության մեջ պատահական չէ: Կաբալիստիկայի համար այդ

¹ «Ես առաջա Ձեր տանջահար շնորհավորանքները,— գրում է նա ինձ,— իմ խեղճ ընկեր, Դուք պայթում եք նախանձից, բայց դուք պետք է խոստովանեք, թեկուզ սպանեք Ձեզ, որ այս անգամ ես կարողացա պնդել իմ գլխարկը ամենավառ փետուրներով, իսկ իմ չալման՝ սուտակների թագուհով»:

տառը նշանակում է En Soph՝ անսահման ու անբիծ աստվածություն, ասված է նաև, որ նրա ձևն ունի այն մարդու պատկերը, որ ցույց է տալիս երկինքն ու երկիրը, նշելով նաև, որ ստորին աշխարհը բարձրագույնի հայելին ու քարտեզն է, Mengenlehre¹-ում Ալեֆը անհամար այն թվերի խորհրդանիշն է, որոնցում ամբողջը մասերից ավելի մեծ չէ: Ես կուզեի իմանալ, թե Կառլոս Արխեստինոն արդյոք ինքն է ընտրել, թե իր տան Ալեֆի անհամար տեքստերից մեկում կարդացել է այդ անունը՝ վերագրված մի այլ կետի, ուր միանում են բոլոր կետերը: Որքան էլ անհավատալի թվա, ես կարծում եմ, որ կա (կամ եղել է) մի այլ Ալեֆ, ես կարծում եմ, որ Գարայ փողոցում գտնվող Ալեֆը կեղծ Ալեֆ էր:

Բերեմ կռվաններս: Մինչև 1867 թվականը կապիտան Բարտոնը Բրազիլում վարում էր բրիտանական հյուպատոսի պաշտոնը, 1942-ի հուլիսին, Սանթոսի գրադարաններից մեկում Պեդրո Էն-րիկես Ուրենիան հայտնաբերեց նրա մի ձեռագիրը, ուր խոսվում էր Արևելքում Իսկանդար Սու ալ Կառնային կամ Մակեդոնացի Ալեքսանդր Երկեղջուրին վերագրվող հայելու մասին: Այդ հայելին արտացոլում էր ողջ տիեզերքը: Բարտոնն այլ, կողմնակի ձևեր էլ է հիշատակում՝ Կաի Խոսրուի յոթերորդ գավաթը, Թարիկ Բենզեյթի մի աշտարակում հայտնաբերված հայելին («1001 գիշեր», 273), Լուսիանո Սամոսացու՝ Լուսինը արտացոլող հայելին («Ճըշմարտացի Պատմություն», I, 26), այն հրաշագեղ նիզակը, որ «Սատիրիկոնի» առաջին գրքում դե Կապելլան վերագրում է Յուպիտերին, Մերլինի տիեզերական հայելին՝ «կլոր և փոսընկած, և նման ապակե աշխարհի» («Փերինների թագուհին», III, 2, 19), — ու ավելացնում է այս հետաքրքրական խոսքերը՝ «Բայց հիշյալ բոլոր հայելիները» (բացի գոյություն չունենալու թերությունից) օպտիկական սարքեր են: Կահիրեի Ամր մզկիթն այցելող հավատացյալները շատ լավ գիտեն, որ տիեզերքը գտնվում է կենտրոնական բակը շրջապատող քարե սյուներից մեկի մեջ... Ոչ ոք իհարկե չի տեսել, բայց ովքեր ականջը հպել են սյունին, պնդում են, որ կարճ ժամանակից հետո որսում են նրա մեջի շշուկը... Մզկիթը պատկանում է 7-րդ դարին, սակայն սյուները կառուցվել են նախաիսլամական շրջանում, քանի որ, ինչպես գրել

¹ Թազմությունների տեսություն (գերմ.):

է Աբենխալդունը՝ «Քոչվորների հիմնադրած հանրապետություններում շինարարության մեջ անհրաժեշտ է օտարների մասնակցությունը»:

Գոյություն ունի արդյոք այդ Ալեֆը մի քարի ներսում: Միթե այն տեսել եմ ամեն ինչ տեսնելու պահին, իսկ հետո մոռացել: Մոռացումը կրծում է մեր հիշողությունը, ես ինքս աղավաղում ու կորցնում եմ ժամանակի ողբերգական անցքի մեջ Բեատրիսի դիմագծերը:

Բացի «Էմմա Յունց» պատմվածքից (որի հոյակապ սյուժեն հեռու է ամեն մի երկմիտ շարադրանքից և ինձ առաջարկել է Սեսիլիա Ինխենիերոսը) ու «Կալանավորուհու և մարտիկի պատմությունը» երկից, որոնք որպես իրական դեպքեր են մեկնաբանվել, այս գրքի բոլոր գործերը պատկանում են ֆանտաստիկայի ժանրին: Ամբողջ գրքի մեջ առաջինն է ամենից շատ աշխատանք պահանջել. այդ պատմվածքն ուզում է մարդկանց վրա անմահության թողած հնարավոր ազդեցությունը մեկնաբանել: Անմահների էթիկան լուսաբանող այդ խզբզոցներին հետևում է «Մեռյալը». այդ պատմվածքում Ասեվեդո Բանդեիրան, որ Ռիվերայի թե Սեռո Լարգոյի բնակիչ է, միևնույն ժամանակ բիրտ մի աստվածություն է՝ Չեսթերթոնի անհամեմատելի Սանդեյի խռնածին և վայրի տարբերակը: «Decline and Fall of the Roman Empire»¹-ի XXIX-րդ գլխում պատմվում է Օտալորայի ճակատագրին նմանվող, բայց շատ ավելի փառահեղ ու անհավատալի մի վարք: «Աստվածաբանները» պատմվածքի մասին բավական է ասել, որ նրա կերպարները երազ են, ինքնության մասին մեղամաղձոտ մի երազ: «Տադեո Իսիդորո Կրուս» պատմվածքի մասին ընդամենը կասեմ, որ այն «Մարտին Ֆիերո»-ի մեկնությունն է: «Աստերիոնի տունը» պատմվածքի համար պարտական եմ Վատս-ի 1896 թվականին նկարած մի պատկերին: «Մյուս մահը» ժամանակի շուրջ Պիեռ Դամիանիի մեկնությունների հիման վրա հորինածս երևակայությունն է: Վերջին պատերազմում ոչ ոք չէր կարող ինձնից ավելի ցանկանալ Գերմանիայի պարտությունը, ոչ ոք չկարողացավ ինձնից ավելի գերմանական ճակատագրի ողբերգականությունն զգալ. «Deutsches Requiem»-ը ուզում է հասկանալ այն ճակատագիրը, որ Գերմանիային անգետ մեր «գերմանասերները» չկարողացան ողբալ, ոչ էլ անգամ հասկանալ: «Աստծո գիրը», բարեգութ քնություն է, վարազն ինձ ստիպեց, որ կաբալիստին կամ աստվածաբանին վայել պատճառաբանությունները «Qaholom բուրգի մոգի» շուրթերին դնեմ: «Զահե-

¹ «Հռոմեական կայսրության վայրէջքն ու անկումը» (անգլ.):

րը» և «Ալեֆը» պատմվածքներում կարծես զգում եմ Wels-ի «The Cristal Egg»-ի (1899) ազդեցությունը:

Խ.Լ.Բ.

Բուենոս Այրես, 3-ը մայիսի, 1949

1952 թվականի հետազոտություն: — Վերահրատարակման առիթով «Ալեֆի» պատմվածքներին ավելացրել եմ չորս գործ: «Իր լաբիրինթոսում վախճանված Աբենխական էլ Բոխարին» պատմվածքը, իր խոսուկն վերնագրով հանդերձ (պնդում են), հիշատակման արժանի չէ: Մյուսը, «1001 գիշերների» ընդօրինակողների կողմից մեջքերված և զգուշավոր Գալլանդի չընդգրկած «Երկու արքաներն ու երկու լաբիրինթոսները» պատմությունն է: «Սպասումի»-ի մասին կասեմ, որ այն ծնվեց տասը տարի առաջ, երբ Ալֆրեդո Դոբլասի հետ Բոյուսելի Մատենագիտական ինստիտուտի ձեռնարկի հիման վրա գրքեր էինք դասավորում, ձեռնարկ, որից ոչ մի բան չեմ հիշում, բացի այն, որ Աստծուն համապատասխանում է 231 համարը, և Ալֆրեդոն ինձ համար կարդաց դեդեկտիվ մի ժամանակագրություն: Ժամանակագրության մեջ մարդը թուրք էր, ես իտալացի դարձրի, որպեսզի ավելի հեշտությամբ ընկալեմ: Բուենոս Այրեսում, Պարանա փողոցի վրա եղող մի տնակի վայրկենական և կրկնվող տեսիլքն ինձ առաջարկեց «Շեմին նստած մարդը» պատմվածքը. այն Հնդկաստանում եմ տեղադրել, որպեսզի ավելի տանելի լինի նրա անհավանականությունը:

Խ.Լ.Բ.

ԱՅԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոմանք գիտությունն ավելի հետաքրքրաշարժ են համարում, քան ստուգաբանությունը: Դա կապված է ժամանակի ընթացքում բառերի սկզբնական նշանակությունների անսպասելի փոփոխությունների հետ: Այս փոփոխությունների հետևանքով, որոնք երբեմն սահմանազատվում են պարադոքսալությամբ, որևէ իմաստ հասկանալու համար մեզ ոչինչ կամ համարյա ոչինչ չի տալիս բառի ծագումը: Գիտելիք կամ calculus լատիներեն նշանակում է «փոքր քար» և, թե մինչև թվերի գյուտը պյութագորյանները օգտագործում էին դրանք, մեզ ոչ մի կերպ չի օգնի տիրապետելու հանրահաշվի գաղտնիքներին, գիտելիք կամ «hipocrita». նշանակում է «դերասան», «կեղծավոր», «դիմակ», մեզ ոչնչով չի օգնի բարոյագիտության յուրացմանը: Համապատասխանաբար՝ որոշելու համար, թե մենք հիմա ինչ ենք հասկանում «կլասիկ» բառի տակ, անօգուտ է իմանալը, որ այդ ածականը ծագում է լատիներեն clasis «նավատորմ» բառից, որն հետագայում ստանալու է «կարգ» իմաստը: (Ի դեպ, հիշենք ship-shape — անգլ.՝ լրիվ կարգուսարքի մեջ գտնվող, կարգին, — բառի անալոգիկ կերպարավորումները):

Ինչ է, ուրեմն, դասական գիրքը այժմյան հասկացողությամբ: Իմ ձեռքի տակ են էլիոթի, Առնոլդի և Սենտ-Բյոպի սահմանումները՝ անվիճելի, բանական ու հստակ, և ինձ համար հաճելի կլինի համաձայնել այդ նշանավոր հեղինակների հետ, չնայած ես նրանց հետ չեմ մրցելու: Ես հիմա վաթսուհի ու քանի տարեկան եմ և իմ այս հասակում մտքերիս հետ ինչ-ինչ զուգահեռություններ կամ տարբերություններ գտնելը այնքան էլ կարևոր չէ, համեմատած նրա հետ, ինչը համարում եմ ճշմարիտ: Ըստ այդմ էլ կսահամափակվեմ այդ հարցի առթիվ իմ խոհերի շարադրանքով:

Այս խնդրում իմ առաջին խթանը եղավ Հերբերտ Ալան Ջալլիսի «Զինական գրականության պատմությունը» (1901): Երկրորդ գլխում կարդացի, որ Կոնֆուցիուսի հինգ կանոնական տեքստերից մեկը՝ «Փոփոխությունների գիրքը» կամ «Ի Զգինը», բաղկացած է 64 վեցանիստ պատկերներից, որոնք վեց երկար և կարճ գծերով սպառում են բոլոր հնարավոր բաղադրությունները: Ահա, օրինակ, պատկերներից մեկը՝ ուղղահայաց դասավորված երկու երկար, մի կարճ և երեք երկար գծեր: Վեցանիստներն իբր թե գտել է նախապատմական մի կայսր՝ սուրբ կրիաներից մեկի պատյանի

վրա: Լայքնիցը վեցանիստների մեջ տեսել է թվականության երկակի համակարգը, ուրիշներ՝ գաղտնագրված փիլիսոփայություն, երրորդները, օրինակ՝ Վիլհելմը, ապագայի գուշակության գործիք, որքանով որ 64 պատկերները համապատասխանում են յուրաքանչյուր գործողության 64 փուլերին, ոմանք՝ ինչ-որ ցեղի բառարան, ոմանք էլ՝ օրացույց: Հիշում եմ, որ Կսուլ Սոլարը ատամմաքրիչներով կամ լուցկիներով վերակազմում էր այդ տեքստը: Օտարների աչքին «Փոփոխությունների գիրքը» կարող է թվալ մաքուր chinoiserie (ֆրանս.՝ չինականություն), այնքանով որ հազարամյակների ընթացքում խիստ զարգացած միլիոնավոր մարդիկ սերունդ առ սերունդ ջերմեռանդությամբ են ընթերցել ու վերընթերցել այն և կընթերցեն նաև հետո: Կոնֆուցիուսն իր աշակերտներին ասել է, որ եթե ճակատագիրը իրեն շնորհիւր ևս հարյուր տարի, ինքը կեսը կնվիրեր վերադասավորման ուսումնասիրմանն ու նրա մեկնաբանություններին կամ «թևերին»:

Գիտակցաբար ընտրել եմ ծայրահեղ օրինակ՝ ընթերցանությունը, որը պահանջում է հավատ: Հիմա անցնում եմ իմ դրույթին: Դասական է համարվում այն գիրքը, որը որևէ ժողովուրդ կամ ժողովուրդների խումբ երկար ժամանակի ընթացքում որոշել են կարդալ այնպես, ինչպես թե նրա էջերում տիեզերքի պես ամեն ինչ մտածված է, անխուսափելի, խորը և արժանի անհաշիվ մեկնությունների: Ինչպես կարելի է ենթադրել, նմանօրինակ որոշումները փոփոխվում են: Գերմանացիների ու ավստրիացիների համար «Ֆաուստը» հանճարեղ ստեղծագործություն է, ուրիշների համար՝ ձանձրույթի նշանավոր մարմնավորումներից մեկը, ինչպես Միլտոնի երկրորդ «Դրախտը» կամ Ռաբլեի գործը: Այնպիսի գրքերի, ինչպես «Հոբի գիրքը», «Աստվածային կատակերգությունը» կամ «Մակբեթը» (իսկ ինձ համար նաև մի քանի հյուսիսային սագաներ), հավանաբար, սահմանված է երկարատև անմահություն. բայց մենք ապագայի մասին ոչինչ չգիտենք, բացի այն, որ ներկայից տարբեր է լինելու: Ամեն մի նախընտրանք հեշտությամբ կարող է վերածվել նախապաշարմունքի:

Պատկերապաշտության հակված չեմ: Մասեդոնիո Ֆերնանդեսի ազդեցությամբ երեսուն տարի համարել եմ, որ գեղեցիկը սակավաթիվ հեղինակների շնորհին է, հիմա ես գիտեմ, որ այն լայնորեն տարածված է և դարանամուտ է մեզ՝ միջակ հեղինակի պատահական էջերում կամ փողոցային խոսակցության մեջ: Այսպես. ես բոլորովին անծանոթ եմ մալայական կամ հունգարական

գրականությանը, բայց հավատացած եմ, որ եթե ժամանակն ինձ ուղարկեր դրանք սովորելու դիպված, ես այնտեղ կգտնեի հոգուն անհրաժեշտ ողջ սնունդը: Լեզվական պատնեշներից բացի կան նաև քաղաքական կամ աշխարհագրական պատնեշներ: Բյուրնաը դասական է Շոտլանդիայում, իսկ Տվիդից հարավ նրանով հետաքրքրվում են ավելի քիչ, քան Դանբորով կամ Ստիվենսոնով:

Բանաստեղծի փառքը վերջին հաշվով կախված է ջերմությունից կամ անտարբերությունից անանուն մարդկանց սերունդների, որոնք այն փորձության են ենթարկում գրադարանների առանձնության մեջ:

Գուցե հավերժական են գրականության հարուցած հույզերը, բայց անհրաժեշտ է, որ թեկուզ տևականորեն փոքր-ինչ փոփոխվեն միջոցները, որպեսզի չկորցնեն իրենց ազդեցությունը: Այն չափով, որքանով որ հասու է լինում ընթերցողը, դրանք մաշվում են: Ահա ինչու վտանգավոր է հաստատել, որ գոյություն ունեն դասական երկեր և որ դրանք դասական են մնալու հավիտյան:

Ամեն մարդ իր արվեստի և նրա միջոցների նկատմամբ կորցնում է հավատը: Որոշելով կասկածի տակ առնել Վոլտերի կամ Շեքսպիրի անմահությունը, ես հավատում եմ (այս՝ 1965 թվականի վերջին օրերից մեկի գիշերը) Շոպենհաուերի և Բերկլիի հավերժությանը:

Կրկնում եմ՝ դասականը ոչ թե այն է, որն անպատճառ ունի այս կամ այն արժանիքները, ի՛նչ, այլ այն, որը տարբեր սերունդներ, որոշ պատճառների դրդմամբ, շարունակ կարդում են միշտ և նույն հափռումով ու խորհրդավոր նվիրվածությամբ:

ՋՈՆ ՈՒԻԼԿԻՆՍԻ ՎԵՐԼՈՒՄԱԿԱՆ ԼԵՋՈՒՆ

Պարզել եմ, որ Encyclopaedia Britannica¹-ի տասնչորսերորդ հրատարակության մեջ բացակայում է Ջոն Ուիլկինսի մասին հոդվածը: Եթե այդ հոդվածի չորությունն ու պարզունակությունը վերհիշենք (կենսագրական տվյալներով լրացված չոր ու ցամաք տողեր՝ Ուիլկինսը ծնվել է 1614 թվականին, Ուիլկինսը վախճանվել է 1672 թվականին, Ուիլկինսը եղել է Պֆալցի իշխան Կառլոս Լուիսի անձնական քահանան, Ուիլկինսը եղել է Օքսֆորդի դրպրոցներից մեկի ղեկավարը, Ուիլկինսը եղել է Լոնդոնի թագավորական Ընկերության առաջին քարտուղարը և այլն) այդ սխալմունքն իհարկե արդարացված է, բայց անարդար է, եթե նկատի առնենք Ուիլկինսի փիլիսոփայական ժառանգությունը: Նա բազում հետաքրքրական գաղափարներ ուներ. նրան հետաքրքրում էին աստվածաբանությունը, գաղտնագրությունը, երաժշտությունը, թափանցիկ փեթակների ստեղծումը, անտեսանելի մի մոլորակի ընթացքը, Լուսին ճամփորդելու հնարավորությունը: Այս վերջին խնդրի պարզաբանմանն էր նվիրված «An Essay to wards a Real Character and a Philosophical Language»² գիրքը (բաղկացած 600 էջից, 1668): Մեր ազգային Գրադարանում չկան այդ գրքի օրինակները, այս հոդվածը շարադրելու համար օգտագործել եմ՝ Պ.Ա. Ռայդ Հենդերսոնի «The Life and Times of John Wilkins»³ (1910), Ֆրից Մաուտների «Woeterbuch der Philosophie»⁴ (1924), Է. Սիլվիա Փանքեթստի «Delphi»⁵, Լանսելոտ Հազբենի «Dangerous Thoughts»⁶ գրքերը:

Բոլորս էլ գոնե մի անգամ տանջվել ենք, երբ ինչ-որ կին ձայնարկություններով ու կոչականներով ծանրաբեռնված վեճի ընթացքում անառարկելիորեն երդվում է, որ լուսին բառը Moon բառից ավելի (կամ պակաս) արտահայտիչ է: Այդ վեճերում, բացի այն ակնհայտ նկատողությունից, որ moon⁷ միավան-

¹ Բրիտանական հանրագիտարան (լատ.):

² «Փորձ ճշմարիտ Խորհրդանիշի և փիլիսոփայական լեզվի մասին» (անգլ.):

³ «Ջոն Ուիլկինսի կյանքն ու ժամանակաշրջանը» (անգլ.):

⁴ «Փիլիսոփայական բառարան» (գերմ.):

⁵ «Դելֆյաններ» (անգլ.):

⁶ «Վտանգավոր մտքեր» (անգլ.):

⁷ «Լուսին» (անգլ.):

կանին լուսին երկվանկանիից ավելի հարմար է պարզ մի առարկա նշանակելու համար, հնարավոր չէ այլ բան ավելացնել. եթե մի կողմ թողնենք բարդ և ածանցավոր բառերը, աշխարհի բոլոր լեզուներն էլ (առանց բացառելու Յոհան Մարտին Շլեյերի volapük¹-ը և Պեանոյի ռոմանտիկական interlingua²-ն) հավասարապես անարտահայտիչ են: Թագավորական Ակադեմիայի Քերականությունը ոչ մի հնարավորություն չունեցող դատարկ պարծենկոտություն է: Նույն այդ Թագավորական Ակադեմիան մի քանի տարին մեկ իսպաներենի բառերը սահմանող բառարաններ է հրատարակում... XVII-րդ դարի կեսերին Ջոն Ուիլկինսի հորինած համաշխարհային լեզվում յուրաքանչյուր բառ սահմանում է ինքն իրեն: 1629 թվականի նոյեմբերին գրված մի նամակում Դեկարտն արդեն նշում էր, որ թվաբանական տասնորդական համակարգի շնորհիվ կարող ենք մեկ օրում սովորել բոլոր թվերի քանակական անվանումը, ընդհուպ մինչև անսահմանը և նույնիսկ գրել մի նոր լեզվով, որ կոչվում է թվերի լեզու³. առաջարկել էր նաև համանման ընդհանուր մի լեզվի ստեղծումը, որը պիտի կազմակերպեր և ընդգրկեր մարդկային բոլոր մտքերը: Ջոն Ուիլկինսը 1664 թվականին նվիրվեց այդ ձեռնարկի իրագործմանը:

Տիեզերքը բաժանեց քառասուն կարգերի կամ սեռերի, ապա սրանք ենթաբաժանեց «տարբերակների», սրանց էլ՝ «տեսակների»: Յուրաքանչյուր «սեռին» մի երկվանկանի հատկացրեց, յուրաքանչյուր «տարբերակին»՝ մի բաղաձայն, յուրաքանչյուր «տեսակին» էլ՝ մի ձայնավոր: Օրինակ, «դե» նշանակում է տարերջ, «դեբ»՝ տարրերից առաջինը՝ կրակը, «դեբա»-ն՝ կրակի մի մասը՝ բոցը: Լետելյեի համանման լեզվում (1850) «ա» նշանակում է կենդանի, «աբ»՝ կաթնասուն, «աբո»՝ մսակեր, «աբոյ»՝ կատվազգի, «աբոյե»՝ կատու, «աբի»՝ խոտակեր, «աբիվ»՝ ձի և այլն: Բոնիֆասիո Սոտոս Օջանդոյի լեզվում (1845), «իմաբա» նշա-

¹ արհեստական միջազգային լեզու:

² միջազգային լեզու:

³ Տեսականորեն հաշվարկների քանակական համակարգերը չեն սահմանափակվում: Ամենաբարդը (աստվածներին և հրեշտակներին հարմար) պետք է պարունակի նշանների անվերջ ցանակ՝ յուրաքանչյուր թվի համար մեկը, ամենապարզի համար պահանջվում է միայն երկու նշան: Ջրոն նշանակված է 0 նշանով, մեկը՝ 1, երկուսը՝ 10, երեքը՝ 11, չորսը՝ 100, հինգը՝ 101, վեցը՝ 110, յոթը՝ 111, ութը՝ 1000: Սա Լայբնիցի գյուտն է, որը, իմ կարծիքով, ազդակվել է հանելուկային «Բցվինի» հեքզագրամներից (հեղ.):

նակում է շենք, «իմակա»՝ հարեմ, «իմաֆե»՝ ապաստան, «իմաֆո»՝ հիվանդանոց, «իմարրի»՝ սեռ, «իմեզո»՝ ագարակ, «իմարու»՝ ամառանոց, «իմեդո»՝ սյուն, «իմեդե»՝ ուղեւայուն, «իմելա»՝ առաստաղ, «իմոգո»՝ պատուհան, «բիրե»՝ կազմարար, «բիրեր»՝ կազմել: (Այս վերջին ցուցակի համար պարտական եմ 1886 թվականին Բուենոս Այրեսում հրատարակված դոկտոր Պեդրո Մատայի «Համընդհանուր լեզվի դասընթաց» գրքին):

Ջոն Ուիլկինսի վերլուծական լեզվի բառերը անճարակ ու կամայական խորհրդանիշներ չեն. նրանց յուրաքանչյուր տառը, ինչպես Սուրբ Գրոց տառերը կաբալիստների համար, մեծ նշանակություն ունի: Մաուտները նկատում է, որ երեխաները կարող են այդ լեզուն սովորել առանց իմանալու, որ դա արհեստական է, և միայն դպրոցն ավարտելուց հետո կհայտնաբերեն, որ դա միևնույն ժամանակ տիեզերքի համընդհանուր բանալի և գաղտնի մի հանրագիտարան է նաև:

Ուիլկինսի մեթոդին ծանոթանալուց հետո, մեզ մնում է անհընար կամ դժվար շրջանցելի մի խնդիր՝ քառատասնյակային բաժանման համակարգի հաջող լինելու խնդիրը, որը նրա լեզվի հիմքն է: Քննենք ութերորդ կարգը՝ քարերինը: Ուիլկինսը քարերը բաժանում է հասարակների (կայծքար, խճաքար, հերձաքար), կիսաթանկագինների (մարմար, սաթ, մարջան), թանկագինների (մարգարիտ, արևակն), թափանցիկների (մեղեսիկ, շափուղա) և չլուծվողների (հանքածուխ, կավավազ, զառիկ): Գրեթե ութերորդի չափ զարմանալի է իններորդ դասը: Սա մեզ հայտնում է, որ մետաղները կարող են լինել անկատար (սրիկոն, սնդիկ), արհեստական (բրոնզ, արույր), բաժանվող (խարտուք, ժանգ) և բնական (ոսկի, անագ, պղինձ): Գեղեցկությունը պատկանում է տասնվեցերորդ կարգին, այն կենդանածին ու երկարավուն ձուկ է: Այդ երկիմաստ, մոտավոր և անհաջող ձևակերպումները հիշեցնում են «Փրկարար գիտելիքների երկնային կայսրություն» վերնագրով հայտնի ինչ-որ չինական հանրագիտարան, ասում է դոկտոր Ֆրանց Քանը: Այդ հանրագիտարանի հնագույն էջերում գրված է, թե կենդանիները բաժանվում են՝ (ա) Կայսրին պատկանողներ, (բ) զմռսվածներ, (գ) վարժեցվածներ, (դ) կաթնակերներ, (ե) հուշկապարիկներ, (զ) հեքիաթայիններ, (է) մեկուսի շներ, (ը) այս դասակարգման մեջ ներառվածներ, (բ) կատաղի սուրացողներ, (ժ) անհամարներ, (ժա) ուղտի մաից շինված շատ բարակ վրձնով նկարվածներ, (ժբ) և այլն, (ժգ)

ծաղկամաններ ջարդողներ, (ժդ) հեռվից ճանճի նմանվողներ: Բրյուսելի Մատենագրական ինստիտուտում էլ է քառս. այն տիեզերքը բաժանում է 1000 ենթաբաժինների, որոնցից 262-ը վերաբերում է Պապին, 282-ը՝ հռոմեական կաթոլիկ եկեղեցուն, 263-ը՝ Տիրոջ մասունքների պաշտամունքին, 268-ը՝ կիրակնօրյա դպրոցներին, 298-ը՝ մորմոններին, և 294-ը՝ բրահմանիզմին, բուդիզմին, շինթոիզմին և դաոսականությանը: Խառը բաժանումներից էլ չեն խորշում, օրինակ 179-ը վերաբերում է «Անգթություն կենդանիների նկատմամբ: Կենդանիների պաշտպանություն: Մենամարտն ու ինքնասպանությունը բարոյական տեսակետից: Բազմապիսի թերություններ ու արատներ: Բազմապիսի առաքինություններ ու արժանիքներ»:

Այսպիսով, ես ցույց տվեցի Ուիլկինսի, չինական հանրագիտարանի անծանոթ (կամ պարականոն) գրողի և Բրյուսելի մատենագիտական ինստիտուտի կամայականությունները. ակնհայտ է՝ չկա տիեզերքի դասակարգում, որ կամայական կամ ենթադրական չլինի: Պատճառը շատ պարզ է՝ չգիտենք, թե ինչ բան է տիեզերքը: «Աշխարհը, — գրում է Դեյվիդ Հյումը — գուցե և մի մանուկ Աստծո պարզունակ խզբզանքն է, Աստված, որ ամաչելով իր գործի անկատարությունից, կիսատ է թողել այն. աշխարհը բարձրագույն աստվածների ծաղրին ենթարկված, երկրորդական մի աստվածության գործն է, աշխարհը արդեն վախճանված, զառամյալ ու թռչակի անցած մի Աստծո անկարգ արարչությունն է» («Dialogues Concerning Natural Religion»,¹ V, 1779): Կարելի է և ավելի հեռուն գնալ, կարելի է ենթադրել, որ տիեզերքը, այդ բառի օրգանական, ամբողջական իմաստով, հենց «տիեզերք» բառի հավակնոտ իմաստով գոյություն չունի: Իսկ եթե գոյություն ունի, դեռ պետք է կռահենք նրա նպատակը, դեռ պետք է Աստծո խորհրդավոր բառարանի բառերը, սահմանումները, ստուգաբանություններն ու հոմանիշները կռահենք:

Տիեզերքի աստվածային կառույց թափանցելու անհնարինությունը չի կարող, սակայն, մեզ հրաժարեցնել մարդկային կառույցներ ծրագրելու գործից, որքան որ էլ սրանք մեզ ժամանակավոր թվան: Ուիլկինսի վերլուծական լեզուն այդ կառույցներից վատագույնը չէ: Նրա սահմանած տեսակներն ու սեռերը հակասական ու

¹ «Ջրույցներ բնական կրոնի մասին» (անգլ.):

անորոշ են. բայց դրա փոխարեն բառերի բաժանումներն ու ենթաբաժանումները տառերով նշանակելու միտքը անկասկած հնարամիտ է: «Լոսոս» բառը մեզ ոչինչ չի հուշում, Zana բառը համապատասխանաբար սահմանում է (քառասուն կարգերին և նրանց տեսակներին գիտակ մարդու համար), որ այն կարմրավուն մսով, գետի ջրերում բնակվող թեփուկավոր ձուկ է: (Տեսականորեն հնարավոր է այնպիսի մի լեզվի ստեղծումը, ուր յուրաքանչյուր արարածի անունը կարող էր մատնանշել նրա կեցության մանրամասնությունները, նրա անցյալն ու ապագան):

Բայց մի կողմ թողնենք հույսերն ու ուտոպիաները, գուցե լեզվի մասին գրված ամենասթափ տողերը Չեստերտոնի հետևյալ խոսքերն են. «Մարդը գիտի, որ աշնանային անտառի գույներից դեռ ավելի զարմանալի, ավելի անհավատալի և ավելի անանուն երանգներ կան իր հոգու մեջ... սակայն կարծում է, որ այդ երանգները, իրենց բոլոր միացումներով ու փոփոխություններով հանդերձ, կարող են ճշգրտորեն ներկայացվել կանչերի ու գոռոցների կամայական մեխանիզմի միջոցով: Նա կարծում է, որ գործարար ինչ-որ մեկի ներսից ելած հնչյուններն անգամ ունակ են արտահայտելու հիշողության բոլոր խորհուրդներն և ցանկությունների բոլոր տառապանքները» (էջ 88, 1904):

«ԴՈՆ ԿԻՒՈՏԻ» ԹԱԲՈՒՆ ԴՅՈՒԹԱՆՔՆԵՐԸ

Խելքի մոտ բան է մտածել, թե այս նկատողություններն արդեն արվել են. դրանց ինքնատիպության հարցն ինձ այնքան չի հուզում, որքան դրանց հավանական ճշմարտության հարցը:

Այլ դասական գրքերի («Իլիականի», «Էնեականի», «Ֆարսալիայի», դանտեական «Կատակերգության», Շեքսպիրի ողբերգությունների և կատակերգությունների) հետ համեմատած, «Կիխոտը» իրապաշտական է. այդ իրապաշտությունը, սակայն, տարբերվում է XIX դարի իրապաշտությունից: Կոնրադը կարող էր գրել, թե իր ստեղծագործության մեջ բացառվում է գերբնականը, քանի որ գերբնականի ընդունումը նշանակում է առօրեականի մեջ տեղ չտալ հրաշքին. չգիտեմ նրա այդ կարծիքը Սերվանտեսը կիսում էր թե ոչ, բայց գիտեմ, որ «Կիխոտի» ձևը նրան պարտադրեց երևակայական բանաստեղծական աշխարհին հակադրել իրական պրոզայիկ մի աշխարհ: Կոնրադն ու Հենրի Ջեյմսը իրականությունը վեպ դարձրին, քանի որ այդ իրականությունը նրանց համար բանաստեղծական էր, Սերվանտեսի համար իրականն ու բանաստեղծականը հականիշներ էին, Ամադիսի ընդարձակ և անորոշ աշխարհագրությանը նա հակադրում է Կաստիլիայի փոշեծածկ ճանապարհներն ու կեղտոտ իջևանատները. պատկերացնենք ժամանակակից մի վիպագիր, որ ծաղրելու նպատակով մանրամասնորեն նկարագրում է բենզինի լցակայանները: Սերվանտեսը մեզ համար ստեղծել է XVII դարի Իսպանիայի բանաստեղծությունը, սակայն նրա համար ոչ այդ դարն էր բանաստեղծական, ոչ էլ այդ Իսպանիան, նա չէր հասկանա Ունամունոյի, Ասորիսի, Անտոնիո Մաչադոյի պես մարդկանց, որոնց հուզում ու քնքշացնում է Լամանչի հիշատակը: Նրա ստեղծագործության հղացքը թույլ չէր տալիս հրաշագործությունը, սակայն հրաշալին, թեև անուղղակիորեն, պետք է իր տեղն ունենար այնտեղ, ճիշտ այնպես, ինչպես ոստիկանական վեպը ծաղրող ստեղծագործության մեջ պետք է տեղ գտնեն սպանություններն ու խորհրդավորությունը: Սերվանտեսը չէր կարող դիմել թալիսմանների և չարադյութանքների օգնությանը, ու նա շատ նրբանկատորեն առաջարկեց գերմարդկայինը, և հենց դրանից ելնելով՝ հասավ ավելի մեծ արդյունքի: 1924 թվականին Պոլ Գրուսակը նկատեց. «Լատիներենի և իտալերենի որոշ վատադրոշմ գույներով ներկայացված Սերվանտեսի գրական վաստակը սերում է հովվերգական

և ասպետական վեպերից՝ ալժիրյան գերիներին օրոր երգող այդ հեքիաթներից: «Կիխոտը» ոչ թե այդ առակների հակաթույնն է, այլ ավելի շուտ մեկամաղձոտ ու գաղտնի մի հրաժեշտ»:

Իրականության համեմատությամբ յուրաքանչյուր վեպ իդեալական կառույց է, Մերվանտեսը հաճույք է ստանում՝ շփոթելով օբյեկտիվն ու սուբյեկտիվը, դրանով խառնելով ընթերցողի ու գրքի աշխարհը: Այդ խնդրի մասին խոսվում է այն գլուխներում, ուր վիճում են հաստատելու համար, թե վարսավիրի կաթսան արդյոք սաղավմրտ է, իսկ համետը՝ ասպազեն. այլ մասերում, ինչպես նշեցի, խնդրի մասին միայն ակնարկվում է: Առաջին մասի վեցերորդ գլխում քահանան ու վարսավիրն ստուգում են դոն Կիխոտի գրադարանը. զարմանալիորեն ստուգված գրքերից մեկը Մերվանտեսի «Գալաթեան» է, վարսավիրը հեղինակի ընկերն է ու նրանով ոչ այնքան հիացած, և ասում է, որ նա ավելի գիտակ է դժբախտությունների, քան ոտանավորների մեջ, և, որ նրա գիրքն ինչ-որ հնարամտություն ունի, և որ այդ գիրքն առաջարկում է ինչ-որ բան ու ոչինչ չի ավարտում: Վարսավիրը՝ Մերվանտեսի մտահղացումը կամ Մերվանտեսի երազից ինչ-որ պատկեր, դատում է Մերվանտեսին... Ջարմանալի է նաև իններորդ գլխի սկզբում իմանալ, որ ամբողջ վեպը թարգմանվել է արաբերենից, և որ Մերվանտեսը ձեռագիրը գնել է Տոլեդոյի շուկայում, և թարգմանել է տվել մի ծովայինի, որին մի ամիս ու կեսից ավելի հյուրընկալել է իր տանը, մինչև որ սա ավարտեր իր աշխատանքը: Հիշենք Կարլայլի այն հնարանքը, թե իբր «Սարտոր Ռեզարտոսը»-ը դոկտոր Դիոգենես Թեուֆելսդորֆի Գերմանիայում հրատարակված ստեղծագործության մասնակի տարբերակն էր. հիշենք կաստիլացի ռաբբի Մովսես դե Լեոնին, որ շարադրեց «Ջոհարը» կամ «Շքեղության Գիրք» կոչվածը և այն տարածեց որպես III դարի պաղեստինցի մի ռաբբու պատկանող ստեղծագործություն:

Տարօրինակ երկվություններով այս խաղն իր գագաթնակետին է հասնում վեպի երկրորդ մասում. կերպարները կարդացել են առաջին մասը, «Կիխոտի» կերպարները միևնույն ժամանակ «Կիխոտի» ընթերցողներն են: Այստեղ չենք կարող Շեքսպիրին չհիշել, նա էլ «Համլետի» բեմում մի այլ բեմ է կառուցում, ուր ներկայացվում է մի ողբերգություն, որ որոշ չափով «Համլետին» է. հիմնական և երկրորդական ստեղծագործությունների անկատար համապատասխանությունը նվազեցնում է այդ մեջբերման արդյունավետությունը: Մերվանտեսի հնարանքին համանման

և նույնիսկ ավելի զարմանալի մի հնարանք է գործածված Վալմիկիի պոեմում՝ «Ռամայանում», որտեղ պատմվում է Ռամայի քաջագործությունների և նրա՝ դևերի դեմ մղած պատերազմի մասին։ Վերջին գրքում, Ռամայի որդիները, որ չգիտեն, թե ով է իրենց հայրը, ապաստան են որոնում անտառի խորքերում։ այնտեղ մի ճգնավոր նրանց գրել-կարդալ է սովորեցնում։ Այդ ուսուցիչը զարմանալիորեն հենց ինքը Վալմիկին է, իսկ գիրքը, որտեղից կարդում են՝ «Ռամայանան»։ Ռաման հրամայում է ձիերի ողջակիզություն։ այդ խնջույքին մասնակցում են Վալմիկին և իր աշակերտները։ Սրանք ուղի նվազակցությամբ երգում են «Ռամայանան», Ռաման լսում է իր իսկ պատմությունը, ճանաչում է որդիներին և ապա վարձատրում ուսուցչին... Դիպվածը նման դեր է կատարում նաև «Հազար ու մեկ գիշերների» մեջ։ Մտացածին հեքիաթների այս հավաքածուն մինչև գլխապտույտի աստիճան կրկնում ու վերակրկնում է կենտրոնական մի հեքիաթ, սակայն չի փորձում աստիճանավորել այդ իրականությունները, և արդյունքը (որ պետք է ավելի խոր լիներ) պարսկական գորգի նման մնում է մակերեսային։ Հայտնի է շարքի սկզբնական հեքիաթը՝ թագավորի հուսահատ որոշումը. նա ամեն գիշեր ամուսնանում է մի կույսի հետ, որին արշալույսին գլխատել է տալիս, և ապա Շահրազադեի որոշումը, որ նրան զբաղեցնում է հեքիաթներով, մինչև որ երկուսի գլխով անց են կենում հազար ու մեկ գիշերներ, և թագուհին թագավորին ցույց է տալիս նրանց առաջնեկին։ Հազար ու մեկ բաժիններ լրացնելու անհրաժեշտությունը ստեղծագործությունն ընդօրինակողներին պարտադրել է ամեն տեսակի մեջբերումներ կատարել։ Նրանցից ոչ մեկն այնքան մտահոգիչ չէ, որքան DCII գիշերվա մեջբերումը. այդ գիշերը, բոլոր գիշերների մեջ ամենամոգական գիշերն է։ Այդ գիշեր թագավորը թագուհու շուրթերից լսում է իր իսկ պատմությունը։ Լսում է պատմության սկիզբը, որ ընդգրկում է մնացած բոլոր պատմություններն ու նաև՝ սքանչելիորեն, հենց ինքն իրեն։ Ընթերցողն արդյոք հստակորեն նախագգում է այդ մեջբերման անսահման հնարավորությունները, և դրա հետ կապված տարօրինակ վտանգը։ Բա որ թագուհին անվերջորեն շարունակի պատմել և անշարժ թագավորն հավերժորեն լսի «Հազար ու մեկ գիշերների» անավարտ պատմությունը, որն արդեն դառնում է անսահման ու շրջանաձև... Փիլիսոփայության հնարանքները արվեստի հնարանքներից պակաս ֆանտաստիկ չեն։ Զոսայ Ռոյսը «The World and

the Individual»¹ գրքի առաջին հատորում բանաձևել է հետևյալը՝ «Պատկերացնենք, որ Անգլիայի մի կտոր հողը կատարելապես ձևավորվել է և այդտեղ մի քարտեզագետ գծում է Անգլիայի քարտեզը: Գործը կատարյալ է. Անգլիայի հողի ոչ մի մանրամասնություն՝ որքան էլ սա չնչին լինի, դուրս չի մնացել քարտեզից. ամեն ինչ այստեղ ունի իր համապատասխանությունը: Այդ պարագայում քարտեզը պետք է պարունակի քարտեզի քարտեզը, որն իր հերթին պետք է պարունակի քարտեզի քարտեզի քարտեզը, և այդպես մինչև անվերջություն»:

Ինչու է մեզ անհանգստացնում, որ քարտեզն ընդգրկված է քարտեզի մեջ և հազար ու մեկ գիշերները՝ «Հազար ու մեկ գիշերներ» գրքում: Ինչո՞ւ է մեզ անհանգստացնում, որ Դոն Կիխոտը «Կիխոտի» ընթերցողը լինի, իսկ Համլետը՝ Համլետի հանդիսատեսը: Կարծես հայտնաբերել եմ պատճառը. այդ փոփոխությունները նշում են, որ եթե մտացածին կերպարները կարող են ընթերցողներ կամ հանդիսատեսներ լինել, ուրեմն մենք՝ նրանց ընթերցողներն ու հանդիսատեսները, կարող ենք մտացածին լինել: 1883 թվականին Կարլայլը գրեց, որ տիեզերքի պատմությունը աստվածային, անսահման մի գիրք է. այնտեղ գրում ու կարդում են բոլորը, և այնտեղ գրվում է բոլորի մասին:

¹ «Աշխարհը և անհատը» (անգլ.):

He, whose long wall the
wand ring Tartar bounds. ¹

Duncuad, II, 76

Օրեր առաջ կարդացի, որ չինական գրեթե անսահման պարսպի կառուցումը հրամայող կայսրը առաջին անվանվող Կայսրն է եղել՝ Շի Հուանգ Թին, որը միևնույն ժամանակ հրամայել է այրել իրեն նախորդող բոլոր գրքերը: Այն, որ այդ երկու ընդարձակ գործողությունները՝ բարբարոսներին հակադրված այդ հինգ թե վեց հարյուր մղոնի երկարություն ունեցող պարսպի շինությունը, և պատմության, այսինքն՝ անցյալի բացարձակ հերքումը մի մարդ կատարած լինի և ինչ-որ ձևով այդ գործողությունները նրա հատկանիշները լինեն, անբացատրելիորեն գոհացրին և միևնույն ժամանակ մտահոգեցին ինձ: Այս գրության նպատակն էլ այդ հուզման պատճառները որոնելն է: Պատմականորեն այդ երկու հրամանների մեջ մեծ գաղտնիք չկա: Շի Հուանգ Թին՝ Ցինի թագավորը, Հաննիբալի պատերազմի ժամանակակիցը, իր իշխանության տակ հավաքեց վեց Թագավորությունները և ոչնչացրեց հողատիրական համակարգը. պարիսպը բարձրացվեց պաշտպանվելու, իսկ գրքերն այրեց, քանի որ հակառակորդները դրանք գործածում էին հին կայսրությունին գովաբանելու համար: Գրքերն այրելն ու պարիսպներ կառուցելը իշխաններին հատուկ արարքներ են. Շի Հուանգ Թիի յուրահատկությունը գործողությունների ծավալն էր: Այդպես են ենթադրում որոշ չինագետներ, սակայն ես զգում եմ, որ պատմածս դեպքերը սովորական հրամանների չափազանցություններ կամ չափազանցումներ չեն: Սովորականը մի այգի կամ մի պարտեզ ցանկապատելն է, բայց մի կայսրություն ցանկապատելը՝ երբեք: Ոչ էլ աշխարհի ամենաավանդապաշտ ցեղին իր միստիկական կամ իրական անցյալի հիշողությունից հրաժարեցնելու փորձն է հասարակ բան: Երբ Շի Հուանգ Թին հրամայեց, որ պատմությունն իրենով սկսվի, չինացիներն ունեին երեք հազար տարվա ժամանակագրություն (և այդ ժամանա-

¹ «Նա, որի երկար պարսպին

թափառ... թաթարն է ոստնում» (անգլ.):

կագրության մեջ էին Գեղին Կայսրը և Չուանգ Ցուն, և Կոնֆուցիոսը և Լաո Ցուն):

Շի Նուանգ Թին իր մորն աքսորեց որպես անառակի: Նրա խիստ արդարադատության մեջ ուղղափառները միայն դաժանություն տեսան: Շի Նուանգ Թին գուցե ուզում էր օրենսգրքերը այրել, քանի որ սրանք մեղադրում էին իրեն, գուցե Շի Նուանգ Թին ուզում էր ողջ անցյալն հերքել՝ հերքելու համար մեն մի հիշատակ՝ մոր խայտառակությունը: (Սույն ձևով Հրեաստանում մի թագավոր սպանել էր բոլոր երեխաներին միայն մի երեխայի սպանելու համար): Այս ենթադրությունն ուշադրության արժանի է, բայց պարիսպի՝ առասպելի երկրորդ դեմքի մասին, ոչինչ չի ասվում: Պատմաբանները նշում են, որ Շի Նուանգ Թին իր կայսրության մեջ արգելել է խոսել մահվան մասին, որոնել անմահության էլիքսիրը, և առանձնացել է խորհրդանշական մի պալատի մեջ, որի սենյակների քանակը համապատասխանել է տարվա օրերի քանակին. այս փաստերը ենթադրել են տալիս, որ պարիսպը՝ տարածության, իսկ հրդեհը՝ ժամանակի մեջ ուզում էին դառնալ մահը կասեցնող մոգական պատնեշներ: Ամեն ինչ ուզում է գոյատևել իր իսկ գոյի ձևով, գրել է Բարուխ Սպինոզան. գուցե Կայսրն ու իր մոգերը մտածում էին, թե անմահությունը էական մի հատկանիշ է, և որ ապականությունը չի կարող փակ բնակավայր թափանցել: Գուցե Կայսրն ուզում էր վերստեղծել ժամանակի սկիզբն ու ինքն իրեն անվանեց Առաջին, որպեսզի իսկապես առաջինը լինի, և ինքն իրեն Նուանգ Թի անվանեց, որպեսզի ինչ-որ ձևով Նուանգ Թին լինի, այն առասպելական կայսրը, որ ստեղծել էր գրերն ու կողմնացույցը: Սա, ըստ «Ծեսերի գրքի», ամեն ինչին իր իսկական անունն է տվել. հավասարապես Շի Նուանգ Թին, մինչև օրս էլ պահպանված արձանագրություններում, պարծենում է ասելով, որ իր կայսրության օրոք ամեն ինչ ինքն իրեն համապատասխանող անուն ունի: Երազում էր հիմնադրել անմահների մի սերունդ. հրամայել էր, որ իր ժառանգորդներն անվանվեին երկրորդ Կայսր, երրորդ Կայսր, Չորրորդ Կայսր և այդպես մինչև անվերջանալին... Խոսել եմ մոգական մի նպատակի մասին. կարելի է ենթադրել նաև, որ պարիսպ բարձրացնելն ու գրքեր այրելը համաժամանակյա գործողություններ չեն եղել: Սա (ըստ մեր ընտրած հերթականության) մեզ կտա մի թագավորի պատկերը, որը սկսել է ոչնչացնելով, և ապա գոհացել է ոչնչացրածը պահպանելով, կամ էլ հուսահատ մի թագավորի պատ-

կերը, որը ոչնչացրել է այն, ինչ միաժամանակ պաշտպանում էր: Երկու ենթադրություններն էլ ողբերգական են, սակայն, որքան ես գիտեմ, զուրկ են պատմական հիմքից: Հերբերթ Ալլեն Գիլսը պատմում է, որ գրքեր թաքցնողների մարմինը դաջվում էր շիկացած երկաթով, և նրանք դատապարտվում էին մինչև իրենց մահվան օրը այդ ահագին պարիսպը կառուցելու գործին: Այս տեղեկությունը մեզ համար նախընտրելի է դարձնում կամ թույլատրում է մի այլ մեկնաբանություն: Գուցե պարիսպը փոխաբերություն է, գուցե Շի Հուանգ Թին անցյալը պաշտողներին դատապարտում էր այնպիսի մի գործ կատարելու, որը անցյալի պես ընդարձակ, անճարակ ու անօգուտ էր: Գուցե պարիսպը մարտահրավեր էր, և Շի Հուանգ Թին մտածեց. «Մարդիկ սիրում են անցյալը և սիրո դեմ ոչինչ չենք կարող անել, ոչ ես, ոչ էլ իմ դահիճները, բայց կլինի մի մարդ, իմ զգացածը կզգա, և նա կջնջի իմ հիշատակը, և իմ ստվերն ու հայելին կլինի ու ոչինչ չի իմանա»: Գուցե Շի Հուանգ Թին պարսպեց կայսրությունը հասկանալով, որ սա փղնձրուն է ու անհարատև, և ոչնչացրեց գրքերն հասկանալով, որ դրանք սուրբ գրքեր էին, այսինքն՝ գրքեր, որ սովորեցնում են այն, ինչ սովորեցնում է ողջ տիեզերքը, կամ էլ յուրաքանչյուր մարդու գիտակցությունը: Գուցե և գրադարանների հրդեհումն ու կառուցումը գաղտնակերպ իրար չեզոքացնող գործողություններ են:

Համառ պարիսպը, որ այս և բոլոր պահերում իր ստվերների համակարգն է տարածում այն հողերի վրա, որ ես երբեք չեմ տեսնելու, մի կայսրի ստվերն է, որը հրամայեց, որ ամենաավանդապաշտ ազգն այրի իր անցյալը, հավանական է, որ այս գաղափարը մեզ վրա ազդի հենց այդպես՝ հնարավոր ենթադրություններից անկախ: (Արժանիքը կարող է գտնվել մեծ ծավալով կառուցելու և ոչնչացնելու գործողությունների հակադրության մեջ): Նախորդ դեպքն ընդհանրացնելով, կարող ենք եզրակացնել, որ բոլոր ձևերն իրենց արժանիքները պահում են իրենք իրենց և ոչ թե ենթադրական «բովանդակությունների» մեջ: Այս գաղափարը կհամընկներ Բենեդետո Կրոչեի տեսություններին. «Pater»-ն արդեն 1877 թվականին հաստատել էր, որ բոլոր արվեստները ձգտում են ձեռք բերել երաժշտության հատկությունը, որն այլ բան չէ, եթե ոչ ձև: Երաժշտությունը, երջանկության պահերը, դիցաբանությունը, դեմքի արտահայտությունների փոփոխություն-

նը ժամանակի ազդեցության տակ, որոշ մայրամուտներ և որոշ վայրեր, ուզում են մի բան հաղորդել, կամ մի բան արդեն հաղորդել են, որ մենք չպետք է կորցնեինք, կամ մի բան հաղորդելու են, և գուցե գեղագիտականը այս տեղի չունեցող հայտնության վերահասությունն է:

Գուցե տիեզերքի պատմությունը մի քանի փոխաբերությունների պատմություն է: Այդ պատմության գլուխներից մեկի ուրվագծումն էլ այս գրության նպատակն է:

Քրիստոնեությունից վեց դար առաջ Քսենոփոն Կուլոֆոնացի ռապսոդը, հոմերական պոեմները քաղաքից քաղաք արտասանելուց հոգնած, քննադատեց բոլոր այն բանաստեղծներին, որոնք աստվածներին վերագրում էին մարդկային և կենդանական հատկություններ և հույներին առաջարկեց միակ Աստծո գաղափարը, որը հավերժական մի շրջագունդ է: Պլատոնի «Թիմեյոս» ասվում է, որ շրջագունդը ամենակատարյալ ու համաչափ ձևն է, քանի որ մակերեսի բոլոր կետերը գտնվում են կենտրոնից նույն հեռավորության վրա, Օլոֆ Գիգոնը («Ursprung der griechischen Philosophie»¹, 183) գտնում է, որ Քսենոփոնը դատել է համաբանությամբ. Աստված շրջանաձև է, քանի որ աստվածությունը ներկայացնելու համար դա ամենալավ կամ վատթարագույն ձևը չէ: Քառասուն տարի հետո Պարմենիդեսը կրկնում է պատկերը. («Գոյը նման է կատարելապես բոլորաձև մի շրջագնդի զանգվածին, այդ զանգվածի կենտրոնից դեպի բոլոր ուղղություններն ուղարկված ուժը հաստատուն է»), Կալոջերոն և Մոնդոլֆոն կարծում են, որ նա նկատի է ունեցել անսահման կամ անսահմանորեն աճող մի շրջագունդ, և վերևում մեջբերված բառերը դիսամիկ իմաստ ունեն (Ալբերտելլի, «Gli Eliati»,² 148): Պարմենիդեսը ուսուցանեց Իտալիայում, նրա մահվանից մի քանի տարի հետո մի սիցիլիացի՝ էմպեդոկլես Ագրիգենտացին հետաքրքրական մի տիեզերագիտություն հնարեց, այնտեղ կա մի պահ, երբ հողի, ջրի, օդի և կրակի տարրերը անավարտ մի շրջանակի մասն են կազմում, «կլոր Ոլորտը, որ երանություն է վայելում իր շրջանաձև միայնության մեջ»:

Տիեզերական պատմությունը շարունակեց իր ընթացքը. չափազանց մարդկային այն աստվածները, որոնց վրա հարձակվել էր Քսենոփոնը, դարձան բանաստեղծական հնարանքներ կամ էլ դևեր, բայց հայտնի դարձավ, որ նրանցից մեկը՝ Հերմես Եռամե-

¹ «Հունական փիլիսոփայության ծագումը» (գերմ.):

² «Էլիացիներ» (իտալ.):

ծըանորոշ քանակով գրքեր էր թելադրել (ըստ ալեքսանդրիացի Կլեմենտեի այդ գրքերի քանակը 42 է, ըստ Յամվլիքի՝ 20000, ըստ Տոտի (Նույն Հերմեսն է) քրմերի՝ 36525), որոնց էջերում ամեն ինչ գրված էր: III դարից սկսած, նրա երևակայական գրադարանի հատվածների հավաքածուները կազմում են «Corpus Hermenticum»¹ կոչվածը. այնտեղ կամ «Ասկլեպիոյում», որը Նույնպես վերագրվում է եռամեծին, ֆրանսիացի աստվածաբան Ալանուս դե Ինսուլիսը XII դարի վերջերում հայտնաբերեց հետևյալ բանաձևը, որը հաջորդ սերունդներն այլևս չէին մոռանալու. «Աստված անըմբռնելի մի շրջագունդ է, որի կենտրոնը ամեն տեղ է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ»: Նախասոկրատականները խոսում էին վերջ չունեցող մի շրջագնդի մասին, Ալբերտելլին (ինչպես առաջներում Արիստոտելը) գտնում է, որ այդպես դատել, նշանակում է թույլ տալ *contradictio in adjecto*², քանի որ ենթական և ստորոգյալը փոխադարձաբար ժխտում են իրար, դա կարող է և ճիշտ լինել, սակայն հերմետիկ գրքերի բանաձևը մեզ թույլ է տալիս պատկերացնել այդ շրջագունդը: XIII դարում շրջագնդի պատկերը կրկին առաջացավ այլաբանական «Roman de la Rose»-ում, ուր վերոհիշյալը շարադրվում է այնպես, ինչպես այն ներկայացրել էին Պլատոնն ու «Speculum Triplex» հանրագիտարանը. XVI դարում «Պանտագրոուելի» վերջին գրքի վերջին գլխում հղում կա «բանական շրջագնդի մասին, որի կենտրոնն ամեն տեղ է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ, և որին Աստված ենք անվանում»: Միջնադարյան գիտակցության համար դրա իմաստը միանգամայն պարզ էր՝ Աստված իր արարածներից յուրաքանչյուրի մեջ է, բայց նրանցից ոչ մեկը նրա համար սահման չէ («Երկինք եւ երկնից երկինքը չեն քեզ բաւական», — ասել է Սողոմոնը (Թագաւորութանց 9, 8, 27), այդ բառերի բացատրությունը երկրաչափական փոխաբերությունն է:

Դանթեի՝ պոեմը պահպանել է հազար չորս հարյուր տարի շարունակ մարդկային երևակայությունը ղեկավարող պտղոմեոսյան աստղագիտությունը: Երկիրը տիեզերքի կենտրոնն է: Այն անշարժ շրջագունդ է, և նրա շուրջ պտտվում են ինը համակենտրոնացված շրջագնդեր: Առաջին յոթը մոլորակային երկինքներն

¹ «Հերմետիկ գրքերի ժողովածու» (լատ.):

² Հակասություն որոշիչի և որոշյալի միջև (լատ.):

են (Լուանի, Մերկուրիի, Վեներայի, Արևի, Մարսի, Յուպիտերի և Սատուրնի երկինքները), ութերորդը կայուն աստղերի երկինքն է, իններորդը՝ բյուրեղյա երկինքը, որ նաև կոչվում է Առաջին Խթան: Արան շրջապատում է Էմպիրեան, որ լույսից է բաղկացած: Դատարկ, թափանցիկ և պտտվող շրջագնդերի այդ խրթին համակարգը (որոշ համակարգեր պահանջում էին հիսունհինգ շրջագունդ) դարձել էր բանական կարիք. տիեզերքի մեր ընկալումը շրջադարձող ձեռագրին Կոպեռնիկոսը՝ Արիստոտելին պակասգերծողը, «De hypothesibus motuum coelestium commentariolus»¹ համեստ վերնագիր դրեց: Մի այլ մարդու՝ Ջորդանո Բրունոյի համար աստեղային կամարների ձեղքվածքը ազատագրություն համարվեց: «Ճաներ մեծ պասի առաջին չորեքշաբթի օրվա ժամանակ» գրքում նա հայտարարեց, որ աշխարհը անհամար պատճառների անհամար հետևանքն է, և որ աստվածությունը հեռու չէ. «քանի որ նա մեր մեջ է, նույնիսկ ավելի շատ, քան մենք ինքներս ենք մեր մեջ գտնվում»: Ջորդանոն Կոպեռնիկոսյան տարածության գաղափարը մարդկանց հաղորդելու համար բռնեց որոնեց ու հանրահայտ մի էջում գրեց. «Վստահաբար կարող ենք հաստատել, որ յուրաքանչյուր կենտրոն տիեզերք է, կամ՝ տիեզերքի կենտրոնն ամեն տեղ է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ» («Պատճառի, սկզբի և միակի մասին»):

Այս բանաձևը գրվեց մեծ ոգևորությամբ 1584 թվականին, դեռ Վերածննդի լույսով ողողված. յոթանասուն տարի անց այդ ոգեվորության ստվերն անգամ չէր մնացել, և մարդիկ իրենք իրենց կորած էին համարում ժամանակի ու տարածության մեջ: Ժամանակի մեջ, որովհետև՝ եթե ապագան ու ներկան անվերջ են, ուրեմն գոյություն չունի «երբը», տարածության մեջ, որովհետև՝ եթե յուրաքանչյուր գոյ անսահմանորեն մեծից ու անսահմանորեն փոքրից նույն հեռավորության վրա է, ուրեմն գոյություն չունի նաև «որտեղը»: Ոչ ոք չի ապրում ինչ-որ օրվա մեջ, կամ ինչ-որ տեղ, ոչ ոք չգիտի նույնիսկ իր դեմքի չափսերը: Վերածննդի դարաշրջանում մարդկությունը կարծեց, թե հասել է իր հասուն տարիքին, և Բրունոյի, Կամպանելլայի ու Բեկոնի բերանով այդպես էլ հայտարարեց: XVII դարում նրան վախեցրեց ծերության զգացողությունը. ինքն իրեն արդարացնելու համար շիրիմներից հանեց

«Երկնային ոլորտների պտույտի մասին» (լատ.):

այն հավատամքը, որ իբր Ադամի մեղքով բոլոր արարածները դատապարտված են դանդաղ ու դաժան այլասերման: (Ծնընդոցի հինգերորդ գլխում նշված է, որ «Մաթուսաղայի կյանքի բոլոր օրերի քանակը ինը հարյուր յոթանասուներեք տարի էր», վեցերորդում՝ «այդ ժամանակ հսկաներ էին ապրում երկրի վրա»): Ջոն Դոնը «Աշխարհի կազմախոսությունը» էլեգիայի առաջին տարեդարձին ողբաց փերիների ու թզուկների նմանվող ժամանակակից մարդկանց կարճ կյանքն ու փոքր հասակը, Միլտոնը, ըստ իր կենսագիր Յոնսոնի, վախենում էր, որ երկրի վրա այլևս եպիկական ժանրը հնարավոր չլինի, Գլենվիլը հայտարարում էր, որ Ադամը՝ «Աստծո պատկերն ու նմանությունը» ուներ հեռադիտական և մանրադիտական տեսողություն, Ռոբերտ Սաուլը հոյակապ է գրել. «Արիստոտելը Ադամի բեկորն է, իսկ Աթենքը՝ Դրախտի մնացուկը»: Այդ փոքրոգի դարում բացարձակ տարածության գաղափարը, որ Լուկրեցիոսի հեքզամետրերն էին ներշնչել, այն բացարձակ տարածության, որ Բրուկոնյի համար ազատագրում էր, Պասկալի համար լաբիրինթոս ու անդունդ դարձավ: Նա սարսափում էր տիեզերքից և կուզենար երկրպագել Աստծուն, սակայն Աստված նրա համար պակաս իրական էր, քան սարսափազդու տիեզերքը: Նա տրտնջում էր այն բանի համար, որ երկնականարը չէր կարող խոսել, մեր կյանքն համեմատեց ամայի մի կղզում մնացած նավաբեկյալի կյանքի հետ: Առարկայական աշխարհի անդադրում ճնշումն զգաց, գլխապտույտը, վախ ու մենություն զգաց, և այդ ամբողջը այլ բառերով արտահայտեց. «Բնությունն անսահման մի շրջագունդ է, որի կենտրոնն ամեն տեղ է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ»: Բրուկոնյիցը այդպես է հրատարակում տեքստը, սակայն Տուրնյորի քննական հրատարակության մեջ (Փարիզ, 1941), ուր նշված են նաև ձեռագրի ուղղումներն ու տատանումները, հայտնի է դառնում, որ Պասկալն սկսել էր գրել *effroyable*՝ բառը: «Սուկալի մի շրջագունդ, որի կենտրոնն ամեն տեղ է, իսկ շրջագիծը՝ ոչ մի տեղ»:

Գուցե տիեզերքի պատմությունը մի քանի փոխաբերությունների տարբեր հնչերանգներով արտասանված պատմությունն է:

¹ Սուկալի, սարսափազդու (անգլ.):

ԱՐԱՐԻՉԸ

Հետևում մնաց հրապարակի ժխորը, ես մտնում եմ գրադարան: Ջգում եմ գրքերի գրեթե ֆիզիկական ճնշումը, կարգ ու կանոններ շնչող հանդարտ միջավայրը, հրաշալիորեն պահպանված ժամանակը: Աջ ու ձախ, լամպերի լույսի տակ, ինչպես Միլտոնի ստեղծագործության մեջ, իրենց արթուն երազում խորասուզված, ուրվագծվում են ընթերցողների ժամանակավոր դեմքերը: Հիշում եմ, որ հենց այստեղ եմ հիշել այդ նույն պատկերը և ապա «Էնեականի» հայտնի այն հեքզամետրը, որ գործածում ու գերազանցում է այդ նույն հնարանը՝

*Ibant obscuri sola sub nocte per umbras.*¹

Այս մտորումներն ինձ լքել են ձեր գրասենյակի դռան առաջ: Մտնում եմ մի քանի ավանդական և սիրալիր բառեր փոխանակելուց հետո, ես ձեզ եմ հանձնում այս գիրքը: Եթե ես ինձ չեմ խաբում, Լուգոնես, դուք ինձ վատ չէիք վերաբերում և ցանկանում էիք, որ գործերիցս որևէ մեկը դուր գա ձեզ: Իսկ դա երբեք տեղի չունեցավ, սակայն այս անգամ դուք թերթում եք էջերը, կարդում եք որևէ տող և համաձայնության նշան եք անում, գուցե դա նրանից է, որ այնտեղ ձանաչել եք ձեր սեփական ձայնը, գուցե դա նրանից է, որ ձեզ առողջ տեսությունն ավելի շատ է հետաքրքրում, քան անկատար գործադրումը:

Այս պահին, ինչպես ջուրը ջրի մեջ, երազս անհայտանում է: Ինձ շրջապատող ընդարձակ գրադարանը ոչ թե Ռոդրիգես Պենիա, այլ Մեքսիկո փողոցում է գտնվում, իսկ դուք, Լուգոնես, երեսուկուսի սկզբներին եք մահացել: Ձանձրույթս ու թախիծս են ստեղծել անհնարին այս տեսարանը: Թող այդպես լինի (ասում եմ ինքս ինձ), բայց վաղը ես էլ եմ մեռնելու, և միաձուլվելու են մեր ժամանակները, և անսահման խորհրդանիշների մեջ կորչելու է ժամանակագրությունը, և ինչ-որ ձևով արդար կլինի հավաստել, թե ես ձեզ եմ հանձնել այս գիրքը, և որ դուք ընդունել եք այն:

Խ.Լ.Բ.

Բուենոս Այրես, 9 օգոստոսի, 1960

¹ «Եվ կույրերը կույ գնացին կույր գիշերին» (լատ.):

Երբեք ուշադրություն չէր դարձրել հիշողության հաճույքներին: Վառ և ժամանակավոր տպավորությունները հորդում էին առանց հետք թողնելու. բրուտի կարմիրը, աստղերով լի երկնակամարը, աստղերը, որ նաև աստվածներ էին, լուսինը, որտեղից մի առյուծ էր ընկել, զգայուն մատների տակ մարմարի ողորկությունը, վայրի խոզի մսի համը, որ սիրում է ձերմակ ու կոպիտ կծոցներով վայելել, փյունիկերեն մի բառ, դեղին ավազի վրա նիզակի արտացոլած սև ստվերը, ծովի կամ կանանց մոտիկությունը, մեղրը մեղմացնող ծանր գինին կարող էին գրավել նոա իոգու ամբողջ ուրորտը: Ճանաչում էր սարսափը, բայց նաև զայրույթն ու քաջությունը, իսկ մի անգամ ինքն էր առաջինը բարձրացել թշնամու պարսպին: Անհագ, հետաքրքրասեր և արկածախնդիր, բերկրանքից և անմիջական անտարբերությունից բացի այլ օրենք չէր ճանաչում. շրջեց բազմասեռ երկիրն ու եղավ ծովի այս և այն եզրում, դիտեց մարդկանց կառուցած քաղաքներն ու պալատները: Բազմամարդ շուկաներում կամ մի սարի լանջին, որի անորոշ գազաթին կարող էին չարքեր բնակվել, բարդ պատմություններ էր լսել և դրանք ընդունել էր այնպես, ինչպես իրականությունն էր ընդունում՝ առանց ինքն իրեն դրանց ճշմարտության կամ կեղծ լինելու մասին հարցնելու:

Աստիճանաբար գեղեցիկ տիեզերքն սկսեց լքել նրան. համառ մի մշուշ ջնջեց նրա ձեռքի գծերը, գիշերն ամայացավ աստղերից, հողը երերաց նրա ոտքերի տակ: Ամեն ինչ հեռանում ու անէանում էր: Երբ զգաց, որ կուրանում է, գոռաց. այդ ժամանակ դեռ չէր հորինվել ստոիկ ամոթը, և Հեկտորը կարող էր փախչել առանց ամաչելու: «Այլևս չեմ տեսնի (զգաց) ոչ դիցաբանական սարսափով լի երկինքը և ոչ էլ այս դեմքը, որ տարիները խաթարելու են»: Իր մարմնի այդ հուսահատությունը օր ու գիշերներ տևեց, բայց մի առավոտ արթնացավ և (առանց զարմանքի) դիտեց իրեն շրջապատող անորոշ իրերն ու ծանոթ մի երաժշտություն կամ մի ձայն ճանաչողի պես զգաց, որ այս ամենն արդեն կատարվել է և որ ինքն այդ ժամանակ էլ է սարսափ զգացել, բայց և միևնույն ժամանակ ցնծություն, հույս ու հետաքրքրություն էլ է ունեցել: Այդ ժամանակ դարձավ դեպի իր հիշողությունը, որն իրեն տնվերջանալի թվաց, և այդ գլխապտուկյտի մեջ կարողացավ ձեռք բերել կորսված հուշը, որ անձրևի տակ փայլատակող մետաղադրամի:

պես հստակ փայլում էր, գուցե և այն պատճառով, որ ինքը երբեք չէր տեսել այդ հուշը, բացի, գուցե թե՛ ինչ-որ երազի մեջ:

Հուշն այսպիսին էր: Մի պատանի անպատվել էր իրեն, և ինքը դիմել էր հորը ու պատմել դեպքը: Հայրը թույլ էր տվել, որ խոսի, կարծես չէր լսում կամ չէր հասկանում պատմածը, և հանկարծ նա վերցրեց պատից կախված, իշխանություն ներշնչող դաշույնը. տղան գաղտնաբար տենչացել էր այդ դաշույնը: Այժմ դա նրա ձեռքում էր, և տիրանալու անակնկալը չեզոքացրեց կրած անպատվությունը, սակայն հոր ձայնն ասում էր. «Թող ինչ-որ մեկն իմանա, որ դու տղամարդ ես» և հրամայողական ինչ-որ շեշտ կար նրա ձայնի մեջ: Գիշերը կուրացնում էր ճանապարհները, դաշույնը սեղմած, որի մեջ մոգական ուժ էր գուշակում, արագորեն կտրեց բլուրը, իջավ ծովեզերք, ինքն իրեն Այաքս և Պերսևս կարծեց և վազեց աղոտ մթությունը վերքերով ու ճակատամարտերով լցնելու: Այդ՝ պահի զգացողությունն էր որոնում հիմա, մնացածը՝ մենամարտի հրավերը, անճարակ մարտը, արյունոտ դաշույններով վերադառնալը այլևս ոչ մի կարևորություն չունեին:

Այդ հուշից նորը ծնվեց, և նորի մեջ էլ էին առկա գիշերն ու արկածի տպավորությունը: Մի կին, աստվածների պարզևած առաջին կինը, նրան սպասել էր ինչ-որ գետնադամբանի ստվերում, իսկ ինքը որոնել էր քարե ցանցերի նմանվող կամարների տակ, ստվերների մեջ խորասուզվող վայրիվերո արահետներում: Ինչո՞ւ էին այդ հուշերն առանց ցավի հայտնվում, կարծես ներկայի նախաձևը լինեին:

Լրջախոհ զարմանքով ամեն ինչ հասկացավ: Իր մահկանացու աչքերի խավարում, այնտեղ ուր իջնելու էր հիմա, նրան սպասում էին սերն ու արկածը՝ Արեսն ու Աֆրոդիտեն, քանզի նա արդեն գուշակում էր (քանզի նրան արդեն շրջապատում էին) փառքի և հեքզամետրի շուկաները, շուկն այն մարդկանց, որ պաշտպանում էն մի տաճար, որն աստվածները չեն փրկելու՝ ծովերի մեջ սիրելի կղզի որոնող նավերի շուկը: Ողիսականների և իլիականների շուկաները, շուկաներ, որ ինքը երգելու էր և հնչեցնելու մարդկանց հիշողության մեջ: Այդքանը գիտենք, բայց չգիտենք, թե ինչ զգաց վերջին ստվերն իջնելու ժամանակ:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- A — Օրը մթնել էր. այնքան խորասուզված էինք խորհրդածում անմահության մասին, որ լուսամփոփն անգամ չէինք վառել: Մեկս մյուսի դեմքը չէր տեսնում: Խանդավառությունից էլ համոզիչ անտարբերությամբ ու քաղցրությամբ Մասեդոնիո Ֆերնանդեսը կրկնում էր, որ հոգին անմահ է: Պնդում էր, որ մարմնի մահը կատարյալ ոչնչություն է, և որ մեռնելը մարդկային դիպվածներից ամենաաննշանը պետք է լինի: Ես խաղում էի Մասեդոնիոյի դանակով՝ բացում ու փակում էի: Մի ակորդեոն անվերջանալիորեն մատուցում էր Լա-Կումպարսիդան՝ այլափոխված այդ ոչնչությունը, որ շատերին է դուր գալիս, քանզի խաբել են նրանց, ասելով, թե հին է... Ես, անարգել վիճելու համար, Մասեդոնիոյին առաջարկեցի, որ երկուսս էլ ինքնասպան լինենք:
- Z — (**Հեզնանքով**): Սակայն, կարծեմ, ի վերջո չվճռեցինք:
- A — (Արդեն ամբողջապես միստիցիզմի մեջ): Անկեղծ ասած, չեմ հիշում մենք այդ գիշեր ինքնասպան եղանք, թե ոչ:

Այն միտքը, որ իբր թե Սուրբ Գրքն ունի (բացի իր բառային արժեքից) խորհրդանշական արժեք, անտրամաբանական չէ և շատ հին է՝ հանդիպում է Փիլոն Աղեքսանդրացու և Սվեդենբորգի մոտ: Քանի որ Գրքի պատմած դեպքերը ճշմարտացի են (Աստված ճշմարտություն է, ճշմարտությունը չի կարող ստել և այլն) ապա պետք է ընդունենք, որ մարդիկ, դրանք կուրորեն կատարելով, ներկայացրին Աստծո կողմից որոշված, կանխատեսված մի գաղտնի ողբերգություն: Այդքանն ընդունելով դժվար չէ եզրակացնել, որ տիեզերքի պատմությունը և մեր կյանքն ու մեր կյանքի ամենաչնչին մանրամասնությունները անկռահելի, խորհրդանշական արժեք ունեն: Պետք է որ շատերն անցած լինեն այդ տարածությունը, սակայն ոչ ոք չհասավ Լեոն Բլոյի զարմանալի արդյունքներին (Նովալիսի հոգեբանական հատվածներում և Մախենի ինքնակենսագրության՝ «The London Adventure»¹ վերնագրված հատվածում նպատակահարմար վարկած կա, այն է թե՝ արտաքին աշխարհը — ձևերը, ջերմությունները, լուսինը — այնպիսի մի լեզու են, որ մենք՝ մարդիկս, մոռացել ենք, կամ հազիվ ենք կմկմում... Նաև դե Կուենսին է ասում. «Երկրագնդի անտրամաբանական հնչյուններն անգամ հանրահաշիվ ու լեզուներ են և ինչ-որ ձևով ունեն իրենց հատուկ բանալիները, իրենց խիստ քերականությունն ու շարահյուսությունը. այդպես, տիեզերքի նվազագույն տարրերն անգամ կարող են ամենամեծերի քողարկված հայելին լինել»):

Լեոն Բլոյին ներշնչեց սուրբ Պողոսի թղթերից մեկը (Ա. Կորնթ., 13, 12): «Այժմ տեսնում ենք ինչպես պատկերը հայելու մեջ. իսկ այն ժամանակ՝ դեմառդեմ: Այժմ խելամիտ եմ փոքրիշատե, իսկ այն ժամանակ կիմանամ, ինչպես որ նա ճանաչեց ինձ»: ² Թորես Արմատի թարգմանությունը խղճուկ է. «Այժմ աստծուն տեսնում ենք ինչպես հայելում և մութ պատկերների մեջ, բայց այն ժամանակ նրան պիտի տեսնենք երես առ երես: Ես հիմա անկատար ձևով եմ նրան ճանաչում, բայց այն ժամանակ կճանաչեմ պայծառորեն՝ ինչպես ես եմ ճանաչված». քառասունչորս մարդ

¹ «Լոնդոնյան դիպվածներ» (անգլ.):

² Բնագրում լատիներեն է (լամբ.):

կատարում են քսաներկուսի դերը, անկարելի է ավելի հիվանդ և շատախոս լինել: Սիպրիանո դե Վարելան ավելի հավատարիմ է. «Այժմ հայելու մթության մեջ ենք տեսնում, բայց հետո կտեսնենք դեմ առ դեմ: Հիմա մասամբ եմ ճանաչում, բայց հետո կճանաչեմ ինչպես ճանաչվում եմ»: Թորես Ամատը կարծում է, որ համարը վերաբերում է մեր՝ աստվածայինի հանդեպ ունեցած հայեցողությանը, Սիպրիանո դե Վարելան (և Լեոն Բլոյը)՝ որ վերաբերում է առհասարակ մեր ընդհանուր հայեցողությանը:

Որքան գիտեմ Բլոյն իր կռահումներին վերջնական ձև չտվեց: Նրա հատվածային ստեղծագործության մեջ (որտեղ, ինչպես հայտնի է, հորդում են գանգատն ու անարգանքը) կան տարբեր պատումներ կամ տարբերակներ: Ստորև բերում եմ ահա մի քանիսը, որոնք վերցրել եմ «Le mediant ingrat»¹, «Le vieux de la Montagne»² և «L'invendable»³-ի աղմուկ հանած էջերից: Ավարտուն չեմ համարում, հուսով եմ, որ Լեոն Բլոյի որևէ մասնագետ (ես մասնագետ չեմ) կլրացնի և կճշտի պակաս-պռատս:

Առաջինը 1894 թվականի հունիսից է: Թարգմանում եմ այսպես. «Սուրբ Պողոսի videmus nunc per speculum in acnigmate դատողությունը մարդկային հոգու՝ այդ իսկական Անդունդի մեջ սուզվելու համար երդիկի դեր է կատարում: Տիեզերքի անդունդների սարսափելի անսահմանությունը ցնորք է՝ մեր անդունդների արտաքին արտացոլում, դիտված «հայելու մեջ»: Պետք է դեպի ներս շրջենք մեր աչքերը՝ և դրանով մի վսեմ աստղագիտություն կանենք մեր սրտերի անսահմանության մեջ, սրտեր, որոնց համար Աստված մեռնել ուզեց... եթե տեսնում ենք Ծիրկաթինը, ապա ճշմարիտ է, որ իրականում նա գոյություն ունի մեր հոգում»:

Երկրորդը նույն տարվա նոյեմբերից է.

«Հիշում եմ իմ ամենահին գաղափարներից մեկը: Ցարը հարյուր հիսուն միլիոն մարդկանց գլխավորն ու հոգևոր հայրն է: Պաժան պարտականություն, որը սոսկ ձևական է: Գուցե նա Աստծո առաջ ընդամենը մի քանի հոգու համար է պատասխանատու, եթե իր թագավորության օրոք կայսրության աղքատները ճնշված են, եթե այդ թագավորության ժամանակ մեծամեծ աղետներ կատարվեն, ով իմանա, արդյոք միակ ու իրական մեղավորը

¹ «Աննպաստ միջնագիծ» (Ֆրանս.)

² «Լեռան ծերունին» (Ֆրանս.):

³ «Անվաճառելին» (Ֆրանս.):

սապոգները փայլեցնող ծառան չէ: Անհունի գաղտնի կարգադրություններում իմ է իսկապես ցար, ով թագավոր, իմ կարող է պարծենալ լոկ ծառա լինելու համար»:

Երրորդը դեկտեմբերին գրված մի նամակից է.

«Ամեն ինչ խորհրդանշ է, նույնիսկ ամենաբզկտիչ ցավը: Երազում գոռացող ննջեցյալներ ենք: Գուցե մեզ մտահոգող որևէ բան մեր ապագա ուրախության գաղտնի սկիզբն է: Հիմա տեսնում ենք, հաստատում է սուրբ Պողոսը. «per speculum in acnigmate», բառացի՝ «հայելու միջոցով առեղծվածային», և այլ ձևով կտեսնենք մինչև գալուստը նրա, որը բոցերի մեջ է և սովորեցնելու է մեզ ամեն ինչ»:

Չորրորդը 1904 թվականի մայիսից է.

«Per speculum in acnigmate» ասում է սուրբ Պողոսը: Ամեն ինչ հակառակ ձևով ենք տեսնում: Երբ կարծում ենք, թե տալիս ենք՝ վերցնում ենք, և այլն: Ուրեմն (ասում է ինձ մի տրտում հոգի) մենք երկնքում ենք, իսկ Աստված տառապում է երկրում»:

Հինգերորդը 1908 թվականի մայիսից է.

«Խուանայի սարսափեցուցիչ գաղափարը «per speculum... տեքստի մասին. այս աշխարհի հաճույքները՝ հակառակ կողմից դիտված հայելու մեջ, կլինեն դժոխքի տանջանքները»:

Վեցերորդը 1918 թվականից է.

«L'Ame de Napoleon¹»-ի էջերից է, գիրք, որի նպատակն է բացահայտել Նապոլեոն խորհրդանշիչը, ենթադրվում է, թե նա մի այլ հերոսի նախորդն է՝ մարդ և նաև խորհրդանշիչ՝ թաքնված ապագայում: Բավական է մեջ բերել երկու հատված: Առաջինը՝ «Ամեն մի մարդ աշխարհի է եկել խորհրդանշելու մի բան, որից գաղափար չունի, և անտեսանելի նյութից մի մասնիկ կամ մի սար ավելացնելու, որոնցով պիտի կառուցվի Աստծո քաղաքը»: Մյուսը. «աշխարհում չկա ոչ մի մարդ, որը կարողանա ասել, թե ինքն իսկապես ով է: Ոչ ոք չգիտի, թե ինչի համար է աշխարհ եկել, թե ինչին են համապատասխանում իր արարքները, իր զգացմունքները, իր գաղափարները, չգիտի, իրն է իր իսկական անունը, իր անկորնչելի Անունը Լուսի ցանկում... Պատմությունը չափազանց ծիսական տեքստ է և տառերն ու կետերը ավելի քիչ չարժեն, քան հատվածներ կամ ամբողջ գլուխներ, բայց թե առաջինների, թե մյուսների կարևորությունը անորոշ է և խորապես գաղտնի»:

¹ «Նապոլեոնի հոգին» (ֆրանս.):

Այս հատվածները գուցե ընթերցողներին թվան սուսկ Բլոյի դատարակաբանությունները: Որքան գիտեմ, նա երբեք չփորձեց տրամաբանական դարձնել իր մտքերը: Ես համարձակվում եմ դրանք հավանական համարել և անխուսափելի քրիստոնեական մտքի համար: Բլոյը (կրկնում եմ) ընդամենը հրեա կաբալիստների Սուրբ Գրության համար գործածված մեթոդը տարածեց ողջ Արարչությունը մեկնաբանելու համար: Նրանք մտածեցին, որ այն գործը, որը թելադրված է Սուրբ Հոգու կողմից, բացարձակ տեքստ է, այսինքն՝ մի տեքստ, ուր ճակատագրի մասնակցությունը հավասար է զրոյի: Պատահականություն չընդունող, անվերջանալի նպատակների մեխանիզմ հանդիսացող այդ գրքի հրաշալի նախադրյալը նրանց տարավ բառերը տեղափոխելու, տառերի թվային արժեքները գումարելու, նրանց ձևը հաշվի առնելու, փոքրատառերն ու մեծատառերն ուսումնասիրելու, աքրոստիկոսներ ու տառափոխություններ որոնելու և այլ մեկնաբանական բարդությունների, որոնց ծաղրելը դժվար չէ:

Նրանց ջատագովությունն այն է, թե մտքի անսահման գործողություններում ոչ մի բան պատահական չէ: Լեոն Բլոյը հիերոգլիֆային բնույթը, աստվածային գրության հատկանիշը, հրեշտակային գաղտնագրությունը տեսնում է աշխարհի բոլոր արարածների կյանքի ամեն մի վայրկյանում: Մնոտիապաշտը հավակնում է թափանցել այդ բնական տեքստի մեջ և կարծում, թե տասներեք սեղանակիցները մահվան խորհրդանիշն են արտահայտում, դեղին արևակնը՝ դժբախտության նշանը...

Անհավատը կնկատի, որ նույնիսկ աշխարհի նշանակություն ունենալն է կասկածելի, ուր մնաց թե այն ունենա երկրորդ կամ երրորդ նշանակություն: Ես հասկանում եմ այդ, սակայն հասկանում եմ նաև, որ Բլոյի առաջարկած հիերոգլիֆային աշխարհը ամենաձեռնտուն է աստվածաբանների բանական Աստծո արժանապատվության համար:

«Ոչ ոք չգիտի իր ինչ լինելը», պնդեց Բլոյը: Ոչ ոք նրա նման իր իսկ օրինակով չկարողացավ պատկերել այդ ներքին տգիտությունը: Ինքն իրեն թունդ կաթուղիկ էր համարում, սակայն դարձավ կաբալիստների հետևորդը, Սվեդենբորգի և Բլեյկի նման աղանդապետների գաղտնի եղբայրը:

Իսլամը պնդում է, թե որևէ կենդանի էակի պատկեր հեղինակողը Անդրդատաստանի օրն իր գործերի հետ հարություն կանգնեցնողն է։ Նրան կիրամայվի կյանք տալ նրանց, ու կձախողվի, և պատժի կրակին կհանձնվի գործերի հետ միասին։ Իրականության այդ կրկնապատկման կամ ուրվականային բազմապատկման սարսափը ես փոքրուց ճանաչեցի, բայց մեծ հայելիների առջև։ Հայելու անսխալական ու անընդհատ գործունակությունը՝ իմ շարժումներն հետապնդելը, տիեզերական հզոր մնջախաղը, այդ ժամանակ՝ իրիկանալուն պես, չնաշխարհիկ էին։ Աստծուն և իմ պահապան հրեշտակին ուղղած խնդրանքներիս ամենահամառներից մեկը հայելիների հետ չերազելն էր. ես գիտեմ, որ նրանց անհանգիստ հսկում էի։ Քանի անգամ զարհուրեցի, թե ահա կսկսեն տարբերվել իրականությունից, իսկ ուրիշ անգամներ վախեցա նրանց մեջ տեսնել տարօրինակ աղետներից այլափոխված իմ դեմքը։ Բայց իմացա, որ այդ վախը հրաշալի կերպով նորից աշխարհում է. պատմությունը չափազանց պարզ է ու տհաճ։

Հազար ինը հարյուր քսանյոթին մի մելամաղձոտ աղջկա հետ ծանոթացա՝ սկզբում հեռախոսով (քանի որ Խուլիան նախ անանուն և անդեմ ձայն էր), հետո՝ երեկոյան, մի խաչմերուկում։ Աչքերը մեծությունից մտահոգ էին, մազերը սև ու հարթ, մարմինը՝ նիհար։ Ֆեդերալների թոռ ու թոռնուհի էր, ինչպես ես՝ միապետականների, և մեր արյունները կապող այդ հին անհամաձայնությունը հայրենիքի առավել խորունկ տիրականություն էր մեզ համար։ Տերերի կողմից լքվածի տպավորությունը թողնող բարձր առաստաղով մի մեծ տանն էր ապրում, ոխի և աղքատիկ համեստության դառնության մեջ։ Առիթից առիթ գիշերով, իսկ հիմնականում երեկոյան երկուսով քայլում էինք իր Բալվաներա թաղամասում։ Քայլում էինք կայարանի հաստ պատի կողքով. մի անգամ այդպես Սարմիեանտո փողոցով հասանք մինչև Սենտենարյո այգու մացառախեղդ ծառերը։

Մեր մեջ ոչ սեր եղավ, ոչ սիրո երազ. ես նրա մեջ զգում էի մի ահագնություն, որն ամբողջովին օտար էր էրոտիկային և ինձ ահաբեկում էր։ Մտերմանալու համար բնական է աղջիկներին մեր պատանեկան անցյալի ճշմարիտ թե հորինովի գծեր պատմելը՝ ես երևի մի անգամ պատմել եմ հայելիների մասին։ Եվ այդպես հազար ինը հարյուր քսանութ թվականին թելադրեցի մի զգայա-

խաբութիւն, որը պիտի ծաղկեր հազար ինը հարյուր երեսունմեկ թվականին: Լսել եմ, որ իմա խելագարվել է, և ննջասենյակի հայելիները քողարկված են, որովհետև նրանց մեջ տեսնում է իրենը հափշտակող իմ արտացոլանքը, և դողում է ու լռում և ասում, որ ես հրաշալի կերպով հետապնդում եմ իրեն:

Դժբախտ ծառայութիւննը իմ դեմքի, իմ հին դեմքերից մեկի: Իմ դիմագծերի այդ ատելի ճակատագիրը պիտի որ ինձ ևս ատելի դարձնի, բայց ես արդեն դրանից հետո եմ:

ARGUMENTUM ORNITLOGICUM¹

Փակում եմ աչքերս և թռչունների մի երամ եմ տեսնում: Տեսիլքը տևում է ընդամենը մեկ վայրկյան, գուցե և ավելի քիչ, չգիտեմ, թե քանի թռչուն եմ տեսել: Նրանց քանակը որոշակի է, թե անորոշ: Խնդիրը Աստծո գոյության հարցն է: Եթե Աստված գոյություն ունի, ուրեմն տեսածս թռչունների քանակը որոշակի է, որովհետև Աստված գիտի, թե ես քանի թռչուն եմ տեսել: Եթե Աստված գոյություն չունի, ուրեմն տեսածս թռչունների քանակն անորոշ է, որովհետև ոչ ոք չէր կարող հաշվել թռչունները: Այդ պարագային, (ասենք) ես տասից պակաս և մեկից ավելի թռչուններ եմ տեսել, բայց չեմ տեսել ինը, ութ, յոթ, վեց, հինգ, չորս, երեք կամ երկու թռչուն: Տեսածս թռչունների քանակը տասի և մեկի միջև գտնվող մի թիվ է, որ ոչ ինն է, ոչ ութը, ոչ յոթը, ոչ վեցը, ոչ հինգը, և այլն: Ամբողջական այդ թիվն անըմբռնելի է, ուստի, Աստված գոյություն ունի:

¹ Ապացույցը զարդարում է ճշմարտությունը (լատ.):

ԴԵՐՈՒ ԷԼԵՆԱ ՍԱՆ-ՍԱՐԿՈ

Իրար հրաժեշտ տվեցինք Օնսեի խաչմերուկներից մեկում:

Դիմացի մայթից նորից նայեցի ձեզ. դուք էլ էիք շոքվել և ձեռքով ցտեսություն ասացիք:

Երեկոյան ժամը հինգն էր, մեր միջև անցնում էր ավտոմեքենաներից և մարդկանցից բաղկացած մի ամբողջ գետ. ինչպես իմանայի, որ այդ գետը տխուր Աքերոնն էր, անհաղթահարելին:

Այլևս իրար չտեսանք, իսկ մի տարի անց դուք արդեն վախճանվել էիք:

Իսկ հիմա ես որոնում եմ այդ հուշը և նայում եմ ձեզ ու մտածում, որ դուք կեղծում էիք, և որ հասարակ այդ հրաժեշտի տակ քողարկված էր անսահման բաժանումը:

Երեկ երեկոյան ընթերցումս հետո տնից դուրս չեկա, և այս ամբողջն հասկանալու համար վերընթերցեցի իդ ուսուցչի շուրթերին դրած Պլատոնի վերջին դասը: Կարդացի՝ երբ մարմինը մեռնում է, հոգին կարող է հեռանալ:

Իսկ հիմա չգիտեմ, թե ճշմարտությունը որտեղ է, հետագա չոր մեկնաբանությամբ, թե անմեղ հրաժեշտի մեջ:

Քանի որ եթե ճիշտ է, թե հոգիները չեն մեռնում, ուրեմն չափազանց լավ է և այն, որ նրանց հրաժեշտը ընդգծված չի լինում:

Ցտեսություն ասել, նշանակում է բաժանումը ժխտել, այսինքն՝ այսօր բաժանվել խաղանք, բայց վաղը անպայման կտեսնվենք: Թեև իրենք իրենց պատահական ու անցողիկ համարեն, մարդիկ ցտեսությունն հնարել են գիտակցելով, որ իրենք ինչ-որ ձևով անմահ են:

Դե՛լիա, օրերից մի օր, չգիտեմ թե ի՞նչ գետի ափերին, մենք մեզ կհարցնենք, թե արդյոք ինչ-որ ժամանակ, ինչ-որ հարթավայրի կորած մի քաղաքում մենք՝ Բորիսեսս ու Դելիան ենք եղել, թե ոչ:

Այդ մարդը հայտնվեց Հարավային Անգլիայից, 1877 թվականի ձմռան մի առավոտ: Արնագույն դեմքով, հզոր կազմվածքով և ճնշող տեսքով՝ նրան անխուսափելիորեն բոլորն անգլիացի համարեցին, և իրոք որ նա իսկ և իսկ Ջոն Բուլի հետնորդն էր: Գլխին կնգուղավոր գլխարկ ուներ, վրան՝ կուրծքը հագիվ ծածկող մի տարօրինակ բրդյա վերմակ: Ակնհայտ անհամբերությամբ նրան էր սպասում տղամարդկանց, կանանց ու երեխաների մի խումբ. շատերի վզերը շրջանակված էին կարմիր գծով, ոմանք առանց գլխի էին և շարժվում էին դողդոջուն, խավարում քայլողների նման վեհերելով: Նորեկին զգույշ շրջապատեցին, ետևներից պարզ հնչեցին հայիոյանքներ, բայց մի հինավուրց սարսափ զսպեց նրանց, և ավելիին չհամարձակվեցին: Բոլորից առաջ կանգնեց դեղնականաչավուն մաշկով ու ածխի պես աչքերով մի զինվորական. երկար, խռիվ մազերն ու թավ մորուքը կարծես հափռել էին դեմքը: Տաս-տասներկու երկարավուն մահացու վերքեր վագրի մորթու շերտերի նման ակոսում էին նրա մարմինը: Նրան տեսնելով նորեկը շփոթվեց, բայց անմիջապես առաջացավ ու ձեռքը մեկնեց նրան.

— Ինչ մեծ վիշտ է ինձ համար այսպիսի մի հզոր ռազմիկի տեսնել նենգության զենքերից խորտակված,— վճռական ասաց նա: — Բայց և ինչ խոր գոհունակություն, անձամբ հրամայած լինելուդ համար, որ ոճրագործները իրենց ոճիրը քավեին կախաղանով, Հաղթանակի հրապարակում:

— Եթե խոսքը Սանթոս Պերեսի և Ռեյնաֆե եղբայրների մասին է, ապա իմացեք, որ ես նրանց արդեն երախտահատույց եմ եղել,— անշտապ ու ծանր ասաց արյունալի վիրավորվածը:

Մյուսը նրան նայեց կատակ կամ սպառնալիք կասկածելով, բայց Կիրոգան շարունակեց.

— Դուք ինձ երբեք չհասկացաք, Ռոսաս: Եվ ինչպես պիտի հասկանայիք, երբ մեզ վիճակվեցին այդքան տարբեր ճակատագրեր: Ձեզ տրվեց իշխել մի քաղաքում, որը դեմքով Եվրոպային է նայում և կղառնա ամենահռչակավորներից մեկը աշխարհում՝ իսկ ինձ՝ կռվել ամերիկյան թավուտների ամայության մեջ, գառլչոների աղքատ հողում: Իմ իշխանությունը բաղկացվածներից ու աղաղակներից և ավազներից ու մոռաբույսերից գրեթե անհայտ հաղթանակներից: Հիշողությա

ինչ անուններով են մնալու: Ես ապրում եմ և շատերի հիշողության մեջ կապրեմ հենց միայն նրա համար, որ սրերով ու ձիերով մարդիկ ինձ սպանեցին կառքում, Բարանկա Յակո կոչված վայրում: Այդ անսովոր մահվան համար Ձեզ եմ պարտական: Այն ժամանակ չկարողացա գնահատել նվերը, բայց հաջորդող սերունդները չցանկացան դա մոռանալ: Դուք երևի չգիտեք այն չքնաղ փորագրությունն ու բռնագրավված գիրքը, որը հետագայում գրել է սանխուանցի մի շնորհալի մարդ:

Արդեն ինքն իրեն գտած Ռոսասը արհամարհանքով նայեց նրան:

— Ռոմանտիկ եք,— կտրուկ ասաց նա: — Հետագայի գովասանքը ավելին չարժե, քան ժամանակակիցների հիացմունքը, որը ևս ոչ մի արժեք չունի և կարելի է ունենալ մի քանի գրոշով:

— Ձեր մտածածը ես ճանաչում եմ,— պատասխանեց Կիրոգան,— 1852 թվականին ճակատագիրը, մեծահոգաբար կամ գուցե Ձեզ մինչև վերջ փորձելով, առաջարկեց տղամարդուն արժանի մահ՝ զոհվել ճակատամարտում: Դուք ցույց տվեցիք, որ անարժան եք այդ նվերին, քանի որ վախեցաք կռվից ու արյունից:

— Վախեցա՞մ,— բացականչեց Ռոսասը: — Ես, որ ձիեր եմ վարժեցրել Հարավում, իսկ հետո սանձել մի ամբողջ երկիր:

Առաջին անգամ Կիրոգան քմծիծաղեց:

— Այո, գիտեմ,— ասաց դանդաղ,— եթե հավատանք Ձեր անկաշառ ենթակաների պատմածին, Դուք թամբի վրա հրաշքներ եք գործել: Բայց այդ նույն ժամանակ Ամերիկայում, նույնպես թամբի վրա, կատարվեցին և ուրիշ հրաշքներ, որ կոչվեցին Չակաբուկո և Խունին, Պալմա Ռեդոնդա և Կասարես:

Ռոսասն անշարժ դեմքով լսեց նրան և պատասխանեց այսպես.

— Ես քաջության կարիք չունեի: Իմ, ինչպես Դուք անվանեցիք, հրաշքները եղան այն, որ ինձ ու իմ փրկության համար մարտնչեցին և զոհվեցին ինձանից քաջ մարդիկ: Օրինակ, Ձեզ վերջ տվող Սանթոս Պերեսը: Քաջությունը դիմադրության հարց է՝ ոմանք դիմադրում են շատ, ոմանք՝ քիչ, բայց վաղ թե ուշ բոլորն էլ տեղի են տալիս:

— Հնարավոր է,— ասաց Կիրոգան,— բայց ես՝ ապրելով այսօր և ընդունելով մահ, մինչև հիմա էլ չեմ իմացել, թե ինչ պատճառով: Եվ հիմա գնում եմ, որ ջնջեն ինձ և տան ուրիշ դեմք ու անուն: Իհարկույն, որովհետև պատմությունը հագնում է բռնություն՝ իմ կլինի այդ մյուսը, ինչ եմ անելու ինձ, բայց ա երբեք վախ չի ունենալու:

— Ինձ բավարարում է ինքս լինելը,— ասաց Ռոսասը,— և չեմ ուզում մեկ ուրիշը դառնալ:

— Քարերն էլ են ուզում ընդմիշտ քար մնալ,— ասաց Կիրոգան,— և քանի դեռ չեն փշրվել, դարեր շարունակ քար են մնում: Ես էլ էի Ձեզ նման մտածում մահվան մեջ մտնելիս, բայց այստեղ շատ բան սովորեցի: Նայեք, մենք երկուսս էլ արդեն ուրիշ ենք:

Բայց Ռոսասը նրան չլսեց և բարձրաձայն մտածելու պես ասաց.

— Գուցե ես չեմ ծնվել մեռնելու համար, այլապես ինչո՞ւ են ինձ այս վայրերը և այս վեճը թվում երազ, և նույնիսկ ոչ թե իմ կողմից տեսնվող երազ, այլ մեկ ուրիշի, որը դեռ չի ծնվել...

Այլևս նրանք ոչ մի բառ չարտաբերեցին, որովհետև այդ վայրկյանին Մեկը կանչեց նրանց:

ԴՆ Գումում, որը գրեթե ամբողջապես քարե նոր եկեղեցու շուքի տակ է, համեստորեն, ինչպես քուն որոնողը, մոխրագույն աչքերով և մոխրագույն մորուքով մի մարդ՝ անասունների հոտի մեջ պառկած, մահ է որոնում: Օրը՝ հավատարիմ ընդարձակ ու գաղտնի օրենքներին, տեղափոխում ու խառնում է այդ խղճուկ կացարանում գտնվող ստվերները: Դրսում՝ հերկված հողերն են և մեռած տերևներով լեփլեցուն մի խրամատ, իսկ անտառամուտի սև ցեխերում՝ գայլի ինչ-որ հետքեր: Մարդը քնում ու երագում է աշխարհից մոռացված: Աղոթքի կանչն արթնացնում է նրան: Անգլիայի թագավորություններում զանգակների դողանջն արդեն երեկոյան սովորություններից մեկն է, բայց մարդը երեխա ժամանակ տեսել է Ուոդենի դեմքը, աստվածային սարսափն ու ցնծությունը, հռոմեական դրամներով և ծանր զգեստներով ծանրաբեռնված տախտակե բիրտ կուռքը, ձիերի, շների և գերիների ողջակիզումը: Մայրամուտից առաջ նա կմահանա, և նրա հետ կմեռնեն ու չեն վերադառնա հեթանոսական արարողության վերջին ու անմիջական պատկերները, և երբ այս սաքսոնը մեռնի, աշխարհը կդառնա փոքր-ինչ ավելի աղքատ: Տարածության մեջ կատարվող դեպքերը, որ հասնում են իրենց ավարտին, ինչ-որ մեկի մահով կարող են հիացնել մեզ, բայց ինչ-որ բան, կամ բաների անհամար մի թիվ, մեռնում է ամեն մի մղձավանջում: Հակառակ պարագայում պետք է գոյություն ունենա աստվածիմացների ենթադրած տիեզերական հիշողությունը: Ժամանակի մեջ եղել է մի օր, որ մարել են Քրիստոսին տեսնող վերջին աչքերը, Խունիսի ճակատամարտն ու Հեղինեի սերը մի մարդու մահով են ավարտվել: Ընչ կմեռնի ինձ հետ, երբ մահանամ, աշխարհը ինչ պաթետիկ կամ փխրուն ձև կկորցնի. Մասեդոնի Ֆերնանդեսի ձայնը, կարմիր ձիու պատկերը՝ Սերանոյի և Չարկասի հողերում, ծծումբի ձողը մահակենու գրասեղանի դարակում:

...EVERYTHING AND NOTHING¹

Ինքնին նա ոչ ոք էր. դեմքին (որը չէր նմանվում դարաշրջանի նույնիսկ ամենահամեստ դիմանկարներին) և ճոխ, ցնորական ու ալեկոծված խոսքերի ետևում նշմարվում էին միայն տհաճ սառնություն և ոչ ոքից չերազված մի երազ:

Սկզբում կարծում էր, թե բոլորն էլ իր նման են: Բայց ընկերոջ հետ այդ դատարկ բանի մասին խոսելիս նրա տարօրինակությունը միանգամ ևեթ ցույց տվեց, որ սխալվում է: Վերջապես մարդը համոզվեց, որ չպետք է տարբերվի իր տեսակից:

Մտածեց ապաքինում գտնել գրքերի մեջ: Այդպես սովորեց մի քիչ լատիներեն և ավելի քիչ հունարեն, ինչը վկայելու արժանի էր թվալու մի ժամանակակցի: Հետո խորհեց, որ իր որոնածը գուցե գտնի մարդկային գլխավոր ծեսում, և հունիսյան մի երկար կեսօրի Աննա Հաթվեյի հետ կատարեց այն:

Քսանքանի տարեկան գնաց Լոնդոն: Արդեն սովոր էր ականաձևացնել ինչ-որ մեկը, որպեսզի չիմացվեր, որ ինքը ոչ ոք է: Իրեն նախասահմանված դերասանի արհեստը Լոնդոնում գտավ, և հիմա բեմի վրա իր ինչ-որ մեկ լինելն էր ձևացնում առաջի մարդկան, որոնք դեմառդեմ իրեն ընդունում էին հենց որպես այդ մեկը: Օտար զբաղմունքների միջով եզակի երջանկություն ապրեց, որպիսին թերևս առաջին անգամն էր ունենում, բայց երբ ծափող-ջուլնների տակ հնչում էր բանաստեղծության ավարտն ու տեսարանից՝ դուրս էին տանում վերջին դիակը, անհրականի տհաճ համն իր վրա էր մնում: Դադարում էր Ֆեռնես կամ Թամերլան լինելուց և նորից դառնում էր ոչ ոք:

Հալածված՝ նոր հերոսներ ու ողբերգական պատմություններ հորինեց: Եվ մինչ մարմինը՝ բոզանոցներում ու գինետներում անում էր մարմնին անհրաժեշտը, նրանում ամփոփված հոգին դառնում էր գուշակի նախազգուշացումներն անտեսող Կեսար, արտույտին նախատող Ջուլիետ, անապատում ճակատագրին տեղյակ վիուկների հետ զրուցող Մակբեթ: Ոչ ոք իրենով այնքան մարդկանց չի ներկայացրել, ինչպես այս մարդը, որը եգիպտացի Պրոթեոսի նման կարողացավ սպառել էակի բոլոր կերպարանքները:

¹ «Ամեն ինչ և ոչինչ» (անգլ.):

Առանձնացած՝ տաբբեր սյուժեների միջարկներում թաքցրեց խոստովանությունը, վստահ, որ չեն հայտնաբերի: Ռիչարդն ասում է, որ ինքը շատերի դերեր կատարող դերասան է: Յագոն տարօրինակ խոսքեր է ասում՝ այն չեմ, ինչ որ կամ: Գոյություն ունենալու և ներկայացնելու ինքնությունը նրան նշանավոր դրվագներ է ներշնչել:

Քսան տարի ապրեց այդ ծրագրված բանդագուշանքի մեջ իր երազները կառավարելով: Բայց մի առավոտ սրահար ընկնող այդ բոլոր թագավորները և հանդիպող, բաժանվող ու զառանցող դժբախտ սիրահարներ լինելու ձանձրույթն ու սարսափը հանկարծակիի բերին: Այդ նույն օրն էլ որոշեց թատրոնը վաճառել: Մի շաբաթ չանցած վերադարձավ ծննդավայր՝ մանկության ծառերի ու գետի մոտ, որոնք այլևս չհամեմատեց դիցաբանական ակնարկների ու լատինական անունների հետ, որոնց փառաբանել էր իր մուսան:

Բայց այստեղ էլ պիտի ինչ-որ մեկը լիներ: Մի հարուստ գործավար դարձավ, որին հետաքրքրում էին միայն վարկերը, հայցերն ու շրջանառության տոկոսները: Մեզ հայտնի աղքատիկ կտակը այս նկարագրի մեջ թելադրեց՝ միտումնավոր դուրս նետելով ողբերգական ամեն մի նշան: Երբեմն նրա առանձնարանն էին այցելում լոնդոնյան ընկերները, որոնց հետ վերստանում էր բանաստեղծի իր նախկին դերը:

Պատմությունն ասում է նաև, որ մահվանից առաջ կամ հետո նա դիմեց Աստծուն և ասաց. «— Ես, որ ապարդյուն այդքան մարդիկ եմ եղել, ուզում եմ մեկը՝ ինքս լինել»: Եվ Աստված փոթորկի միջից պատասխանեց. «— Ես ևս ես չեմ. ես աշխարհը երազեցի ինչպես դու քո ստեղծագործությունները, իմ Շեքսպիր, և դու իմ երազի տեսիլներից մեկն ես՝ ինձ նման շատերը և ոչ մեկը»:

Պ
Ղ

Պ
Ղ

Ե
ՀԵՆ

RAGNAROK

Երազներում (գրում է Կոլրիջը) պատկերները վերաթնացնում են մեր ապրումները և ոչ թե առաջ բերում դրանք, ինչպես սովորաբար կարծում են. այդպես, մենք ոչ թե երազում սֆինքս տեսնելուց ենք սարսափ զգում, այլ սֆինքս ենք տեսնում մեր զգացած սարսափը բացատրելու համար: Եթե դա ճիշտ է, ապա ես ինչպես կարող եմ ի զորու լինել սովորական վերապատմությամբ իմ այդ գիշեր տեսածս երազի սարսափը, արտառոցությունը, սպառնալիքը, խուճապն ու խնդությունն հաղորդել: Բայց, այնուամենայնիվ, փորձելու եմ վերապատմել. գուցե այն հանգամանքը, որ երազս մեն մի տեսարանից էր բաղկացած, բացառի կամ նվազեցնի հիմնական դժվարությունը:

Գործողության վայրը փիլիսոփայության ու գրականության ֆակուլտետն էր, ժամանակը՝ երեկոյան ինչ-որ ժամ: Ամեն ինչ (ինչպես սովորաբար պատահում է երազներում) մի քիչ այլ կերպ էր. պատկերը փոքր-ինչ մեծացված և այդ պատճառով տարօրինակ էր: Վարչակազմ էինք ընտրում. ես զրուցում էի Պեդրո Էնրիկես Ուրենիայի հետ (նա իրականում տարիներ առաջ է մահացել): Հանկարծ մեզ խլացրին ցույցի կամ կառնավալային ինչ-որ հանդիսության գոռում-գոչյունները: Բախոյի կողմից մարդկային և անասնական ճիշեր էին հասնում մեզ: Ինչ-որ մեկը գոռաց. «Գալիս են», և ապա՝ «Աստվածները, Աստվածները»: Չորս թե հինգ հոգի առանձնացան ամբոխից և բարձրացան դահլիճի բեմահարթակի վրա: Բոլորս արցունքոտ աչքերով ծափահարում էինք. դարավոր աքսորից հետո Աստվածները վերադառնում էին: Բեմահարթակի վրա խոշորացած, գլուխները դեպի ետ, կրծքերը դուրս գցած Աստվածներն ամբարտավանորեն ընդունեցին մեր երկրպագումը: Մեկի ձեռքին մի ճյուղ կար, որն անկասկած համապատասխանում էր երազների բուսական աշխարհի պարզամիտ երևակայությանը, մի ուրիշը բարձրացրել էր ձեռքը, որը ոչ թե ձեռք էր, այլ ճիրան: Յանուսի դեմքերից մեկը կասկածամտորեն էր նայում Տոտի կեռ կտուցին: Գուցե մեր ծափահարություններից ոգևորված, նրանցից մեկը, արդեն չեմ կարող հիշել, թե որը, հաղթական մի կռինչ արձակեց, որ անտանելիորեն սուր էր, ոչ այն է կոկորդի ողողում կամ սուլոց հիշեցնող ձայնով: Այդ պահից սկսած, ամեն ինչ փոխվեց:

Ամեն ինչ սկսվեց (գուցե և չափազանցված) այն կասկածից, թե Աստվածները խոսել չգիտեն: Դարավոր վայրի կյանքն ու փախստականի վիճակի դաժանությունները ամլացրել էին նրանց մեջ մարդկայինը, Իսլամի լուսինն ու Հռոմի խաչն անզիջում էին եղել այդ խեղճ վտարանդիների նկատմամբ: Խոնարհված գլուխները, դեղնած ատամները, խառնածինների կամ չինացիների սակավամազ բեղերն ու վար կախված անասնական շրթունքները փաստում էին օլիմպիական ցեղի այլասերվածությունը: Նրանց հանդերձանքը պատշաճ չէր անգամ աղքատներին, այլ Բախոյի խաղատների և պոռնկանոցների մալեվոական պճնությանն էր համապատասխանում: Լամբակը մեխակ էր արյունում. մարմնին կպած պիջակի տակ գուշակվում էր դաշույնի դաստապանի գոյությունը: Եվ հանկարծ զգացինք, որ դա նրանց վերջին խաղաքարտն է, որ նրանք, դարանակալ, փորձառու գազանների պես խորամանկ, կույր ու դաժան էին, և որ եթե մենք վախենայինք, կամ կարեկցեինք նրանց, նրանք ոչնչացնելու էին մեզ:

Հանեցինք ծանր ատրճանակները (հանկարծ ատրճանակներ հայտնվեցին երազի մեջ) և հաճույքով սպանեցինք Աստվածներին:

ԲՈՐԽԵՍԸ ԵՄ

Մյուսին՝ Բորխեսին է ամեն ինչ պատահում: Ես քայլում եմ Բուենոս Այրեսի փողոցներով և կանգ եմ առնում, գուցե արդեն մեքենայաբար, ինչ-որ միջանցքի կամարն ու դուռը դիտելու: Բորխեսից լուրեր եմ ստանում փոստի միջոցով և՛ նրա անունը կարդում պրոֆեսորների եռյակի ցուցակում կամ կենսագրական բառարանի էջերում: Սիրում եմ ավագե ժամացույցները, քարտեզները, 18-րդ դարի տեղեկագրությունը, ստուգաբանությունները, սուրճի համը, Ստիվենսոնի արձակը: Մյուսն էլ նույն նախասիրություններն ունի, բայց այնպես է պարծենում դրանցով, որ այդ նախասիրությունները դառնում են դերասանի հատկանիշներ: Չափազանցություն կլիներ ասել, թե մեր հարաբերությունները թշնամական են: Ես ապրում եմ, ես ինձ թույլ եմ տալիս ապրել, որպեսզի Բորխեսը հյուսի իր գրականությունը, և այդ գրականությունն արդարացնում է ինձ: Հաճույքով խոստովանում եմ, թե մի քանի էջեր հաջողվել են, սակայն այդ էջերը չեն կարող ինձ փրկել, գուցե և այն պատճառով, որ դրանց մեջ լավագույնը պարտական է լեզվին կամ ավանդությանը: Բացի այդ, իմ ճակատագիրը վերջնականապես կործանվելն է, և ինձնից միայն մասնիկներ են գոյատևելու: Իհարկե ինձ հայտնի է նրա կեղծելու և վեհացնելու չարական սովորությունը, սակայն կամաց-կամաց նրան ամեն ինչ տրվում է: Սպինոզան ասում էր, թե ամեն ինչ ուզում է իր իսկ գոյությամբ պահպանվել: քարն հավերժորեն ուզում է քար լինել, վագրը՝ վագր: Ես պետք է Բորխես լինեմ և ոչ թե ես ինքս (եթե իհարկե ես ինչ-որ մեկն եմ), սակայն ես ինքս ինձ ավելի քիչ եմ ճանաչում նրա գրքերում կամ ինձ կարող եմ ճանաչել այլ գրքերում, կամ ինչ-որ կիթառի երաժշտության մեջ: Տարիներ առաջ ես փորձեցի նրանից ձերբազատվել և, մի կողմ թողնելով արվարձանների առասպելը՝ ժամանակի և անսահմանի մասին խաղեր պետք է հորինեմ: Եվ այդպես, ողջ կյանքս փախուստ է և կորցնում եմ ամեն ինչ, և ամեն ինչ մոռացում է, կամ էլ պատկանում է նրան՝ մյուսին:

Իրականում չգիտեմ, թե մեզնից որն է գրում այս էջը:

Սպասելով ու խուսափելով քանի տարի.— և հիմա թշնամին իմ տանն էր: Պատուհանից տեսա՝ դժվարությամբ բարձրանում էր լանջի անհարթ ճանապարհով: Ձեռնափայտով էր, մի դողդոջուն ձեռնափայտ, որը նրա պառաված ձեռքերում գայիսոն մնալով՝ չէր կարող զենք դառնալ: Սպասածս՝ դռան մեղմ թակոցը, դժվար ընկալեցի: Տրտում հայացք նետեցի ձեռագրերիս, անավարտ սե-վագրությանն ու Արտեմիդորոյի երազների մասին տրակտատին, որն այդտեղ բավական անհեթեթ էր, եթե նկատի առնենք, որ ես հունարեն չգիտեմ:

Մտածեցի՝ ևս մի կորած օր: Բանալին չարչարեց ինձ: Վախե-նում էի, թե կընկներ, բայց մի քանի անվստահ քայլ անելով՝ թողեց գայիսոնը, որը ես այլևս չտեսա, և ուժասպառ ընկավ իմ անկողնուն: Քանի անգամ էի տագնապներիս մեջ երևակայել նրա դեմքը, բայց միայն հիմա նկատեցի, որ շատ նման էր Լինկոլնի վերջին դիմանկարին: Մոտավորապես երեկոյան ժամը չորսն էր:

Դեմքս մոտեցրի, որ կարողանար ինձ լսել:

— Ամեն մեկս կարծում ենք, թե միայն մեզ համար են տարի-ներն անցնում, բայց ուրիշների համար էլ են անցնում,— ասացի: — Վերջապես այստեղ հանդիպեցինք, և անցյալում պատահածն իմաստ չունի:

Մինչ ես խոսում էի, նա արձակել էր վերարկուի կոճակները: Աջ ձեռքը բաճկոնի գրպանում էր: Մի բան էր ինձ ցույց տալիս, և ես հասկացա, որ ատրճանակ է:

Այդ ժամանակ հաստատուն ձայնով ասաց.

— Տուն մտնելու համար եմ Ձեր խղճին դիմել. իսկ հիմա իմն եք, և գթասիրտ չեմ լինի:

Փորձեցի մեկ-երկու բառ ասել: Ուժեղ մարդ չեմ, և ինձ կարող էին փրկել միայն բառերը: Ասացի.

— Երբեւէ մի երեխայի եմ ծեծել, բայց Դուք հիմա այդ երեխան չեք, ոչ էլ ես եմ այն անմիտը: Բացի այդ, վրեժը ոչ պակաս անիմաստություն ու հպարտություն է, քան ներումը:

— Հենց դրա համար էլ,— պատասխանեց նա,— որ ես այլևս այն երեխան չեմ, պետք է Ձեզ սպանեմ: Դա ոչ թե վրեժ է, այլ՝ արդարություն: Ձեր պատճառաբանությունները, Բորխես, Ձեր սարսափի արտահայտություններն են, Դուք այլևս ոչինչ չեք կա-րող անել:

— Այնուամենայնիվ, մի բան կարող եմ անել,— պատաս-
խանեցի ես:

— Բնչ,— հարցրեց նա:

— Ջարթնել:

Ես այդպես էլ արեցի:

THE UNENDING GIFT¹

Մի նկարիչ մեզ նկար էր խոստացել:

Հիմա արդեն գիտեմ, որ Nev England-ում մեռել է: Հասկանալով, որ երազի պես մի բան ենք, ես մի անգամ էլ զգացի այդ հասկանալու տխրությունն ու զարմանքը:

(Աստվածները միայն կարող են խոստանալ, որովհետև նրանք անմահ են):

Նախընտրելի մի տեղ մտածեցի, որը նկարն, այնուամենայնիվ, չի զբաղեցնելու:

Հետո մտածեցի, որ եթե այդտեղ լինեի, ժամանակի ընթացքում կդառնար ավելորդ բան՝ իմ տան անանուն ունայնություններից կամ սովորություններից մեկը. հիմա անվերջ է, անդադար և կարող է ունենալ որևէ ձև կամ գույն, որոնցից ոչ մեկին չի կապվի:

Հիմա ինչ-որ կերպով գոյություն ունի: Կապրի ու կտարածվի երաժշտության նման և մինչև վերջ կլինի ինձ հետ: Շնորհակալություն, Խորիժե Լարկո:

(Նաև մարդիկ կարող են խոստանալ, քանի որ խոստման մեջ էլ կա անմահական մի բան):

¹ «Անվերջական նվեր» (անգլ.):

ՎԵՐՋԱԲԱՆ

Աստված տա, որ այս ժողովածուի (որը ժամանակն է կազմել և ոչ թե ես, որն իր մեջ պարունակում է հին գործեր, որ ես չեմ համարձակվել սրբագրել, քանի որ դրանք գրել եմ գրական այլ ըմբռնումով) բնորոշ միապաղաղությունը թեմաների, աշխարհագրական և պատմական տարբերություններից պակաս տեսանելի լինի: Տպագրության հանձնած գրքերիցս և ոչ մեկը, կարծեմ, սրա նման անձնական չէ: Ինձ քիչ բան է պատահել և շատ եմ կարդացել: Ավելի ճիշտ, Շոպենհաուերի մտքից և Անգլիայի խոսքային երաժշտությունից ավելի հիշարժան բան ինձ շատ քիչ է պատահել:

Մի մարդ նպատակադրվում է նկարել աշխարհը: Տարիների ընթացքում տարածությունը բնակեցնում է նահանգների, թագավորությունների, լեռների, ծովախորշերի, նավերի, կղզիների, ձրկների, բնակարանների, գործիքների, աստղերի, ձիերի և մարդկանց պատկերներով: Մեռնելուց քիչ առաջ նկատում է, որ այդ համբերատար գծերի լաբիրինթոսը իր իսկ դեմքի պատկերն է:

ԲՐՈՂԻՒՆԻ ՏԵՂԵԿԱՆՔԸ

Քիփլինգի վերջին գրվածքները Կաֆկայի և Ջեյմսի գրվածքներից պակաս խճողված և ողբերգական չեն, ու անկասկած գերազանցում են սրանց, սակայն նա հազար ութ հարյուր ութսունհինգ թվականին, Լահորեում, անմիջականորեն գրել էր հակիրճ պատմվածքների շարքեր, որոնք ժողովելու ու հրատարակելու էր հազար ութ հարյուր ինսունհինին: Այդ պատմվածքներից շատերը՝ «In the House of Suddhoo»¹, «Beyond the Pale»², «The Gate of the Hundred Sorrows»³ լակոնիկ գլուխգործոցներ են. կար ժամանակ, երբ մտածում էի, որ եթե արհեստին տիրապետող և ծերության շեմին հասած մի մարդ հանձարեղ պատանու հղացումն ու կատարածն ընդօրինակի, ապա դա անհամեստություն չի լինի: Այս ժողովածուն, որ հանձնում եմ ընթերցողներին դատին, այդ մտքի արդյունքն է:

Փորձել եմ, չգիտեմ, հաջողվել է, թե ոչ, անմիջական պատմվածքներ հյուսել: Պարզ ասել չեմ համարձակվում՝ երկրագնդի վրա գոյություն չունի մի էջ, մի փակ բառ, որ պարզ լինի, քանի որ ամեն մեկը մի տիեզերք է, իսկ տիեզերքի ամենաակնառու հատկանիշը բարդությունն է: Միայն ուզում եմ պարզել, որ ես չեմ և ոչ էլ երբևէ եղել եմ այն, ինչ առաջ անվանվում էր առակագիր կամ առակաքարոզիչ, և ոչ էլ այժմ եմ դարձել իրականության հետ կապված և հասարակական պարտք ճանաչող գրող: Եզովպոս լինելու ցանկություն չունեմ: Պատմվածքներս, «Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթների պես ոչ թե համոզել, այլ զբաղեցնել կամ հուզել են ուզում: Դա չի նշանակում, սողոմոնյան պատկերով ասած, որ ես փղոսկրյա աշտարակում եմ փակված: Քաղաքական համոզմունքներս հայտնի են, Պահպանողական կուսակցության անդամ եմ, իսկ դա սկեպտիցիզմի մի ձև է. ինձ երբեք ոչ ոք, ոչ համայնավար, ոչ ազգայնամոլ, ոչ հակասեմական, ոչ էլ Սև մըրջունի կամ Ռոսասի համախոհ է համարել: Կարծում եմ, որ ժամանակի ընթացքում ղեկավարություն չունենալուն էլ կարծանանանք: Կարծիքներս դժվար տարիներին անգամ չեմ կեղծել,

¹ «Սուդհոուի տանը» (անգլ.):

² «Ծցապատնեշից այն կողմ» (անգլ.):

³ «Հարյուր վշտերի դարպասը» (անգլ.):

բայց նաև թույլ չեմ տվել, որ դրանք գրական ստեղծագործությանս մեջ ներխուժեն, միայն մի բացառությամբ. երբ ինձ գրավեց Վեցօրյա պատերազմի աղմուկը: Գրերի գործածությունը խորհրդավոր երևույթ է, մեր կարծիքներն անցողիկ են, ուստի Մուսայի պլատոնական և ոչ թե Պոի կեղծ տեսությունն եմ նախընտրում: Պոն կարծում էր, որ բանաստեղծություն գրելը խելքի բան է, կամ ձևացնում էր, թե այդպես է կարծում: Զարմանալին այն է, որ կլասիցիստները ռոմանտիկական դրույթն էին պաշտպանում, իսկ ռոմանտիկ մի բանաստեղծ կլասիցիստական տեսությունը պահպանեց:

Այսօրվա տերմինաբանությամբ ասած, բոլոր պատմվածքներս իրապաշտական են, բացի այն մեկից, որի անունն է կրում ժողովածուն և որն ակնհայտորեն սերում է Լեմուել Գուլիվերի վերջին ճանապարհորդությունից: Բոլորն էլ հետևում են, կարծեմ, ժանրի բոլոր պահանջներին, որոնք մյուսներից պակաս պայմանական չեն, և որոնցից շուտով հոգնելու ենք, եթե արդեն չենք հոգնել: Այս հնարանքի մեջ առատորեն պահանջվում են հանգամանքային դրվագներ, այս դրվագների գործածության հոյակապ նմուշներ կան Մալդոնի անգլոսաքսոնական բալլադում, որը տասներորդ դարում է գրվել: Երկու պատմվածք, չեմ ասի, թե որոնք, ընդունում են ֆանտաստիկական նույն գաղտնի բանաձևը: Հետաքրքրասեր ընթերցողը որոշ ներքին համապատասխանություններ կհայտնաբերի: Որոշ սյուժեներ միշտ էլ հետապնդել են ինձ, որոշակիորեն միապադաղ եմ:

«Ավետարան ըստ Մարկոսի» շարքի ամենահաջողակ պատմվածքի ընդհանուր կոնֆլիկտի համար պարտական եմ Ուգո Ռոդրիգես Մորինիի երազին: Վախենամ, թե իմ երևակայության կամ տրամաբանության հարմար համարած փոփոխությունները թուլացրած լինեն գործը: Բացի այդ, գրականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ղեկավարվող երազ:

Հրաժարվել եմ բարոկկյան ոճի անակնկալներից, նաև անսպասելի ավարտներից: Այլ խոսքերով ասած, զարմացնելու փոխարեն նախընտրել եմ աստիճանական ակնկալիքներ կերտել: Տարիներ շարունակ մտածել եմ, թե կկարողանամ տարբերությունների և նորությունների միջոցով հաջող մի էջ գրել, միայն այժմ, երբ լրացել է յոթանասունս, ինձ թվում է, թե գտել եմ ձայնս: Ընդհանուր առմամբ խոսքային փոփոխությունները չեն կարող ոչ

փչացնել, ոչ էլ բարելավել թելադրած, բացի այն դեպքերից, երբ այդ փոփոխությունները ծանր մի նախադասություն թեթևացնեն, կամ էլ մեղմացնեն շեշտված մի գաղափար: Յուրաքանչյուր լեզու մի ավանդույթ է, յուրաքանչյուր բառ՝ ընդունված խորհրդանիշ. զրոյով կարելի է հաշվել այն, ինչ նորարարը կարող է փոփոխել. հիշենք հոյակապ, բայց շատ անգամ էլ անընթեռնելի Մալարմեի կամ Ջոյսի ստեղծագործությունը: Հավանական է, որ արդարացի այս պատճառաբանությունները հոգևության արդյունք լինեն: Տարիներն ինձ սովորեցրել են համակերպվել Բորխես լինելու հանգամանքին:

Անկեղծորեն, թագավորական Ակադեմիայի բառարանին ոչ մի կարևորություն չեմ տալիս, ըստ Պոլ Գրուսակի տխուր որոշման ու «արգենտինիզմների» ծանրակշիռ բառարանների, dont chaque édition fait regretter la précédente¹. Բոլոր բառարանները, ծովի այս և այն կողմիները, ձգտում են շեշտել տարբերությունները և քայքայել լեզուն: Հիշում եմ, որ Ռոբերտ Արլտին մեղադրեցին՝ ասելով, թե նա լունֆարդոն չէր ճանաչում, իսկ նա պատասխանեց՝ «Վիլլա Լուրդյում, մալեվոների և աղքատների շրջապատում եմ մեծացել, և իսկապես էլ այդ ամենը սովորելու ժամանակ չեմ ունեցել»: Իրականում լունֆարդոն գրական կատակ է, տանգոյի երգահանների հնարած լեզուն, այդ լեզուն, բացի այն պարագայից, երբ ձայնապնակը վարժեցրել է դրան, անծանոթ է արվարձանի մարդուն:

Եվ ժամանակի, և տարածության առումով պատմվածքների գործողությունները հեռավոր վայրերում են կատարվում: Այդ ձևով երևակայությունը կարող է ավելի ազատ գործել: Ո՞վ կարող է հազար ինն հարյուր յոթանասուն թվականին մանրամասնորեն հիշել, թե ինչպիսին էին նախորդ դարի վերջում Պալերմոյի և Լոմասի արվարձանները: Որքան էլ անհավատալի թվա, գոյություն ունեն «սկզբունքայիններ», որ փոքրիկ անզգուշությունների հանդեպ դառնում են անզիջող ուստիկաններ: Նկատում են, օրինակ, որ Մարտին Ֆիեռոն ոչ թե ոսկորների պարկ, այլ ոսկորների տոպրակ կասեր և չեն ընդունում, գուցե անարդարացիորեն, հայտնի մի ձիու վարդագույն մազ ունենալը:

¹ որի ամեն մի հրատարակությունը ստիպում է ափսոսալ նախորդը (Ֆրանս.):

Ընթերցող, Աստված քեզ փրկի երկար նախաբաններից: Մեջ-
բերումը Քեվեդոյին է պատկանում, նա, ժամանակավրեպ չլինելու
համար, որը վերջ ի վերջո հայտնաբերվելու էր, երբեք չկարդաց
«Shaw»-ի նախաբանները:

Խ.Լ.Բ.

Բուենոս Այրես, 19 ապրիլի, 1970

Ասում են (չնայած դժվար է լսածներին հավատալ), թե այս պատմությունը պատմել է ինքը՝ Էդուարդոն, Նիլսեն եղբայրներից փոքրը, ավագի՝ հազար ութ հարյուր իննսուն քանի թվականին Մորոնի շրջանում իր բնական մահով մահացած Քրիստիանի դագաղի վրա: Բայց ստույգ հայտնի է, թե այդ երկար ու խուլ գիշերվա ընթացքում, որ կարճացնում էին դառը մատե խմելով, ինչ-որ մեկը այն լսել է մի ուրիշից և կրկնել Սանտյագո Դաբովեի մոտ, իսկ նա էլ պատմեց ինձ: Տարիներ անց ես այն նորից լսեցի հենց Տուրդերայում, որտեղ կատարվել էր: Փոքր-ինչ համառոտ երկրորդ պատումը՝ որոշ չնչին տարբերակներով ու անհամաձայնություններով, որն ինքնին սովորական բան է, հիմնականում համապատասխանում էր Սանտյագոյի պատմածին: Ես այդ պատմությունը հիմա գրում եմ, որովհետև դրանում, ինչպես հայելում, արտացոլված է, եթե չեմ սխալվում, ողբերգական ու պարզ մի դրվագ մայրաքաղաքի արվարձանում ապրող նախկին բնակիչների բարքերից: Կփորձեմ պատմել ինչպես որ կա, չնայած արդեն նախագույն եմ, որ չեմ կարողանալու դիմադրել ընդգծելու կամ ոչ անհրաժեշտ մանրամասները դուրս թողնելու գրական գայթակղությանը:

Տուրդերայում նրանց կոչում էին Նիլսեններ: Ծխի քահանան ինձ ասաց, որ իր նախորդը զարմացել է՝ նրանց տանը տեսնելով սև կազմով ու գոթական տառերով մի քրքրված Աստվածաշունչ. վերջին էջերում նա նկատել է ձեռագրով նշված թվեր և անուններ: Դա տան միակ գիրքն է եղել: Նիլսենների անկարգ տարեգրությունը՝ կործանված, ինչպես կործանվում է ամեն ինչ: Տունը, որն արդեն չկա, կավաշեն էր, երկու բակերով, գլխավորը՝ կարմիր սալիկներով, երկրորդը՝ հողե հատակով: Այնտեղ քչերն էին եղել՝ Նիլսենները պահպանում էին իրենց առանձնությունը: Քնում էին փայտե մահճակալների վրա, աղքատիկ կահավորված սենյակներում: Նրանց մեծագույն հպարտությունն էին ձին, թամբը, նեղ-շեղբ դաշույնը, շաբաթօրյա շրջիկ խրախճատեղիները և հոգին զվարթացնող խմիչքը: Գիտեմ, որ բարձրահասակ էին, կարմրահեր: Այդ երկու կրեոլների արյան մեջ տրոփում էին Դանիան կամ Իռլանդիան, որոնց մասին նրանք երբեք չէին լսել: Շրջակայքում նրանցից վախենում էին՝ զարմանալի կլիներ, եթե մի քանի սպանություն կատարած չլիներին: Եղբայրները մի անգամ ուս ուսի

դիմադրել էին ոստիկանությանը: Պատմում են, թե փոքրը ինչ-որ հարց է ունեցել Խուան Իբեռայի հետ, և կարողացել է լուծել իր օգտին, որը, ականատեսների կարծիքով, մեծ բան էր: Նրանք եղել են և տավար քողեր, և կաշի են դաբաղել, և անասուն մորթոտել, իսկ երբեմն էլ նախիր են խարանել: Նշանավոր էին իրենց ժուժկալությամբ, և միայն խմիչքն ու խաղն էին նրանց ձեռնբաց դարձնում: Ոչ ոք չէր լսել նրանց ազգակիցների մասին և ոչ ոք չգիտեր, թե որտեղից էին հայտնվել հենց իրենք: Ունեին մի սայլ ու մի լուծ եզ:

Իրենց տեսքով նրանք տարբերվում էին արվարձանի բնիկներից, որոնք այդ վայրերին Վայրագ ափ հանդուգն անունն էին տվել: Այս, նաև այն, ինչ մենք չգիտենք, բացատրում են երկու եղբայրների ամուր միությունը: Նրանցից մեկի հետ ընդհարվելը նշանակում էր թշնամի ունենալ երկուսին:

Նիլսենները կնամուխներ էին, բայց նրանց սիրային արշավները առայժմ սահմանափակվում էին ետնախորշերով կամ պոռնկանոցներով: Այդ պատճառով էլ քիչ չեղավ բամբասանքը, երբ Քրիստիանը իր մոտ, տուն բերեց Խուլիանա Բուրգոսին: Նա, իհարկե, համարվում էր սպասուհի, բայց և ճիշտ է նաև այն, որ Քրիստիանը նրան պճնեց՝ գեղեցիկ արդուզարդով ու իր հետ տանում էր խնջույքների: Համեստ խնջույքներին հարևանների, որտեղ տակավին արգելված էր «տանգոն» և գիշերն անցկացնում էին վառ լույսերի ներքո: Խուլիանան թխամորթ էր, և ուներ նշաձև աչքեր՝ հենց իր վրա էր զգում մեկի հայացքը, անմիջապես ժպտում էր նրան: Աղքատ թաղամասում, որտեղ աշխատանքն ու հոգսերը մաշել էին կանանց, նա գրավիչ էր երևում:

Էդուարդոն ամենուրեք ընկերակցում էր նրանց: Հետո, չգիտեմ ինչ գործով, հանկարծ ուղևորվեց Առեսիֆես՝ վերադարձին հետը բերելով ճանապարհին գտած ինչ-որ աղջիկ, որին, սակայն, մի քանի օր անց վռնդեց: Հետզհետե դարձավ ավելի կոպիտ՝ ալմասենում հարբում էր մենակ և ոչ ոքի հետ չէր շփվում: Նա սիրահարվել էր Քրիստիանի կնոջը: Թաղամասը, այդ մասին իմանալով թերևս նրանից էլ շուտ, չարախնդորեն նախատեսում էր եղբայրների ծածուկ հակադրության վախճանը:

Մի գիշեր ուշ վերադառնալով ալմասենից, Էդուարդոն տեսավ Քրիստիանի թխլիկ ձին, որ բեռան տակ՝ կապված էր սյունից: Տոնականորեն հագնված մեծ եղբայրը բակում սպասում էր նրան: Կինը գնաց և վերադարձավ մատեն ձեռքին: Քրիստիանն Էդուարդոյին ասաց.

— Ես Ֆարիսայի մոտ խնջուքի եմ գնում: Խուլիանան մնում է: Եթե կուզենաս՝ օգտվիր:

Ձայնը հնչում էր տիրական և բարի: Անելիքը չիմանալով՝ Էդուարդոն մի քանի րոպե նայեց նրան: Քրիստիանը վեր կացավ, հրաժեշտ տվեց Էդուարդոյին՝ չնայելով Խուլիանայի կողմը, քանի որ նա ընդամենը իր էր, հեծավ ձին և թեթև վարճով անշտապ գնաց:

Այդ գիշերվանից նրանք իրար մեջ կիսեցին նրան: Ոչ ոք կարգին չգիտի, թե ինչպես է ընթացել նրանց կյանքը այդ ամութալի միութեամբ, որով սասանվեց արվարձանի բարոյականությունը: Մի երեք շաբաթ ամեն ինչ հարթ գնաց, բայց այդպես երկար չէր կարող շարունակվել: Եղբայրները իրար մեջ Խուլիանայի անունը չէին տալիս նույնիսկ նրան կանչելիս, բայց որոնում էին և գտնում անհամերաշխության պատճառներ: Եթե վիճում էին ինչ-որ կաշվի վաճառքի շուրջը, ապա իրականում վեճը բոլորովին ուրիշ բանի համար էր: Քրիստիանը միշտ բարձրացնում էր ձայնը, իսկ Էդուարդոն՝ լռում: Առանց իմանալու՝ նրանք խանդում էին իրար: Արվարձանի դաժան բարքերը տղամարդուն թույլ չէին տալիս խոստովանել, նույնիսկ ինքն իրեն, թե կինը, տիրելու ցանկությունից բացի, կարող է որևէ այլ բան էլ արթնացել, բայց երկուսն էլ սիրահարված էին: Եվ սա ողջ չափով նրանց նվաստացնում էր:

Մի օր երեկոյան Լոմասի հրապարակում Էդուարդոն հանդիպեց Խուան Իբեռային, որը նրան շնորհավորեց ձեռք գցած գեղեցկուհու համար: Կարծում եմ հենց այդ ժամանակ էր, երբ Էդուարդոն հայիոյեց նրան: Նրա մոտ ոչ ոք չպիտի ծաղրեր Քրիստիանին:

Կինը երկուսին էլ ծառայում էր անասնական հնազանդությամբ, սակայն չէր կարող թաքցնել, որ նախապատվությունը տալիս էր փոքրին, որը չէր հրաժարվել իր բաժնից, բայց և տանը առաջինը չէր այդ կարգը դրել:

Մի անգամ Խուլիանային հրամայեցին գլխավոր բակում դնել երկու աթոռ և աչքից կորսվել. եղբայրները պետք է խոսեին: Նա երկար սպասեց խոսակցության ավարտին և սիեստայի ժամին պառկեց հանգստանալու, բայց շուտով կանչեցին: Եվ հրամայեցին մի պարկում հավաքել ունեցած-չունեցածը, նույնիսկ ապակյա աղոթարանն ու խաչը, որ մոր հիշատակներն էին: Առանց որևէ բացատրության նրան սայլ նստեցրին և ճամփա ընկան՝ լուռ ու ծանրորեն: Անձրևը ավերել էր ճանապարհը, և միայն առավոտվա

հինգին նրանք հասան Մորոն: Այնտեղ նրան վաճառեցին պողնը-կատան տիրուհուն: Գործը երկուսով կատարեցին. Քրիստիանը վերցրեց փողն ու կեսը տվեց փոքր եղբորը:

Նիլսենները, վերջապես դուրս գալով սիրո այդ ճահճից (որը դառնալու էր նրանց կործանումը), Տուրդերայում փորձեցին վերադառնալ միայնակ տղամարդկանց իրենց նախկին կյանքին: Եվ նորից սկսեցին խաղերը, աքլորակռիվներն ու շվայտությունները: Որոշ պահերի թերևս հավատում էին իրենց փրկությանը, բայց հաճախ էր պատահում, որ ամեն մեկն իր գործով անհարգելի կամ խիստ հարգելի բացակայեր: Նոր տարվանից փոքր-ինչ առաջ փոքր եղբայրն ասաց, որ Բուենոս Այրեսում գործ ունի: Իսկ Քրիստիանը ուղևորվեց Մորոն, և մեզ հայտնի տան ծածկի տակ տեսավ էդուարդոյի կարմրավուն ձին: Ներս մտավ. այնտեղ իր հերթին սպասելով նստել էր փոքր եղբայրը: Ըստ երևույթին Քրիստիանը նրան ասել է.

— Եթե այսպես շարունակվի, մենք կիյուծենք ձիերին: Ավելի լավ է նա մեր ձեռքի տակ լինի:

Տիրուհու հետ պայմանավորվելով, Քրիստիանը գոտու տակից փող հանեց, և իրենց հետ նրան տարան: Խուլիանան գնում էր Քրիստիանի հետ: Էդուարդոն խթանեց իր կարմրավունին, որպեսզի նրանց չնայի:

Վերադարձան նախկին վիճակին: Խայտառակ որոշումը խնդրի լուծում չդարձավ, երկուսն էլ ստորացել էին մինչև փոխադարձ խաբեությունը: Բոլորովին մոտիկ Կայենն էր շրջում, բայց Նիլսեն եղբայրների կապվածությունը շատ ուժեղ էր, — ով իմանա, երկուսով ինչպիսի դժվարություններ ու վտանգներ էին հաղթահարել, — և այդ պահից երկուսն էլ նախընտրեցին իրենց ցասումը թափել ուրիշների վրա՝ օտարների, շների, Խուլիանայի, որը և պառակտման պատճառն էր:

Մարտն արդեն վերջանում էր, բայց շոգը չէր մեղմանում: Կիրակի օրը (կիրակի օրերը մարդիկ շուտ են ցրվում տները) խանութից վերադարձող էդուարդոն տեսավ, որ Քրիստիանը եզներն է լծում: Քրիստիանը նրան ասաց.

— Արի այստեղ: Պիտի մի քանի կաշի տանենք Պարդոյին: Ես արդեն բարձել եմ, զովին գնալը հեշտ է:

Պարդոյի առևտրական պահեստը կարծեմ Հարավում էր: Նրանք գնացին Լապ-Տրոպաս ճանապարհով, իսկ հետո շեղվեցին: Գիշերվա դաշտը լայն փռված էր նրանց առաջ:

Նրանք գնում էին թփածածկ ճահճի մոտով: Քրիստիանը նետեց ծխացող սիգարետը և հանգիստ ասաց.

— Գործի անցնենք, եղբայր: Մեզ հետո կօգնեն գիշանգղերը: Այսօր ես նրան սպանեցի: Թող իր իրերի հետ այստեղ մնա: Նրանից այլևս վնաս չի լինի:

Եվ հազիվ զսպելով լացը՝ նրանք փաթաթվեցին իրար: Հիմա նրանց միացնում էր ևս մի թել՝ ցավով զոհաբերված կինը և նրան մոռանալու անհրաժեշտությունը:

Առավոտյան թերթ կարդացողները կարդում են մոռանալու կամ երեկոյան, պատահական զրույցի ժամանակ թեմա ունենալու համար, ուստիև տարօրինակ չէ, որ այն ժամանակ մեծ խոսակցությունների առիթ դարձած Մանեկո Ուրիարտեի և Դունկանի դեպքը ոչ ոք չհիշի, կամ դրա մասին մշուշոտ պատկերացում ունենա: Բացի այդ, դեպքը տեղի ունեցավ անկախության համար մղվող Հարյուրամյա պատերազմի և գիսաստղի տարում՝ 1910 թվականին, և այդ ժամանակից ի վեր շատ բաներ ենք գտել ու կորցրել: Մասնակիցներն արդեն մահացել են, դեպքի ականատեսները խորհրդավոր կերպով երգվել են լռություն պահպանել: Ես էլ ձեռքս բարձրացրի երգվելու համար և իմ՝ ինը թե տասը տարեկան երեխայի ամբողջ ռոմանտիկայով զգացի այդ ծիսակատարության կարևորությունը: Չգիտեմ, մյուսները նկատեցին, թե ոչ իմ խոստում տալը, չգիտեմ, իրենք հավատարիմ մնացին երդմանը, թե ոչ: Ինչ էլ որ լինի, ժամանակի և լավ կամ վատ գրականության անխուսափելի ազդեցություններով հանդերձ, ահա ամբողջ պատմությունը:

Այդ երեկո զարմիկիս՝ Լաֆինուրի հետ մեկնեցինք «Լոս-Լաուրելես» ագարակ խորովածի՝ իր ընկերներից մեկնումեկի մոտ: Տեղը չեմ կարող նկարագրել. թող դա լինի հյուսիսային, դեպի գետը իջնող, ստվերոտ և հանդարտ գյուղերից մեկը, որը ոչ մի կապ չունի հսկայական քաղաքի և նրան հարող հարթավայրերի հետ: Գնացքը ընթանում էր այնքան դանդաղ ու ալարկոտ, որ ճանապարհը ինձ ձանձրացնելու աստիճան երկար թվաց, սակայն հայտնի է, որ երեխաների ժամանակը ընդհանրապես դանդաղահոս է: Երբ ագարակի դռնակից ներս մտանք, արդեն մթնում էր: Ինձ թվաց, որ այստեղ ամեն ինչ հին է ու նախասկզբնական՝ խորովվող մսի հոտը, ծառերը, շները, չորացած ձյուղերը, մարդկանց իր շուրջը ժողոված խարույկը:

Շյուրերի թիվը տասներկուսից չէր անցնի. բոլորն էլ մեծահասակ էին: Ամենամեծի, հետո իմացա, երեսունը դեռ չէր բոլորել: Նրանք հմուտ գիտականներ էին այնպիսի հարցերում, որոնց մեջ ես դեռևս աշակերտ էի՝ ձիարշավ, արդուզարդ, ավտոմեքենաներ, ակնհայտորեն թանկարժեք կանայք: Ոչ ոք երկչոտությունս չծաղ-

րեց, ոչ ոք ինձ վրա ուշադրություն չդարձրեց: Ոչխարի միսը, որ հմուտ դանդաղությամբ պատրաստում էր ագարակի աշխատողներից մեկը, մեզ երկար զբաղեցրեց ճաշասենյակում: Գինիների հնության շուրջ վեճ առաջացավ: Կիթառ գտնվեց. զարմիկս, կարծեմ էլիաս Ռեզուլեսի «Լա Տապերան» և «Էլ Գաուչոն» նվագեց և լունֆարդոյով¹, այդ ժամանակվա խրթին ժարգոնով, ինչ-որ խաղիկներ երգեց. դրանք Խուսին փողոցում տեղի ունեցած մի դաշունամարտի մասին էին: Սուրճ և ծխախոտ բերեցին: Վերադառնալու մասին խոսք անգամ չեղավ: Ես զգում էի (նախադասությունը Լուգոնեսին է պատկանում) «արդեն շատ ուշ է»-ի երկյուղը: Չէի ուզում ժամացույցին նայել: Մեծերի մեջ երեխայի մենությունս քողարկելու համար, առանց հաճույք ստանալու, մեկ կամ երկու գավաթ ըմպեցի: Ուրիարտեն բարձրաձայն Դունկանին պոկերի մենամարտի հրավիրեց: Ինչ-որ մեկն առարկեց, որ դա այնքան էլ հետաքրքիր չէ, և որ ավելի լավ կլիներ չորսով խաղան: Դունկանն համաձայն էր, սակայն Ուրիարտեն այնպիսի մի համառությամբ, որ չհասկացա և ոչ էլ փորձեցի հասկանալ, հավատարիմ մնաց իր նախկին առաջարկին: Բացի տրուկոյից, որի հիմնական նպատակը ժամանակը չարաճճիություններով և ոտանավորներով զբաղեցնելն է, և սոլիտրոյի համեստ լաբիրինթոսներից, թղթախաղն ընդհանրապես չեմ սիրել: Ոչ ոք չնկատեց անհայտանալս: Երեխայի համար հսկայական, անծանոթ և մռայլ առանձնատունը (միայն ճաշասենյակի լույսն էր վառված) շատ ավելի հետաքրքրական է, քան ճանապարհորդի համար՝ անծանոթ երկիրը: Քայլ առ քայլ խուզարկեցի սենյակները. բիլիարդի մի սրահ եմ հիշում, քառակուսի և քառանկյունի ձևերով զարդարված ապակեպատ մի միջանցք, մի զույգ ճոճվող բազկաթոռներ, և մի պատուհան, որտեղից բակն էր երևում: Մթության մեջ ետդարձի ճանապարհս կորցրեցի, տանտերը, որի անունը, որքանով հիմա հիշում եմ, կարող էր Ասեվեդո կամ Ասեբալ լինել, վերջապես գտավ ինձ: Բարությունից, թե կոլեկցիոների ինքնասիրությունից դրդված, նա ինձ առաջնորդեց դեպի ապակեպատ պահարանը: Լամպի լույսի տակ փայլատակեցին հռչակավոր դարձած դաշույնները: Նա ասաց, որ Պերգամինոյի շրջանում մի հողամաս ունի, և որ նահանգում շրջագայելով՝ կարողացել է կուտակել այդ ամբողջ հավաքածուն: Բացեց պահարանը և առանց ցուցանակի ու թղթերի վրա գրած

¹ Խոսվածք, ժարգոն:

նշումներին նայելու, ինձ պատմեց այդ դաշույնների պատմությունը, եղելություն, որ տեղերի ու թվականների տարբերություններով հանդերձ, գրեթե միշտ կրկնվում էր: Հարցրի, թե արդյոք այդ զենքերի մեջ Մորեյրայինը չկա՞: Մորեյրան այդ ժամանակ գաուչոյի արխեստիպան էր, ինչպես տարիներ հետո այդ արխեստիպան էին դառնալու Մարտին Ֆիեռոն և Դոն Սեգունդո Սոմբրան: Խոստովանեց, որ ոչ, բայց ասաց, թե ինձ կարող է ցույց տալ մեկ ուրիշը, որ շատ նման է դրան, և Ս-ի ձևով դաստապան ունի: Բորբոքված ձայների աղմուկն ընդհատեց նրան:

Ուրիարտեն գոռում էր, թե հակառակորդն իբր հարամություն է արել: Ընկերները ոտքի վրա շրջապատել էին նրանց: Դունկանը, հիշում եմ, մյուսներից բարձրահասակ էր, ջլապինդ, փոքր-ինչ կորացած ուսերով, անարտահայտիչ դեմքով, սպիտակին տվող շիկավուն մազերով, Մանեկո Ուրիարտեն ճկուն էր, թուխ, գուցե և հնդկացիական դիմագծերով, սակավամազ և դեմքին պարծենկոտ արտահայտություն տվող բեղով: Բոլորն էլ հարբած էին, չգիտեմ՝ հատակին իսկապես երկու թե երեք շիշ կար նետած, թե շարժանկարի նկատմամբ իմ կրքոտ սերն է ինձ թելադրում այդ կեղծ մանրամասնը: Ուրիարտեի հայիոյանքները չէին դադարում և գնալով ավելի սուր ու այլանդակ էին դառնում: Դունկանը, կարծես թե նրան չէր լսում, ի վերջո, մի տեսակ անտարբերությամբ վեր կացավ և բռունցքով հարվածեց նրա դեմքին: Ուրիարտեն հատակին ընկած գոռաց, թե թույլ չի տալու այդ անպատվությունը, և որ նրան մենամարտի է հրավիրում:

Դունկանն հրաժարվեց և որպես բացատրություն ավելացրեց.

— Բանն այն է, որ ես քեզանից վախենում եմ:

Բոլորը հռչակեցին:

Ուրիարտեն արդեն ոտքի վրա պնդեց.

— Մենամարտելու եմ ձեզ հետ և հենց հիմա:

Մեկը, Աստված թող ների նրան, հիշեց, որ զենքերի պակաս չի զգացվի: Չգիտեմ ով բացեց ցուցափեղկը: Մանեկո Ուրիարտեն որոնեց ամենաչքի ընկնող և ամենաերկար զենքը, այն, որի դաստապանը Ս-ի ձև ուներ, Դունկանը, գրեթե անտարբեր ընտրեց փայտե դաստակով մի դանակ, որի շեղբի վրա մի ծառ էր փորագրված: Մեկն ասաց, որ սուր ընտրելը բնորոշում է Մանեկոյին: Ոչ ոքի չգրամացրեց, որ այդ պահին նրա ձեռքը դողաց, սակայն բոլորին զարմացրեց, որ նույնը Դունկանի հետ կատարվեց:

Ավանդույթը պահանջում է, որ կռվողները հարգեն հյուրընկալ տունը: Կեսկատակ-կեսլուրջ դուրս եկանք դեպի խոնավ գիշերը:

ես ոչ թե գինուց, այլ արկածասիրության տենչով էի հարբած. ես շատ էի ցանկանում, որ մեկն ու մեկը սպաներ, որպեսզի պատմելու և հիշելու բան ունենամ: Գուցե այդ պահին մյուսներն էլ էին ինձ պես մտածում: Զգացի նաև, որ մի հողմապտույտ, որն այլևս հնարավոր չէր կասեցնել, քաշում ու կործանում էր մեզ: Ոչ ոք չէր հավատում Մանեկոյի մեղադրանքին, բոլորն էլ այն բացատրում էին ասելով, թե դա գինուց թեժացած հին թշնամանքի արտահայտություն է:

Քայլեցինք ծառերի միջով՝ ետևում թողնելով բակը: Ուրիարտեն և Դունեկանը գնում էին առջևից. ինձ զարմացրեց այն հանգամանքը, որ երկուսն էլ հսկում էին իրար, կարծես վախենում էին մյուսի անակնկալ հարձակումից: Մի ծաղկատունկ շրջանցեցինք: Դունկանը մեղմ, բայց ազդու ձայնով ասաց.

— Այս տեղը հարմար է:

Մեջտեղում կանգնած, անվճռական իրար նայեցին: Մեկը գոռաց.

— Մի կողմ նետեք խանգարող այդ երկաթներն ու ձեռնամարտի անցեք:

Բայց այդքան կռվում էին: Սկզբում նրանց շարժումներն անճարակ էին, կարծես վախենում էին իրար վիրավորելուց, սկզբում մեկը մյուսի դաշույնին էր նայում, բայց հետո արդեն նայում էին հակառակորդի աչքերին: Ուրիարտեն մոռացել էր զայրույթը, Դունկանը՝ իր անտարբերությունն ու քամահրանքը: Վտանգը այլակերպել էր նրանց, կռվողներն արդեն ոչ թե պատանիներ էին, այլ երկու հասուն այրեր: Կռիվն ինձ համար պողպատի խառնաշփոթություն էր, բայց կարողացա հետևել կամ գրեթե հետևել այնպես, կարծես թե դա շախմատի խաղ լիներ: Տարիներն իհարկե, սրել կամ մթազնել են տեսածս: Չգիտեմ, թե որքան տևեց այդ խառնաշփոթությունը. կան դեպքեր, որոնք չեն կարող չափվել ժամանակի սովորական չափանիշներով:

Վահանի դեր կատարող պոնչոյի բացակայության պատճառով հարվածները արմունկներով էին կասեցնում: Պատահողոված թևքերը շուտով արյունից մզացան: Մտածեցի, որ սխալ էին ենթադրել. հավանաբար նրանց անծանոթ չէր այս տեսակ մենամարտերը: Նկատեցի, որ նրանցից յուրաքանչյուրի շարժումները տարբեր է: Զենքերն անհավասար էին: Դունկանն այդ անհավասարությունը հաղթահարելու համար ուզում էր մոտենալ մյուսին, Ուրիարտեն ետ էր քաշվում երկար ու ցածր դաշունահարվածներ տալով հակառակորդին: Ցուցափեղկը մատնանշող ձայնը գոռաց.

— Սպանելու են իրար: Կանգնեցրե՞ք դրանց:

Ոչ ոք չհամարձակվեց: Ուրիարտեն ընկրկեց: Դունկանն հարձակվեց: Մարմիններն արդեն իրար էին կպել: Ուրիարտեի պողպատը Դունկանի դեմքն էր որոնում: Հանկարծ նրա դաշույնը մեզ ավելի կարճ թվաց. մխրձվել էր մյուսի կրծքի մեջ: Դունկանն ընկավ խոտերի վրա: Այդ ժամանակ էր, որ մի շատ ցածր ձայն ասաց.

— Ինչ տարօրինակ է: Այս ամենը կարծես երազում լինի:

Աչքերը չփակեց, չշարժվեց, իսկ ես մի սպանության էի ականա տես եղել: Մանեկո Ուրիարտեն կռացավ մեռած վրա և ներում խնդրեց: Արտասվում էր: Կատարվածը նրա կամքից անկախ էր: Այժմ գիտեմ, որ զոջումն ավելի շուտ վերաբերում էր անհեթեթ արարքին, քան սպանությանը:

Այլևս չուզեցի նայել: Կատարվել էր ցանկացածս, և ես ինքս ինձ ջարդված էի զգում: Լաֆինուրն հետո պատմեց, որ Դանակը գոռով էին հանել նրա ձեռքից: Հավաքվեցին: Որոշեցին ըստ կարելվույն քիչ ստել. դաշունամարտը սուսերամարտի վերածեցին: Չորս հոգի իրենց վկայությունն առաջարկեցին. նրանց մեջ էր Ասեբալը: Բուենոս Այրեսում ամեն ինչ լուծվում է. մեկնումեկը միշտ ինչ-որ մեկի ծանոթն է:

Սեղանի վրայի անգլիական թղթախաղերի և թղթադրամների կազմած խառնակույտին ոչ ոք չէր ուզում ոչ նայել, ոչ էլ՝ ձեռք տալ:

Հետագա տարիներին հաճախ եմ մտածել ինչ-որ մեկին պատմությունը վստահելու մասին, սակայն միշտ էլ զգացել եմ, որ գաղտնիքի տեր լինելն ինձ շատ ավելի է շոյում, քան այն պատմելը: 1929 թվականին տարիների լռությունս խզվեց պատահական մի զրույցի ընթացքում: Պաշտոնաթող ոստիկանապետ Խոսե Օլավեն Ռետիրոյի դանակակռվողների մասին էր պատմում և նկատեց, որ նրանց ձեռքից ինչ ստորություն ասես գալիս է, միայն թե կարողանան հակառակորդին անակնկալի բերել, պատմեց նաև, որ Պողեստայից և Գուտիեռեսից առաջ դաշունամարտը սովորական երևույթ չէր: Ասացի, որ այդ մենամարտերից մեկի վկան եմ եղել, և պատմեցի այն, ինչ տեղի էր ունեցել տարիներ առաջ:

Նա մասնագետի ուշադրությամբ լսեց ինձ և ասաց.

— Վստահ եք, որ Ուրիարտեն և մյուսը երբեք չէին կռվել: Գուցե իրենց կալվածքներում նրանք ինչ-որ բան սովորել էին:

— Չեմ կարծում,— պատասխանեցի: — Խմբի անդամները բոլորն էլ իրար ճանաչում էին և բոլորն էլ ապշել էին:

Օլավեն, կարծես բարձրաձայն մտածելիս լիներ, առանց շտապելու շարունակեց:

— Այդ դաշույններից մեկի դաստապանը Ս-ի ձև ուներ: Այդ տեսակի մեջ երկուսն հանրահայտ դարձան՝ Մորեյրայինը և Խուան Ալմադայինը՝ Տապալկենում:

Հիշողությանս մեջ ինչ-որ բան կենդանացավ, Օլավեն շարունակեց:

— Դուք նաև նշեցիք փայտե դաստակով մի դանակ, որի շեղբի վրա ծառ էր պատկերված: Նման դանակներն հազարավոր էին, բայց կար մեկը, որ...

Մի պահ կանգ առավ և ապա շարունակեց:

— Պարոն Ասեվեդոյի կալվածքը Պերգամինոյում էր գտնվում: Դսիդավերջին այդ վայրերում համբավավոր մի կուչիլլերո էր շրջում՝ Խուան Ալմանսան: Առաջին սպանությունից սկսած, տասնչորս տարեկանում, միշտ էլ դրա նման կարճ դանակներ էր գործածել, որովհետև, ասում էր, թե դա հաջողություն է բերում իրեն: Խուան Ալմանսան և Խուան Ալմադան իրար ատեցին, որովհետև ժողովուրդը շփոթում էր նրանց: Իրար երկար որոնեցին, բայց երբեք չգտան: Ինչ-որ ընտրությունների ժամանակ պատահական մի փամփուշտ սպանել էր Խուան Ալմանսային: Մյուսը, կարծեմ, բնական մահով էր մահացել Լաս Ֆլորեսի ինչ-որ հիվանդանոցում:

Այդ երեկո այլևս ոչինչ չխոսեցինք: Երկուսս էլ մտածում էինք: Ինը թե տասը հոգի, որոնք արդեն մահացել են, տեսել են իմ աչքերի տեսածը, դաշունահարված ու բաց երկնքի տակ ընկած մարմինը, սակայն նրանց տեսածը մի ավելի հին պատմության վերջաբանն էր: Մանեկո Ուրիարտեն չսպանեց Դուկանին. ոչ թե մարդիկ, այլ զենքերն էին կռվում: Դրանք երկար ժամանակ ցուցանակի ետևում պառկել էին կողք կողքի, ձեռքներն արթնացրել էին նրանց: Արթնանալուց թափահարել էին իրենք իրենց և գուցե դրանից էր դողացել Դուկանի ձեռքը: Ոչ թե գործիքները՝ մարդիկ, այլ դաշույնները կռվել գիտեին, և լավ էին կռվել այդ գիշեր: Նահանգի երկար ճանապարհներին երկար էին իրար որոնել, հանդիպել էին, երբ արդեն յուրաքանչյուրի գաուչոն փոշի էր դարձել: Նրանց պողպատի մեջ ննջում ու սպասում էր մարդկային ոխը:

Իրերը մարդկանցից երկար են ապրում: Ով կարող է ասել, թե պատմությունն այստեղ է ավարտվում, ով կարող է ասել, որ նորից չեն հանդիպելու:

Տարիներ շարունակ պնդել եմ, թե Պալերմոյում եմ մեծացել: Այժմ գիտեմ, որ դա զուտ գրական հոխորտանք է. բանն այն է, որ մեծացել եմ նիզականման ձողերով ցանկապատված մի տան մեջ, որը պարտեզ ուներ և հորս ու նախնիներիս պատկանած մի գրադարան: Դաշույնի և կիթառի Պալերմոյին կարելի էր հանդիպել յուրաքանչյուր քայլափոխի (այդպես են պնդում) ցանկացած գարեջրապանդոկում. արվարձաններում թրծված, հայտնի երգիչ դարձած մեր հարևանի՝ Կառիեգոյի մասին 1930 թվականին մի ուսումնասիրություն գրեցի: Որոշ ժամանակ անց բախտն ինձ էմիլիո Տրապանիի հետ հանդիպեցրեց: Ես դեպի Մորոն էի գնում: Տրապանին, որ լուսամուտի մոտ էր նստած, անունս տալով կանչեց ինձ: Ուշ ճանաչեցի. ո՛ր եմ կորել այն ժամանակները, երբ Թեյմս փողոցի դպրոցում նույն նըստարանին էինք նստում: Հավանաբար Ռոբերտո Գոդելը կիիշի նրան:

Երբեք իրար չենք սիրել: Ժամանակն ու փոխադարձ անտարբերությունը հեռացրել էին մեզ: Նա ինձ սովորեցրել էր, հիմա եմ հիշում, այն ժամանակվա «լունֆարդոյի» հիմունքները: Սկիզբ առավ սովորական այն խոսակցություններից մեկը, երբ համառորեն անիմաստ դեպքեր ես որոնում, և քեզ հայտնի է դառնում համադասարանցուդ անկումն ու հասկանում ես որ, նա լուր մի անուն է դարձել: Անսպասելիորեն Տրապանին ասաց.

— Ձեռքս անցավ Կառիեգոյի մասին գրածդ գիրքը: Այնտեղ անընդհատ խոսում ես մալեվոների մասին, անկեղծ ասա, Բորիսես, դու ի՞նչ գիտես մալեվոների մասին:

Կարծես սրբազան սարսափով էր ինձ նայում:

— Փաստաթղթերի հիման վրա եմ գրել,— պատասխանեցի:

Թույլ չտվեց շարունակել և ասաց.

— Փաստաթուղթը դատարկ բան է: Ես փաստաթղթերի կարիք չունեմ, ես ճանաչում եմ նրանց:

Փոքր լռությունից հետո, կարծես մի գաղտնիք վստահեր ինձ, ավելացրեց՝

— Խուան Մուրանիան քեռիս էր:

Ինսուռական թվականներին Պալերմոյում գոյություն ունեցող կուչիլլերոներից Մուրանիան ամենահամբավվորն էր: Տրապանին շարունակեց.

— Ֆլորենտինան՝ մորաքույրս, նրա կինն էր: Պատմությունը կարող է քեզ հետաքրքրել:

Որոշ հռետորական կրկնություններ և որոշ երկար նախադասություններ ինձ ենթադրել տվին, որ սա առաջին անգամը չէ, ինչ նա պատմում է այս պատմությունը:

«— Մայրս երբեք չհանդուրժեց քրոջ ու Խուան Մուրանիայի կապը, իր կարծիքով Մուրանիան դաժան մարդ էր, իսկ Ֆլորենտինա մորաքրոջս համար նա արկածախնդիր էր: Քեռուս ճակատագրի շուրջ շատ պատմություններ էին շրջում: Ոմանք հավատացնում էին, թե մի գիշեր նա հարբած վերադառնալիս, Կորոնելի խաչմերուկներում վայր էր ընկել կռքից և գլուխը ջարդել՝ խըփվելով սալաքարերին: Պատմում էին նաև, որ ոստիկանությունը որոնում էր նրան, և որ նա փախել էր Ուրուգվայ: Մայրս, որ քեռայրին տանել չէր կարողանում, երբեք չբացատրեց, թե ինչն ինչպես եղավ: Ես փոքր էի և նրան չեմ հիշում:

Հարյուրամյա հորեյանի ժամանակներն էին, ապրում էինք Ռասել նրբանցքի երկար ու նեղ մի տան մեջ: Հետևի դուռը, որ դեպի Սան Սալվադոր փողոցին էր նայում, միշտ կողպված էր: Վերնահարկում ապրում էր մորաքույրս, որ արդեն տարիքն առել ու մի քիչ տարօրինակ էր դարձել: Նիհար էր, ոսկրոտ, սակավախոս և ինձ չափազանց բարձրահասակ էր թվում: Վախենում էր թարմ օդից, երբեք դուրս չէր գալիս, և չէր էլ ուզում, որ որևէ մեկը սենյակ մտնի, հաճախ տեսել եմ, թե ինչպես էր ուտելիք գողանում ու թաքցնում: Թաղում ասում էին, որ Մուրանիայի մահից կամ անհետանալուց հետո խելագարվել է: Նրան միշտ սևազգեստ եմ հիշում: Ինքն իր հետ խոսելու սովորություն էր ձեռք բերել:

Տունը ոմն պարոն Լուկեցիի սեփականությունն էր, որ Բառակաս թաղամասում նաև մի վարսավիրանոց ուներ: Մայրս կար էր անում, և այդ ժամանակ նյութական մեծ կարիքի մեջ էր: Ես, թեև ամեն ինչ չէի հասկանում, սակայն սկսել էի որոշ գաղտնի բաներ լսել՝ արդարադատության պաշտոնյա, տունը թողնելու պարտականություն, վարձը չվճարելու պատճառով վռնդվելու վտանգ: Մայրս շատ էր մտահոգված, մորաքույրս համառորեն կրկնում էր՝ Խուանը թույլ չի տա, որ այդ գրինգոն վռնդի մեզ: Հիշեցնում էր այն դեպքը, որը մենք արդեն անգիր գիտեինք, երբ հարավում բնակվող մի անամոթ կասկածել էր իր ամուսնու քաջությանը: Մուրանիան իմանալուն պես գնացել էր քաղաքի մյուս ծայրը, փնտրել, և ապա մի դաշունահարվածով մաքրել էր նրա հաշիվ-

ներն ու նետել գետակը: Չգիտեմ՝ պատմությունը ճշմարտացի է, թե ոչ. կարևորն հիմա այն է, որ պատմվել է և հավատացել են:

Ես ինքս ինձ տեսնում էի Սերանո փողոցի հսկա խորշերից մեկում քնած՝ կամ որպես մուրացող երեխա, կամ զամբյուղը ձեռքիս դեղ ծախելիս: Վերջին տարբերակը բավական հրապուրիչ էր, քանի որ ինձ ազատում էր դպրոց գնալու պարտականությունից:

Չգիտեմ որքան տևեց այդ մտահոգությունը: Մի անգամ հանգուցյալ հայրդ ասել էր, որ հնարավոր չէ ժամանակն օրերով հաշվել, ինչպես օրինակ, դրամն ենք հաշվում սանտիմներով կամ պեսոներով, որովհետև պեսոներն իրար նման են, իսկ յուրաքանչյուր օր, նույնիսկ յուրաքանչյուր ժամ տարբերվում է մյուսներից: Լավ չհասկացա նրա ասածը, բայց նախադասությունը տպավորվեց հիշողությանս մեջ:

Այդ գիշերներից մեկի ժամանակ մի երազ տեսա, որը վերջում մղձավանջի վերածվեց: Երազում քեռի Խուանին տեսա: Ես նրան չէի ճանաչել, բայց նրան պատկերացնում էի պնդակազմ, հնդկացու դեմքով, նոսր բեղերով և երկար մազերով: Թփերով ու քարհանքերով ընդմիջված ճանապարհներով դեպի հարավ էինք գնում, բայց այդ քարհանքերն ու թփերը միևնույն ժամանակ Թեյմա փողոցն էին: Երազում արևը բարձր-բարձր էր: Քեռի Խուանը սև էր հագել: Նա կանգ առավ ձորի առաջ, լաստանման մի տեղում: Չեռքը պիջակի ծոցագրպանում էր, սրտին մոտիկ: Ոչ թե զենք էր ուզում հանել, այլ կարծես թե ուզում էր թաքցնել այն: Տխուր ձայնով ասաց. «Շատ եմ փոխվել»: Կամաց-կամաց ձեռքը հանեց, և իմ տեսածը ոչ թե ձեռք էր, այլ անգղի ձիրան: Գոռալով արթնացա մթության մեջ:

Հաջորդ օրը մայրս խնդրեց, որ իր հետ գնամ Լուկեցցի մոտ: Գիտեի, որ ժամկետի երկարացում էր խնդրելու, անկասկած, ինձ հետն էր տանում, որպեսզի պարտատերն զգար նրա անմխիթար վիճակը: Քրոջը ոչինչ չէր ասել, նա թույլ չէր տա, որ մայրս այդպես նվաստանար: Ես Բառակաս թաղամասում երբեք չէի եղել: Ինձ թվաց, որ երթևեկությունն այնտեղ ավելի աշխույժ է, որ մարդիկ ավելի շատ էին և անմշակ հողեր չկային: Խաչվերուկից՝ մեր որոնած տան առաջ ոստիկաններ ու հավաքված ժողովուրդ տեսանք: Հարևաններից մեկը, խմբից խումբ անցնելով կրկնում էր, թե առավոտյան ժամը երեքի կողմերը դռան թակոցներն արթնացրել էին իրեն, որ ինքը լսել էր դռան բացվելը և մեկի ներս

մտնելը: Ոչ ոք չէր փակել դուռը, և արշալույսին Լուկեցցիին գտել էին կիսամերկ վիճակում, միջանցքում փռված: Դաշունահարել էին: Մարդը մենակ էր ապրում, արդարադատությունը երբեք չգտավ մեղավորին: Ոչինչ չէին գողացել: Մեկն հիշեց, որ վերջերս հանգուցյալը կորցրել էր տեսողությունը: Մի ուրիշը ազդու ձայնով ասաց. «Նրա ժամն արդեն հասել էր»: Ասածն ու ասելու ձևը տպավորություն թողեցին ինձ՝ վրա, տարիներ անց հասկացա, որ հուղարկավորությունների ժամանակ նման հայտնություններ անող փիլիսոփաներ միշտ էլ կգտնվեն:

Հուղարկավորության ընթացքում մեզ սուրճ հյուրասիրեցին, և ես մի գավաթ խմեցի: Դազադում մեռելի փոխարեն մեղրամոմե մի մարմին կար: Մորս ասացի տարօրինակ հանգամանքի մասին, դազադագործներից մեկը խնդաց և բացատրեց, որ սևագգեստ այդ մարմինը պարոն Լուկեցցին էր: Կլանված դիտում էի: Մայրս թևիցս քաշեց, որպեսզի շարժվենք:

Ամիսներ շարունակ այդ մասին էին խոսում: Այդ ժամանակ սպանությունները սովորական չէին. հիշիր, թե որքան խոսակցությունների առիթ տվեց Մելենայի, Կամպանայի և Սիլլետարոյի դեպքը: Ամբողջ Բուենոս Այրեսում միակ չզարմացող անձը մորաքույր Ֆլորենտինան էր: Ծերունական համառությամբ կրկնում էր.

— Արդեն ասացի, որ Խուանը թույլ չէր տա, որ այդ գրինգոն մեզ անօթևան թողներ:

Մի օր հորդառատ անձրև եկավ: Քանի որ դպրոց չէի կարող գնալ, որոշեցի տունը հետազոտել: Վերնահարկ բարձրացա: Մորաքույրս այնտեղ էր, ձեռքը դրել էր ձեռքին և այդպես նստել, զգացի, որ չէր էլ մտածում: Սենյակում խոնավության հոտ կար: Անկյուններից մեկում երկաթե մահճակալն էր, որի ձողերից մեկին տերողորմյա էր կախված, մի այլ անկյունում շորերի համար փայտե մի պահարան կար: Ճերմակածեփ պատերից մեկի վրա Կարմեն կույսի պատկերն էր կախված: Փոքրիկ սեղանի վրա ճրագն էր:

Առանց աչքերը բարձրացնելու մորաքույրս ասաց.

— Արդեն գիտեմ, թե ինչն է քեզ այստեղ բերել: Մայրդ է ուղարկել: Նա դեռ չի ուզում հասկանալ, որ Խուանն է մեզ փրկել:

— Խուանը,— ասացի,— Խուանը տասը տարի առաջ է մեռել:

— Խուանն այստեղ է,— ասաց: — Ուզո՞ւմ ես տեսնել:

Բացեց սեղանի դարակն ու մի դաշույն հանեց:

Քնքշությամբ շարունակեց.

— Ահա այստեղ է: Ես գիտեի, որ նա ինձ երբեք չէր լքելու: Աշխարհում նրա նման տղամարդ չկա: Գրինգոյին շունչ քաշելու ժամանակ էլ չտվեց:

Նոր միայն գլխի ընկա. խանգարված այդ խեղճ կինն էր սպանել Լուկեցցիին: Ատելությունից, խենթությունից, գուցե և, ով գիտի, սիրուց դրդված, նա հարավ նայող դուռը բացելով դուրս էր եկել ուշ գիշերին, կտրել էր ամայի փողոցները, վերջապես հասել իր որոնած տունը և իր այդ մեծ ու ոսկրոտ ձեռքերով խրել դաշույնը: Դաշույնը Մուրանիան էր՝ այն հանգուցյալը, որին ինքը դեռ պաշտում էր:

Երբեք չեմ իմանա, թե նա այդ պատմությունը վստահեց մորս, թե ոչ: Այդ տունը թողնելուց քիչ առաջ նա վախճանվեց»:

Այսքանն է Տրապանի պատմածը, նրան այլևս չեմ տեսել: Այդ կնոջ պատմության մեջ, որ մենակ մնաց և իր ամուսնուն՝ իր վագրին, շփոթեց նրա թողած այդ դաժան առարկայի՝ իր գործադրած զենքի հետ, կարծես նշմարում եմ մի, կամ մի քանի խորհրդրդանիշներ: Խուան Մուրանիան անցավ իմ հարազատ փողոցներով, նա իմացավ այն, ինչ կարող են տղամարդիկ իմանալ, նա ճաշակեց մահվան համն ու ապա մի դաշույն դարձավ, և այժմ այդ դաշույնի հիշատակն է, վաղը մոռացում կդառնա, համընդհանուր մոռացում, որից ոչ ոք չի կարող խուսափել:

Դեպքը տեղի ունեցավ 1928 թվականի մարտի վերջին օրերին, Խունինում, հարավում գտնվող Լա Կոլորադա էստանսիայում: Դեպքերի գլխավոր դերակատարը բժշկական ինստիտուտի ուսանող Բադգասար էսպինոսան էր: Նրան առայժմ կարող ենք բնորոշել որպես բուենոսայրեսցի հասարակ մի երիտասարդի, որ աչքի էր ընկնում իր ճարտասանական կարողությամբ, հատկություն, որը նրան Ռամոս Մեխիայի անգլիական դպրոցում արժանացրել էր բազում մրցանակների, և գրեթե անսահման մի բարությանբ: Վիճել չէր սիրում, նախընտրում էր, որ խոսակիցն իրավունք ունենա իրենը պնդելու: Թղթախաղն հետաքրքրում էր նրան, բայց վատ խաղացող էր, քանի որ չէր սիրում շահել: Խելացի էր, բայց ծուլլ. երեսուներեք տարեկանում դեռ չէր հանձնել ավարտական վերջին քննությունը իր ամենասիրած առարկայից: Հայրը իր ժամանակի բոլոր պարոնների պես ազատ մտածող էր և որդուն ուսուցանել էր Հերբերթ Սպենսերի գաղափարախոսությունը, բայց մայրը Մոնտեվիդեո մեկնելուց առաջ խնդրել էր ամեն գիշեր կրկնել «Հայրմերը» և խաչակնքել: Խոստումը երբեք չէր դրժել: Վախկոտ չէր. մի առավոտ, ավելի անտարբեր, քան զայրացած, մի քանի բռնցքահարվածներ էր փոխանակել մի խումբ ընկերների հետ, որոնք ուզեցել էին նրան ստիպել դասադուլին մասնակցել: Իր հաճկատարության պատճառով հաճախ կասկածելի կարծիքներ կամ սովորություններ էր ունենում: Երկրի վիճակը չէր հետաքրքրում նրան, սակայն մտահոգված էր, որ դրսում կարող են կարծել, թե մենք այստեղ դեռ փետուրներով ենք շրջում. պաշտում էր Ֆրանսիան, սակայն արհամարհում էր ֆրանսիացիներին, ամերիկացիների հանդեպ մեծ համակրանք չուներ, սակայն Բուենոս Այրեսում բարձրահարկ շենքերի կառուցումը դրական երևույթ էր համարում, կարծում էր, որ դաշտի գաուչոները, սարերի կամ լեռների գաուչոներից լավ ձիավորներ են: Երբ Դանիելը՝ զարմիկը, նրան առաջարկեց ամառային արձակուրդներն անցկացնել Լա Կոլորադայում, նա անմիջապես համաձայնեց, ոչ թե դաշտը շատ սիրելու, այլ իր բնական հաճկատարությամբ, մերժելու արդարացի պատճառներ չգտնելով:

Դրյակն ընդարձակ էր և անխնամի տպավորություն էր թողնում, կառավարիչ Գոթթեի բնակարանը գլխավոր տան մոտ էր: Գոթթեները երեք հոգի էին՝ հայրը, որդին, որն հատկապես կոշտ

ու կոպիտ էր, և մի աղջիկ, որի ծագումն անհայտ էր: Երեքն էլ բարձրահասակ էին, ուժեղ, ոսկրոտ, կարմրավուն մազերով և հնդկացիական դեմքերով: Գրեթե չէին խոսում: Կառավարչի կինը տարիներ առաջ էր մահացել:

Դաշտում էսպինոսան չիմացած և չպատկերացրած շատ բաներ սովորեց: Օրինակ, որ տան մերձակայքում չպետք է ձիուն քառատրոփ վազեցնել, և որ ոչ ոք ձի չի նստում, եթե դա անհրաժեշտ չէ գործ կատարելու համար: Ժամանակի ընթացքում նա սկսեց զանազանել թռչունների ձայները:

Մի քանի օր հետո Դանիելը գործով մայրաքաղաք մեկնեց: Մտածում էր, թե շատ-շատ մի շաբաթ կտևի: Էսպինոսան, որ արդեն հոգնել էր իր զարմիկի սիրային արկածների պատմություններից և նրա՝ դեպի նորաձևության փոփոխությունները ցուցաբերած անխոնջ հետաքրքրասիրությունից, նախընտրեց էստանիսայում մնալ իր գրքերի հետ: Շոգը խեղդում էր, և նույնիսկ գիշերը զովություն չէր բերում: Արշալույսին ամպրոպի որոտը արթնացրեց նրան: Քամին օրորում էր ծառերը: Էսպինոսան լսեց անձրևի առաջին կաթիլների ձայնը ու փառք տվեց Աստծուն: Միանգամից ցրտեց: Այդ երեկո Սալադոն հունից դուրս եկավ:

Հաջորդ օրը Բաղդասար Էսպինոսան, տան պատուհանից դիտելով ջրածածկ դաշտերը, մտածեց, որ պամպան ծովի հետ համեմատող փոխաբերությունը, գոնե այդ առավոտ, ամբողջովին շինծու չէ, թեև Հադսոնը գրել է, թե ծովը մեզ ավելի մեծ է թվում, քանի որ այն դիտում ենք նավի և ոչ թե ձիու վրայից կամ մեր սեփական բարձրությունից: Անձրևը չէր դադարում. Գոթերները փրկել էին անասունների մեծ մասը, բայց ջրահեղձ եղածները շատ էին: Լա Կոլորադա հասնելու չորս ճանապարհներն էլ ջրերի տակ էին մնացել: Երրորդ օրը տանիքին առաջացած անցքը սպառնաց կառավարչի բնակարանին. Էսպինոսան նրանց տրամադրեց տան ետին մասում, գործիքների պահեստին կից գտնվող մի սենյակ: Տեղափոխությունը մոտեցրեց նրանց, մեծ ճաշարանում միասին էին ճաշում: Խոսակցությունը դժվար էր ընթանում՝ Գոթերները, որ այնքան բանիմաց էին դաշտային գործերում, բացատրվել չգիտեին: Մի գիշեր Էսպինոսան հարցրեց, թե կան մարդիկ, որոնք ինչ-որ բան են հիշում սահմանապահ զորաբանակի Խունինում եղած ժամանակ մալոնների հարձակումների մասին: Ասացին, որ այո, բայց և Կառլոս Առաջինի մահապատժի մասին տրված հարցին

էլ կարող էին նույն ձևով պատասխանել: Էսպինոսան հիշեց, որ հայրն հաճախ էր կրկնում, թե դաշտում երկարակեցության գրեթե բոլոր օրինակները վատ հիշողության հետևանք են: Գաուչոներն հավասարապես մոռանում են ն. իրենց ծննդյան թվականը, ն իրենց սիրողներին:

Տանը, «Հա Չակրա» ամսագրի անասնաբուծությանը վերաբերող մի ձեռնարկից, «Տաբարեի» փայլուն մի օրինակից, Արգենտինայի անասնապահության պատմության ժողովածուից, մի քանի ոստիկանական կամ էրոտիկ պատմվածքներից և մի նոր վեպից՝ «Դոն Սեգունդո Սոմբրայից» բացի, այլ գիրք չկար: Էսպինոսան հետճաշա ձանձրույթը փարատելու համար Գոթրեններին, որոնք անգրագետ էին, այս վերջին գրքից մի երկու գլուխ կարդաց: Դժբախտաբար կառավարիչը կովարած էր եղել, և բնականաբար նրան չէին կարող հետաքրքրել մի այլ կովարածի արկածները: Ասաց, որ այդ աշխատանքը թեթև է, որ նրանց հետ եղող առանձին բեռնակիր մի սայլ կրում է բոլոր անհրաժեշտ պիտույքները, որ եթե ինքը կովարած եղած չլիներ, երբեք հասած չէր լինի Լագունա դե Գոմես, Բրազադոն ու մինչև Չակաբուկոյում գտնվող Նունիեսների դաշտերը: Խոհանոցում մի կիթառ կար, կովարածները, իմ պատմած դեպքերից առաջ, նստում էին այնտեղ շրջան կազմած, մեկը լարում էր կիթառը, բայց երբեք չէր նվագում: Սա էլ կոչվում էր «կիթառահարություն»:

Էսպինոսան, որի մորուքն աճել էր, հաճախ հապաղում էր հայելու առաջ, դիտում այլափոխված դեմքն ու ժպտում մտածելով, թե Բուենոս Այրեսում ձանձրացնելու էր տղաներին Սալադոյի հեղեղի պատմությամբ: Հետաքրքիրն այն է, որ նա կարոտում էր այնպիսի վայրերի, ուր երբեք չէր եղել և երբեք էլ չէր լինելու՝ Կաբրերա փողոցի խաչմերուկներից մեկում գտնվող մի փոստարկղ, Խուխոյ փողոցի տան դռան վրա գտնվող ծեփակերտ առյուծներին, Օնսեից մի քանի փողոց այն կողմ սալաքար հատակով մի խանութ, որի ճշգրիտ տեղն էլ չգիտեր: Ինչ վերաբերում էր եղբայրներին ու հորը, երևի Դանիելից արդեն իմացած կլինեն, որ ինքը փակվել-մնացել է հեղեղի պատճառով, բառի ճշգրիտ, ստուգաբանական իմաստով: Ջրերով շրջապատված տունը հետազոտելով՝ անգլերեն մի Աստվածաշունչ գտավ: Նրա վերջին էջերում Գաթրինները (այդպես էր գրվում նրանց ազգանունը) գրել էին իրենց գերդաստանի պատմությունը: Ինվերնեսեից էին եկել և, անկասկած, մայրցամաք հասել տասնիններորդ դարի սկզբին ու

որպես կովարածներ խառնվել հնդկացիների հետ: Ժամանակագրությունն ավարտվում էր հազար ութ հարյուր յոթանասունական թվականներին. արդեն գրել չգիտեին: Մի քանի սերունդ անց մոռացել էին անգլերենը, իսկ իսպաներեն, երբ էսպինոսան նրանց հետ ծանոթացավ, որոշ դժվարությամբ էին խոսում: Հավատք չունեին, բայց նրանց արյան մեջ, որպես մթին մի բնագդ, գոյատևում էր կալվինիստի խստապահանջ մոլությունն ու պամպայի սնոտիապաշտությունը: էսպինոսան խոսեց իր հայտնաբերածի մասին, բայց նրան գրեթե չլսեցին:

Թերթեց էջերն, ու գիրքը բացվեց Մարկոսի Ավետարանի ըսկըգբում: Թարգմանական վարժություն կատարելու, գուցե և Գոթերենների ընկալողական մակարդակը փորձելու միտումով, էսպինոսան որոշեց ճաշից հետո նրանց համար կարդալ գիրքը: Նրան զարմացրեց ուշադրությունն ու ապա լուռ հետաքրքրությունը կարդացվածի նկատմամբ: Գուցե գրքի եզրակողի ոսկյա տառերի ներշնչած ազդեցությունն էր: **Դա ժառանգական է**, մտածեց: Նաև մտածեց, որ ժամանակի ընթացքում մարդիկ միշտ պատմում են երկու պատմություն՝ Միջերկրական ծովերում սիրելի կղզի որոնող նավինը ու Գողգոթայում խաչված Աստծունը: Հիշելով Ռամոս Մեխիայի ճարտասանության դասերը՝ նա հոտնկայս սկսեց քարոզել առակները:

Ավետարանի ընթերցումը չուշացնելու համար հաջորդ օրը Գոթերենները հապճեպ ավարտեցին խորտիկներն ու սարդիկները:

Մի գառնուկ, որին աղջիկը փաղաքշում էր և երկնագույն ժապավենով զարդարում, մի անգամ փշալարերի մեջ խճճվելով, վիրավորվեց: Արյունը կասեցնելու համար վերքին սարդոստայն էին ուզում դնել: էսպինոսան իր մոտ եղած դեղամիջոցներով բուժեց նրան: Սկզբում կասկածել էր Գոթերեններին և գրքի մեջ էր թաքցրել իր ունեցած երկու հարյուր քառասուն պետոն, հիմա տիրոջ բացակայության պատճառով ինքն էր բռնել նրա տեղն ու երկշոտ հրամաններ էր արձակում, որոնք անմիջապես կատարվում էին: Գոթերենները գլուխները կորցրած նրան էին հետևում սենյակներով ու միջանցքներով մեկ: Մինչ կարդում էր, նկատեց, որ սեղանի վրայից հավաքում էին իր թողած հացի փշուրները: Մի երեկո նկատեց, որ հարգանքով ու հակիրճ խոսքերով իր մասին էին խոսում: Մարկոսի Ավետարանն ավարտելուց հետո ուզեց մնացած երեքից որևէ մեկը կարդալ, սակայն հայրը խնդրեց կարդացածը վերընթերցել, որպեսզի ավելի լավ հասկանալին:

Էսպինոսան զգաց, որ նրանց, երեխաների պես, ավելի շատ կրկնությունն էր հետաքրքրում, քան տարբերությունն ու նորությունը: Մի գիշեր երազում ջրհեղեղ տեսավ, և դա զարմանալի չէր. տապանի կառուցման մուրձի հարվածները արթնացրին նրան, և մտածեց, որ հավանաբար որոտների ձայնն է: Մեղմացած անձրևը նորից սաստկացավ: Ցուրտ էր: Ասացին, որ հեղեղն ավերել էր գործիքների պահեստի կտուրը, և որ նրան այնտեղ էին տանելու սյուներ շինելուց հետո: Նա արդեն օտար չէր, և բոլորն էլ հետը հարգանքով էին վերաբերում, նույնիսկ երես էին տալիս: Ոչ ոք սուրճ չէր խմում, բայց առատ շաքարով իր գավաթն անպակաս էր:

Հեղեղն սկսվել էր երեքշաբթի: Հինգշաբթի գիշերը, դուռը, որն ինքը միշտ փակ էր պահում, թակեցին: Վեր կացավ և բացեց՝ Գոթերի աղջիկն էր: Մթության մեջ չտեսավ նրան, բայց քայլերի ձայնից հասկացավ, որ նա բոբիկ է եկել, իսկ հետո՝ անկողնում, նա ամբողջովին մերկ էր: Աղջիկը չգրկեց նրան, ոչ մի բառ չարտասանեց և նրա կողքին պառկած դողում էր: Առաջին անգամ էր տղամարդ ճանաչում: Երբ գնաց, չհամբուրեց նրան: Էսպինոսան մտածեց, որ նրա անունն անգամ չգիտի: Ներքին զգացմունքից մղված, որը չփորձեց պարզաբանել, երդվեց, որ Բուենոս Այրեսում ոչ ոքի չէր պատմելու այս պատմությունը:

Հաջորդ օրն սկսվեց սովորականի պես, միայն թե հայրը խոսեց Էսպինոսայի հետ և հարցրեց, թե Քրիստոսը բոլոր մարդկանց փրկելու համար էր սպանվել: Էսպինոսան ազատամիտ էր, բայց իր կարդացածն արդարացնելու պարտքի գիտակցությամբ պատասխանեց.

— Այո, բոլորին դժոխքից փրկելու համար:

Այդ ժամանակ Գոթերն ասաց.

— Բնչ է դժոխքը:

— Հողի տակ գտնվող վայր, ուր հոգիները շարունակ այրվելու են:

— Նրան խաչ բարձրացնող հռոմեացիներն էլ փրկվեցին:

— Այո, — պատասխանեց Էսպինոսան, ում անսովաժաբանական իմացությունն այնքան էլ հուսալի չէր:

Նա վախեցավ, մտածելով, թե կառավարիչը երեկվա պատահածի մասին կարող է հաշիվ պահանջել: Ճաշից հետո խնդրեցին, որ նա վերընթերցի վերջին գլուխները:

Էսպինոսան ճաշից հետո երկար քնեց, արթնանալով զգաց, թե իրեն ինչ է սպասում դռան մյուս կողմում: Վեր կացավ ու միջանցք ելավ: Կարծես բարձրաձայն մտածելիս լինե՞ր՝ ասաց.

— Զրերն իջել են: Արդեն քիչ մնաց:

— Արդեն քիչ մնաց,— կրկնեց Գոթրեն արձագանքի պես:

Երեքն էլ հետևում էին նրան: Քարե հատակին ծնրադրած՝ նրա օրհնությունը խնդրեցին: Հետո անիծեցին նրան, թքեցին նրա երեսին և հրեցին դեպի տան հետևի կողմը: Աղջիկը լալիս էր: Երբ դռները բացեցին, էսպինոսան երկինքը տեսավ: Մի թռչուն կանչեց. մտածեց՝ կոցար է: Պահեստը տանիք չուներ: Այս ու այն կողմ թափված գերաններից Խաչ էին շինել:

Լեյնի «Հազար ու մեկ գիշերներ» ժողովածուի առաջին հրատարակության (Լոնդոն, 1840) օրինակներից մեկում, որն ընդ համար ձեռք էր բերել սիրելի ընկերս՝ Պաուլինո Քեյնսը, հայտնաբերեցինք այս ձեռագիրը, որն իսպաներենի եմ թարգմանելու: Նրբագեղ ձեռագիրը, արվեստ, որից գրամեքենաները մեզ ետ վարժեցրին, կարծես հուշում է, որ այն շարադրվել է հրատարակության թվականին: Լեյնը, ինչպես գիտեք, չի զլացել ընդարձակ ծանոթագրություններ գրել. գրքի լուսանցքները լի են լրացումներով, հարցական նշաններով և ինչ-որ տեղեր՝ նույնիսկ սրբագրություններով. այդ գրառումները ձեռագիր են: Ըստ երևույթին, ընթերցողին ավելի շատ հետաքրքրել են իսլամի սովորությունները, քան Շահրազամեի հրաշալի հեքիաթները: Դեյվիդ Բրոդիի մասին, որի ստորագրությունը դրված է ձեռագրի վերջին էջի տակ, ոչինչ չեմ կարողացել իմանալ, բացի այն, որ ծագումով աբերդինցի՝ շոտլանդացի այդ քարոզիչը քրիստոնեություն է տարածել կենտրոնական Ամերիկայում և ապա Բրազիլի որոշ անտառախիտ վայրերում, ուր նրան հասցրել է պորտուգալերենի իմացությունը: Չգիտեմ նաև նրա մահվան վայրն ու թվականը: Որքան գիտեմ, ձեռագիրը երբեք չի տպագրվել:

Ճապաղ անգլերենով գրված տեղեկանքը հավատարմորեն կթարգմանեմ, ինչ թույլ չեմ տա ոչ մի կրճատում, բացի Աստվածաշնչին՝ չի մի քանի մեջբերումներից և եհուների սեռական սովորությունների մասին հետաքրքրական մի հատվածից, որ պարկեշտ երեցն ամոթխածաբար վստահել է լատիներենին: Առաջին էջը բացակայում է:

«...կապկանման մարդկանց (Apemen) պղծած վայրերից, ուր իրենց բնակությունն են հաստատել Mich¹-ները, որոնց ես այսուհետև եհուներ կանվանեմ, որպեսզի ընթերցողներս չմոռանան նրանց բիրտ բնությունը, բացի այդ հարկ է նշել, որ ելնելով նրանց բարկ լեզվում ձայնավորների բացակայությունից, գրեթե անհնար է նրանց անվան ճշգրիտ վերարտադրումը: Ներառնելով Nr-երին, որոնք ապրում են հարավի մացառուտներում, ցեղախմբի քանակը չի գերազանցում յոթ հարյուրը: Առաջարկածս թիվը ենթադրական է, քանի որ բացի թագավորից, թագուհուց և կա-

¹ CH-ին տալիս եմ lochբառում ունեցած արժեքը, այսինքն՝ չ (ծան. ձեռագրի հեղ.):

խարդներից, բոլոր եհուները քնում են այնտեղ, ուր վրա է հասնում գիշերը, որևէ կայուն բնակավայր չունեն: Ճահճատենդը, կապկանման մարդկանց հաճախակի հարձակումները նվազեցնում են նրանց քանակը: Նրանցից միայն մի քանիսն անուն ունեն: Ուշադրություն գրավելու համար իրար վրա ցեխ են շարտում: Տեսել եմ եհուներ, որոնք իրենց ընկերոջը կանչելու համար թավալվում են ցեխերի մեջ: Ֆիզիկապես Քռուներից չեն տարբերվում, միայն թե սրանց ճակատը մի քիչ ավելի ցածր է, մաշկը ինչ-որ պղնձագույն երանգ ունի, որ մեղմում է նրանց թխությունը: Սնվում են մրգերով, արմատներով և սողուններով, խմում են կատվի ու չղջիկի կաթ և ձեռքերով են ձուկ բռնում: Ուտելու ժամանակ թաքնվում են կամ աչքերը փակում, մնացած ամեն ինչը, կինիկ փիլիսոփաների պես, կատարում են բոլորի աչքի առաջ: Թագավորների և քրմերի առաքինությունները ձեռք բերելու համար ուտում են նրանց հում դիակները: Նախատեցի այդ սովորության համար, նրանք իրենց բերանն ու փորը ցույց տվին, գուցե մատնանշելով, որ մեռելներն էլ են սնունդ կամ, սակայն այս տարբերակը գուցե և չափազանց բարդ է, որպեսզի ինձ հասկացնեն, որ վերջին հաշվով մեր ամբողջ կերածը մարդկային միս է:

Պատերազմների ժամանակ կախարդական անեծքներ և քարեր են գործածում: Ամբողջովին մերկ են՝ զգեստի և կտման արվեստները ծանոթ չեն նրանց:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ զուլալ աղբյուրներով ու ստվերախիտ ծառերով, ընդարձակ ու խոտառատ մի լեռնավանդակ ունենալով հանդերձ, նախընտրել են կուտակվել ճահճոտ հարթավայրում, կարծես հաճույք են ստանում պղծությունից և էկվատորյան արևի խստությունից: Կապկանման մարդկանց հարձակումներից պաշտպանվելու համար ժայռերը կարող էին պարիսպի դեր խաղալ: Շոտլանդիայի լեռնային շրջաններում բոլոր տոհմական դղյակները սարի գագաթին էին կառուցում, որի մասին հաղորդեցի գերագույն քրմերին և առաջարկեցի որպես օրինակ, սակայն իզուր: Այնուամենայնիվ, ինձ թույլ տվին խրճիթս սարալանջին կառուցել, ուր գիշերներն ավելի զով են լինում:

Ցեղախմբին ղեկավարում է թագավորը, որի իշխանությունը բացարձակ է, սակայն ենթադրում եմ, որ իսկական ղեկավարները չորս քրմերն են, որոնք ընտրում և օգնում են նրան: Նորածին

յուրաքանչյուր երեխա ենթարկվում է մանրակրկիտ քննության, եթե որոշ նշաններ, որոնց իմաստը ինձ համար գաղտնիք մնաց, հայտնաբերվեն երեխայի վրա, նրան անմիջապես դարձնում են իրենց թագավոր: Որպեսզի աշխարհը նրան իմաստությունից չշեղի, անմիջապես անդամահատում են (he is gelded), այրում են աչքերը և կտրում ձեռքերն ու ոտքերը: Ապրում են Պալատ (Ozr) կոչվող մի քարանձավում, ուր միայն նրան խնամող չորս քրմերն ու երկու ստրկուհիները իրավունք ունեն մտնելու, որոնք նրա մարմինն օծում են կղկղանքով: Պատերազմի ժամանակ կախարդները նրան հանում են քարանձավից, ցուցադրում ցեղախմբի առաջ՝ նրանց քաջությունը բորբոքելու համար, և ուսերի վրա, որպես դրոշ կամ թալիսման, նրան տանում են պատերազմի ամենաթեժ կետը: Այդ դեպքերում նա սովորաբար անմիջապես մահանում է կապկանման մարդկանց նետած քարերից:

Մի այլ պալատում թագուհին է ապրում. նրան արգելված է թագավորին տեսնել: Թագուհին բարեհաճեց ընդունել ինձ. ժպտերես էր, երիտասարդ և, որքան թույլ էին տալիս նրա ցեղային հատկանիշները՝ մարմնապես հմայիչ: Մետաղե ու փղոսկրե ապարանջաններն ու ատամնաշար վզնոցները զարդարում էին նրա մերկությունը: Դիտեց ինձ, ուսումնասիրեց, ձեռքերով շոշափեց և ավարտելով՝ առաջարկեց իր մարմինը: Համոզմունքներս և եկեղեցական պաշտոնս ինձ ստիպեցին այդ պատվից հրաժարվել, այդ պարգևը նա հաճախ տալիս էր քրմերին և ստրուկ որսացողներին՝ որպես օրենք՝ մուսուլմաններ, որոնց քարավաններն անցնում էին այս թագավորության հողերով: Ոսկյա մի քորոցով երկու թե երեք անգամ մարմինս ծակծկեց. այդ ծակոցները թագավորական ողորմածության նշաններ էին, և քիչ չեն այն եհուները, որոնք ծակոտում են իրենց մարմինը, որպեսզի պարծենան, թե դա թագուհու արածն է: Իմ թվարկած զարդերը այլ վայրերից են բերվել. եհուները դրանք բնական են համարում, քանի որ ամենապարզ իրն անգամ չեն կարող ստեղծել: Ցեղախմբի համար տնակս ընդամենը ծառ էր, թեև շատերը տեսել էին, թե ինչպես եմ այն կառուցել և նույնիսկ ինձ օգնողներ եղան: Ունեցածս այլ իրերի թվում մոտոս կային մի ժամացույց, մի սրվակ, մի կողմնացույց և մի Աստվածաշունչ: Եհուները վերցնում էին, զըննում և ուզում էին իմանալ, թե որտեղից եմ դրանք հավաքել: Հաճախ տապարս սուր կողմից էին բռնում. անկասկած նրանք այդ գնեքը այլ կերպ էին տեսնում: Չեմ կարծում, թե նրանք ընդունակ

էին անգամ աթոռն ընկալել: Մի քանի սենյականոց տունն անշուշտ նրանց լաբիրինթոս կթվար, բայց հազիվ թէ կատուների պես մոլորվեին այնտեղ, թեև այն երևակայել անգամ չէին կարող: Բոլորն էլ շոյում էին այն ժամանակ արդեն կարմրավուն դարձած մորուքս, որն հիացնում էր նրանց:

Ցավի և հաճույքի զգացմունք չունեին, նրանց միայն հում և չոր միսն ու հոտած բաներն էին դուր գալիս: Երևակայության բացակայությունը նրանց դաժան էր դարձրել:

Խոսել եմ արդեն թագավորից և թագուհուց, անցնում եմ հիմա քրմերին: Գրել եմ, որ նրանք չորսն են, այս թիվը, նրանց թվաբանության մեջ ամենամեծ թիվն է: Մատներով են հաշվում՝ մեկ, երկու, երեք, չորս, բազմաթիվ. անսահմանն սկսվում է բթամատից: Ասում են, որ Բուենոս Այրեսի շուրջ բնակվող ցեղախմբերի մոտ գոյություն ունի նույն համակարգը: Թեև նրանց վերջին թիվը չորսն է, սակայն նրանց հետ առևտուր անող արաբները չեն կարող խաբել, քանի որ փոխանակման ժամանակ ապրանքները բաժանվում է մեկ, երկու, երեք, չորս բաժինների, որոնցից ամեն մեկը կիտվում է առանձին: Առևտուրը դանդաղ է ընթանում, սակայն բացառում է սխալն ու խաբեկանքը: Իրականում եհուների ցեղում միայն քրմերն են շարժել հետաքրքրությունս: Բոլորը նրանց վերագրում են ցանկացածին մրջյունների կամ կրիաների վերածելու կարողություն. մեկը, նկատելով իմ կասկածամտությունը, ինձ ցույց տվեց մի մրջնանոց, կարծես դա հավաստի փաստ լիներ: Եհուները հիշողություն չունեն կամ գրեթե չունեն. ընձառյուծների ներխուժման մասին են խոսում, սակայն չգիտեն, թե դրանց իրենք են տեսել, իրենց ծնողները, թե ընդամենը երազ է իրենց պատմածը: Քրմերն ինչ-որ չափով հիշողություն ունեն, սակայն դա էլ շատ չնչին է. կարող են երեկոյան հիշել առավոտյան կատարված դեպքերը և նույնիսկ այն իրադարձությունները, որոնք կատարվել են նախորդ երեկո: Նաև կարող են կանխագուշակել դրանք. ամենայն վստահությամբ հայտնում են, թե ինչ է կատարվելու տասը կամ տասնհինգ րոպե հետո: Օրինակ՝ գուշակում են, թե մի ճանճ դիպչելու է գլխիս կամ շուտով լսելու եմ թռչունի կանչը: Բազում անգամներ այդ հետաքրքրական հատկության արտահայտման վկան եմ եղել: Շատ եմ մտածել այդ մասին: Գիտենք արդեն, որ անցյալը, ներկան ու ապագան, իրենց բոլոր մանրամասնություններով հանդերձ, առկա են Աստծո մարգարեական հիշողության մեջ, Նրա հավերժության

մեջ. տարօրինակն այն է, որ մարդիկ կարողանան անսահմանորեն դեպի ետ նայել և չկարողանան նայել դեպի առաջ: Եթե իրապես հիշում եմ Նորվեգիայից եկած առագաստանավը, երբ դեռ չորս տարեկան էի, ինչու զարմանալ, երբ ինչ-որ մեկը կարողանում է կռահել այն, ինչ կատարվելու վրա է: Փիլիսոփայական տեսակետից հիշողությունը ապագայի գուշակությունից պակաս հրաշալի չէ. վաղվա օրն ավելի մոտ է մեզ, քան հրեաների երթը Կարմիր ծովի միջով, և սակայն, այս վերջինն ենք հիշում: Յեղախմբին արգելված է աչքները հառել աստղերին, այդ արտոնությունը վերապահված է քրմերին: Յուրաքանչյուր քուրմ իր աշակերտն ունի և մանկուց նրան ուսուցանում է գաղտնի գիտություններ, սա էլ հաջորդելու է իր քրմին նրա մահից հետո: Այդպես միշտ չորս են, թիվ, որ կախարդական բնույթ ունի, քանի որ վերջին սահմանն է, որը կարող է ըմբռնել մարդկային միտքը: Թեև յուրահատուկ ձևով, բայց մեկնաբանում են դժոխքն ու երկինքը: Երկուսն էլ գտնվում են հողի տակ: Լուսավորված ու չոր դժոխքում բնակվում են հիվանդները, ծերունիները, կյանքում տուժածները, կապկանման-մարդիկ, արաքներն ու ընձառյուծները. երկնքում, որ պատկերացնում են մութ և ճահճային՝ թագավորը, թագուհին, քրմերը, երջանիկները, դաժաններն ու արյունարբուները: Նրանք պաշտում են Կղկղանք անունով մի աստվածություն, որ հավանաբար ստեղծել են իրենց թագավորի պատկերով. նա անդամալուծ, կույր և անսահման իշխանություն ունեցող մի էակ է: Եվ հաճախ կարող է մրջյունի կամ օձի կերպարանք ընդունել:

Ասածիցս հետո ոչ ոքի համար զարմանալի չի լինի եթե ասեմ, որ իմ այնտեղ եղած ժամանակահատվածում ոչ մի Եհովի չկարողացա հավատափոխել: «Հայր-մեր» բառակապակցությունը անընդունելի է նրանց համար, քանի որ նրանց համար անըմբռնելի է հայրություն հասկացությունը: Չեն կարող հասկանալ, որ ինն ամիս առաջ կատարված գործողությունը կարող է ինչ-որ կապ ունենալ երեխայի ծննդի հետ. այդպիսի հեռավոր ու անհավատալի պատճառ չեն ընդունում: Բացի այդ, յուրաքանչյուր կնոջ հայտնի է մարմնի առուծախը, բայց ոչ բոլորն են մայր դառնում:

Նրանց լեզուն բարդ է: Իմ գիտցածով, գոյություն ունեցող և ոչ մի լեզվի չի նմանվում: Չենք կարող խոսել նախադասության անդամների մասին, քանի որ նախադասություն գոյություն չունի: Յուրաքանչյուր միավանկ բառ համապատասխանում է մի ընդհանուր հասկացության, որ ենթիմաստով կամ շարժուձևով է հաս-

տատվում: Օրինակ՝ ուրշ բառը նշանակում է ցաքուցրիվություն կամ պիսակավորություն. կարող է նշանակել՝ աստղագարդ երկինք, ընձառյուծ, թռչունների երամ, ծաղկախտ, ցայտուք, ինչ-որ բան թափելու գործողություն կամ պարտությանն հաջորդող փախուստ: Իրի բառը, ընդհակառակը, նշանակում է՝ միասնություն, ինչ-որ թանձր ու կարծր բան, և կարող է նշանակել նաև ցեղախումբ, կոճղ, քար, քարերի կույտ, կիտելու գործողություն, չորս քրմերի հավաքույթ, զոհավորում և անտառ: Տարբեր ձևերով կամ շարժունակությամբ արտասանած յուրաքանչյուր բառ կարող է ստանալ հակառակ նշանակություն: Պետք չէ շատ զարմանալ, մեր լեզվում «to cleave» կարող է նշանակել՝ «ճեղքել» և «հավատարիմ մնալ»: Իհարկե, ոչ նախադասություններ կան, ոչ էլ անավարտ բառակապակցություններ:

Նրանց լեզվի վերացարկող այդ հատկանիշն ինձ ենթադրել է տալիս, որ եհուները թեև բարբարոս, բայց ոչ պարզունակ, այլ ալլասերված ազգ են: Ենթադրությունս հաստատում են սարի գագաթին մեր նախնիների փորագրած նշաններին նմանվող հայտնաբերածս արձանագրությունները, գրություններ, որ ցեղախումբն արդեն չի հասկանում: Կարծես մոռացել են գրավոր լեզուն, և միայն նրանց բանավորն է մնացել:

Ժողովրդի զբաղմունքը վարժեցված կատունների կռիվներն ու մահապատիժներն են: Մեկն ու մեկը մեղադրվում է թագուհու պատվին դիպչելու կամ ուրիշի առաջ ուստելու համար, ոչ վկայություններ, ոչ էլ խոստովանություն է հարկավոր, թագավորը դատապարտում է: Մեղադրյալը կրում է աներևակայելի տանջանքներ և ապա քարկոծում են նրան: Թագուհին առաջին և վերջին քարերը նետելու իրավունքն ունի, բայց վերջինն ընդհանրապես անիմաստ է լինում: Ամբոխը փառաբանում է թագուհու ճկունությունն ու բարեմասնությունները և ողջունում կատաղի գոռում-գոչյուններով՝ նրա վրա նետելով վարդեր ու հոտած իրեր: Թագուհին առանց խոսք ասելու ժպտում է:

Ցեղախումբը մի այլ դիտարժանություն էլ ունի՝ բանաստեղծները: Որևէ մարդ որոշում է ընդհանրապես հանելուկային, վեց թե յոթ բառեր իրար հետ կապակցել, և ինքն իրեն չկարողանալով զսպել, հատակին պառկած քրմերի և ժողովրդի կազմած շրջանակի կենտրոնում, հոտնկայս բարձրաձայն արտասանում է այդ բառերը: Եթե պոեմը չի հուզում, ոչինչ էլ չի պատահում, բայց եթե բանաստեղծի խոսքերը անակնկալի բերեն նրանց, ապա սրբազան

երկյուղի ազդեցության տակ (under a holy dread) բոլորն էլ լուռ հեռանում են նրանից: Զգալով, որ երկնային շնորհ է իջել վրան, այլևս ոչ ոք չի խոսում նրա հետ, այլևս ոչ ոք չի նայում նրան, ոչ էլ անգամ հարազատ մայրը: Նա արդեն մարդ չէ, նա աստված է, և յուրաքանչյուր ոք կարող է սպանել նրան: Բանաստեղծը, եթե կարողանում է, ապաստան է որոնում Հյուսիսի ավագուտներում:

Արդեն պատմել եմ, թե ինչպես եմ հասել Եհուների երկիրը: Ընթերցողը կհիշի, որ երբ շրջապատել էին ինձ, ես օդում հրացանով կրակեցի, և այդ կրակոցը նրանք ընդունեցին որպես կախարհական որոտ: Սխալս ուղղելու միտումով փորձեցի միշտ անգեն պատվել: Գարնանային մի առավոտ, երբ օրը նոր էր բացվել, կապկանման մարդիկ հանկարծակի հարձակվեցին. զենքը ձեռքիս վազելով իջա գագաթից և սպանեցի այդ անասուններից երկուսին: Մյուսները վախեցած փախան: Փամփուշտները, հայտնի է, անտեսանելի են: Կյանքումս առաջին անգամ գոռում-գոչյուններով ողջունեցին: Կարծեմ այդ ժամանակ էր, որ թագուհին ընդունեց ինձ: Եհուների հիշողությունը պարզունակ է, և այդ նույն երեկո էլ հեռացա: Անտառում պատահած արկածներս, կարծում եմ, կարևոր չեն: Վերջապես հանդիպեցի մի խումբ սևամորթների, որոնք վարելու աղոթել գիտեին և որոնց հետ պորտուգալերենով հաղորդակցվեցի: Ռոմանական եկեղեցու մի քարոզիչ՝ հայր Ֆերնանդեսը, հյուրընկալեց ինձ իր խրճիթում և խնամեց, մինչև որ կարողացա դժվարին ճանապարհս շարունակել: Սկզբում զգվում էի՝ տեսնելով, թե նա ինչպես է բերանը բացում և մեջն ուտելիքի պատառներ դնում: Ես ձեռքով ծածկում էի բերանս կամ այլ կողմ էի նայում, բայց մի քանի օր հետո վարժվեցի: Հաճույքով եմ հիշում մեր աստվածաբանական վեճերը: Չկարողացա նրան Քրիստոսի իսկական հավատքին դարձնել:

Այժմ Գլազգոյից եմ գրում: Պատմել եմ Եհուների մասին, բայց չեմ պատմել ինձ չլքող, երազներիս մեջ հաճախակի այցելող գլխավոր սարսափի մասին: Փողոցում քայլելիս ինձ թվում է, թե նրանք դեռ շրջապատում են ինձ: Եհուները, լավ գիտեմ, բարբարոս ժողովուրդ են, գուցե և աշխարհի ամենաբարբարոսները, սակայն անարդարություն կլինի չհիշել որոշ հատկություններ, որոնք քավում են նրանց մեղքը: Ունեն պետական հաստատություններ, թագավոր, գործածում են ընդհանրական հասկացությունների վրա հիմնված մի լեզու, հրեաների և հույների նման

հավատում են, թե բանաստեղծությունն աստվածային բնույթ ունի և կարծում են, թե հոգին մարմնից երկար է ապրում: Պատժի և պարգևի արդարությանն էլ են հավատում: Վերջին հաշվով, այնպես, ինչպես մենք ենք ներկայացնում մշակույթը՝ մեր բոլոր մեղքերով Քանդերձ, այնպես էլ նրանք: Չեմ գիշում, որ կապկանման մարդկանց դեմ մղված պայքարում, նրանց շարքերում եմ մարտնչել: Մեր պարտքն է փրկել նրանց: Հուսով եմ, որ Ձերդ Մեծության Կառավարությունը անուշադրության չի մատնի համեստագույն խնդրանքս, որով համարձակվում եմ ավարտել այս տեղեկանքը»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

-

ԾԱՆՈթԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորիսե Լուիս Բորիսեսի առաջին անգամ հայերենով հրատարակվող այս ծաղկաքաղ-ժողովածուի ծանոթագրությունները հետապնդում են միայն մեկ նպատակ. ըստ կարելիության դյուրացնել գրքի ընթերցումը, որովհետև, հատկապես այն պարագաներում, երբ հեղինակի գործերում որպես պատմական անձ (իրականում գոյություն ունեցող) և հաճախ էլ՝ անվամբ պատմական, բայց իրականում և այլևայլ հանգամանքներով «մտացածին» հերոսներ հանդես եկող կերպարները, բացատրության և մեկնաբանության կարիք ունեն։ Առանձին դեպքերում մեջբերվում կամ ծանոթագրվում են նաև այն տեքստերը, որոնք գրողի ինքնատիպ գրական մեթոդի բերումով մերթ ընդ մերթ հայտնվում են հենց բուն ստեղծագործության մեջ, կամ էլ՝ ակնարկվում են այս կամ այն առնչությամբ։ Հեղինակի ծանոթագրությունները, որոնք անշուշտ տեքստի մաս են կազմում, գրքի մեջ զետեղված են էջատակում։ Այդտեղ են տեղադրված նաև ամենատարբեր լեզուներից արվող արտահայտությունները։ Հարկ է ավելացնել, որ Բորիսեսի իսպաներեն բնագրի բոլոր հրատարակություններում գրեթե բացակայում են դրանք (բացառությամբ հեղինակի կատարածի)։ Ըստ անհրաժեշտության օգտագործված են նաև ռուսական հրատարակության ծանոթագրությունները։

TLON, UCBAR, ORBIS TERTIUS

ԱՊՈԼՆ ԲԻՈՑ ԿԱՍԱՐԵՍ (ծնվ.1914թ.) — արգենտինացի գրող, Բորիսեսի ընկերն ու հաճախ էլ՝ համահեղինակակիցը։

ՅՈՂԱՆ ԳԵՈՐԳ ՅՈՒՍՏՈՒՍ ՊԵՐՏԵՍ (1749—1816) — աշխարհագրության և քարտեզագրության գերմանացի հրատարակիչ։

ԿԱՌԼ ՈՒՏԵՐ (1779—1859) — գերմանացի աշխարհագրագետ, նշանավոր «Երկրագործություն» տասնինը հատորանոց գրքի հեղինակը։

ԷՍՍԵՐԻՂԵՍ (ճիշտը՝ Կեղծ Էսմերդես կամ Կեղծ-Բարդիա) * մոգ, որ 522թ. (Ք.ծ.ա.) գահազրկում է պարսից արքա Կամբիզին՝ օգտագործելով արքայի եղբոր՝ Էսմերիդեսի հետ իր անչափ նմանությունը, նույն թվականին էլ դավադրության զոհ է դառնում։ Այստեղ թափանցիկ է Բորիսեսի մտադրությունը, ցույց տալ, որ միակ «պատմական» անձը, պարզվում է, որ ինքնակոչ է և ընդամենը նմանակ-կրկնակ։

ՍԻԼԱՍ ՀԱՍԼԱՍ — հերոսին տրված է Բորիսեսի հոր կողմից տառի ազգանունը, որը ծագումով անգլիացի էր (մոր կողմից՝ Բորիսեսի ազգանունը Ասեվեդո է)։

ԲԵՌՆԱՐԴ ՔՈՒՐԻՏՏԻ (1819—1899) — լոնդոնցի հրատարակիչ և գրավաճառ։ Հիշատակման համար առիթ կարող էր ծառայել նրա և Խայամի «Ռութայաթների» թարգմանիչ Է. Ֆիցցջերալդի միջև եղած նամակագրությունը։

ՅՈՂԱՆՆԵՍ ՎԱԼԵՏԻՆՈՒՍ ԱՆԴՐԵԱ (1586—1654) — գերմանացի մտածող, «Զրիստոնեական հանրապետության նկարագրությունը» (1619), «Զրիստոսա-քաղաք» (1626) և այլ ուսուցիական գրքերի հեղինակ:

ԹՈՄԱՍ ԴԵ ԶՈՒԵՆՍԻ (1785—1859) — անգլիացի ռոմանտիկ գրող, «Անգ-լիացի հաշիշամուլի խոստովանությունը» (1822) գրքի հեղինակը, քննադատ և էսսեիստ, պատմության, փիլիսոփայության և գրականության «մոռացված փաստերի» հմուտ ուսումնասիրող և ինքնատիպ մեկնաբանություններով նշա-նավոր մտածող: Ակնառու է նրա ազդեցությունը եվրոպական անկումային գրականության վրա:

ԿԱՌՈՍ ՄԱՍՏՐՈՆԱՐԴԻ (ծնվ.1901թ.) — արգենտինացի բանաստեղծ, լրագ-րող, Բորխեսի ընկերը:

հանրահաշիվն ու կրակը — տես Ավետարան ըստ Մատթեոսի (ԻԵ, 30):

ԼԵՍՏՈՐ ԻԲԱՌԱ — ֆրանսիացի իսպանագետ, «Բորխեսը և Բորխեսը» (1969) գրքի հեղինակը: Դեռևս 30-ական թ.թ. վերջերին նա ակտիվորեն թարգմանում և տարածում էր Բորխեսի ստեղծագործությունները Ֆրանսիայում:

ԵԶԵԿԻԵԼ ՄԱՐՏԻՆԵՍ ԷՍՏՐԱՂԱ (1895—1979) — արգենտինացի բանաս-տեղծ, արձակագիր, սոցիոլոգ:

ԴԻԵՌ ԴԻՐՈ ԼԱ ՌՈՇԵԼ (1893—1945) — ֆրանսիացի գրող, Եվրոպայում Բորխեսի ստեղծագործության առաջին տարածողներից մեկը:

ԱԼՖՈՆՍՈ ՌԵՅԵՍ (1889—1959) — մեքսիկացի բանաստեղծ, քաղաքական գործիչ, երկար տարիներ դեսպան է եղել Արգենտինայում, Բորխեսի ընկերը:

ԳՈՏՖՐԻԴ ՎԻԼՀԵԼՄ ԼԱՅՖԼԻՅ (1646—1716) — գերմանացի փիլիսոփա, հանրագիտակ, փիլիսոփայական մի վիթխարի, ամբողջական համակարգի մեծա-գույն ստեղծողներից մեկը պատմության մեջ:

«Գեղեցիկ նոր աշխարհ» — անգլիացի նշանավոր հակաուստոպիստ, արձակա-գիր Օլդոս Հաքսլիի (1894—1963) վեպի վերնագիրն է, որ լույս է տեսել 1932 թ.: Վեպի վերնագիրը մեջբերում է Շեքսպիրի «Փոթորիկից» (V, 1):

ԴԵՎԻԴ ՀՅՈՆՄ (1711—1776) — անգլիացի ականավոր փիլիսոփա, որ իր իմացության տեսությամբ զարգացրեց և նոր մակարդակի բարձրացրեց Զորջ Բերկլիի (1685—1753) հայացքները: Բորխեսի տեստույմ մեջբերված են Հյուսի «Ուսումնասիրության մարդկային իմացության մասին» տրակտատից (1748, գլուխ XII, «Ակադեմիական կամ սկեպտիկ փիլիսոփայության մասին», I մաս), ուր նա բանավիճում է Բերկլիի դրույթների դեմ:

ԱԼԵԶԱՆԴՐՈՍ ՖՈՆ ՄԱՅՆՈՆԳ (1853—1920) — ավստրիացի փիլիսոփա և հո-գեբան, ֆեյնմենոլոգիական ուղղության հետևորդ: Նրա ուսումնասիրություննե-րը հիմնականում վերաբերում են առարկայական—իրական աշխարհի վերապրման խնդիրներին:

ԲԵՆԵԴԻԿՏ (ԲԱՐՈՒԽ) ՍԴԻՆՈՋԱ (1632—1677) — նիդեռլանդացի մտածող, որի գաղափարներն ու անձը միշտ էլ գրավել են Բորխեսին: Ներկայացվող գաղափարները Սպինոզան զարգացրել է հիմնականում իր «էթիկայում»:

«Իբր Թե-ի» փիլիսոփայությունը (1877) — գերմանացի կանտական-փիլի-սոփա Հանս Ֆայխինգերի (1852—1933) գլխավոր ստեղծագործությունն է, ուր

վերլուծվում են գիտական հասկացությունների պայմանականության և իրականության մասին առօրյա պատկերացումների խնդիրները:

ԲԵՐՏՐԱՆ ՌԱՍԵԼ (1872—1970) — քսաներորդ դարի անգլիացի խոշորագույն փիլիսոփա, տրամաբան, մաթեմատիկոս: Իր հայացքներում նա համադրում է Պլատոնին և նորպլատոնականությունը՝ Նոր ժամանակների անգլիական էմպիրիկ փիլիսոփայության հետ:

Էլիական ապորիաներ — իրենց տրամաբանական ակնհայտությամբ և դատողության սովորական փորձի անապացուցելիությամբ պարադոքսալ տեսություն, որ առաջ քաշեց հին հունական փիլիսոփայության էլիական դպրոցը (VI—V դ.դ. Ջ.Ժ.ա.) և առաջին հերթին Ջենոնը «Նեոտը», «Աքիլլեսը», «Իրերի բազմակիության մասին» գործերում:

ԱՐԹՈՒՐ ՇՈՊԵՆՀԱՈՒԵՐ (1788—1860) — գերմանացի փիլիսոփա, «կյանքի փիլիսոփայության» ուղղության հիմնադիրներից առաջինը: Նրա ուսմունքի հիմնական բովանդակությունը կարելի է ներկայացնել այսպես՝ ճանաչող սուբյեկտի համար աշխարհը «պատկերացում է և կամք» այն դեպքում, երբ աշխարհը դիտվում է որպես ինքնակայություն:

«ԴԱՈՂ ԴԵ ՖԱԻՆ» («Կանոնական գիրք դառ-ի և դե-ի մասին» (IV—III դ.դ. Ջ.Ժ.ա.) — փիլիսոփայական տրակտատ, որ վերագրվում է կիսաառասպելական չինացի իմաստուն Լաո Ֆաին, որի ուսմունքի հիմնական դրույթը մարդու և աշխարհի անցնելիք ճանապարհի նախախնամական գաղափարն է:

ՉԱՐԼԶ ՆՈՎԱՐԴ ՂԱՆՏՈՆ (1791—1873) — անգլիացի մտածող, թեոսոֆիայի հետևորդ, բազմաթիվ էսսեների և «գիտական վեպերի» հեղինակ, որոնք վերաբերում են գիտակցության պարադոքսներին, չորրորդ չափմանը, աշխարհների բազմակերպությանը: «Մտածողության նոր դարաշրջանը» գրքում առաջ է քաշում ունիվերսալ լեզվի համակարգ ստեղծելու խնդիրը, որն իր տեսությամբ հիշեցնում է Բորխեսի մի այլ պատմվածքի՝ «Ֆուկսես, հիշողության հրաշք»-ի գաղափարը:

ՋՈՐՋ ԴԱՂԱՌՆՈ (1626—1687) — շոտլանդացի մտածող և մանկավարժ, որ «Նշանների արվեստ» (1661) գրքում առաջարկում է ունիվերսալ լեզվի նախագիծը:

ԷՆՐԻԿԵ ԱՄՈՐԻՄ (1900—1960) — ուրուգվացի գրող:

ԱԴՐՈԳԵ — շրջան Բուենոս Այրեսում, ուր ապրել է Բորխեսը:

ՖՐԱՆՑԻՍԿՈ ՔԵՎԵՂՈ (1580—1645) — բանաստեղծ, իսպանական բարոկկո ոճի գրող: Բորխեսը հաճախ է անդրադարձել նրա ստեղծագործությանը և նույնիսկ ունի մի պատմվածք-ուսումնասիրություն («Քեվեղո»):

ԹՈՄԱՍ ԲՐԱՈՒՆ (1605—1681) — անգլիացի բժիշկ-գրող, որն իր «Աճյունասպիրտ» գրքում զարգացնում է արագ թռչող ժամանակի և ունայն աշխարհի բարոկկյան թեման (գիրքը իսպաներեն թարգմանել են Բորխեսն ու Բիոյ Կասարեսը):

ՊԻԵՐ ՄԵՆԱՐԸ «ԴՈՆ ԿԻՍՏԻ» ՇԵՄՆԱԿ

«ԼԱ ԿՈՆԿ» («Խեցի») — ֆրանսիական բարձրաշխարհիկ գրական հանդես:

ԶՈՆ ՈՒՒԼԿԻՆՍ (1614—1672) — անգլիացի քահանա, աստվածաբան և փիլիսոփա (տես այս գրքում նրա մասին Բորխեսի պատմվածք—էսսե)։ *Դեկարտը, Լայբնիցը և Ուիլկինսը* այստեղ ներկայացվում են որպես միևնույն՝ փիլիսոփայական ունիվերսալ լեզվի հարցադրումներով զբաղվող մտածողներ։

«ՈՒՒԿԵՐՍԱԼ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ԱՄԲՈՂՁՈՒԹՅՈՒՆ» — երբեմն այսպես են կոչում Լայբնիցի դիսերտացիոն՝ «Զուգակցման արվեստի մասին» թեզը (1666), հասկացությունների համար ունիվերսալ խորհրդանիշների համակարգի ստեղծմամբ Լայբնիցը հետևում է Նիկոլայ Կուզանացու, Ջորդանո Բրունոյի և այլոց գաղափարներին։

«ՄԵԾ ԱՐՎԵՍՏ» (հրատ. 1480 թ.) — կատալոնյան բանաստեղծ, փիլիսոփա և աստվածաբան Ռայմոն Լուլլի (մոտ. 1235—1315) տրակտատն է, ուր հեղինակը տրամաբանական գործողությունների կոդավորման համար առաջարկում է ունիվերսալ խորհրդանիշների համակարգ։

ՈՒՒՅ ԼՈՂԵՍ ԴԵ ՍԵԳՈՒՐԱ — տասնվեցերորդ դարի շախմատախաղի իսպանացի տեսաբան։ Նրա «Գիրք ազատ հնարանքի և շախմատային խաղարկեսուր» գիրքը լույս է տեսել 1561 թ.։

ԼՈՒԻ ԴԵ ՈՒՒԿՐՈՒԱ ՍԵԼ—ՍՄՄՈՆ (1675—1755) — ֆրանսիացի քաղաքական գործիչ, նշանավոր «Հուշագրությունների» հեղինակը (հրատ. 1829—1831 թ.թ.)։ Գիրքն առանձնանում է 18-րդ դարի համար ոճի անսովոր բնականությամբ ու բնավորություններ կերտելու բացառիկ վարպետությամբ։ Որպես ոճաբան չափազանց բարձր է գնահատվել Մարսել Պրուստի կողմից։

ԼՈՒԱ ԴՈՒՐԹԵՆ (1881—1959) — ֆրանսիացի գրող, հրապարակախոս։

...Աքիլլեսի և կրիայի ակնհայտ խնդրի... V դարի (Ջ.Ճ.ա.) հին հունական փիլիսոփա Զենոնի ապորիան, ուր հեղինակը ապացուցում է, որ արագառու Աքիլլեսը չի կարող հասնել կրիային, և Բորխեսը մեկ անգամ չէ, որ անդրադարձել է այդ պարադոքսին։

«ՇՈՎԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՅ» («Cimetiere marin») — ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ, էսսեիստ Պոլ Վալերիի (1871—1945) բանաստեղծությունը։ Բորխեսը չափազանց մեծ ակնածանքով ու հիացմունքով է միշտ արտահայտվել նրա մասին և մի ամբողջ էսսե է նվիրել նրան («Վալերին որպես խորհրդանիշ»)։

ԳԱԲՐԻԵԼ Դ'ԱՆՈՒՆՅՈ (1863—1914) — իտալացի բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս։

ՆՈՎԱԼԻՍ (1772—1801) — գերմանացի ռոմանտիկ բանաստեղծ, արձակագիր։

ՖՐԱՆՑԻՍԿ ԴԵ՝ՍԱԼԵՑԻ (1567—1622) — «Բարեպաշտ կյանքի տեսություն» տրակտատի հեղինակը, ֆրանսիացի աստվածաբան։ Նշված գործը Զեվեդոն թարգմանել և հրատարակել է 1634 թ.։

Դոդեի հայտնի մտահղացումը... — ֆրանսիացի գրող Ալֆոնս Դոդե (1840—1897), Դոդեի նպատակն էր մի կերպարում՝ Տարտարինոյի մեջ միաձուլել դոն Կիխոտին և իր թիկնապահին՝ Սանչո Պանսային։ Այդ միտքը նա զարգացնում է «Տարասկոնցի Տարտարենի անսովոր արկածները» վեպի 6-րդ գլխում։

«Գետերի փերիները...» — «Դոն Կիխոտ», I մաս, VI գլուխ։

«Where a malignant and a turbaned Turk» — Օթելլոյի խոսքերը Շեքս-

պիրի համանուն դրամայից (V, 2):

ԷԴՅԱՐ ԱՆՆ ՊՈ (1809-1849) — *ամերիկացի բանաստեղծ, արձակագիր, էսսեիստ:*

ՇԱՌԼ ԲՈՂԵՐ (1821—1867) — *ֆրանսիացի բանաստեղծ, թարգմանել է Էդգար Պոի նովելները:*

ՍՏԵՖԱՆ ՍԱԼԱՐՄԵ (1842—1898) — *ֆրանսիացի բանաստեղծ, որ ելնելով Բողերի բանաստեղծական խոսքի ինքնաբավության գաղափարից, հանգում է այն մտքին, թե այդ ինքնաբավությունը արտահայտում է ամբողջ կեցությունը:*

ԷՂՄՈՆ ԹԵՍՍ — Պոլ Վալերիի հերոսներից, կերպար, որ իր ստեղծագործական կամքին է ենթարկում բանականության ամեն մի հնարավորություն: Ah! Bear in mind this garden was enchanted — *տող Էդգար Պոի «Հեղինեին» բանաստեղծությունից:*

«ՀԱՐԲԱՏ ՆԱՎԸ» (1871) — *ֆրանսիացի բանաստեղծ Արթյուր Ռեմոյի (1854—1891) բանաստեղծությունն է:*

«ԳԱԼԱԹԵԱ» (1585), «ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՎԵԼՆԵՐ» (1613), «ՊԵՐՄԱԼԵՍԻ ԵՎ ՍԵԳՐԶՍՈՒՆԴԱՅԻ ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐԸ» (իրատ. 1617), «ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵ-ՊԻ ՊԱՌՆԱՍ» (1614) — բոլորն էլ Սերվանտեսի ստեղծագործություններն են:

ԼԵՊԱՆՏՈ — Նկատի է առնված 1571 թվականին Լեպանտոյի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտը, ուր իսպանացիների կյանքն անվտանգ էր ծախսվել թուրքական նավատորմի դեմ: Չախճախում է թուրքական էսկադրային, որտեղ և վիրավորվել է Սերվանտեսը:

ՍԱՌԻՐԻՍ ԲԱՐԵՍ (1862—1933) — *ֆրանսիացի գրող, որ հաճախակի է անգլադարձել իսպանական թեմաներին:*

ՈՒԼԻՅԱՍ ԶԵՅՄՍ (1842—1910) — *ամերիկացի փիլիսոփա և հոգեբան, պրագմատիզմի հիմնադիրը:*

«doctor universalis» — պատվավոր տիտղոս, որը շնորհվել էր գերմանացի աստվածաբան, փիլիսոփա և բնագետ Ալբերտ Մեծին (1206 կամ 1207—1280) իր հանրագիտարանային գիտելիքների համար, ավելի ուշ այդպես էին կոչում Թովմա Աքվինացուն և միջնադարյան մյուս սխոլաստներին:

«այնպես կարդալով «Ողիսականը», որ կարծես թե «էնեականից» հետո գրված լինի... — Վիրգիլիոսի «էնեականը» ավելի ուշ է գրվել քան «Ողիսականը», ավելի քան վեց դար:

ԼՈՒԻՍ ՖԵՐՆԱՆԴՍ ՍԵԼՆ (1894—1961) — *ֆրանսիացի գրող:*

«ԶԻՐԻՍՏՈՍԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՄԸ» — գերմանա—նիդեռլանդական եկեղեցական գործիչ Թովմա Կեմպացու (մոտ. 1380—1471) տրակտատը:

ՇՐՋԱՆԱԶԵՎ ԱՎԵՐԱԿՆԵՐ

«ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԹԱՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» (1871) — անգլիացի գրող, մաթեմատիկոս և տրամաբան Լուիս Զերուլի (1832—1898) հեքիաթ—վիպակն է:

ՋԵՆԴ — իրանական ցեղ, զենդական լեզուն հաճախ սխալմամբ համարում են ավեստական:

... երազների... առաջացող նյութը... — Շեքսպիրի «Փոթորիկ» (IV, 1) դրամայի

խոսքերն են:

...ազգիացի պարան հյուսել... — անգլիացի բանաստեղծ Ջորջ Հերբերթի (1593-1633) տողն է:

ՎԻՃԱԿԱՆԱՂ ԲԱԲԵԼՈՆՈՒՄ

...Պյութագորասն հիշում էր, որ Պյութագորաս լինելուց առաջ ինքը Պյութոսն է եղել... — այս խոսքերը հիշատակված են Ք.ծ.ա. IV դ. հին հունական փիլիսոփա Հերակլիդես Պոնտացու Պյութագորասի մասին երկխոսությունում, որը վերապատմվում է Դիոգենես Լաերտացու (III դարի առաջին կեսերին) «Կյանքի, ուսմունքների և նշանավոր փիլիսոփաների արտահայտությունների մասին» գրքում: Հոգու վերաբնական գաղափարի և Պյութագորասի խոսքերի մասին բազմիցս անդրաժարձել է Լայբնիցը:

ԲԵԼ (հայտնի են նաև՝ Բալի, Բաալի, Վաալ ձևերը) — արևմտյան սեմական առասպելաբանության մեջ ամենատարբեր աստվածությունների անվանումը, որոնց հիմնական հատկանիշը արարչական ուժն է և մեռնող ու հարություն առնող բնության հետ կապը: Դրանք հաճախ պատկերվել են ցլի կամ ցլագլուխ մարդու կերպարանքով:

Վիճակախաղի երկնային արքետիպ... — Պլատոնը և հետագայում նրան հետևող փիլիսոփաները ելնում էին զգայական աշխարհի և նախնական ու անփոփոխ գաղափար - նախատիպ հակադրությունից:

Կայսրը բախտը գրում էր խեցիների վրա... — Այսպես կոչված «Կեսարների կյանքը» գրքի հեղինակներից մեկը՝ Էլիո Լամբրիշացին իր «Անտոնինո Հելիոգաբալոյի վարքում» հիշատակում է նաև աղյուսը:

ԱՍՏՎԱԾ—ԱՆՎԱՆԱԴԻՐ — այն ցեղի առասպելական նախնին, որ անուն է տալիս նրան և նրա ապրելու տեղին, այստեղ՝ փյունիկյան արևի աստված Հելիոգաբալո:

ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«ՄԵԼԱՄԱՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՌՈՍՈՒԹՅՈՒՆ» (1621) — թարոկկո դարաշրջանի անգլիացի մտածող Ռոբերտ Բերտոնի (1577—1640) տրակտատը:

...Գրադարանը զուևդ է... այս պատկերը համեմատել «Պասկալի շրջագունդը» էսսեի միևնույն բանաձևի հետ:

ԲԱՍԻԼԻԴԵՍ — գնոստիկների արևելյան թեևն պատկանող II դարի փիլիսոփա, որի անունով կոչվեց մի ամբողջ շարժում՝ բասիլիդեսականություն: Մեզ չհասած նրա երկերից մեջբերումներ են անում քրիստոնեական աղանդագետներ Կլիմենտ Ալեքսանդրիացին, Իրենոս Լիոնցին և ուրիշներ:

ՏԱԿԻՏՈՍԻ (մոտ. 58 — մոտ. 117) կորած գործերը — Տակիտոսի հիմնական գործից՝ «Անալներից» մեզ չեն հասել VII—X և մի քանի այլ մասեր:

ԲՈՆԱՎԵՆՏՈՐԱ ԿԱՎԱՅԵՐԻ (1597—1647) — իտալացի մաթեմատիկոս:

ԲԱԺԱՎՈՂ ԱՐԱՇԵՏՆԵՐԻ ԱՅԳԻՆ

**ԲԵՋՈԼ ՀԵՆՐԻ ԼՊԻ ՀԱՐԴ (1895-1970) — անգլիացի զինվորական պատմա-
բան:**

ՖՈՒՆԵՍ՝ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԲ

ՊԵՐՈՒՆ ԼԵԱՆՊՈՒ ՌՊՈՒՅԵ (1890—1987) - ուրուգվացի գրող:

...վայրի և տեղական մի Ջրադաշտ... - այստեղ՝ Ֆրիդրիխ Կոցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտի» հերոսը, ինքնաբավ անհատականություն, կամքի բացարձակ ազատությամբ, «գերմարդ» (այս վերջին հասկացությունը, ճիշտ է մի այլ իմաստով գործածել են եկեղեցու հայրերը, մասնավորապես՝ Կեղծ—Դիոնիսիոս Արեոպագիտը):

«ՆՇԱՆԱՎՈՐ ԱՅՐԵՐԻ ՎԱՐՔԸ» — այս դեպքում լատիներեն ուսումնասիրողների համար ձեռնարկ, կազմված ֆրանսիացի լատինագետ Շառլ Ֆրանսուա Լըմոնի (1727—1794) կողմից, որը բազմիցս հրատարակվել է մինչև 20-րդ դարը:

«ԳԱՆՉԱՐԱՆ» - «Լատիներենի բանաստեղծական գանձարան» (1836) — ուսումնական քրիստոմատիա ֆրանսիացի լեզվաբան և բառարանագիր Լուի Քիշերի կողմից կազմված, որը այլ հրատարակություններ ունեցավ մինչև 19-րդ դարի վերջերը:

...Հուլիոս Կեսարի մեկնաբանությունները... — «Հիշատակարան գաղիական պատերազմների մասին», կամ՝ «Քաղաքական պատերազմները կամ պատերազմների մասին», որ պատկանում է Հուլիոս Կեսարին և երկար դարեր ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ:

«ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» — Պլենիուս Ավագի (23 կամ 24-79) բազմախա-տոր աշխատանքի վերնագիրը, որն այժմ հանրագիտական արժեք ունի իր բազմապիսի գիտելիքների շնորհիվ:

ԻՏՈՒՍԱՅՆԳՈՒ — 1827 թ. փետրվարի 20-ին արգենտինական և ուրուգվական միացյալ բանակի և բրազիլական զորքերի ճակատամարտի վայրը:

ԱՆԴՐԵՍ ԲԵԼԼՈՒ (1781—1865) — վենեսուելյան բանաստեղծ և գիտնական-լուսավորիչ, իսպաներենի քերականության և ուղղագրության մասին բազմաթիվ գրքերի հեղինակ:

ՔԵՄԲՐԱՉՈՒ — ճակատամարտի վայր, ուր 1840 թ. նոյեմբերի 28-ին արգենտինական քաղաքացիական կռիվների ընթացքում գեներալ Լավալլեի ջոկատները գլխովին ջախջախվեցին բռնապետ Ռոսասի կողմնակիցների կողմից:

ՋՈՆ ԼՈԿ (1632-1704) - անգլիացի փիլիսոփա, հասկացությունների լեզվի խնդիրներին է վերաբերում նրա «Մարդկային բանականության» (հրատ. 1690) աշխատանքի երրորդ գիրքը:

...Լիլիպուտիայի կայսրը ընկալում էր ժամացույցի սլաքների շարժումը... - Սվիֆտ, «Ճանապարհորդություն դեպի Լիլիպուտիա», գլ.2:

ՊԱՎԱՃԱՆԻ ԵՎ ՀԵՐՈՍԻ ԹԵՄԱՆ

ՈՒՌԵՏԱՅ ԲԱՏԼԵՐ ՅԵՑԹՍ (1865-1939) - իռլանդացի բանաստեղծ և բանու-

րագիր, առաջ էր քաշում ազգային ձգտումների և համաշխարհային մշակույթի ավանդույթների համադրման խնդիրը:

Պլատոնյան Տարի — տիեզերքի մասին Պլատոնի հստակացում՝ մեկ հազարամյակ, որից հետո վերադառնում է ելման կետին («Պետություն, գիրք X»), այս գաղափարին, քրիստոնեությունը՝ հետևելով հուդայիզմին, հակադրում է անդարձ ժամանակի տեսությունը, երկրորդ գալստյան և ահեղ դատաստանի գաղափարը:

Նախասահմանյալ ներդաշնություն... — Լայբնիցի ուսումնքի գաղափարներից մեկը («Բնության նոր համակարգի...», 1695 և այլն) մի գաղափար, որ նա զարգացնում է իր հետազայում գրած փիլիսոփայական տրակտատներում: Լայբնիցի այդ գաղափարը հանրաճանաչություն ձեռք բերեց Վոլտերի «Կանդիդի» շնորհիվ (1759):

ՌՈՒԲԵՐՏ ԲՐԱՌՆԻՆԼԳ (1812-1889) — անգլիացի բանաստեղծ:

տասնորդական սխեմայի... — մարդկության պատմության տասը դարաշրջանների շրջաբաժանումը ըստ ֆրանսիացի փիլիսոփա Ժան Անտուան Լիկոլա Կոնդերսի (1743—1794), որ նա նա զարգացնում է իր «Մարդկային բանականության պատմական առաջադիմության...» գրքում (1794):

պատմության ձևաբանություն... — պատմական զարգացման գործընթացի կաղապարը առաջ է քաշել Հեգելը (1770-1831) «Ոգու երևույթաբանությունը» գրքում (1807), Օսվալդ Շպենգլերը (1880-1936) «Եվրոպայի մայրամուտը»-ում (1918-1922) և Ջամբատիստ Վիկոն (1668—1744) «Ազգերի ընդհանուր բնույթի մասին գիտության նոր հիմունքներ» գրքում (1725-1744): Հեգելը պատմության զարգացման հիմքում դնում էր աստիճանականությունը, Շպենգլերը և Վիկոն՝ ցիկլայնությունը:

Հեսիոդոսի... մարդկության... — Նկատի ունի հին հունական բանաստեղծ Հեսիոդոսի (VIII—VII դ.դ. Ք.ծ.ա.) «Աշխատանքներ և օրեր» պոեմը, ուր շարադրվում է մարդկության երեք դարերի (104-201) տեսությունը:

Լինկոլնինը ընդօրինակող օթայկում... — Նախագահ Լինկոլնը սպանվեց 1865թ. ապրիլի 15-ին թատրոնի օթայկում, հարավցի պալատատուրների գործակալ, «Ոսկյա կարկին» գաղտնի ընկերության անդամ, դերասան Ջոն Բուտի կողմից:

ԿՈՂՄԱՅՈՒՅՅՆ ՈՒ ՄԱՀԸ

ՕԳՅՈՒՍՏ ԴՅՈՒՊԵՆ — սիրող խուզարկու, Է. Պոի մի շարք պատմվածքների հերոս:

«ԿԱԲԱԼԱՅԻ ԱՐԴԱՐԱՅՈՒՄԸ» — անգլիացի բժիշկ, ռոզենկրեյցերյան ընկերության անդամ, օկուլտ փիլիսոփա, իր ժամանակակիցներին քաջածանոթ (նրա մասին հիշատակումներ ունի Լայբնիցը, Պ. Հասենդին, վերջինս ջննդատել է նրա հայացքները):

«ԳԻՐԸ ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ» (ստեղծվել է VII—VIII դ.դ. միջև) — գիրքը պարունակում է կաբալիստական փիլիսոփայության հիմնական դրույթները:

ԻՍՐԱՅԵԼ ԲԵՆ ԷԼԻՋԵԹ ԲԱԱԼ—Շեմ Տոբ (կրճ. բեշտ, մոտ. 1700—1760)

— հասիդիմների աղանդի հիմնադիր, հուդայականության մեջ միատիկական ուղղություն:

ՏԵՏՐԱԳՐԱՄԱՏՈՆ — Աստծո ջառատառ, գաղտնի անվանումը (Եհովա, որ հայերենում հինգ տառ է):

Հնգամատյան — Աստվածաշնչի առաջին հինգ գրքերի՝ «Գիրք ծննդոց», «Ելից», «Ղևտական», «Թիվք», «Երկրորդումն օրինաց», որոնք կազմում են Թորան («Օրինաց»-ը), հուդայականության սրբազան գրքերից մեկը:

ՅՈՂԱՆ ԼԵՅՄԴԵՆ (1624—1699) — նիդեռլանդացի աստվածաբան, ուղղափառագետ—եբրայագետ:

de more geometrico — Ապինոգայի «Երկրաչափական եղանակով ապացուցվող էթիկա» (1677) գրքի մասին ակնարկ. հավասարակողմ եռանկյուն՝ պլուրագոնական խորհրդանիշ, որ խորհրդանշում է տիեզերքը իր բոլոր տարրերի հետ: Այս պատմվածքում ենթատեքստը նույնն է, ինչ Տետրագրամատոնի դեպքում:

ՀԵՐՄԵՍ — հունական դիցաբանության մեջ Աստված, ճամփորդների հովանավոր և մեռածների հոգին անդրշիրիմյան աշխարհ ուղեկցող:

ՅԱՆՈՆՍ — մուսքի և Ելքի Աստված հռոմեական դիցաբանության մեջ, պատկերվում է բանալիները ձեռքին, 365 մատներով (տարվա օրերի քանակը) և երկու դեմքով:

հավասարակողմ եռանկյունի — հավասարակողմ եռանկյունու սրբազան խորհրդանշանության է նվիրված Թ. Բրաունի «Կյուրոսի այգին» տրակտատը (տիեզերք, որի կենտրոնում կանգնած է արարիչը):

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՀՐԱՇՔԸ

ՅԱՐՈՍԻՐ ՀԼԱՄԻԿԻ «ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՀԵՐՔՈՒՄԸ» — հերոսի անունը հիշատակվում է նաև «Հուդայի մատնության երեք վարկածներ»-ում (տես սույն գրքում):

ՅԱԿՈԲ ԲՅՈՄԵ (1575-1624) — գերմանացի փիլիսոփա, միստիկ, իր մարգարեական ուսմունքը հենվում էր աստվածաշնչյան գրությունների մեկնաբանության վրա:

ԻԲՆ ԷՋՐԱ (1093—1167) — հրեա մտածող, բանաստեղծ, զգալի ազդեցություն է թողել Ապինոգայի և Մայմոնիդի փիլիսոփայության վրա:

ՄԱՅՄՈՆԻԴ (Մոշե բեն Մայմոն, 1135—1204) — հրեա մտածող: Իր ուսմունքում նա համադրում էր հուդայականության կրոնական փիլիսոփայությունը Արիստոտելի և վերջինիս արաբ մեկնիչների գաղափարների հետ: Մեծ ազդեցություն է թողել եվրոպական սխոլաստիկայի ձևավորման վրա (հատկապես Թոմա Աքվինացու): Պատմվածքում մեջբերված է նրա «Ուղեցույց...» գրքից:

ՀՈՒՊԱՅԻ ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՎԱՐԿԱԾՆԵՐԸ

Ինքը՝ Բորխեսը խոստովանել է, որ պատմվածքը գրելիս ազդվել է ֆրանսիացի գրող, հրապարակախոս Լեոն Բլուայի գաղափարներից: Պատմվածքը իր որոշ

գաղափարներով կրկնում է նաև լայնիցին: Այս գործը հեղինակի՝ մեզ հայտնի թերևս ամենախորը երկերից է:

ԹՈՒՄԱՆ ԷԴԱՄԻ ԼՈՌՈՒՐԵՆՍ (Լոուրենս Արաբացի, 1888—1935) — անգլիացի հետախույզ:

ՍԱՏՈՐԻՆԼՈ — գնոստիկ-փիլիսոփա, գործել է մ.թ. II դարի առաջին տասնամյակներում:

ԿԱՐԴՈՎՐԱՏԵՍ — ալեքսանդրացի գնոստիկ, գործել է II դարի առաջին կեսում: Վաղ քրիստոնեական աղանդաբանները կարծում են, որ առաջինը նրա հետեւորդներն են իրենց անվանել գնոստիկներ:

«ԳԻՐՔ ԸՆԴԴԵՄ ԲՈԼՈՐ ԱՂԱՆԴՆԵՐԻ» — աստվածաբան Իրենեա Լիոնացու (մոտ. 130— մոտ. 200) ուսումնասիրությունն է, կամ Իպոլիտ Հռոմեացու (մոտ. 160 կամ 170—235) «եղծ բոլոր աղանդոց» գիրքն է:

«ՍԻԼՏԱԳՄԱ» («Երկեր») — գործ, որի նկատմամբ որպես հեղինակ հավասար հավակնություն ունեն նախորդ ծանոթագրության մեջ հիշված անձինք:

ԷՄԻԼ ՇԵՐԻԼԳ (1873—1951) — գերմանացի գրող, հայտնի է որպես Ա Ստրինդբերգի թարգմանիչ:

ՋՈՆ ՄԱԿԻՆԼՈՆ ՌՈԲԵՐՏՍՈՆ (1856—1933) — վաղքրիստոնեության անգլիացի պատմաբան:

ԴՈԿԵՏՆԵՐ — վաղ քրիստոնեական աղանդավորներ: Նրանց հիմնական գաղափարն այն էր, որ կարծում էին, թե մարմինը չար ուժի գալթակությունն է, ուստի Ջրիստոսի մարմնական տառապանքները անիրական են:

Ավետարան ըստ Ղուկասի, Իբ.3 — «Ապա սատանան մտավ Իսկարիովտացի կոչված Հուդայի մեջ, որ Տասներկուսի թվում էր»:

Ավետարան ըստ Հովհաննեսի, ԺԲ,6 — «Լա (Հուդան) այս ասաց ոչ թե նրա համար, որ աղքատների համար էր հոգում, այլ որովհետև գող էր և գանձարկղը ինքն էր պահում, և ինչ որ այնտեղ դրվում էր, ինքն էր վերցնում»:

ԷՌԻԿԼԻԴԻՍ ՊԼ ԿԱՆՅԱ (1866—1909) — բրազիլացի գրող, պատմաբան: Ավաֆուերտե՝ Պեդրո Բոնիֆասիա Պալասյոսի (1854—1917) կեղծանունն է:

ՍՈՐԻՍ ԱԲՐԱՄՈՎԻՑ — Բորխեսի ընկերն է:

ՄԱՐՏԻՆ ԿԵՄԼԻՑ (1522—1586) — գերմանացի աստվածաբան:

ՀԱՆՍ ԼԱՍԵՆ ՄԱՐՏԵԼՍԵՆ (1808—1884) — դանիացի աստվածաբան:

ՍԻՄՈՆ ԲԵՆ-ԱՋՋԱԻ — II դարի իրեա օրենսդիր:

ՎԻՏԵՐԲՈՑԻ ՋՈՎԱՆԻՆ (1432—1502) — իտալացի դոմինիկյան վանական:

ՄԻԴԱՇԻՄ — Թալմուդի մեկնիչների անվանումը:

ՎԱԼԵՐԻ ՍՈՐԱՆ — մ.թ.ա. II դարի հռոմեացի գրող, բանասեր, միստիկ, մոտ էր կանգնած օրփեոսականներին և պյուրագործականներին: Նրա մատուցության մասին պատմում է Պլինիոս Ավագը «Բնական պատմություն» գրքում:

ՀԱՐԱՎԸ

Պատմվածքը ենթատեքստով ինքնակենսագրական է, այստեղ անգամ տեղ է գտել 1938-ին պատահած դժբախտ պատահարը, երբ Բորխեսը արյան վարակում ունեցավ և ծանր հիվանդացավ, որի հետևանքով հետագայում կորցրեց տեսողու-

յունը:

Ուեյլի «Հազար ու մեկ գիշեր» — 1839—1842 թ.թ. գերմանացի թարգմանիչ Ուեյլի (1808—1889) կատարած թարգմանության մասին Բորխեսն անգամ էսսե ունի գրած՝ «Հազար ու մեկ գիշերների» թարգմանիչներ» վերնագրով:

ԻՊՈԼԻՏՈ ԻՐԻԳՈՅԵՆ (1852—1933) — արգենտինացի պետական գործիչ, 1916-1922 և 1928—1930 թ.թ. երկրի նախագահը:

«ՊՈԼ ԵՎ ՎԻՐԳԻՆԻԱ» (1787) — ֆրանսիացի գրող Ժ.Ա. Բեռնարդեն դե Սեն—Պիեռի (1737—1814) հովվերգական վեպը:

ԱՆՍԱՀ

ՖԻԵՆՍԻՍ ԲԵԿՈՆ (1561—1626) — անգլիացի փիլիսոփա:

ԿԱՐՏԱՖԻԼՈՒՍ (կամ Էսպերա—Դիոս, Յոհան Բուտադեուս) — Հավերժական հրեայի անվանումներից մեկը, արևմտավրոպական ուշ միջնադարի առասպելական հերոս, դատապարտված թափառական լինելու մինչև երկրորդ գալուստ այն բանի համար, որ Զրիստոսին՝ Գողգոթա տանելու ճանապարհին մերժում է հանգըստանալը: Ըստ XIII դարի մի տեղեկության նա ապաշխարում և վերանվանվում է Հովսեփ: Այս լեգենդի մասին տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում: Նրա մասին պատմությունը այստեղ դիտարկվում է որպես Թ. Բրաունի «մոլորություններից» մեկը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՊ (1688—1744) — անգլիացի կլասիցիստ-բանաստեղծ, Հոմերոսի թարգմանիչ:

ԱԼՈՆԻԿ — հունական նավահանգիստ Էգեյանի ափին:

ԱՆԿԱՆ — թերակղզի և կղզախումբ Հարավ-չինական ծովում, 1680-ից Պորտուգալական գաղութ:

ԴԵՈՎԼԵՏԻԱՆՈՍ (243—313 կամ 316 ընթացքում) — հռոմեական կայսր (284—305թ.թ.), հայտնի է ճրիստոնյաների դեմ կատարած հալածանքներով:

ԳԵՏՈՒԼԻԱ — մարզ աֆրիկայի հյուսիս-արևմուտքում:

ՏՐՈՎԼՈՂԻՏԵՐ, ԳԱՐՄԱՆՏԵՐ — Աֆրիկայի հյուսիսում ապրող հին ժողովուրդներ, որոնց մասին պատմում են Ստրաբոնը, Հերոդոտոսը, Ղլենիուսը և ուրիշները:

ՏԱՐՏԱՐՈՍ — հին հունական առասպելներում տեղ, ուր գտնվում էր Աիդի՝ դժխքից էլ անդին, մեռյալների թագավորությունը, աշխարհի ամենաներքին երկինքը:

...Ջելեայի հարուստ տրոյացիներ — տես «Իլիական», II երգ, Ջելա (կամ Ջելեա) քաղաք Փոքր Ասիայում:

ԹԵՍԱԼԻԱ — Միջին Հունաստանի արևելքում ընկած մարզ:

ԿԻԲԵԼԱ — աստվածուհի, որի պատշամունքը տարածված էր Փոքր Ասիայում, Հունաստանում, ավելի ուշ՝ Հռոմում:

գորտերի ու մկների պատերազմը — «Բաթրաքոմիոմաքիայի» սյուժեն, պոեմ, որ վերագրվում է Հոմերոսին:

«ԵՐԳ ԻՄ ՍԻՂԻ ՄԱՍԻՆ» — իսպանական դյուցազներգություն (XIIդ.):

«ԷԿԼՈԳԵՐ» — «Բուկոլիկներ» («Հովվական երգեր») Վիրգիլիուսին պատկանող երկեր:

ՀԵՐԱԿԼԻՏ ԷՓԵՍԱՏԻ (մոտ. 520—մոտ.460 Ջ.Ճ.Ա.) — հին հունական փիլի-

սոփա, նրանից պահպանված պատառիկները ունեն ընդգծված լակոնիզմ և բարդ լեզու՝ նման մարգարեությունների լեզվին:

ԿՈՆՆԵԼԻԱ ԱԳՐԻՊԱ ՆԵՏԵՍԶԵՅՄՅԻ (1486—1535) — գերմանացի բնագետ, ոգեհարց, Դեմոկրիտի, Պյութագորասի, հերմետիկների և նման կարգի ամենատարբեր փիլիսոփայական ավանդույթների հետևորդ, մարդու և տիեզերքի հարանմանության գաղափարներ էր քարոզում իր «Խորհրդավոր փիլիսոփայություն» գրքում:

պատերազմեցի Ստամֆորդի կամրջի մոտ... — Ստամֆորդբրիջը գտնվում է Յորքի մոտակայքում, որտեղ ճակատամարտ են մղել նորվեգական թագավոր Հարալդ Սիգարդարսոնի (Հարդրադա («Դաժան») մականվամբ) ջոկատները 1066թ. սեպտեմբերի 25-ին անգլոսաքսոնյան վերջին թագավոր-Հարոլդ II Հոդվինսոնի զորաբանակի դեմ: Նրանցից առաջինը զոհվում է այդ ճակատամարտում, երկրորդը՝ նույն թվականի հոկտեմբերին Վիլհելմի նորմանդական զորքերի դեմ մղված կռիվներում (մոտ. 1027—1087): Բորխեսի պատմվածքում այդ իրադարձությունները նույնանում են:

ԲՈՒԼԱԿ — Կահիրեի հնագույն արվարձան:

«Սինդբադի յոթ ճանապարհորդությունները և Պղնձե քաղաքի պատմությունը» — դրվագներ «Հազար ու մեկ գիշերներ» գրքից:

ԲԻԿԱՆԵՐ — քաղաք Հնդկաստանի արևմուտքում:

ԿՈՆԼՁՎԱՐ — քաղաք Հունգարիայում, այժմ՝ Կլուժ (Ռումինիա):

ԱԲԵՐԴԻՆ — քաղաք-նավահանգիստ Շոտլանդիայում:

ՋԻՆԱԲԱՏԻՍԱ — իտալացի մտածող Ջինաբատիստա Վիկոն հայտնի է որպես պատմության շրջապտույտի, հավերժական վերադարձի տեսության, ինչպես նաև անտիկ առասպելաբանությունը որպես խորհրդանշական պատկեր համակարգող մեկնաբան:

«Պատնա» — Ջոն Կոնրադի «Լորդ Ջիմ» վեպում նավի անվանումը:

ԷՐԻԴՐԱ — մարզ Եթովպիայում, Կարմիր ծովի ափին:

ԷՆԼԵՍՏՈ ՍԱՐԱՏՈ (ծն. 1911) — արգենտինացի գրող:

աստվածաշնչային «A coat of many colours» վերնագրով աշխատանքն է Ջեյմս թագավորի ժամանակներից (1611) — անգլիական Աստվածաշնչում այդպես է կոչվում այն պատմուճանը (այդպես է նաև հայերենում՝ «պատմուճան ծաղկեայ», Ծնունդը, գլ. Լէ. 3), որը Հակոբը նվիրում է Հովսեփին ի նշան սիրո և որը վերջինիս եղբայրները՝ «մերկացին զպատմուճանն նորա ծաղկեայ ի նմանէ» (Ծնունդը, Լէ, 23) և նետում ջրհորի մեջ («ի գուբն»):

ՑԵՆՏՈՆ (լատ. cento — լաթակտորներից կարված հանդերձանք) — ուրիշներից փոխառած տողերով կազմված բանաստեղծություն: Անտիկ աշխարհում այդպիսի բանաստեղծության համար նյութ են ծառայել Հոմերոսի և Վերգիլիոսի երկերը:

ԲԵՆԻԱՄԻՆ (ԲԵՆ) ՋՈՆՍՈՆ (1573—1637) — անգլիացի բանաստեղծ, դրամատուրգ, արվեստի տեսաբան, շատ կողմերով կանխորոշում է կլասիցիզմի քերթարվեստը:

ՍԵՆԵԿԱ (մոտ. 5 (Ք.ծ.ա.) — 65 (մ.թ.) — հռոմեական պետական գործիչ,

բանաստեղծ, դրամատուրգ և փիլիսոփա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌՈՍ (1591—1654) — անգլիացի բանաստեղծ-առակագիր:

ՋՈՐՋ ՄՈՒՐ (1852-1933) - անգլիացի գրող, որ իր վեպերում ազատորեն գործածում և մեկնաբանում էր աստվածաշնչյան ու պատմական իրադարձությունները:

ԹՈՄԱՍ Ս. ԷԼԻՈԹ — այստեղ նրան Բորխեսն հիշատակում է որպես ավանդապահ բանաստեղծի, ավանդապահություն, որի շրջանակներում է միայն հնարավոր ստեղծագործությունը: Ինքը՝ Էլիոթը, հաճախ էր իր ստեղծագործություններին կցում պատմա-մշակութային ծանոթագրություններ:

...Պեկարտի՝ Պիեռ Շանդյին ուղղած նամակից... — 1647-ին մի նամակում փիլիսոփան պատմում է եթովպացիների մի հավատալիքի մասին, ըստ որի կապիկները կարող են խոսել, բայց դա չեն անում, որպեսզի մարդիկ չստիպեն աշխատել:

«BACK TO METHUSELAH («Դարձ առ Մաթուսաղան») — Բեռնարդ Շոուի դրամատիկական առակներից է, ուր հեղինակը շարադրում է համաշխարհային պատմության իր փիլիսոփայությունը:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԸ

ԱՆԻՎԸ ԵՎ ՕԶԸ — անվերջության խորհրդանիշներ գնոստիկների մոտ, դրանք քրիստոնեության մեջ համարվում են սատանության և հեթանոսության հատկանիշներ:

ՄԻՆԻ «ՊԱՏՐՈՒՈԳՐԱՆ» — II—VIII դ.դ. քրիստոնյա մտածողների երկերի ժողովածուն է:

ՎԻԼՀԵԼՄ ԲՈՒՍՍԵ (1865-1920) — գերմանացի աստվածաբան:

ԱՂՈՆՑ ՅՈՆ ԳԱՌՆԱԿԻ (1851-1930) — կրոնի և եկեղեցու գերմանացի պատմաբան:

«ՋՈՂԱՐ» («Գիրք Փառքի») — Կաբալայի հիմնական գրքերից է:

ԼԵՈՆ ԲԼՈՒՎ (1846-1917) — ֆրանսիացի միստիկ գրող:

—

ԷՄՄԱ ՅՈՒՆՑ

ՄԻԼՏՈՆ ՍԻԼՍ (1882—1909) — համր կինոյի ամերիկյան հայտնի դերասան:

ԱՍՏԵՐԻՈՆԻ ՏՈՒԼԸ

ԱՍՏԵՐԻՈՆ («Աստղային») — ցլամարդ Մինոտավրոսի անունը: Բորխեսի այս պատմվածքի համար առիթ է ծառայել անգլիացի նկարիչ **Ջոն Ֆ. Ուոթսի «Մինոտավրոս»** կտավը:

ՄՅՈՒՍ ՄԱՀԸ

ԱՐՏԻԳԻՋՄ — ուրուգվացիների ազգային արժանապատվությունն ու գերա-

գանցությունը ընդգծող անվանում՝ ի պատիվ Խոսե Խերվասիո Արտիգասի (1764-1850), որը համարվում է նաև ազգային—ազատագրական պայքարի հերոս:

ՊԵՏՐՈՍ ՂԱՄԻԱՆԻ (մոտ. 1007-1072) — իտալացի աստվածաբան: Նա, ըստ Դանտեի «Դրախտի» (XXI երգ) գտնվում է յոթերորդ՝ հայեցողների երկնքում:

ԷՆՐԻԿՈ ԹԱՄԲԵՐԼԻԿ (1820-1889) — իտալացի տենոր երգիչ:

ԶԱՆԵՐ

Բորխեսը նշել է, որ պատմվածքը կրել է Հերբերթ Ուելսի «Բյուրեղյա ձու» գործի ազդեցությունը:

ԷՐՄԱՆ ԶՈՏԵՆԲԵՐԳ — ֆրանսիացի արաբագետ, հայտնի է «Հազար ու մեկ գիշերների» մեկնաբանությամբ:

«ԾԵՍԵՐԻ ԳԻՐԶ» (ԼԻ Ցզի) — կոնֆուցիոսականության հիմնական գրքերից է, որ մտնում է այսպես կոչված Հնգամատյանի մեջ:

սև արևի մասին — այս պատկերը զարգացում է ունեցել Նոր Ժամանակների եվրոպական մշակույթում, հատկապես պոեզիայում:

Աջաբ — հերոս Հերման Մելվիլի «Մոբի Դիկում»:

ԼԵՈՂՈՒԴ ԲԼՈՆՄ — հերոս Զ. Զոյսի «Ուլիս» վեպում:

... արյունը սրի ջուրն է... — բանաստեղծական բանաձև, որ իր պատկերային մտածողությամբ հատկանշական է սկանդինավյան սկալդների պոեզիային:

ՄԱԶՍԻՄԻԼԻԱՆ ՀԱԲԻՒՏ (1775—1839) — գերմանացի արևելագետ, թարգմանել է «Հազար ու մեկ գիշերները»:

ԱՐՈՒՆԶԻՄԱ (1273—1331) — սիրիացի աշխարհագրագետ, պատմաբան:

մարդը՝ փոքր տիեզերք է... — գաղափար, որ ամենաբազմազան ձևերով հանդիպում է առասպելաբանության շատ համակարգերում, փիլիսոփայության մեջ առաջին անգամ հանդիպում է Դեմոկրիտի մոտ, որը հետագայում զարգացրել են Պլատոնը և Նորպլատոնականները:

ԻՐ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՈՒՄ ՎԱԽՃԱՆՎԱԾ ԱԲԵՆՆԱԿԱՆ ԷԼ ԲՈՒԱՐՆ

ԴԻԵՆ ՖԵՐՄԱ (1601—1665) — ֆրանսիացի մաթեմատիկոս, անվերջորեն փոքրացող թվերի տեսաբան:

Դ. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՑԻ (մոտ. IIIդ.) — հույն մաթեմատիկոս:

Պոի գողացված նամակը — նկատի է առնված Էդգար Պոի «Գողացված նամակը» նովելը:

ամեն ուղիղ... կոր է... — այս գաղափարը խորհրդանշ է ծառայել Նիկոլայ Կուզանսցու բացարձակ աստվածությունը հաստատելու համար:

լաբիրինթոս կառուցած... թագավորի պատմությունը — նկատի ունի Կրետեի թագավոր Մինոսին:

Մինատավորոս... ցլի մարմնով և մարդու գլխով... — Դանթեի «Դժոխքում» (XII, 11-25) Մինոտավորոսը գտնվում է յոթերորդ պարոսնակում, ուր տեղավորված

են բռնաբարողները:

ՄՊԱՍՈՒՄ

... դեպի 4004 համարը... — անվերջություն և անելանելիություն խորհրդանշող թիվ «Հազար ու մեկ գիշերներ» գրքում:

ՈԱՖԱՅԵԼԵ ԱՆԴՐԵՈՒԼԻ (1823—1891) — խալաացի բանասեր, հայտնի է Դանթեի «Աստվածային կատաղեբզության» մեկնաբանություններով:

վերջին պարունակը... — իններորդն է, ուր իրենց պատիժն են կրում դավաճանները:

ՇԵՄՆ ԼՍՏԱԾ ՄԱՐԸ

ՋԵԼԱԼ-ԱԴ-ԴԻՆ-ԱԿԲԱՐ (1542—1605) — Հնդկաստանում Մոհոլների հարցատության կայսր (1556 թվականից մինչև իր մահը):

ՋՈՆ ՆԻԿՈԼՍՈՆ (1822—1857) — անգլիացի սպա, որ մասնակցել է հնդկական ապստամբության ճնշմանը և սպանվել: Հաճախ է հիշատակվում Զիլլիխգի երկերում:

ՄԱՀԱՎԻՐԱՅԻ ԶԱՀԱԼԱՆԵՐԸ — ջատագովության հետևորդներ:

ԱԵՅՑ

ԴՈԼ ՖՈՐ (1872—1960) — ֆրանսիացի բանաստեղծ, 1912 թ. առաջել է «բանաստեղծների արքա» տիտղոսը:

ԽՈՈԱԼ ԿՐԻՍՏՈՍՏՈՄՈՐ ԼԱՖԻՆՈՐ (1797—1824) — արգենտինացի բանաստեղծ, փիլիսոփա, Բորխեսի հեռավոր ազգականը:

ԱԱՆՈՌՍ ԴԵ ԻՆՍՈՒԼԻՍ (1128—1202) — ֆրանսիացի փիլիսոփա, աստվածաբան և բանաստեղծ:

ԻՆՎԵՆԵՍ — կոմսություն և քաղաք Շոտլանդիայում:

ԿԵՐԵՏԱՐՈ — գավառ և քաղաք Մեքսիկայում:

ԱՆՏՈՆԻՈ ԱԻՏԱ — արգենտինացի էսսեիստ, գրականության պատմաբան:

ԷԴՈՒԱՐԴՈ ԱՍԵՎԵԴՈ ԴԻԱՍ (1851—1924) — ուրուգվացի գրող:

ԷՆ-ՍՈՓ («Անվերջը») — կաբալայի փիլիսոփայության մեջ անսահման և աներևույթ աստվածության անվանումը:

ԻԲՆ-ԽԱԴՈՒՆ (1332—1406) — արաբ փիլիսոփա և պատմիչ, մեջբերումը նրա «Մուկադդիմա» գրքից է (II, 323):

ԴԱՍԿԱԼԻ ՇՐՋԱԳՈՒՆԸ

ՕԼՈՖ ԳԻԳՈՆ (ծնվ. 1912թ.) — գերմանացի բանասեր, անտիկ փիլիսոփայության պատմաբան:

ՅԱՎԱԼԻԸ (մինչև 280—մոտ. 330) — անտիկ փիլիսոփա-նորալատողական:

«ՎԵՊ ՎԱՐԴԻ ՄԱՍԻՆ» — միջնադարյան ֆրանսիական այլաբանություն-պոեմ:

«ԵՐԿՐԻ ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ» — երեք էլեգիաներից բաղկացած անգլիացի բնագանց-բանաստեղծ Ջոն Դոնի շարքն է:

ՌՈՒԲԵՐՏ ՍԱՌԻՏ (1634—1716) — անգլիացի քանոնա, հայտնի է եղել իր հռչակավոր պերճախոսությամբ:

«ԴՈՆ ԿԻՒՈՏԻ» ԹԱՔՈՒՆ ԴՅՈՒԹԱՆՔՆԵՐԸ

«ԱՄԱԴԻԱ ԳԱՂՒԱՅԻ» — իսպանական առասպելական վեպ, որ կարդացել է նաև Դոն Կիխոտը:

ԴՈՆ ԳՐՈՒՍԱԿ (1848—1929) — արգենտինացի գրող:

«ՍԱՐՏՈՐ ՌԵԶԱՐՏՈՒՍ» (1833—1834) — անգլիացի գրող Թոմաս Կառլայլի (1795—1881) փիլիսոփայական վեպն է:

ՎԱԼԼԻԿԻ — «Ռամայանայի» առասպելական հեղինակը:

ՋՈՍԱՅ ՌՈՅՍ (1855—1916) — ամերիկացի փիլիսոփա, մաթեմատիկոս և տրամաբան:

ՋՈՆ ՈՒՆԿԻՆՍԻ ՎԵՐԼՈՒՇԱԿԱՆ ԼԵՋՈՒՆ

ՖՐԻՑ ՄԱՌԻՔՆԵՐ (1849—1923) — գերմանացի մտածող, «Փիլիսոփայական բառարանի» (1910) հեղինակը:

ՅՈՂԱՆ ՄԱՐՏԻՆ ՇԼԱՅԵՐ (1831—1912) — գերմանացի վանական, անցյալ դարի 80-ական թ.թ. առաջ է քաշել Խամաշխարհային լեզվի՝ վոլապուկի գաղափարը:

ՇԱՌԼ ԿՈՆՍՏԱՆ ԼԵՏԵԼՅԵ — ֆրանսիացի լեզվաբան:

ՊԱՍՏԿԱՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ՌԻԽԱՐԴ ՎԻԼՀԵԼՄ (1873—1930) — գերմանացի չինագետ:

ՋՍՈՒԼ ՍՈՒԼԱՐ — արգենտինացի գրող, Բորխեսի ընկերն է:

ՌԻԼՅԱՄ ՊԼՆԲԱՐ (1460-1520) — շոտլանդացի բանաստեղծ:

ՄԵՌՅԱՆՆԵՐԻ ՋՐՈՒՅՅԸ

ԽՈՌԱՆ ՖԱԿՈՒԼԴՈ ԿԻՐՈՎԱ (1790—1877) — զինվորական և քաղաքական գործիչ, արգենտինացի բռնապետ (1835): Բորխեսի հեռավոր ազգականն է:

քարերը նույնպես ուզում են քար մնալ — մեջբերում Սպինոզայի «Էթիկայից» (III, 6):

EVERYTHING AND NOTHING.

Ֆերեժու — անգլիացի դրամատուրգներ Թոմաս Լորտոնի (1532—1584) և Թոմաս Սեկվիլի (1536-1608) ողբերգության հերոսներից է:

RAGNAROK

ՈՒԳՆԱՐՅՈՎ (հին իսլանդերեն՝ «աստվածների ճակատագիր») — սկանդինավյան առասպելաբանության մեջ աստվածների մահվան և աշխարհի կործանման խորհուրդը:

ՊԵՂՐՈՆ ԷՆՐԻԿԵՍ ՈՌԵՆՅԱ (1884—1946) — գոմինիկյան գրականագետ, լատինաամերիկյան գրականության պատմաբան:

ՕՏԱՐՈՒՂԻՆ

ՍԱՆՏՅԱԳՈ ՊԱԲՈՎԵ (1889—1952) — արգենտինացի գրող:

ԽՈՌԱՆ ԻԲԵՐԱ — XI դարի վերջերին բուենոսայրեսյան «կուչիլերո» («դանակամարտիկ»):

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԷԼՄԱՍ ՌԵԳՈՒԼԵՍ (1860—1929) — ուրուգվացի բանաստեղծ:

ԽՈՌԱՆ ՄՈՒՐԱՆԻԱ

ԽՈՌԱՆ ՄՈՒՐԱՆԻԱ — քաղաքային «կուչիլերո» (XIX դարի վերջ, XX դարի սկիզբ):

ԷՎԱՐԻՍՏՈ ԿԱՐՅԵԳՈ (1883-1912) — բուենոսայրեսյան բանաստեղծ:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ՀԵՐԲԵՐԹ ՍՓԵՆՍԵՐ (1820—1903) — անգլիացի փիլիսոփա, դրապաշտության նախահայրերից մեկը:

ՈՒԻԼՅԱՄ ՀԵՆՐԻ ՀԱՂՍՈՆ (1841—1922) — անգլիացի գրող:

«ՏԱԲԱՐԵ» — ուրուգվացի ռոմանտիկ բանաստեղծ Խուան Սորիլի դե Սան-Մարտինի պոեմի խորագիրն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Բաժանվող արահետների այգին» գրքից

Նախաբան	6
<i>Tlön, Uqbar, Orbis Tertius</i>	7
Պիեռ Մենարը «Դոն Կիխոտի» հեղինակ	25
Շրջանաձև ավերակներ	35
Բաբելոնյան վիճակախաղ	41
Բաբելոնյան գրադարան	48
Բաժանվող արահետների այգին	57

«Հնարքներ» գրքից

Նախաբան	70
Ֆունես՝ հիշողության հրաշք	71
Դավաճանի և հերոսի թեման	79
Կողմնացույցն ու մահը	83
Խորհրդավոր հրաշքը	95
Հուդայի մատնության երեք վարկածները	102
Հարավը	108

«Ալեֆ» գրքից

Անմահը	116
Մեռյալը	131
Աստվածաբանները	137
Հմմա Յունց	146
Աստերիոնի տունը	152
Մյուս մահը	155
<i>Deutsches Requiem</i>	162
Զահերը	169
Իր լաբիրինթոսում վախճանված Աբենխական էլ Բոխարին	178
Երկու արքաներն ու երկու լաբիրինթոսները	187
Ապաստում	188

Շեմին նստած մարդը	192
Ալեֆը	198
Վերջաբան	213

«Այլ հետազոտություններ» գրքից

Դասականների առիթով	216
Ջոն Ուիլկինսի վերլուծական լեզուն	219
«Դոն Կիխոտի» թաքուն դյուրանքները	224
Պարիսպն ու գրքերը	228
Պասկալի շրջագունդը	232

«Արարիչը» գրքից

Նախաբանի փոխարեն	237
Արարիչը	238
Երկխոսություն երկխոսության մասին	240
Առեղծվածների հայելին	241
Քողարկված հայելիներ	245
Argumentum Ornithologicum	247
Դելիա Էլենա Սան-Մարկո	248
Մեռյալների զրույց	249
Վկան	252
Everything and Nothing	253
Ragnarök	255
Բորխեսը և ես	257
Թշնամու դեպքը	258
The Unending Gift . . .	260
Վերջաբան	261

«Բրոդիի տեղեկանքը» գրքից

Նախաբան	263
Օտարուհին	267
Հանդիպումը	272
Խուան Մուրանիա	279

Ավետարան ըստ Մարկոսի	284
Բրոդիի տեղեկանքը	290
Ծանոթագրություններ	299

**«Ապոլոն» հրատարակչություն
ԽՈՐԻԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍ
ԵՐԿՈՒ ԱՐՔԱՆԵՐՆ ՈՒ ԵՐԿՈՒ ԼԱԲՐԻՆԹՈՍՆԵՐԸ**

Խմբագիր՝ ԹԱԴԵՎՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Նկարիչ՝ ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ ԱՐԹՈՒՐ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Իջեցված է տպագրության 20. 05. 92 թ.:
Չափսը՝ 84x108¹/₃₂ Թուղթ՝ տպագ. օֆսեթ:
Տառատեսակ՝ «Արարատ»: Տպագրություն՝ օֆսեթ,
պատմ. 16,8 մամ., տպ. 10 մամ., հրատ. 15,0 մամ.:
Տպաքանակ՝ 40062: Պատվեր V - 264
Գինը՝ պայմանագրային:
«Գարուն» ամսագրի «Ապոլոն» հրատարակչություն
Երևան-15, Գրիգոր Լուսավորչի 15:
Շարվածքը կատարվել է ֆոտոշարվածքի արտադրական
կենտրոնում:
Երևան-9, Տերյան-89:
ՀՀ «Պարբերական» հրատարակչության տպարան:
Երևան, Արշակունյաց պող. 2:

JORQE LUIS BORQUES